

Արտաշես Քալանթարյան

ԲԱՑԵՔ ՁԵՆ ԱԶՔԵՐԸ

Ժողովածուում տեղ գտած պատմվածքները աշխարհով մեկ սփռված հայերի դառը ճակատագրի, դարասկզբի ողբերգական դեպքերի մասին են:

Ժողովածուում տեղ է գտել նաև հեղինակի ճանապարհորդական նոթերը՝ Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Ֆիջիի և Մեքսիկայի մասին:

Ք141 Քալանթարյան Ա. Փ.

Բացեք ձեր աչքերը: Պատմվածքներ, պիես – Եր.: Սովետ. Գրող. 1979. 388 էջ

«Սովետական գրող» հրատարակչություն Երևան – 1979

ԶԱՅՆԵՐ

Բարի լույս, – ասաց Վահրամն ինքն իրեն:

Միջանցքի հայելու միջից նայող մարդը անմիջապես պատասխանեց նրան: Վահրամը ափով շոյեց այտը, ծնոտը, հետո թափ տվեց ձեռքը ու երբ ուզում էր շրջվել, նրան թվաց, թե ինչ–որ բան ասացին իրեն:

– Ի՞նչ, – հարցրեց նա ու ավելացրեց, – դե լավ, լավ:

Հայելու կողքին, փոքրիկ մեխից կախված էր էլեկտրական ածելին: Դանդաղ սափրվեց՝ սառն ու ողորկ սայրերը սեղմելով փափուկ կնճիռներին, իսկ երբ հասավ կռախ մոտ, ուշադիր նայեց աչքերին ու տեսավ, որ իրեն էլ են նայում ուշադիր ու տխուր: Ածելին աղմկեց կզակի վրա ու այդ աղմուկի միջից նրան թվաց, թե խոհանոցում գնդգնդացին կաթսաները: Նա նույնիսկ սարքը ականջից հեռու պահեց ու թեքեց գլուխը, որպեսզի գնդգնդոցը կրկնվի, բայց խոհանոցում ոչ մի ձայն չկար, և Վահրամը կամացուկ ասաց.

– Հիմա կվերջացնեմ:

Նա վաղուց էր զգացել, որ տանը խոսում է ինքն իր հետ, բայց ոչինչ անել չէր կարող և չէր ուզում: Նա հենց այնպես չէր խոսում: Խոսում էր, որովհետև հարցեր էին տալիս և որովհետև ինքն էլ հարցեր ուներ տալու: Տունը ձայներով լի էր: Յուրաքանչյուր իրի, առարկայի վրա հետքեր կային, հին, ծանոթ հետքեր, որ ցավեցնելու չափ իրական հուշեր էին պահում: Պատշգամբ տանող դռան մոտ բազկաթոռն էր դրված մեծ–մեծ վարդերով, թիկնակի մեջտեղում վարդերը խունացել, թերթիկները չորացել, հեռացել էին իրարից: Երբ Սոֆին նստում էր բազկաթոռին, խունացած վարդերը չէին երևում: Սոֆին սիրում էր նստել այդ բազկաթոռին ու ասում էր՝ «Իմ գահը»:

Վահրամ Ռշտունին նկատեց, որ պատշգամբ տանող դուռը ամուր ցի փակել: Սառը հոսանք էր գալիս ու փչում էր ուղիղ բազկաթոռի վրա:

– Ըհը, միշտ այդպես է, – քրթմնջաց նա, – դռները միշտ ես պետք է փակեմ:

Հագնվեց, կոճկվեց ամուր, դրեց փափուկ լայնեզր գլխարկը և այդպես էլ կանգնած մնաց սենյակի կենտրոնում, ուսերը ետ զցած, ուղիղ ու ձիգ և միայն բարձր հայելու մեջ նկատեց, որ ինքն ուղիղ ու ձիգ չէ այլևս: Հայելու վերևում փակցված նկարից նրան էին նայում որդին, թոռն ու հարսը: Որդին խոժոռ հայացք ուներ: Հա, իհարկե, նա ուզում էր, որ բոլորը միասին նկարվեն, բայց կինն ասաց. «Լավ կլինի այս անգամ միայն մեր ընտանիքով, իսկ մյուս անգամ հայրիկի ու մայրիկի հետ, հա՞»: Հետո նրանք երկար ժամանակ խնդրում էին, որ հայրիկն ու տիկին Սոֆին էլ գնան, բայց Վահրամ Ռշտունին լսել էր այդ խոսքերը ու չգնաց: Դրա համար էլ որդին խոժոռ է:

– Դե ես գնացի,– ասաց նա, նայելով նկարին,– գնամ հեռագիր տամ ձեզ:

Գրեթե անաղմուկ փակեց դուռն ու ցած իջավ աստիճաններով: Աստիճանավանդակի պատերից հանգիստ կարելի էր իմանալ, թե քանի երեխա է ապրում այս մուտքում, ինչ անուններ ունեն, ինչ հասակ և ինչ թվանշաններ են ստանում մայրենի լեզվից: Բոլորից ներքևում Արմենի ստեղծագործությունն է: Թոռնիկը տուն էր նկարել և մոռացել էր դուռը, իսկ ծուռ ծխնելույզից ծուխը ոչ թե բարձրանում, այլ կողքի վրա գնում, հասնում էր մինչև անկյունը: Հիմա երևի ձեռքը հասնի ու ծուխը վեր բարձրանա, մտածեց պապը: Նա արդեն դուրս էր գալիս մուտքից, երբ դեմ դիմաց հանդիպեց հարևանին: Պատմական գիտությունների դոկտոր–պրոֆեսոր Ստեփան Միքայելյանի ձեռքերը ցրտից և լարվածությունից ճերմակել էին: Գրկին սեղմած թափանցիկ տոպրակների միջից երևում էին մրգեր, շշեր, ինչ–որ փաթեթներ, ինչ–որ պահածոներ...

– Ողջոյն, Վահրամ Սմբատի,– ասաց նա, ինչպես միշտ խուսափելով հայրանվան «չ» վերջնատառից: – Օ՛, այս ամանորը կրակ ու պատիժ է: Տեսնես Եզնիկ Կողբացին ու Փավստոս Բյուզանդն է՛լ են ստիպված եղել շուկա գնալ:

– Բարև, Ստեփան, – ասաց Վահրամ Ռշտունին:

– Ես կարճ կխնդրեմ, դուք երկար ընդունեք,– ասաց Ստեփանը,– որովհետև ձեռքերիցս կաղանդները վայր են թափվում: Եթե գաք մեր տուն և Նոր տարին միասին դիմավորենք, գիտցեք, որ ե՛ս էլ, մերոնք էլ երջանիկ կլինենք: Մենակ մի մնացեք, Վահրամ Սմբատի...

– Շնորհակալություն,– ասաց Վահրամ Ռշտունին,– շնորհակալություն, Ստեփան:

Դրսում նա ոտքը ամուր դրեց ձյան վրա ու քայլեց մայրի աջ կողմով, պատերի տակով, նայելով տոնականորեն զարդարված ցուցափեղկերին, որոնց հետ ինքը ոչ մի գործ չունեք: Դռները բաց էին, որովհետև անընդմեջ հոսանքով ելումուտ էին անում մարդիկ՝ զամբյուղներով ու արկղերով ծանրաբեռնված, երջանիկ ու հուզված դեմքերով, վերարկուների օձիքները բաց: Մայրին, տրորված ձյան վրա թափված էին նարնջի կեղևներ, կոնֆետի փաթեթաթղթեր, թեփ: Մեծ խանութի ցուցափեղկի տակ մորթե մուշտակներ հագած երկու տղա քաշքշում էին իրար: Վախենալով, որ կընկնեն, Վահրամ Ռշտունին մոտեցավ, բռնեց նրանց: Նրանք դեռ զրգոված էին կովից, իրար դեմ էին մղվում և գրեթե կախվել էին մուշտակներից, որոնց օձիքները ամուր բռնել էր լայնեզր գլխարկով անձանոթ ծերունին:

– Դե, պապիկին հարցրու,– բղավեց տղաներից փոքրը՝ վեր քաշելով կարմիր ու թաց քիթը և վշտացած աչքերով նայելով ծերունուն:

– Ես գիտեմ, դո՛ւ հարցրու,– ասաց մեծը,– դու հարցրու ու տես ոնց կծիծաղի:

– Լավ,– ասաց փոքրը,– վիզս բաց թող, պապի: Լավ,– ու ավելացրեց հեալով ու շնչասպառ,– ես ասում եմ, որ ձյունը Ձմեռ պապիկի մորուքից է թափվում, իսկ Աշիկը ծիծաղում է:

Աշիկը իսկապես ծիծաղում էր: Նա ծերունուն էր նայում ծաղրական աչքերով ու սպասում էր, որ փոթկար նրա ծիծաղի հետ: Եվ Վահրամ Ռշտունին մի քիչ մտածեց:

- Ծիծաղելու ի՞նչ կա, – ասաց նա, տխուր ու լուրջ հայացքով նայելով փոքրերից մեծին:
- Յա՞, – զարմացավ մեծը, – ուրեմն ձյունը մորուքի՞ց է թափվում:
- Իհարկե, – գլխով արեց նա:
- Տեսա՞ր, – հրճվանքից պայծառացած աչքերով, հաղթական բացականչեց փոքրը: – Ուրեմն, սո՛ւտ էին նկարել:

Վահրամ Ռշտունին առաջ շարժվեց տոնականորեն զարդարված ցուցափեղկերի կողքով, մի քիչ շտապելով, որպեսզի նոր հարցեր չտան, մի քիչ ուրախանալով թաց քթով փոքրիկի համար, մի քիչ ամաչելով այդ Աշիկ տղայի հուսախաբված աչքերից և տխրելով, որ նա այդքան շուտ է մեծացել ու արդեն չի հավատում սիրուն–սիրուն հեքիաթներին:

Նա հանկարծ պարզ, ուղղակի կողքից լսեց թոռնիկի ձայնը.

«Պապ, իսկ ինչո՞ւ Ձմեռ Տատի չկա: Ինչո՞ւ բոլոր տատիները թողնում գնում են, իսկ պապիկները մնում են»: Այն ժամանակ նա Արմենի համար հորինեց Ձմեռ Տատի հեքիաթը: Ասաց՝ բարի տատիկները գնում են, որ իրենց թոռնիկների համար նվերներ ուղարկեն: Եվ Արմենն ասաց. «Ես նվեր չեմ ուզում, ես իմ Սոֆի տատիկին եմ ուզում»: Ու լաց եղավ: Ու ինքն էլ լաց եղավ, որովհետև ինքն էլ ոչինչ չէր ուզում:

Հետո, առավոտյան հանկարծ նկատեց, որ Արմենը որոնում է բարձի տակ և վշտացավ, որ տղան, այնուամենայնիվ, նվերներ էր ուզում: Ու թեև հեքիաթում Ձմեռ Տատին միայն Նոր տարվա գիշերն էր թաքուն նվերներ բերում, բայց Վահրամ Ռշտունին սկսեց ամեն օր ինչ–որ բան պահել թոռնիկի բարձի տակ: Մի խնձոր, մի տանձ, մի մատիտ: Որովհետև դա առիթ էր դառնում Սոֆի տատիկի մասին խոսելու, և որովհետև մյուսները խուսափում էին հիշել նրան՝ չտխրելու, չտխրեցնելու համար, ապրելու համար: Եվ նա ամեն գիշեր նվերներ էր դնում Արմենի բարձի տակ, մինչև որ մի առավոտ իր բարձի տակ ինքը մի կոնֆետ նկատեց: Արմենը պապիկին էր նայում տխուր, հասկացող աչքերով ու հանկարծ ասաց. «Ձմեռ Տատին է քեզ նվեր ուղարկել»:

- Չէ՛, երեխաները հիմա շուտ են մեծանում, – ասաց ինքն իրեն Վահրամ Ռշտունին:
- Էլ մի՛ ասեք, – արձագանքեց նրան շալի մեջ փաթաթված փոքրիկ մի կին, – արի ու ամիսը մեկ նոր կոշիկ առ դրանց համար:
- Իհարկե, իհարկե, դժվար է, – ամաչելով անմիջապես համաձայնեց Վահրամը:

Փոստի հեռագրական բաժանմունքում նա երկար ժամանակ նստած էր հեռագրաթղթի առջև ու գրիչն աննպատակ թաթախում էր թանաքի մեջ: Նա մտքում երկար խոսում էր որդու, հարսի ու թոռնիկի հետ, հարցեր էր տալիս ու լսում էր, և այնքան էր մոտեցել նրանց, որ սիրտը ուռչում էր: Սեպտեմբերին Կիևից եկել էին նրան տեսնելու, մի քանի օր մնացին, և Վահրամ Ռշտունին նկատեց, որ այլևս ինքն իր հետ չի խոսում: Տունը աղմուկով էր լցվել,

հյուր էին գնում ու հյուր ընդունում: Իսկ մի անգամ էլ հայր ու որդի մինչև ուշ գիշեր խոսեցին, խմում էին քիչ-քիչ ու խոսում:

Ինչի՞ մասին էին խոսում... Մեծացել էր որդին, սպիտակ մազեր կային ճակատին թափված գանգուրների մեջ ու աչքերն էլ իր աչքերի նման բաց շագանակագույն էին դարձել: Այդպիսի բան չէր եղել: Այնքան զուսպ, այնքան հանդարտ տղա էր, բայց մեկ էլ հանկարծ գրկեց հորը, սեղմեց, գլուխը ուսին դրեց ու ասաց մի տեսակ խռոված ձայնով. «Ես քեզ շատ եմ սիրում, հայրիկ: Եվ ուզում եմ էսպես բռնել, բռնել, բռնել... »:

– Ես էլ ձեզ, բոլորիդ եմ սիրում,– աչքերը հեռագրաթղթին հառած շնչաց Վահրամ Ռշտունին,– շատ եմ սիրում:

Նա ոչ մի տեղ չէր շտապում ու հանդարտ քայլում էր փողոցով աչքերը կկոցած, որովհետև ձյունը փայլում էր արևի տակ: Իսկ շուրջը բոլորն անցնում էին հուզված, արագ–արագ, ասես թե մոռացել, կիսատ էին թողել կարևոր շատ գործեր ու հիմա շտապում էին ավարտել այդ գործերը, որպեսզի հանկարծ երեկոյան, երբ տասներկու անգամ խփեն ժամացույցի զարկերը, երբ ռադիոն ասի «Շնորհավոր Նոր տարի, բարեկամներ», իրենք հանգիստ սրտով, առանց պարտքի բարձրացնեն բաժակները: Միայն ավտոմեքենաներն էին շարժվում դանդաղ, երբեմն–երբեմն կողքի վրա սահելով սառցակալած ասֆալտի վրայով: Եվ գրեթե բոլոր ավտոմեքենաների կիսաբաց ետնապահեստներից կամ լուսամուտների միջից եղննու ճյուղեր էին կախված:

– Տոնածառը վերջին օրը չեն առնի,– ասաց Վահրամ Ռշտունին:

Նա ուզեց հիշել, թե կյանքում քանի անգամ է տոնածառի մոտ եղել, բայց չկարողացավ: Եղևնիները շատ էին, տարբեր տեսակի էին և տարբեր մեծության, տարբեր ձևով էին զարդարված և տարբեր դեմքեր էին պատվում նրանց շուրջը: Եղևնիները կանգնում, շարվում էին իրար կողքի ու ձգվում, ձգվում էին ու պսպղում էին խաչերով, աստղերով, մոմերով, լապտերիկներով, և անհնարին էր դառնում հաշվելը:

Ճաշեց դանդաղ, իսկ երբ կուր–կում խմում էր դառը սուրճը, տարեց մատուցողը եկավ նստեց կողքին: Ռեստորանում գրեթե հաճախորդ չկար, և մատուցողը նեղսրտում ու ձանձրանում էր: Մի քանի անգամ բղավեց ջահել աղջիկների վրա, որոնք սկուտեղներ էին տանում հարևան սրահը: Հետո եկավ, նստեց ծանոթ հաճախորդի կողքին:

– Ո՞նց եք, ընկեր Ռշտունի,– հարցրեց նա:

Հաճախորդը հասկացավ, որ մատուցողը այդ հարցը տվեց թերևս միայն նրա համար, որպեսզի ինքն էլ նույն հարցը նրան տա: Մարդը ուզում էր խոսել, և Վահրամ Ռշտունին չուզեց վշտացնել նրան:

– Լավ եմ,– ասաց նա շտապով,– իսկ դո՞ւք ինչպես եք, Գարեգին:

– Է՛հ,– աշխուժացավ Գարեգինը,– որ ասեմ լավ եմ, կհավատա՞ք: Քսանուր տարի մատուցող եմ այս ռեստորանում և... զարմանալի բան: Տարին կարճ լինի թե երկար, երկու օրը մեկ

աշխատեմ, թե երեք օրը մեկ, միևնույն է: Հերթը պտտվում, պտտվում ու էլի Նոր տարվա գիշերն ինձ է բաժին ընկնում: Բայց ես էլ մարդ եմ, չէ՞: Ես էլ եմ ուզում Նոր տարին տանը անցկացնել, ընտանիքիս հետ: Ճիշտ է, թե չէ: Բիարկե: Առավոտյան մեր վարիչին հենց այդպես էլ ասացի: Ասացի՝ բավական է, ես ծեր եմ ու հոգնած եմ: Իսկ նա ծիծաղում է, ասում է՝ ընկեր Գարեգին, մատուցողների մեջ թե ամենաջահել, թե ամենաարագաշարժը, թե ամենաշնորհքովը դու ես: Գիտես, որ մեծ խնջույք է լինելու, առանց քեզ ո՞նց կլինի: Դե դո՛ւք ասեք, ընկեր Ռշտունի, ես նրան ի՞նչ կարող էի ասել:

– Ոչ մի բան,– ասաց Ռշտունին,– ճիշտ է ասել. չէ՞ որ դուք իսկապես ամենալավ մատուցողն եք, Գարեգին:

Մատուցողը շիկնեց տղայի պես, ժպտաց, գոհ հանդիմանանքով օրորելով գլուխը.

– Ըհը , դուք էլ նույնն եք ասում:

Հետո նայեց իր մշտական հաճախորդին, ուզեց ինքն էլ իր հերթին մի լավ ու հաճելի բան ասել նրան: Նայեց, նայեց ու ասաց.

– Գուցե դուք էլ երեկոյան գաք, հը՞: Շատ հետաքրքիր է լինում: Գալիս են բոլորն էլ շքեղ հագնված, ուրախ երգում, պարում են տոնածառի չորս բոլորը: Մեծ տոնածառ ենք դրել դահլիճի հենց կենտրոնում: Հետո ասեմ, որ Վարդանն էլ է լինելու: Գիտեք, չէ՞, այնպիսի բաներ է ասում, որ ծիծաղից թուլանում ենք: Քսանութ տարի անընդհատ ես եմ աշխատել Նոր տարվա գիշերը, բայց ամեն անգամ...

Գարեգինը կտրեց խոսքը, մի քիչ կմկմաց, աշխատելով կռահել, թե Վահրամ Ռշտունին զգա՞ց արդյոք, որ ինքն իր կամքով է ամեն անգամ աշխատում Նոր տարվա գիշերը: Բայց հաճախորդի աչքերը բարի ու ժպտուն էին, և տարեց մատուցողը ավելացրեց հանգստացած.

– Անպայման եկեք: Ես ձեզ համար մի աթոռ կպահեմ: Հա՞... Հետո գիտե՞ք ինչ, գուցե և ոչ մի հաճախորդ էլ չգա: Կնստենք, կխոսենք: Կգաք, հա՞, ընկեր Ռշտունի: Կսպասեմ:

Երբ ռեստորանից դուրս եկավ, ձյուն էր գալիս՝ հանդարտ ու փափուկ, և Վահրամն զգաց, որ տրամադրությունը բարձր է: «Ասես թե խմած լինեմ»,– քմծիծաղեց նա: Հետո մտածեց, թե ինչից այդպես բարձրացավ տրամադրությունը, և իբր չհասկանալով օրորեց գլուխը: Թեև հաստատ գիտեր, որ պատճառը հին մատուցող Գարեգինի վերջին խոսքերն էին:

«Կսպասեմ»,– ասաց նա: Մեկն էլ այդպես ասաց: Ո՞վ էր: Հա, իրենց հարևանն էր, պատմական գիտությունների դոկտոր–պրոֆեսորը: «Մենակ մի մնացեք, Վահրամ Սմբատի...»,– ասաց նա:

– Զարմանալի մարդիկ են: Ինչո՞ւ են մտածում, թե ես մենակ եմ,– ասաց Վահրամ Ռշտունին:

Նա հանկարծ սկսեց պատկերացնել, թե իր բարեկամներից, հարևաններից, ընկերներից ում տուն կարող է գնալ, եթե ուզենա: Եվ այնպես, ինչպես որդու հետ խոսելիս, մի տեսակ լայնացավ սիրտը: Բիարկե, շատերը կան: Բայց թե, միևնույն է, ինքը ոչ մի տեղ էլ չի գնա: Չի կարելի: Նոր տարվա գիշերն ուրիշ է: Մարդիկ ուզում են իրենց տանը լինել, ընտանիքով լինել, բաժակները ձեռքներին հաշվել հին տարվա վերջին վայրկյանները: Հետո ճչալ

ուրախացած, համբուրվել, բաժակներն իրար խփել ու շտապով, շտապով շատ կարևոր խոսքեր ասել իրար, շատ հաճելի, անձնական, միայն այդ վայրկյանի համար պահված խոսքեր: Նրանց խանգարել չի կարելի: Չի կարելի: Եվ հետո ինչ^օ պետք է ինքը ուրիշի տանը լինի: Իսկ իրեն^օց տունը: Իսկ եթե հանկարծ մեկը նայի Վահրամ Ռշտունու տան պատուհանին ու տեսնի, որ հանգած է լույսը: Ի^օնչ կմտածի: Իսկ եթե հին, հին օրերի նման, երբ տասներկուսից հետո շրջում էին ընկերների տները, մեկը վճռի այցելել նրան: Ի^օնչ կստացվի: Չէ: Նա գիտեր, որ դա վաղուց, շատ վաղուց էր, որ քանի-քանի տարի այլևս երբեք արթուն չէին մնում մինչև առավոտ, բայց այդես մտածելը հաճելի էր, և Վահրամ Ռշտունին ժպտաց:

Թե ինչպես էր հասել Կարապի լճի մոտ, ինքն էլ չգտաց: Օպերայի փոքրիկ պուրակը մարդկանցով լի էր: Երեխաները սահնակ էին քշում և չմուշկներով սահում լճակի սառցե հատակին: Նրանց պապիկներն ու տատիկները համբերատար դոփդոփում էին լճափին, բարձրաձայն խոսում իրար հետ, զրույցն ընդհատելով միայն մի վայրկյան, որպեսզի ձայն տան իրենց անդադրում թոռնիկներին:

– Զգույշ, չընկնես...

Քիչ այն կողմ, բաց բեռնատարի վրայից եղննու ճյուղեր էին վաճառում: Ջահել մի կին, երեխան գրկած, պարզել էր ձեռքը, բայց չէր կարողանում վաճառողի մեկնած եղնին բռնել: Վահրամը մոտեցավ, օգնեց, և արդեն ուզում էր հեռանալ, երբ մեկը ձայն տվեց նրան:

– Ընկեր Ռշտունի, ընկեր Ռշտունի, վերցրեք:

Նա տեսավ, որ վաճառող տղան թափքից կռացած իրեն է մեկնել եղննու փոքրիկ ու փարթամ մի ճյուղ: Նայեց նրան, չճանաչեց, բայց բարևեց շփոթված, հետո տարածեց ձեռքերը, նայեց եղննու ճյուղ գնողների հերթին ու նորից տարածեց ձեռքերը՝ ուզենալով ասել, որ իրեն ճյուղ հարկավոր չէ: Բայց վաճառող տղան սխալ հասկացավ նրան:

– Ի^օնչ է, ես իրավունք չունեմ իմ ուսուցչին առանց հերթի մի տոնածառ տալու,– ասաց նա մարտահրավերով, ցրտից խզված ձայնով,– վերցրեք, ընկեր Ռշտունի:

– Վերցրեք, վերցրեք, լսվեց հերթի միջից:

Եվ Վահրամ Ռշտունին վերջնականապես շփոթված վերցրեց եղնին ու, ճյուղի մեջտեղից բռնած, դուրս եկավ պուրակից:

– Ա՛յ քեզ պատմություն,– ծիծաղեց նա,– հիմա ես ի^օնչ անեմ այս եղնին:

Ճյուղերին թանձր խեժահոտ կար, անտառային սառնություն ու թացություն: Ձյունը շարունակում էր իջնել հանդարտ, և փաթիլները գալիս, պտտվելով, խաղալով թառում էին եղննու սուր ասեղներին: Ասես աներևույթ մեկը բամբակի քուլաներ էր փչում, նետում տոնածառի վրա:

Մթնում էր: Ավելի ու ավելի քիչ էին ավտոմեքենաներ հանդիպում: Հետզհետե դատարկվում էին մայրերը: Նորանոր լուսավոր քառանկյունիներ էին հայտնվում շենքերի պատերին: Երկար փակված էին մնում խանութների դռները:

Քայլում էր Վահրամ Ռշտունին և ժպտում ինքն իրեն: Լավ, հիմա ի՞նչ անի այս եղանին: Տուն տանելը միտք չունի: Չէ: Ինչի՞ նման կլինի դատարկ ծառը: Իսկ սա ընդամենը ծառ է, ծառի մի ճյուղ, և մարդիկ պետք է նրան տոնածառ դարձնեն, երեխաները պետք է դարձնեն տոնածառ ու պտտվեն չորս բոլորը շրջան կազմած ու երգեն զիլ ու սխալ, թլիկ լեզուներով:

«Տոնածառ ջան, տոնածառ...»:

Չէ, տուն տանելը միտք չունի: Իսկ գուցե թողնի մի տեղ ու գնա՞: Գուցե հենի այս պատի՞ն: Այնինչ երևի մարդիկ կան, որ չեն կարողացել եղևնի գնել ու հիմա դեռ որոնում են: Ո՞վ գիտե: Միթե՞ նրանք չէին, որ հերթ էին կանգնել բաց բեռնատարի մոտ: Վահրամ Ռշտունին հանկարծ հիշեց իրենց հավաքարարուհուն: Նա, օրինակ, եղևնի գնած կլինի: Ամուսինը պառկած է հիվանդանոցում: Հինգ թե վեց երեխա ունի, որ ամբողջ օրը վազվզում են դպրոցի բակում: Սատանի ճտեր են, ձյան վրա բոբիկ են ման գալիս: Մայրն ամբողջ օրը բղավում է, որ հագնվեն, իսկ նրանց պետքն էլ չէ: Ուսուցչուհիները նախանձում են՝ նայելով նրանց կարմիր ու կլոր այտերին, դասամիջոցներին իրենց նագուկ ու քմահաճ երեխաներից են խոսում ու... տրտնջում: Հի՞ նգն են, թե վեցը: Վահրամ Ռշտունին ամաչեց, որ նրանց ինչպես հարկն է չի հիշում և արդեն տրամվայում, սառը աթոռին նստած, մտքում մեկ-մեկ տալիս էր անունները:

– Խաչիկ, Վաչիկ, Հրաչիկ, Սիրանուշ, Մայրանուշ...

Չէ, իհարկե, մեկն էլ կա: Մի տղա էլ կա՝ Սիրանուշից փոքր ու Մայրանուշից մեծ: Ուրեմն վեցն են: Լավ է, որ շատ են: Մարդ պետք է շատ երեխաներ ունենա: Որ ինչքան էլ տանեն, մեկն այնուամենայնիվ մնա: Թե չէ ինչի՞ նման է սա: Դողում ես ամբողջ կյանքում ու մեկ էլ տեսար՝ թռավ: Իսկ նրանք վեցն են: Ափսոս, որ հիվանդ է հայրը: Տոնածառ հավանաբար չեն ունենա և տխուր կլինեն: Իսկ ինքը հանկարծ ներս կմտնի՝ եղևնու ճյուղը ձեռքին և...

Տրամվայը գրեթե դատարկ էր ու սլանում էր մեծ արագությամբ. մեկ աջ, մեկ ձախ հրելով երկաթե գծերը: Վերջին կանգառում ցած իջավ, աջ ձեռքով շարունակ բռնած եղևնու ճյուղը: Դանդաղ, մանրիկ քայլերով անցավ սառցակալած փողոցն ու հայտնվեց իրենց դպրոցի մոտ: Հավաքարարուհին բակի կողմից դպրոցի առաջին հարկում էր ապրում, և նրա տան պատուհանները լուսավորված էին: Կամացուկ ծիծաղելով իր դրության վրա, Վահրամ Ռշտունին անաղմուկ մոտեցավ առաջին պատուհանին, կռացավ ու ներքն նայեց: Եվ տեսավ տոնածառը: Մեծ լապտեր էր վառվում եղևնու գլխին, տղաներից մեկը կանգնել էր աթոռի վրա ու շարժում էր բերանը, երևի արտասանում էր: Աթոռներին, թախտի վրա, ամեն տեղ երեխաներ կային: Ռշտունին ուղղեց մեջքը և ծիծաղեց: Հոգնել էր սաստիկ, ցավում էր աջ ձեռքը, ոտքերը սառել էին, և վառվում էին ականջները: Բայց նա ծիծաղում էր, որովհետև ուրախ էր: Որովհետև երկար ու սրտաշարժ բաներ մտածելով եկել-եկել հասել էր աշխարհի ծայրը, բայց պարզվել էր, որ աշխարհի ծայրում էլ ամեն ինչ կարգին է, և տոնածառ ունեն հիվանդ մարդու երեխաները:

– Ընկեր Ռշտունի, դո՞ւ ես, այ քեզ բան:

Նա այնպես շրջվեց, որ քիչ մնաց վայր ընկնի: Եղևնու ճյուղի կոթը աղմուկով քերեց ձյունը:

– Աա, դո՞ւք եք, Հրանուշ:

– Ես էլ կանգնել, կանգնել նայում եմ, թե էս ո՞վ է կեսգիշերին մեր պատուհանից ներս նայում: Դուք էլ էիք եկել դպրոցից ծառ տանելու: Ի՞նչ անես, ոչ մի տեղ չկար: Իսկ ավագակները կյանքս ուտում էին: Ու մեկ էլ առավոտը տեսնեմ ընկեր Ավագյանը մի լավ տոնածառ է բերում: Ապրեն նրա բալեքը, վատ օր չտեսնի կյանքում, ցամաք աչքով մնա: Ասում է՝ Հրանուշ քույրիկ, վերցրու, թող երեխաներն ուրախանան: Ասում է՝ դպրոցի համար շատ են բերել, քո երեխաներն էլ մեր դպրոցի երեխաներն են: Ապրի նրա արևը...

– Ձեր ամուսինը ինչպե՞ս է,– նոր միայն նկատելով կնոջ ձեռքի ցանցազամբյուղից կախված ալյումինե կաթսան ու դատարկ ափսեները,– հարցրեց Ռշտունին, աշխատելով մարմնով ծածկել եղևնու ճյուղը:

– Լավ է, լավ է, շնորհակալ եմ, մոտիցն եմ գալիս: Ներս գնանք, էլի, բա դու չես մրսո՞ւմ:

– Չէ, չէ,– հրաժարվեց Ռշտունին,– չեմ մրսում:

Նա իսկապես այլևս չէր մրսում, երբ վերադարձի երկար ճամփան անցնելուց հետո տրամվայից ցած իջավ Բարեկամության փողոցի անկյունում և քայլեց դեպի իր տունը: Տաք էր: Կտրվել էր ձյունը: Շուրջն ամեն ինչ մաքուր ու սպիտակ էր: Ոտնահետքեր համարյա չէին երևում: Նա քայլում էր զգուշորեն, շրջվում նայում էր իր մենավոր հետքերին ու նորից առաջ էր շարժվում՝ ձեռքին բռնած եղևնու ճյուղը: Մի քանի անգամ մտածեց թողնել որևէ տեղ, մի անգամ նույնիսկ իբր մոռացավ կանգառի նստարանին, բայց տասը–քսան քայլ անելուց հետո վերադարձավ ու նորից վերցրեց եղևնու ճյուղը: Ափսոսում էր, հետո խղճում էր մի տեսակ:

– Կտանեմ տուն,– ասաց նա,– թող մեր տանը մնա:

Իրենց տան ներքևում գտնվող մեծ խանութին մոտենալով,

Վահրամ Ռշտունին բոց նկատեց ու կանգ առավ ակամա: Բոցը դուլի միջից էր ելնում ու ծածանվում, ալեկոծվում էր վերևում: Դուլի մոտ նստել, մատները կրակի վրա ծիծաղելիորեն շարժում, ասես խորովում էր խանութի պահակ Թաթոսը: Կողքին, պատին հենված, սևին էր տալիս հին հրացանը: Ոտնաձայն լսելով, Թաթոսը բարձրացրեց գլուխը ու ճանաչելով հարևանին, ձայն տվեց ուրախացած:

– Բարի երեկո, Վահրամ եղբայր, ժամը քանիսն է:

– Բարի երեկո, Թադևոս,– ասաց Ռշտունին: Նա եղևնու ճյուղը հենեց ծաղկանոցի փոքրիկ ցանկապատին, ձախ թևն ու դաստակը թեք պահեց լույսի տակ:– Տասնմեկն է:

Պահ, ուրեմն, մեկ ժամ հետո Նոր տարի է,– զարմացավ պահակը, և նկատելով եղննու ճյուղը, ավելի զարմացավ:– Ո՞ւմ համար եք տանում, Վահրամ եղբայր:

– Այնպե՛ս,– ձգեց ուսուցիչը:– Գուցե ձեզ պե՞տք է, այո՞: Վերցրեք, վերցրեք, խնդրեմ...

– Չէ,– ասաց պահակը,– մերոնք առել են, նախշել են արդեն:– Նա արկղի մի անկյունը քաշվեց:– Եթե չեք նեղվի, նստեք, տաքացեք, Վահրամ եղբայր: Իսկական կրակն ուրիշ է:

Վախենալով, որ եթե հրաժարվի, պահակը կարող է սխալ հասկանալ, Վահրամ Ռշտունին նստեց նրա մոտ, շրջված արկղի վրա ու կրակին մեկնեց ձեռքերը: Տաքը դուր եկավ, հին, անցած օջախներ երևացին մատների արանքից, թվաց, թե ծուխը խոտացրեց աչքերը: Նա հազաց և երախտագիտությամբ լցվեց պահակի նկատմամբ:

– Լավ է,– ասաց նա, քանդելով վերարկուի կոճակները և լայնեզր գլխարկը քիչ վեր բարձրացնելով:

– Իհարկե,– ուրախ արձագանքեց Թաթոսը,– զուր չեն ասում, թե կրակը ձմեռվա վարդն է:

– Իսկ ձեր քունը չի՞ տանում, Թադևոս... Դժվար է այսպես, ամեն գիշեր...

– Չէ,– ասաց պահակը,– իմ քունը ցերեկներն է տանում: Սովորել եմ: Մարդս ամեն ինչի սովորում է, մարդս ամեն ինչ տանում է...

«Այդպես է,– մտածեց Վահրամ Ռշտունին,– շատ տարօրինակ է, բայց այդպես է: Երբ փոքր էի և հանկարծ մտածում էի, թե մի օր ծնողներս չեն լինելու, քիչ էր մնում խելագարվել: Ռոպվհետն գիտեի. ապրել չեմ կարող առանց նրանց: Բայց ահա ապրում եմ, ապրում եմ, թեև վաղուց նրանք չկան, թեև չկան եղբայրներս, ընկերներիցս շատերը թեև չկա Սոֆին... Մտածում էի, թե մի օր անգամ չեմ կարող ապրել առանց որդուս, հետո թոռնիկիս... Եվ այնուամենայնիվ ապրում եմ: Սա չի կարող մի ինչ–որ հասարակ բան լինել, չէ: Այստեղ մի շատ մեծ գաղտնիք կա, որ ես չեմ հասկանում և ոչ ոք չի հասկանում: Անհնարին է, որ մարդիկ հենց այնպես վերանան, չլինեն: Երևի ինչ–որ բան մնում է: Մնում են, չէ՞, հուշը, գործը, հետքերը, ձայները... Եվ դրանք էլ պահում են մարդկանց: Եվ դրանով էլ կապվում են հեռացածը, ներկան, եկողը և նորից հեռացածը, ներկան, եկողը... և այսպես անվերջ: Եվ դու մենակ չես: Ու հենց սա էլ է պահում: Ո՞վ է ինձ համար մատուցող Գարեգինը, եղննիներ վաճառողը, պրոֆեսորը, հավաքարարուհին, այս պահակ Թադևոսը: Մարդիկ են: Եվ նրանք այսօր պահեցին ինձ, տարան իրենց հետ: Եվ բոլորը, որոնց չես ճանաչում, չես խոսել հետները, բայց կան, պահում են քեզ, տանում են իրենց հետ՝ առօրյա մեծ ու փոքր գործերով, մեծ ու փոքր հոգսերով: Եվ դու էլ երևի նրանց ես պահում, նրանց ես տանում»:

...– Մեր գործն էլ սա է, Վահրամ եղբայր,– ասաց պահակը:– Բայց հիմա մի բան պիտի խնդրեմ, չպիտի մերժես: Քանի որ գիշերը տասներկուսին մերոնց հետ տանը չեմ լինելու, կնիկս հաց–մացի հետ մի շիշ գինի էլ դրեց: Որ խմեմ ու իրենց հետ լինեմ, որ ասեմ՝ շնորհավոր Նոր տարի: Չէ, չէ, չպիտի մերժես: Կնեղանամ: Կմտածեմ, որ հասարակ մարդ եմ, դրա համար էլ ինձ հետ հաց չես կտրում:

Ռշտունին ծիծաղեց բարձրաձայն պահակի պարզ խորամանկության վրա և ձեռքը նրա ուսին դրեց: Թաթոսն անխոս ժպիտով բացեց փաթեթը, մեջտեղ դրեց մի քիչ միս, մի քիչ լոբի, մի քիչ թթու, երկու խնձոր: Բացեց գինին, լցրեց միակ բաժակն ու մեկնեց ուսուցչին:

– Խմիր, եղբայր, Նոր տարվա կենացը:

– Ոչ,– ասաց Ռշտունին:– Դեռ տասներկուսը չկա: Խմենք հին տարվա կենացը, հին տարիների կենացը:– Հանկարծ նա զգաց, որ կոկորդը սեղմվում է, և այլևս ոչինչ չասաց: Ջախ ձեռքով հանեց փափուկ, լայնեզր գլխարկը ու խմեց գինին դանդաղ, հետզհետե բարձրացնելով գլուխը, աչքերը միշտ հառած եղննու փոքրիկ, թեքված ճյուղին:

– Անուշ լինի:

Նա նորից լցրեց բաժակը...

– Հիմա մերոնք արդեն հավաքվել են սեղանի մոտ: Տղաներիս գիտես, չէ՞, Վահրամ եղբայր, պինդ սղաներ են, գոհություն ասածո: Աղջիկներս էլ՝ սիրուն, խոնարհ: Հիմա մեր տանը շատ լավ կլինի, Վահրամ եղբայր:

Նա ինչ–որ բաներ մրմնջաց՝ հայացքը երկնքին, հետո միանգամից խմեց գինին, ու մնաց հպարտ, գոհ, ձգված դեմքով, աչքերը ինչ–որ տեղ հառած: Երևի իրենց տանն էր, կնոջ, սղանների, աղջիկների հետ: Եվ Վահրամ Ռշտունին չդիմացավ:

– Թաղևու, – ասաց նա,– հիմա ե՛ս պիտի մի բան խնդրեմ ձեզանից:

– Ինձանի՞ց,– զարմացավ պահակը,– համարի՞ր եղած:

– Ուրեմն, գնացե՛ք տուն: Դեռ ժամանակ կա: Գնացե՛ք, միասին եղե՛ք:

– Է՛, չեղավ,– ծիծաղեց պահակը,– ես ի՞նչ իրավունք ունեմ կեսու թողնելու: Մեր գործը...

– Ձեր փոխարեն ես կմնամ,– ասաց Վահրամ Ռշտունին,– դուք էլ գիտեք, որ ինձ ոչ ոք չի սպասում, ինձ համար ոչ մի նշանակություն չունի: Որտեղ ես՝ այնտեղ էլ մերոնք: Շատ եմ խնդրում: Գնացե՛ք, շնորհավորե՛ք Նոր տարին ու եկե՛ք: Հա՛ :

Պահակը հին հարևանին էր նայում զարմանքով, տարակուսած, նրա նուրբ, փափուկ լայնեզր գլխարկին էր նայում և սև փողկապին: Հետո ասաց գրեթե կակազելով.

– Այդպես ո՞նց կլինի:

– Ոչինչ էլ չի լինի, գնացե՛ք: Եթե չգնաք, կմտածեմ, թե ինձ չե՞ք վստահում:

– Յա,– շփոթված ծիծաղեց Թաթոսը:– Չգիտեմ էլ, թե ինչ ասեմ:

Պահակը դոփդոփում էր տեղում, չիմանալով ինչ անել, հետո հանկարծ կանգ առավ, նայեց ծեր ուսուցչին.

– Դե լավ, – ասաց նա, – զարմանալի մարդ ես: Հիմա ես գնում եմ, շուտ կգամ ու մինչև առավոտ մենք իրար հետ կլինենք, հա՞:

– Իհարկե, – ասաց Վահրամ Ռշտունին: – Գնացեք, եղբայր:

Նա վերցրեց հրացանը և արագ–արագ գնաց, համարյա վազեց փողոցով, իսկ երբ իրենց մուտքին հասավ, կանգնեց ու ետ նայեց:

Բայց Վահրամ Ռշտունին այլևս նրան չէր նայում: Նա նստել էր՝ կռացած կրակով լի դուլի վրա, ձեռքերով խառնում էր տաք օդը ու նայում էր կարճ ցանկապատին հենված եղևնու ճյուղին: Ու որովհետև կկոցել էր աչքերը՝ նրան թվում էր, թե դա մի եղևնի չէ, այլ շատ են, շատ–շատ: Եղևնիները հեռագրապույների նման ուղիղ շարքով ձգվում–ձգվում, հեռուներն էին գնում՝ հետզհետե փոքրանալով, ու խաղում, պսպղում էին անթիվ–անհամար խաչերով, աստղերով, մոմերով, լապտերիկներով...

Եվ ձմեռային տաք օդը ձայներով լի էր:

ՀԵՌԱԽՈՍԱԳՐՔԵՐ

Արմեն Գասպարյանը մտավ հյուրանոցի իր սենյակը, շնորհակալություն հայտնեց սպասավորին, որը փայտե ցածրիկ պատվանդանին տեղավորում էր ճամպրուկները, մոտեցավ հեռուստացույցին, միացրեց ու նոր միայն նայեց շուրջը:

Հիանալի համար էր:

Պատուհանի տակ կամացուկ խշշում էր գովացնող սարքը, ռադիոբարձրախոսի վրայի կոճակները վկայում էին, որ միաժամանակ հաղորդվում է մի քանի ծրագիր: Մանուշակագույն կերպասով ծածկված լայն, փափուկ մահճակալը ձգում էր մագնիսի նման: Անկյունում հենված էր սառնարանը: Մահճակալի աջ կողմում, փոքրիկ պահարանիկի վրա հեռախոսի տափակ ու լայն մի սարք էր դրված:

Արմեն Գասպարյանը մոտեցավ հեռախոսի պահարանին, թեքվեց, բացեց հենց առաջին արկղը ու այնտեղից երկու հաստ գիրք հանեց: Նայեց գրքերին, մեկը զգուշությամբ դրեց մահճակալի վրա, մյուսը կրկին տեղավորեց դարակում և գնաց դեպի հեռուստացույցը, որպեսզի բարձրացնի ձայնը: Տարեց ու ճաղատ մի մարդ ինչ-որ բան էր համոզում հեռուստադիտողներին, երբեմն-երբեմն մատնացույց անելով թվերով ծածկված աղյուսակները: Արմենը պտտեց կոճակը: Երկրորդ ծրագիրը գովազդներ էր հաղորդում: Երրորդում որոտում էին ատրճանակները. ամերիկյան կովբոյական նկար էր: Չորրորդ ծրագրում ստադիոնի ահավոր գոռում-գոչունի տակ խաղում էին ավստրալական ֆուտբոլ՝ ձվաձև ինչ որ գնդակով: Հետո ֆուտբոլն անջատվեց, ու իրար հետևեցին մուլտիպլիկացիոն գովազդները. «Գնեցեք կոկա կոլա», «Չմոռանաք ծխել «Փել Մել» և ուտել տարօրինակ անունով ինչ-որ մածուկ»:

Արմենը կրկին պտտեց հեռուստացույցի կոճակը: Ողջ էկրանով մեկ կանգնած էր գերմանացի էսեսական մի սպա՝ սև համազգեստով, գանգեր ու խաչեր մերակներին և ձեռքին մտրակ:

Դու խոզ ես, գոռում էր նա՝ ատելությամբ նայելով իր ոտքերի տակ, խոզ ես, խոզ, իսկական անգլիական խոզ: Քեզ մորթել է պետք:

Կամերան իջավ դանդաղ, և պարզվեց, որ էսեսական սպայի ոտքերի մոտ իսկապես պարարտ, սպիտակ մի խոզ է կանգնած:

Շատ սրամիտ էր արված, կարելի էր ծիծաղել ամբողջ սրտով, բայց Արմենը չծիծաղեց: Նա միայն կրկին հայացք նետեց մահճակալին ընկած հեռախոսագրքին, մոտեցավ, վերցրեց, բացեց առաջին էջը, նայեց, հետո փակեց արագ, դրեց պահարանի վրա ու ետ տանելով մանուշակագույն ծածկոցը, պառկեց մահճակալին:

Ու նոր միայն զգաց, թե որքան հոգնած է:

Պատուհանից երևում էին ինչ-որ արտասովոր ծառերի բարձր սաղարթները՝ վառ կարմիր, խոշոր ծաղիկներով, իսկ նրանց արանքում, պատուհանով մեկ երկինքն էր՝ մաքուր, անամպ, երկնագույն:

«Երկնագույն երկինք»՝ իր մտքի վրա ժպտաց Արմեն Գասպարյանը, բայց ուրիշ ոչ մի պատկեր չգտավ: Ո՛չ լուրթը, ո՛չ լագուրը, ո՛չ կապույտը այն չէին: Իսկ ինքը քիչ առաջ թռչում էր այդ երկնքով:

Որքա՞ն տևեց թռիչքը: Մոսկվայից մինչև Դելի՝ վեց և կես ժամ: Հետո՞: Հետո Մինգապուր: Դելիից մինչև Մինգապուր ևս հինգ և կես ժամ: Չորս ժամ Մինգապուրից մինչև Ավստրալիա, Դարվին: Իսկ որքա՞ն էր Դարվինից մինչև այստեղ, Սիդնեյ: Հա, իհարկե, ուղիղ Երևան–Մոսկվա երթուղու չափ, եթե թռչում ես Իլ–18–ով: Երեք ժամ քսան րոպե: Չէ, այդքանը մինչև Բրիզբեն էր: Իսկ Բրիզբենից մինչև Սիդնեյ թռան ևս մեկ ժամ տասը րոպե:

Ուրեմն, թռել են ավելի քան քսան ժամ: Խելագարվե՞լ կարելի է:

Նրա մարմինը դեռևս ինքնաթիռի ցնցումներն էր կրում, և պտտվում էր գլուխը: Արմենը հանկարծ մտածեց, որ ինչ-որ տարօրինակ է պտտվում գլուխը, ասես սովորականին հակառակ: Գուցե նրանից է, որ հակոտնյա աշխարհում ենք գտնվում, մտածեց նա: Ախր սա հարավային կիսագունդն է:

Հեռախոսի զանգը պարզապես ցնցեց նրան: Միրտն այնքան արագ էր բաբախում, որ նա չէր կարողանում վերցնել լսափողը: Ո՛վ կարող էր լինել զանգահարողը: Ի՞նչ լեզվով խոսի նրա հետ:

– Ալլո, լավեց լսափողի մեջ,– քնա՞ծ ես, տո:

– Թենգիգ, դո՞ւ ես,– ճանաչեց նա զբոսաշրջիկների իրենց խմբի վրացի տղաներից մեկի ձայնը:

– Չէ՛, Սիդնեյի քաղաքագլուխն է,– ծիծաղեց Թենգիգը,– ես եմ, բա ի՞նչ եմ: Չե՞ս գալիս մի քիչ դուրս գանք պտտվենք:

– Չէ՛, ասաց Արմենը,– հոգնած եմ, ուզում եմ քնել:

– Գի՞ժ ես, տո,– հեռախոսալարի մյուս ծայրում գոռոռաց Թենգիգը,– բա մարդ էստեղ հասնի ու քնի՞: Դու էլ Աբդուռահման աղան դարձար:

– Աբդուռահման աղա՞ն ով է:

– Մի ծեր նկարիչ էր Միջին Ասիայից: Իրար հետ Աֆրիկա էինք գնացել: Ամեն տեղ քնում էր: Ինքնաթիռում քնած էր: Հասանք Նիգերիա՝ քնեց, ավտոբուսում քնում էր, գնացքում քնում էր, հանդիպումների ժամանակ քնում էր: Մի օր ասացի. Աբդուռահման աղա, ի՞նչ է, ձեր տանը քունդ չէ՞ր տանում, որ հազար ռուբլի ծախսել, եկել այստեղ ես քնում:

– Եվ ի՞նչ ասաց,– ակամա ծիծաղեց Արմենը:

– Ի՞նչ պիտի ասեր, քնած էր, – ասաց Թենգիզը: – Հիմա ի՞նչ ես ասում: Գալի՞ս ես, թե չէ:

– Չէ՛, ասաց Արմենը:

Նա ցած դրեց լսափողը ու կրկին ձեռքը վերցրեց հեռախոսագիրքը: Գիրքը ծանր էր, թեքվում էր մի կողքի վրա: Վեր կացավ, ծնկեց փոքրիկ գորգին, մահճակալի մոտ ու լայն բացեց գիրքը: Թերթեց, թերթեց ու հասավ «Գ» տառին:

Մի հայացքով արագ ընդգրկեց էջերը և ուրախացավ, տեսնելով, որ «Գասպար» ազգանուններ շատ կան: Խոր շունչ քաշեց:

«Տե՛ր աստված, մրմնջաց նա, ախր չէ որ ամեն հրաշք հնարավոր է այս աշխարհում: Ի՞նչ կլինի, որ լինի այս հրաշքը: Տե՛ր աստված: Նայեմ ու տեսնեմ՝ գրված է «Գասպարյան Մ. Պ.», ուրիշ ոչինչ, «Գասպարյան Մ. Պ.»: Մի՞թե հնարավոր չէ, որ այսքան, այսքան ազգանունների մեջ, այսքան–այսքան մարդկանց մեջ լինի մի «Գասպարյան Մ. Պ.», Տե՛ր աստված»:

Արմեն Գասպարյանը իր եղբորն էր փնտրում:

1971 թվականի սեպտեմբերի 20–ին, Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի «Թրեվլ լոջ» այսինքն՝ «Իջևանատուն» հյուրանոցի իր համարում, թերթելով հեռախոսի գիրքը, երևանցի Արմեն Գասպարյանը փնտրում էր իր եղբորը, Հայրենական մեծ պատերազմում 1944 թվականին անհայտ կորած Մելիք Պետրոսի Գասպարյանին:

Խե՞նթ էր այդ մարդը, ինչ էր...

Նա ջահել չէր, նա արդեն քառասուն տարեկան էր: Երեք երեխաների հայր: Նոսրացել էին մազերը, ճերմակել քունքերի մոտ, կնճիռներն ակոսել էին ճակատն ու դեմքը, ոստայն հյուսել պարանոցին: Հեռախոսագրքի վրա սահող ձեռքի մաշկը բարակել էր արդեն ու պարզ երևում էին կապույտ երակները: Նա ջահել չէր, չէ, բայց և այնպես, Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի 1971 թվականի հեռախոսագրքում փնտրում էր 1944 թվականին Արևմտյան Ուկրաինայում ինչ–որ տեղ անհետ կորած եղբոր ազգանունը:

«Մելիք Պետրոսի Գասպարյան»:

Երբ ստացան Մելիքի անհետ կորչելը հաստատող թուղթը, Արմենը տասներեք տարեկան էր: Ամբողջ ընտանիքը լաց էր լինում: Լաց էին լինում նաև հարևանները, բարձրաձայն «Մելիք» կանչելով ու հիշելով զոհված ու կորած իրենց հարազատներին: Իսկ Արմենը միայն զարմացած էր: Ինչպե՞ս թե անհետ կորել է: Ո՞նց կարող է անհետ կորչել մեծ մարդը, այն էլ Մելիքը՝ բարձրահասակ, ուժեղ Մելիքը: Ճիշտ է ասում պապը. ասեղ հո չի՞, որ կորչի: Երևի այնպիսի տեղ է ընկել, որ հնար չունի ձայն տալու: Եթե կորել է, ուրեմն կա, որ կորել է, ուրեմն կգտնվի: Այնքան մարդիկ են կորել ու գտնվել:

Հաղթահասակ, բարձր տղա էր Մելիքը: Կիրակի օրերին առավոտյան ուսերին էր դնում փոքրիկ Արմենին և Գնունի փողոցից գնում, հասնում էր Հրազդանի ձորը: Թիթեղյա փոքրիկ տուփից կարմիր որդեր էր հանում, կախում էր կարթից, երկար ճիպոտների ծայրերին մեծ

քարեր էր դնում, պառկում էր Արմենի կողքին՝ խոտի վրա ու գրքեր էր կարդում, զարմանալի, զարմանալի բաներ:

Իսկ երեկոյան նրանք վերադառնում էին նույն ճանապարհով, երկար–երկար փողոցներով, քարե սև հունքեր ունեցող, կատաղած հոսող առուների կողքով: Եվ Արմենի գլուխը պտտվում էր բարձրությունից: Երկու ձեռքով ամուր գրկած Մելիքի վիզը, ծնոտը նրա մազերի մեջ խրած, տղան անընդհատ, անընդմեջ հարցեր էր տալիս եղբորը, և Մելիքը պատասխանում էր ներքևից վեր, ծիծաղկոտ բերանով, և քայլում էր լայն–լայն քայլերով, երկար–երկար փողոցն ի վար:

Հիմա ասում են՝ կորել է:

Չէ, այստեղ Գասպարյան չկա: Ո՞ւր է: Ասում են աշխարհը լցված է հայերով: Որտե՞ղ են: Ահա, ոչ մի Գասպարյան: Ամեն ինչ կա, ամեն ինչ: Գասպար, Գասպար, Գասպար, ինչքան ասես: Ահա՝ Գասպարելլի, Գասպարիոն, Գասպարտ, իսկ Գասպարյան չկա: Ոչ մի հատ:

Իսկ գուցե... Նա տենդորեն բացեց, գտավ «Կ» տառը: Գուցե Գասպարյան են գրում այստեղ: Գասպարյան, ի՞նչ կա որ:

Գուցե գրում են, բայց չկա: Գասպարյան էլ չկա: Գասպար՝ խնդրեմ: Նույնիսկ ավտոսպասարկման ընկերություն՝ «Գասպար և Կ»: Իսկ Գասպարյան չկա: Ասենք, ո՞վ գիտե, գուցե և դեն է նետել հայկական «յան» մասնիկը ու դարձել է Գասպար: Ինչե՞ր ասես, որ չեն անում հայերը: Լոնդոնում պառավ մի հայուհի կար, երբ ծանոթանալու համար մեկնեց ձեռքը, ասաց՝ «Օրիորդ Կարապետ»: Կարապետը դեռ ոչինչ: Այն ո՞վ էր Կոպենհագենում: Հա, ինքնաթիռով միասին էին թռչում: Աղավաղված, ծամածոված հայերենով հազիվ հասկացրեց, որ ինքն էլ հայ է, և ասաց, որ եղբայրն էլ է Կոպենհագենում ապրում: Հեռախոսի համարը չի հիշում, բայց եթե հեռախոսագրքում նայես, իսկույն կգտնես: Պետերս: Ներսես Պետերս:

– Պետե՞րս, հարցրեց Արմենը:

– Այո՛, այսինքն՝ Պետրոսյան: – Հոստեղ Պետրոսյան չեն հասկնար, Պետրոս կգրեն. Ներսես Պետերս:

Արմենը Կոպենհագենում բացեց հեռախոսագիրքը: Նախ Գասպարյան որոնեց: Չկար: Հետո մտածեց գտնել Պետրոսյան–Պետերսին: Գրքում երեք հարյուր քսան Պետերս կար: Դե, եկ ու գտիր այդ միակ Ներսես Պետրոսյանին երեք հարյուր քսան Պետերսների մեջ:

Աշխարհը հայերով լցվա՛ծ է...

Նայեմ տեսնեմ կա՞ «Գասպար Մ. Պ.», ասաց ինքն իրեն Արմեն Գասպարյանը, մատը զգուշությամբ սահեցնելով «Գասպար»–ների կողքով:

Ահա, երեք հոգի կան: «Գասպար Մ. Պ.»: Մեկ էլ հանկարծ պարզվի, որ նրանցից մեկը Մելիքն է: Տե՛ր աստված, ինչ ուրախություն կլինի: Այդ մտքից արագ խփեց սիրտը: Իսկապես, մեկ էլ տեսար...

Նա հավաքեց համարը, երկար, օտար մի համար, սկզբում՝ տառերով, հետո՝ թվերով: Ինչ-որ տեղ հեռվում բարակ ու ընդհատ հնչեց զանգը: Ձախ ձեռքի փքր քրտնել էր, նա լսափողը աջ ձեռքը վերցրեց, ցավեցնելու չափ ամուր սեղմեց ականջին:

– Հելլո՞, – լավեց տղամարդու պարզ, հարցական, թավ մի ձայն:

– Ներեցե՛ք, դուք հա՞յ եք, – հայերեն հարցրեց Արմենը: Հետո վախեցավ, որ չեն լսի, որ ինքը կամաց է հարցնում և այնպես չի հարցնում, ինչպես պետք է, ու գրեթե գոռաց, – ասում եմ, դուք հա՞յ եք, հայ, հայ:

Միղնեյում ինչ-որ տեղ, թե որտեղ՝ չկարողացավ պատկերացնել Արմենը, մի մարդ արագ-արագ ինչ-որ բան ասաց բարկացած ու ցած նետեց լսափողը:

– Դե, իհարկե, – ասաց ինքն իրեն Արմենը: – Չե՞ որ այս ամենը այնուամենայնիվ հիմարություն է: Հիմարություն է, հիմարություն է, հիմարություն է, ասաց նա: Հասկացիր, էլի, Մելիքը չկա: Չկա: Հո միայն նա չէ: Հարյուր հազարներ չկան, միլիոններ չկան: Բոլորն էլ անհետ կորել են, չկան: Մարդ ես, էլի: Ի՞նչ ես ուզում աշխարհից, ի՞նչ ես ուզում քեզնից: Ապրիր, էլի, ինչպես մյուսները:

Եվ վերջապես, ի՞նչ ես աշխարհին իրար խառնել: Խնդրում, աղաչում ես սրան-նրան, քաղցած նստում ես ողջ տարին, ուղեգիր ես ձեռք բերում, գնում հասնում ես աշխարհի ծայրը և ի՞նչ ես տեսնում՝ հեռախոսագրքերից բացի: Ի՞նչ ես տեսնում: Ամեն հանդիպողի մեջ հայ ես փնտրում, եղբայր ես փնտրում, Մելիք ես փնտրում: Իսկ որ տեսնես՝ կճանաչե՞ս: Ուր տարեկան ես եղել, երբ վերջին անգամ տեսել ես: Երեսուներկու տարի է անցել, մա՛րդ: Հիմա նա հիսունմեկ տարեկան է: Որ տեսնես, կճանաչե՞ս:

Պատերազմի երկրորդ տարում Մելիքը մի նկար ուղարկեց ռազմաճակատից: Կանգնած էր բարձր ու հպարտ՝ մի փոքրիկ ինքնաթիռի մոտ, ոտքից գլուխ կաշվե փայլուն հագուստի մեջ: Ձախ ձեռքով ետ էր տարել կաշվե պիջակի փեշը ու ձեռքը հենել էր կողքին: Իսկ բացվածքի միջից բլուզի վրա երևում էր սպիտակ, կլոր մի մեղալ: Վրան գրված էր՝ «Խիզախության համար»:

Ինչպե՞ս են անհետ կորչում այդպիսի մարդիկ:

– Լավ, – ասաց ինքն իրեն Արմեն Գասպարյանը, – այս մեկն էլ փորձեմ և վերջ:

Նա դանդաղ, հատիկ-հատիկ հավաքեց համարը, վերջին թիվը հավաքելուց առաջ նայեց պատուհանից դուրս ու տեսավ, որ մթնում է: Դիմացի շենքի վրա վառվում-հուրհրում էր գովազդը: Գարեջրի մեծ գավաթը լցվում էր լույսով, և լույսը բարձրանում-բարձրանում էր, դառնում փրփուր, փրփրում էր ու ծորում էր գավաթի կողքերից: Զարմանալի նուրբ գովազդ էր:

Լավ, ասաց ինքն իրեն Արմեն Գասպարյանը, միայն այս մեկը:

Նա բաց թողեց սկավառակը պահող մատը, և գրեթե անմիջապես էլ լսափողը վերցրին: Երևի սպասում էին ինչ-որ մեկի զանգին, որովհետև լսափողը բարձրացրած կինը սկսեց անմիջապես խոսել: Հավանորեն ինչ-որ բան էր խնդրում: Ձայնը մեղմ էր, հուզիչ ու աղերսով լի: Արմեն Գասպարյանը խղճի խայթ զգաց, քիչ մնաց անջատեր խոսակցությունը, բայց որովհետև գիտեր, թե որքան պատահական բաներ են լինում աշխարհում, սպասեց այնքան, մինչև որ կինը դադարեց խոսել, և ասաց շտապով:

– Ձեր տանը հայ կա՞: Հայ, Արմենիա: Մեղիք:

Մի պահ ոչ մի ձայն չկար: Հետո ծիծաղ լսվեց, բարձր, լիաթոք, անկեղծ ծիծաղ: Ու անջատվեց հեռախոսը: Երևի կինը կարծեց, թե կատակում են: Կատակում են: Այնինչ ոչ ոք աշխարհում դեռևս այդքան լրջորեն ու այդքան հուզված չէր հավաքել Միդնեյի այդ տան համարը:

Նա կրկին նայեց հեռախոսին ու զարմացավ, տեսնելով, որ մոխիր է թափվել սկավառակի վրա: Որտեղի՞ց կարող էր մոխիր թափվել, մտածեց նա և նոր միայն նկատեց, որ ծխում է: Նա հավաքեց երրորդ «Գասպար Մ. Պ.»-ի հեռախոսի համարի առաջին թիվը, բայց անմիջապես էլ ետ քաշեց ձեռքը, վեր կացավ ու սկսեց քայլել սենյակում:

– Ի՞նչ ես ուզում, ասաց նա ինքն իրեն,– ի՞նչ ես ուզում, ա՛յ մարդ: Ուրեմն, քո կարծիքով, եթե Մեղիքը ողջ լիներ, չէ՞ր հայտնվի: Լավ, տասը տարի կարելի էր սպասել, մտածելով, թե գերության մեջ է եղել ու վախենում է տեղեկություն տալ: Լավ, քսան տարի, հետո՞ ... Այսինքն ինչե՞ր ասես չեն լինում: Այն որտե՞ղ էր, հա, իհարկե Գվադալախարայում: Օլիմպիական խաղերի առիթով Մեքսիկա էր գնացել: Վերցրեց հեռախոսի գիրքը, թերթեց: Մի Գասպար կար և այն էլ Գասպար Մ. Պ.: Անմիջապես հավաքեց համարը ու հարցրեց.

– Ներեցեք, դուք հա՞յ եք: Հայ:

– Հա՞յ: Իսկ դուք ո՞վ եք:

– Մեղի՛ք,– գոռաց Արմենը,– Մեղիք, դո՞ւ ես:

– Չէ՛,– ասաց մարդը,– ես Միգել եմ, Մուշեղն եմ: Իսկ դուք ո՞վ եք: Ի՞նչ եք ուզում:

Նրանք հանդիպեցին: Գրեթե հասակակիցներ էին: Մուշեղը վախեցած չորս կողմն էր նայում անընդհատ ու Արմենին ստիպում էր երդվել, որ Բուլղարիայից չեն ուղարկել նրան հենց իր, Մուշեղի ետևից:

– Նրանք ի՞նչ են ուզում ինձնից,– քունքերը տրորելով անընդհատ հարցնում էր նա:

Ջահել լակոտ էր եղել, երբ սկսվել էր պատերազմը: Վառնայում էին ապրում: Ֆաշիստական կառավարությունը զորակոչել էր նրան, բայց նա ինչ-որ նավի հնոցատանը թաքնված փախել էր Արգենտինա: Հետո ուրիշ փախչողներից իմացել էր, որ հեռակա կարգով դատապարտել են գնդակահարության: Եղել էր ամեն տեղ ու ամեն ինչ, բեռնակիր էր աշխատել նավահանգստում, լրագրեր էր վաճառել, աշխատել էր խոհանոցում, ծխնելույզներ էր մաքրել: Պատվելով եկել հասել էր Մեքսիկա ու ավտոբուս էր վարում Գվադալախարա քաղաքում:

Ամուսնացել էր: Իսպանացի կին ուներ և երկու տղա՝ Անդրանիկ և Հոգե: Նկարները ցույց տվեց՝ հրեշտակներ էին:

Զգուշությամբ մարդկանց միջոցով իմացել էր, որ պատերազմից հետո ծնողները հայրենադարձվել են ու հիմա Երևանում են ապրում:

– Իսկ դու ինչո՞ւ ես այստեղ,– չգիտես ինչու բարկացած ասաց Արմենը: – Ինչո՞ւ չես գնում ծնողներիդ մոտ:

– Կրոնեն, ասաց Մուշեղը, ես գիտեմ:

– Ո՞վ պիտի բռնի, ա՛յ մարդ,– ասաց Արմենը,– նախ դու ֆաշիստներից ես փախել: Հետո դու հո Բուլղարիա չես վերադառնում: Հետո նույնիսկ, եթե որևէ մեղք ունեցել ես, արդեն կրել ես պատիժդ երկու և ավելի անգամ:

– Հազար անգամ,– ասաց Մուշեղը: – Անտեր եմ, օտար եմ, կարոտից մեռնում եմ:

– Դե, տեսնում ես,– ասաց Արմենը,– թո՛ղ ամեն ինչ, ընտանիքդ վերցրո՛ւ, հայրենի՛ք գնա: Գիտե՞ս ինչ ուրախություն կլինի, ակամա նախանձով, աշխատելով լաց չլինել, ասաց Արմենը: Նրանք գիտե՞ն, որ դու կաս:

– Չէ՛, ասաց Մուշեղը:

– Հիմար մարդ ես, գոռգոռաց Արմենը, գոռգոռաց այնպես բարձր, որ եթե որևէ տեղ Մելիքը կար, լսեր նրան: Հիմար մարդ ես, քեզ անհետ կորած են համարում... լաց են լինում վրադ, իսկ դու քեզ համար ավտոբուս ես վարում Գվադալախարայի փողոցներում: Ազգանունդ ես փոխել, կուչ ես եկել, սենյոր Միգել Գասպար: Մենակ քո մասին ես մտածում: Հիմա ո՞վ գիտե քեզ որտեղ են փնտրում ձերոնք, եղբայրներդ ու քույրերդ, ամեն ծնունդիդ թաղում են քեզ, Գասպար... Մա՛րդ եղիր, մա՛րդ...

– Դուք չգիտեք, կգնդակահարեն, երեխայի պես աչքերը տրորելով՝ լաց եղավ Մուշեղը:

Նա լաց էր լինում, իսկ Արմենը խղճահարությամբ ու զայրույթով նայում էր արդեն տարեց, խեղճ այդ մարդուն, աշխարհում կորած, աշխարհում ինքն իրեն կորցրած այդ խեղճ մարդուն: Համոզում էր թողնել ամեն ինչ, ետ դառնալ, գնալ իր ակունքը գտնել, իր անունը գտնել, իր ուրախությունը գտնել և ուրախացնել սգավոր, տխրած մարդկանց: Ուրախության սպասող, սպասումով ու հույսով ապրող, ուրախություն փնտրող մարդկանց: Համոզում էր նա, և նրան թվում էր, թե հիմա, հենց այս րոպեին, ինչ–որ մեկն էլ ինչ–որ տեղ Մելիքին է գտել ու համոզում է: Թե հիմա աշխարհում ամեն մարդ բռնել է մյուսին ու համոզում է: Համոզում է ապրել, չվախենալ, կուչ չգալ, չփոխել անունը, չկորչել անհետ, չկորչել անհետ, անհետ: Թե հիմա աշխարհում բոլորն էլ որոնում են, փնտրում են, կարոտում են, տառապում են, սպասում են, ուրախության են սպասում անակնկալ:

Հարկավոր է վերջ տալ այս բոլորին, ասաց ինքն իրեն Արմեն Գասպարյանը:

Նա վերադարձավ մահճակալի մոտ, հեռախոսագիրքը վերցրեց, դրեց պատուհանի վրա, միայն մի հայացք նետելով վերջին «Գասպար Մ. Պ.»-ի հեռախոսի համարին, հանեց հագուստը ու պառկեց մահճակալին:

Պատուհանի ետևում, ծառերից այն կողմ, համարյա քսվելով սաղարթներին, ասես ցուցադրաբար եկավ անցավ կլոր, դեղին լուսինը, և Արմեն Գասպարյանը նկատեց, որ դա միանգամայն ուրիշ, օտար լուսին է: Շրջված էր այնտեղ ամեն ինչ, ծանոթ բոլոր սովերները շրջված էին:

– Հա, իհարկե,– մտածեց նա,– ախր սա հարավային կիսագունդն է, ախր ես Ավստրալիա եմ հասել, նավապետ Կուկի, աբորիգենների, նավապետ Գրանտի որդիների երկիրը: Հիմա մոտերքում ինչ–որ տեղ կենդանություններ են վազում՝ լայն–լայն ցատկերով: Հիմա հեռուներում ինչ–որ տեղ աղիտորմ կլանչում են դինգո վայրի շները:

Ասում են՝ ապշելու երկիր է Ավստրալիան: Հարկավոր է մի լավ շրջել ու տեսնել, տեսնել այս երկիրը: Մարդիկ միայն մի անգամ են Ավստրալիա հասնում:

Նա իրեն լավ ծածկեց վերմակով, ձեռքը մեկնեց, որ հանգցնի լուսամփոփը և փոքրիկ պահարանի վրայից վերցրեց հեռախոսագիրքը:

Լավ, ասաց նա ինքն իրեն, այս մեկն էլ փորձեմ, և վերջ...

1973թ.

ԿՈԱԼԱՆԵՐ

Փոքրիկ կենդանիները ծուլորեն շարժվում էին ծառի ճյուղի վրա՝ անդադար ծամելով ու անտարբերությամբ շրջվելով իրենց հատված լուսանկարչական սարքերից: Նրանք միամիտ, վախեցած աչքեր ունեին և թաց, խղճալի դնչեր:

– Ուշադրություն դարձրեք այս հազվագյուտ կենդանիներին, լեդինե՛ր և ջենտլմեննե՛ր, հանդիսավոր ու բարձր ասում էր թարգմանչուհին, – սրանք նշանավոր ավստրալական արջուկներն են և կոչվում են կոալա, որ աբորիգենների, այսինքն՝ բնիկների լեզվով նշանակում է՝ «Խմող չէ»: Կռալաներն իրոք ջուր չեն խմում և պատկանում են պարկավորների ընտանիքին: Նրանց միակ սնունդը էվկալիպտի տերևներն են: Նրանք ապրում են հենց էվկալիպտի ծառերի վրա և բացարձակապես գուրկ են պաշտպանության միջոցներից: Ի բարեբախտություն նրանց, Ավստրալիայում գիշատիչներ չկան, լեդինե՛ր և ջենտլմեննե՛ր, եթե չհաշվենք մարդկանց:

Թարգմանչուհին ծիծաղեց իր կատակի վրա մի այնպիսի ծիծաղով, որից պարզ էր, որ միշտ այդ նախադասության վրա ծիծաղում է: Ծիծաղեցին նաև զբոսաշրջիկները:

– Դուք հանգիստ կարող եք նկարել կռալաներին, միայն սպառնալ չի կարելի: Տեսեք ինչպես են վախենում...

Թարգմանչուհին ճշաց հանկարծ ու մատը թափ տվեց արջուկների վրա: Նրանք դադարեցին ծամել ու փոքրիկ թաթերով ծածկեցին աչքերը: Դա իրոք որ ծիծաղելի էր ու խղճալի:

– Նկատի՛ ունեցեք, կռալաները միակ կենդանիներն են, որ Ավստրալիայից բացի ուրիշ ոչ մի տեղ չկան: Շատ են փորձել նրանց բնակեցնել այլ երկրներում, բայց կռալաները հայրենիքից դուրս չեն կարողանում ապրել, ոչնչանում են:

Արմեն Գասպարյանը մի քանի անգամ լուսանկարեց այդ զարմանալի կենդանիներին: Հետո երկար կանգ առավ կենդուրտների մոտ: Նա զրպանից հացի մի կտոր հանեց, որ թարգմանչուհու խորհրդով նախօրոք վերցրել էր հետը, և երբ ձեռնասուն կենդուրտներից մեկը անձոռնիորեն ցատկելով մոտեցավ նրան, մեկնեց հացը: Կենդուրտն հենվեց ամուր ու հաստ պոչի վրա և բարձրացրեց զարմանալիորեն քնքուշ, ասես կանացի թաթերը: Նույն վայրկյանին նրա պարկը զգուշությամբ բացվեց և հայտնվեց ճուտի սրաղունչ գլուխը: Կենդուրտն մի թաթով բռնեց հացը, իսկ մյուսով ճուտին ետ՝ պարկը հրեց, օտար աչքերից ու վտանգից հեռու: Նրա բնագդական շարժումի մեջ մայրական այնպիսի մի սրտաշարժ ու կոպիտ հոգածություն կար, որ Արմեն Գասպարյանը զգացված ժպտաց:

«Մայրն ամենուրեք ու ամեն ինչում մայր է»... մտածեց նա:

Բայց որովհետև նրան շատ հասարակ ու ծամծամված թվաց այդ ձևակերպումը, ամաչեց մի տեսակ, ասես Բարձրաձայն էր արտահայտել իր միտքը ու մոտեցավ վառ դեղինով ներկված նստարանին:

Նրա դեմքին խաղում էր օվկիանոսի հոտը, և մարմինն ասես օրորվում էր ալիքների ծփանքից: Կռալաների և կենգուրուների արգելանոցը գալուց առաջ նա մոտ երեք ժամ մեջքի վրա պառկած էր ծովածոցի ալիքների վրա՝ սքանչացած նայելով մաքուր երկնքին և աշխատելով աշխարհի քարտեզի վրա որոշել իր տեղը: Դա շատ հետաքրքիր էր և երազի էր նման:

Ո՞վ կմտածեր, թե երբևէ կհայտնվեր այստեղ, աշխարհի ծայրում, Խաղաղ օվկիանոսի ափին, ավստրալական այս փոքրիկ քաղաքում, որտեղ ընդամենը մի հայ կա: Զարմանալի բան է. հայերն առհասարակ մենակ չեն կարողանում ապրել, իսկ սա ապրում է:

«Հոյակապ մարդ է, ասաց նրա մասին Մելբուռնի հայերից մեկը, անպայման զանգահարիր: Շատ հայասեր մարդ է, թող առնի կարոտը»:

«Երեկոյան կզանգահարեմ», վճռեց Արմեն Գասպարյանը:

* * *

– Ալլո՞:

Հեռախոսալարի մյուս ծայրում սկսեցին խոսել անգլերեն:

Ես Պանդուխտ Չարեքյանին եմ ուզում, հայերեն ասաց Արմեն Գասպարյանը:

– Ես եմ, Պանդուխտն եմ, դո՞ւք եք, պարոն Գասպարյան: Մելբուռնի բարեկամս զանգահարեց ինձ: Կսպասեի: Ե՞րբ եկաք: Շատ, շատ ուրախ եմ: Ինչպե՞ս եք: Մենք ալ աղեկ ենք: Կինս, գիտե՞ք, անգլուհի է, սակայն հայերեն քիչ ու միչ կհասկանա: Մեծ աղջիկս ալ կհասկանա, սակայն խոսել չգիտե, իսկ փոքրս բոլորովին չի հասկանա, անպիտանը: Քանի՞ օր պիտի մնաք: Որտե՞ղ իջած եք: «Պարկ ռոյալ»՝ Հոթել լ է, թե՛ մոթել: Հոթել լ: Հա, աղվոր հոթել է: Շատ սուղ չէ՞ վարձը: Չե՞ք գիտեր: Սուղ կըլլա, սուղ կըլլա... հոստեղ ամեն ինչ սուղ է, ջանմ, ապրելն ալ սուղ է, մեռնելն ալ սուղ է...

Հեռախոսալարի մյուս ծայրում Պանդուխտ Չարեքյանը ծիծաղեց.

– Կատակ պիտի ընեմ, զգուշացրեց նա: Հոստեղ կսեն՝ Ավստրալիո մեջ միայն ոչխարը սուղ չէ, ատոր համար ո՛չ մեկը կուզե ոչխար ըլլալ:

Եվ նա երկար ծիծաղում էր իր կատակի վրա, այնքան, որ Արմեն Գասպարյանը ժպտաց: «Կարոտած մարդ է, ասաց նա ինքն իրեն»:

– Հիմա հորթե՞լն եք, պարոն Գասպարյան: Ուրեմն ես տասնհինգ վայրկյանեն ետքը կուգամ: Ափսո՛ւ, քանի մը օր առաջ գալու էիք, ավելի շատ ժամանակ կրնայի անցուցել ձեզի հետ: Հակառակի պես երեկ մայրս մեռավ:

– Ի՞նչ: Ինչպե՞ս թե:

– Այո՛, երեկ մայրս մեռավ: Երկուշաբթի պետք է թաղենք:

Սա՞ ինչ բան է: Իսկ քիչ առաջ երկար խոսում, ծիծաղում էր, զգուշացնում էր, որ կատակ պետք է անի...

– Շատ, շատ վշտացած եմ, – շփոթված մրմնջաց Արմեն Գասպարյանը: Ցավում եմ սրտանց:

Է՛, հոգ չէ, ասաց Պանդուխտ Չարեքյանը, մայրս գրեթե ութսուն տարեկան էր...

Դե մայրը մնում է մայր, ասաց Արմեն Գասպարյանը և ակամա կարմրեց, սրտնեղելով, որ նորից օգտագործում է այդ բավականին հասարակ, ծամծմված, ասես այլևս իմաստագուրկ միտքը:

– Չէ՛, հոստեղ մի քիչ ուրիշ է: Արդեն ծեր էր մայրս: Տանը չէր կրնա օգնել: Որպեսզի բեռ չըլլա, քիչ ու միչ գործեր կներ, որովհետև այստեղ անգործ մարդկանց չեն սիրեր... Ծերանոց կուղարկեն:

Արմեն Գասպարյանը շփոթված լռում էր:

– Ես հիմա պատկերացնում եմ ձեր վիճակը, ասաց նա: Գիտեմ, թե որքան եք հուզված ու խառնված: Ներողություն, որ անհանգստացրի, ինչ ասեմ...

– Ո՛չ, ո՛չ, հեռախոսալարի մյուս ծայրում անհանգստացավ Պանդուխտ Չարեքյանը: Հիմա կուգամ քեզ մոտ: Շատ կուգեմ խոսել հետդ, հայերեն խոսել: Ի՞նչ կըլլար մի քանի օր առաջ գայիր, մա՛րդ աստծո, մայրս շատ կսիրեր հայերեն խոսել, բայց հետը խոսող չկար: Մի լավ երկար–երկար կխոսեիք: Գիտե՞ս, մայրս մինչև վերջ ալ հայերենից զատ ուրիշ լեզու չսովրեց, չէր ուզում սովորել... Ես հիմա կուգամ:

– Կարիք չկա, ձեր հոգսով զբաղվեք, խնդրում եմ, սրտանց խնդրեց Արմեն Գասպարյանը:

Նա իսկապես, չգիտես ինչու, այլևս չէր ուզում տեսնել այդ մարդուն:

– Ո՛չ, ո՛չ, քեզ համար չէ, ինձի համար կուգամ, պնդեց Պանդուխտ Չարեքյանը և, որպեսզի առարկություն չլսի, արագորեն կախեց լսափողը:

* * *

Կես ժամ անց համարի դուռը բխեցին: Ներս մտավ բավականին բարեկազմ, ճերմակող մազերով ու բեղերով, նուրբ դիմագծերով, հին հայերի կապույտ աչքերով մի մարդ: Կասկած

չկար, որ Պանդուխտ Չարեքյանն է: Նրա հետ եկել էր նաև դուստրերից մեկը, որ սպիտակ, կլորիկ, պարզ ու բարի դեմքով մի աղջիկ էր և հավանաբար շատ էր նման իր անգլուհի մորը:

– Պարո՛ն Գասպարյան, ծանոթացի՛ր, ավագ դուստրս է, Պանինան:

– Պանինա՞:

Այո՛, առաջինն էր: Իմ անունը Պանդուխտ է: Կինս ասաց՝ եթե մանչ ծնվի, Պանդուխտ կոնենք անունը: Բայց աղջիկ ծնվեց: Եվ անունը դրեցինք Պանինա:

– Աղվոր ամ... անուն է, այո՞, տանջալիորեն ձգելով բառերը՝ հայերեն հարցրեց աղջիկը:

Մենք նստեցինք, և Ավստրալիայի ծովեզրյա այս փոքրիկ քաղաքում ավելի քան տասներկու տարի ապրող Պանդուխտ Չարեքյանը երկար–երկար պատմում էր իր կյանքը: Տասը թվականին է ծնվել Սև ծովի ափին, Սամսուն քաղաքի մոտ ընկած մի գյուղում: Հետո սպանել են հորը, ու գաղթ է եղել: Մայրը հավաքել է որբերին ու տարել հասցրել Հունաստան, պահել է մի կերպ, մեծացրել է: Իր հացը վաստակելու համար ինչե՛ր ասես որ չի արել Պանդուխտը, որտեղ ասես չի թափառել: Գնացել, գնացել, հասել է Անգլիա: Մանր առևտրով է զբաղվել ու այնտեղ էլ ամուսնացել այս Պանինայի մոր հետ: Հետո դրամ վաստակելու հույսով նրանք գնացել, Աֆրիկայի խորքերն են հասել, երկար տարիներ դեգերել են Գանայի ջունգլիներում: Հետո ինչ–որ բանի տեր են դարձել և նորից գնացել, գնացել հասել են Ֆրանսիա: Հետո էլի են թափառել, էլի ինչ–որ երկրներում են եղել, մինչև որ այսպես գնալով, գնալով եկել հասել են Ավստրալիա, ծովեզրյա այս փոքրիկ քաղաքը, հողակտոր են գնել, տուն են սարքել ու ապրում են:

– Սամսունին նման է, գիտե՞ս, ասաց Պանդուխտ Չարեքյանը: Ափին որ կնստեմ ու կփակեմ աչքերս, մեր Սև ծովը կտեսնեմ... Սև ծովը տեսած կա՞ս:

– Շատ, ասաց Արմեն Գասպարյանը:

– Այս Ավստրալիան աղվոր երկիր է՝ գիտե՞ս,– ասաց Պանդուխտ Չարեքյանը: Հետո երևի մտածեց, թե Արմեն Գասպարյանը կնեղանա, կամ որ լավ չէ այդպես ասելը, երբ ինչ–որ տեղ հայրենիք ունես, ու ավելացրեց շտապով: – Եթե Հայաստանում չես, ուրեմն ամենալավ տեղը Ավստրալիան է: Այդպես չէ՞: Հոս խտրություն քիչ կա. ոչ մեկը չըսե՛ արմենիա՞ն էս, իրի՞շ էս...

– Արմենիան... Խայաստան... ամ... այո՞,– ինչ որ կերպ զրույցին մասնակցելու համար տառապանքով հեգեց Պանինան:

– Իսկ էս լսել եմ, որ իտալացիներին ու հույներին լավ չեն վերաբերվում այստեղ,– ոչ միտումնավոր, ուղղակի որևէ բան ասած լինելու համար ասաց Արմեն Գասպարյանը:

Պանդուխտ Չարեքյանը մի փոքր շփոթվեց:

– Ճիշտ է, ասաց նա, սակայն իտալացիների ու հույների աղքատը եկած է հոս ու անկիրթը: Անոնց չեն սիրեր... Դե, մենք՝ հայերս, ուրիշ ենք, աշխատող ենք, մեզի կսիրեն...

– Բախտավոր ժողովուրդ ենք,– չգիտես ինչու բարկացած նրան ընդհատեց Արմեն Գասպարյանը,– բոլորը սիրում են մեզ...

– Այո՛, անվստահ հաստատեց Պանդուխտը:

Եվ որովհետև Արմեն Գասպարյանը այդ ամբողջ ժամանակամիջոցում Պանդուխտ Չարեքյանի մոր մասին էր մտածում, ակամա հարցրեց միանգամից, գրեթե անկապ.

– Իսկ ձեր մա՞յրը...

– Է՛, մայրս ինչ,– ասես սթափվելով զարմացած նրան նայեց մարդը: – Հիվանդ էր... Լավ էր, որ քիչ մնաց հիվանդ: Այսինքն՝ անկողին չընկավ գրեթե: Իհարկե, ես ամեն ինչ արեցի... Ձրի հիվանդանոց գտա: Գիտե՞ս, այնտեղ չեն բուժեր: Բայց կպահեն: Կուզես դրամ կուտաս, կուզես՝ չես տա: Հոստեղ դրամի խնդիրը շատ կարևոր է: Նարինջի կիլոն արժեք չունի, խնձորը արժեք չունի, ոչխարը, գիտե՞ս, երկու–երեք դոլարով կառնինք... Բայց կյանքը սուղ է և երթալով ավելի սուղ կդառնա: Շնորհք պիտի ունենաս, որ դրամ կուտակվի... Դրացիներ ունենք, որ օրվա վաստակածը կխմին, կուտին: Է՛, ատանկ կարելի չէ: Հոս բանկային մեջ դրամ չունենաս նե, մարդ չես...

– Եվ ձեր մայրը...

– Է, մայրս շատ խնդրեց, որ հիվանդանոց չտանինք: Է՛, ամ... սակայն ո՞վ կրնար խնամիլ ծեր կինը: Ես և տիկինս մեր խանութը կաշխատինք: Աղջիկներուս մեկը պետական օֆիսը կբանա, մյուսը կանացի վարսավիր է... Լավ գործ կընենք, փա՛ռք աստծո: Տանը չորս հոգի ենք, երեք օթոն ունենք: Պատիկ աղջիկս ալ կկովի, թե ես ինչո՞ւ չպետք է ունենամ... Իսկ մեզ մոտ օթոն սուղ է, գիտե՞ս: Երկու հազար դոլարեն պակաս չկա: Հարկավ, քիչ մը բանցուցած որ առնիս, աժան է, սակայն...

– Եվ ուրեմն մայրիկը...

– Է՛, մայրիկի խնդիրը լեզվի խնդիր էր: Լեզու չգիտեր... Հիվանդանոց չէր ուզեր երթալ. քանի որ միայն հայերեն կխոսեր: Է՛, հայերեն խոսելով հոս կապրվի՞... Հոս ճարպիկ պիտի ըլլաս, հարյուր լեզու պիտի ունենաս...

– Ֆադր,– կամացուկ ասաց Պանինան: – Հետո նայեց Արմեն Գասպարյանին, կարմրեց ու ասաց... Խայրիկ... ամ... այդպես չէ՞...

– Այո՛, այո՛,– անհանգստացավ Պանդուխտ Չարեքյանը: – Աղջիկս օֆիսեն կուշանա: Հոստեղ շատ խիստ է, գիտե՞ս, վայրկյան մը ուշանա, տնօրենը կըսե՛ այ ամ սորի... այսինքն թե ափսոսում եմ, սակայն այլևս միասին չենք կրնա աշխատել... Չեն գոռա, գիտե՞ս, շատ քաղաքավարի կըսեն...

* * *

Պանդուխտ Չարեքյանի տունը մի շատ սիրունիկ բլրի վրա էր գտնվում, քաղաքից ավտոմեքենայի ճիշտ կես ժամվա ճանապարհի վրա, անտառի պոնկին: Չորս սենյականոց փոքրիկ, հարմարավետ ու թեթև տուն էր, լավ մշակված կանաչ բակով, մոռու փոքրիկ թփերով և պապայայի վիթխարի ընկույզներով ծանրաբեռնված կարճիկ, ծերատված ծառերով:

Մի փոքրիկ սեղան դրեցին վառ կանաչի վրա, նստեցին թեթև աթոռակներին ու ծխեցին:

– Պարոնը ամ... քաղցած չէ՞, երկար–երկար հայերենով հարցրեց շատ հաճելի դեմքով անգլուհի տանտիրուհին:

– Ո՛չ, ո՛չ, ասաց Արմեն Գասպարյանը, շնորհակալություն:

– Բրենդի չե՞ս ուզեր,– զարմացավ Պանդուխտ Չարեքյանը:

– Ընդհանրապես խմելու ոչինչ չեմ ուզում...

– Հոստեդ մեկ անգամ կհարցնեն, գիտե՞ս,– ժպտալով ասաց Պանդուխտ Չարեքյանը: Կերար նե՛ կերար, չկերար նե՛ չկերար...

– Լավ եք անում,– ասաց Արմեն Գասպարյանը: – Թենք յու վերի մաչ...

– Պարոնը սփի՞ք ինգլիշ,– պայծառացավ տանտիրուհին: Արմեն Գասպարյանը տարուբերեց գլուխը:

– Այս ի՞նչ բան է,– հարցրեց նա,– մարդ չի՞ հավաքվելու: Որտե՞ղ է մայրիկի դին դրված:

Պանդուխտ Չարեքյանը բարձրաձայն ծիծաղեց:

– Է, ատանկ սովորություն չկա: Հատուկ տեղ կա թաղամասին մեջ: Հոն կպահեն, հետո կթաղեն...

– Հավատացյա՞լ էր մայրիկը:

– Հարկավ, շատ հավատացյալ էր...

– Բայց ձեր քաղաքում հայկական եկեղեցի չկա:

– Այո՛, մեղավոր ձայնով ասաց Պանդուխտ Չարեքյանը: Անգլիական եկեղեցում պիտի դնենք...

Խե՛ղճ, խե՛ղճ Հայկանուշ մայրիկ:

Արմեն Գասպարյանը նայում էր բլրի ստորոտում տարածված արմավենու անտառին: Ավելի հեռվում՝ կոկիլկ սարերի փեշերին, մրջյունների նման ցրված արածում էին ոչխարի անհամար հոտեր: Հետո ոտքերի տակ նայեց ու հարյուրերորդ անգամ զարմացավ, թե որքան խնամքով են այստեղ վերաբերվում խոտի մշակությանը: Խոտը հարթ ու համաչափ խուզված էր ամենուրեք: Հետո նա տեսավ, որ Պանդուխտ Չարեքյանի հարևան տան բնակիչները գնդակ են խաղում իրենց համաչափ խուզված խոտի վրա և ծիծաղում են զվարթ: Եվ նա հանկարծ վիրավորվեց, որ մարդ է մեռել, բայց հարևանները ծիծաղում են:

– Է՛, կկարծեք, թե հոստեղ կյանքը հե՞շտ է, հանկարծ լսեց նա անգլուհի սիրունատես տանտիրուհու ձայնը: Ամուսինս ինչի ասես ձեռք չզարկավ... Սկզբում խոզ կպահեինք, գրքով, գրքի մեջ կկարդայինք ու կպահեինք: Ամ... շահ չունեցանք: Սկսանք հավ պահել... Է՛, սակայն տեսանք, որ բան մը չէր: Հիվանդություն կար... հավերն սկսան ասանկ վեր–վեր թռչել ու իյնալ: Կհիշե՞ս, ծիծաղելով դարձավ նա ամուսնուն: Վնասը քիչ ընելու համար, պարո՛ն, ամբողջ օրը հավ կուտեինք...

Դա երևի շատ ծիծաղելի հուշեր էր արթնացնում, որովհետև անգլուհի տիկինը և նրա հայ ամուսինը զարմանալիորեն միատեսակ երկար ու բարձրաձայն ծիծաղում էին, մինչդեռ Արմեն Գասպարյանը մեղավորի պես, աչքի տակով հարևանների կողմն էր նայում:

– Այնուհետև փայնեփլի առևտուր սկսանք ընել: Ամ... փայնեփլի հայերենն ի՞նչ է, Պան...

– Անանաս կըսեն, ասաց Պանդուխտ Չարեքյանը:

– Այո՛, փայնեփլ... Անտառը լիքն էր, սակայն քաղաքում գին չունեք: Բան դուրս չեկավ, Է՛, լավ էր գոնե, որ մեծ–մեծ հողեր ունեինք, թանկացան, ծախեցինք մաս–մաս, օգուտ ունեցանք:

– Կապրինք նե, գոհություն աստծո,– գոհունակ ասաց Պանդուխտ Չարեքյանը: – Սակայն դրամի շատ–շատ պակաս ունինք: Հոստեղ առանց դրամի չես կրնա ապրիլ, գիտե՞ս, առանց օթոյի ալ չես կրնա ապրիլ: Քաղաքը ցրված է, ավտոբուս չկա, տրամվայը հանել են... Է՛, օթոն ալ սուղ է... Այս տունն ալ վաճառեմ պիտի, քանի որ նոր տուն մը սարքել եմ, երեք–չորս շաբթեն պատրաստ կըլլա... Դրամի խնդիրը...

Եվ հանկարծ Արմեն Գասպարյանը կորցրեց իրեն.

– Մայրիկն ի՞նչ գործ ունի այդ բոլորի հետ, գրեթե գոռաց նա:

Միանգամից լռություն տիրեց: Նույնիսկ լսվեց, որ հեռվում գնդակ խաղացող հարևանները իսպաներեն են խոսում:

Անգլուհի տանտիրուհին ոչինչ չհասկանալով սիրալիր տարակուսանքով թոթվեց ուսերը, և Արմեն Գասպարյանը սարսափելի շփոթվեց:

– Ախր հարևանները կլսեն, որ դուք ծիծաղում եք...

Պանդուխտ Չարեքյանը բարի, ներողամիտ ժպիտով, եղբայրավարի նայեց Արմեն Գասպարյանին...

– Հոգուդ շատ մոտ մի՛ ընդունիր, ասաց նա, հոստեղ ամեն ինչ ուրիշ կերպ է...

* * *

Եկեղեցին փոքրիկ, սովորական մի շենք էր և թերևս միայն խաչով էր տարբերվում շրջապատի շենքերից: Արմեն Գասպարյանը շատ եկեղեցիներ էր տեսել աշխարհում, իրարից մեծ ու փոքր ու ոճով իրարից տարբեր, բայց առաջին անգամ էր այսքան պարզ մի եկեղեցում: Մարդիկ կորցրել են հավատը, ջերմեռանդ աղոթողների թիվը գնալով պակասում է, և հոգևորականներն ինչեր ասես չեն անում մարդկանց եկեղեցուն կապելու համար: Ժամանակակից ու վերացական ոճի եկեղեցիներ են կառուցում, աստծո տաճարներում թույլատրում են ջազային երաժշտություն և ռոկն ռոկ պարել, երիտասարդության համար կինոնկարներ են ցուցադրում, կրոնական թեմաներով զվարճալի ժամանցներ են կազմակերպում ու զեկուցումներ կարդում՝ «Աստված և ամուսնական բաժանությունները» կամ «Մերը մերձավորի նկատմամբ» թեմաներով: Միդնեյի մի եկեղեցում նույնիսկ էժանագին ճաշեր են տալիս հավատացյալներին: Իսկ Միդնեյից ոչ շատ հեռու, Ինգելսայդ վայրում հազվագյուտ մի տաճար կա, որ իր ստեղծողի անունով Բահալի է կոչվում: Այդ տաճարում կարող են աղոթել բոլորը, անկախ իրենց հավատից: Տաճարի ճակատին գրված է. «Բոլոր դարերում մարդիկ իրենց աստծուն են դիմել եկեղեցում, մզկիթում թե բուդդայական տաճարում: Նե՛րս մտիր, մա՛րդ, կարևորը հավատն է»:

Կարևորը հավատն է:

Աներևույթ մագնիսոտֆոնից Մոցարտի ռեքվիեմն էր հնչում՝ զարմանալիորեն ահավոր ու սրտամաշ: Ցածրիկ պատվանդանի վրա, հասարակ ու սև դագաղում, մանրիկ ձեռքերն իրար վրա դրած, չորուկ–մորուկ մի պառավ էր պառկած, ասես հոգնությունից հենց նոր փակած կոպերով, խիտ կնճիռների մեջ տարակուսանքի, թե զարմանքի արտահայտություն:

Արմեն Գասպարյանը ետ նայեց ակամա: Ամբողջ սրահում երկուսով էին: Միայն բեմի վրա ինչ–որ դանդաղ արարողությամբ էր զբաղված հաճելի, սիրունատես մի հոգևորական:

– Է՛, խանութը փակել կարելի չէ,– ակամա արդարանալով շշջաց Պանդուխտ Չարեքյանը: – Կինս առևտուր կընե: Աղջիկներս ալ իրենց գործին են: Բարեկամս պետք է գար Մելբուռնեն, կուշանա: Այստեղ ասանկ է... Շատ չի տներ, գիտե՞ս, հիմա կվերջացնեն... Ծեր կին էր...

– Այո՛, ասաց Արմեն Գասպարյանը: Նրա ձայնը խալոտ հնչեց: Կոկորդը քոր էր գալիս մի տեսակ:

Աներևույթ մագնիսոտֆոնի մեջ կանանց երգչախումբը ամենաբարձր տոնի վրա ասես պահեց շունչը, և հանկարծ աստվածային երաժշտության ներքո բարձր ու հանգիստ հնչեց ջահել հոգևորականի ձայնը: Նա խոսում էր այնպես, ասես աստծո տունը հավատացյալներով լի էր, ու աշխարհը լի էր հավատացյալներով: Նա ինչ որ բան էր համոզում մարդկանց, հորդորում ու պահանջում էր մեղմ, երգեցիկ ձայնով, և նրա աչքերը հառված էին ցածրիկ պատվանդանի

վրա, հասարակ ու սև դագաղի մեջ պառկած փոքրիկ պառավի դեմքին: Նա խոսում էր դանդաղ, հատ–հատ արտասանելով բառերը, և այդ բառերը հնչեղ արձագանքում էին կիսախավար սրահի ցածրիկ կամարների տակ:

Արմեն Գասպարյանը տեսավ, թե ինչպես իր կողքին խուլ հառաչով ծնկի իջավ սամսունցի Պանդուխտ Չարեքյանը: Եվ որովհետև անհարմար էր այդպես միայնակ կանգնելը՝ ինքն էլ ծնկի իջավ ամաչելով: Եվ հանկարծ լսեց, որ Պանդուխտ Չարեքյանը հեծկլտում է ու զարմացած նայեց նրան:

– Ախր չգիտես, թե ինչեր կըսես, հեծկլտանքի միջից շշնջաց Պանդուխտ Չարեքյանը: Գաղթի մասին կխոսես, հայերի ճակատագրի մասին կխոսես և ալելույա կըսես իմ անբախտ, անհայրենիք Հայկանուշ մայրիկիս հոգուն համար...

– Դո՛ւք էիք նրան այդ մասին պատմել, հարցրեց Արմեն Գասպարյանը:

– Ո՛չ, ու հենց ադոր համար կուլամ... Այս ի՞նչ ճակատագիր է, տեր աստված... Ի՞նչ գործ ունեն Հայկանուշ մայրիկս այս անտեր Ավստրալիո մեջ: Ի՞նչ կըլլար մի քանի օր շուտ գայիր, մա՛րդ, մայրիկս հայերեն խոսեր հետո: Ինձի համար խնդիր չէ, սակայն մայրիկս կմեռներ հայերեն խոսելու համար: Ողորմի հոգուդ, Հայկանու՛շ մայրիկ, հայերեն խոսող չեղավ քեզ հետ:

«Իհարկե, քեզ համար խնդիր չէ: Ոչ դու, ոչ էլ աղջիկներդ չեք մեռնի, հայերեն խոսելու կարոտից, չգիտես ինչու չարացավ Արմեն Գասպարյանը: Եվ այլևս ոչ ոք չի մեռնի: Ո՛չ ոք: Չեք ապրի, որ մեռնեք: Կջնջվեք, կանհետանաք: Կդառնաք անգլիացի, ֆրանսիացի, թուրք: Եվ ոչ մեկդ չեք մեռնի: Դուք նույնիսկ կոալա չեք... Դուք ճարպիկ եք, ձեզ բոլորը սիրում են: Դուք ամեն տեղ էլ կարող եք ապրել և ուտվել»:

* * *

Նա քայլում էր փողոցով արագ–արագ, շնչակտուր լինելով, քայլում էր մտքում խոսելով ու վիճելով ինքն իր հետ, Պանդուխտ Չարեքյանի հետ, աշխարհի հետ: Նա քայլում էր՝ չնկատելով գիշերային պայծառ ու նուրբ գովազդները, որոնք վառվում, հուրհրում, ճչում ու պտտվում էին: Քայլում ու զարմանում էր, որ պառավ մի կնոջ մահը կարող էր այդպես հուզել իրեն: Եվ մտածում էր, որ հարցը պառավ կինը չէ, որ զարհուրելի ու անարդարացի շատ բաներ կան այս տարօրինակ աշխարհում:

Բոքիկ ոտքերով իրենց գյուղի կանաչ արահետներով աղբյուրը վազող փոքրիկ Հայկանուշի մտքով կանցնե՞ր երբևէ, որ կյանքն ավարտելու է հեռո՛ւ–հեռվո՛ւմ, անիմանալի մի երկրում, որի անունը Ավստրալիա է, և որտեղ հայերեն խոսող չկա: Ոչ ոք չկա, որին հայրերիդ լեզվով պատմես ցավդ, ասես թե ինչեր ես քաշել, մղկտաս ու լաց լինես հայերեն:

... Արմեն Գասպարյանը քանդեց օձիքը, խորը շունչ քաշեց ու նորից արագ–արագ քայլեց Ավստրալիայի ծովեզրյա այդ փոքրիկ քաղաքի գիշերային աղմկոտ փողոցով: Նա քայլում էր այնպես, ասես փախչում էր: Եվ նրա աչքերի առաջ ամենուրեք կոալաներ էին երևում՝ խղճալի, միամիտ, անպաշտպան կոալաներ:

Կորած կռաւաներ:

1976 թ.

ՄԵԽԻԿԱ-68

Ինչո՞ւ այս վերնագիրն ընտրեցի իմ ճամփորդական նոթերի համար: Մի վերնագիր, որ 1964-ից, Տոկիոյի օլիմպիադայից անմիջապես հետո, չորս տարի շարունակ չէր իջնում լրագրերի ու հանդեսների, փոստանիշների ու ծրարների, կանացի պայուսակների ու տղամարդկանց բաճկոնների վրայից:

Որովհետև օլիմպիադան անցել, դարձել է հուշ, դարձել է պատմություն և կարոտ, և ուզում ես հիշել ու հիշեցնել օլիմպիական աղմուկը:

Իսկ թե ինչո՞ւ ճամփորդական նոթերն ուզեցի գրել հիմա՝ Մեքսիկայից վերադառնալուց տարիներ անց, իմ փոխարեն հրաշալի ասել է ռուս գրողներից մեկը.

– Չգիտեմ, հանկարծ ուզեցի նստել ու գրել:

Եվ ուրեմն ՄԵԽԻԿԱ-68:

Մոսկվա, Շերեմետևոյի օդանավակայան, հրաժեշտի աղմուկ, ժպտուն, արցունքոտ դեմքեր, առաջ պարզված մանկական ձեռքեր, տղաների գրնգուն ձայներ. «Երանի ձեզ, վաղը օլիմպիադայում», տատիկի անհանգիստ հորդոր. «Չմրսես, Վասյուտկա», տղամարդկային զուսպ, ամաչկոտ բառ. «Դե, լավ, լավ, մայրիկ», մաքսատան ու սահմանապահ աշխատողների կիրթ, չափավորված դիմավորումներ, անհրաժեշտ ձևականություններ, և ահա մեր ՏՈԻ-104-ը թռչում է դեպի Ամստերդամ: Ձանձրանալու, երկրին կարոտելու, հրաժեշտի բոլոր մանրամասները հիշելու անսահման հնարավորություններ ունենք: Երեք ու կես ժամ Մոսկվայից Ամստերդամ: Յոթ ժամ Ամստերդամից Մոնրեալ: Չորս և կես ժամ Մոնրեալից Հյուստոն (ԱՄՆ): Երկու ժամ Հյուստոնից Մեխիկո: Թոփչքը՝ կանգառներով տևեց ուղիղ քսանչորս ժամ: Հիշողության մեջ մնացել են միայն այդ կանգառները. Ամստերդամը՝ իր աննման գունավոր թոփչքային հրապարակով, օդանավակայանով, որը միաժամանակ տարբեր տեղերից ընդունում ու ճանապարհում է 8-10 ինքնաթիռ, որտեղ գրեթե բացակայում է աղմուկը, և իսպառ վերացել են սանդուղքները: Շարժական միջանցքները հսկայական սրահից անջատվում ու թեքվելով հավում են ուղիղ ինքնաթիռի դռանը: Խնդրեմ, նստիր: Մոնրեալը, որի օդանավակայանում քեզ դեպի ինքնաթիռն էին տանում շարժական փողոցները, Հյուստոնը՝ «Կոկա-կոլա»-ի վիթխարահասակ ռեկլամներով և զինվորների առատությամբ: Եվ թոփչքը գիշերային Ամերիկայի վրայով՝ որտեղ համատարած մթության մեջ, ասես սև թավիշի վրա անփութորեն նետված մարգարիտների շղթաներ, փոված են քաղաքների ու մեծ ճանապարհների լույսերը:

Ահա և Մեխիկոն: Ամենուրեք օլիմպիական խաղերին նվիրված գունային ռեկլամներ են: Ջութակահարները՝ ազգային սև ու սպիտակ համազգեստով ով գիտե զբոսաշրջիկների արդեն որերորդ խմբին են դիմավորում: Տաքսիի վարորդները միայն հյուրանոցի անունն են հարցնում ու կատաղի սլանում են արթնացող քաղաքով, ճանապարհին բացականչելով

մարգաշխարհի կուռքերի անունները: Բարապանները օլիմպիադային նվիրված սովետական բացիկներ են մուրում: Երեխաներն ամենուրեք շրջապատում են մեզ ու ճչում են «չենջ, չենջ» ու ցույց են տալիս իրենց ձեռքերին բռնած մեքսիկական օլիմպիական կրծքանշանները առաջարկելով ու պահանջելով փոխել մեր ունեցածի հետ, իսկ հինգ օղակները, օլիմպիական խաղերը խորհրդանշող հինգ օղակները ամենուրեք են, մարդկանց գլխարկներին ու տաբատներին, կանանց շրջագգեստների վրա ավտոմեքենաների կողերին ու համարատախտակներին, շենքերի ճակատներին ու խանութների ցուցափեղկերին և նույնիսկ շների վզնոցներին:

Ամբողջ քաղաքը խելագարվել է: Օլիմպիադան խախտել է երկրի բնականոն կյանքը, ըստ վիճակագրական տվյալների, աշխատավոր բնակչության հիսուն տոկոսը լքել է իր հիմնարկությունն ու ձեռնարկությունը և անշարժացել հեռուստացույցի մոտ: Օլիմպիադան թափանցել է նաև քաղաքականության ոլորտը: Ինչպես հայտնի է, մինչև խաղերը խոշոր ընդհարումներ էին տեղի ունենում ուսանողության և ոստիկանության միջև: Ուսանողները ի նշան բողոքի այրում էին քաղաքային ավտոբուսները, իսկ ոստիկանները արտասվաբեր նոնակներ էին նետում նրանց վրա: Ուսանողական ցույցերը ընդգրկել էին ողջ երկիրը: Եվ ահա ելույթ է ունենում պրեզիդենտը, նա զինադադար է առաջարկում ուսանողներին, խնդրելով հուզումները հետաձգել մինչև օլիմպիական խաղերի ավարտը: Չէ՞ որ ամբողջ աշխարհն է հիմա հետևում Մեխիկոյին, չէ՞ որ շուտով այստեղ են հավաքվելու երկրագնդի բոլոր ծայրերից: Եվ ուսանողները տեղի են տալիս: Ավելին: Նրանք հասարակական հիմունքներով դառնում են զբոսաշրջիկների խմբերի ուղեկցողներ և թարգմանիչներ, շրջում են հատուկ համազգեստներով, պատրաստ սպասարկելու յուրաքանչյուր այցելուի: Այն փաստը, որ ամբողջ աշխարհի մեջ հենց Մեխիկոյին է տրվել օլիմպիադան կազմակերպելու գերապատվությունը, նրանց սիրտը օրինական հպարտությամբ է լցնում: Նույն վիճագրական տվյալներով մրցումների ողջ ընթացքում երկրում տեղի չի ունեցել քրեական ոչ մի խոշոր հանցագործություն: Եվ ամենազարմանալի փաստը՝ ցլամարտի ասպարեզները գրեթե կիսով չափ դատարկ էին լինում: Իսկ դա անլուր բան է Մեքսիկայում:

Մեխիկոյի օլիմպիական մրցումների մասին մանրամասն ու երկար գրվել են լրագրերում և անկասկած դրանց մասին խոսելը ոչ մի նորություն չի տա: Ես պարզապես ցանկացա շատ համառոտ նկարագրել այն օդը, որ շնչում էին Մեքսիկան և մեքսիկացիները, երբ զբոսաշրջիկների մեր խումբը հայտնվեց հին ացտեկների մայրաքաղաքում, 1325 թվականին կղզիների վրա հիմնադրված Տենոչտիտլանում, որն այժմ յոթ միլիոն բնակչություն ունի և կոչվում է Մեխիկո:

Ացտեկները փախչում էին իրենց ահեղ հակառակորդներից դեպի լիճը: Ըստ գուշակության նրանք պետք է գնային այնքան, մինչև որ հանդիպեին մեծ կակտուսի՝ վրան արծիվ: Այդպես էլ եղավ: Լճի կղզիներից մեկի վրա նրանք տեսան հսկայական մի կակտուս, որի վրա թևերն էր փռել արծիվը: Վիթխարի թռչունը մագիլների մեջ բռնել էր մի օձ և նայում էր հեռուն՝ դեպի ծագող արևը:

Դա համարելով աստվածների կողմից առաքված բարեգուշակ նշան, ացտեկներն իրենց քաղաքի հիմքը դրեցին: Այսօր ևս Մեքսիկայի հանրապետության պետական գերբի վրա

կարելի է տեսնել կակտուս, արծիվ և օձ, իսկ Մեխիկոյի բարձրագույն շքանշանը հենց այդպես էլ կոչվում է «Ագիլա Ացտեկա», այսինքն՝ «Ացտեկյան արծիվ»:

Գրեթե երկու հարյուր տարի տևեց ացտեկների իշխանությունը: Մեքսիկայում ապրող հնդկացի մյուս ցեղերի հետ նրանք պատերազմներ էին վարում, քաղաքներ ու ջրանցքներ կառուցում, երկրպագում էին աստվածներին, հսկայական բուրգեր բարձրացնում, զարկ տալիս արհեստներին: Հատկապես զինագործությանն ու ոսկերչությանը: Մշակում հողը, ցանում մայիս, այսինքն եգիպտացորեն, որ իսպանացիները 16-րդ դարում իրենց հետ հայրենիք տարան ու տարածեցին աշխարհում: Եվ ոչ միայն եգիպտացորեն. աշխարհը ացտեկներին և մյուս հնդկացիներին է պարտական, որ իմացավ, թե ինչ բան է կակաոն, ծխախոտը, պոմիդորը, արևածաղիկը, լոբու տեսակները, կարտոֆիլը, դդումը, անանասը, վանիլը, գետնընկույզը: Երբ մենք ասում ենք շոկոլադ կամ տոմատ, չենք էլ կասկածում, որ աղավաղելով արտասանում ենք ացտեկյան «շոկոլատլ», «տոմատլ» բառերը: Որ կակաոն ու սիգարը մայս ցեղի լեզվով են:

Երկու հարյուր տարի տևեց ացտեկների իշխանությունը: Իսկ հետո հեռու-հեռավոր Իսպանիայից ոսկու մոլուցքով բռնված նշանավոր բախտախնդիր Էռնանդո Կորտեսի զլխավորությամբ այստեղ հասան գունատ դեմքով ու մորուքով մարդիկ ու արյան գետեր թափելով նվաճեցին Մեքսիկան: Մեխիկոյի կենտրոնական հրապարակում այսօր վեհոքեն կանգնած է Տենոչտիտլանի վերջին արքայի, ացտեկյան դիմադրության վերջին հրամանատարի՝ Կուտուտեմոկի հուշարձանը: Պատվանդանին գրված է. «Կուտուտեմոկի և այն ռազմիկների հիշատակին, որոնք հերոսաբար պայքարում էին իրենց երկրի ազատության համար»:

Մեքսիկական ժողովուրդը հպարտանում է իր փառավոր անցյալով: Այդ անցյալը անընդհատ պայքար է օտարերկրա զավթիչների դեմ, ազատության և դեմոկրատիայի ձգտում: Պատահական չէ, որ Լատինական Ամերիկայի երկրների մեջ, Մեքսիկան առաջինն է, որ դիվանագիական հարաբերություններ հաստատեց Սովետական Միության հետ:

Անկախության և ազատության համար պայքարի հետքերով ծածկված է ողջ երկիրը: Առաջինն, ինչ հպարտությամբ մատնանշում են տուրիստական խմբերի ուղեկցորդները, այդ հուշարձաններն են: Մեխիկոյում կանգնեցված արվեստի գործերի մեծ մասը անկախության մարտիկների փառաբանությունն է: Ահա մարմարե մի հրաշալի արձանախումբ՝ մայրը իր երկու զավակի հետ: 1847 թիվ. ամերիկյան ինտերվենցիայի ժամանակ փոքրիկ ամրոցում կենդանի են մնում միայն այդ երկու պատանիները: Բայց չեն հանձնվում: Մնում է միայն մեկը: Նրան հորդորում են անձնատուր լինել, խոստանում են կյանք: Բայց տղան գերադասում է մեռնել ազատության համար: Նա իրեն փաթաթում է ազգային եռագույն դրոշմով ու ցած է նետվում պարսպից:

Մտնում ես Կերետարո քաղաքը և քեզ անմիջապես ուղեկցում են քաղաքի ծայրամասում գտնվող կաթոլիկ փոքրիկ մի մատուռ ու ասում են հպարտ.

– Այստեղ 1867 թվականին մեքսիկացի ապստամբների ձեռքերով իր անփառունակ վախճանը գտավ գեներալ Մաքսիմիլիանը, որին ֆրանսիացիները մեզ կայսր էին կարգել: Իսկ այնտեղ, տեսեք, մեր Խուտերսն է, նա անկախություն նվաճեց մեզ համար:

Գուանախուատո գողտրիկ քաղաք–թանգարանը շրջապատող լեռան ամենաբարձր կետին կանգնած է մեկ ուրիշ հուշարձան. տղան՝ բարձր պահած ջահը:

– Դա Խուան Խոզե դե Լոս Ռեեմ Մարտինեսն է, հեղափոխական հանքագործը, 1810 թվականին նա մտնում է իսպանացիների գրաված ամրոցը և վառելով ձեռքի ջահը՝ պայթեցնում է վառողի պահեստը:

Եվ այսպես ամենուրեք, և այսպես անվերջ:

Բայց ինչո՞ւ միայն արձաններն ու հուշարձանները: Անկախության ու ազատության գաղափարին է նվիրված մեքսիկական ողջ արվեստը, մասնավորապես այդ արվեստի երեք ամենանշանավոր ներկայացուցիչների ստեղծագործությունը: Ահա այդ երեքը, որոնցով իրավամբ հպարտանում է Մեքսիկան և համաշխարհային գեղարվեստը՝ Խոսե Կլեմենտ Օրոսկոն, Դիեգո Ռիվերան և Դավիդ Ալֆարո Սիկեյրոսը:

Մեքսիկայի երկրորդ քաղաք Գվադալախարայում մենք եղանք այն տանը, որտեղ ծնվել է Օրոսկոն, հանճարեղ այն կոնատը, որը մեր խմբի անդամ, պետական մրցանակի դափնեկիր, նկարիչ Թայիր Սալախովի հիացական բացականչությամբ՝ մի ձեռքով ավելի շատ բան է արել, քան թե երկձեռանի նկարիչների մի ամբողջ բանակ: Իր հայրենի քաղաքը նա անմահացրել է հոչակավոր որմնանկարներով, որոնք ամենուրեք են: Առաջինը նա զարդանկարել է Գվադալախարայի գիշերօթիկ դպրոցի շենքը, որը կառուցել է վանական Կաբանասին: Օրոսկոն նկարել է նրան իր ողջ վեհությամբ: Հնդկացի մայրերը բերել են իրենց զավակներին ու հանձնել նրան և ուսուցիչը ձեռքերը դրել է նրանց գլուխներին: Այդ որմնանկարները ազատության երգ են: Մեծ արվեստագետը իսպանական զավթիչներին՝ կոնկիստադորներին, նկարել է ռոբոտի կերպարանքով, նրանց մարմնի մասերը հեղույսներով ու պտուտակներով են ամրացված իրար: Նրանք մարդ չեն ու չունեն զգացմունք: Իսպանիայի թագավորը հրամայել է նրանց սրով ու խաչով նվաճել Մեքսիկան, նրանք էլ եկել են...

Գիշերօթիկ դպրոցի առաջին հարկի ողջ պատերին ու առաստաղին Օրոսկոյի որմնանկարներն են: Ամեն ինչ կատարված է մեծ թափով, մեծ չափերով, մեծ ոգևորությամբ, արված է նյարդով, ազատության ծարավով և ատելությամբ ամեն կարգի բռնությունների նկատմամբ:

Գվադալախարայի համալսարանի գիտական խորհրդի դահլիճում ևս Օրոսկոյի ձեռքն է: Բեմի վերևում կմախք–ամբոխ է, քաղցից խելագար, մութ, հիվանդ ու տգետ: Մարդկանց աչքերը կապված են: Մղոցով ու դանակներով զինված վատ կառավարողները նրանց միայն օրենսգիրքն են ցույց տալիս: Գույները մուգ–մուգ են՝ սև, կապույտ, դարչնագույն և միայն մի տեղից կրակ է ժայթքում, որը լուսավորում է գմբեթի վառ ու պայծառ գույները: Լույսը մտնում է ժողովրդի մեջ, բազմադեմ մարդիկ խորհրդանշում են գիտությունների ծաղկումը:

Տգիտությունը՝ պարանը վզին, կործանման է դատապարտված: Սյուներից մեկի վրա բաց դուռ է նկարված: Ով ուզում է՝ կարող է սովորել... Դա 1937 թվականին էր:

Իսկ երկու տարի անց Օրոսկոն որմնանկարում է Գվադալախարայի ազգային թանգարանի մեծ սրահի ճակատային ողջ պատն ու գմբեթը: Սա արդեն զգուշացում է ֆաշիստական վտանգից: Բազմազուլիս օձը գալար-գալար պատել է ժողովրդին, բաց երախներից զենքեր են թափվում ցած:

Երբ դուրս էինք գալիս Գվադալախարայի ազգային թանգարանից, մեր խմբի մեկ այլ մասնակից, ուկրաինացի ծերունագարդ ժողովրդական նկարիչ Վասիլի Օվչիննիկովն ասաց.

– Իմ հիվանդ սրտով ես չվախեցա թոչել օվկիանոսի վրայով, հասնել աշխարհի ծայրը՝ Մեքսիկա, միայն թե տեսնեի Օրոսկոյի, Ռիվյերայի, Սիկեյրոսի գործերը:

Նրա հետ մենք քայլում էինք Մեխիկոյի գեղեցիկ արվեստների թանգարանի երրորդ հարկում: Ծեր նկարիչը արագ-արագ մի պատից մյուսն էր գնում, դիտում էր մեկ Ռիվյերայի «Միկրոկոսմոս և մակրոկոսմոս», մեկ Օրոսկոյի «Կատարսիս» որմնանկարները, տնքում էր, հառաչում, հիանում բարձրաձայն, կանգնում էր որևէ մանրամասնի դիմաց ու անշարժանում երկար:

– Մեծ գործեր են: Իհարկե, շատ խառը, հակասական, երբեմն անընդունելի, երբեմն նույնիսկ արտաքնապես նատուրալիստական... բայց մեծ գործեր են: Հեղափոխական գործեր են: Զարմանալի է, չէ՞: Երկու հանճարեղ նկարիչ կանգնել են իրար դիմաց և ամիսներ շարունակ աշխատել իրար հետ: Հազվագյուտ բան է: Իսկ հիմա նրանք չկան, նրանցից, մեծերից մնացել է միայն Սիկեյրոսը:

Նոր էինք Մեքսիկա հասել, երբ մեր հյուրընկալողները՝ Մեքսիկա-ՄՍՀՄ բարեկամության ընկերության ղեկավարները, մեզ հարցրեցին, թե ծրագրից դուրս ո՞ւմ կամ ի՞նչ կցանկանայիք տեսնել Մեքսիկայում:

– Սիկեյրոսին,– միաբերան բացականչեցին մեր նկարիչները:

Ընկերության պրեզիդենտ տիկին Ադելաիդան օրորեց գլուխը.

– Դա անհնարին է,– ասաց նա,– օլիմպիադայի այս խառը օրերին Սիկեյրոսը նախ Մեխիկոյում չէ, և ապա նա վճռականորեն հրաժարվել է ընդունել որևէ խմբի: Նա շատ է զբաղված:

Եվ որովհետև մեր նկարիչները տխրեցին, տիկին Ադելաիդան ավելացրեց.

– Այնուամենայնիվ ես խոստանում եմ խնդրել մեկ անգամ ևս...

Դե, ուրեմն, պատկերացրեք մեր ուրախությունը: Հայրենիք վերադառնալուն մնացել էր երկու թե երեք օր, երբ Մեխիկոյի մեր «Աբրահամ Լինկոլն» հյուրանոցում հայտնվեց եռանդուն տիկին Ադելաիդան՝ գրեթե աղաղակելով.

– Շուտ, շուտ, Միկեյրոսը ձեզ է սպասում:

Ի դեպ այս ուղևորության ընթացքում մեզ շատ էին երես տալիս նշանավոր մարդկանց անուններով: Ամստերդամից Մոնրեալ և ապա Մեխիկո թռանք հոլանդական մականիշի մի ինքնաթիռով, որի անունն էր «Սըր Ուինստոն Չերչիլ», Մեխիկոյում ապրում էինք «Աբրահամ Լինկոլն» հյուրանոցում և շրջում «Վիկտոր Հյուգո» ավտոբուսով: Կարելի էր գլխապտույտ ունենալ: Ինչնից, քիչ անց «Վիկտոր Հյուգո» մեզ թոցնում էր օլիմպիական մայրաքաղաքից դեպի արձակ դաշտերը, դեպի Կուերնովախո քաղաքը, որը 35–40 կմ է միայն հեռու Մեխիկոյից և որի արվարձաններից մեկում բնակվում է Միկեյրոսը: Տիպիկ ամառանոցային քաղաք է Մորելիա նահանգի մայրաքաղաքը, այգիներ ու առանձնատներ, այգիներ ու առանձնատներ: Ահա և էռնանդո Կորտեսի փողոցը: Ավտոբուսը դանդաղեցնում է ընթացքը: Ի՞նչ, մի՞թե բախտի քմահաճույքով Դավիդ Ալֆարո Միկեյրոսը պետք է բնակվի նրա անվան փողոցում, ում և ում հետևորդների դեմ կռվել է ողջ կյանքում: Այո, այդպես էլ կա...

Ներս ենք մտել պարսպից, կանգնել գեղեցիկ ջրավազանի մոտ, սպասում ենք: Մեկ էլ բացվում է շենքի դուռը, արագ քայլերով դուրս է գալիս նկարիչը, աշխարհի ամենամեծ արվեստագետներից մեկը, «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Լենինյան մրցանակի դափնեկիր Դավիդ Ալֆարո Միկեյրոսը՝ փոքրիկ մի տղայի ձեռքից բռնած: Եթե չասեն, որ նա 72 տարեկան է, մտքովդ էլ չի անցնի. առատ ալեծածան մազեր, ուղիղ, մաքուր և կանոնավոր դիմագծեր, յուրատեսակ մեքսիկական գեղեցկություն, առույզ շարժումներ, հրաշալի ժպիտ...

– Զորավատվույտե,– ասում է նա,– օչեն խորոշո...

Մենք ծիծաղում ենք ու արդեն մեզ զգում ենք «տանու մարդ»: Միկեյրոսը մեզ տանում է սենյակից սենյակ, և մի պահ թվում է, թե ոչ թե տան մեջ ես գտնվում, այլ արմատուրա–մոնտաժային ինչ որ գործարանում: Ամենուրեք պղնձե հսկայական ինչ–որ թերթեր են, ձողեր, գողման սարքեր, ներկերի տակառներ...

Մենք մի քիչ հիասթափված ենք, բայց Միկեյրոսը ժպտում է իր բարի երկնագույն աչքերով.

– Այդպես է,– ասում է նա,– ես մետաղագործ եմ: Միթե հարցն այն է, թե ինչով ես նկարում: Այստեղ ինչ որ կա՝ մետաղից է արված: Գեղանկարչություն գումարած երկաթ: – Նա մատնացույց է անում վերատպություններ, վիմագրություններ, էստամպներ,– այ, այս նկարս չկա, մինչև հիմա էլ կալանքի տակ է, ահա սրանք Կալիֆորնիայում են, այս մի քանիսը՝ Կուբայում, այս երկուսը՝ Չիլիում:

Վերատպություններից մեկը ատոմային ռումբի պայթյուն է նկարագրում: Միկեյրոսը ժպտում է տխրորեն.

– Ատոմային ռումբի առաջին պայթյունից ութ տարի առաջ ես ստեղծեցի իմ այս գործը՝ «Պայթյուն քաղաքում», որը գեղանկարի ու քանդակի միակցումն է: Արվեստագետները սովորական քաղաքացիներից ավելի շուտ են կռահում գալիքը, դրա համար էլ նրանց աշխատում են հեռու պահել քաղաքականությունից:

Ու նորից ժպտում է այդ ամենահին հեղափոխականը, հենց նա, որին երբեք չեն կարողացել ետ պահել քաղաքականությունից, նա, որ ապրել է բառացիորեն միաժամանակ կրելով երկու զենք՝ վրձինն ու ատրճանակը: Նա արդեն հայտնի նկարիչ էր 1917 թվականին և միաժամանակ գործող բանակի կապիտան: 1919 թվականին նա գալիս է Փարիզ իբրև մեքսիկական դեսպանության զինվորական կցորդ և հրապարակում է իր նշանավոր կոչը՝ հեղափոխական նկարիչներին, 1924–25 թվերին նա բանվորական ֆեդերացիայի գլխավոր քարտուղարն էր և միաժամանակ նկարագարում էր Գվադալախարայի համալսարանի նիստերի դահլիճի պատերը: 1934 թվականին նա զեկուցումներ էր կարդում ամերիկյան երկրներում «Մեքսիկական մոնումենտալ գեղանկարչության մասին» և միաժամանակ հանդիսանում պատերազմի և ֆաշիզմի դեմ մղվող պայքարի մեքսիկական ազգային լիգայի պրեզիդենտը: Իսկ որտե՞ղ կարող էր լինել այդպիսի մարդը, երբ Իսպանիայում խեղդվում էր ազատությունը: Իհարկե: 1936 թվականին նա արդեն գնդապետ էր, 29–րդ ինտերնացիոնալ դիվիզիայի հրամանատարը:

Հիմա նա կանգնած է մեր առջև սպորտային կապույտ հագուստով, հասարակ սև կոշիկներով, տարիներից այնուամենայնիվ քիչ սմբած, աչքերի տակ հավաքված պարկեր, արծվաքիթ ու հպարտ ցույց է տալիս ավտոմատ հսկա մի դագափ ու ասում.

– Ահա իմ վրձինը:

– Վարպետ,– դիմում է նրան մեր նկարիչներից մեկը,– դուք ե՞րբ մոտեցաք մոնումենտալիզմին:

– Իսկ ես նրանից երբեք չեմ հեռացել,– ասում է Սիկեյրոսը,– դա մեր բնությունն է, մեր մասշտաբներն են, դա մեր նախնիների՝ մայա, ացտեկ իմաստուն ցեղերի արվեստն է: Մենք պարզապես այնտեղից ենք գալիս: Ա՛, դուք երևի մեր նշանավոր խորհրդակցությունն եք ակնարկում,– հիշում է նա,– չէ՞ որ դա մտածողության հարց է: Մեր նոր գեղանկարչության ծնունդը համարվում է 1920 թվականը: Մենք՝ մեքսիկական գրեթե բոլոր նկարիչներս, հեղափոխության բանակում էինք: Մենք մարտիկներ էինք, ուսանողական շարժման մասնակիցներ ընդդեմ Դիասի դիկտատուրայի: 1918 թվականին տեղի ունեցավ մեր՝ մարտիկ նկարիչների կոնգրեսը: Եվ մենք հարցրեցինք մեզ՝ ո՞ր ենք գնում մենք, ինչ պետք է անենք մենք և ինչ պետք է նկարենք մենք: Մենք չգիտեինք մեր անելիքը, մենք չէինք ուզում իսպանականը, հինը: Հիմա, ի՞նչ է, նորի՞ց պետք է փոքրածավալ նկարներ անենք հարուստների սալոնների ու թանգարանների համար, սալոններ, որտեղ ժողովուրդը մուտք չունի և որտեղ լավագույն դեպքում դրամ են հավաքում ժողովրդից:

Ոչ, որոշեցինք մենք, մենք կստեղծենք մեծ–մեծ գործեր փողոցների համար, հրապարակների համար, որպեսզի հնարավոր չլինի դրանք փակի տակ առնել:

Ահա թե որտեղից է նաև մեր մոնումենտալիզմը:

Սիկեյրոսը մեզ կրկին տանում է թիթեղի ինչ–որ կույտերի մոտ...

– Բայց այդպես խոսելը հեշտ էր, իսկ անե՞լը: Անելը շատ դժվար էր: Ի՞նչ թիթեղ օգտագործես, որ չփչանա արևից ու անձրևից: Ի՞նչ ներկով ներկես, որ դիմանա, հը՞: Ահա: Մենք էլ սկսեցինք

այնպիսի թիթեղ օգտագործել արտաքին գեղանկարչության համար, ինչպիսին է, օրինակ, այս թիթեղը, որով պատում են նավերի հատակը: Խելո՞ք է, իհարկե: Եթե ծովի աղաջրին դիմանում է, անձրևաջրին էլ կդիմանա... Եվ ամեն ինչը, ամեն ինչը սկզբում երկար–երկար փորձում էինք: Պետք է անպայման հաշվի առնել տեղական պայմանները: Թե չէ ի՞նչ է դուրս գալիս: Որտե՞ղ են Ռուսաստանում մի ժամանակ այնքան տարածված գոթական տաճարների գույները: Չկան: Գույները ժամանակը կերավ: Ահա թե ինչու մենք անընդհատ բարեկամություն ենք անում քիմիայի հետ: Մենք փորձում ենք գույները ամեն տեսակի պայմաններում և նոր միայն բառացիորեն հրապարակ ենք հանում:

Հիմա նա ձևավորում է Մելիկոյի «Դե լա–Լամ» զբոսայգու շենքերից մեկը՝ սիմֆոնիկ նվագախմբի համար ութանկյուն մի դահլիճ՝ 70 մետր երկարությամբ, 16 մետր բարձրությամբ և 45 մետր լայնությամբ: Հատված առ հատված արվում է ամեն ինչ, ապա փոխադրվում՝ տեղում մասերն իրար զոդելու, հավաքելու համար:

Նրա խոսելու ժամանակ նրան հար և նման մի պստիկ տղա է մոտենում ու գրկում ծեր նկարչի ոտքը, ներքևից վերև նայում նրան:

– Իմ թոռնիկն է՝ Մարտինը,– ասում է Սիկեյրոսը,– և իմ տեր աստվածը:

Մենք գիտենք, որ չի կարելի աշխատանքից այդքան կտրել նրան, մենք գիտենք, որ դաժան բան է այդպիսի մարդուն պարապ զբույցներով զբաղեցնելը, մանավանդ, որ գրեթե չթաքցրած ատելությամբ են մեզ նայում նրա տասնյակ աշակերտները՝ արաբ, հնդիկ, հրեա, իսպանացի գեղանկարիչներն ու զոդողները: Բայց մենք չենք ուզում բաժանվել Սիկեյրոսի աշխարհից, այդ աշխարհն արդեն համարյա թե հասկանալի և դրանով իսկ թանկ ու լուսավոր է մեզ համար: Դա ճշմարիտ արվեստագետի աշխարհն է: Մենք պատրաստ ենք գնալու, միայն ուզում ենք ինչ–որ տաք, հաճելի բաներ ասել այդ մեծ մարդուն: Եվ մերոնցից յուրաքանչյուրն ասում է նրան.

– Վարպետ, եկեք մեզ մոտ, Կիև:

– Իհարկե, առաջին հերթին Մոսկվա եկեք:

– Ես Մոսկվայում առաջին անգամ եղել եմ 1927 թվականին, իբրև 4–րդ կոմիստերնի կոնգրեսի բանվոր–պատգամավոր:

– Եկեք մեզ մոտ՝ Բաքու:

– Եկեք մեզ մոտ՝ Հայաստան:

– Հայաստա՞ն,– ասում է նա,– ես եղել եմ Հայաստանում: Ե՞րբ էր: Շատ–շատ վաղուց: Մեքսիկան նման չէ՞ Հայաստանին,– հանկարծ հարցրեց նա:

– Շատ է նման,– ասացի ես:– Եվ որպեսզի վերջնականապես չշփոթեք, դուք դիտմամբ կակտուսներ եք աճեցրել ձեզ մոտ:

– Ճիշտ է,– ասում է նա ու ծիծաղում երկար, սրտանց, երեխայի նման,– Ճիշտ է, Ճիշտ է...

ՑԼԱՄԱՐՏ

Ցլամարտի հրապարակներ շատ կան Մեքսիկայում: Ավելի ճիշտ դրանք ամենուրեք են: Եվ ինչպես անձանոթ ամեն մեկի, քո մտքով էլ առաջինն այն հարցն է անցնում, թե մեքսիկացիներն այդքան ցուլեր որտեղի՞ց են գտնում՝ սպանելու համար: Եվ ավելի մանկական մի հարց նս՝ մորթելուց հետո ի՞նչ են անում ցուլերի միսը:

Առաջին հարցի մասին իհարկե արժե մտածել: Չկա Մեքսիկայում քիչ թե շատ տանելի մի բնակավայր, որն իր ցլամարտի հրապարակը չունենա, և որտեղ մասնավորապես կիրակի օրերին ցլամարտեր տեղի չունենան: Միայն մայրաքաղաքի «Պլասա Մեխիկո» ցլամարտի հրապարակում կիրակի օրերին տեղի է ունենում երկու ներկայացում: Եվ ամեն մի ներկայացման ժամանակ սպանվում է վեց ցուլ:

Ինչնիցե, ամեն մարդ իր բաժինն է ուտում: Եկել նստել ենք «Պլասա Մեխիկո»-ում և սպասում ենք ուտելու մեր բաժին վեց ցուլը: Հանդիսատեսը նոր է հավաքվում: Թեթև երաժշտություն է հրապարակում: Մուտքերի մոտ փոքրիկ տղաները չնչին գումարով ցլամարտի հուշանվերներ են վաճառում, որ հավանաբար հենց իրենք էլ պատրաստում են՝ օձառի տուփերից, սրտաշարժության աստիճանի պրիմիտիվ ու վառ գույներով: Ամենուրեք ռեկլամներ, ռեկլամներ: Իսկ ամենամեծ ռեկլամը հենց հրապարակի կենտրոնում է դրված, մոտ հինգ մետր բարձրությամբ «Կոկա-կոլա»-ի հսկայական մի շիշ:

Ամբողջ երկիրը, ամբողջ աշխարհը «Կոկա-կոլա» է խմում կամ էլ նրա քույրերին՝ «Պեպսի-կոլա», «Աֆրի-կոլա» և այլն: Խմելու ուրիշ բան էլ չունեն, ուրիշ ելք չունեն, բայց միևնույն է, ռեկլամն ամեն տեղ հոգիդ հանում է՝ «Խմեցեք «Կոկա-կոլա»: Կարծես թե ռեկլամը գոյություն ունի ամեն ինչից անկախ:

Խաղաղ օվկիանոսի ափից՝ Ակապուլկայից, թռչում էինք Ատլանտյան օվկիանոսի ափը՝ Մեքսիկական ծովածոց: Ինքնաթիռը փոքրիկ «Դուգլաս» էր ու թռչում էր ցածր, գրեթե բլուրների վրայով: Եվ ահա մեկ էլ տեսնենք բլուրների լանջին խոշոր-խոշոր տառերով գրված է. «Կոկա-կոլա», «Պեպսի-կոլա»: Այդ «Պեպսի-կոլան» որ խենթացնում է: Տաքսիները երբ շրջում են քաղաքում և ուզում են տեղեկացնել, որ ազատ են՝ մեքենայի վերնում դեղին լույս է վառվում ու պտտվում: Նայում ես այդ լույսին, և ահա վրան գրված է. «Պեպսի-կոլա»:

Մերիդա քաղաքի մեր հյուրանոցում հետաքրքրության համար դիտեցի հեռախոսագիրքը: Բնականաբար այբուբենով էր կազմված: Ուրեմն առաջինը «Ա»-ն է: Նայում եմ՝ իսկապես, ամենավերնում գրված է «Ա», իսկ ցուցակը սկսվում է «Պ» տառով, գրված է. «Պեպսի, պեպսի, պեպսի» և ըմպելիքի այդ տեսակի քաղաքային ֆիրմայի համարը՝ 2-45-00: Բացեցի «Բ» տառը: Կրկին սկսվում է «Պեպսի, պեպսի, պեպսի» և կրկին նույն համարը:

Մորելիա քաղաքում կինո գնացինք: Կինոն սկիզբ ու վերջ չունի: Դրա համար էլ ներս մտանք, երբ ինչ-որ պատկեր էր գնում: Նետեր արձակելով, սրարշավ թշնամու վրա էր հարձակվում հեծելագորը: Հաղթանդամ հեծյալները մի քանի բռնակալներ ընթացքում ջարդեցին, փախուստի մատնեցին իրենց հակառակորդներին, ցած իջան ձիերից, հանեցին դիմակներն ու սաղավարտները, մի կողմ դրեցին տեգերն ու վահանները, նստեցին սեղանի շուրջը, բարձրացրին ձեռքերը, և նրանց ձեռքերի մեջ հայտնվեցին «Պեպսի-կոլա»-ի շշերը: Եվ բոլորի դեմքերը երջանիկ ու ժպտուն են: Եվ այդ ամբողջ ծախսը, հեծելագոր կազմելն ու սպառազինելը, այդքան մարդկանց աշխատեցնելն ու վճարելը միայն նրա համար, որ ասեն՝ «Գնեցեք «Պեպսի-կոլա»»: Եվ, կրկնում եմ, այն դեպքում, երբ նրանք՝ գնորդները, ընտրություն չունեն:

Ռեկլամ, ռեկլամ, ռեկլամ՝ տոմատի հյութից մինչև ավտոմեքենա: Ահա «Կորոնա», իսկապես հրաշալի, գարեջրի ռեկլամը՝ հզոր կրծքով ու ջրալինդ թևերով մի տղամարդ: Այս մարդը սկզբում բարակ-մարակ տղա էր, հիմա այսպես հաղթանդամ է դարձել, որովհետև սիստեմատիկ խմում է «Կորոնա» գարեջուր: Ապա հետևում են լոգունգները՝

– «Կորոնան»՝ որպես երկարակեցության գրավական:

– «Կորոնան»՝ որպես ակոհոլի դեմ մղվող պայքարի հզոր զենք:

– Ուզում ես, որ աղջիկները սիրեն քեզ, խմիր «Կորոնա» գարեջուր:

Հիմա մենք նստած ենք ցլամարտի «Պլասա Մեխիկո» հրապարակում և սպասում ենք ներկայացման սկսելուն: Իսկ երկնքով հոնդալով անցնում են ինքնաթիռները: Նայում ենք վեր՝ ինչ-որ տեղից հայտնվում է մի ինքնաթիռ, ստադիոնի վրա ծուխ է բաց թողնում ու անհետանում: Ծուխը ձգվում, ձգվում է ու դառնում է գիծ: Մինչ այդ մի ուրիշ ինքնաթիռ էլ է գալիս, կրկին ծուխ արձակում ու հեռանում: Եվ ապա անընդհատ այս ու այն կողմերից, այս ու այն արագությամբ և հոնդյունով հայտնվում են ինքնաթիռներ, շատ-շատ ինքնաթիռներ, ծուխ են արձակում ու հեռանում: Իսկ երբ մարում է հոնդյունը, տեսնում ես, որ նրանք երկնքի բաց կապույտ ֆոնի վրա ծխի սպիտակ տառերով գրել են «Pepsi»: Դարձյալ այդ չարաքաստիկ «Պեպսի-կոլա»-ն:

Մինչ մենք նայում ենք վեր, ստադիոնում նվագախումբը սկսում է քայլերդ հնչեցնել: Արենայում շարժում կա, բայց ի՞նչ շարժում է, երբ մարդ չկա: Ա՛հ, ահա թե ինչ, այստեղ էլ «Կոկա-կոլան»: Վիթխարի շիշը, չգիտես որտեղից և ինչպես դեկավարվելով, մեկ էլ սկսում է շրջել հրապարակով, պտտվում, հուրհրում է, բոլորին հրավիրում է խմել «Կոկա-կոլա» և դուրս է գալիս հրապարակից: Նվագը հնչում է ավելի խրոխտ ու հանդիսավոր: Էստրադային նվագախմբին միանում են դիմացի օթյակի շեփորները և...

Եվ ներկայացումն սկսվում է:

Ձիու վրա ավելի քան հազարտ նստած հրապարակ մտավ սևազգեստ մի մարդ, առանց շուրջը նայելու ուղղվեց դեպի քաղաքապետի օթյակը, իջավ ձիուց, խորը գլուխ տվեց քաղաքապետին կամ նրա ներկայացուցչին և ախոռի բանալիների հետ ներկայացումն սկսելու թույլտվություն ստանալով, հեռացավ:

Մի քանի բույս անց հրապարակ մտան ներկայացման մասնակիցները՝ մատաղորները, պիկադորները, բրանդերեյները, նրանց օգնականները՝ վառ, գունեղ հագուստներով, հոյակապ կեցվածքով, խանդավառ դեմքերով: Նվագախումբը հին ու հանդիսավոր քայլերգ էր հնչեցնում՝ անկարող մեղմելու հրապարակի աղմուկը: Փոքրիկ տղաները արագ-արագ մի շարքից մյուսն էին գնում՝ նստածներին առաջարկելով նախ բարձիկներ, որովհետև նստարանները բետոնից են, և ապա պաղպաղակ, ծխախոտ, կոնֆետներ, ծամոն, լրագրեր...

Հետո միանգամից լռություն տիրեց: Բացման արարողությունն ավարտվեց: Անկյունում ինչ-որ տեղ ճոնչաց փայտե դարպասը և նեղ միջանցքով վազելով հրապարակ մտավ առաջին ցուլը: Ոչ մի թշնամու չնկատելով, ցուլը կանգ առավ զարմացած: Բայց չէ՞ որ հենց նոր վիրավորեցին նրան: Ո՞վ էր: Մրի նման սև մեջքին փայլում էր սպիտակ ժապավենը, որ ախոռից դուրս հանելուց առաջ երկաթե կեռիկով խրել են մաշկի մեջ: Ժապավենի ծայրերն արդեն արյունոտ են:

«Ռետանան լուռ դիտում էր, թե ինչպես է Մանուելը ծխում:

– Ինչո՞ւ դու քեզ համար մի այլ աշխատանք չես փնտրում,– հարցրեց Ռետանան:

– Ես չեմ ուզում որևէ այլ աշխատանք,– ասաց Մանուելը:– Ես մատաղոր եմ:

– Այլևս մատաղորներ չկան,– ասաց Ռետանան:

– Ես մատաղոր եմ,– ասաց Մանուելը»:

Մատաղորը, որ պորտուգալացի էր, հայտնվեց հրապարակի մյուս ծայրում, ծածանեց կարմիր մուլետը և բացականչեց. «Ահե, ահե»: Ցուլը տեսավ նրան ու պոկվեց տեղից:

Ես նայում եմ ու գրեթե ոչինչ չեմ տեսնում: Ինձ թվում է, թե իմ տեսածը իսկական ցլամարտ չէ, այլ միայն ներկայացում, բեմադրություն, որի հեղինակը Էռնեստ Հեմինգուեյն է: Ես ցլամարտը նրա պատմելով գիտեմ, նրա գրքերից: Մի քիչ Մերիմե: Բայց շատ-շատ Հեմինգուեյ: Եվ ես նրա հերոսներին եմ տեսնում, պատկերացնում: Երբ նրա աչքերով եմ նայում, պատկերն իմաստավորվում է կարծես թե: Մարդն ընդհանրապես մարդ է դառնում, և ցուլը՝ ցուլ: Թե չէ կոնկրետ այս մարդը, որն ուզում է սպանել ցուլին, կոնկրետ այս ձին, որ շատ տխուր ու հիմար պարտականություն ունի կատարելու... Ինձ ոչինչ չեն ասում: Ընդհակառակը, կամաց-կամաց ներսից, սրտիցս մի մեծ տհաճություն, մի մեծ անբավականություն է բարձրանում և ուղղվում բոլոր նրանց դեմ, ովքեր շրջապատել ու խեղում, խեղդում են այդ անասունին: Ինչո՞ւ:

Ցուլը գրեթե հասնում էր մատաղորին, երբ սա առանց տեղից շարժվելու թեքվեց՝ թեքվելով իր հետ կարմիր մուլետը, և ցուլը հայտնվեց դատարկության առաջ: Ցուլը կանգնած մնաց ապշած: Ժողովուրդը հիացավ, ցնծաց. դեպի մատաղորը նետվեցին ծաղիկներ: Պորտուգալացին ոգևորվեց և մի ցատկով կրկին հայտնվեց ցուլի առաջ, կանչեց սպառնալից.

– Տորո, տորո...

Յուլը կրկին հարձակվեց ու կրկին նրա հարվածն անցավ կարմիր թիկնոցի տակով:
Ցլամարտիկը բարձրացրեց ձեռքը, և ամբոխը աղմուկով ողջունեց նրան:

Հնչեցին շեփոռները: Դա նշանակում էր, որ խոսքն այժմ պատկանում է պիկադորներին:

Ձիու վրա դանդաղ ու հանդիսավոր ներս մտավ պիկադորը: Նա նստած էր մի արտասովոր թամբի, որը փաստորեն աթոռի նման խորը իջնում էր ձիու մեջքով: Նրա ոտքերը պաշտպանված էին կաշվե ու մետաղե հաստ գրահներով: Ձին ևս շրջապատված էր գրահով՝ կանաչ գույնի հաստ խսիրատիպ մի գործվածք գրեթե ամբողջովին ծածկում էր նրա մարմինը:

Չնայած դրան ձին քայլում էր շատ դանդաղ ու դժկամ, ասես խարխափելով, կույրի նման: Իսկ երբ քիչ անց բրանդերեյերներից մեկը, սլանալով արենայի միջով, ցուլի ուշադրությունը դարձրեց դեպի ձին, ես մտածեցի, որ ձին իսկապես ոչինչ չի տեսնում: Յուլը ուղիղ գծով սլացավ դեպի նա: Սպասվում էր, որ ձին հիմա ուր որ է մի կողմ կնետվի՝ խուսափելով ընդհարումից: Բայց նա մնաց անշարժ՝ անորոշ տագնապով գլուխը բարձր բռնած:

Որպեսզի չվախենա ցուլից, և որպեսզի արյունը չսարսափեցնի նրան, նախօրոք ձիու աչքերը կապում են: Ահա թե ինչու է խարխափելով քայլում: Ինչևէ, ցուլը հասավ նրան, թեքեց գլուխը հարու տալու համար, բայց նույն վայրկյանին պիկադորի նիզակը վերնից խորը խրվեց ցուլի թիկունքը: Յուլը մոնչաց, չհասկանալով, թե որտեղից է գալիս ցավը և ավելի ուժգին մղվեց դեպի ձին: Եվ նիզակը ավելի խորը խրվեց նրա մեջքը: Արյունը շերտ-շերտ սկսեց հոսել լայն բացված վերքից:

Բրանդերեյերներից մեկ ուրիշը աղմուկով ու ճչալով թափահարեց վարդագույն թիկնոցը, եկավ ցուլի ուշադրությունը գրավեց իր վրա ու տարավ նրան իր ետևից արենայի մյուս ծայրը՝ երկրորդ պիկադորին ընդառաջ: Եվ այստեղ էլ նույնությամբ կրկնվեց նույն տեսարանը: Յուլի մեջքին, թիակների արանքում առաջացավ մի նոր վերք ևս, որից արյունը թափվում էր շերտ-շերտ՝ ավելի մզացնելով կենդանու սև մաշկը:

Բայց դա էլ քիչ էր: Կրկին բարձր հնչեցին շեփոռները և արենայի երեք կողմից հրապարակ մտան բրանդերեյերները՝ ամեն մեկի ձեռքին երկու գունավոր նետ: Նրանք գեղեցիկ տղաներ էին և սքանչելի՝ իրենց հագուստների մեջ: Նրանք ճարպիկ, արագաշարժ ու համարձակ տղաներ էին, որովհետև բոլորն էլ առանց սխալի, ստադիոնի խելացնոր աղաղակների տակ կարողացան իրենց ձեռքերի գունավոր նետերը խրել ցուլի թիկունքը: Եվ ահա վեց նետերը կախված են ցուլի մեջքից, ու վեց տեղից ևս արյուն է հոսում: Հոյակապ աշխատեցին տղաները, և հանդիսատեսները բարձր գնահատեցին նրանց արվեստը՝ արենան ողողելով ծաղիկներով ու իրենց սոմբրերո գլխարկներով:

Այդպես է. եթե երկու նետն էլ խորը խրվում է կենդանու թիկունքը՝ ուրեմն գերազանց: Եթե խրվում մնում է միայն մեկը, ոչինչ: Իսկ եթե ոչ մեկը չի խրվում ցուլի մեջքի մեջ, ուրեմն ոչ թե ծաղիկ կամ սոմբրերո, այլ սուլոց կամ բարձիկ կստանաս գլխիդ:

Չէ, այս անգամ ամեն ինչ կարգին է: Հնչում են շեփոռները: Հերթը մատադորինն է:

Իսկ ցույն արդեն արյունաքամ է և հագիվ է շարժվում: Ցույը կանգնած է արենայի կենտրոնում, լայն չռած ոտքերի վրա ու շնչում է ծանր, և նրա շնչից մեջքին դանդաղ տարուբերվում են բրանդերեյերների թողած գունավոր նետերը: Բայց մատադորը նրան չի նայում, մատադորը գիտե, որ ցույը դեռևս շատ ուժեղ է, և ինքը դեռ շատ ջանքեր է գործադրելու նրան սպանելու համար: Ի վերջո կարևորը սոսկ սպանելը չէ: Արենա մտնող յուրաքանչյուր ցույ արդեն իսկ դատապարտված է մահվան: Կարևորն այն է, որ գեղեցիկ սպանես, արվեստի բոլոր կանոններով, որ մաքուր սպանես:

Պորտուգալացի մատադոր Ռոբերտո Դիասը քսանմեկ տարեկան է, բայց եթե դատելու լինենք ծրագրի վրա եղած նրա կենսագրությունից, արդեն ցլամարտիկի երկար ճանապարհ է անցել: Նա մոտենում է ծանր, դանդաղ քայլերով, առանց նայելու ցույին, թեքվում է փայտե պարսպի վրայից, սպասավորի ձեռքից վերցնում է վառ կարմիր թիկնոցը և սուրը: Նույն դանդաղ շարժումներով նա թրջում է թիկնոցի ծայրը, որպեսզի ծանրանա ու գետնին քսվի այն, սուրը թաքցնում է թիկնոցի մեջ և ուղղվում է դեպի իր գոհը: Դանդաղ, դանդաղ, գուցե որպեսզի ցույն ավելի արյունաքամվի:

– Ահե, ահե...

Բայց ցույը առջևի աջ ոտքով քանդում է հողը և ետ–ետ է քաշվում:

– Ահե, ահե...

Ցույը չի ուզում կռվել: Նա արդեն հոգնած է և անիմաստ է համարում այս ամենը: Բայց չէ՞ որ դատապարտված է, ժողովուրդն ուզում է, որ նա մեռնի: Ժողովուրդն արդեն սուլում է մատադորին՝ ցույի հոգեվարքը երկարաձգելու համար: Ուր որ է բարձիկներ կսլանան ցած: Եվ Ռոբերտո Դիասը արագացնում է շարժումները: Նա սուրը թաքցրած մուլետի ծայրով խփում է ցույի դնչին: Ցույն անկարող է տանել այդ անպատվությունը, նա նետվում է վիրավորողի վրա և պարզապես քսվելով անցնում է նրա կողքով...

– Օլե՛, օլե՛, – մոնչում է ամբոխը:

Պորտուգալացին ծնկի է իջնում և սկսում է կռվել ծնկած՝ ցույի հարձակման պահերին մեկ այս, մեկ այն կողմ թեքելով մարմինը: Ամբոխը խելագարվում է հաճույքից և արդեն մահ է ուզում տեսնել:

– Մատալո, մատալո...

– Սպանիր, սպանիր...

Պորտուգալացին գլխից պոկում է գլխարկը, նետում է փայտե կարմիր պարսպից այն կողմ՝ սպասավորին, մուլետի միջից հանում է սուրը և սուրը աջ ձեռքից կախ դանդաղ մոտենում է ցույին: Նրան մի պահ է հարկավոր միայն, մի ակնթարթ, նրան հարկավոր է, որ ցույը հարձակողական շարժում անի, կռացնի գլուխը՝ հարու տալու համար: Հենց այդ վայրկյանին սուրը նրա գլխի վրայով պետք է խրել թիկունքը՝ սրտի ուղղությամբ և խրել մինչև դաստակը:

Դե, թեքիր գլուխդ, վերջացրու: Ժողովուրդը սպասում է, հուզվում է, սուլում է, ժողովուրդը գոռում է.

– Մատալո:

Յլամարտիկը փախչելու կեղծ շարժում է անում, բայց հոգնած ու արյունաքամ ցուլը չի էլ նայում նրան: Յլամարտիկը ոգևորում, հորդորում է նրան, հրապուրում է, և ցուլն ի վերջո տեղի է տալիս: Ցուլը կռացնում է գլուխը՝ հարձակվելու համար, և հենց նույն վայրկյանին նրա եղջյուրների արանքով անցնում է մատաղորի սուրը ու մինչև դաստակը խրվում անասունի թիկունքը: Յլամարտիկը ետ է ցատկում արագ, շրջվում է ու ողջունում ամբոխին:

Դահլիճը դորդում է ծափերից, սոմբրերոներ են սավառնում օդում, հպարտ ու զիլ հնչում են շեփորները: Պորտուգալացին խոնարհվում է աջ ու ձախ, օդում բռնելով աղջիկների նետած ծաղիկները: Նա ջահել է, գեղեցիկ՝ ոսկեկար իր հագուստի մեջ, հոգնած դեմքը անընդհատ ժպտում է, նա չի էլ նայում ցուլին, որը շարունակում է կանգնած մնալ արենայի մեջտեղում՝ մինչև դաստակը խրված սուրը թիակների արանքում: Դա արդեն մատաղորի գործը չէ, դրա համար սպասավորներ կան:

Այստեղից ու այնտեղից դուրս են թռչում բրանդերեյերները, գոռում են ցուլի վրա, փախուստի կեղծ շարժումներ են անում, հարձակվում են, շարժում են գունավոր թիկնոցները: Նրանց նպատակն է, որ ցուլը շարժվի, որ խրված սուրը կատարի իր գործը: Եվ ցուլը շարժվում է չիմանալով, որ ինքը մեռած է այլևս:

Ցուլը մինչև վերջ կատարում է իր դերը: Ահա մի քայլ, մի քայլ ևս, ցուլը ընկնում է առաջին ոտքերի վրա, գլուխը ծանրորեն հարվածելով գետնին: Նույն վայրկյանին վրա է ցատկում բրանդերեյերներից մեկը և կարճ սուր դանակը ողջ թափով խրում է ցուլի ծոծրակը: Ցուլն անմիջապես ընկնում է մեջքի վրա՝ վեր պարզելով թուլացած, ծալված ոտքերը: Ամեն ինչ վերջացած է:

Բայց ոչ, դեռևս վերջացած չէ ամեն ինչ: Զիլ ու հանդիսավոր հնչում են շեփորները: Կենտրոնական դարպասից, որի վերևում գրված է. «Խմեցեք «Կոկա-կոլա», դուրս են գալիս երեք ջորի, ջորեպանների, արենայի սպասավորների ուղեկցությամբ: Բանվորները ձեռքի անվավոր խարակներով հող են բերում, ծածկում արյան լճակները, մյուսները փոցխերով հարթում են մարտերի հետքերը, իսկ ջորեպանները պարանի հանգույց են անցկացնում ցուլի եղջյուրներին, և ջորիները դիակը քարշ են տալիս արենայով դեպի դուրս:

Յլամարտն ավարտված է: Կարող ես մի քիչ հանգստանալ, մինչև հաջորդ ցուլի հրապարակ գալը: Դեռ այնքա՛ն վայելք ունես: Դեռևս հինգ ցուլ կա: Բիարկե, ամեն մի ներկայացմանը զոհվելու է վեց ցուլ: Երկու մատաղոր և վեց ցուլ: Ամեն մի մատաղոր սպանում է երեք ցուլ:

Ասում են, շատ բարձր են վճարում այդ ցլամարտիկներին:

Սա՞ ինչ բան է: Հարյուր անգամ ավելի լավ է գեղեցիկ դիալոգներով Հեմինգուեյ կարդալ ցլամարտի մասին, քան թե տեսնել, թե ինչպես են սպանում մի ցուլի: Ես դրա արվեստը չհասկացա և չեմ էլ ուզում հասկանալ: Ես միայն տեսնում էի մի ցուլի, որի վրա հարձակվում

են տասնյակ զինված մարդիկ ու ձիեր: Ես միայն արյուն էի տեսնում, որ շերտ–շերտ ծորում էր խեղճ կենդանու բաց վերքերից, որից սրտախառնուք էի զգում և պտտվում էր գլուխս: Ես կթողնեի կհեռանայի այդ Պլասա Մեխիկոյից, եթե կարողանայի ինքնուրույն հեռանալ և եթե հույս ունենայի, թե ուզածս դեպքում երբևէ կրկին կարող եմ վերադառնալ այս արյունոտ հրապարակը:

Բայց ես չգիտեմ, մեկ էլ երբևէ կհայտնվե՞մ Մեքսիկայում, կյանքում մեկ էլ երբևէ կտեսնե՞մ ցլամարտ, դրա համար էլ սրտախառնուք զգալով ու ձեռքերիս ավերով սեղմելով գլուխս, շարունակում եմ նստած մնալ Մեխիկոյի ամենամեծ հրապարակում և հիսուն հազար հանդիսականների հետ սպասել երկրորդ ցուլի հայտնվելուն: Սպասել: Բայց սուտ է: Չգիտեմ ով ինչպես, սակայն առաջին ցուլին ես դեռ չեմ մոռացել: Չգիտեմ ինչ զգացողություն է դա, գուցե այդպես է պատահում յուրաքանչյուր նորեկի հետ. մերոնք հետո պնդում էին, թե բոլորն էլ զգացել են նույնը: Բայց երբ խփում էին այդ դատապարտված կենդանուն, թվում էր, թե ինձ էլ էին ցավով դիպչում այն գունավոր նետերն ու երկար նիզակները, թվում էր, թե ինձ էլ էին խաբում, հրապուրում կարմիր թիկնոցով, հարվածում, ծիծաղում, ծաղրում ինձ: Ինձ թվում էր, թե ես էլ մի քիչ ցուլ եմ, թե բոլոր մարդիկ էլ ի վերջո ցուլեր են մի քիչ, որովհետև աշխարհ են եկել արդեն դատապարտված և բախտի հարվածներից խուսափելու համար վազում, փախչում են կյանքի արենայով չիմանալով ուր, չիմանալով ինչու, դեպի իրենց անկումը: Իսկ երբ ջորիները ավազի վրայով քարշ էին տալիս ցուլի անկենդան մարմինը, կողքերս ցավում էին: Դա թերևս հիվանդագին, բայց սոսկալի զգացում է: Եվ երբ չորս կողմից շրջապատել էին ցուլին ու հրում էին, գոռում էին, ծաղրում ու խաբում էին, հանկարծ զգացի, որ ես նրանց իմ արյունակիցների, իմ նմանների, իմ դասի կենդանիների հետ չեմ, այլ ցուլի հետ եմ, ցուլի մեջ: Ես միայն փոթորկվում, գազազում էի, երբ նա չէր կարողանում հարվածել իրեն վիրավորողներին ու նվաստացնողներին, զայրանում էի, երբ վրիպում էր, երբ կարմիր թիկնոցի տակ չէր տեսնում դատարկությունն ու ծուղակը: Մի՞թե սա է ցուլը: Մի՞թե ցուլերն այսքան խեղճ ու անօգնական են լինում: Հը, դե խփիր, խփիր այդ մարդուն, այդ ձիուն, այդ մարդկանց...

Մթնում էր արդեն, միանգամից վառվեցին էլեկտրական լույսերը: Հանդիսականների մի մասը կամաց–կամաց ցրվում է: Ակնհայտորեն հոգնել են բոլորը՝ մասնակիցներն էլ, դիտողներն էլ: Դրամատիկ շատ տեսարաններ եղան, կրքերը բորբոքվել ու խաղաղվել են: Հետաքրքիր ցուլեր էին: Շաքից հանեցին երկու ձիու, ոտքի տակ տվեցին պիկադորներից մեկին, երեք բրանդերեյերների վիրավորեցին: Այստեղ դեռ ձիերի բախտը բերել է: Այնպես չէ, ինչպես Իսպանիայում: Իսպանիայում նրանց չեն վահանապատում, և ձիերը փաստորեն ցուլերի զոհերն են: Չէ, այսպես թե այնպես այստեղ ավելի մարդկային են, ձիերը քիչ են հաշմվում:

Հա, երկրորդ հարցը, սպանելուց հետո ի՞նչ են անում ցուլերի միսը:

Նվիրում են քաղաքային հիվանդանոցին և ծերանոցներին:

Ուրեմն վաղը Մեխիկոյի հիվանդանոցներն ու ծերերը հինգ ցուլի թարմ միս կուտեն: Ասենք, ինչո՞ւ հինգ, մնում է դեռ վեցերորդը: Ահա նա ևս հայտնվել է արենայի մեջտեղում՝ 450 կիլոգրամ կշիռ ունեցող սևաթույր «Նեգրոն»: Մեջքին փայլում է սպիտակ ժապավենը: Նրան դիմավորելու է դուրս եկել մեքսիկացի Լուիս Չապեկան: Քսանյոթ տարեկան է Լուիս

Չապեկան և ընդամենը երկու ամիս առաջ համարվում էր Մեքսիկայի լավագույն մատադորը: Իսկ երկու ամիս առաջ «Խուլ» մականվամբ ցուլը նրան գետին տապալեց՝ եղջյուրը խրելով մատադորի աջ կրծքավանդակը: Երկու անգամ վիրահատեցին, հրաշքով փրկվեց: Եվ նորից արենա: Ճիշտ է, ասում են, որ չկա այլևս առաջվա համարձակությունը, խենթ խիզախությունը, բայց Լուիս Չապեկան այնուամենայնիվ առաջնակարգ ցլամարտիկ է: Նրան պարզապես նեղում, ջղայնացնում է պորտուգալացու հարևանությունը: Նրա ներկայությամբ իր զգուշությունը շատ է աչքի ընկնում: Բայց ի՞նչ կարող է անել, ուրիշ ելք չկա: Իսկ հիմա շարժվել չի ուզում, հոգնել է: Երկու ցուլ է սպանել Լուիս Չապեկան: Սա երրորդն է:

Այս բոլորը մեր ականջին փսփսում է մեր «Վիկտոր Հյուգո» ավտոբուսի վարորդ Անտոնիո Սոսոն: Լուսումնաբանական համալսարանի իսպաներենի դասախոս Ալլա Վերշինինան վերածում է ռուսերենի, իսկ մենք տարբեր լեզուներով գրում ենք մեր ծոցատետրերում: Սրամիտ մարդ է Անտոնիոն. երբ անցնում էինք Մեխիկոյի Կոլումբոսի հրապարակով, Քրիստափոր Կոլումբոսի արձանը ցույց տալով ասաց.

– Պարոններ և տիկիներ, ուշադրություն դարձրեք այս մարդուն: Սա առաջինն էր, որ տուրիստական խմբով Ամերիկա եկավ:

Դահլիճում ևս ծիծաղ է: Ինչքան էլ այս ու այն կողմ է ընկնում մատադորը, ցուլը տեղից չի շարժվում: Երբ Լուիսը հարձակվում է, ցուլը սկսում է ետ–ետ նահանջել, արձանանում է՝ գլուխը ոտքերի արանքում: Լսվեցին սուլոցներ ու ծիծաղ: Բրանդերեյերները եկան, թիկնոցները թափ տալով սլացան Նեգրոյի մոտով: Իսկ նրա պետքն էլ չէ: Չի ուզում կռվել և վերջ: Սուլոցները շատացան, և ահա հրապարակ մտավ պիկադորը: Երկար նիզակը ձեռքին նա դանդաղ մոտեցավ կարմիր պարսպի երկարությամբ և ձին թեքությամբ կանգնեցրեց ցուլից 10–12 մետր հեռավորության վրա: Ցուլը կարծես թե դրան էր սպասում, մի ակնթարթում զավեշտը փոխվեց ողբերգության: Պիկադորը չհասցրեց նույնիսկ մեկնել նիզակը, երբ ցուլի հարվածից ձին ընկավ պարսպի վրա: Սոսիկ բրանդերեյերը ցատկեց՝ թիկնոցով ցուլի ուշադրությունը գրավելու համար, բայց Նեգրոն կարծես տեսնում էր միայն ձին: Ցուլն այնքան խիտեց ընկած ձիուն, որ սա արդեն շրջվեց մեջքի վրա՝ մերկացնելով անպաշտպան որովայնը: Եվ կատաղած ցուլը եղջյուրները խրեց այդ փափկության մեջ: Բրանդերեյերներից մեկը թիկունքից անընդհատ նիզակով խփում էր Նեգրոյին: Վերջացնելով ձիու հետ, ցուլը անսպասելիորեն շրջվեց և եղջյուրներով փետուրի նման հեռու շարժեց տղային: Նա ընկավ փորի վրա, ճչաց ու ձեռքերով ծածկեց գլուխը: Ցուլը կրկին նետվեց դեպի նա, և ողբերգությունը շատ մեծ կլիներ, եթե չմիջամտեր մատադորը: Լուիսը կայծակի արագությամբ անցավ ցուլի և ընկած տղայի արանքով՝ Նեգրոյին տանելով իր հետ: Բայց ցուլն արդեն խելագարված էր: Դեռ շատ հեռվում նկատելով երկրորդ պիկադորին, նա հարձակվեց ահագնորեն, ձիուն էլ, հեծյալին էլ տապալեց ցած և սկսեց տրորել ու հարու տալ: Ձիու հոգեվարքային սարսափելի խրխինջը բռնել էր շրջապատը: Մի ակնթարթում արենան դատարկվեց: Պիկադորներից և բրանդերեյերներից ոչ մեկն այլևս չհամարձակվեց հրապարակ դուրս գալ, և ասպարեզը մնաց խենթացած ցուլին: Սա մոնչալով վագում էր պարսպի երկարությամբ՝ ասես մարտահրավեր նետելով մարդկանց:

Ամբոխը սուլում էր՝ հիացած ցուլի խիզախությամբ և միաժամանակ վրդովված նրա հանդգնությամբ: Եվ մատադորը վճռեց ամեն ինչ վերցնել իր վրա: Արագ շարժումով նա

մոտեցավ պարսպին, բղավեց, մոտեցող բրանդերեյների ձեռքից վերցրեց դեղին նետերն ու մոտեցավ ցուլին: Ցուլը նետվեց դեպի մատաղորը, բայց սա կարծես զսպանակով վեր թռավ ու մինչ ցուլը անցնում էր նրա կողքով, վայրկենապես երկու նետերն էլ նրա թիկունքը խրեց: Ցուլը զարմանքից անշարժացավ: Իսկ մարտիկը կրկին նետվեց դեպի պարիսպը: Հինգ բռպե էլ չէր անցել, երբ դեղին նետերի մոտ սկսեցին տարուբերվել կարմիր, ապա կանաչ նետերը: Հանդիսականները պարզապես խելագարվել էին. ֆուտբոլի մարզադաշտերը գրադարաններ են ցլամարտերի հրապարակների համեմատությամբ: Բարձր-բարձր, նստարաններից պտտվելով գույնզգույն սուրբերոններ էին ընկնում արենա: Իսկ ցլամարտիկն իր տարերքի մեջ էր: Նա խաղում էր, երգում, պարում էր: Ոսկեկար կարմիր և նարնջագույն բաճկոնն ու տաբատը պիրկ գրկել էին մատաղորի իրանը: Ոսկենախշ ուսադիրները լայն իջել էին կրծքին, եռանկյունի գլխարկի տակից ճակատին էր կախվել սև մագափունջը: Իր ողջ կյանքը ցլամարտերում անցկացրած ծեր վարորդ Անտոնիո Սոսոն անգամ ճշում էր երեխայի նման.

– Մենյորներ, այսպիսի բան չի եղել:

– Մենյորներ, հավատացե՛ք ինձ, դուք երջանիկ եք:

Մատաղորը թիկնոցը պարզած, դոփելով աջ ոտքը, «ահե, ահե» բղավելով, օրորվելով առաջ էր գալիս, հրավիրում ցուլին, նրա հարձակումների ժամանակ ասես հրաշքով հասցնելով թեքվել, որովհետև Նեգրոն անցնում էր գրեթե քսվելով նրան: Օդում աղմուկ կար, հրճվանք և ինչ-որ անորոշ տագնապ, որը երբեմն-երբեմն համընդհանուր հառաչի էր հասնում: Եվ հանկարծ ամբոխը ախ քաշեց: Մի ակնթարթ, երևի նույնիսկ մեկ տասնորդական ակնթարթ սայթաքեց Լուիսը: Չէ՞ որ ավագի վրա ահագին արյուն էր թափվել ու շարունակում էր թափվել Նեգրոյից: Ընդամենը տասնորդական ակնթարթ, և հանկարծ մենք սարսափով նկատեցինք, որ ցլամարտիկի մարմինը անբնականորեն թռչում է օդում: Հետո խուլ զարնվեց հրապարակի ավագին: Ցուլը հարձակվեց ու սկսեց պոզահարել նրան, քարշ տալ ավագի վրայով, և անվանի ցլամարտիկ Լուիս Չապեկան այն բրանդերեյեր տղայի նման ստիպված էր ձեռքերով պաշտպանել գլուխը և քացիներով ետ մղել ցուլի եղջյուրները: Դա շատ անհավատալի և տխուր բան էր:

Թեև ակնհայտ էր տագնապը, սակայն շեփորները տագնապ հնչեցրին, և ասպարեզ նետվեցին մի քանի հոգի: Նրանք հարվածում էին ցուլին և մտնում էին կարմիր դարպասի առջևում սարքած տախտակե հատուկ վահանից ներս: Ցուլը քանի-քանի անգամ եղջյուրները թնդյունով խրեց կարմիր տախտակի մեջ: Հետո նա մի կողմ կանգնած արյունաքամ էր լինում, իսկ երկու հոգի փորձում էին ցլամարտիկ Լուիս Չապեկային պատգարակի վրա հեռացնել՝ դաշտից: Արդեն ասպարեզ էր իջել երրորդ, պահեստի մատաղորը և ցատկոտում էր տեղում՝ մարտի պատրաստ բռնցքամարտիկի նման: Բայց Լուիս Չապեկան դուրս պրծավ իրեն տանել փորձողների ձեռքից ու կանգ առավ օրորվելով: Կարծես թե արդեն բոլորովին ուրիշ մարդ էր կանգնած նրա փոխարեն: Ամբողջ հագուստը տրորված ու կորած էր փռում մեջ, բաճկոնի պատռված կողքը կախվել էր ցած, մերկացած աջ ազդրից արյունը կաթկթում էր ավագի վրա: Նա այնքան գունատ էր, որ ասես դիմակ էր կրում դեմքին, իսկ երբ կաղալով քայլեց դեպի պարիսպը, դիմակը ցավից աղավաղվեց: Նախկին կեցվածքի, ուժի, գեղեցկության հետքն անգամ չկար այլևս: Ցլամարտիկը չկար այլևս: Մեր առջև կանգնած էր սովորական մի պատանի, որը պատահականորեն վիրավորվել էր մարտի դաշտում և կարեկցանքի էր

արժանի, բայց նրան սուլում էին: Սուլում էին և բարձիկներ էին շարտում, որ փոքրիկ տղաները մի պեսոյով վաճառում են հանդիսականներին, որպեսզի նրանք չսառչեն բետոնե աթոռներին:

Լուիս Չապեկյան հենվելով պարսպին նոր սուր և մուլետ պահանջեց: Նրան համոզում էին ետ կանգնել, ցույց էին տալիս արյունը: Հեռանում էին նրանից: Բայց մատաղորը համառում էր, նա գրեթե լաց էր լինում և բղավեց այնքան, մինչև որ ի վերջո նրան սուր և կարմիր թիկնոց տվեցին: Պահեստի մատաղորը դուրս եկավ հրապարակից, և Լուիս Չապեկյան կաղեկաղ գնաց դեպի ցուլը: Դա մի տխուր պատկեր էր: Կանգնած էին դեմ դիմաց մարդն ու ցուլը, երկուսն էլ վիրավոր, արյունաքամ, և կեցվածքով ու վիճակով այնքան նման իրար: Կանգնել ու նայում էին միմյանց, և նրանցից ոչ մեկը չէր ուզում առաջինը քայլ կատարել:

Այո: Ճիշտ էր ասում Անտոնիո Սոսոն, թե մատաղորն ու ցուլը միմյանցից տարբերվում են միայն նրանով, որ մատաղորը հույս ունի փրկվելու, իսկ ցուլը չունի: Այդքանը:

Այլևս երևի անտանելի էին ամբոխի սուլոցն ու ծաղրական բացականչությունները, որովհետև ցլամարտիկը զգուշորեն կատարեց ևս երկու քայլ և թռիչքի հետ սուրը խրեց Նեգրոյի թիկունքը: Ցուլը մոնչաց, մի կողմ ցատկեց, թափ տվեց իրեն, և սուրը զնգոցով ընկավ ավազի վրա: Մատաղորը գետնից վերցրեց չարաբաստիկ սուրը, հարմար մի պահ ընտրելով հարձակվեց մի անգամ ևս, սակայն վրիպեց կրկին և ամբոխի խլացնող սուլոցների տակ, գրեթե չորեքթաթ մոտեցավ ու վերցրեց սուրը: Այլևս նայելն անհնարին էր:

– Լավ, թող մեկ ուրիշն սպանի ի վերջո, – լաց լինելով ասում էր մեր Ալլա Վերջինինան, – այդպես ո՞նց կլինի, սենյոր Անտոնիո:

– Է՛, հեշտ չէ, – ասաց Անտոնիո Սոսոն, – եթե ինքը չսպանի, վաղն այլևս նրան արենա չեն թողնի: Տեսա՞ք պահեստային մատաղորին:

Լուիս Չապեկյան միայն հինգերորդ հարվածից հետո կարողացավ սուրը ցուլի թիկունքը խրել մինչև դաստակը, շրջվեց, ուզեց ողջունել հասարակությանը, բայց օրորվեց ու բերանքսիվայր ընկավ ավազի վրա: Ցուլը փորձեց հարձակվել նրա վրա, բայց մի քանի քայլ չարած ընկավ ծնկներին ու շրջվեց մեջքի վրա՝ անօգնականորեն ծավաճ ոտքերով:

Եվ ժողովուրդը ծիծաղում էր: Բարձր ու զիլ հնչում էին շեփորները: Էստրադային նվագախումբը հրաժեշտի ինչ–որ մի թեթև նվագ սկսեց: Հրապարակում հայտնվեցին ջորիներն ու ջորեպանները, ավազի ձեռնասայլակները այս ու այն կողմ տանող, արյունը մաքրող մարդիկ: Սպասավորները պարանով կապեցին ցուլի եղջյուրները և ջորիները համառորեն մեռնել չուզող Նեգրոյին քարշ տալով տարան ավազի վրայով: Գրեթե նրանց հետ հայտնվեցին նաև երկու հոգի՝ փոքրիկ պատգարակով, նշանավոր ցլամարտիկ Լուիս Չապեկյային պատկեցրին պատգարակին և ժողովրդի սուլոցի ու քրքիջի տակ դուրս բերեցին հրապարակից: Մատաղորի արյունոտ ոտքը կախված էր պատգարակից և թույլ–թույլ ճոճվում էր ընթացքի հետ:

Շատ տխուր էր, ու ոչ մի գեղեցիկ բան չկար:

Հետո Անտոնիո Սոսոն ասում էր.

– Սենյորներ, ցլամարտից գեղեցիկ բան աշխարհում չկա: Այ, դուք ծափահարում եք, երբ բոնցքամարտում մարդիկ իրար քիթ ու մոռու են ջարդում: Դա մարդկային է, իսկ երբ մարդը սպանում է ցուլին, գիտե՞ք ինչ, դա անմարդկային է:

– Ցլամարտը... ցլամարտը արվեստ է, սենյորներ:

Բայց մենք խուսափում էինք խոսել այդ մասին:

ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵԶՐՈՎ

Մեքսիկայում հիանալի ճանապարհներ կան: Աշխարհում և Մեքսիկայում ճանապարհները մարդիկ են կառուցում: Բայց քիչ է պատահում, որ կառուցողներն անցնեն ճանապարհով: Սովորաբար նրանք ճանապարհի եզրով են քայլում, արահետներով:

Ես ուզում եմ ճանապարհի եզրով քայլող մեքսիկացիների մասին պատմել ձեզ:

Նախ՝ բառացիորեն:

Գվադալախարայից գնում ենք Մորելիա: Անցնում ենք Սիերա Մադրեսը, այսինքն մեքսիկական մայր լեռները: Աստվածային բնություն է: Մի քիչ Դիլիջան, մի քիչ Լոոի: Բարձր անտառներ են լեռների փեշերին: Խորն ընկած փոքրիկ, պղտոր լճեր, խոնավ ժայռերի ձեղքերից ջրեր են հորդում, փայլելով գնում, կորչում մուգ կանաչ կիրճերի մեջ: Ճանապարհը բարձրանում է ոլոր–մոլոր, ու հանկարծ սևաբուն ծառերի արանքից կապույտ է երևում: Անտոնիո Սոսոն արգելակում է մեքենան, բարձրացնում է ձեռքը ու խնդրում է մեզ.

– Սենյորներ ու սենյորաներ, բոլորս միասին բացականչում ենք՝ «Մենք եկել ենք տեսնելու քեզ, Չապալա»:

Մենք բացականչում ենք ու ցած նետվում ավտոբուսից: Ուրեմն սա նշանավոր Չապալա լիճն է, Մեքսիկայի Սևանը, որը մերկ լեռների մեջ փոված է ծովի մակերևույթից հազար մետր բարձրության վրա: Ափերին հեքիաթային առանձնատներ են՝ ծաղկի ու կանաչի մեջ կորած, ծառերի տակ, որոնք լայն ու ստվերոտ սաղարթներ ունեն՝ խոշոր, վառվռուն, կարմիր ծաղիկներով: Զուր չէ, որ այդ ծառերը կոչվում են ֆլամբայան, այսինքն կրակի, հրի ծառ, հրածառ: Մենատների կողքին, իհարկե, ցլամարտի հրապարակն է: Մի քանի հարցեր ենք տալիս մեր ուղեկցորդին՝ Արմանդո Մենդոսին, և նրա պատասխանները մեզ մի քիչ հիշեցնում են «Չախ–չախ թագավորը»:

– Ո՞ւմն են այս զբոսանավերը:

– Ամերիկացիներինը:

– Առանձնատները:

– Ամերիկացիներինը:

– Այգիները, ավտոմեքենաները:

– Ամերիկացիներինը:

Պարզվում է, որ հարուստ ամերիկացիները մեկ երկու ամիս, այստեղ հանգստանալու համար, ֆանտաստիկ գներով հողամաս են ձեռք բերել, առանձնատներ կառուցել, զբոսա... ու առագաստանավեր տեղափոխել:

Մենք նույնիսկ նեղանում ենք:

– Ինչո՞ւ: Դուք հարուստներ չունե՞ք:

Արմանդո Մենդոսը ժպտում է:

– Ինչո՞ւ չէ, մնացած բոլորն էլ նրանցն է էլի: Հետո՝ մեր հարուստներն էլ Ամերիկայում ունեն այս ամենը:

Իսկ մենք դեռ մտահոգվում էինք «խեղճերի» համար:

Ճանապարհը ոլորվում, ձգվում է լճի երկայնքով, մի երկու անգամ փոքրվում է պոկվել լճից, չի կարողանում, ասես հմայված զարմանալի կապտագույն գեղեցկությամբ, հետո միանգամից թափ է առնում ու փախչում հեռու, դեպի արձակ դաշտերը: Այստեղ ու այնտեղ փոքրիկ պղտոր լճակների մոտ թանձր ծուխ է բարձրանում ինչ–որ ցածրիկ շինություններից: Հա, աղյուս են թրծում մեքսիկացիները: Ճանապարհի կողքին փոքրիկ տղաները ծաղկած կակտուսներ են վաճառում՝ մանուշակագույն ծաղիկներով: Չալպտուրիկ կովերի նախիրներ ու ձիերի երամակներ են անցնում կարմրավուն լեռնալանջերով և էշեր, էշեր, էշեր, այն խաղի նման՝ սև, սպիտակ, մոխրագույն... Ավտոճանապարհից մերթ ընդ մերթ պոկվում, կարմիր արահետով աջ ու ձախ են գնում ռանչոների ճանապարհները: Բարձր պարիսպներով շրջապատված անասնանոցներ են, երկհարկանի կոմինդրաժածկ սովորական տներ՝ աղյուսե կարմիր պատերով ու մեկ էլ կողքին վերջին արտադրության մի երազ–ավտոմեքենա:

Ի՛նչ հրաշալի ու հարուստ բնություն ունի այս Մեքսիկան:

Բայց դրանից տրամադրությունդ չի բարձրանում:

Ու մտածում ես, որ այս չքնաղ, այս հարուստ բնության մեջ էլ մարդիկ աղքատ են ու տխուր, հազար ցավ ու կրակի տեր: Կովբոյնե՛րը... Մենք նրանց կինոներում ենք տեսել ու գրքերում՝ այդ հպարտ, գեղեցիկ ու խենթ տղաներին: Կինոներում նրանք շրջում են շքեղ հագնված, մկանուտ նծույզների վրա, հպարտ ու ձիգ կեցվածքով, լայն սոմբրերոներով,

ատրճանակներով՝ գոտու մեջ խրած, ատրճանակներով՝ ձիու թամբին և երկար դանակներով՝ երկարաճիտ կոշիկների մեջ: Նրանք ոչ մի հոգս չունեն, նրանք միայն արկած են որոնում և գեղեցիկ աչքերի ժպտուն հայացքի համար սառնասրտորեն կարող են գնդակահարել մի քանի ուրիշ կովբոյների և սարսափի մեջ պահել մի ամողջ քաղաք: Կովբոյները... Հիմա նրանք անցնում են մեր կողքով, ճանապարհի եզրով, նախիրների ետևից, ձիավոր և առանց ձիու, թուխ, քամհար, դեմքերով, մոայլ ու թախծոտ աչքերով, ճանապարհի կարմիր փոշին խունացած շորերին: Երբ ոչ ոք չկա ու ամայի է ճանապարհը, նրանք համարձակվում են քայլել ճանապարհով: Բայց հենց որ ավտոմեքենայի ձայն է լսվում, քաշվում են աջ, աջ, ամենաեզրը, կանգնում սպասում են այնքան, մինչև անցնի ավտոմեքենան ու նոր են միայն առաջ շարժվում:

Դե սրանք ի՞նչ կովբոյներ, սրանք իսկական մեր հին տավարածներն են ու հոտաղները: Եվ լեզվաբան չլինելով, այնուամենայնիվ մտածեցի, թե չի կարող պատահել, որ սրանց կովբոյ և մեր կով բառերի մեջ կապ չլինի, կամ էլ կապ չլինի ռանչո և ռանչպար բառերի մեջ: Նույնն է, եղբայր, միայն սրանք լայնեզր սոմբրերո գլխարկներ են դնում: Դա էլ կակտուսի նման բան է:

Տխրել եմ մի տեսակ ու չգիտես ինչու ամաչում եմ, որ մեր ավտոբուսը անցնում է այդ ամենի կողքով: Ահա ճանապարհի եզրով հայր ու որդի գնում են ավանակի վրա նստած: Տղան փոքրիկ է, նստել է հոր դիմաց՝ ձեռքերը հոր ծնկներին, և էշը մանրիկ վագում է մագեյների միջով: Ո՛ւր են գնում, ինչո՞ւ, ի՞նչ իմանա: Ի՞նչ իմանա ուր են գնում այս տղամարդն ու կինը, որ նոր դուրս են եկել գյուղից: Մեքսիկացին քայլում է զգուշությամբ՝ ուսից գրկած տանելով անկասկած հիվանդ կնոջը, որի դեմքը տառապանք է արտահայտում: Նրանց ետևից մի քանի քայլի վրա ցատկոտելով գնում է փոքրիկ, թխահեր մի աղջիկ: Այսքան էլ տխրություն կլինի, տեր աստված, ի՞նչ անես, ուզում ես իջնել, լսել, խոսել, իմանալ, մխիթարել, օգնել: Չէ՛, ի՞նչ կարող ես անել: Ավտոբուսը սլանում է իր ճանապարհով և ավտոբուսի մեջ հնչում է օտար մարդկանց լիաթոք ծիծաղը: Անեկոյտներ են պատմում, որ ճանապարհը կարճանա:

Նեղ, պղտոր գետակներ են հոսում լեռնալանջերից, անցնում ձորերով: Կանայք լվացք են անում կոացած կամ ծնկած՝ պղտոր գետակի ափին, թաց շորերը տափակ քարերին խփելով, հետո փռում են հենց գետափին, խոտերի վրա կամ կախում ցցանման կակտուսներից կապած պարաններից: Իսկ լվացք անող կանանց ոտքերի մոտ, գրկին ու մեջքին, խոտերի վրա, ամենուրեք երեխաներ են՝ սևուկ, սիրուն, կիսամերկ:

Ա՛խ, այդ երեխաները:

Հոկտեմբերի 19-ին Գվադալախարա քաղաքում ես իմ ծոցատետրում գրեցի. «Հենց որ հասնենք տուն, խնդրելու եմ, որ ինձ մեծ ամբիոն տրամադրեն և մեծ լսարան: Հավաքելու եմ երեխաներին. շատ-շատ երեխաների և նրանց մեջ անպատճառ իմ երեխաներն էլ են լինելու: Ես նրանցից պահանջելու եմ խորին լռություն: Հետո առաջարկելու եմ, որ բոլորն էլ ոտքի կանգնեն ու ինձ հետ վանկ առ վանկ բացականչեն՝ «Կեցցե սովետական իշխանությունը: Փառք կոմունիստական կուսակցությանը: Կեցցե Սովետական Հայաստանը»:

Անպայման: Հետո ես նրանց պատմելու եմ մեքսիկացի երեխաների մասին, որոնց ես հանդիպեցի և որոնց նկարներն ու հայացքները ես բերել եմ ինձ հետ: Եվ հետո ասելու եմ մեր երեխաներին.

– Երեխաներ, ախր դուք չգիտեք, թե որքան երջանիկ եք դուք: Դուք չգիտեք: Դուք չգիտեք, թե ինչ բան է քաղցը, մուրացկանությունը, անլույս փողոցներում գիշերները ծամոն վաճառելը, օտար մարդկանց կոշիկները մաքրելը... Դուք... ոչինչ չգիտեք, դմբոներ:

Եվ ես՝ ճառ չսիրողս, ճառ եմ ասելու, մեծ ու երկար ճառ և ասելու եմ.

– Երեխաներ, ուրեմն դուք իրավունք չունեք լավ չսովորելու, դուք իրավունք չունեք լավ մարդիկ չդառնալու: Դուք աստծո նման պետք է պաշտեք ձեր ծնողներին և ամեն ինչ անելու եք, որպեսզի ձեր երեխաները ձեզանից լավ սովորեն: Հասկանո՞ւմ եք: Նրանք՝ մեքսիկացի այդ երեխաները, հո մեղավոր չեն: Նրանք էլ են ծնվել՝ երջանիկ լինելու համար և ձեզ հետ միասին են ծնվել, նույն մոլորակի վրա, բայց նրանք...

Նրանցից մեկին ես տեսա Գվադալախարա քաղաքում: «Ացտեկ» հյուրանոցի մուտքի մոտ ավտոբուսի ենք սպասում: Երեկոյան ժամը տասն է: Մեկ էլ մեզ է մոտենում հագիվ ութ–ինը տարեկան մի տղա: Ձեռքին փայտե փոքրիկ արկղ ունի բռնած, արկղի վրա ոտնատեղ է: Նա ծնկում է իմ առջև, պարզապես մայթին, մեկնում է ձեռքերը և ինչ–որ բան է ասում: Նրա բոկոտիկները քրքրված են, կեղտոտ է վերնաշապիկը, իսկ թուխ մազերը ճիշտ և ճիշտ մեր երեխաների մազերի նման կարճ ընկած են ճակատին:

– Մենյոր,– ասում է տղան,– 20 ցենտ, միայն 20 ցենտ, և ձեր կոշիկների մեջ փողոցը կերևա:

Իսկ ես նայում եմ նրա աչքերին և, ուզում եք սենտիմենտալ համարեք, ուզում եք լացկան, ձեր գործն է, բայց լացս գալիս է: Ես նայում եմ նրան ու բարձրաձայն ասում եմ իմ մտքում.

– Այ տղա, ի՞նչ ես անում այս ուշ ժամին փողոցում: Հը՞: Դու ի՞նչ կոշիկ մաքրող ես: Ախր դու ինչո՞ւ պետք է մաքրես իմ կոշիկները: Ախր դու շատ փոքրիկ ես, տղա ջան:

Ես այնուամենայնիվ նրան եմ մեկնում իր ուզած 20 ցենտը, չնչին մի գումար և հիմա էլ երկար համոզում եմ, որ ձեռք քաշի ինձանից: Ու զարմացած հեռանում է վերջապես գիշերային ռեկլամներից գունավոր դարձած փողոցով, թմբկահարելով իր արկղիկին ու զիլ ձայնով հաճախորդ հրավիրելով՝ հին ացտեկների որդոց որդին, Գվադալախարայի այդ Գավրոշը:

Նա դեռ ութ, ինը տարեկան կլինեք:

Այնինչ նրանից տարիքով փոքրերն էլ են աշխատում Մեքիկայում:

Գուանախուատոն (բառացի թարգմանությամբ՝ գորտերի բլուրը) XVI դարի քաղաք է: Նվաճել ու կառուցել են իսպանացիները՝ փաստորեն գետի վրա, նեղ, սալահատակ փողոցներով, իրար կպած շենքերով: Մեքսիկայի նշանավոր քաղաքներից մեկն է այսօր՝ 35 հազար բնակչությամբ, բայց 7 հազար ուսանող ունեցող համալսարանով, հանրապետության լավագույն թատրոններից մեկով և նրանով, որ այս փոքրիկ քաղաքում է ծնվել մեծ Դիեգո

Ռիվյերան: Զարգանալու այն հեռանկարներ ունի Գուանախուատոն, բայց կառավարությունը կտրականապես արգելել է ձեռք տալ քաղաքին, ընդարձակել ճանապարհները կամ բարձր շենքեր կառուցել: Գուանախուատոն պետք է մնա այնպես, ինչպես եղել է: Այն արդեն թանգարան է:

Մեր խումբը քայլում է այդ քաղաք-թանգարանով: Հենց նոր դուրս ենք եկել քաղաքի հարավում գտնվող երկու մեծ թունելներից, որ ջրհեղեղից պաշտպանվելու համար ժամանակին կառուցել են: Հետո գետը խեղդել են խողովակների մեջ, իսկ թունելները դարձրել զով զբոսավայրեր: Բարձրանում ենք վեր-վեր, հասնում մի պստիկ հրապարակ, որտեղից շատ զարմանալի, պարզապես մեկ մարդ անցնելու համար մի փողոց է բացվում շենքերի արանքում, կանգ ենք առնում, նայում ենք զարմացած ու մեկ էլ զգում ենք, որ շրջապատված ենք մանր-մուկ տասնյակ երեխաներով: Նրանցից յուրաքանչյուրը բռնում է մեզանից մեկին, մեկնում է ձեռքը և խնդրում է.

– Մենյոր, սենյոր, տվեք ինձ մեկ պետ, և ես ձեզ կպատմեմ «Համբույրի փողոցի» լեգենդը: Մի պետ, սենյոր:

Ես Ալլա Վերշինինային խնդրում եմ մոտենալ ինձ, որովհետև նա, ով ուզում է ինձ լեգենդ պատմել, ընդամենը հինգ տարեկան մի աղջիկ է: Թոթովելով է խոսում, սև աչքերը պսպղում են, սև մազերին կարմիր ժապավեն կա: Մեզ մեկնած փոքրիկ ձեռքն էլ կարմիր է ու ճաքճքված:

Մի պետյի հերն էլ անիծած: Չուզեցինք մի գավաթ զարեջուրը: Ավելի լավ է լսենք, թե ինչ համբույրի փողոցի մասին է պատմելու համբույրի ու գգվանքի կարոտ, փողոցում թափառող այս աղջնակը:

– Իմ բարի սենյորա և սենյոր: Այս փողոցը, որ դուք տեսնում եք, հենց «Համբույրի փողոց»-ն է:– Նա ձեռքը մեկնում է դեպի շենքերի մեջ ճգնված անցուղին:– Տեսնո՞ւմ եք համարյա իրար կպած պատշգամբները: Ուրեմն շատ-շատ առաջ, ահա այս տներից մեկում ապրում էր հարուստ մի մարդ, իսկ նրա տան դիմացի պատշգամբում՝ մի աղքատ հանքագործ: Երբ ծնողները տանը չէին լինում, տնից պատշգամբ էր ելնում աղքատ հանքագործի տղան, ձայն էր տալիս հարուստի աղջկան, ու նրանք երկար-երկար խոսում էին իրար հետ և, պատշգամբներից թեքվելով, համբուրում էին իրար: Տվեք ինձ էլի մեկ պետ, սենյոր, և ես ձեզ կպատմեմ ամենահետաքրքիր մասը, թե ինչ է լինում հետո:

Մենք սրտանց ծիծաղում ենք այդ թիզ ու կեսի խորամանկության վրա և տալիս ենք պղնձեղրամբ, որ նա ամուր սեղմում է ճաքճքված ձեռքի ափում ու շարունակում է՝ փոքրիկ, անուշ ձայնով, դավադիրի շշուկով.

– Բայց իմ բարի սենյորա և սենյոր, երջանկությունը ամեն մեկին չի տրվում...

– Ի՞նչ,– գրեթե ճշում է Ալլան, միաժամանակ թարգմանելով ինձ ու ակնոցի տակից սրբելով արցունքները:

– Երջանկությունը ամեն մեկին չի տրվում, – լրջորեն կրկնում է աղջիկը:– Մի օր հարուստ մարդը տեսնում է, թե ինչպես է իր աղջիկը թեքված խոսում աղքատ հանքագործի տղայի հետ: Ձայրանում է հարուստը, վազում թիկունքից դանակով խփում է իր աղջկան:– Այստեղ պստիկ սատանան լռում ու հառաչում է:– Մեռնող աղջիկը կախվում է պատշամբից, մեկնում է ձեռքը և հանքագործի տղան թեքվում համբուրում է նրա ձեռքը: Ահա թե ինչու է այս փողոցը կոչվում «Համբուրի փողոց»:

Աղջիկն այս բոլորը ասում է անգիր, արագ ու սահուն, մաշված ներշնչանքով, բայց երբ վերջացնում է, հանկարծ դառնում է Ալլային ու հարցնում է բոլորովին ուրիշ, կերկերուն ձայնով.

– Ինչո՞ւ եք լաց լինում, սենյորա, շա՞տ տխուր հեքիաթ էր...

Իսկ Ալլան չի դիմանում, գրկել, համբուրում է նրան, նրա սև մազերը, կարմիր ժապավենը, ճաքճքված փոքրիկ ձեռքերը, լաց է լինում ու ասում է անընդհատ.

– Չէ, չէ, այսպես չի կարելի, այսպես չի կարելի, ընկերներ:

Այդ երեխաները մեր հոգին հանում էին: Նախ՝ այդքան երեխա Աֆրիկայից բացի ես ուրիշ ոչ մի երկրում չեմ տեսել: Անգլիայում, մեծ քաղաքներում ես համարյա թե երեխա չտեսա, ճապոնիայում նույնպես: Որովհետև այնտեղ և այլ տեղերում երեխաները փողոցում գործ չունեն: Իսկ Մեքսիկայի շատ երեխաներ փողոցում և շուկաներում են անցկացնում օրվա մեծ մասը՝ իրենց բաժին հացը վաստակելով: Գրեթե բոլոր հյուրանոցներում և ռեստորաններում (ավելի շատ նահանգներում), որտեղ եղանք մենք, սպասարկող անձնակազմում երեխաներ կային՝ 8–12 տարեկան տղաներ: Եվ նրանք աշխատում էին մինչև ռեստորանի փակվելը և հետո՝ մինչև կեսգիշեր: Բոլոր քաղաքներում աղբատար սայլակները հրողները մանուկներ են: Առավոտից մինչև երեկո: Ինչքա՞ն են քնում այս փոքրիկները, որ առավոտ վաղ կրկին իրենց գործին են: Չես հասկանում: Մուրացկանությունը պաշտոնապես արգելված է երկրում: Դրա համար էլ բառացիորեն մուրացկանների չես հանդիպի: Փոխարենը կարող ես տեսնել երեք–չորս տարեկան տղաների ու աղջիկների, որոնք երեկոները մայթերի եզրերին, կինոթատրոնների շքամուտքերում ու մեծ խանութների առջև ծամոն են վաճառում՝ գույնզգույն տուփերը փոքրիկ ափերի մեջ սեղմած: Ո՞վ նրանցից ծամոն կգնի: Մարդիկ պարզապես նայում, խղճում են ու մանր դրամ են տալիս նրանց:

Կամ մի՞թե հաճույքի համար են նրանց ծնողները պատերի տակ կանգնած կնտկնտացնում կիթառի վրա՝ հրավիրելով անցորդների ուշադրությունը: Եվ միթե՞ նույն հատիկը չկա նաև ներսից տխուր ու դրսից ուրախ մարյաչիսների գործունեության մեջ:

Ինձ կասեն, թե ես խտացնում եմ գույները: Այո, խտացնում եմ: Ցավալի ու տարօրինակ է, որ հոգևոր մշակույթով և տնտեսապես զարգացած այնպիսի մի երկրում, ինչպիսին Մեքսիկան է, չի լուծվում երեխաների պրոբլեմը:

Բայց քանի որ հիշեցինք մարյաչիսներին, խոսենք մի փոքր ավելի հանգամանորեն, որովհետև մարյաչիսները մեքսիկական մշակույթի, ավանդների, ազգային պատկերի ու կոլորիտի

անփոխարինելի մասն են և հանրաճանաչության իմաստով այն մի քանի կետերից մեկը, որոնց վրա հենվում է Մեքսիկան:

Նախ ասենք, որ մարյաչիսները, երբ չեն երգում, աշխարհի ամենատխուր ու խեղճ մարդիկ են: Նայել չի լինում: Ամեն քաղաքում նրանք ունեն իրենց տեղը, հրապարակը, որտեղ հավաքվում են: Այդ տեղերը հենց այդպես էլ կոչվում են՝ «Մարյաչիսների հրապարակ»: Այնպես որ, երբ մեր ուղեկցորդը՝ Ֆրանցիսկոն, Գվադալախարայում հայտարարեց, թե գնում ենք «Մարյաչիսների հրապարակ», մենք վազեցինք:

Երեկո էր, և վառ լուսավորված էր հրապարակը: Շենքերից մեկի տակ մի քանի կամարներ կային, որոնցից յուրաքանչյուրի վրա խոշոր գունավոր տառերով գրված էր այդ կամարն զբաղեցնող մարյաչիսների խմբի անունը: Իրենք՝ մարյաչիսները, նստած էին կամարների տակ ու հաճախորդների էին սպասում: Նրանք լուռ էին, կնճռտված ու նույնիսկ թափթված մի տեսակ: Այդպես նստում, սպասում են այնքան, մինչև որևէ մեկը գա իրենց տանի հարսանիք, խնջույքի կամ նվագելու սիրած աղջկա պատուհանի տակ:

Մեզ հետ կամարներից մեկին մոտեցավ նաև մեքսիկացի մի երիտասարդ իր ընկերուհու հետ: Նա ինչ-որ բան բացականչեց, և մարյաչիսների ձանձրացած ու մռայլ խումբը հանկարծ ոտքի կանգնեց աշխուժացած: Անմիջապես շարք կանգնեցին նրանք, տասը, տասնհինգ հոգի՝ ջութակահարներ, թավջութակահարներ, կիթառահարներ, փողահարներ: Նրանք բոլորն էլ սև կոստյումով էին, սպիտակ վերնաշապիկներով, կարմիր թիթեռնիկ ժապավեններով և լայն սոմբրերո գլխարկներով: Իսկ դեմքերը... Մռայլի կամ ձանձրույթի ոչ մի հետք: Այդ դեմքերը ժպտուն էին և խանդավառ, իսկ երբ սկսեցին երգել, թվաց թե ավելի ոգևորված ու գեղեցիկ դեմքեր աշխարհում չես գտնի, ավելի երջանիկ մարդիկ չես գտնի աշխարհում:

«Կեցցե՛ Մեքսիկան»: Հուզմունքից սիրտդ քիչ է մնում կանգ առնի: Փողերը հնչում են բարձր-բարձր, երկար և ապա ուղիղ ընդհատումներով: Հետո փողահարները բերաններից հեռացնում են գործիքները ու երգում: Եվ անմիջապես նրանց են միանում ջութակահարները, թավջութակահարները, կիթառահարները: Մեներգիչներից մեկը բարձր ձայնով աքլորականչ է տալիս, և իսպանական ուղիղ գերում, տանում է քեզ: Խոպոտ ու բարակ ձայներով իրար դեմ կանգնած մարյաչիսները երբեմն-երբեմն մեկ էլ կոացնում են գլուխները, լայն սոմբրերոները թաքցնում-ծածկում են նրանց թուխ դեմքերը, ու միայն երգն է երևում, միայն երգն է հնչում, տարածվում, թևածում հրապարակի կամարների տակ:

Ամեն մի երգն արժե տասը պեսո: Մեքսիկացին վճարել է նրանց հինգ երգի համար, աղջկան նստեցրել է նրանց դիմաց, բարձր աթոռին, նարնջահյութի բաժակը մեկնել է նրան, իսկ ինքը վիսկի է խմում դանդաղ, կուր-կուր, որ նրա մատի մի շարժումով հասցրեց կողքի բարի մատուցողը: Այո, մարյաչիսների հրապարակում ամեն ինչ կա: Կարող ես երգեր պատվիրել ու լսել՝ միաժամանակ փայլեցնելով կոշիկներդ: Տաք կերակրատեսակներ ես ուզում, խնդրեմ, հենց քո աչքի առաջ միս են խորովում, երշիկի նման ինչ-որ բաներ տապակում լայն թավաների մեջ՝ արևելյան արբեցնող հոտերով լցնելով շրջապատը: Դե, իսկ եթե միրգ ես ուզում՝ ուղղակի ձեռքդ մեկնիր, կարող ես վերցնել այն ամենը, ինչ կարող է տալ Մեքսիկայի շռայլ բնությունը՝ խաղողի հսկա կապտաթուր ողկույզներից սկսած մինչև բանան, մանգո, սեխ, ելակ, չիրիմոյա, ակուագատա, անանաս, ինչ ասես:

Վճարիր, կեր-խմիր, վայելիր մարյաչիսների երգը: Իսկ վերջում արդեն, եթե նրանց հյուրասիրես մի-մի թաս գարեջուր կամ մի-մի բաժակ տեղական «թեքիլա» օղի, նրանք քեզ հաղթական նվագի տակ կճանապարհեն մինչև հրապարակի անկյունը՝ օղը թնդացնելով իրենց խենթացնող ձայներով:

Հիմա նրանք «Կուկարաչա» են երգում, ամենահին երգերից մեկը, որ մեզ էլ է վաղուց ծանոթ՝ ձայնասկավառակներից ու կինոնկարներից: Բայց միննույն է, դա բոլորովին ուրիշ բան է: Մարյաչիսներին միայն լսելը քիչ է, նրանց պետք է տեսնել կատարման պահին: Նրանց յուրաքանչյուր շարժումը արվեստ է, նրանց ոգևորության մեջ ստեղծագործական վերացում կա, նրանց երգը ակամա գերում, հմայում է քեզ, և մեկ-երկու երգ լսելուց հետո քեզ կարող ես բռնել այն բանում, որ կրկներգերի ժամանակ դու նրանցից ավելի բարձր ես գտնում ու օրորվում տեղում: Մարյաչիսներին լսելը երջանկություն է:

Եվ ուրեմն ովքե՞ր են նրանք, հին տրուբադուրների այդ հետնորդները:

Մարյաչիսների երգը ամենահին երգերից է: Իսպանացիներն են այն բերել իրենց հետ, երբ նվաճում էին հին ագտեկների երկիրը: Այն ժամանակ գործիքները միայն երկուսն էին՝ կիթառն ու ջութակը: Երբ ֆրանսիացիները՝ Նապոլեոն 3-րդի գլխավորությամբ, նվաճեցին Մեքսիկան, ֆրանսիական բանակի հետ Մեքսիկա մտան փողիարները: Երաժիշտների գործիքային կազմը ավելացավ շեփորով, և նվագախումբն էլ ստացավ իր մարյաչիս անունը, որովհետև սկզբնական շրջանում նրանք միայն հարսանիքներում էին նվագում: Իսկ ֆրանսիացիները հարսանիքն անվանում էին «մարիաշ»: Հետո իհարկե ընդլայնվեց երաժիշտների գործունեության ոլորտը, բայց անունը այդպես էլ մի քիչ տեղայնացվելով դարձավ մարյաչիս: Ահա պատմությունը:

Մարյաչիսները Մեքսիկայի ազգային երաժիշտներն են, ժողովրդի հպարտությունն ու ոգին: Չկա մի խնջույք, մի առիթ, որ չհայտնվեն նրանք այնտեղ իրենց շքեղ հագուստով, իրենց արվեստի վառ ընդգծված ազգային կոլորիտով ու ուրախություն չբերեն իրենց հետ:

Իսկ երբ չեն նվագում, նրանք հոգնած, տխուր ու մտահոգ ժողովուրդ են, որ անժպիտ նստած են շենքի իրենց անունը կրող կամարի տակ, մայրի փոշոտ եզրին ու հաճախորդի են սպասում՝ օրվա հացը վաստակելու համար:

Այդ ժամանակ նրանք մի քիչ նման են շրջիկ կոշիկ մաքրողներին, կիսամուտ փողոցներում ծամոն ու մանկական խաղալիքներ վաճառողներին և բոլոր նրանց, ովքեր Մեքսիկայում քայլում են ճանապարհի եզրով:

ԱԿԱՊՈՒԼԿՈՆ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ՔԱՂԱՔ Է

Չիչենիցեն քիչ ներս է ընկած Ատլանտյան օվկիանոսի Մեքսիկական ծովածոցի ափից, խիտ ջունգլիների մեջ է և նշանավոր է նրանով, որ այնտեղ են գտնվում անհետացած Մայա ցեղի

անմեռ հուշարձանները՝ բուրգերի, հեթանոսական պալատների ու տաճարների մնացորդները, որոնք հիմա մեծագույն ուշադրությամբ ու խնամքով վերականգնվում են: Այս հուշարձանները ճարտարապետական այնպիսի հրաշքներ են, որոնց մասին պետք է խոսել խորին ակնածանքով: Ես ոչ միայն ի վիճակի չեմ, այլև չեմ համարձակվի ներկայացնել այդ հուշարձանները, դա մասնագետների իրավունքն է, ես միայն ուզում եմ պատմել մի փոքրիկ մանրամասն:

Մոտ հիսուն մետր երկարությամբ կիսակործան մի պատի վրա տասներկու փոքրիկ անցքեր կան՝ մեկը մեկից հինգ-վեց մետր հեռավորության վրա: Երբ կանգնում ես առաջին անցքի դիմաց ու ծափ զարկում մի անգամ, լսում ես ոչ թե արձագանքը, այլ պարզապես նույնությամբ ետ ես ստանում քո ծափը՝ երկու-երեք վայրկյան անց: Երկրորդ անցքի դիմաց մեկ անգամ ծափ զարկելուց հետո պարզ լսում ես երկու ծափ և այսպես մինչև վերջ: Տասներկուերորդ անցքից քո մի ծափի փոխարեն ուրիշ տասներկու պարզ, հստակ, զրնգուն ծափեր ես լսում: Իսկ եթե բարձրանաս քարե պատվանդանին ու այնտեղից խոսես սովորական ձայնով, պատի մյուս ծայրի մոտ, բաց օդում կանգնած ընկերդ հիանալի կլսի քեզ: Մենք բոլորս էլ զարմանքից կանգնել մնացել էինք մայաների կառուցած շենքի այդ կիսակործան պատի տակ ու ծափ էինք զարկում: Եվ այդ հուշարձաններն ստեղծող ժողովուրդը միանգամայն արժանի էր մեր ծափահարությանը:

Այդ նույն զգացումն էինք ապրում նաև Մեքսիկան ողողող մյուս օվկիանոսի՝ Խաղաղ օվկիանոսի ափին, աշխարհի լավագույն զվարճավայր-քաղաքներից մեկում՝ Ակապուլկոյում, որին ամերիկացիները գերադասում են նույնիսկ իրենց փառաբանված Մայամիից: Որքան էլ խոսեն անհետացած ժողովուրդների մասին, միևնույն է, հին ճարտարապետների արվեստը ապրում ու զարգանում է: Դա ակնհայտ է ամենուրեք, ակնհայտ է և Ակապուլկոյում:

Թռիչքը տևեց կես ժամ: Մեխիկոյի օդանավակայանում նստելով «Բոինգ» տիպի մի ինքնաթիռ, քիչ անց վայրէջք կատարեցինք Ակապուլկոյում: Ես անմիջապես հիշեցի Աքրան ու Տոկիոն: Ընդամենը կես ժամ առաջ Մեխիկոյում գրեթե մրսում էինք, իսկ այստեղ խոնավությունը խեղդում է, շոգ է, թացություն: Մեր շորերը խոնավացել, ծանրացել, ճնշում են: Միանգամայն ավելորդ են դարձել պիջակներն ու փողկապները, և միանգամայն հասկանալի ձկների ապրումները, երբ ալիքը նրանց ցամաք է շարտում: Քրտինքը այնպես է հոսում մեր վրայից, որ ամաչում ենք իրար նայել: Փրկում են տաքսիները, որոնք զարմանալի գեղեցիկ մի ճանապարհով, արմավենիների անտառի միջով մեզ տանում են դեպի մեր հյուրանոցը, «Պոսադա-դել-սոլ»-ը՝ ուղիղ օվկիանոսի ափին: «Պոսադա-դել-սոլ» թարգմանաբար նշանակում է «Արևոտ իջևան»: Ճիշտ է, մենք ավելի շատ կուզեինք, որ այն «Էսկիմոսի տնակ» կոչվեր կամ «Հյուսիսային բևեռ համար 5», բայց էլի ոչինչ, համարները նետվելով թեթևացած շունչ ենք քաշում: Մեղմ բվվում են կոնդեյնները, այսինքն կոնդիցիոն գովացուցիչ սարքերը: Ուրեմն ամեն ինչ կարգին է:

Ինչևիցե, պատի ետևում, շատ մոտիկից ահավոր վշտոց է լսվում: Մեր կողքին եռում, հնում է Խաղաղ օվկիանոսը: Նեղ, սալահատակ արահետով, բազմագույն չքնաղ ծաղիկների միջով վազելով լողափ ենք գնում, մի քանի քայլ անում՝ խրվելով մանրիկ ավազի մեջ ու կանգ առնում հիացած: Որքան գեղեցիկ է Ակապուլկոն:

Մեր հյուրանոցը քաղաքի ծայրամասում է, պարանոցի վրա և այնտեղից թեքությամբ երևում է գրեթե ողջ Ակապուլկոն՝ կանաչից ելնող իր անհավասար սպիտակ շենքերով, որոնք օվկիանոսից բարձրացող գոլորշու ամպերի մեջ ասես ալիքների ձերմակ փրփուրներ լինեն։ Իսկ օվկիանոսը կապույտ, կապույտ է և միայն ափերի մոտ է գունափոխվում, բացվում։ Խաղաղ օվկիանոս... Տեսնես ո՞վ և ինչի՞ համար է Խաղաղ կոչել այս օվկիանոսը։ Ես այն տեսել եմ Հեռավոր Արևելքում և մեր Նախողկայից երկու և կես օր շարունակ ջերմանալով լողացել եմ մինչև Ճապոնական կղզիները։ Հիմա էլ ահա կանգնած եմ այդ օվկիանոսի մյուս ափին։ Արև է, տաք, օդը թափանցիկ, պայծառ։ Բայց օվկիանոսը այնպես է հուզված ու փրփրած, տասնյակ մետր բարձրությամբ ալիքները այնպիսի շառայունով են փշրվում լողափին, որ չենք համարձակվում տեղներիցս շարժվել։ Բայց մենք հո չե՞նք կարող հենց այդպես էլ ետ դառնալ, առանց օվկիանոսում թրջվելու։ Գնանք տուն «քեռեկնկանն» ի՞նչ պիտի ասենք։ Դրա համար էլ որոշում ենք ինչ կերպ էլ լինի՝ լողալ։

Ավելի ինքնատիպ լող հնարել անհնար է։ Կամաց–կամաց մոտենում ենք ափեզրին, սպասում այնքան, մինչև որ ալիքը ետ է քաշվում՝ աղմուկ աղաղակով ավազը ներս քաշելով, և վազում ենք ավազի ետևից։ Հաջորդ ալիքը ասես երկնքից գալիս, փլվում է մեզ վրա, առնում, տանում թավալցոր շաքտում է հեռու ավազների վրա, հետո քարշ է տալիս ավազի վրայով նախ առաջ, իսկ երբ ետ է դառնում՝ քեզ էլ հետն է քարշ տալիս ետ, դեպի ջուրը, ու դու ձեռքդ մեկ փրփուրներին գցելով, մեկ խրվելով ավազների մեջ, քերծելով արմունկներդ ու ծնկներդ, մի կերպ, մի կերպ փախչում ես ալիքից, փռվում մի համեմատաբար անվտանգ տեղ ու ցավից ծիծաղելով նայում, մխիթարվում, տեսնելով ընկերներիդ գլուխկոնծիներն ու արյունոտված ծնկները։ Հետո ցույց տալու համար, թե իբր այ այսքան էլ չվախեցանք, նորից վազում ենք ալիքի ետևից և նորից ցամաք շաքտվում՝ ավելացնելով մեր անհանգիստ, դժբախտ մարմինների կապտուկներն ու քերծվածքները։

Ահա քեզ Խաղաղ օվկիանոս, ահա և իմ պատկերացմամբ լողը օվկիանոսում, որովհետև երբ տարիներ առաջ Գանայում էի և «լողում» էի Ատլանտյան օվկիանոսում, ճիշտ այդ նույն հսկա ալիքները մեզ նույն անխղճությամբ ետ ու առաջ էին քարշ տալիս ավազի վրայով։ Ոչ մի տարբերություն չկար։

– Տղերք, պարաշյուտով մարդ է իջնում երկնքից,– հանկարծ բացականչեց մեկը։

Մենք վերև նայեցինք։ Իսկապես, հրաշքի պես, անամպ ու անինքնաթիռ երկնքից ներքև էր իջնում, ավելի ճիշտ կողքի վրա սահում էր գեղեցիկ ու տարօրինակ մի պարաշյուտ։ Պարաշյուտից ուղղաձիգ կախված ինչ–որ մեկը հանդարտ օրորվում էր օդի մեջ։ Գաղտնիքը պարզվեց անմիջապես։ Պարաշյուտից ինչ–որ պարան էր իջնում, ձգվում, ձգվում դեպի օվկիանոսը և միանում փոքրիկ, շարժիչավոր մի նավակի, որը կատաղորեն սլանում էր ալիքների վրայով՝ երկնքով տանելով պարաշյուտը։

– Օ՛հ,– մեր հայացքների ուղղությամբ վեր նայելով բացատրեց ուղեկցորդը, – դա հարուստների ցերեկային զվարճություններից մեկն է։ Սարսափելի է, չէ՞։ Այ, նրանք էլ ամեն մի թռիչքի համար ութ դոլար են վճարում, որ սարսափեն։

Սարսափելի էր, իհարկե, բայց և շատ էր գեղեցիկ, գեղեցիկ, ինչպես գրեթե ամեն ինչը հարուստների այս քաղաքում: Ամեն–ամեն ինչ հարուստների համար է, միայն թե նրանք վայելեն, զվարճանան, ծիծաղեն, առատաձեռն դառնան: Նրանցն են փոքրիկ, գողտրիկ զբոսանավերը, շքեղ հյուրանոցներն ու վճարովի ավտոպարկերը, եթերային ռեստորաններն ու կիսամութ խաղատները, ցլամարտի հրապարակներն ու գոլֆի մարզադաշտերը, բազմատեսակ սարսափագողու ատրակցիոններն ու գիշերային ակումբները՝ զգայացունց ստրիպտիզներով, որոնք սովորաբար ավարտվում են հասարակաց տներում: Այո, այո, որքան էլ տարօրինակ թվա, Մեքսիկան նաև աշխարհի այն հազվագյուտ երկրներից մեկն է, որտեղ ցուցանակների ու կարմիր լապտերների տակ խաղաղ գործում են հասարակաց տները:

Պետությունը չի խրախուսում նման հաստատությունների գործունեությունը,– քիչ ամաչելով ասում է մեր ուղեկցորդը,– բայց և չի էլ արգելում: Ի՞նչ արած, դեմոկրատիա,– ավելացնում է նա:

Խե՛ղճ դեմոկրատիա: Ինչի համար ասես չեն օգտագործել քեզ: Բայց մեր բարի ուղեկցորդը չի ասում մեզ, թե դա՞ էլ դեմոկրատիայի արդյունք է, որ այնպիսի մի դրախտավայրում, ինչպիսին Ակապուլկոն է, բացի տեղական փոքրիկ բնակչությունից, որը բացառապես սպասարկումով է զբաղված, մատների վրա կարելի է հաշվել մեքսիկացիներին: Այո, այստեղ տերն ու տնօրենը դարձյալ հարուստ ամերիկացիներն են ու կանադացիները:

– Այստեղ գալիս են վաթսուն տարեկան ամերիկացիները, որպեսզի ամուսնանան տասնվեց տարեկան մեքսիկոնիկների հետ,– տխուր ժպիտով ասում է ուղեկցորդը:

Ամերիկացիներին ասում են Մեքսիկայում: Թեև շատ–շատ տարիներ են անցել, բայց ժողովուրդը չի կարողանում մոռանալ Տեխաս Մեքսիկական նահանգի զավթումը ամերիկացիների կողմից: Կարոտի ցավը անցնում է սերնդե–սերունդ և մարելու փոխարեն գնալով ավելի է բորբոքվում: Հենց որ ամերիկացու տեսնեն, մեքսիկացի երեխաներն իսկույն արհամարհանքով նետում են նրանց երեսին՝ «գրինգո»: Դա ամերիկացիներին վերաբերող ամենավիրավորական արտահայտությունն է, որը նրանց հալածում է ամենուրեք: Մեկ–երկու անգամ էլ կարծելով, թե ամերիկացիներ ենք, երեխաները մեզ էլ կնքեցին «գրինգո» պիտակով, բայց մենք տեղն ու տեղը բացատրեցինք թյուրիմացությունը և իսկույն բարեկամացանք նրանց հետ:

Եվ այնուամենայնիվ Ակապուլկոյում տերն ու տնօրենը փաստորեն ամերիկացիներն են: Փողն ամենուրեք ճանապարհ է հարթում: Ցերեկը նրանց քիչ կհանդիպեք, շոգ է, ցերեկը նրանք քնում են հյուրանոցի գով համարներում և դուրս են գալիս գիշերները: Նրանք հոյակապ են զգում իրենց այստեղ:

Եվ ինչո՞ւ չէ: Ընդամենը 77 հազար բնակչություն ունեցող փոքրիկ Ակապուլկոն ունի 61 առաջնակարգ հյուրանոցներ, 21 առաջնակարգ մոտելներ, 27 գիշերային ակումբներ և առանձին ռեստորաններ (չհաշված հյուրանոցներին կից գործողները), տասնյակ կինոթատրոններ ու մեղմ ասած՝ վարիետներ:

Յերեկն իսկապես շատ շոգ էր, քայլել չէր լինում: Մի քանի մետր անցնելուց հետո բռնում էինք գլուխներս ու նետվում առաջին իսկ խանութը՝ զովանալու կոնդիցիոն սարքերով: Խանութները պայթում էին ապրանքների առատությունից: Ամեն ինչ նախատեսված է զբոսաշրջիկների համար: Խոշոր տրեստներից մինչև տեղական արհեստավորները զբոսաշրջիկների համար են աշխատում: Զարդեր, զարդեր, զարդեր, հագուստներ, գլխարկներ և ամեն ինչի վրա Ակապուլկոյի կնիքը: Շուկաներում ու տաղավարներում մրգերի բուրգեր են և մեծ ապակյա չաներ՝ լի ձմերուկի, սեխի, արմավի, անանասի, պապայայի, նարնջի և այլ մրգերի հյութերով, որոնց մեջ լողում են սառույցի խոշոր կտորները:

Ի դեպ՝ շուկայում տեսա նաև մի զարմանալի զարդ, որի մասին կարդացել էի, բայց երբեք չէի տեսել: Դա կենդանի բզեզ էր՝ խոշոր ու սև, որի վրա զրահի նման պատյան էին հագցրել: Զրահը ոսկուց է կամ արծաթից, զարդարված փոքրիկ փայլուն քարերով: Պատյանից ձգվում է ոսկե փոքրիկ մի շղթա և ավարտվում քորոցով: Կինը բզեզին քորոցով ամրացնում է կրծքին և բաց թողնում: Չանչերը խրած հագուստի մեջ, բզեզը դանդաղ շարժվում է շղթայի շառավիղով՝ փայլեցնելով թանկագին քարերը: Զարդը կոչվում է մակեշ: Բզեզն ապրում է մոտ մեկ տարի, հարկավոր է միայն գիշերները նրան դնել իր տուփի մեջ, որը լցված է փտած ծառի փոշիով: Սարսեղուցիչ բան էր այդ մակեշ կոչվածը, բայց... կամ երևի հենց այդ պատճառով՝ կանայք խենթանում էին դրա համար:

Իսկ երեկոյան գնացինք կինո:

Ժամանակ շատ ունեինք, և որովհետև կարելի էր նաև ծխել դահլիճում, ռեկլամների արանքում դիտեցինք երեք կինոնկար: Երկուսի թեման հասարակաց տների կյանքն էր, իսկ երրորդը կրակոցներով ու պայթյուններով լեցուն ահավոր ու հիմար մի դետեկտիվ էր: Եվ ի՞նչ աստղեր կային այդ էժանագին կինոնկարներում. էլ Էլիզաբեթ Թեյլոր, էլ Հարրի Մորգան, էլ... բայց կինո չկար, կային միայն սեքսուալիզմ, պաթոլոգիական երևույթներ, պոռնոգրաֆիա: Խելագարվե՞լ են, թե ինչ, ոչինչ չես հասկանում: Ամեն տեղ սեքս, սեքս, գրախանութներում կապոցներով թափված են Ֆրեյդի ու նրա տասնյակ հետնորդների գործերը՝ նվիրված սեքսուալիզմին, պոռնոգրաֆիկ նկարներով ու իլյուստրացիաներով լի: Իսկ ցուցափեղկերի տակ դանդաղ ճեմում են սպասող կանայք և ծամոն վաճառող երեխաները:

Ակապուլկո: Ակապուլկո... Սպասիր, բայց չե՞ որ կարծես թե Ակապուլկո էր կոչվում այն քաղաքը, որտեղ ապրում են նշանավոր կլավադիստները, այսինքն՝ ցատկորդները: Մեկ տարի առաջ Կարլովի Վարիում մեզ մի կինոնկար ցույց տվեցին: Կոչվում էր «Աշխարհը գիշերը»: Նկարահանել էին մի քանի երկրների օպերատորներ: Զարմանալի նկար էր: Աշխարհի յուրաքանչյուր խոշոր երկրից նկարահանված էր նրա ամենաուշագրավ, ամենահետաքրքիր, ամենաբնորոշ երևույթը: Միայն մեկը: Անգլիան, օրինակ, ներկայացված էր բիթլներով: Ամերիկան՝ ստրիպտիզով: Ֆրանսիան այն հայր ու որդի ակրոբատներով, որոնք համարվում են անողնաշար մարդիկ և որոնց կմախքները ֆրանսիական ակադեմիան բավականին խոշոր գումարով այսօր արդեն գնել է նրանցից:

Իսկ Մեխիկոն ներկայացված էր ոչ ցլամարտով, ոչ մարյաչիսներով, Մեքսիկան ներկայացնում էին Ակապուլկոյի ցատկորդները: Դա մի փառահեղ ու սարսափելի պատկեր էր: Եվ ինչ, ուրեմն մեզ բերել հասցրել են աշխարհի ծայրը՝ Ակապուլկո ու մտադիր չե՞ն ցույց

տալու մի քանի քայլի վրա գտնվող Լա Քեբրադան: Չէ... Հաջորդ երեկո մենք տաքսի ենք նստում և անփութորեն նետում:

– Էլ միրադոր:

Տաքսին էժան է Մեքսիկայում և մտահոգվելու հարկ չկա: Երկիրը շատ է հարուստ նավթահանքերով:

Ավտոմեքենան սլանում է գիշերային լույսերով ողողված ափամերձ փողոցով, աջ է թեքվում, այս անգամ բարձրանում, բարձրանում վեր ու արգելակվում սալահատակ փոքրիկ մի հրապարակում: Մնացած ճանապարհը պետք է ոտքով քայլել: Ահա և «Էլ միրադոր» ռեստորանի շենքը: «Էլ միրադոր» նշանակում է պատշգամբ, բայց ինչ էլ նշանակի, մենք գործ չունենք նրա հետ, շատ թանկ հաճույք է այդ ռեստորանի դռնից ներս մտնելը: Մուտքին չհասած թեքվում ենք ձախ, իջնում սալահատակ արահետով, ճանապարհին կանգնած մարդկանց վճարում հնգական պետ, և սովորական մահկանացուների հոծ բազմության հետ շարունակում իջնել ոլորապտույտ արահետով դեպի մի բավականին լայն, պարսպապատ բնական հրապարակ: Ներքևում մոնչում է օվկիանոսը: Այստեղից արդեն հրաշալի երևում է և թռիչքային ուստնակը, և խորունկ կիրճը, և վերևում թառած «Էլ միրադոր» ռեստորանը: Հիմա արդեն հասկանալի է դառնում, թե ինչու է թանկ ռեստորանի մուտքի վճարը: Ներկայացումն ամենից լավ երևում է այնտեղից: Վճարում ես, ներս ես մտնում, սեղան ես պատվիրում, նստում ուտում–խմում ես և միաժամանակ դիտում, թե ինչպես է մարդը 37,5 մետր բարձրությունից գլխիվայր նետվում նեղ կիրճի մեջ: Ի՞նչ վատ հաճույք է: Վայրը կոչվում է «Լա քեբրադա» այսինքն՝ զառիթափ: Ռեստորանն էլ հենց փոված է զառիթափի լանջով: Վերևում երկու օթյակ կա՝ ամենահարուստ հյուրերի համար, հետո ըստ գրպանի հետևում են պարտերները՝ հարկ առ հարկ և նվազախմբի օթյակը: Ոչ մի տեղ լուսավորված չէ, կիսախավար պարտերներում վառվում են միայն փոքրիկ կարմիր լապտերներ: Փոխարենը կուրացուցիչ լույսով ողողված է կիրճը:

Դա մի զարմանալի վայր է: Սրածայր ժայռերը կողքերից շեշտակի խրվել են օվկիանոսի մեջ: Մեջտեղում շատ առաջ է եկել մի ահռելի ժայռ՝ լայն տափարակով, որտեղ կանգնած ենք մենք: Ուշ երեկո է, օվկիանոսը մուգ սև է, սև են նաև առափնյա ժայռերը, և այդ համատարած սևության մեջ իր ողջ ահավորությամբ լուսավորված է կիրճը վերնից ներքև: Ներքևում ճողփյուն է լսվում. ալիքները խփվում են ժայռին ու ելնում մագլցում են մինչև մեր տափարակը, սպիտակ փոշու մեջ կորցնելով ամեն ինչ:

Ժամը տասն է: Տասն անգամ խփում են անտեսանելի ժամացույցի զարկերը: Նվազախումբը հանդիսավոր ու բավականին թախծոտ մի նվագ է սկսում, և բոլորի հայացքներն ուղղվում են դեպի կիրճի հատակը:

Ասես ալիքներից ծնվելով, ասես հառնելով փրփուրներից, անդունդի խորքից հայտնվում է կիսամերկ մի պատանի և սկսում է մագլցել պարզապես հարթ, ուղղահայաց ժայռի վրայով՝ ոտքերը զգուշությամբ հենելով ճեղքերին: Իսկ ներքևում, նրանից ցած խութեր են, սրածայր ելուստներ, ահավոր քերծեր: Իսկ ավելի ներքևում, նեղ կիրճի մեջ փրփրում է օվկիանոսը: Ձեռքերով ու ոտքերով ելուստներից կառչած, ասես ձուլված ժայռին, տղան դանդաղ

բարձրանում է մինչև կարմիր ներկված երկաթե փոքրիկ հարթակը ու անշարժանում է եզրին: Հեռվից անգամ երևում է, թե ինչպես է արագ–արագ բարձրանում ու իջնում նրա մերկ ու թուխ կուրծքը, պարանոցից շղթայիկով կապված փոքրիկ խաչի հետ: Մի խաչ էլ հարթակից քիչ վերև կա: Մոմեր են վառվում և լուսավորում այդ խաչը, որը դրված է կամարաձև քարե մի հուշարձանի վրա: Տղան թեթև քայլերով մոտենում է հուշարձանին, կանգնում, համբուրում է մեծ խաչը: Դա հենց այնպես, սիմվոլիկ հուշարձան չէ, այնտեղ թաղված են նրա գործընկերները՝ կլավադիստները, ո՞վ գիտե, գուցե և հարազատները, որոնք սակրավորի նման կյանքում մի անգամ պատահաբար սխալվել են: Շատ հավանական է, որ հարազատները, որովհետև Ակապուլկոյի ցատկորդը թանկ մասնագիտություն է, և հայրը գերադասում է փոխանցել իր որդուն, քան ուրիշներին: Եթե չգոհվեցիր հիանալի ապրում ես:

Ի դեպ, գոհվածների թվում է նաև «Տարզան» կինոնկարի հերոսի փոխնակը, մի նշանավոր մարզիկ, նա որ կինոնկարում մեծ բարձրություններից ցատկում էր ծովը: 1966 թվականին նա մի տիկնոջ հետ գալիս է այստեղ, «Էլ միրադորի» օթյակում վիսկի է խմում ու տեսնում, թե ահավոր բարձրությունից ինչպես է նետվում կլավադիստը:

– Իսկ այստեղ ի՞նչ մի բարդ բան կա,– արհամարհանքով ասում է նա,– հարյուր դոլարի համար ո՞վ անդունդը չի նետվի: Ես կհամաձայնվեի նույնիսկ հիստունով:

Եվ որովհետև ամեն տեղ էլ գտնվում են հիմար գրագի սիրահար մարդիկ, դրա համար էլ նստածներից մեկ ուրիշը, մի հարուստ ամերիկացի, հինգ հարյուր դոլարի բանկոտոմս է դնում «Տարզանի» առջև:

– Թո՛իր,– ասում է նա:

Տեղն ու տեղը մերկանալով, չլսելով տիկնոջ ու ընկերների հորդորները, նշանավոր մարզիկը բարձրանում է հարթակն ու գլխիվայր նետվում ցած: Բայց նա ջուրը չի ընկնում, նրա մարմինը փշրվում է խութերի վրա: Ախր հարցը միայն թռիչքը չէ: Հարցն այն է, որ կիրճի «ձագարը» շատ է նեղ, և տեղական կլավադիստները ոչ թե պարզապես նետվում են, այլ նետվելիս օդի մեջ փոփոխում են մարմնի դիրքը, որպեսզի ջրի մեջ ընկնեն:

... Հիմա ժողովուրդը շունչը պահած տղային է նայում, լրացուցիչ լուսարձակները վառ լուսավորում են նրան, և պարզ երևում է տղայի գունատ դեմքը: Նա էլ հասարակությանն է նայում, հետո թեքվում, դիտում է անդունդի խորքը: Մի ակընթարթ նս, և տղան արագ խաչակնքելով գլխիվայր նետվում է ցած:

Մի պահ մեռելային լռություն է տիրում: Իսկ երբ փրփուրների մեջ հանկարծ հայտնվում է կլավադիստի գլուխը, ժողովուրդը ճշում ու ծափ է տալիս զարմանքից, որ մարդը կարողացավ մահից ազատվել: Եվ անկասկած այդ մարդն էլ ամեն անգամ զարմանք է ապրում, որ կարողանում է ազատվել մահից և հոգալ իր ապրուստը: Չէ՞ որ նա ամեն օր աշխատավարձ է ստանում՝ բոլորի աչքի առաջ մենամարտելով մահվան հետ:

Կրկեսում մենք ճշում ենք սարսափից, տեսնելով, թե ինչպես է մարդը մի քանի մետր բարձրության վրա քայլում ճոպանի վրայով, երբ այդ ճոպանի տակ ապահով ցանց կա, երբ

արտիստի մեջքին կապած պարանը զգուշությամբ բռնել են կրկեսի երկու ածղահա սպասավորները:

Իսկ այստեղ տղան ցատկում է գլխիվայր 37,5 մետրից, որը հավասար է այսօրվա մեր տասնհինգ հարկանի շենքի բարձրությանը:

Բայց նրան լավ են վճարում: Նրան ծափահարում են օթյակներից, և նա էլ ցատկում է: Ասում են (այսինքն կինոնկարում այդպես էր), թե երբեմն երբ շատ–շատ են վճարում կլավադիստը համաձայնվում է ցած նետվել մթության մեջ, ձեռքերին բռնած ունենալով երկու վառված ջահեր:

Դա հո ստույգ մահ է:

Այսինքն, միայն մահը չէ, որ անընդհատ դարանում է ցատկորդներին: Մի քանի ամիս աշխատելուց հետո կլավադիստները մեծ մասամբ խլանում են: Ահավոր բարձրությունից թռչելու ժամանակ պատռվում են նրանց ականջների թաղանթները:

Ահա, տղային վերջապես հաջողվեց փախչել իր վրա նետվող ալիքից, որը նրա ոտքերի մոտ վիրթիսարի ուժով փշրվեց ժայռին, և բարձրանալ ուղղաձիգ քարե պատով: Նա բարձրանում էր, և նրան ծափահարում էին, նա բարձրանում էր, և «Էլ միրադորի» օթյակից նվագախումբը ցնծության աղաղակներ էր արձակում: Հետո տղան մի պահ կանգ առավ՝ շունչ քաշելու համար, ու նայեց ժողովրդին մի տեսակ մոլոր, չտեսնող աչքերով: Ազնիվ խոսք, դրանք այն մատաղորի աչքերն էին, որ ուժասպառ օրորվելով սուլող ու բարձիկներ նետող ժողովրդին էր նայում, և միաժամանակ աչքերն էին այն ցուլի, որը նետերը թիկունքին, արյունաքամվելով կանգնած էր արենայի կենտրոնում:

Դրանք նույն աչքերն էին և այդ աչքերը կարծես հարցնում էին. «Հետո՞: Հետո՞: Ի՞նչ եք ուզում: Ի՞նչ եք ուզում ինձանից, այ մարդիկ»:

Իսկ եթե վերանանք մի քիչ, եթե կարողանանք այդ ամենին նայել «Էլ միրադոր» ռեստորանի օթյակից, ապա դա զարմանալի ահավոր և ահավորության հետ զարմանալի գեղեցիկ մի ներկայացում էր, հոյակապ ցուցադրում, որին մեծապես նպաստում էր նաև Լա Քերրադայի դիրքը, ծովածոցի՝ երեք կողմից շրջապատված լինելը ժայռերով ու խութերով, ափից ոչ հեռու գտնվող փոքրիկ, ժռուտ կղզյակները, որոնց զարնվելով ալիքները փրփրում են, ճերմակում ու զարմանալի փայլում գիշերվա մթության մեջ, անդունդի վառ լույսերը և կարմիր լապտերները ռեստորանի կիսամուկ օթյակներում:

Ակապուլկո...

Այո, ամեն–ամեն ինչ կա կարծես միայն ձևականորեն մեքսիկական ժողովրդին պատկանող աշխարհի հարուստների այդ փոքրիկ քաղաքում:

ՄԵԽԻԿՈՅԻ ՀԱՅԵՐԸ

Նոր էինք վերադարձել երկրի արևելք կատարած ճամփորդությունից: Փաստորեն մի քանի ժամով մտել էինք Մեխիկո, որպեսզի անմիջապես էլ Ակապուլկո թոչենք ու կանգ էինք առել «Վիրեյես» հյուրանոցում: Եվ օ՛ր, ուրախություն, մեկ էլ տեսնեմ սրահի մի անկյունում հեռուստացույց է դիտում Իգոր Նովիկովը, փոստի բաժանմունքից ծրարներ է գնում ֆիզկուլտուրայի ինստիտուտի դիրեկտոր Լորիս Քալաշյանը, բազմոցին նստած հանգիստ ծխում է Հայաստանի արդյունաբերական շինարարության մինիստրի տեղակալ Ազատ Հակոբյանը:

Ոնց որ տանը լինես:

Բարևեցինք, սկսեցինք զրուցել, մեկ էլ հանկարծ մեզ մոտեցավ միջահասակ, ճաղատ մի հայ ես:

– Բարև ձեզ,– ասաց նա,– դուք ալ հայ եք:

– Հայ եմ,– ասացի ես:

– Դե գնանք:

– Ո՞ւր:

– Ինչպե՞ս թե ուր: Մեր դպրոցը:

– Ուրեմն դուք այստե՞ղ էք ապրում: Այստեղ հայկական դպրոց կա՞:

– Իհարկե, կա,– ասում է մարդը,– գնանք, հիմա Մեխիկոյի բոլոր հայերը հավաքված ձեզ են սպասում: Գնանք:

Ես նրան բացատրում եմ, որ չեմ կարող, որ ես զրոսաշրջիկների այլ խմբի մեջ եմ, որ ծրագիր կա, որ երկու ժամից թոչելու ենք Ակապուլկո:

– Մի թո՛ւք,– ասում է նա,– շատ կպարտավորեցնեք զիս: Վաղը կթոչեք:

Ես տխրում եմ ու կրկին ասում, որ դա հնարավոր չէ: Խոստանում եմ Ակապուլկոյից վերադառնալուց անմիջապես հետո այցելել նրան: Հիմա չի լինի:

Մարդը վշտանում է, հարցնում է, թե որտեղ եմ աշխատում ու ավելի է վշտանում:

– Ինչպե՞ս թե: «Գրական թերթի» աշխատողը ինչպե՞ս կարող է չմասնակցել մեր հայկական դպրոցի հավաքույթին:

Բայց մենք բաժանվում ենք, ինձ կանչում են: Մեր խումբը մեկնում է օդանավակայան:

Ակապուկոյից վերադառնալուց հետո ես փնտրեցի ու գտա հայկական դպրոցի շենքը: Մոդեռն ու գեղեցիկ մի շենքի պատին, պղնձե տախտակի վրա գրված էր. «Հայոց դպրոց: Մարիամ Ագարյան»: Դժբախտաբար դա միայն շենք էր: Կային դասասենյակներ, կային հիանալի նստարաններ և ինքնատիպ գրատախտակներ, կար Հայաստանի քարտեզը և մի քանի գրքեր: Բայց դպրոց չկար: Երեխաներ չկային: Ուսուցիչ չկար:

Դե էլ ի՞նչ դպրոց՝ առանց ուսուցչի ու աշակերտների:

Հին ուսուցիչ է Լևոն Պոտոսյանը: Նրա կենսագրության տակ կարող են ստորագրել սփյուռքահայ հարյուրավոր ու հազարավոր մտավորականներ: 1923 թվականին հասել են Մեքսիկա, նպատակ են ունեցել անցնել ԱՄՆ: Չի հաջողվել: Անծանոթ երկրին էլ, լեզվին էլ, այնուամենայնիվ բույն են դրել տուն են շինել, սկսել են աշխատել: Մոտ 600 հոգի էին, հետո կեսը ցրվեց ԱՄՆ, Կանադա, Արգենտինա: Կեսը մնաց: Հիմա Մեքսիկայում կա 300 հայ, 70 ընտանիք: Եկեղեցի չունեն, դպրոց չունեն, թերթ չունեն: Ունեն խանութներ, հիմնականում՝ կոշիկի: Երկար տարիներ ծայրը ծայրին հասցնելով աշխատել են, հիմա ինչ-որ բանի տեր են դարձել: Հարուստներ էլ կան, միջակ ապրողներ էլ կան:

– Առաջ, երբ օրվա հացի կարոտ էինք,– ասաց տեղացի հայերից մեկը,– միասնական ջանքեր կթափեինք: Հիմա կուշտ ենք և անտարբեր:

Մարիամ Ագարյանի կտակի համաձայն, նրա միջոցներով հայկական դպրոց է կառուցվել: Ագարյանի որդին՝ հարուստ մի հայ, ավտոբուս է հատկացրել, որպեսզի քաղաքի տարբեր ծայրերում բնակվող երեխաները կազմակերպված գան ու գնան դպրոց: Ծեր ուսուցիչ Նշան Միմոնյանը համաձայնվել է անվճար հայերեն սովորեցնել երեխաներին, սովորեցնել նաև հայոց պատմություն: Նա շրջել է տնից տուն, ցուցակագրել երեխաներին, դասարաններ կազմել: Ուրեմն ոչինչ չի խանգարում, շուտով Մեքսիկայում կբացվի հայկական դպրոց:

Բայց մինչև օրս դպրոց չկա:

– Ես թույլ չեմ տա, որ իմ որդին միևնույն նստարանին նստի հնչակի որդու հետ:

– Ի՞նչ, իմ երեխան ռամկավարի՞ երեխայի հետ սովորի:

– Սկզբունքի հարց է:

Եվ վերջ: Սկզբունքի համար... Հայկական դպրոցը չի գործում: Այնտեղ հավաքվում են մեկ-մեկ, խնջույքներ են կազմակերպում, հուշեր են պատմում: 1965 թվականի ապրիլի 24-ին նշեցին եղեռնի օրը: Տեղի հայերից Քերոբ Առաքելյանը եղել էր Հայաստանում, մասնակցել էր Սարդարապատի հուշարձանի բացմանը և ամեն ինչը մանրամասն-մանրամասն նկարել էր ժապավենի վրա: Բերեց ցույց տվեց: Բոլորը լաց եղան: Հուշեր պատմեցին:

Հիմա գնալով հուշեր պատմողները քչանում են: Եթե պատմում էլ են՝ իսպաներեն են պատմում: Ծնողները երեխաներին ըստ սովորության հայկական անուններով են կնքում, բայց հետո կամ իրենք են փոխում այդ անունները, կամ էլ երեխաներն են փոխում: Ամաչում են: Հայկական անունները չեն հնչում Մեքսիկայում:

Լևոն Պոտոսյանն ասաց.

– Ինձ կյանքը, հացի խնդիրը ստիպեց հեռանալ ուսուցչությունից, իմ սիրած գրականությունից: Ինձ համար ամենաաներևակայելի բանը կոշիկ վաճառելն էր: Անիծված 15 թվական:

Նա մի փոքրիկ խանութ ունի Մեխիկոյի Նոյեմբերի 20–ի անվան փողոցի № 37 շենքի տակ: Կոշիկներ ու հողաթափեր է վաճառում: Այսինքն, իսկի չի էլ ուզում վաճառել: Առիթ է փնտրում, որ ցած իջեցնի խանութը փողոցից բաժանող երկաթե վարագույրը ու դուրս գա: Բայց ո՞ր գնա: Ոչ մի տեղ հանգիստ չունի հին ուսուցիչ Լևոն Պոտոսյանը:

– Հայե՞ր,– ասում է նա,– եկ գնանք, հայերի ցույց տամ քեզ: Հեռու չեն, այս ամբողջ փողոցում հայեր են աշխատում:

Նա ձեռքիցս բռնած ինձ տանում է Նոյեմբերի 20–ի անվան փողոցով, հերթով մտնում է կոշիկի մեծ ու փոքր խանութներ ու բացականչում.

– Ահա, պարոնը Երևանից է:

Եվ վաճառասեղանի ետևում գտնվող մարդիկ բարևում են՝ մեկը ուրախ, մեկը զարմացած, մեկն այնպես, ասես նկար է նայում, մեկն իսպաններեն, մեկը հայերեն, մի պատանի էլ ասում է.

– Օ՛, կեյ:

– Օ՛, կեյ,– պատասխանում եմ ես: Մենք էլ, «ամերիկերեն» գիտենք,– Օ, կեյ, Ջոնի:

– Իմ անունը Հովսեփ է,– զարմանում է տղան:

– Ներեցեք, ինձ թվաց թե Ջոնի է,– ասում եմ ես:– Օ, կեյ:

– Օ, կեյ:

Մենք քայլում ենք առաջ, և պարոն Պոտոսյանը չզիտես ինչու ամաչելով մի տեսակ, կարծես ամբողջ աշխարհի մեղքն իր ուսերին, ասում է սկզբում շշուկով, հետո արդեն գոռալով գրեթե:

– Տեսա՞ք հայ տղաներին: Դե, ասա՛ ի՞նչ անենք, ի՞նչ անենք: Լավ նայիր, այդպես որ մնա, սրանից հետո սրա՛նք անգամ չեն լինելու: Սրանց զավակներն արդեն հայ չեն լինելու, հավատա խոսքիս: Տարեք այս մարդկանց այստեղից: Մեղք են: Տարեք: Բռնի տարեք, ով որ չի հասկանում:

Ու ես հանկարծ չզիտես ինչու հարցնում եմ.

– Պարոն Պոտոսյան, ո՞րն է եղել ձեր կյանքի ամենատխուր օրը:

– Է՛, – ձգում է նա, – այնքան տխուր օրեր են եղել: Ուրախ օրերը քիչ են: Բայց ամենատխուրը 1914 թվականի այն օրն էր, երբ առաջին անգամ բաժանվում էի տնից՝ թուրքական բանակ գնալու համար: Հայրս ծեր էր, նրա միակ գորավիզը ես էի: Բայց պետք է գնայի:

– Պարոն Պոտոսյան, ասե՛մ ձեզ, թե որն է իմ կյանքի ամենատխուր օրը:

– Ոչ, – ասում է պարոն Պոտոսյանը, – հասկացա:

Երեկոյան մեկ ուրիշ հայի՝ Մկրտիչ Ժամկոչյանի տանն ենք: Հենց այն լուսահոգի Մարիամ Ազարյանի որդին է, հարուստ մի հայ, որը մեծ խանութ ունի, գորգեր ու կոշիկ է վաճառում, մանկական խաղալիքներ: Շատ աշխույժ, եռանդուն ու անհանգիստ մարդ է: Երևի մասնագիտությունից է գալիս, ամեն ինչ ուզում է ցուցադրել, գովել, հայտարարել գինը, ամեն ինչի վրա հիացած ու զարմացած է:

– Կտեսնե՞ք տունս, – հարցնում է նա, – շատ թանկ նստեց, բայց գնեցինք: Այս սանդուղքն ինչպե՞ս կգտնեք: Վարագույրները մասնավոր պատվիրված են: Խոհանոցի սպասքը Ամերիկայից ուղարկված է: Հատուկ: Կերեք այս ակռատը, շատ պատվական կերակուր է: Կո՛ւշտ եք: Է՛, չեղավ, այսպիսի սեղան ենք պատրաստել: Լավ, գոնե զարեջուր խմեք: Մեքսիկայի ամենագովական գարեջուրն է...

Հետո ցույց է տալիս մի գրամեքենա՝ մեծ տուփի մեջ:

– Զգարմացա՞ք, – ասում է նա, – հայկական տառերով է:

– Ինչո՞ւ պետք է զարմանամ, – ծիծաղում եմ ես, – մեզ մոտ բոլորը հայկական տառերով են: Պարզապես ուրախացա:

– Իրա՞վ, – հարցնում է նա, – իսկ ձեր գործիքնե՞րն էլ այսպես նորն ու լավն են:

– Չէ, – ասում եմ ես, – մաշված ու հին են: Բայց դա ավելի լավ չէ՞, պարոն Մկրտիչ:

Մկրտիչ Ժամկոչյանը հանկարծ տխրում ու լռում է:

– Այո, – ասում է նա, – այս գրամեքենան բոլորովին օգտագործված չէ:

Ուրեմն՝ իրար հասկացանք:

Հանկարծ երևի օրվա ամենակարևոր խնդիրը հիշելով, նա ինձ տանում է պատի մոտ ու ասում չտեսնված հպարտությամբ.

– Կարդացեք:

– Բայց ես իսպաներեն չգիտեմ:

– Այո՞, ափսոս, լավ, հիմա ես կթարգմանեմ: Իհարկե, լավ կլինե՞ր որ մեկ ուրիշը կարդար, բայց ոչինչ:

Ապակե շրջանակի տակ կնքված մի թուղթ կա: Տանտերը արտասանում է հուզմունքից քրտնած. «Մենյոր Մանուել Ժամկոչյան–Ազարյանին: Մեքսիկական կառավարությունը գոհ է ձեր առևտրական գործունեությունից և հայրենիքին մատուցած ծառայություններից: Ցանկանում եմ ձեզ քաջառողջություն և հաջողություններ: Դիաս Օրդաս: Պրեզիդենտ»:

– Մանուելը դո՞ւք եք,– հարցնում եմ ես:

– Այո: Այստեղ Մկրտիչին Մանուել կըսեն: Փառավո՞ր նամակ է:

– Շատ թանկ նամակ է, – ասում եմ ես:

– Այո,– մտածկոտ ասում է նա, երևի ուղղակի հասկանալով, որովհետև զարմանքով է նայում ինձ:

Իսկ ես մտածում եմ սփյուռքահայերի հայրենիքների ու այդ հայրենիքներին նրանց մատուցած մեծ ծառայությունների մասին: Ապշելու ճակատագիր է: Ու մեկ էլ հանկարծ բացվում է դուռը, և ներս են թափվում բազմաթիվ երեխաներ: Գալիս են ճիչ–աղաղակով, համբուրում են պարոն Մկրտիչին և իսպաներեն ու անգլերեն բարի գիշեր են մաղթում: Պարոն Մկրտիչը բացվում է, փայլում է, ծիծաղում է:

– Սատանայի ճուտեր,– բղավում է նա,– պարոնը Հայաստանից է, ողջունեցեք նրան:

Եվ այդ թուխ, սիրուն, թանձր սև աչքերով երեխաները գլուխ են տալիս ու ասում են հայերեն՝ մտածելով ու տառապելով:

– Բարի եկած եք մեր տունը:

Հետո փոթկում են, սաստում են իրար, փախչում են:

– Գիտե՞ք ինչ անուններ ունեն իմ զավակները,– կրկին իր տարերքի մեջ է պարոն Մկրտիչը,– լսեցեք:

Ազնիվ խոսք, իսկապես, ոնց որ երգ լինի, շարական լինի ասես:

– Հովհաննես, Կարապետ, Եղիս, Ազատ, Սրբուհի, Հակոբ, Մարալ, Մանուշակ, Աղավնի, Արաքսի, Պերճուհի, Մկրտիչ:

– Եվ նրանք հայերեն չգիտե՞ն:

– Է՛հ,– ձեռքերը տարածում է պարոն Մկրտիչը:

– Եվ չեն է՞լ իմանալու:

– Ի՞նչ անեմ,– կոտրված ասում է նա,– դպրոցի շենք ունենք, ավտոբուս ունենք...– Հետո գրգռվում է, բարկանում չգիտես ում վրա,– Ի՞նչ անեմ: Ես ուրիշների նման չեմ, ունեցածս չեմ թաքցնում: Գիտե՞ք, շատ հարուստ եմ: Խանութներս չե՞ք տեսել: Վաղը համեցեք: Ամեն ինչ ունեմ, ամենաընտիր ապրանքները իմ խանութների մեջ են: Այո: Տեսա՞ք, Պրեզիդենտ Դիաս Օրդասը մոտ բարեկամս է... Այստեղ շատ լավ կվերաբերվեն մեզի:

Նա խոսում է արագ–արագ, շտապելով, սրտնեղելով, ասես աշխատելով փախչել իր ներկա վիճակից, ինքն իրենից, այդ հարցերից, այդ ցավերից, այդ հայությունից: Ախր ինքն ամեն ինչ ունի: Մի՞թե հնարավոր չէ հանգիստ ու ապահով ապրել, ինչպես ուրիշները, ինչպես բոլորը... Հայ, հայ, հայ: Հետո՞ ինչ... Ի՞նչ անի ինքը:

Ես չեմ ուզում նայել նրան, որովհետև գիտեմ՝ ինքն էլ չի ուզում: Ես նայում եմ անկյունում գեղեցիկ տուփի մեջ դրված, դեռևս յուրոտ հայկական գրամեքենային ու հիշում եմ մեկ ուրիշ հանդիպում երկու օր առաջ, Մեխիկոյից քիչ հեռու գտնվող մի ռանչոյում, որի տերը ֆերմեր Բորիեր Հանսենն էր:

Նա մեզ դիմավորեց զարմանալի գեղեցիկ իր ագարակում, ձիու վրա նստած, կինոնկարի կովբոյի արծաթակար հագուստով ու շքեղ սուրբերոյով: Իր ուրախությունը արտահայտելու համար նա կողքին կախված պատյանից հանեց մաուզերը և յոթ անգամ կրակեց օդում: Եվ նրա կրակոցներին կրակոցով ու աղաղակով արձագանքեցին դիմացի լեռան լանջերին նրա հոտերն ու նախիրները հսկող հեծյալ կովբոյները:

Հետո ֆերմերը մեզ անտառի խորքը տարավ, ցույց տվեց մի խարույկ, իր աշխատողներին հրամայեց ցրել խարույկը, քանդել հողը, և մենք հողի տակ ագավայի լայն տերևներ տեսանք: Ֆերմերը հաղթական ժպտաց, հրամայեց բացել տերևները, և պարզվեց, որ ագավայի տերևների տակ, հողի մեջ երեք ոչխար և երկու տասնյակ հավեր են խորովվում: Այդ բոլորը երկար սեղանի վրա, բազմատեսակ խորտիկների ու խմիչքների կողքին տեղավորելով, ֆերմեր Բորիեր Հանսենը հպարտ հայտարարեց, որ ինչ մենք տեսնում ենք սեղանին, իր ռանչոյից ու ագարակից է: Մենք ծափահարեցինք: Ֆերմերը ստիպեց մեզ պուլկե անունով գարեջուր խմել և թեքիլա օդի, որ ագավա կակտուսից են ստանում: Ինքն էլ խմեց մեզ հետ և խնդրում էր, որ շատ ուտենք: Եվ որովհետև մեր մեջ էր Լեոնիդ Ժաբոտինսկին, նա մի լավ ոչխար դրեց հսկայի առջև, ու վախենալով չհասկացվելուց, մատներով բացատրեց, որ այդ ոչխարն իրենն է, և որ ինքը ունի դրա նման 800 ոչխար: Հետո էլի խմեց ու խմեց դարձյալ ու ասաց, որ ինքը երջանիկ մարդ է, որովհետև ինչպես տեսնում եք, ամեն ինչ ունի: Նա սուլեց, և իսկույն հրապարակ նետվեցին երկու տղա և երկու աղջիկ՝ ազգային տարագով: Նվագախումբը չուշացավ, պարողները, հաստ կրունկներով թխկթխկացնելով գետնին, սկսեցին պտտվել ֆերմերի շուրջը: Շատ գեղեցիկ էր: Ֆերմերը լայն ժպտում էր, ծափ էր տալիս և ինչ–որ բան էր բացականչում մերթ ընդ մերթ:

– Ի՞նչ է ասում,– հարցրի ես մեր բազմաչարչար թարգմանչուհի Ալլային:

– Ասում է, որ ինքը երջանիկ է Մեքսիկայում,– ասաց Ալլան,– ասում է, որ ինքը աշխատասեր է, հարուստ է և ամեն ինչ ունի: Ասում է, որ սիրում է Մեքսիկան իր հայրենիքի նման:

– Ի՞նչ, մի՞թե նա մեքսիկացի չէ:

– Ոչ,– ասաց Ալլան,– դանիացի է, բայց եկել և այստեղ է ապրում:

Այնքան հաճելի, այնքան լավ էր ռանչոյում, որ չնկատեցինք էլ, թե ինչպես վրա հասավ գիշերը: Անտառը խշշաց, ձորում ուժեղացավ գետի վշշոցը, ծառերից կախված տարուբերվող էլեկտրական լապտերների տակ պարերն ավելի կրակոտ դարձան և երգերն ավելի սրտամոտ:

Ու մեկ էլ ամեն ինչ լռեց: Հայտարարեցին, որ հիմա, մեր պատվին, հյուրասեր տանտերը ցանկանում է երգել մեզ համար իր հորինած երգը:

Մենք ծափահարեցինք, և ֆերմեր Բորիեր Հանսենը առաջ եկավ: Նա հաղթանդամ ու գեղեցիկ մի մարդ էր, շեկ մազերով ու կապույտ աչքերով, իսկ երբ սկսեց երգել, պարզվեց, որ նաև հիանալի թավ ձայն ունի: Բայց երբ սկսեց երգել, զարմանքով նկատեցինք, որ նրա մարմինը փոքրանում, խեղճանում է մի տեսակ, և աչքերն էլ թացությունից փայլում են: Տխուր երգ էր երգում նա:

– Ի՞նչ է ասում,– աղաչեցի ես Ալլա Վերշինինային:

– Սո՛ւս,– շնջաց նա,– սո՛ւս, ի սեր աստծո, հիմա կթարգմանեմ, տեսնո՞ւմ ես՝ զրույց եմ:

Իսկ հարուստ ու երջանիկ ֆերմերը երգում էր.

«Ես հեռու եմ իմ ծննդավայրից, և ծանր թախիժ է իջել իմ սրտին, և երբ հովն է գալիս, թվում է ինձ, թե իմ հայրենիքից է գալիս: Ես լալիս եմ կարոտից ու տանջվում եմ, աստված իմ, արևի երկիր, ինձ պահում է միայն այն, որ գիտեմ, մի օր տեսնելու եմ քեզ...»:

Բորիեր Հանսենը լալիս էր: Արցունքները հանդարտ գլորվում էին նրա այտերի վրայով, թրջելով կովբոյի արծաթակար պիջակի կուրծքը:

Ոչ ոք չծափահարեց: Ձորում գետը ուզում էր դուրս գալ ափերից: Լռությունից ապշած, անտառում աշխուժացան հավքերը:

Բորիեր Հանսենը բարձրացրեց գլուխը և ասաց կամացուկ, աշխատելով ժպտալ, ասես ներողություն խնդրելով.

– Ախր շատ գեղեցիկ է իմ Դանեմարքան... պարոններ, դուք տեսե՞լ եք իմ հայրենիքը...

Հիմա ես աշխատում եմ չնայել մեքսիկացի մեծահարուստ հայ Մկրտիչ Ժամկոչյանին և մոքումս կարեկցանքի խոսքեր եմ փնտրում նրա համար: Ես վախենում եմ, որ նա հիմա լաց կլինի: Իսկ ո՞վ չգիտի, թե որքան ծանր է տղամարդու լացը, այն էլ հողմի բերանն ընկած, աշխարհի փողոցներով անցած, տառապանքով, չարքաշ աշխատանքով, նվաստությամբ, մատուցած ծառայություններով հարստացած, ամեն ինչի տեր դարձած, իրեն երջանիկ հայտարարող մարդու լացը:

Անհայրենիք մարդու լացը:

ՀԱՍԱՐԱԿԱԾԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

(Ուղևորություն դեպի Ավստրալիա, Ֆիջիի կղզիներ, Նոր Զելանդիա)

Մանուկ հասակում կարդացած գրքերը անջնջելի են մնում հիշողությանդ մեջ: Հատկապես երբ գրողը ժյուլ Վեռնն է: Քանի՜ – քանի՜ անքուն գիշերներ ենք անցկացրել նրա զարմանալի հերոսների հետ՝ մեկ օվկիանոսի խորքերն իջնելով, մեկ ութսուն օրում պտտվելով երկրի շուրջը, մեկ սրտի տրոփյունով թռչելով դեպի Լուսին ու մեկ էլ սարսափած հայտնվելով անանցանելի ջունգլիների մեջ:

Անկեղծորեն ասած՝ կյանքումս քիչ նախատինք եմ ստացել: Բայց դրանցից մեկը, այնուամենայնիվ, ժյուլ Վեռնի պատճառով է եղել: Ինձ հանձնարարել էին ժամը երկուսին դպրոցից տուն բերել քրոջս աղջկան: Դեռ երկու ժամ կար, դրա համար էլ հանգիստ առջևս դրեցի գրադարանից բերածս գիրքը՝ «Նավապետ Գրանտի որդիները»: Երևի զրքում շատ երկյուղալի բաներ կային, որովհետև հանկարծ գրքից բարձրացրի գլուխս, սարսափած շուրջս նայեցի և... էլ ավելի սարսափեցի, երբ տեսա, որ դրսում մութ է և ժամացույցի սլաքները կանգնած են ուրիշ վրա:

Ե՞րբ էր անցել ժամանակը:

Իհարկե, պատժվեցի: Բայց ես ի՞նչ անեմ, որ հետաքրքիր էր գիրքը: Չէ՛, դրանից չմարեց սերս գրքի նկատմամբ, այն խիզախ, ազնիվ ու համարձակ մարդկանց նկատմամբ, որոնք արհամարհելով վտանգներն ու որոգայթները, Պագանելի ցրվածության պատճառով, ոտքով կտրում, անցնում էին Ավստրալիան, Նոր Զելանդիան, գերի մնում բնիկներին, պատսպարվում գործող հրաբուխի խառնարանի մոտ...

Ավստրալիա, Նոր Զելանդիա... խորհրդավոր, հեքիաթային անուններ: Երբ ժյուլ Վեռն էի կարդում, երբևէ կանցնե՞ր մտքովս, թե մի օր ես էլ կլինեմ այնտեղ, կանցնեմ այն արահետներով, որով Մերին, Ռոբերտը, Պագանելն ու Գլենարվանն էին քայլում և որ մառրի ցեղի մի կին ինձ կմատուցի ձուկ, որը բռնել էր գետի ձախ ափի սառը ջրի մեջ և եփել նույն գետի աջափնյա եռացող ջրերում:

1971 թվականի սեպտեմբերի տասնութ: Մոսկվայի Շերեմետևոյի միջազգային օդանավակայան:

– Ուշադրություն, ուշադրություն, – հայտարարում է օդանավակայանի հաղորդավարը, – Մոսկվայից Դելի և Սինգապուր մեկնող օդանավը պատրաստվում է թռիչքի: Ուղևորներին խնդրվում է զբաղեցնել իրենց տեղերը:

Մեր ԻԼ–62 ծանրանիստ ինքնաթիռը արդեն թեթևակի դողում է՝ ցատկի պատրաստ նժույգի նման: Բարձրանում ենք սանդուղքով, և հին, ծանոթ, ահալի ու ձգող–տանող մի զգացում կրկին պատում է ինձ:

Զարմանալի բան է: Ես շատ եմ շրջել: Զբոսաշրջիկի իմ «հիվանդությունը» ինձ շատ երկրներ է տարել հասցրել: Բայց միննույն է, ամեն անգամ, երբ բարձրանում եմ օտար երկիր տանող օդանավի սանդուղքով, նույն զգացումն եմ ապրում՝ հաճելի ու ահավոր: Ի՞նչ է սպասում մեզ այս նոր աշխարհում:

Մոսկվայի ժամանակով ցերեկվա ժամը չորսն անց քսանին օդ բարձրացանք: Թռչելու ենք 4800 կիլոմետր մինչև Դելի: Վեց ժամ երեսունհինգ ռոպե: Եղանակը մառախլապատ է ու ցուրտ, ինքնաթիռը օրորվում է, ցնցվում, ասես խանդակների վրայով է անցնում, հետո բարձրանում է վեր, ուղղվում ու խաղաղվում: Տասը հազար մետր: Ճիշտ նշված ժամին վայրէջք ենք կատարում Հնդկաստանի մայրաքաղաքի օդանավակայանում: Լուսարձակների հզոր լույսի տակ կանգնած են աշխարհի գրեթե բոլոր խոշոր երկրների ավիաընկերությունների ինքնաթիռները, վառ գեղեցիկ տարբերանշաններով, արագ, գործնական քայլերով այս ու այն կողմ են գնում ձգված անձնակազմերը: Մոսկվայի ժամանակով ժամը 22–ն է, Դելիի ժամանակով գիշերվա ժամը երկուսը: Մոսկվայում եղանակը +12 էր, այստեղ +27: Բայց հարցը չերմաստիճանի մեջ չէ: Այստեղ օդը այնքան խոնավ է, որ շնչահեղձ ես լինում: Բոլորիս հագուստները թրջվել, ծանրացել ու կախվել են միանգամից: Քայլել չի լինում: Այսինքն քայլելուն խանգարում է մեզ համար տարօրինակ մի հանգամանք ևս: Օդը լիքն է բզզացող, երգող, սուլող ինչ–որ թիթեռներով ու մոծակներով, գետնի վրա վիստում են զանազան՝ գեռուններ, ծանոթ ու անծանոթ միջատներ, որոնց ասես մանրադիտակի տակ ենք նայում՝ այնքան խոշոր են:

– Սրանք հո թունավոր չե՞ն,– հարցնում ենք մեր ուղեկցորդին:

– Կան որ թունավոր են, կան որ թունավոր չեն,– հանգիստ ասում է նա:

Պարզ է, որ այդ պատասխանը մեզ առանձնապես չի հանգստացնում, դրա համար էլ նետվում ենք դեպի զով սպասասարահը, և մեր խմբից միայն մի աղջիկ է, որ չի հետևում մեզ: Նրա մասին դեռ հետո կլսեք: Իսկ այժմ ծանոթացեք միայն՝ Ինեսա Մորիսովա: Նեժին քաղաքի մանկավարժական ինստիտուտի կենսաբանության դասախոս: Նա իրեն կորցրած վագում է մի գեռունից մյուսը, օդի մեջ հրճվանքով բռնում է տզագող–բզզացող սոսկալի թևավորներին, բռնում է այնքան քնքշորեն, ասես հարազատի է հանդիպել, լատիներեն ինչ–որ անուններ է մրմնջում, ու իսկույն դրանք տեղավորում չգիտես որտեղից գտած տուփերի ու արկղերի մեջ:

– Երեխաներս այնքա՛ն կուրախանան,– ասում է նա երջանկությունից փայլող աչքերով:

Երեխաները նրա ուսանողներն են:

Ուրեմն ճամփորդությունը առանց կուզեն Բենեդիկտի հնարավոր չէ: (Հիշում եք, չէ՞, Ժյուլ Վեռնի «Տասնհինգամյա նավապետը»): Եվ Ինեսան իսկական Բենեդիկտ էր մեզ համար ու Պագանել, նրանց նման բնությանը սիրահարված, գեռուններին նվիրված և թևավորներով զերված: Ինչևէ: Մի քանի ժամ անց նորից ինքնաթիռ ենք նստում: Դարձյալ մեր ինքնաթիռն է,

միայն անձնակազմն է փոխվել: Փոխվել է նաև ուղևորների մեծ մասը: Հիմա մեր ուղևորներից շատերը հնդիկներ են՝ գլխի տարբեր գույնի փաթեթոցներով, մերկ մեջքերով հնդկուհիներ և սիրուն, սևուկ բազմաթիվ երեխաներ:

Մոսկվայի ժամանակով երկուսն անց կես է, բայց արդեն լուսանում է: Սկզբում թռչում ենք լրիվ մութի միջով: Հետո կամաց-կամաց սկսեց կաթնոտել շրջապատը, ամպերը դարձան մոխրագույն, ապա ճերմակ, մի կողմ քաշվեցին, և նրանց արանքից, հեռու երկրի վրա հայտնվեց Հնդկական օվկիանոսի մուգ կապույտը: Հետզհետե դեղնել սկսեց հորիզոնը: Ուր որ է արեգակը կծագի: Դե, իհարկե, չէ որ այստեղ տեղական ժամանակով առավոտյան ժամը յոթն է: Թռչում ենք բարձր-բարձր, իսկ երկնքում ամպի ոչ մի ծվեն չկա: Արեգակի շողերի տակ ներքևում արծաթին են տալիս օվկիանոսի ալիքները, փոքրիկ ուլունքաշարի նման երևում են ձկնորսական նավերի սպիտակ քարավանները: Օվկիանոսային խոշոր նավերի ծխնելույզներից ամպի կտորներ են երկինք ելնում: Ինքնաթիռն անաղմուկ սահում է ափի երկայնքով, թերակղզու կտրված կողքով, աջ թևի տակով գալիս անցնում է փոքրիկ, վառ կանաչ մի կղզի, հետո մի կղզի ևս և կղզյակների մի խումբ: Ինքնաթիռն սկսում է իջնել, խրվում է չգիտես որտեղից հայտնված խիտ մշուշի մեջ, և երբ դուրս է բերում երկար թաց թևերը, զարմանքով տեսնում ենք, որ գտնվում ենք Մինգապուր կղզու վրա: Ահա և քաղաք Մինգապուրը՝ լայն-լայն տարածված մուգ կանաչի մեջ, ուղիղ գծված թաղամասերով ու փողոցներով: Մեծ մասամբ փոքրիկ, սիրուն առանձնատներ են՝ կարմիր կղմինդրաձաձկ տանիքներով, արմավենիների հեքիաթային գմբուխտ անտառներ և մեկ էլ հսկա կապույտ երկնաքերներ: Արտակարգ գեղեցիկ է:

Ասենք հեռվից՝ վերևից, ամեն ինչ գեղեցիկ է երևում:

Երբ դուրս էինք գալիս ինքնաթիռից, պարզվեց, որ առատ ու տաք անձրև է գալիս: Երկնքում ոչ մի ամպ, արև է ու սուսկալի շոգ, բայց անձրևն այնպես սրտանց էր թափվում, որ մենք շտապեցինք հագնել անձրևանոցները: Սակայն պարզվեց, որ չի կարելի:

– Կխեղդվեք, պետք չէ,– ժպտալով ասացին մեզ սանդուղքի մոտ կանգնած երկու սիրուն, շեղաչք աղջիկ,– մենք ձեզ հովանոցներով կհասցնենք օդանավակայանի շենքը:

Իսկ այդ շենքում մեզ առաջին անակնկալն էր սպասում: Մուտքի մոտ խոշոր տառերով գրված էր. «Օտարերկրացի, կանգ առ մի վայրկյան ու իմացիր՝ Մինգապուրը մեծ քաղաք է: Յուրաքանչյուր սինգապուրցի ջանում է մաքուր պահել իր քաղաքը: Օգնեք նրան: Այլապես յուրաքանչյուր թղթի կտորի, դեն նետված ծխախոտի յուրաքանչյուր կրճոնի համար կվճարեք տուգանք հարյուր դոլարի չափով»:

Մենք սարսափից չէինք ծխում:

Իսկ քիչ անց, երբ ավտոբուսը մեզ հյուրանոց էր տանում, համոզվեցինք, որ Մինգապուրը ճիշտ այնպես մաքուր ու գեղեցիկ է, ինչպես վերևից էր թվում, և ասացինք սրտանց՝ «Մեկամեթ փագի, Մինգապուր», որ մալայերեն է, այդ հինավուրց քաղաքի բնիկների լեզվով և հայերեն նշանակում է. «Բարի լույս, առյուծի քաղաք»:

ԱՌՅՈՒԾԻ ՔԱՂԱՔԸ

Ժամանակակից մի իսկական Բաբելոն է Սինգապուրը: Այստեղ կարող ես լսել աշխարհի բոլոր լեզուները: Նախ՝ սկսենք տեղական լեզուներից: Պետական լեզուն մալայերենն է: Պաշտոնական կամ կառավարական լեզուն՝ անգլերենը: Ազգային լեզուներն են չինարենը, տամիլերենը, հնդկերենը: Իհարկե չմոռանանք, որ չինացիները և հնդիկները խոսում են տասնյակ բարբառներով, որոնք փաստորեն առանձին լեզուներ են:

Սա բխում է բնակչության կազմից: Սինգապուրում ապրում է ավելի քան երկու միլիոն մարդ, նրանց 76 տոկոսը չինացիներ են, 15 տոկոսը մալայացիներ, յոթ տոկոսը հնդիկներ ու պակիստանցիներ: Մնացած երկու տոկոսի մեջ մտնում են այլ ազգությունների ներկայացուցիչներ:

Ինչպես ասացինք, սա փոքրիկ այդ կղզու դեռ հիմնական բնակիչներն են: Բայց չէ՞ որ Սինգապուրը Սինգապուր է հենց նրանով, որ գտնվում է Եվրոպայից Հարավային ու Արևելյան Ասիա և Ավստրալիա տանող օդային ու ծովային ուղիների խաչմերուկում: Ամեն օր հարյուրավոր նավեր, ինքնաթիռներ ու գնացքներ են մտնում Սինգապուր՝ մոտ տասը տոկոսով ավելացնելով երկրի բնակչությունը: Եվ ամենուրեք, փողոցներում ու հրապարակներում, զբոսաշրջիներում ու ռեստորաններում հնչում են գրեթե այն բոլոր լեզուները, որ գոյություն ունեն երկրագնդի վրա: Բայց, իհարկե, դա առաջին հերթին նավահանգստում է զգացվում:

Մեր փոքրիկ ավտոբուսը Սինգապուրի նշանավոր նավահանգստին է մոտենում: Մենք արագ իջնում ենք ավտոբուսից և տեղ ենք որոնում նավապատնեշի վրա, լուսանկարչական ու կինոապարատները գործի դնելու համար: Ասենք ի՞նչ որոնես, ամենուրեք հրաշալի պատկերներ են՝ ծովի կապույտն ու ասես ձյունոտ ճայերը, փիի կանաչն ու խարիսխ նետած նավերի բազմագույն դրոշները:

Մեծ է Սինգապուրի նավահանգիստը: Ապրանքաշրջանառության ծավալով այն առաջինն է Հարավ-Արևելյան Ասիայում և չորրորդը՝ աշխարհում: Նրա նավավերանորոգման և նավաշինական ձեռնարկություններում ոչ մի բոլե չի դադարում աշխատանքը: Ամեն տարի նրա վեց դղերում վերանորոգվում են ավելի քան մեկ միլիոն տոննա տարողունակության նավեր: Սինգապուրի նավահանգստի մատույցներին միանգամից կարող են մոտենալ ու բեռնաթափվել քսանհինգ օվկիանոսային նավեր: Սա շատ խոշոր թիվ է...

Բայց ինչո՞ւ միայն նավահանգիստը: Սինգապուրը Ասիայում առաջնակարգ տեղերից մեկն է բռնում նաև օդային, երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների խտությամբ և հագեցվածությամբ: Եվ նույնիսկ մի ավելի հետաքրքիր մանրամասն. Սինգապուրն առաջին տեղն է զբաղում Հարավ-Արևելյան Ասիայում բնակչության մեկ շնչին ընկնող ավտոմեքենաների քանակով:

Ուրեմն բնական է, որ անմիջապես հարց է ծագում: Ո՞րն է այդ փոքրիկ երկրի զարգացման խթանը, երկիր, որն ընդամենը 584,3 քառակուսի կիլոմետր տարածություն ունի և, բացի մայր

Մինգապուր կղզուց, փոված է ևս հիսունչորս մանրիկ կղզիների վրա և չունի գրեթե ոչ մի նշանակալից օգտակար հանածո, ոչ մի քիչ թե շատ խոշոր արդյունաբերություն:

Պատճառը Մինգապուրի հրաշալի աշխարհագրական դիրքն է: Այն կարելի է պատկերացնել իբրև հեռու-հեռավոր ճանապարհների մեջտեղում ընկած գեղեցիկ ու հարմարավետ հյուրանոց-իջևանատուն՝ բառիս բուն և փոխաբերական իմաստով: Նախ Մինգապուրն ունի այն բոլոր անհրաժեշտ ձեռնարկություններն ու պահեստները, որտեղ կարելի է տեսակավորել, կահավորել և փաթեթավորել շրջակա երկրներից՝ հատկապես Ինդոնեզիայից, Մալայայից, Յեյլոնից բերված բնական կաուչուկը, նավթը, նավթամթերքները, սուրճը, տաքդեղը, բրինձը, արևադարձային մրգերը՝ մանգոն, նարինջը, անանասը, արմավի յուղը, փայտանյութը և շատ այլ նյութեր և դրանք պատրաստի վիճակում մատուցել Եվրոպային ու Ամերիկային: Փոխարենը միջազգային կապիտալը այստեղ է բերում թեթև ու ծանր արդյունաբերության պատրաստի արտադրանք, մեքենաներ ու ռադիո սարքավորումներ, և Մինգապուրից ցրում հարևան երկրները:

Մինգապուրը խոշոր միջնորդ է, և նրա տնտեսության հիմնական աղբյուրը միջազգային առևտուրն է: Քիչ չեն օգուտները նաև տուրիզմից: Ունենալով գեղատեսիլ բնություն, անփոփոխ տաք եղանակ, այսպես ասած էկզոտիկայի բոլոր նմուշները, բազմահարկ հյուրանոցներ ու բազմազան խոհանոց, Մինգապուրը դեպի իրեն է ձգում հարյուր հազարավոր հյուրերի և զբոսաշրջիկների: Եկեք թեկուզ մի քանի օրով, թեկուզ մեկ օրով: Մինգապուրում մեկ օրում դուք կտեսնեք այնքան բան, որքան ձեր ողջ կյանքում չեք տեսնի: Ահա տուրիստական կազմակերպությունների ռեկլամը: Ըստ որում ամեն ինչ այնպես է կազմակերպված, որ Մինգապուրի միջով եկող-անցնողը ուզած-չուզած գոնե մեկ օր պետք է մնա այնտեղ: Առնվազն մեկ օր: Չվացուցակն է պահանջում, ասում են նրանք:

Մենք, օրինակ, փաստորեն տրանզիտ ուղևորներ ենք: Մեզ հարկավոր է անմիջապես փոխել ինքնաթիռը և թռչել Ավստրալիա: Բայց՝ ոչ: Մեզ ասում են, որ մեր ինքնաթիռը կլինի միայն երկու օրից հետո: Ի՞նչ է մնում անել: Մնում է տեղավորվել հյուրանոցում, օգտվել ռեստորանից, օգտվել սպասարկումից, հաճախել գիշերային զվարճավայրերը, այցելել կինոթատրոն, մտնել խանութները...

Իսկ Մինգապուրի նպատակն էլ հենց այդ է: Եվ քանի որ աշխարհում այսօր ամենաթանկ «ապրանքը» սպասարկումն է, ապա չարժե գլուխ կոտրել այն հարցի վրա, թե ինչու է ծաղկում Մինգապուրը:

Ամեն-ամեն ինչ այստեղ սպասարկմանն է ծառայում, սպասարկման նպատակ ունի և սպասարկման համար է: Սպասարկման համար են նույնիսկ երեխաները:

Այո, չգարմանա, ընթերցող: Թեև 1965 թվականին երկար տառապանքներից հետո սինգապուրցիներին ի վերջո հաջողվեց թոթափել գաղութակալության լուծը և անկախություն ձեռք բերել, բայց երկիրը մնում է բուրժուական և, հազարավոր չլուծված հարցերի հետ, Մինգապուրում լուծված չէ նաև երեխաների պրոբլեմը: Մինգապուրում ուսումը պարտադիր չէ: Դե, եթե պարտադիր չէ, ուրեմն եղած դպրոցները վճարովի են, ուրեմն չքավորների

երեխաները սովորել չեն կարող: Նրանք դեռ մանուկ հասակից պարտավոր են որևէ աշխատանք գտնել, որպեսզի կարողանան պահպանել իրենց գոյությունը, օգնել ծնողներին:

Եվ ահա ամենուրեք աշխատում են նրանք՝ այդ սևուկ շեղաչք փոքրիկները: Նրանք կոշիկ մաքրողներ են և լրագրավաճառներ, բեռնակիրներ են և հանձնակատարներ, հեծանիվ-տաքսիներ են վարում, այսինքն՝ հեծանիվին կից սայլակով մարդկանց, ավելի հաճախ՝ չինացի կանանց են տեղափոխում և վաճառում պաղպաղակ, արևադարձային պտուղներ, սառը մրգահյութեր: Իսկ շատերն էլ կանգնում են հյուրանոցների և ռեստորանների մուտքերի մոտ ու հաճախորդի են սպասում: Ահա շքեղ ավտոմեքենան կանգ է առնում հյուրանոցի առջև, փոքրիկներն իսկույն նետվում են դեպի ավտոմեքենան, իրար հրելով բացում դուռը և գլխահակ սպասում, մինչև որ հարուստ ճանապարհորդը դուրս գա ավտոմեքենայից և, ձեռքը ծուլորեն գրպանը տանելով, մի քանի կոպեկ նետի նրանց:

Իսկ որքան հետաքրքիր, որքան գեղեցիկ, որքան զվարճալի վայրեր կան Սինգապուրում: Սինգապուրում մի այգի կա, որ հենց այդպես էլ կոչվում է՝ այգի-պարտեզ: Մուտքից մտնելուն պես հեքիաթի մեջ ես ընկնում: Ամենուրեք վառ գույնզգույն քանդակներ են, մարդկանց, գազանների, թռչունների գիպսե քանդակախմբեր, տեսարաններ չինական լեգենդներից ու դիցաբանությունից, խորհրդավոր, խոնավ քարանձավներ ու ամրոցներ, հրճվանքի մի՞ իսկական աղբյուր երեխաների համար: Բայց երեխաներ քիչ կան այնտեղ, ավելի շատ՝ զբոսաշրջիկներ են: Սինգապուրցի երեխաները զվարճանալու ժամանակ չունեն: Նրանք աշխատում են:

– Պարոն, կոկոս գնեցեք, պարոն, տեսեք, ծակել եմ, ձողիկն էլ մեջն է, այնքան սառը հյութ է, գնեցեք, պարոն:

Նրա հայրը առևտուր է կազմակերպել հենց փողոցում: Մայրի փոքրիկ բազրիքի վրա շարված են արմավի պտուղները: Քիչ այն կողմ միս են խորովում կամ տապակում սև թավաների մեջ, ինչ-որ քաղցրավենիներ թխում, ձկներ ու ծովային տարօրինակ ինչ-որ կենդանիներ կարմրացնում կրակի վրա: Քայլում ես փողոցներով, և ամենուրեք առևտուր է, ասես կլոր տարի տոնավաճառ է Սինգապուրում: Եվ որքան հեռանում ես քաղաքի կենտրոնից, այնքան քիչ են երևում մաքրության կոչ անող լոգոնգները: Աղքատների թաղամասերն են սկսվում, տնակները փոքրիկ են ու անգույն, հաճախ պահածոների արկղերից սարքված, առուներով զարշահոտություն է հոսում ու լցվում Սինգապուր գետը, նեղ փողոցներում խաչաձև կապված պարաններից կախված մեկ թրջվում, մեկ չորանում է լվացքը, ձկնորսական փոքրիկ նավակները անգործ օրորվում են պղտոր ջրերի վրա...

Տխրում ես ակամա և մտածում, որ իսկապես հեռվից, վերևից բոլորովին այլ է թվում աշխարհը: Ահա նորից ավտոմեքենա ենք նստում, ձախ երթնելությամբ, ասես անընդհատ խախտելով կարգը, սլանում մի ոլորապտույտ ճանապարհով և շուտով հայտնվում Սինգապուրի վերևում, քաղաքի ամենաբարձր կետում: Այստեղից ուրիշ է, մանր, կեղտոտ տնակները չեն երևում, չեն երևում նաև աշխատող մանուկները: Բլուրներից վեհապանծորեն ու հանգիստ իջնում է հսկա քաղաքը, փովում ծովի ափերին, արմավենու պուրակները խենթացնում են իրենց ինքնատիպ կանաչով, ծովը խաղում է կապույտի բոլոր-բոլոր

երանգներով, և հարավում, քիչ հեռու, անձրևի շողի միջից երևում է մի այլ ցամաք՝ հեքիաթային Ինդոնեզիայի կանաչ եզերքը:

Բայց մենք զբոսաշրջիկ ենք, մենք իրավունք չունենք մի վայրում այդքան կանգ առնելու: Ծրագիրը հրամայում է՝ «Շտապիր», և մենք նորից ու նորից շրջում ենք քաղաքում, մտնում չինական թաղամասը՝ ինքնատիպ տներով ու տաճարներով, ականատես լինում չինական հուղարկավորության: Հսկա ավտոմեքենայի վրա դեղին կերպասներից մի մեծ տուն-վրան է սարքված, զարդարված մանուշակագույն ժապավեններով: Վրանի չորս կողմից կախված օրորվում են գունավոր լապտերները, տխուր, լալագին նվագ է ծորում վրանի միջից:

Իսկ մյուս փողոցում, ինչպես վայել է մեծ քաղաքին, հնդկական հարսանիք է: Իրար ետևից դանդաղ ու հանդիսավոր սահում են ավտոմեքենաները՝ կարմիր, կանաչ, սպիտակ ժապավեններով զարդարված: Մի ավտոմեքենայից ռադիոբարձրախոսը ուրախ նվագի միջից հաղորդում է մերթ ընդ մերթ, որ ամուսնական ծեսը կատարվելու է այսինչ տաճարում, իսկ հարսանիքը անպայման այսինչ ռեստորանի սրահում: Սա էլ յուրատեսակ ռեկլամ է:

Քաղաքի կենտրոնում, քաղաքապետարանի շենքի առջև, որտեղ Սինգապուրի հիմնադրի արձանն է կանգնած հսկա թասերից ցայտող շատրվանների և բազմերանգ ծաղիկների մեջ, փռված է մի մեծ զբոսայգի և ձգվում է մինչև ծովափը: Ամենուրեք փարթամ կանաչ է և մարգակաճառ հրապարակներ: Մի տեղ սպիտակ համազգեստով տղամարդիկ հափշտակված կրիկետ են խաղում, մի այլ տեղ աղջիկները ճիչ-աղաղակով այս ու այն կողմ են նետում ֆուտբոլի գնդակը, թենիսի կորտերում մարտնչում են Սինգապուրում մեծ մասսայականություն վայելող այս խաղի սիրահարները: Ծառուղիներում ձեռքի վրա վաճառվում է ամեն ինչ՝ ինչպիսի՝ թութակներ, կակադուներ, փայտփորիկներ, սոխակներ, ինչպիսի՝ բարձրաձայն համերգ: Մայթի մոտ գլուխը հպարտ բարձրացրած նստած է թխամաշկ մի կղզիաբնակ, քթի մեջ մի հսկայական օղ: Նրա առջև արմավենու տերևից հյուսած կլոր զամբյուղ կա: Կղզիաբնակը շրթունքներին է դնում շվին, նվագում է ու բաց է անում զամբյուղի կափարիչը: Ու մեկ էլ շրջապատի սարսափախառն բացականչությունների տակ զամբյուղի միջից հայտնվում, ուղիղ վեր է ձգվում սև, թունավոր օձի գլուխը:

Իսկ գուցե թունավոր չէ՞:

Այդպես ուրիշներն էլ էին մտածում: Կղզիաբնակին շրջապատողներից ոմանք նույնիսկ ծաղրում էին նրան, թե ոչ թունավոր օձի հետ իրենք էլ կարող են խաղալ: Առանց դեմքի որևէ մկան շարժելու, օձի տերը նրանց առաջարկեց խաղալ սողունի հետ: Բայց, իհարկե, ոչ ոք չհամաձայնեց: Այնժամ կղզիաբնակը ծաղրողներից ամենահանդուգնին առաջարկեց օձից մի քանի քայլի վրա դնել ձեռքին բռնած թռչունը: Նա ետ քաշվեց, բայց շրջապատողները աղմուկով ստիպեցին: Կղզիաբնակը նվագեց շվին, օձը բարձրացրեց գլուխը ու հանկարծ սևեռում հայացքով նայեց թռչունին: Թռչունը կուչ եկավ մի տեսակ: Փշաքաղվեց հիպնոսացածի պես, սկսեց մոտենալ օձին: Թռչունի տերը ուզեց մեկնել ձեռքը, բայց կղզիաբնակը գոռաց նրա վրա: Իսկ թռչունը ավելի էր մոտենում հմայված, վերացած, հափշտակված... Օձը վայրկենապես դեպի թռչունը մեկնեց սև, տափակ գլուխը, ասես անցավ կողքով, չդիպավ էլ նրան, և հանկարծ մենք սոսկումով տեսանք, որ թռչունի կարմիր

կատարիկին արյան մի կաթիլ հայտնվեց: Հաջորդ վայրկյանին թևավորն անշունչ ընկած էր գամբյուղի մոտ: Օձը բերանն առավ իր թշվառ գոհին ու նորից կծկվեց գամբյուղի մեջ:

Թռչունի տերը բղավում էր զայրացած ու զարմացած, նրան շրջապատողները ծիծաղում էին բարձրաձայն, հեգնում նրան ու պատյանների մեջ դնում լուսանկարչական ապարատները, որոնցով հիանալի կադրեր էին նկարել: Իսկ անվրդով կղզիաբնակի հրամանով, նրա օգնականները շրջում էին հավաքվածների մեջ և լուսանկարողներից պահանջում մեկական դոլար, որը նրանք թեև դժկամությամբ, բայց ի վերջո վճարում էին:

Շոգ է, սաստիկ շոգ է, թեև գրեթե կես ժամը մեկ հանկարծ առատ անձրև է թափվում և կտրվում այնքան հանկարծակի, որքան սկսվել էր: Ու նորից վառում է արևը: Եվ օդը դառնում է ավելի գաղջ ու խեղդուկ:

– Մեզ մոտ արևն ու անձրևը անընդհատ շուն ու կատու են խաղում, – կատակում է մեր ուղեկցողը, որ չին մեծ բանաստեղծի անունն ունի՝ Լի Թայ Պո:

Իսկապես, շատ զարմանալի եղանակ ունի Սինգապուրը: Ինձ վիճակվել է լինել հասարակածի մոտ, գրեթե նույն գոտու այլ երկրներում: Ամենուրեք նման վայրերում տարին բաժանվում է գոնե երկու շրջանի՝ չորային և անձրևային: Սինգապուրում այդպես չէ: Սինգապուրում շուրջ տարի միայն մեկ եղանակ կա՝ անձրևային: Ամբողջ տարվա ընթացքում, համարյա ամեն օր անձրև է գալիս: Հատկապես նոյեմբեր, դեկտեմբեր և հունվար ամիսներին, երբ օվկիանոսից մուսոններ են փչում այստեղ: Դրա համար էլ Սինգապուրում միշտ խոնավ է ու շոգ:

Դատեցեք ջերմաստիճանից: Տարվա ընթացքում ցերեկվա ջերմաստիճանը 29,4 աստիճան է, իսկ գիշերվանը՝ 23,8: Եվ ուրիշ ոչինչ: Իսկ եթե ուզում եք ավելի պատկերավոր գաղափար կազմել անձրևների մասին, ուրեմն իմացեք հետևյալը: Միջին հաշվով տարեկան 1800–ից մինչև 2500 միլիմետր անձրև է թափվում Սինգապուրում, և օդի խոնավությունը կազմում է 68–71 տոկոս:

Ահա թե ինչու է բուսական աշխարհը փարթամ ու արևադարձային: Հենց քաղաքի մեջ կարող եք ջունգլիների հպարտ բնակչի՝ լիանայի հանդիպել: Ճաշարանի բակում, որտեղ հանգստանում էինք մենք, վիթխարի մի ծառ կար, մեր ամենամեծ կադրիների չափ, տարօրինակ Ջանգլբաշ անունով: Լիանայի երկու ճյուղ մազլցել էին ծառն ի վեր՝ փաթաթվելով, փաթաթվելով հսկայի շուրջը, խրվել բնի մեջ ու խեղդել էին նրան: Ծառը չորացած կանգնել էր իբրև լոկ հենասյուն՝ «գեղատեսիլ» այդ լիանաների համար:

Մենք տեսանք նաև, թե ինչի համար են օգտագործում լիանաները: Հսկա, նորակառույց մի շենքի ճակատին փայտամածներին փոխարինում էին լիանաների հանգույցները: Դժվար թե հնարավոր լիներ ավելի ապահով, դիմացկուն ու ճկուն շինանյութ հորինել:

Այո, զարմանալի շատ բան կա Սինգապուրում: Եվ մենք շտապում ենք հնարավորին չափ շատ բան տեսնել: Ո՞վ գիտե, երբեք մեզ կհաջողվի՞ լինել այստեղ, անցնել անկախության այս կամրջով, որն Անգլիայի գաղութային լծից ազատվելու առթիվ է կառուցվել, տեսնել այս հոյակապ հուշարձանը՝ ի հիշատակ ճապոնացիների ձեռքով զոհված 50 հազար

սինգապուրցիների, լինել սրտաշարժության չափ հաճելի ռուսական «Տրոյկա» ռեստորանում, շրջել ժամանակակից ռճով կառուցվող օլիմպիական ստադիոնում, տեսնել ողջ Արևելքի գույները մի քաղաքի մեջ: Եվ ինչո՞ւ միայն գույները:

Կես ժամ առաջ, երբ ցերեկվա հինգն անց էր երեսուն րոպե, արևն այրում էր այնպես անխնա, ասես որոշել էր մայր չմտնել: Իսկ հիմա, ժամը վեցին այնպիսի մութ է, որ երկու քայլի վրա ոչինչ չես տեսնում: Մութն այստեղ հանկարծակի է իջնում, գրեթե վայրկենապես: Հենց արեգակը մայր մտավ, արդեն գիշեր է: Եվ դա հասկանալի է, չէ՞ որ մենք հասարակածի ուղիղ կողքին ենք: Իսկ էլի մի քանի վայրկյան անց վառվում են քաղաքի լույսերը, հուրհրում են բազմահազար ու բազմագույն գիշերային ռեկլամները, լուսավոր գրերը չինարեն, անգլերեն, մալայերեն և այլ լեզուներով սինգապուրցիներին ու հյուրերին հրավիրում են կինոթատրոն, գիշերային ակումբներն ու խաղատները: Քաղաքի գործնական թաղամասում, որտեղ հիմնարկներն ու բանկերն են, լռում են ոտնաձայները, դատարկվում են փողոցները, աղքատ թաղամասերում հանգչում են լույսերը. չէ՞ որ առավոտ վաղ պետք է աշխատանքի գնալ: Իսկ ռեստորանային Սինգապուրը լողում է լույսերի մեջ, փողոցներում անցնելու տեղ չկա, պատերի տակ նիւրհում են հիպիները, գիշերային ակումբների ու կաբարեների բաց դռներից խոստումնակից ու թախծոտ հրավիրում, հրապուրում է սաքսաֆոնը: Հարուստները զվարճանում են:

– Է՛, Ստեմֆորդ Ռաֆլզի մտքով երբևէ կանցնե՞ր, որ հարյուր հիսուն տարում այսպիսին կդառնա Սինգապուրը,– ասում է Լի Թայ Պոն:

Թումաս Ստեմֆորդ Ռաֆլզը ժամանակակից Սինգապուրի հիմնադիրն է, որը 1819 թվականին Անգլիայի նահանգապետն էր Ճավայում և Սումատրայում: Գնահատելով Սինգապուրի բացառիկ աշխարհագրական դիրքը, Ռաֆլզը պայմանագիր է կնքում սուլթան Ջոխորի հետ՝ կղզում կառուցելու անգլիական առևտրական կետ: Իսկ հինգ տարի անց գրավում է ողջ կղզին և հիմք դնում նոր Սինգապուրին, որը տասը հազար բնակչություն ուներ:

Բայց Սինգապուր անունը հին անուն է, և հին է նաև քաղաքը:

Սինգապուր քաղաքի մասին առաջին տեղեկությունները վերաբերում են դեռևս յոթերորդ հարյուրամյակին, երբ մալայացիները բնակություն են հաստատում այդտեղ և իրենց բնակավայրն անվանում Տումասիկ, այսինքն՝ «Նավահանգիստ»: Նրանք ձուկ էին որսում և զբաղվում առևտրով:

Իսկ ինչո՞ւ էր կղզին կոչվում Սինգապուր:

Նույն մալայական լեգենդներում պատմվում է, որ հռչակավոր Ալեքսանդր Մեծի հետնորդներից մեկի՝ Սանգ Նիլա Ութամանի, նավը փոթորիկի ժամանակ քշվում է այդ կղզին: Ափ իջնելով, Ութամանը տեսնում է զարմանալի գեղեցիկ կենդանու, որի ամբողջ մարմինը վառ կարմիր էր, գլուխը սև և կուրծքը սպիտակ: Եվ ավելի խոշոր էր, քան վայրի այծը:

– Ի՞նչ կենդանի է սա,– վախեցած հարցնում է Ութամանը:

– Սա մեր տեղական առյուծն է,– ասում են նրան,– խելոք, անվնաս կենդանի է:

– Եթե այստեղի կենդանիները այսքան սարսափազդու են և խելոք, ապա այստեղ կարելի է թագավորություն ստեղծել՝ առանց թշնամիներից վախենալու,– ասում է Ութամանը:

Եվ իր ստեղծած թագավորությունը նա անվանում է Սինգապուրա, որը նշանակում է «Առյուծի քաղաք»:

Երկար ու դաժան պատմություն ունի Սինգապուրը: Դարերի ընթացքում քանի-քանի անգամ են ձեռքից ձեռք խլել, ավերել ու հրկիզել, բայց ամեն անգամ կրկին բարձրացել է նա, որպես անհրաժեշտություն՝ մեծ ճանապարհների խաչմերուկում: Նրան տիրել են Սիամն ու Չինաստանը, Ճապան ու Պորտուգալիան, Հոլանդիան ու Անգլիան, բայց Սինգապուրի ժողովուրդը չի ստրկացել երբեք և միշտ էլ պայքարել է իր ազատության ու անկախության համար:

Քանի ամիս է անցել, բայց մինչև հիմա էլ ականջիս հնչում են սինգապուրցի առաջադեմ լրագրողներից մեկի խոսքերը, որ նա ասաց մեր հրաժեշտի ժամանակ.

– Անգլիացիները ամուր էին բռնել մեզ: Բայց մենք պայքարում էինք: Հետո՝ երբ տեսան, որ մեր կամքն անկոտրում է և մենք համառորեն անկախության ենք ձգտում, փոխեցին քաղաքականությունը: Դուք չեք կարող խաղաղ ապրել առանց մեր հսկողության,– ասում էին նրանք,– անհնարին է, որ քաղաքացիական կռիվներ չբռնկվեն ձեր միջև: Մի փոքրիկ երկրում, որտեղ այդքան ազգեր են ապրում, անխուսափելի են կռիվները՝ իշխանության համար:

Բայց նրանք այդտեղ էլ սխալվեցին: Վեց տարի է անցել այն օրից, ինչ Սինգապուրը դարձել է անկախ պետություն և Միավորված ազգերի կազմակերպության լիիրավ անդամներից մեկը, և այդ ողջ ժամանակամիջոցում իրար կողքի հանգիստ ապրում ու աշխատում են մալայացիներն ու հնդիկը, պակիստանցիներն ու չինացիներն և շարունակում են համատեղ պայքարել լավ ու ճշմարիտ կյանքի համար:

ՀԱՐԱՎԻ ՄԵԾ ԵՐԿԻՐԸ

«Դեռ սպասեցեք, անհամբեր մարդ,– գոչեց Պազանելը:– Դուք միայն երկրորդ օրն է, ինչ գտնվում էք այս երկրամասում և արդեն ուզում եք ամբողջը տեսնել: Հավատացեք ինձ, ես սա ասում եմ լրիվ պատասխանատվությամբ, որ այս երկիրն ամենահետաքրքրականն է ամբողջ երկրագնդում»:

Չորս ժամ տևեց թոչքը Սինգապուրից մինչև «երկրագնդի այդ ամենահետաքրքրական երկիր» Ավստրալիայի հյուսիսային քաղաք Դարվինը: Հետո կրկին ինքնաթիռ, որը մեզ երեք ժամ քսան թռչեց Ավստրալիայի արևելյան եզերքը հասցրեց՝ Բրիզբեն: Եվ նորից ինքնաթիռ, և ահա մենք մեկ ժամ տասը թռչեց անց Սիդնեյում ենք: Ես դիտմամբ եմ

հիշատակում ժամերը, գիտեմ, որ դա այնքան էլ հետաքրքիր չէ, բայց միաժամանակ ուզում եմ ընդգծել տեղն ու մասշտաբները այն երկրի, որն աշխարհագրական դասագրքերից մեզ հայտնի է իբրև երկրագնդի հինգերորդ մայր ցամաք՝ Ավստրալիա:

Մենք սովոր ենք ավելի հաճախ դիտել քարտեզի այն հատվածը, որտեղ մենք ենք ապրում: Գլոբուսի վրա ևս, որին մենք միշտ վերնից ենք նայում, ցածում, գրեթե բռնակի մոտ ընկած երկիրը ոչ մեծ կղզի է թվում միայն: Այնինչ ոչ մեծ թվացող այդ կղզին իր տարածությամբ կազմում է Եվրոպայի չորս–հինգերորդ մասը:

Միայն մի փաստ: Առաջինը, որին հաջողվեց լայնքով կտրել–անցնել Ավստրալիան՝ Ադելաիդայից մինչև Հնդկական օվկիանոս, Ջոն Մակ Դուալ Ստյուարտն էր: Նա այդ տարածությունն անցավ ինը ամսում, 1862 թվականին: Միայն լայնքով...

Հիմա իհարկե ուրիշ է: Ժամանակակից առաջնակարգ ինքնաթիռը այդ տարածությունը կկտրի ոչ ուշ, քան չորս ժամում, բայց դա խոսում է տեխնիկայի զարգացման և ոչ թե տարածության փոքրության մասին:

Արդեն տասնհինգ օր է, ինչ մենք գտնվում ենք Ավստրալիայում, եղել ենք Սիդնեյում, Մելբուռնում, Կանբերայում, Ադելաիդայում, Բրիզբենում, թռել ենք այնպիսի արագընթաց ինքնաթիռներով, որոնց մասին տարիներ առաջ երազել միայն կարելի էր, շրջագայել ենք գերարագ ավտոմեքենաներով, շոգենավերով մտել ենք ծովածոցերը, լողացել ենք Հնդկական, Խաղաղ, Հարավային օվկիանոսներում և դարձյալ կարողացել ենք լինել Ավստրալիայի հազիվ մեկ հարյուրերորդական մասում:

Վիթխարի երկիր է հինգերորդ մայրցամաքը:

Ի դեպ, եթե երբևէ այցելեք Ավստրալիա, խուսափեցեք տեղացիների մոտ Ավստրալիան անվանել հինգերորդ մայրցամաք: Նրանք դրանից վիրավորվում են: Եթե Ավստրալիան հայտնաբերված վերջին մայրցամաքն է, այդ դեռևս չի նշանակում, թե նա նոր է: Գուցե ամենահին մայրցամաքն է աշխարհում: Եկեք այբուբենով սկսենք, կատակով ասում են նրանք: Մի՞ թե մենք մեղավոր ենք, որ նավապետ Կուկը ուշ է ծնվել:

Բոլոր ժամանակների և ժողովուրդների ամենահռչակավոր ծովագնաց Ջեյմս Կուկը պաշտոնապես Ավստրալիայի առաջին հայտնագործողն է համարվում: 1770 թվականին «Փորձ» նավով նա Նոր Զելանդիայի արևմտյան լանջից թեքվում է հյուսիս–արևմուտք և երկար տառապանքներից ու արկածներից հետո հասնում մի փոքրիկ կղզու, որի ետևում փոված էր Ավստրալիական մայրցամաքը: Նա իր գտած բոլոր երկրները հայտարարում է անգլիական տերիտորիա և Նոր Հարավային Ուելս անունը տալիս: Իսկ նրա ուղեկիցը, բնագետ Ֆորսթերը, մեծ երկիրն անվանում է Ավստրալիա, որը լատիներեն նշանակում է Հարավային:

Իհարկե, պատմությանը հայտնի է, որ Կուկից շատ ու շատ առաջ, դեռևս 1606 թվականին, Ավստրալիան հայտնագործել է հոլանդացի ծովագնաց Յանսոնը: Ուրիշները մատնացույց են անում դարձյալ հոլանդացի Թեոդոր Գերտոգին: Նրանցից հետո շատերն են այս ու այն կողմից մոտեցել հարավային մայրցամաքին, բայց նրանք կամ գաղափար չեն կազմել իրենց

գտածի վիթխարիության մասին, զբաղվել են սոսկ մասնակի ուսումնասիրություններով, կամ էլ չեն կարողացել իրենց հայտնագործությանը գործնական կիրառություն տալ:

Կուկը դրանով է համարվում առաջինը: Նա է, որ անգլիացիներին կոչ է անում տեղափոխվել այստեղ, տեր դառնալ այս ընդարձակ երկրի անբավ հարստություններին: Եվ այնուամենայնիվ առաջին եկվորները հանցագործներն էին: Անգլիական կառավարությունը Ավստրալիան դարձնում է աքսորավայր և, բանտի փոխարեն, խոշոր հանցագործներին ստիպում է ընտանիքներով բնակվել նոր մայրցամաքում:

1788 թվականին Ավստրալիա հասավ հանցագործներով լեցուն առաջին քարավանը:

Բոտանի ծովածոցի ափին հիմնվեց առաջին գաղութը: Բայց գաղութի պարետ, նավապետ Ֆիլիպը տեղը հարմար չհամարեց և գաղութը տեղափոխեց Ջեքսոն նավահանգիստը: Եվ ամբողջ կառուցեց, որն Անգլիայի այն ժամանակվա ներքին գործերի մինիստրի պատվին անվանեց Սիդնեյ:

Իսկ մի թե Ավստրալիայում բնիկներ չկային:

Իհարկե կային: Եվ հիմա էլ կան նրանց բեկորները: Լատիներեն «բնիկ» բառի թարգմանությամբ նրանց անվանում են աբորիգեններ: Մինչև եվրոպացիների մուտքը հինգերորդ աշխարհամաս, բնիկների թիվը անցնում էր 300 հազարից, հիմա նրանք 30 հազար էլ չկան և տարեցտարի պակասում են:

Ուրեմն միթե մարգարեական էին Ժյուլ Վեռնի Պագանելի խոսքերը, որը դեռևս 1864 թվականին ասում էր. «Հարյուր տարի հետո ավստրալիական մայրցամաքի վրա տեղական ցեղի մի հատիկ ներկայացուցիչ էլ չի մնա»:

Զբոսաշրջիկների մեր խումբը Ավստրալիայում մնաց տասնհինգ օր, և այդ օրերի ընթացքում մենք ոչ մի աբորիգենի չհանդիպեցինք: Խառնածիններ կային, կային նաև շրջակա կղզիների բնակիչներ: Բայց իրենք՝ երկրի տերերը, չկային: Թեև սահմանադրությամբ նրանք համարվում են Ավստրալիայի իրավահավասար քաղաքացիներ:

Նրանք ապրում են անապատներում, փշալարերի ետևում, միսիոներների և բանակի հսկողության տակ և ապրում են այնպես, ինչպես հարյուրամյակներ առաջ էին ապրում և ավելի վատ՝ սնվելով մկներով և մողեսներով, օձերով ու թռչուններով: Գաղութարարները պարզապես ոչնչացնում էին ծովեզերքի բնիկներին, սեփականացնում նրանց ունեցվածքը և նրանց ստիպում քաշվել անապատները, որտեղ նրանք դանդաղ մահացման էին դատապարտված:

Աշխարհում չի կարելի մատնացույց անել ավելի հալածված ու թշվառ մարդկանց, քան աբորիգեններն են: Բանը հասնում է այնտեղ, որ անգլիացի մի շարք իրավաբաններ ձգտում են ապացուցել, թե ավստրալիական բնիկները մարդ չեն, հանգիստ կարելի է նրանց որսալ կամ սպանել: Սիդնեյի թերթերը նույնիսկ առաջարկում էին թունավորել այն լճերն ու ջրամբարները, որոնց կողքին աբորիգեններն են ապրում և մեկընդմիջտ լուծել հարցը:

Եթե չլինեին ավստրալիական արհմիությունները, Պագանելի կանխագուշակումը բառացիորեն իրականացած կլիներ: Գոնե ձևականորեն, ըստ թղթի, աբորիգեններին հիմա մահ չի սպառնում:

Եթե դու գաղութարար ավստրալիացու տանը հյուր ես, անհարմար է համարվում բնիկների մասին խոսելը: Անընդհատ ուզում են շեղել քո ուշադրությունը այդ հարցից: Իսկ եթե այլևս ելք չկա, կնճռոտում են ճակատները:

– Ա՛խ, աբորիգեննե՞րը, ոչ լիարժեք ցեղ են...

– Ա՛, նրանք ինքնուրույն ապրել չեն կարող...

– Նրանք քաղաքներում ապրել չեն ուզում, կարոտում են, փախչում են անապատ...

– Ծույլ, անբան ժողովուրդ են...

– Մի բաժակ խմիչքը նրանց դարձնում է խելագար, ամեն ինչի ընդունակ են...

– Նրանց ուղեղը...

– Իսկ ի՞նչ կասեք Նամաջիրայի մասին, այն ինքնուս հանճարեղ նկարչի մասին, որով համաշխարհային ցուցահանդեսներում հպարտանում էիք նաև դուք...

Լռում են, փոխում են զրույցի թեման, չեն ուզում խոսել:

Միդնեյում «Քրիստոնեական երիտասարդության կենտրոն» անունով մի հիմնարկություն կամ կազմակերպություն գոյություն ունի, որտեղ երիտասարդությունը հավաքվում, սովորում է իր ուզած մասնագիտությունը, երգում է ու պարում, զբաղվում է սպորտի ամենաբազմազան ձևերով: Այնտեղ մենք հանդիպեցինք նաև պապուաների, որոնք ավստրալիական Գվինեայից էին: Նրանցից այնտեղ պատրաստում են կապի, գրասենյակային, հաշվապահական, ոստիկանական աշխատողներ, երաժշտական խմբերի ղեկավարներ...

– Լավ, բայց ինչո՞ւ այստեղ աբորիգենների ևս չեք բերում, սովորեցնում,– հարցրեցինք մենք:

– Աբորիգենները մեզ հավասար մարդիկ են, իրենք կարող են գալ սովորելու,– ասաց մեզ անգլիացի տնօրեն Էրիկ Բառնետը:

Սա առնվազն ծաղր է:

Միդնեյից հազարավոր կիլոմետրեր հեռու, անապատում ապրող մարդիկ ինչպե՞ս կարող են գալ, հասնել այստեղ, երբ դրամ չունեն ճանապարհի համար, և ամենահասարակ բանը՝ հագուստ չունեն: Եվ հետո օրենքն ասում է, թե քաղաք եկող աբորիգենը պետք է տուն գնի իր համար: Խեղճ բնիկը ինչո՞ւ տուն գնի, երբ ռեգերվացիայում ապրում է մոդեսներ ուտելով և նետ աղեղով կենդանիներ ու բումերանգով թռչուններ որսալով:

Ի դեպ, նշանավոր բումերանգի մասին: Աբորիգենների այդ զենքը սովորական թվացող փայտի ծոված կտոր է, որը տեղացիները հիանալի նետում են: Բումերանգը թռչում է, ճանապարհին զարմանալի անկյուններով փոխում է ուղղությունը, հարվածում է որսին և, կրկին վերադառնալով, ընկնում նետողի մոտ:

– Ովքե՞ր են պատրաստում այդ գործիքը,– հարցրինք մենք:

– Աբորիգենները,– ասացին մեզ,– ապշելու զենք է, զարմանալի մտածված...

– Ի՞նչ, բայց չէ՞ որ ըստ ձեզ՝ աբորիգենի ուղեղը...

Եվ նրանք կրկին արագորեն փոխում են զրույցի թեման...

Ավստրալիայում, իհարկե բնությունը չհաշված, դժվար թե գտնես զուտ ավստրալիական որևէ բան: Ամեն ինչ անգլիական է: Սկսած ձախ երթնեկությունից:

Դա առանձնապես ընդգծվում է քաղաքներում: Ավստրալիայի խոշոր քաղաքներից յուրաքանչյուրը պայքարում է ամենաանգլիական քաղաք կոչվելու համար: Փողոցների անունները, եկեղեցիների անունները, այգիների անունները, հյուրանոցների անունները... Ամեն-ամեն ինչ անգլիական է:

Հաճախ կարող ես լսել, ասենք, նման մի արտահայտություն.

– Ճիշտ է, թեև իմ հայրը, պապը և նույնիսկ պապիս պապը այստեղ են ծնվել, բայց իմ տունը Անգլիան է:

Հավանաբար իրենց տնից արտաքսված, հայրենիքին կարոտ մարդկանց արյունը դեռ երկար կեռա նրանց հետնորդների երակներում: Ու թեև համեմատությունը շատ հեռու է, բայց Ավստրալիայում ես առանձնապես խորը հասկացա, թե ինչու են Հայաստանում ստեղծվել Նոր Բուրանիա, Մուսա լեռ, Ջեյթուն ու Մարաշ: Եվ թե ինչու հանկարծ Երևանում ծնված մի ջահել տղա հպարտությամբ իրեն զեյթունցի է անվանում կամ վանեցի:

Ես երկու անգամ եղել եմ Անգլիայում և, հավատացնում եմ, որ ավստրալիական որևէ քաղաքի փողոցներում շրջելիս մեկ էլ թվում էր ինձ, թե Անգլիայում եմ: Հատկապես գիշերը: Երբ վառվում են քաղաքի լույսերը, երբ հարավային մուգ երկնքին են ձուլվում վառ գույներով ծաղկած ծառերի փարթամ սաղարթները: Եվ երբ Սիդնեյի լողափերն ամայանում ու ձուլվում են օվկիանոսի հետ:

Սիդնեյի լողափերը...

Նորվեգացի հռչակավոր գիտնական և ճանապարհորդ Տուր Հեյերդալի ուղեկիցը «Կոն Տիկի» լաստանավում, շվեդ Բենգտ Դանիելսոնը գրում է Սիդնեյի լողափերի մասին.

«...Լողափերը հրաշք են... Աշխարհի ոչ մի այլ խոշոր քաղաք չի կարող պարծենալ այդքան թվով սքանչելի լողափերով... Դրանք այնքան փառահեղ են, որ եթե հրաշքով տեղափոխվեին Եվրոպա, Ռիվյերան անմիջապես կմոռացվեր»:

Բայց այսօրվա աչքերով արտառոցն այն է, որ ավելի քան հարյուր տարի սիդնեյցիները միայն ափսոսանքով ու կարոտով են նայել ծովահայաց քաղաքի սքանչելի, արևոտ լողափերին:

Որովհետև... իրավունք չունեն լողալու:

Եվ այդ արգելքը նույնպես Անգլիայից էր գալիս: Անգլիական օրենքները մարդկանց արգելում էին ծովը մտնել արևածագից մինչև արևամուտ... Որովհետև թրջվելով, լողազգեստը կարող էր ընդգծել մարմինը: Իսկ դա հակաբարոյական երևույթ է:

Այստեղ էլ լողալ թույլատրվում էր միայն գիշերը: Իսկ ո՞վ կհամարձակվեր ծովը մտնել, երբ շնաձկները ցերեկներն անգամ հանգիստ մոտենում էին ափերին:

Եվ ահա պատմական է դառնում 1902 թվականի ամառային այն օրը, երբ նախապես հայտարարություն տալով թերթերին, Վիլլի Գոշեր անունով մի երիտասարդ օրը ցերեկով, լողափին հավաքված հսկայական բազմության աչքի առաջ, լողազգեստով մտնում է ծովը...

Իսկ երբ ափ է ելնում, նրան դիմավորում է բարքերի ոստիկանությունը և ավանդույթին մարտահրավեր նետած երիտասարդին ուղեկցում է... Բանտ: Ինչպես ասում են՝ ժողովրդի համբերության թասը լցվում է: Սկսվում են բողոքի ցույցեր, առաջադեմ դեպուտատները ելույթներ են ունենում պառլամենտում, օպոզիցիոն լրագրերը կառավարությանն սկսում են մեղադրել որոշ քարացած օրենքների գերի մնալու հարցում, և... կամաց-կամաց Սիդնեյի լողափերը մարդաշատ են դառնում:

Մի ամբողջ օր և հաջորդ օրվա կեսը մենք Սիդնեյի լողափերում անցկացրինք: Դրանց գեղեցիկ ասելը մեղք է: Դրանք հեքիաթային են: Բռնդիի լողափի մուտքի մոտ սոցիոլոգիայի պրոֆեսորի մորուքով մի մարդ, որն իբրև հսկիչ ներկայացավ, ամենայն լրջությամբ դիմեց մեզ.

– Շարվեք զույգ-զույգ, մի տղամարդ և մի կին:

– Ինչո՞ւ,– բնականաբար զարմացանք մենք:

– Որովհետև սա սիրահար զույգերի լողափն է:

Մենք իրար նայեցինք: Դժվար էր մեր խմբից թեկուզ մի կարգին սիրային զույգ կազմելը:

Կլոր մորուքով մարդը սրտանց ծիծաղում էր:

– Մենք էլ ենք սիրահարներ,– հասկանալով կատակը, նրա կողքով լողափ նետվեցինք մենք,– մենք էլ ճամփորդելու սիրահարներ ենք:

Բայց ինչպես յուրաքանչյուր կատակի, այս կատակի մեջ ևս ճշմարտություն կար: Բռնդիի լողափը միաժամանակ Սիրահարների լողափ անունն ունի: Ըստ ավանդության, սիրահարներն իրենց առաջին համատեղ լուսանկարը անպայման Բռնդիի լողափի ֆոնի վրա են պատվիրում: Եվ ճիշտ են անում:

Օվկիանոսի հսկա ալիքները շառաչելով պայթում են հեռվում, փրփրում խութերի մոտ և խաղաղված փովում–տարածվում ափի մանրիկ ավազին:

Ասում են, թե մի քանի տարի առաջ, խութերի մոտ, ափի երկարությամբ երկաթյա ցանց է ձգված եղել: Շնաձկների հարձակումից ապահով մնալու համար: Բայց քանի որ այդ ցանցը խանգարել է սպորտի սիրահարներին, որոնք կապույտ տախտակների վրա պառկած ցատկում են ալիքների վրայով, այդ պատճառով էլ ցանցը հանվել է:

Լողափում մի քանի տեղ գույգ–գույգ կարմիր դրոշակներ են դրված: Երբ դրանք խաչաձևված են, ուրեմն լողալն արգելվում է, շնաձկներ են երևացել: Շնաձկների շարժումին հետևում են նաև հատուկ կառուցված բարձր աշտարակներից: Իսկ երբ առանձնապես մարդաշատ են լողափերը, հսկողությունը ուղղաթիռներն են իրականացնում՝ պատրաստ ամեն վայրկյան զգուշացնելու լողի սիրահարներին և փրկարար ջոկատներին:

Փրկարարների նկատմամբ մեծ հարգանք կա Ավստրալիայում, և նրանք արժանի են այդ հարգանքին: Նրանք ոչինչ չեն ստանում իրենց ծառայության դիմաց, և ընդհակառակը, իրենք են անդամավճար մուծում՝ որպեսզի թույլտվություն ստանան աշխատանքից ազատ ժամերին օգնության հասնելու մարդկանց, շատ հաճախ վտանգելով սեփական կյանքը: Դրանք համարձակ, ուժեղ, ճարպիկ մարդիկ են, փառահեղ լողորդներ, և պատահական չէ, որ Ավստրալիայի անվանի մարզիկների մեծ մասը իր «տարրական» կրթությունը փրկարարների ջոկատում է ստանում: Լողափերում հաճախ է հնչում նրանց սուլիչների ձայնը... ուրեմն ամեն ինչ կարգին է, ջոկատն աչալուրջ է, լողա, որքան սիրտդ ուզում է:

Ի դեպ՝ սուլիչների մասին:

Ավստրալիայի քաղաքներում հաճախ կարող ես լսել սուլիչի ձայն: Երբ քեզ տաքսի է պետք, հյուրանոցի դռնապանը անմիջապես փողոց է ելնում և հնչեցնում սուլիչը՝ առաջին իսկ տաքսին արգելակվում է անմիջապես: Այն խաչներուկներում, որտեղ լուսաֆորներ չկան, մանկապարտեզի դաստիարակչուհին սուլիչով է ճանապարհ ուզում իր սանիկների համար: Իսկ մեծ խաչներուկներն, իհարկե, սուլիչով չեն ղեկավարի. ամենուրեք տեղադրված են հեռուստատեսային սարքեր: Ինչ–որ տեղ՝ ղեկավարման վահանի մոտ նստած ոստիկանները հետևում են խաչներուկների ծանրաբեռնվածությանը և կարգավորում երթևեկությունը:

Իսկ երթևեկություն կարգավորելը Սիդնեյում հեշտ բան չէ: Երեք միլիոն բնակչություն ունեցող քաղաքում վիստում են մեկ միլիոն ավտոմեքենաներ: Երևի հենց այդ պատճառով է, որ ոստիկանությունը չափազանց խիստ է հետևում երթևեկությանը, և որ վարորդները բառացիորեն սարսափում են կարմիր լույսից: Երևանի մեր վարորդները այստեղ լրիվ կսնանկանային: Կարմիր լույսի դեպքում խաչներուկն անցնող վարորդը տուգանվում է քսան

դուլարով: Ինչքան էլ ստիպված լինի, սիդնեյցի վարորդը ավտոմեքենան չի կանգնեցնի արգելված վայրում: Տուգանքը տասը դուլար է:

Բայց, այնուամենայնիվ, ոստիկանների հազվադեպ կարող են հանդիպել քաղաքում: Ես այդ մասին ասացի սիդնեյցի վարորդներից մեկին.

– Հազվադեպ, – ծիծաղեց նա, – նրանք պարզապես թաքնվում են: Հապա փորձիր որևէ խախտում թույլ տալ, տես անմիջապես քանի հոգի կհավաքվեն: Եվ ի վերջո, եթե այդքան կարոտ եք ոստիկանների, ցույցերի ժամանակ փողոց դուրս եկեք:

– Դուք տեսե՞լ եք Հարբր բրիջը:

Այս հարցը Սիդնեյում կլսեք ամենուրեք: Ում հետ էլ որ ծանոթանաք, և ով էլ իմանա, որ դուք օտարերկրացի եք, առաջին հերթին կհարցնի.

– Դուք տեսե՞լ եք Հարբր բրիջը:

Հարբր բրիջը, այսինքն կախովի կամուրջը, սիդնեյցիների հպարտությունն է: Այն իհարկե անհնար է չտեսնել, որովհետև երևում է լայնածավալ քաղաքի գրեթե բոլոր անկյուններից: Բայց նրանց սոսկ հայտնել, թե տեսել ես, նշանակում է վիրավորել սիդնեյցիներին: Որովհետև այդ կամրջով պետք է հիանաս, հուզվես, երկար–երկար պատմես քո տպավորությունները և անվերապահորեն հայտարարես, որ նման կամուրջ աշխարհում ոչ մի տեղ չկա: Եվ դա ճիշտ կլինի:

Որովհետև իրոք նման կամուրջ աշխարհում ոչ մի տեղ չկա, Հարբր բրիջը աշխարհի ամենամեծ կախովի կամուրջն է, անցումային ամենալայն գոտիով: Նրա երկարությունը 1150 մետր է, լայնությունը՝ մոտ 49 մետր, կամարի երկարությունը 503 մետր է, և կամուրջը գետնից բարձր է 52 մետրով:

Այդ հիրավի արտասովոր կամրջով իրար կողքի ութ շարքով սլանում են ավտոմեքենաները, բացի այդ կան երկաթուղային չորս գծեր: Ինչ խոսք, որ երկու լայն մայթեր էլ հատկացված են հետիոտներին:

Հարբր բրիջը կառուցվել է 1932 թվականին, շինարարության վրա ծախսվել է 20 միլիոն դուլար:

Այս բոլոր թվերով առանձին–առանձին զարմանալուց ու հիանալուց հետո դու պետք է քո բացարձակ հիացմունքը հայտնես նաև օպերայի շենքի մասին, եթե չես ուզում սիդնեյցու աչքին գեղեցկությունից չհասկացող մեկն երևալ: Սա բոլորովին նոր և իրոք հրաշալի շինություն է:

Բացվող վարդի նման է կառուցված Սիդնեյի օպերան:

Ճիշտ է, սիդնեյցիները ձևականորեն տրտնջում են, թե շատ թանկ է նստել օպերայի նոր շենքի շինարարությունը, բայց մի առանձին խանդավառանքով են խոսում ու հպարտանում նորակառույցով: Ըստ որում նոր շենքը անհրաժեշտություն էր:

Երբ մենք Միդնեյում էինք, օպերայի նոր շենքը դեռևս ավարտված չէր, և ներկայացումները տեղի էին ունենում հին շենքում: Չափազանց անշուք շենք էր, պարզապես փայտե կառույց, որի դահլիճը հազիվ երկու հարյուր մարդ տեղավորեր: Անշուք ու խունացած էին նույնիսկ վարագույրն ու դեկորները: Ներկայացումը բաղկացած էր երկու մասից՝ առաջին մասը «Օթելլո» սյուիտն էր, իսկ երկրորդը՝ «Արևելյան մեղեդիներ» բալետը Չայկովսկու և Արամ Խաչատրյանի մոտիվներով ձևավորված:

Չեմ կարող ասել, թե մի առանձին տպավորություն թողնող ներկայացումներ էին, և (սիդնեյցիների ականջից հեռու)... հանկարծ մեծ շոայություն ինձ թվաց օպերայի նոր շենքը: Որովհետև ավելի անկեղծ ասած՝ ուղղակի սիրողական մակարդակի վրա էին թե նվագախումբը և թե պարող կազմը: Կամ գուցե մենք Մոսկվայի Մեծ թատրոնով և մեր պարարվեստով երեսառածներից ենք, ո՞վ գիտե:

Ինչևէ, թող դա անհանգստացնի Ավստրալիայի մշակույթի մինիստրությանը: Մեր նպատակն էր միայն համոզել ընթերցողին, որ եթե դու ուզում ես սիդնեյցին հարգի քեզ, պետք է անվերապահորեն ընդունես Միդնեյի լողափերի գեղեցկությունը, Հարբեր բրիջը, օպերայի շենքը և... և զարեջուրը:

Այո, այո, թող տարօրինակ չթվա, զարեջուրը:

Այստեղ բոլորը գրեթե միայն զարեջուր են խմում:

Եվ եթե դու ամեն մի կումից հետո զուլխո գոնե հիացած չչարժես, քեզ հյուրասիրող ավստրալիացին շատ կվշտանա: Որովհետև ինքն էլ խմում է մեծագույն հաճույքով, օրորում է զուլխը և քեզ նայում:

Միդնեյում գրեթե ամեն քայլափոխի զարեջրատներ կան: Դրանք շատ մաքուր, սպիտակ սալապատ սրահներ են, որոնց կենտրոնում կանգնած է վաճառասեղանը: Երկու բարմեն գրեթե անընդհատ լցնում են գավաթները: Սրահում ուրիշ ոչինչ չկա. ոչ սեղան, ոչ աթոռներ, մարդիկ խմում են կանգնած, գավաթները ձեռքներին, խմում են ժամերով ու կարողանում են զրուցել ահավոր աղմուկի մեջ, երբ բոլորն են խոսում ու ծիծաղում իրար սեղմված, և եթե ի վերջո ոչ ոք գետին չի ընկնում, ապա երևի միայն այն պատճառով, որ ընկնելու տեղ չկա, հարևանները չեն թողնում:

Ուղիղ ժամը 18 անց 30 րոպեին բարմենների աղաղակով հինգ րոպեում դատարկվում են զարեջրատները: Բայց չկարծեք, թե փակվում են այդ ժամին: Երբեք: Ընդամենը ընդմիջում է մեկ ժամով, որի ընթացքում զարեջրի սիրահարներին հնարավորություն է տրվում սթափվել, ուշքի գալ և մտածել տուն գնալու մասին: Իսկ եթե տանը սպասող չունես, ներս մտիր կրկին ու շարունակիր մինչև կեսգիշեր, երբ ռադիոֆարձրախոսները կհնչեցնեն «Տե՛ր, դու պահպանիր մեր թագուհուն» խոսքերով սկսվող բրիտանական հիմնը:

Թող թույլ տրվի ասել, որ մենք էլ վատ խմող չենք և շատ տեղերում կարող ենք պարծենալ մեր դիմացկունությամբ, բայց այն, ինչ կատարվում է Միդնեյի զարեջրատներում, չափազանց է:

Ես ուրիշ ոչ մի տեղ նման համաշխարհային ծարավ չեմ տեսել:

Միդնեյը աշխարհի երևի ամենատարածված քաղաքներից մեկն է: Միայն ծովափերով այն ձգվում է երեք հարյուր կիլոմետր, այսինքն ավելի, քան Երևանից Թբիլիսի հասնող ճանապարհը: Հարցն այն է, որ բարձրահարկ շենքերը՝ զանազան բանկերը, ապահովագրական և այլ ընկերությունները, մեծածախ ու մանրածախ առևտրի օբյեկտները, հյուրանոցներն ու կինոթատրոնները գրեթե միայն քաղաքի կենտրոնում են: Դրանք հիանալի երևում են Ավստրալիա-թաուեր կոչվող ամենաբարձրահարկ շենքից, որը քառասունութ հարկանի կլոր մի կառույց է և որի ամենաբարձր ապակեպատ պատշգամբը հատկացված է զբոսաշրջիկներին՝ սրտներն ուզածի չափ քաղաքով հիանալու, նկարահանելու ու լուսանկարելու համար:

Ահա Գեորգ սթրիթը՝ կենտրոնական փողոցն իր ճոխ խանութներով, ահա Քինգ սթրիթը, ահա և Վիկտորյա թագուհու արձանը. Հարբր բրիջը, օպերան, ահա և Դոմեյն պարկը, լոնդոնյան նշանավոր Հայդ պարկի կրկնօրինակը: Այդտեղ Հայդ պարկի նման, եթե լսող գտնես, կարող ես բարձրանալ փայտե ամբիոններից մեկը և ճառեր արտասանես որքան կամենաս կամ կարդաս սեփական բանաստեղծություններդ: Ահա և Քինգսգրոս փողոցը՝ գիշերային հաճույքների վայրը, որի խայտաբղետ լույսերը վառվում են գիշեր-ցերեկ...

Իսկ այնուհետև... այնուհետև արվարձաններն են՝ երկհարկանի, բայց ավելի շատ միահարկ տներով: Առանձնատներ, առանձնատներ ու առանձնատներ: Մի փոքրիկ այգի և առանձնատուն, ծաղկազարդ մի պարտեզ և առանձնատուն: Տասնյակ կիլոմետրերի վրա ոչ խանութ կարող ես գտնել, ոչ ռեստորան և ոչ էլ կինոթատրոն:

Չի գործում նաև քաղաքային տրանսպորտը: Ահա թե ինչու է մարդատար ավտոմեքենաների քանակն անցնում մեկ միլիոնից: Ինչպես Օստապ Բենդերն էր ասում, ավտոմեքենան այստեղ շքեղության չէ, այլ ծառայում է սոսկ իբրև փոխադրամիջոց:

Ըստ որում հողն այստեղ չափազանց թանկ արժե: Առանձնապես ծովահայաց մասերում:

– Մեզ մոտ հողը տեսարանի հետ է վաճառվում, – անժպիտ կատակում են սիդնեյցիները:

Այսինքն դժվար է ժպտալ, երբ ուղղակի շատ սովորական միահարկ տան դարպասի վրա, տուն, որ թզաչափ, գրեթե պայմանական հողակտոր ուներ, գրված էր. «Վաճառվում է 30 հազար դոլարով, առանց սակարկության»:

Ավստրալիա-թաուերի բարձունքից հիանալի երևում էին նաև թենիսի տասնյակ կորդերը: Ահա և այն կորդերը, որտեղ սովորաբար Դևիսի գավաթն է խաղարկվում: Կանաչ տարածությունները շատ-շատ են, պուրակներ, զբոսայգիներ, բեյսբոլի դաշտեր, գոլֆի հրապարակներ... Ըստ որում հաճելին այն է, որ ոչ մի տեղ չես հանդիպի «խոտը չտրորել» կամ «Քայլելն արգելվում է» ցուցանակների: Ուզածդ զբոսայգում կարող ես պառկել խոտին, կանաչի վրա հանգստանալ ու հիանալ անամպ երկնքով: Միդնեյցիները հենց այդպես էլ վարվում են, և կանաչ պուրակները գրեթե միշտ լեցուն են «վայրի» հանգստացողներով: Գաղտնիքն այն է, որ խոտը շատ առատ է այստեղ, որովհետև շատ առատ են անձրևները: Եվ որովհետև աշխարհի որևէ այլ վայրում այնպես չեն խնամում, մշակում, գուրգուրում խոտը, ինչպես Ավստրալիայում:

Մասնագետներն անընդհատ, գրեթե երկու օրը մեկ փոքրիկ մեքենաներով խուզում են խոտը, դարձնում հարթ, համաչափ, սքանչելի մի գորգ, տրորիք, որքան հաճելի է, խոտը դրանից չի փչանում: Եվ ամեն անգամ չես կարող նորից ու նորից չգարմանալ թե ավստրալիացին որքան հոգատար է ծաղկի ու կանաչի նկատմամբ: Անհնարին է պատկերացնել մի տուն առանց ծաղկանոցի, անհնարին է տեսնել մի սենյակ, որտեղ ծաղիկներ չլինեն, անհնարին է անցնել որևէ միջանցքով, որը ծաղիկների մեջ կորած չլինի:

Դե, իհարկե, անմիջապես էլ ասենք, որ դրան մեծապես նպաստում են բնակլիմայական պայմանները, շոայլ, առատաձեռն ու չքնաղ բնությունը, տաք ծովեզերքը:

Մենք կենդանաբանական այգի ենք գնում և երկար-երկար սլանում ենք ծովեզերքով: Անցնում ենք Մոնվելյը, Բիլգալա լողափը, Էվելոնը և վերջին լողափը Սիդնեյից դեպի հյուսիս՝ Արմավենիների լողափը... Այստեղ է իր ջրերը օվկիանոսը լցնում հորդառատ Հոքսբերի գետը: Օվկիանոսը մուգ կապույտ է, Հոքսբերին՝ բաց կապույտ, ինչպես անամպ երկինքը, ծովեզերքի տնակները խայտանկար են ու հագարագույն, խոտը փարթամ, կանաչ, իսկ մարջանի ծառերը ծաղկել են վառ կարմիր ծաղիկներով: Շունչդ կտրվում է այդ շոայլ գեղեցկությունից:

Մեր ավտոբուսը կանգ է առնում «Երկնագույն և խաղաղ» կոչվող ռեստորանի մոտ: Մենք սառը հյութ ենք խմում ու ճանապարհը շարունակում փոքրիկ շարժիչավոր նավակով, որը մեզ Հոքսբերիի գետաբերանն է տանում: Աջ ափին ժայռախորշեր են: Մեզ ասում են, թե նախկինում դրանց մեջ աբորիգեններ էին ապրում, մինչև որ Անգլիայից եկած սպիտակ հյուրերը լիովին ոչնչացրեցին նրանց կամ արտաքսեցին կենտրոնական անապատները: Իսկ հիմա այդ ժայռախորշերում կրակակետեր են, որ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ են կառուցվել՝ ճապոնական նավատորմի դեմ կռվելու համար:

Ձախ կողմում ժայռերի վրա մուգ կանաչ, գրեթե սև անտառներ են, որոնք երբեք տերևաթափ չեն լինում: Պայծառ օր է: Գետաբերանում խաղաղ ձոճվում են ձկնորսական փոքրիկ նավակները: Երկնքում սև բաղերի երամներ են թռչում աղմուկով: Ահա և Հոքսբերիի գետաբերանը: Այսինքն, ի՞նչ գետ, գոնե մենք որ սովոր չենք նման առատության: Գետաբերանի լայնությունը ավելի քան մեկ կիլոմետր է, և մեր նավակը հանգիստ լողում է ձախ ափի կողքով, անթիվ, անհամար մեղուզանների վրայով: Դրանք հսկայական չափերի էին, նողկալի ու ահավոր: Ջրի մակերեսին տարածված է կարմրավուն գլուխը, իսկ դեպի ցած կախված են սպիտակադեղնավուն շոշափուկները: Ասես բաղմինտոնի հսկայական գնդակներ լինեն լցված գետի մեջ: Իսկ ափին հրաբխային ժայռեր են, հողի ոչ մի կտոր, բայց այդ ժայռերի միջից ասես հրաշքով հառնում են ծառերի սև ու ջղուտ արմատները՝ պրկված ահռելի մատների նման:

Մոտ մեկուկես ժամ գետաբերանում զբոսնելուց հետո նավակից ցած իջանք Քոբենտ Հիլ վայրում, որտեղ մեզ էր սպասում մեր հավատարիմ ավտոբուսը, և ասֆալտապատ ու նեղ մի ճանապարհով երկար-երկար ոլորապտույտ բարձրանում էինք Էվկալիպտների անտառի միջով: Դրանք վառ սպիտակ բներ ունեն և հաստ ճյուղեր: Երբ խավար գիշեր է լինում և ծառերի սաղարթները ձուլվում են երկնքին, Էվկալիպտների սպիտակ կմախքները փայլում են մթության մեջ՝ ծառերի ուրվականների նման:

Ավտոբուսը գնում է գրեթե ծառերի սաղարթներին քսվելով, և հանկարծ մեր խմբի աղջիկներից մեկը բացականչում է.

– Oh, oh, արջուկը ծառի վրա:

Մենք նետվում ենք դեպի լուսամուտները: Այո, էվկալիպտի ծառերի վրա, մեկ այստեղ, մեկ այնտեղ, ճյուղերին նստած հանգիստ որոճում են փոքրիկ արջուկները: Ըստ որում ոչ ավտոմեքենայի հոնդոցը, ոչ մեր աղմուկ–աղաղակները մագաչափ անգամ նրանց չեն անհանգստացնում: Նրանք չեն էլ նայում մեզ վրա, հանդարտիկ ու խաղաղ որոճում են:

– Կռալաներ են,– ճշում է մեր խմբի Պագանելը՝ Ինեսա Մորիսովան:– Օ՛յ, տեր աստված, կռալաներ են:

– Այո,– հրճվանքը հազիվ զսպելով, բացատրում է մեր ուղեկցորդը,– դուք գտնվում եք կենգուրուների ու կռալաների արգելանոցում: Սա հենց այն կենդանաբանական այգին է, ուր բերելու էի ձեզ:

Այդ փոքրիկ կենդանիների հետ ծանոթանալուց հետո արդեն լիովին համոզվում ես, որ Ավստրալիայում գիշատիչներ չկան: Որովհետև դժվար է պատկերացնել ավելի խեղճ, բարի ու անօգնական կենդանի, քան կռալան: Նա պաշտպանվելու, վտանգից խուսափելու ոչ մի հնար չունի: Ոչ մի միջոց: Եվ ապշելու բան է, թե ինչո՞ւ է բնությունը նրան արտաքնապես նմանեցրել արջի քոթոթի, երբ «արջային» ոչ մի բան չկա կռալայի բնավորության մեջ:

Ինչպես շատ կենդանիներ Ավստրալիայում, կռալան ևս պարկավորների ընտանիքին է պատկանում, ապրում է էվկալիպտի տերևներով: Այն էլ ոչ ամեն տեսակի էվկալիպտի: Ավստրալիայում հայտնի էվկալիպտի շուրջ երեք հարյուր հիսուն տեսակներից միայն տասներկուսի տերևներով է սնվում այդ քմահաճ արջուկը: Հանդարտ ու գրեթե անշարժ նստած ծառի ճյուղին, կռալան դանդաղ ծամում է տերևները և տեղից կշարժվի միայն այն ժամանակ, երբ ճյուղի վրա այլևս տերևներ չկան և հարկավոր է այլ ճյուղ տեղափոխվել: Եվ ուրեմն հաճախ է պատահում, որ օրեր շարունակ չի իջնում ծառից: Վախի զգացողությունը հայտնի չէ կռալային, նա կարող է հանգիստ քո գիրկը գալ, նկարահանվել ապարատների չիկչիկոցի և բզզոցների տակ, հանկարծ սողոսկել քո ավտոմեքենան ու քնել բարձերի վրա: Եվ այդ ամենի հետ միասին նա շատ զգայուն է: Երբ բղավում ես կռալայի վրա, լաց է լինում և թաթերով ծածկում է աչքերը:

Ավստրալիայից բացի, աշխարհում ոչ մի այլ տեղ կռալաներ գոյություն չունեն: Նրանք գոնե իրենց հարևան կենգուրուների նման չեն կարողանում ապրել կենդանաբանական այգիներում: Արագորեն ոչնչանում են: Ըստ որում չմոռանանք ամենաառանձնահատուկը՝ կռալաները ջուր չեն խմում: Կռալա հենց աբորիգեններեն նշանակում է «խմող չէ»: Եվ ուրեմն ինչպես է «չոր» կերը մարսում այդ զարմանալի կենդանին: Պարզվում է, որ մարսողությանն օգնում է կռալայի կույր աղիքը, որի երկարությունը հասնում է երկու մետրի: Դա չափազանց մեծ է, եթե հաշվի առնենք, որ կռալայի մարմնի երկարությունը կես մետրից չի անցնում, իսկ քաշն էլ հազիվ է հասնում տասը կիլոգրամի:

Բոլոր պարկավորների նման, կռալան էլ լույս աշխարհ է գալիս արտասովոր փոքրիկ քաշով: Նոր ծնված կռալան կշռում է հինգ գրամ, իսկ մարմնի երկարությունը չի անցնում երկու սանտիմետրից: Եվ սակայն այդ պստիկը կարողանում է առանց կողմնակի օգնության մոր պարկը տեղափոխվել և վեց-յոթ ամիս ապրել այնտեղ սնվելով մայրական կաթով: Դրանից հետո արդեն դուրս է գալիս պարկից և մինչև «չափահաս», այսինքն մեկ տարեկան դառնալը ապրում է մոր մեջքին:

Կռալան երկու տարին մեկ է ձագ բերում և բերում է ընդամենը մեկ ձագ:

Երբ հիանում էինք այդ հիրավի չքնաղ կենդանիներով, Ինեսա Մորիսովան արդեն գրկել էր մեկին, օրորում էր ու շնչում տազնապաճ.

– Փառք աստծո, որ այս անմեղ գառնուկները լրիվ չեն ոչնչացել:

Այո, այո, այն էլ ասենք, որ թեև Ավստրալիայում գիշատիչներ չկան, սակայն երեք-չորս տասնամյակ առաջ քիչ էր մնացել, որ իսպառ վերանային կռալաները: Որովհետև նրանց ոչնչացնելու գործը իրենց ձեռքն էին վերցրել մարդիկ: Կռալաների բաց մոխրագույն մորթին հրապուրել էր եվրոպական և ամերիկյան կաշեգործներին: Հիանալի դրամապանակներ ու պայուսակներ էին ստացվում: Եվ անհա սկսվում է կռալաների մասսայական բնաջնջումը: Ավելի հեշտ որս անհնար է պատկերացնել: Եվ այդ ամենը ողբերգությամբ կավարտվե՞ր հազվագյուտ կենդանիների համար, եթե պառլամենտում իրենց ձայնը չբարձրացնեին բնագետները: Նրանք հասան այն բանին, որ կառավարությունն օրենք ընդունեց կռալաների որսը իսպառ արգելելու մասին: Եվ հիմա այնպիսի հսկայական տուգանք է դրված կռալայի որսով զբաղվողների վրա, որ վարորդները գրեթե սողալով են մեքենան վարում կռալաների կողքով՝ վախենալով դժբախտ պատահարից:

Խստիվ արգելված է կռալայի մորթիով որևէ հուշանվեր պատրաստելը: Իմ հայրենակիցներից մեկն ինձ կռալայի մի խրտվիլակ նվիրեց, որը սակայն պատված է... կենգուրուի մորթիով:

Ե՛վ այս արգելանոցում, և՛ Մելբուռնից մոտ ութսուն կիլոմետր դեպի արևելք գտնվող Հիլսվիլի արգելանոցում մենք հնարավորություն ունեցանք մասնակիորեն ծանոթանալու Ավստրալիայի կենդանական աշխարհին: Կենգուրուների մասին չեմ պատմի, բոլորն էլ տեսել են այդ զարմանալի կենդանիներին, որովհետև չկա իրեն հարգող որևէ կենդանաբանական այգի, որը կենգուրու չունենա: Սակայն ի տարբերություն կենդանաբանական այգիների, այստեղ կենգուրուները շրջում են ազատ–արձակ, մոտենում են զբոսաշրջիկներին և նրանց ձեռքից վերցնում հացի կտորը կամ կարկանդակը: Մեր ուղեկցորդի խորհրդով հետներս ուտելիք էինք վերցրել կենդանիներին կերակրելու համար: Եվ երբ կենգուրուներից մեկը անճոռնիորեն ցատկելով մոտեցավ ինձ, ես հացի կտորը նրան պարզեցի: Կենգուրուն բարձրացավ, կանգնեց հզոր պոչի և շատ զարգացած ետին ոտքերի վրա ու մեկնեց գլուխը: Նույն պահին նրա պարկի բերանը բացվեց և պարկից երևաց անխոհեմ ձագի սրադունչ գլուխը: Կենգուրուն մի թաթով նրան ետ՝ դեպի պարկը հրեց, բայց մի վայրկյան անց ձագը կրկին հանեց գլուխը: Դա կրկնվեց մի քանի անգամ, մինչև որ զայրացած կենգուրուն «մայրավարի» բամփեց ձագի գլխին և մի թաթով պարկը փակած ինձ մեկնեց դունչը:

Շատ հուզիչ ու սրտաշարժ պատկեր էր:

Բայց իհարկե Հիլսվիլի արգելանոցի զարդը այնուամենայնիվ մնում է բաղակտուցը: Դա բնության ամենաարտակարգ ստեղծագործություններից մեկն է: Այսինքն բոլորից լավ նրան հումորով ներկայացնում էր արգելանոցի աշխատողը.

– Լեդիներ և ջենտլմեններ, – ասում էր նա, – մենք հաստատ տեղեկություններ ունենք, որ արարիչը բաղակտուցին ստեղծել է հարբած ժամանակ: Աստված մտածել է, թե ինչ կստացվի, եթե տարբեր կենդանիների անդամները միացնի իրար և... ստեղծել է բաղակտուցը: Ինքներդ եզրակացրեք: Այդ արտասովոր կենդանին ապրում է գետերի մոտ. հինգից քսան մետր խորությամբ բների մեջ: Նա բաղի կտուց ունի, շան մորթիով ծածկված մարմին, ոտքերի մատների միջև թաղանթներ կան, պոչը նման է կուղբի պոչի, իսկ առջևի թաթերը փորսուղի թաթեր են: Եթե այդ ամենին ավելացնենք, որ ետևի վերջավորություններն էլ աքաղաղի նման զանգապաններ ունեն, որոնք օձի թույնի նման թույն են արտադրում... պատկերը լրիվ պարզ կլինի: Իհարկե, չմոռանանք ասել, որ բաղակտուցը ձու է ածում, բայց ձվից դուրս եկած ճտին անմիջապես սկսում է կերակրել կաթով:

Այսքանից հետո արժե՞ նկարագրել, թե որքան այցելուներ էին հավաքված բաղակտուցների պլաստիպուսարիաների շուրջը (այդպես են կոչվում նրանց ակվարիում–վանդակները Հիլսվիլի արգելանոցում): Նրանց արդեն չէր զարմացնում ոչ նույնիսկ Դինգո վայրի շունը իր փոքրիկ, սքանչելի ձագերով, և ոչ էլ այն, որ օդում ճնճողիկների նման ազատ ճախրում էին բազմագույն ավստրալիական թռչնակները:

Բայց եթե խոսք բացվեց թութակների մասին, ուրեմն անհնար է չհիշել Ավստրալիայի Քվինսլենդ նահանգի մայրաքաղաք Բրիզբենի մոտ գտնվող հատուկ թռչնանոցը: Ավելի ճիշտ թռչնանոցը գտնվում է Բրիզբենի լողափում, փոքրիկ մի քաղաքում, որը Ոսկե ափ անունն ունի, բայց ձմռանը, այսինքն հուլիս ամսից մինչև նոյեմբեր Ավստրալիայի այլ նահանգներից եկած հովեկների և զբոսաշրջիկների հաշվին դառնում է 150 հազար բնակչություն ունեցող քաղաք:

Ուրեմն ինչն է այդքան մարդկանց ձգում Ոսկե ափ:

Մենք դուրս ենք եկել Բրիզբենից և գնում ենք Ոսկե ափ՝ լողալու: Մոսկալի շոգ է, արևը այրում է անխնա: Միդնեյն ու Ադելաիդան երազ են թվում: Ադելաիդայում նույնիսկ ցուրտ էր: Այսինքն զարմանալու բան չկա, մենք հյուսիս ենք եկել: Դեպի հասարակած: Իսկ ոչ ամեն տեղ է հյուսիսում ցուրտ: Անցնում ենք Բրիզբեն գետը: Ամենուրեք արմավենիներ են և պապայայի անտառներ: Մեզ համար շատ տարօրինակ են պապայայի պտուղները. պատկերացրեք հսկայական սեխեր, որ կախված են ծառերից: Ահա և այլ ծառեր, հավանաբար դեկորատիվ, որովհետև տնկված են մեկընդմեջ և աչք են շոյում մանիշակագույն ու սպիտակ ծաղիկներով: Այդ ծառերը կոչվում են Բոհեմիա: Ահա և այս վայրերի գեղեցկուհիները՝ Ջոկորանդա կոչվող բարձրաբերձ ծառերը. դրանց ծաղիկները սքանչելի կապույտ են:

Եվ այնուամենայնիվ անասելի շոգ է, ասես օգոստոսին Վեդիում լինես: Մեզ փրկում է միայն այն, որ ավտոբուսի մեջ սառնարանային ջուր կա, և երբ սեղմում ես մի կոճակ, ինչ–որ մի

սարքից թողե՛ն նորանոր բաժակներ են հայտնվում: Այդ սարքը չխկչխկում էր անընդհատ մինչև Ոսկե ափ հասնելը:

Մեր ուղեկցողը, շոգից նվաղած, բացատրում է, որ այս վայրերում օձեր շատ կան՝ սև օձեր և պղնձագլուխ օձեր և տայֆան կոչվող օձեր, որ իրենք են հարձակվում մարդկանց վրա: Մենք խեղճացած լուրում ենք:

– Հրդե՛հ,– հանկարծ բացականչում է մեկը:

Մեզանից աջ իրոք որ հրդեհ էր, վառվում էր հսկայական անտառը, և բոցը երկինք էր բարձրանում: Բայց մեր ուղեկցողը գլուխն էլ չըթքեց.

– Հրդեհներն այստեղ սովորական երևույթ են,– անհույզ ձայնով բացատրում էր նա:– Եթե ուշադիր լինեք, կտեսնեք, որ շատ վայրերում վահանակներ կան, որոնց վրա գրված է. «Վտանգավոր է, վտանգավոր է, խիստ վտանգավոր է»: Նկատի են առնված հրդեհները: Ահա, ահա, տեսնո՞ւմ եք այն վահանակը, տեսեք, սլաքը դրված է «վտանգավոր չէ»–ի վրա:

– Եվ սա «վտանգավոր չէ՞»–ն է,– հրդեհը ցույց տալով, հարցնում ենք մենք:

– Իհարկե,– ասում է ուղեկցողը,– որովհետև հիմա հոկտեմբեր է, գարուն: Հրշեջները դեռևս կարող են հանգցնել նման տիպի հրդեհները: Այ, եկեք մեզ մոտ ամռանը, փետրվարին...

Մենք արդեն պատկերացնում ենք, թե ինչ կարող է լինել ամռանը, որովհետև երկար ժամանակ մեր ավտոբուսն անցնում էր ածխացած անտառների եզրով: Դժվար է երևակայել ավելի անհեթեթ ու տխուր պատկեր. համատարած վառված, սևացած ծառեր են:

Բայց ահա վերջապես ավարտվում է հրդեհային գոտին, նորից փարթամ կանաչ է և ծաղկած այգիներ, ու ցուցանակն ազդարարում է, որ մտնում ենք Ոսկե ափ քաղաքը: Ինչպես ամենուրեք, միահարկ և երկհարկանի առանձնատներ են ծովափին և մի կենտրոնական փողոց, որը ծայրեծայր ծովահայաց հյուրանոցներով է պատված: Բայց մեր ավտոբուսը չի խորանում քաղաքի մեջ, թեքվում է ձախ, դեպի ծովը, և մեր աչքերի առջև բացվում է Ավստրալիայի հրաշալիքներից մեկը՝ օվկիանոսափումը, որի անունն է «Մերին լենդ»:

Հսկայական մի ջրավազան և նրան կից վանդակ–ակվարիումները հատկացված են դելֆիններին: Սև, գորշ դելֆիններ են՝ երկար դնչերով, ինքնաթիռային պոչերով և խոշոր անցքերով՝ գլուխների վրա, որոնցով շնչում են: Առաջին վանդակ–ջրավազանի մեջ մայրն էր իր ձագի հետ: Ձագը «երեխայավարի» ճվճվում էր, ցատկոտում, պոչով հարվածում ջրին ու թրջում հավաքվածներին կամ ուղղակի դնչով ջուրը շաղ տալիս այցելուների վրա: Իսկ մայրը պառկած էր հանդարտ, «մեծավարի» փնչում էր ու պոչով կամացուկ քնքշությամբ շոյում էր ձագին: Մյուս ջրավազանների մեջ ևս երկուական դելֆիններ կային, ընդամենը վեցը, տարբեր տեսակի՝ երկարաքիթ ու կճատ, ոմանք «Ժիգուլի» ավտոմեքենայի բարակ ձայներ էին հանում, ոմանք էլ ճռճոացնում անընդհատ:

Բայց ահա ռադիոբարձրախոսից հնչեց հավանաբար վարժեցնողի ձայնը.

– Դուրս եկ, Բեբի:

Եվ փոքրիկ ջրավազանի միջից ուղղակի ցատկելով մեծ ջրավազանը նետվեց հսկա մի դելֆին: Սպասարկող տղաներից մեկը ծաղկեպսակը նետեց ջրի վրա, դելֆինը մի ակնթարթում գլխին հագցրեց ծաղկեպսակը և ուղղահայաց, պարզապես պոչի վրա ջրի մակերեսին կանգնած սկսեց ցուցադրել իր ծաղկե գլխարկը:

Պատկերացրեք, թե ինչ հրճագին աղաղակներով էին դիմավորում դելֆինների յուրաքանչյուր ելույթը տրիբունաների վրա հավաքված երեխաները, և ոչ միայն երեխաները:

Ահա փոքրիկ նավակի մեջ մի շուն են դրել և նավակն իջեցրել ջրավազան: Դելֆինն անմիջապես հայտնվում է նավակի տակ և մեջքին դրած սկսում այս ու այն կողմ սլացնել նավակը:

Ամենաճարպիկը երևի Սմայլի անունով դելֆինն էր: Նա իրար ետևից ցատկելով գլուխը հագցրեց տղայի նետած հինգ օղակները, բերեց ու խոնարհաբար նրան մեկնեց նորից: Տղան հանեց օղակներն ու բղավեց.

– Իսկ հիմա ողջունիր ժողովրդին, Սմայլի:

Եվ Սմայլին սուզվելով ջրի մեջ, դուրս հանեց պոչն ու սկսեց թափահարել՝ հանդիսատեսների ճիչ–աղաղակի տակ:

Ջրավազանի կողքին, հինգ մետր բարձրության վրա մի հարթակ կար: Աշխատողներն այնտեղից փոքրիկ ձկներ էին կախում ուղղակի ատամներով բռնած, և դելֆինները կայծակնային արագությամբ, թեթև ցատկերով խլում էին ձկները:

Սպասարկող աղջիկներից մեկը ջրավազան մտավ: Ջեկի անունով դելֆինն անմիջապես սլացավ նրա մոտ: Աղջիկը գրկեց դելֆինին, պառկեց նրա վրա, և դելֆինը խոնարհաբար սկսեց հանդարտ սահել ջրի վրայով: Հարթակի վրա բասկետբոլի ցանց դրեցին և գնդակներ նետեցին ջրավազանը: Մի քանի վայրկյան անց գնդակները հայտնվեցին ցանցի մեջ: Ջրավազանի կողքին խարույկ վառեցին: Երբ բոցը բարձրացավ, վարժեցնողի հրահանգով դելֆիններն անմիջապես հանգցրին կրակը՝ դնելով ջուրը լցնելով խարույկի վրա:

Ինչեր ասես չէին անում այդ խելացի կենդանիները: Մեկ էլ տեսար ուղղակի փոքրիկ երեխաների պես սկսեցին չփչփացնել ջուրը, գլուխկոնծի տալ, սլանալ պոչերի վրա ուղիղ կանգնած, նույն ձևով պոչի վրա կանգնած ետ–ետ ցատկել: Բայց ամեն մի վարժությունից հետո նետվում էին դեպի իրենց վարժեցնողը, բարձրանում ջրից, բացում բերանները, ճշում, պահանջում, բղավում աղերսագին և չէին հանգստանում, մինչև որ վարժեցնողը մի–մի ձուկ չէր նետում նրանց լայն բացված երախների մեջ:

Այնժամ նրանք ետ էին ցատկում, գլուխկոնծի տալիս ջրի մեջ ու պոչերով թափահարելով ողջունում հասարակությանը:

Հոյակապ կազմակերպված ատրակցիոն էր: Բայց որքան մեծ եղավ մեր զարմանքը, երբ պարզվեց, որ սա դեռևս փոքրիկ դելֆինանոցն է: Ծովի կողքին, հսկա մի լճակի մեջ ազատ ու արձակ սլանում էին դելֆինները, հանդարտորեն լողում բաղերի, կարապների և բադակտուցների կողքով, վարժեցնողների հրամանով ջրից դուրս նետվում և պտտվում օդի մեջ և նույնիսկ իբրև շարժիչավոր նավակ՝ ծառայում ջրադահուկորդների համար: Ջրադահուկորդը պարանի օղը նետում է դելֆինի գլխին և դահուկներով սլանում ջրերի վրայով: Կային նաև դելֆին-տաքսիներ: Փոքրիկ վճարով կարող ես նստել դելֆինի թիկունքին դրված բազկաթոռի մեջ, և նա քեզ մի ավիացի մյուսը կտանի, եթե, իհարկե, վարժեցնողը հանկարծ չհրամայի սուզվել ջրի տակ: Իսկ այդպես հաճախ է լինում, որպեսզի այցելուն ուժգին ապրումներ ունենա, իսկ հանդիսատեսներն էլ աղաղակեն հրճվագին:

Այս մեծ դելֆինարիումի կողքին երկհարկանի մի շենք կար, որի վրա գրված էր «Ակվարիում»:

Իհարկե, դրան ակվարիում անվանելը անխղճություն կլինի, եթե ակվարիում ասելով մենք նկատի ունենք մեր տներում եղած ջրամանները: Այդ շենքում ավելի քան տասը ակվարիումներ կային, որոնցից ամեն մեկը մի խոշոր սենյակի չափ էր: Եվ դրանք դիտվում էին թե ներքևից, թե կողքից, թե վերևից: Հսկայական այդ ակվարիումներում կային այն բոլոր կենդանիների նմուշները, որ ապրում են Խաղաղ օվկիանոսում՝ միաբջիջներից սկսած մինչև շնաձուկը: Դա մի հեքիաթային աշխարհ էր, որի մեջ կողք-կողքի ապրում էին օձաձկներն ու հսկայական կրիաները, ինչ-որ տափակ, միաչքանի ձկներ և ահռելի մեղուզաներ: Եվ էլի ձկներ, որոնք լողակները թափահարում էին արծվի թևերի պես:

Կրիաներից մեկն ըստ երևույթին հիվանդ էր: Երկու անգամ նա ծանրորեն վեր լողաց, շնչեց ակվարիումի մակերեսին և կրկին սուզվելով պառկեց մամռոտ հատակի վրա: Ու երկար ժամանակ անշարժ էր: Եվ հանկարծ մենք տեսանք, որ սուզահագուստով մեկը իջնում է ակվարիումի մեջ: Պարզվեց, որ բժիշկ է: Նա իջավ մինչև հատակը, պառկեց կրիայի կողքին և ինչ-որ երկար սարքով սրսկեց նրան:

Ասես ժյուլ Վեռնի վեպերի հիման վրա նկարահանված գունավոր կինոնկար-հեքիաթ էինք դիտում:

Այս հեքիաթը շարունակվեց Ոսկե ավիայի այս անգամ մի այլ արգելանոցում՝ Կորանբին անվամբ թռչնանոցում: Այսինքն՝ արգելանոց անունը սոսկ պայմանական է, որովհետև բաց հրապարակում, ծառերի վրա հատուկ պատրաստված բներում, ամենուրեք, ամենուրեք թռչուններ են: Դրանք ճախրում են քո գլխավերևում, պտտվում անիվների վրա, ցատկոտում մարզերի մեջ, հետապնդում ու հալածում իրար: Հազարագույն թռչուններ՝ մատնաչափ թութակներից սկսած մինչև մեծ, խոշոր թութակները: Ե՛վ սիրամարգեր, և՛ կարապներ, և՛ բաղեր, և՛ աղավիններ: Եվ շուրջդ ամեն ինչ ճշում ու ծղրտում է, սուլում ու ձստձստում է հազարաձայն:

Երեխաները բաց տաղավարներից թռչնակեր են գնում և սկսում կերակրել փոքրիկ թևավորներին, նրանց ուղեկցությամբ պստիկ գնացքներ են նստում և սկսում պտտվել թռչնանոցում, մտնում քառասունչորս ակվարիում ունեցող սրահը, որոնցից ամեն մեկը մի հեքիաթի ռժով է ձևավորված և վերջապես մեկ բոպե անշարժանում են որևէ ծառի տակ,

որպեսզի մասնակցեն «Ուլ է ամենաբախտավորը» մրցույթին... Այդ խաղն իհարկե անգիր գիտեն այն երևանցիները, ովքեր երեկոյան անցնում են Լենինի պողոտայի ծառերի տակով:

Բայց ի տարբերություն երևանցիների, այստեղ «բախտավորները» անմիջապես պարզևատրվում են պաղպաղակով:

Իսկ հիմա մի անձնական գաղտնիք:

Քանի որ այսքան պատմեցի Ավստրալիայի կենդանական աշխարհի մասին, թող տարօրինակ չթվա, որ «Մերին լենդ» օվկիանոսարիումի ռեստորանում պատվիրեցի ոչ թե ինչ–որ բիֆշտեքս, այլ... գորտ:

Որովհետև, ինչպես ակվարիումի մեջ, կերակրացանկում ևս միայն ծովային կենդանիներ էին: Առաջարկվում էր խեցգետին, կրիա, ոստրե, շնաձկան ֆիլե, ութոտնուկի միս, օձաձուկ՝ ձվով տապակած և գորտ:

Խոստովանեք, որ առանձնապես լայն ընտրություն չունեի, եթե հաշվի առնենք, որ մի քանի օր առաջ Մելբուռնի ժուռնալիստի տանը աչքերս փակած արդեն փորձել էի ոստրեները:

Եվ ի վերջո այն էլ ասեմ, որ ուզում էի օգտվել առիթից և վերջապես պարզել, թե ինչ բան է այդ գորտը, որի մասին ֆրանսիական գրականությունը հիացական բացականչություններ է թույլ տալիս:

Բերեցին այլուրի մեջ տապակած գրեթե կարմրացրած երկու ազդր, մեր սովորական հավի ճտի ազդրերի չափ: Պարզ է, որ սկզբից հոտ քաշեցի, բայց հոտը հաճելի էր: Հետո սկսեցի զգուշությամբ ուտել ալրաշերտի տակ թաքցրած սպիտակ միսը և անմիջապես էլ համոզվեցի, որ դա ոչ թե գորտ, այլ ամենասովորական, ավելի ճիշտ՝ ամենալավ ճտի միս է: Նույնիսկ կաքավի միս՝ նուրբ, մեղմ ու համեղ: Միայն ոսկորներն աչքիս մի քիչ տարօրինակ էին թվում, շատ էին փայլուն և ուղիղ: Չթաքցնեմ, որ կերա մինչև վերջին պատառը: Եվ այնքան էի համոզված, թե կերածս ճուշտ է, որ մատուցողուհուն խնդրեցի մի բաժին էլ բերել, միայն թե ոչ եփած: Հավանաբար այստեղ հավի ինչ–որ տեսակին գորտ են անվանում, մտածում էի ես: Երևի ես առաջինը չեի, որ հանդես էի գալիս նման տարօրինակ առաջարկով, որովհետև մատուցողուհին սիրալիր ժպտաց և քիչ անց իմ առջև դրեց սովորաբար չէի տուփ:

Տուփի վրա գորտ էր նկարված: Ըստ որում այդ գորտը օտարերկրացի էր և Ոսկե ափ էր հասել Հնդկաստանից:

Ես բացեցի այն: Երանի չբացեի: Տուփի հատակին գորտի վերջնամասն էր՝ իրար կպած բաց կապտավուն ազդրերով:

Այսքանը: Ուղղակի գլուխս պտտվեց և ամբողջ օրն այլևս ոչ մի բան չկերա: Ես սա որպես դաս եմ ասում, որպեսզի եթե ձեզ երբևէ գորտ առաջարկեն, վերցնեք անմիջապես, որովհետև չափազանց համեղ է, միայն թե խուսափեք կրկնել իմ սխալը:

«–Վիկտորիա նահանգի սկիզբը դրվել է 1835 թվականի հունվարի 6–ին, երկուշաբթի օրը,–
ասաց Պազանելը:

– Երեկոյան Ժամը 7–ն անց 45 րոպեին,– վրա բերեց մայորը, որը սիրում էր ձեռք առնել
Պազանելին:

– Ոչ, 7–ն անց 10 րոպեին,– բռնորովին լուրջ պատասխանեց գիտնականը:– Հենց այդ րոպեին
Բետմանն ու Ֆոլկները Պորտ Ֆիլիպ ավանի հիմքը դրեցին այն ծովախորշի ափին, ուր այժմ
գտնվում է Մելբուռն մեծ քաղաքը:

1836 թվականին Պորտ Ֆիլիպում ապրում էին 244 բնակիչներ»:

Ես չգիտեմ, թե Ավստրալիայի մասին այս կցկտուր, թող ներվի ասել՝ տուրիստական
տեղեկություններն ու տպավորությունները պատմելով քանի բարեկամ եմ վաստակելու, բայց
որ արդեն մեծաքանակ թշնամիներ ունեմ հանձինս Մելբուռնի շուրջ երեք միլիոն
բնակիչների, դրա մասին չեմ կասկածում:

Եվ նրանք իրավացի են: Որովհետև ես բավականաչափ խոսել եմ Սիդնեյի մասին, հասել եմ
նույնիսկ Բրիզբեն և Ոսկի ափ, իսկ Մելբուռնի մասին դեռևս գրեթե ոչինչ չեմ ասել:

Այնինչ Մելբուռնը Ավստրալիայի առաջին քաղաքն է: Դրանում խորապես համոզված եմ
մելբուռնցիները:

Հասկանալի է, որ սիդնեյցիները բացարձակ հակառակ կարծիք ունեն:

Այս վեճը շատ հին պատմություն ունի և առանձնապես սրվել է անցյալ դարի վերջերին, երբ
դեռևս Ավստրալիան ընդհանուր կամ ֆեդերալ կառավարություն չուներ: Երկիրը բաժանված
էր յոթ վարչական շրջանների կամ նահանգների, որոնցից ամեն մեկն իր մայրաքաղաքն
ունեւր և իր կառավարությունը:

Ահա այդ նահանգները:

Նոր հարավային Ուելս: Մայրաքաղաքը՝ Սիդնեյ:

Քվինսլենդ: Մայրաքաղաքը՝ Բրիզբեն:

Վիկտորիա: Մայրաքաղաքը՝ Մելբուռն:

Հարավային Ավստրալիա: Մայրաքաղաքը՝ Ադելաիդա

Արևմտյան Ավստրալիա: Մայրաքաղաքը՝ Պերտ:

Հյուսիսային տերիտորիա: Մայրաքաղաքը՝ Դարվին:

Եվ այդպես էլ առանձին–առանձին գոյակցում էին այդ նահանգները, մինչև որ ընդհանուր
վտանգը նրանց ստիպեց մտածել միավորման մասին:

Անցյալ դարի վերջին Գերմանիան զավթեց Նոր Գվինեան և շարունակում էր նվաճողական
գործողությունները Խաղաղ օվկիանոսում:

Ահա հենց այդ փաստն էլ ավստրալիական ինքնավար գաղութներին վերջնականապես համոզեց, որ հարկավոր է միավորվել, ունենալ ընդհանուր կառավարություն և միացյալ բանակ: Ասում ենք համոզեց վերջնականորեն, որովհետև առանց այն էլ երկրի ընդհանուր զարգացման համար լուրջ խոչընդոտ էր դարձել պառակտվածությունը: Ամեն մի նահանգ իր առանձնահատուկ օրենքներն ուներ և իր մաքսային ու առևտրական գործառնությունների տարբեր ձևերը, որոնք խիստ խանգարում էին արդյունաբերության, առևտրի և ապրանքափոխանակման զարգացմանը ողջ երկրում:

Եվ ամենակարևորը, անգլիական կառավարությունը խիստ շահագրգռված էր, որ ավստրալիական անկախ գաղութները միավորվեն մի ընդհանուր պետության մեջ: Դա նրան հնարավորություն էր տալիս միացյալ կառավարությանը ավելի հեշտությամբ թելադրել քաղաքական իրեն ձեռնտու կուրսը և ապահովել այն հսկայական կապիտալ ներդրումները, որ Անգլիան կատարել էր Ավստրալիայում:

Ամեն ինչ հաշտ ու խաղաղ էր գնում, մինչև որ առաջացավ այն հարցը, թե քաղաքներից որը պետք է դառնա Ավստրալիայի վարչական կենտրոնը, այսինքն՝ մայրաքաղաքը:

– Բհարկե Սիդնեյը, չէ՞ որ այն Ավստրալիայի ամենահին, ամենազարգացած ու ամենագեղեցիկ քաղաքն է, – գտնում էին Նոր Հարավային Ուելսի բնակիչները:

– Բհարկե Մելբուռնը: Ո՞ր քաղաքը կարող է մրցել Մելբուռնի հետ իր բնակչությամբ և հարստությամբ, – ժպտում էին Վիկտորիայի քաղաքացիները:

Սկզբում որոշվեց, թե այդ հարցը կլուծի նորընտիր պառլամենտը: Բայց մրցակից քաղաքները չգիտես ինչու դեռ չընտրված պառլամենտին չէին վստահում և առաջարկում էին համաժողովրդական հարցում անցկացնել:

Այդ վեճը տևեց ավելի քան տասնհինգ տարի: Ֆեդերացիայի ստեղծումը լուրջ վտանգի տակ էր: Նույնիսկ սահմանադրությունն էր ստեղծվել, բայց մայրաքաղաքի հարցը չէր որոշվում:

Եվ վճռվեց անակնկալ:

Ինչ–որ մեկն առաջարկեց մայրաքաղաքը ոչ Սիդնեյը դարձնել և ոչ էլ Մելբուռնը: Այլ Վաշինգտոնի նման ստեղծել մի նոր քաղաք, որը և վարչական կենտրոնը կդառնա:

– Ինչ ուզում է լինի, միայն թե ոչ Սիդնեյը, համաձայնեցին մելբուռնցիները:

– Միայն թե Մելբուռնը չլինի, թեկուզ անապատ, – համաձայնեցին սիդնեյցիները:

Եվ ի վերջո այդպես էլ եղավ: Ընտրեցին գրեթե անապատ:

Հայտարարվեց նոր մայրաքաղաքի հատակագծի միջազգային մրցույթ: Առաջին մրցանակին արժանացավ ամերիկացի մեծանուն ճարտարապետ Ու. Գրիֆինը՝ Չիկագոյից: Նրան էլ հանձնարարվեց նախագծի իրականացումը: Եվ ահա միայն 1913 թվականին Նոր Հարավային Ուելսի սահմանում, Մելբուռնի և Սիդնեյի արանքում, Սիդնեյից մոտ երկու հարյուր

կիլոմետր հեռավորության վրա, լեռնային գոգավորությունների մեջ ապագա քաղաքի առաջին հուշայունը կանգնեցվեց և քաղաքն անվանվեց Կանքերա, մի անուն, որ ավստրալիացիներից շատերը չեն կարողանում բացատրել, իսկ ոմանք էլ ասում են, թե աբորիգեններն է և նշանակում է «հանդիպատեղի»:

Ինչևէ, Կանքերայի մասին՝ քիչ ավելի ուշ: Մեր նպատակն էր միայն ցույց տալ, թե ինչպիսի խորը տարաձայնություններ գոյություն ունեն Ավստրալիայի երկու խոշորագույն քաղաքների՝ Սիդնեյի և Մելբուռնի միջև: Ավելի պարզ ասած, եթե ուզում ես, որ Մելբուռնում քեզ նույնիսկ մի գավաթ գարեջուր չհյուրասիրեն, ասա, որ Սիդնեյը գեղեցիկ քաղաք է:

Ուրեմն՝ հիմա Մելբուռն:

Մենք Մելբուռն թռանք Ադելաիդայից, փոքրիկ մի ինքնաթիռով, որն ամերիկյան «Դուգլաս» էր և մեր ՅԱԿ-40-ի նման ուղևորներին ընդունում էր պոչից: Չգիտեմ դա առավելություն է, թե ոչ, բայց ծխողների համար անկասկած առավելություն էր, որ ինքնաթիռը բարձրություն էր վերցնում բառացիորեն երկու բուլետում և, ուրեմն, ծխիր որքան սիրտդ ուզում է: Եվ էլի որպես առավելություն նշեմ (որքան էլ հաճելի չլինի սիդնեյցիներին), որ Մելբուռնի օդանավակայանը լավագույնն է Ավստրալիայում և աշխատում է անվրեպ: Երկու բուլետն մեկ ինքնաթիռ էր երկինք բարձրանում և օդանավակայանն ընդունում էր նոր ինքնաթիռներ: Սպասարկումը կատարյալ էր: Մենք դեռ նոր էինք սրահ մտել, երբ տեսանք, որ մեր ճամպրուկները մեզ են սպասում: Երևի վայրէջքից հետո անցել էր երեք բուլետ, ոչ ավելի:

Մելբուռնը մեզ դիմավորեց տեղատարափով: Ամեն ինչ փայլուն էր ու թաց: Փայլում էր ասֆալտը, որով ընթանում էինք, փայլում էին ծառերի սաղարթներն ու բենզինակայանների խայտաբղետ տանիքները, փայլում էր ողջ ճամփեզերքը՝ ձախ և աջ կողմերում: Ասես ինչ-որ արտասովոր առուներ էին հոսում ճամփեզրով: Բայց չէ, երբ ավելի ուշադիր նայեցի, տեսա, որ դա ջուր չէր: Ուղղակի ճանապարհի երկու կողմերի խանդակներն էլ լցված էին շշերով և մետաղյա տուփերով, այն գարեջրի շշերով ու տուփերով, որով այնպես հպարտանում են ավստրալիացիները:

Թե ինչ սովորություն է գարեջրի շշերն ավտոմեքենաների լուսամուտներից ուղղակի ճամփեզր նետելը, դժվարանում եմ ասել: Նոր հիշեցի, որ այդպես եղել է ամենուրեք, Ավստրալիայում մեր անցած բոլոր ճանապարհներին: Այստեղ պարզապես քանակն է շատ: Երևի մոտերքում գարեջրատներ կան, իսկ որպեսզի դրան այլևս չանդրադառնամ, ասեմ, որ մենք եղանք ֆուտբոլի օլիմպիական ստադիոնում՝ ավստրալիական ֆուտբոլի ինչ-որ խաղից երեք-չորս օր հետո: Առանց չափազանցության, հավատացեք, որ ողջ տրիբունաները, անցումները, մայթերը և նույնիսկ դաշտը գարեջրի շշերով ու տուփերով լեփլեցուն էին:

Ո՞վ գիտե, գուցե պրոբլեմ է դարձել շշերը հավաքելու հարցը:

Երկար-երկար գնում էինք արվարձանների միջով: Նույն պատկերը ինչպես Սիդնեյում՝ ամենուրեք միահարկ և երկհարկանի առանձնատներ են: Գազոններ, կրիկետի դաշտեր և նորից առանձնատներ: Հետաքրքիր է, թե ինչու են մարդիկ խուսափում շենքերից, երբ նման

տներում բնակվելն իր անհարմարություններն ունի՝ աղբատարի հարցը, ջեռուցման հարցը, որն այստեղ շատ կարևոր է, սպասարկման հարցը:

– Իսկ առավելություննե՞րը,– իսկույն ինձ շրջապատեցին մելքունցիները մեր մի հանդիպման ժամանակ:– Իսկ այն, որ աղմուկ չկա, որ ստիպված չես բարևել տհաճ հարևանիդ, որ պարտեզ ունես, որտեղ հող ես մշակում ու ծաղիկ ցանում, որ քո բանալին ունես, որ դա քո տունն է, քո ամրոցը...

Եվ ես հիշեցի այս մարդկանց հայրենիքը: Որքան խորը կարող են լինել ավանդների արմատները: Չէ՞ որ Անգլիայում էլ գրեթե նույնն էր, և մարդկանց հավանաբար միայն հողի սակավությունն էր խանգարում ամենուրեք այսպես ապրելու:

Այո, քո տունը, քո բանալին... Որովհետև պարտեզի հարցը գրեթե պայմանական, սիմվոլիկ նշանակություն ունի: Հարցն այն է, որ այդ առանձնատների մեծ մասը ընդամենը մի ավի հող ունի, երկու–երեք մետր, և շատերն էլ կառուցված են իրար շատ մոտիկ, գրեթե իրար կպած: Բայց խստորեն անջատված միմյանցից, անպայման հաստ պարսպով: Եվ անպայման գույնով:

Ահա թե ինչու ես հիշեցի Լոնդոնի արվարձաններից մեկում գտնվող երկու գույնի շենքը: Դա աչքի ընկնող երկհարկանի տուն էր՝ կառուցված բարոկկո և ռոկոկո ոճերի խառնուրդով, զանազան սյուներով ու կամարներով զարդարված:

Տան դիմաց բավականին մեծ մարգագետին կար, որի կենտրոնում կանգնած էր հավանաբար այդ գերդաստանի նահապետի արձանը:

Բայց տարօրինակն այն էր, որ շենքը ուղիղ մեջտեղից կիսված էր՝ գույներով: Տան մի մասը կանաչ էր ներկված, իսկ մյուս մասը՝ դեղին:

Եվ ամենատարօրինակը՝ նույն կերպ էր ներկված նաև արձանը: Մարդու դեմքի մի մասը կանաչ էր, իսկ մյուսը՝ դեղին:

Դա այնքան արտառող էր, որ մենք պարզապես խնդրեցինք կանգնեցնել ավտոբուսը և հետաքրքրվեցինք, թե ինչու՞մն է գաղտնիքը:

Եվ պարզվեց, որ ոչ մի գաղտնիք էլ չկա: Ուղղակի հանգուցյալ տան տերն իր ունեցվածքը ժառանգություն է թողել երկու որդիներին:

Եվ նրանք էլ ահա կիսել են:

Ծիծաղելի է, բայց ի՞նչ կարող ես ասել: Գուցե դա միայն մեզ համար է ծիծաղելի, որովհետև մենք այդ տան մոտ կանգ առած ուրիշ ավտոբուսներ չտեսանք: Բայց այնուամենայնիվ, իմ խորին համոզմամբ, եթե հանգուցյալ տան տերը որևէ հրաշքով տեսներ իր արձանը, որդիներին կգրկեր ժառանգությունից:

Ահա և վերջապես Մելքունի կենտրոնը: Գեղեցիկ պլանավորված լայն պողոտաներ, բարձրաբերձ շենքեր և գուֆի հրապարակներ: Ճաշակով ձևավորված ցուցափեղկեր,

Ավստրալիայում ամեն տեղ աչք ծակող «Մայեր» ֆիրմայի խանութը: «Մայեր» ֆիրմայի չորս հարյուր խանութ կա ողջ երկրում: Այդ խանութը Մելբուռնում լրիվ երկու թաղամաս է զբաղվում և ունի ավելի քան ութ հազար աշխատողներ: Ահա և Քոլինգ սթրիթը: Այստեղ գրեթե միայն բանկերի երկնաքերերն են կանգնած, որոնց վրայից և որոնց վրա ճարձատում, պտտվում ու սլանում են հազար ու մի տեսակ գունավոր ռեկլամներ:

Քինգս դոմեյն (այսինքն Թագավորական այգի) զբոսայգու մոտ մենք իջնում ենք ավտոբուսից, որպեսզի հարգենք առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ Գերմանիայի և Ճապոնիայի դեմ մղված մարտերում ընկած ավստրալիացիների հիշատակը:

Ամբողջ այգին հուշարձաններով լի էր:

Չափազանց գեղեցիկ էր ու տխուր:

Ըստ որում անպայման արժե նշել, որ ավստրալիացիները արտակարգ ուշադրությամբ են ընտրում հուշարձանները: Դրանց թիվը շատ մեծ չէ, բայց միջակ ստեղծագործության գրեթե չես հանդիպի: Դա առաջին հերթին վերաբերում է Կուկի արձանին Սիդնեյում և Բյորնսի արձանին՝ Մելբուռնում, որ կանգնած էր մեր «Շերաթոն» հյուրանոցի առջև, գեղատեսիլ մի հրապարակում: Շոտլանդիայի մեծ բանաստեղծի հիշատակն այստեղ հարգվում է ըստ ամենայնի: Նրան արտասանում են ամենուրեք: Այս արձանի փոքրիկ կրկնօրինակները կան գրեթե ամեն մի տան մեջ: Ինձ բախտ է վիճակվել տեսնել նրա արձանը իր հայրենի քաղաք Աբերդինում, հիանալ նաև նրա այլ արձաններով Ավստրալիայում և Նոր Զելանդիայում, բայց Մելբուռնի Բյորնսը երևի ամենաքնարականն է ու ամենատպալմունքի:

Իսկ որ մելբուռնցին ճանաչում է լավն ու գեղեցիկը, դրա վառ վկայությունը Մելբուռնի կիրառական արվեստների թանգարանն է:

Երևի բավական է նույնիսկ թվել մի քանի գործեր, որոնք պատիվ կբերեն աշխարհի ուզածո թանգարանին, անգամ Լուվրին:

Նախ շենքի փոքրիկ ու գողտրիկ բակում կանգնած է Ռոդենի «Բալզակը»: Բայց դա նրա միակ գործը չէ թանգարանում: Ահա նաև «Ժան Պոլ Լոուրենս»-ը և «Համբուրվող երեխաները» զարմանալի մի անմեղությամբ շնչող բրոնզե քանդակը:

Հետո Ռեմբրանտի «Վերջին ինքնանկարը», «Փիլիսոփաները», «Տղամարդու նկարը», Ռուբենսի «Հերկուլեսն ու Անթեյը», Վան Դեյկի «Կոմսուհի Ռաշելը», «Ֆիլիպ Հերբերտի դիմանկարը», Տիցիանի «Ֆրանսիացի վանականը», Էլ Գրեկոյի «Կարդինալի դիմանկարը», Մուրիլլոյի «Անխաթար մտորումները», Տերների, Վերոնեզի, Ջակոպոյի, Բեռնինիի, Սեբաստիանի, Ռեյնոլդի, Դոբելլի կտավներն ու քանդակները:

Ո՞վ կհամարձակվի որևէ էպիտետ ավելացնել այս հեղինակներին ու գործերին:

Սրահներից երկուսն էլ հատկացված էին Ավստրալիայի ժամանակակից նկարիչներին ու քանդակագործներին: Բավականին ինքնատիպ ու վառ բնանկարներ կային: Սրահներից մեկն

էլ ամբողջությամբ նվիրված էր «պոպ արտ» և «օպ արտ» ուղղությունների տեղական կուռքերին:

Ահա մաքուր, սպիտակ մի շրջանակ: Վերնագիրն է «Հավերժություն»: Իսկ ինչո՞ւ ոչ «Ազնվություն» կամ մի այլ բան: Մեկ ուրիշը՝ եռանկյունի կանաչ մի տախտակ, որի վրա մեխերից կախված են գարեջրի երկու թիթեղյա տուփեր (այս անիծյալ գարեջրից փրկություն չկա): Վերնագիրն է «Բարեկամություն»: Եվ էլի, թող ներվի մեզ ասել՝ կտավներ, որտեղ միայն գույներ են, խզբզոցներ, քառակուսիներ և ուղղանկյուններ: Եվ էլի գործեր, օրինակ, ինչ-որ լարեր, որոնք դուրս են ցցված հին ռադիոընդունիչից: Եվ ամեն մեկը իր անունն ունի և իր հեղինակը: Չեն էլ վախենում ստորագրել:

Կտավներից մեկն էլ մոտ կես մետր քաթան էր, որի վրա ուղղակի լցվել, չորացել էր մոտ կես կիլոգրամ վառ կարմիր ներկ:

– Այս կտավը վաճառվո՞ւմ է,– լրջորեն հարցրի սրահի աշխատակցուհուն:

– Այո, այո,– զարմացավ ու աշխուժացավ կինը:

– Եվ ի՞նչ արժե:

– Հարյուր քսան դոլար,– ասաց նա և ավելացրեց շտապով,– անկյունում գրված է: Տեսե՞ք:

Ու թեև, այնուամենայնիվ, պատիվ չի բերում, բայց ինձ զսպել չկարողացա:

– Ի՞նչ եք ասում,– ասացի ես՝ նորից հիշելով Օստապ Բենդերին,– մի՞թե Ավստրալիայում ներկն այդքան թանկ արժե:

Եվ ի պատիվ իրեն կինը ծիծաղեց:

Հետո, երբ իմացավ, թե որտեղից ենք եկել մենք, երկար հետաքրքրվում էր, թե մի՞թե մեզ մոտ նման նկարչական ուղղություններ չկան և կրկին սրտանց ծիծաղեց, երբ մեր տղաներից մեկն ասաց, թե մեզ մոտ էլ հնոտիներ շատ կան, բայց մենք դրանք չենք ցուցադրում:

– Խոստովանեմ, որ մեզ մոտ էլ չեն ընդունում,– ասաց նա,– այցելուները հիմնականում ծիծաղում են: Բայց ի՞նչ կարող ենք անել՝ նկարիչների ասոցիացիան է ներկայացրել: Գտնում են, որ ովքեր ուզում են՝ պետք է ցուցադրվեն: Ավստրալիան դեմոկրատական երկիր է:

Ի դեպ Ավստրալիայում հաճախ կարելի է լսել «դեմոկրատիա» բառը:

– Մենք դեմոկրատներ ենք,– ասում էր Ավստրալիայի ժուռնալիստների ասոցիացիայի պատասխանատու քարտուղար Միդ Քրոսլենդը:

– Մեզ մոտ իսկական դեմոկրատիա է,– գարեջրի գավաթը բարձրացնելով ժպտում էր մեր ավտոբուսի վարորդ Ջիմ Պատրիկը:

– Շատ դեմոկրատ երկիր է, գիտե՞ս, – համոզում էր ինձ իմ հայրենակից Ստեփան Գավուկյանը՝ Բրիզբենից:

Եվ ոչ միայն նրանք, այդ բառը հնչում է ամենուրեք, հնչում է հպարտ ու ընդգծված: Թե Ավստրալիան ամենաազատ, ամենադեմոկրատական երկիրն է աշխարհում:

Ճշմարտությունն այն է, որ Ավստրալիայում և Նոր Զելանդիայում արտաքնապես չկան դասակարգային այնպիսի սուր հակասություններ, որ գոյություն ունեն Անգլիայում, Ֆրանսիայում կամ կապիտալիստական որևէ այլ երկրում: Սոցիոլոգները դրա առաջին նախապայմանը համարում են այն, որ անգլիացիների ներգաղթը Ավստրալիա եղել է գրեթե միաժամանակ, և որ Ավստրալիա է եկել միասեռ հասարակություն. հիմնականում՝ աքսորյալներ, բախտախնդիրներ և խռովյալներ, ընչազուրկներ և կյանքի խորթ զավակները, որոնց բախտը չի ժպտացել հայրենիքում: Բնակչությունը զարգացել է ազատ և կաշկանդված չի եղել դասակարգային հազար ու մի պայմանականություններով:

Սոցիոլոգները միաժամանակ նշում են, որ այդ հարցում մեծ է նաև Ավստրալիայի աշխատավորության դերը, նրա համառ ու հետևողական պայքարը երկրում դեմոկրատական հարաբերությունների հաստատման համար, որը շարունակվում է նաև այսօր:

Դրա համար էլ եվրոպացուն տարօրինակ կարող է թվալ, որ տաքսիի վարորդը Մելբուռնում կարող է ուղևորի ուսին բարեկամաբար թփթփացնելով պահանջել, որ նա իր կողքին նստի հավասարի պես: Կամ որ կինոթատրոնում ու մարզահրապարակում հատուկ օթյակներ չկան մեծահարուստների համար: Կամ որ մինիստրն ու իր վարորդը գործուղման մեջ գտնվելիս միասին են նախաճաշում նույն խորտկարանում:

Այո, դա այդպես է: Ճիշտ է նաև, որ ավստրալիացիները, կամ գոնե ինձ հանդիպածները, շատ անկեղծ, բարի, սրտաբաց մարդիկ են, պատրաստ ամեն վայրկյան օգնելու, ընդառաջելու հյուրին, չխնայելով իրենց հանգիստն ու ժամանակը:

Բայց ինչպես նշել եմ իմ նյութի սկզբում, կա մի հարց, լսելիս անմիջապես ընկնում է նրանց տրամադրությունը:

Ումանք վրդովվում են, ումանք լռում են պարզապես, իսկ ումանք էլ ձևացնում են, թե իրենք ոչինչ չգիտեն:

Հենց նույնը կատարվեց նաև Մելբուռնի կիրառական արվեստների թանգարանում: Թանգարանի աշխատակցուհին, որն այնպես ծիծաղում էր մեր կատակները լսելով և սիրալիր գրույցի էր բռնվել մեզ հետ, կարկամեց անմիջապես, երբ գրող Իգոր Լեբեդևը հարցրեց առանց որևէ դիտավորության:

– Իսկ ինչո՞ւ Նամաջիրայի ոչ մի կտավ չկա թանգարանում:

– Նամաջի՞ր ա, – մրմնջաց նա, – ունենք:

– Ներեցե՞ք, իսկ ինչո՞ւ չի ցուցադրվում:

– Չգիտեմ: Իսկ ի՞նչ պարտադիր է, որ անպայման Նամաջիրա լինի:

Այնինչ անհնարին է պատկերացնել ավստրալիական կերպարվեստն առանց նրա: Ուղղակի հարցն այն է, որ Ալբերտ Նամաջիրան, ավստրալիայի խոշոր նկարիչներից մեկը, Ավստրալիայի գեղարվեստների ակադեմիայի ակադեմիկոսը աբորիգեն է:

Այո, անխառն աբորիգեն՝ Արանդա ցեղից: Մեկը նրանցից, ովքեր այս երկրի բնիկներն ու տերերն են եղել, և ովքեր ապրում են հիմա Ավստրալիայի անապատներում, ցանկապատերի ետևում, հատկապես իրենց համար ստեղծված ռեզերվացիաներում: Մեկը նրանցից, որոնց սպիտակադեմ մարդիկ անվանում են անախրոնիզմ, թերզարգացած ու տհաս, բայց որոնք, ըստ Ավստրալիայի սահմանադրության, աշխարհի ամենադեմոկրատական երկրի իրավահավասար քաղաքացիներն են:

Այսինքն՝ սահմանադրությունը սահմանադրություն, բայց հատկանշականն այն է, որ աբորիգենները անգլիացիներին իրավահավասար քաղաքացիներ են համարվում հատկապես այն նահանգներում, որտեղ նրանք գրեթե ամբողջովին ոչնչացված են և մատների վրա կարելի է հաշվել (ինչպես, օրինակ, Նոր Հարավային Ուելսում և Վիկտորիայում): Իսկ խոշոր ռեզերվացիաներ ունեցող նահանգներում և մանավանդ Հյուսիսային տերիտորիայում, որտեղ արանդա ցեղն է ապրում, աբորիգենները մինչև վերջերս քաղաքացիական իրավունքներ չունեին: Նահանգի օրենքը իշխանություններին թույլ էր տալիս մարդուն քաղաքացիական իրավունք տալ կամ զրկել իրավունքից՝ ըստ հայեցողության:

Ահա հենց այստեղ էր ծնվել և Գերմանսբուրգ միսիոներական ավանի ռեզերվացիայում էր ապրում Ալբերտ Նամաջիրան:

Բենգտ Դանիելսոնը Ավստրալիայում իր ուղևորության ժամանակ եղել է այդ ռեզերվացիայում, հանդիպել Նամաջիրայի քահանա միսիոներ Ալբրեխտին, գրուցել այդ ժամանակ արդեն մեծանուն նկարչի հետ և նկարագրել նրա գրեթե ֆանտաստիկ հայտնությունը:

...Աբորիգենները երկրի այդ մասում միսիոներների հսկողության տակ անասնապահությամբ էին զբաղվում: Սակայն 1926 թվականին և այնուհետև մի քանի տարիների ընթացքում իրար են հաջորդում տևական երաշտները: Չորանում, ոչնչանում է խոտը, ցամաքում են առուները և հսկայական քանակությամբ ոչխարներն ու կովերը պարզապես կոտորվում են քաղցից ու ծարավից: Ահա այդ ժամանակ էլ միսիոներները մտածում են մի այլ զբաղմունք գտնել աբորիգենների համար: Նրանց առաջարկում են կաշի մշակել, թամբեր կարել և զանազան հուշանվերներ պատրաստել բումերանգներ, նիզակներ, փայտե կենգուրուներ ու ջայլամներ: Պարզվում է, որ հուշանվերների վաճառքը լավ օգուտ է բերում. և որ աբորիգեններն էլ հմուտ վարպետներ են:

Բայց նրանց մեջ առանձնապես աչքի է ընկնում քսանամյա մի երիտասարդ՝ Ալբերտ Նամաջիրան: Նա երազում էր կյանքի լայն ասպարեզ դուրս գալ և արդեն մի քանի մասնագիտություններ էր ձեռք բերել: Հիանալի դարբին էր, հյուսն, հովիվ և ոչխար խուզող:

Նա մյուսներից ավելի լավ էր վարձատրվում: Բայց դարձյալ դժգոհ էր իր վիճակից, ավելի լավ կյանք էր ցանկանում:

Ահա հենց այդ ժամանակ էլ, 1934 թվականին, նոր թեմաներ որոնելիս Գերմանսբուրգ են գալիս ավստրալիական երկու նշանավոր նկարիչներ Ռեքս Բատերբին և Ջոն Հարդները: Նրանք հրապարակում են բնության գեղեցկությամբ և ինքնատիպությամբ, միսիոներներից ուղտեր են խնդրում և ավելի ու ավելի խորանում երկրի ներսը: Եվ նկարում են արտասովոր եռանդով, ներշնչված, պարզապես գիշեր ու ցերեկ: Նկարիչներն այնքան գոհ են լինում իրենց ուղևորությունից և կատարած աշխատանքից, որ հրաժեշտի ժամանակ միսիոներներին հարցնում են, թե ինչով կարող են վարձահատույց լինել նրանց: Եվ ահա քահանա Ալբրեխտը փոխարենը խնդրում է այդ նկարների ցուցահանդեսը բացել ավանում:

– Ի՛նչ եք ասում, մի՞թե այդ աբորիգեններից որևէ մեկին կարող են հետաքրքրել մեր ջրաներկերը,– զարմանում են նկարիչները:

Ի վերջո ցուցահանդեսը բացվում է դպրոցի ամենաընդարձակ սրահում: Ներս են մտնում բնիկները, որոնք մինչ այդ գրքերում եղած կրոնական թեմաներով նկարներից բացի ուրիշ ոչինչ չէին տեսել: Հայր Ալբրեխտը պատմում է, որ այցելուներից մեկը առաջին նկարը դիտելուց հետո կամացուկ բացականչում է.

– Սա իմ տոտեմի տեղն է:

Բոլորին հետաքրքրում են նկարները: Հատկապես ուշադրությամբ են ուսումնասիրվում ծառերն ու թփերը՝ արդյո՞ք ամեն ինչ ճիշտ–ճիշտ է նկարված: Հետո ծերունիներից մեկն ասում է.

– Երբեք չէի մտածի, որ իմ հայրենիքն այսքան գեղեցիկ է: Նոր եմ տեսնում:

Ուրեմն կոնկրետությունից դուրս նա տեսել էր արդեն արվեստը:

Նկարիչների հեռանալուց հետո քահանային է մոտենում Նամաջիրան:

– Ես էլ եմ ուզում նկարել,– ասում է նա:– Բատերբին ասաց, թե շատ դրամ է ստանում իր նկարների համար:

Քահանան բացատրում է նրան, որ գեղանկարչությունը հուշանվեր պատրաստել չէ, որ դրա համար տաղանդ և հատուկ կրթություն է պետք: Բայց Նամաջիրան իրենն է պնդում և խնդրում է թուղթ, վրձին ու ներկեր գնել իր համար: Քահանան, իհարկե, կատարում է նրա խնդրանքը: Նամաջիրան օրեր շարունակ աշխատում ու տառապում է և ի վերջո խոստովանում է զարմացած ու վշտացած, որ ոչինչ չի ստացվում: Քահանան մտածում է, թե նա արդեն ընդհանրապես հրաժարվել է իր մտադրությունից, բայց երկու տարի անց, երբ նկարիչ Բատերբին կրկին Գերմանսբուրգ է գալիս նոր էսքիզների համար, Նամաջիրան պատրաստակամություն է հայտնում որպես ուղտապան անապատ գնալ նրա հետ առանց որևէ վարձի, միայն թե վարպետն իրեն սովորեցնի նկարելու արվեստը: Եվ երկու ամիս շրջում է Բատերբիի հետ: Ահա նրա ստացած գեղարվեստական ողջ կրթությունը:

Երբ Բատերբին մեկնում է, Նամաջիրան սկսում է նկարել: Տեսնելով նրա առաջին գործերը, քահանան ուղղակի ապշում է զարմանքից և դրանք անմիջապես ուղարկում է մասնագետներին: Այդ նկարները ցուցադրվում են Ադելաիդայում բացված ցուցահանդեսում հենց իր Բատերբիի կտավների հետ: Եվ քննադատությունը միահամուռ գովաբանում է նորահայտ նկարչի արվեստը:

Խանդավառված նկարիչը մի տարվա ընթացքում այնքան նկարներ է ստեղծում, որ նրա համար առանձին ցուցահանդես են բացում Մելբուռնում և հենց առաջին օրն էլ գնում են նրա վաթսուն նկարները՝ տասը-քսան ֆունտով:

– Իհարկե, մենք ուրախ էինք Նամաջիրայի համար, – հետագայում Դանիելսոնին պատմում է քահանան: – Բայց նա չլսեց իմ խորհուրդները և, այդ գումարով անասուն գնելու փոխարեն, ավտոմեքենա գնեց: Իսկ կայանի մյուս աբորիգենները հենց տեսան, որ նա հարստացել է, իրենք էլ ուզեցին նկարչությամբ զբաղվել: Անասնապահությունը մոռացան, հուշանվերների գործը դեն նետեցին: Ես փորձեցի նրանց խելքի բերել, բայց նրանք միաբերան նույնն էին կրկնում. «Ինչո՞ւ ես էլ նկարել չեմ կարող, եթե Ալբերտը նկարում է»: Իհարկե, նրանց մեծ մասը հետզհետե պաղեց, բայց մի հինգ-վեց մարդ չէին հանձնվում: Եվ պատկերացրեք իմ զարմանքը, երբ արվեստագետները ասացին, թե նրանք քիչ են զիջում Նամաջիրային: Հիմա Գերմանսբուրգից տասնհինգ հոգի նկարիչներ են դարձել, ըստ որում նրանցից երկուսի կանայք էլ են նկարում: Նրանք իրենց նկարների համար ստանում են հինգից տասը ֆունտ: Իսկ Նամաջիրային վճարում են նույնիսկ հիսուն-վաթսունական ֆունտ...Եվ այդուեղից էլ սկսվում է:

Ավստրալիայի առաջադեմ մտավորականները, երկրի առաջադիմական ուժերը Նամաջիրայի փաստն օգտագործում են կառավարության ուշադրությունը աբորիգենների ողբալի դրության վրա հրավիրելու, մեծ անարդարությունը շտկելու, աբորիգեններին իրական քաղաքական և քաղաքացիական իրավունքներ տալու համար: Բայց հարցը իր խորությամբ դնելու, մի ամբողջ ժողովրդի ճակատագիրն ըստ ամենայնի տնօրինելու փոխարեն իշխանությունները իբր հասարակական կարծիքը հարգելով, վճռում են քաղաքացիական իրավունքներ տալ միայն Նամաջիրային:

Ըստ որում խորամանկությունը պարզվում է անմիջապես:

Բանն այն է, որ Նամաջիրան արդեն հսկայական եկամուտներ էր ստանում իր կտավներից, բայց հրաժարվում էր հարկ վճարել, ինչպես մյուս նկարիչները: Որովհետև ավստրալիական քաղաքացի չէր: Ահա թե ինչու են իշխանությունները շտապում նրան քաղաքացիական իրավունքներ շնորհել: Նրան անմիջապես ընտրում են Ավստրալիայի գեղարվեստի ակադեմիայի անդամ: Ավելին, հատուկ խորհուրդ է կազմվում, որին հանձնարարվում է խիստ հսկողություն սահմանել Նամաջիրայի աշխատանքի և նկարների վաճառքի վրա: Բացատրում են, թե այդ արվում է միայն և միայն նկարչի շահերից ելնելով, որպեսզի հանկարծ ցածր չգնահատեն նրա ստեղծագործությունները:

Նամաջիրան համաձայնվում է խորհրդի վերահսկողությանը և հայտնում է, որ ուրախությամբ կընդունի քաղաքացիական իրավունքը, եթե նույն իրավունքները տրվեն նաև բոլոր արբորիզեններին:

Նրա ելույթը մնում է անպատասխան:

Այնժամ իբրև բողոքի ցույց, Նամաջիրան հեռանում է միսիոներական կայանից և իր ազգականների հետ բնակություն հաստատում անապատում, ինչպես իր նախնիները: Նա զբաղվում է նկարչությամբ, նկարում է շատ արագ, նրա ազգականներից մեկը դեռ չչորացած կտավն ավտոմեքենայով մոտակա Ալիս-Սպրինգս քաղաքն է տանում, վաճառում անմիջապես չնչին գներով և ուտելիք բերում նկարչի ու նրա հաշվին ապրող մյուս ազգականների համար: Ահա այդպես էր ապրում Ալբերտ Նամաջիրան, երբ Դանիելսոնը հանդիպում է նրան մի թփի մոտ, հենց գետնին նստած նկարելիս:

– Ինչո՞ւ տուն չեք գնում Ալիս-Սպրինգսում, չէ՞ որ հնարավորություն ունեք,– հետաքրքրվում է ճանապարհորդը:

– Ուզում էի գնել,– պատասխանում է նկարիչը,– բայց գտարյուն արբորիզենին արգելվում է ապրել այնտեղ: Բատերբին խոստացավ մի կերպ հասուն կ թույլտվություն ձեռք բերել, բայց միայն ինձ համար, և ոչ թե նաև իմ ազգականների համար: Ես հրաժարվեցի: Ավելի լավ է մերոնց հետ անապատում ապրեմ, քան միայնակ՝ քաղաքում:

Այդպես էր ապրում Նամաջիրան, երբ Դանիելսոնը 1955 թվականին հանդիպում է նրան:

Իսկ երբ մենք Ավստրալիայում էինք, արդեն ոչ նկարիչը կար, և ոչ էլ նրա նկարներն էին ցուցադրվում որևէ տեղ:

Մեծ նկարիչ արբորիզեն Ալբերտ Նամաջիրան զոհ էր դարձել ազգային խտրականության, որից նրան չփրկեցին ոչ 1957 թվականի օրենսդրությամբ նրան տրված քաղաքացիական իրավունքները և ոչ էլ ավելի վաղ շնորհված ակադեմիկոսի կոչումը:

1958 թվականի աշնանը համաշխարհային հռչակ ունեցող նկարիչն ու իր երկրի լիիրավ քաղաքացին կատարում է հանցանք: Նա իր ազգականին գինի է հյուրասիրում: Դրանով նա խախտում է այն օրենքը, որն արգելում է ոգելից խմիչքներ տալ կամ վաճառել արբորիզենին, և դատապարտվում է վեց ամսվա բանտային կալանքի:

Հասկանալի է, որ ողջ Ավստրալիայով բողոքի ակիք է անցնում:

Հասարակության ճնշման տակ, իշխանությունները նախ բանտարկության ժամկետը կրճատում են կիսով չափ, իսկ հետո այն փոխարինում են հարկադիր աշխատանքով ռեզերվացիայում:

Բայց հարվածն արդեն հասցված էր:

Պատիժը կրելուց երկու և կես ամիս անց, 1959 թվականի օգոստոսի ութին Ալբերտ Նամաջիրան վախճանվում է:

Ահա թե ինչու կարկամեց թանգարանի աշխատակցուհին, երբ մենք տվեցինք Նամաջիրայի անունը: Նորից աբորիգեն, նորից գրույց աբորիգենների մասին... Նորից այդ անիծյալ հարցը...

Ախր դրանից հետո մի տեսակ դժվար է դառնում սիրելի «դեմոկրատիա» բառն անփութորեն արտասանելը:

Սովորաբար նախանձում են զբոսաշրջիկին, երբ նա, ասենք, Երևանում, ընկերների հետ նստած, մեկ էլ ասում է կարծես թե իմիջիայլոց.

– Հա, ի դեպ երկու օր առաջ Փարիզում այնպիսի մի կինոնկար տեսա...

– Որտե՞ղ: Ի՞նչ:

– Փարիզում...

Կամ երբ մեկն ասում է.

– Չգիտե՞ի՞ր, մի ամիս էլ չկա, ինչ Իսպանիայից եկել են: Շատ շոգ էր: Զբոսաշրջիկ էի...

Այսինքն հետո մարդ ինքն էլ է նախանձում իրեն, որ օտար երկրներում է եղել, արտասովոր բաներ է տեսել, հետաքրքիր մարդկանց հետ է ծանոթացել...

Իսկ այդ ժամանակ... Ով եղել է, գոնե սրտի խորքում կհամաձայնի, որ տուրիստի կյանքն էլ մի կյանք չէ: Նախ երեք-չորս օր է պետք, որ ուշքի գաս: Որովհետև ամեն ինչ խառնվել է: Գիշերը հյուրանոցի համարում շրջում ես արթուն, որովհետև քո երկրում ցերեկ է, իսկ ցերեկն էլ քնում ես՝ փոխանակ նոր քաղաքով հիանալու: Հետո դու ուզում ես կանգնել, անշարժանալ, քարանալ, ասենք, Ռեմբրանտի ինքնանկարի առջև, իսկ քո թևից բռնում, քաշում են, թե շտապիր, հանդիպում է ֆերմերի հետ: Կամ երբ ամբողջ օրը առանց որևէ տեղ կանգ առնելու ավտոբուսով պտտեցնում են հսկա քաղաքում, թե իբր՝ ծանոթացիր մեր քաղաքի հետ: Գոնե ավտոբուսից էլ բան երևա: Մեխիկոյում, օլիմպիական խաղերի ժամանակ, մեր ուշացած խմբին երևի ամենահին ավտոբուսն էր բաժին ընկել, որի լուսամուտներից երևում էին միայն մայթով անցնողների ոտքերը: Իսկ ուղեկցորդը զվարթ ձայնով ասում էր.

– Իսկ հիմա ուշադրություն դարձրեք այս շենքի գմբեթին, սենյորներ, հազվագյուտ կառույց է: Իսկ հիմա դիմացի շենքի ռեկլամին նայեք, ծիծաղելի է, չէ՞:

Այնինչ նորաթուխ սենյորների լացն էր գալիս:

Եվ ամենուրեք շտապեցնում են քեզ՝ «Շուտ, շուտ, ուշանում ենք»:

Մելքունում, օրինակ, մի օրվա ընթացքում թե շրջեցինք քաղաքում, թե ուղղակի հիշատակի համար սրթսրթալով լողացանք Հարավային սառուցյալ օվկիանոսում, թե այցելեցինք Կուկի

տուն–թանգարանը, որը ճիշտ և ճիշտ կառուցված է Անգլիայում նրա տան օրինակով, թե եղանք օլիմպիական կառույցներում՝ ստադիոնում, հեծանվադաշտում, ջրավազանում, վազքուղիներում: Հետո նավակով զբոսնեցինք Յարա գետի վրա և իմացանք, որ աբորիգենների լեզվով դա նշանակում է «մեծ», «շատ», և որովհետև նրանք հոգնակի չունեն, շատ մեծին ասում են «յարա–յարա»: Իսկ երեկոյան ջերմ հանդիպում ունեցանք Ավստրալիա–ՄՍՀՄ բարեկամության ընկերության տեղական ակումբում, որից հետո հյուրասեր տանտերերը մեզ ավտոմեքենաներով տարան բրուդ դրայվին թեաթր, այսինքն կինոթատրոն, որը դիտում ես քո ավտոմեքենայի մեջ նստած:

Հսկայական մի տարածություն հատվածների է բաժանված, և ամեն մի հատվածում կա փոքրիկ մի սյուն: Մուտքի մոտ տոմսի արժեքը մուծելով, ավտոմեքենայով մտնում ես հատվածներից մեկը և առանց ավտոմեքենայից դուրս գալու դիտում դիմացո կախված հսկայական էկրանին ցուցադրվող նկարը: Իսկ որպեսզի լսես նաև ձայնը, բավական է, որ փոքրիկ սյունից վերցնես և մեքենայի մեջ դնես ռեպրոդուկտորը: Հասկանալի է, որ մեծ մասամբ զույգեր կամ ընտանիքներ են գալիս բրոդվեդոուս դրայվին թեաթր, որը թարգմանաբար նշանակում է «ներս մտիր թատրոն»:

Ահա Մելբուռնում անցկացրած մի օրը: Նույնքան ծանրաբեռնված էին նաև մյուս օրերը թե՛ Մելբուռնում, թե՛ Հարավային Ավստրալիայի մայրաքաղաք Ադելաիդայում, թե Բրիզբենում և թե, ինչպես պատմեցի, ակամա երկրի մայրաքաղաք դարձած Կանբերայում:

Ըստ որում այդ «ակամա» դառնալը մինչև հիմա էլ զգացվում է: Դեռևս մայրաքաղաքի հոտ չի գալիս Կանբերայից: Ճարտարապետ Գրիֆինը իր առաջին գործն է համարել պլանավորել առանձնացված հսկայական տարածությունը և երկու միլիոն ծառեր տնկել: Առայժմ հզոր թափով միայն ծառերն են աճել: Կիլոմետրեր կարող ես անցնել մայրաքաղաքի միջով ու որևէ շենքի չհանդիպել: Երբեմն քեզ թվում է, թե վաղուց դուրս ես եկել մայրաքաղաքից, բայց ահա հայտնվում է մի շենք, և ասում են, որ դա գրեթե կենտրոնն է:

Այսինքն ուրիշ կերպ չէր էլ կարող լինել: Մոտ երկու հազար քառակուսի կիլոմետր տարածություն զրավող քաղաքում առայժմ ապրում է շուրջ 130 հազար մարդ: Քաղաքը շատ դանդաղ է կառուցվում: Գրեթե տասը տարում՝ մեկ շենք, բայց կառուցվում է խստորեն ըստ հատակագծի, որն ի վերջո իրականանալու դեպքում Կանբերան կդարձնի աշխարհի ամենապլանավորված և ամենագեղեցիկ քաղաքներից մեկը: Համոզվելու համար կարող եք դիտել Գրիֆինի հատակագիծը, որը շատ գեղեցիկ ցուցադրված է բլուրներից մեկի վրա:

Իսկ առայժմ կանգնած է միայն պառլամենտի իրոք հոյակապ շենքը, ռազմական թանգարանը՝ փառահեղ կոմպոզիցիայով, բարձր գմբեթներով, կապույտ փտրածներով և արձանախմբերով, համալսարանը, մի քանի ինստիտուտներ, բանկեր, կինոթատրոններ, դիվանագիտական թաղամասը և, ինչպես ամենուրեք, երկհարկանի ու միահարկ առանձնատները՝ ծաղիկների ու ծառերի մեջ թաղված:

Կանբերան միակ քաղաքն էր, որտեղ երրորդ օրը մեզ համար գրեթե հանգստյան օր էր, որովհետև ծրագրում կար միայն մի կետ՝ այցելություն ոչխարաբուծական ֆերմա և ճաշ հենց ֆերմայում:

Գարուն է, և վառ ծաղկել է բնությունը: Վառ սպիտակ ծաղիկները բացել է մեզ հարազատ սալորենին, թեթև հովը կրակ է թափում դեղձենիների սաղարթներից, հազար–հազար գույներ են հագել ծաղիկները:

Ճանապարհին ցուցատախտակների վրա աջ կողմում ձիեր են նկարված, իսկ ձախ կողմում՝ ոչխարներ: Ուրեմն աջում ձիաբուծարանն է:

Մեզ հետ միասին ոչխարաբուծական ֆերմա են գալիս նաև Ավստրալիայի հեռուստատեսության աշխատողները: Ու թեև այդ ժամանակ հեռուստատեսությունն Ավստրալիայում գունավոր չէր, սակայն ֆերմեր Ջոն Մորիսոնը մեզ դիմավորեց ակնհայտորեն գունավոր հեռուստատեսության համար նախատեսված զգեստով: Նրա հագին վառ կարմիր գլխարկ կար, իսկ ոտքերին վառ կանաչ կոշիկներ, պիջակը ոսկեգույն էր, իսկ տաբատը վառ կապույտ, փողկապը վառ դեղին էր, իսկ ձեռքից կախված մտրակը՝ թունդ սև: Մեր լեզվով ասած՝ ճիշտ այդպես, զատկի ձվերի նման գունավոր էր նաև նրա կինը:

– Իմ ֆերման կոչվում է Տրալի,– ներկայացավ մեզ ֆերմերը,– որովհետև այդպես է կոչվում Իռլանդիայում այն գյուղը, որտեղ իմ պապերն են ապրել: Իմ ֆերման հատուկ ցուցադրական չէ, բայց ևս միշտ ուրախ եմ հյուրեր ընդունելու համար: Ողջունում եմ ձեզ, տիկնայք և պարոնայք: Դուք սովետական առաջին մարդիկ եք, որոնց տեսնում եմ ես:

Իհարկե, անխղճություն կլիներ, եթե մենք Ավստրալիայում գոնե մի ոչխարաբուծական ֆերմայում չլինեինք: Այսպես թե այնպես այս ժողովրդի կենսամակարդակի հարցում ոչխարը վճռական դեր ունի: Ոչխարաբուծությունը Ավստրալիայի գյուղատնտեսության ամենաառաջավոր ճյուղն է և ամենակարևոր հումքը արդյունաբերության համար: Ոչխարի արտահանման գծով երկիրը երկրորդ տեղն է գրավում աշխարհում, զիջելով միայն հարևան Նոր Զելանդիային:

– Բայց հավատացեք, որ մեր բուրդն ավելի լավ է, քան նորգելանդացիներինը,– ակնհայտորեն հեռուստատեսության համար, հայացքը կինոխցիկների օբյեկտիվներին ռեկլամում էր Ջոն Մորիսոնը:– Որովհետև մենք բուրգ ենք արտադրում նուրբ գործվածքների, իսկ Նոր Զելանդիան առավելապես գորգերի համար:

Բայց ես այլևս նրան չէի կարողանում լսել: Ես մտովի Հայաստանում էի, մեր հովիվների հետ: Ես նայում էի շուրջս, հարյուրավոր հեկտարներով փռված հարթ ու կանաչ մարգագետիններին, ու մեր քարքարոտ, ապառաժ, վայրի սարերն էի տեսնում, որտեղ գարնանն անգամ խոտը դեղին է արդեն, և սիրտս ցավով ու նաև խանդադատանքով էր լցվում մեր հովիվ տղերքի նկատմամբ: Եվ ականա մտքումս կրկնում էի դառնացած.

– Սրանք էլ կասեն ոչխար ենք պահում, մեր հովիվներն էլ:

Ու հիշում էի մեր հեռուստատեսային տոնական հաղորդումներից մեկը: Հրավիրել էինք նաև մի նշանավոր հովիվ Սիսիանից: Եկել, նստել էր խռոված ու խստադեմ: Խնդրում, աղաչում էինք, որ մի քիչ բացվի, պայծառանա... Եվ տոնական հաղորդում է...

– Այ ձեր ցավը տանեմ,– մեկ էլ հանկարծ աղերսեց նա,– թողեք տուն գնամ, հիմա գելը ոչխարս տարավ, է՛...

Այնտեղ՝ ստուդիայում, մենք ծիծաղեցինք: Իսկ հիմա, ավստրալիացի ֆերմեր Ջոն Մորիսոնի ռանչոյում ծիծաղս չէր գալիս, որովհետև հիշում էի մի փոքրիկ դիալոգ ժյուլ Վեռնի «Նավապետ Գրանտի որդիները» գրքից:

«– Իսկ վայրի գազաննե՞րը,– հարցրեց Գլենարվանը:

– Ավստրալիայում գիշատիչներ չկան»:

Այո, Ավստրալիայում գայլեր չկան: Այստեղ, Կանբերայի մոտ շուրջ տարի կանաչ է խոտը, տեղումների քանակը մեծ է, փոթորիկ ու կարկուտ չեն լինում, ժայռից ցած գլորվելու վտանգը բացառված է, արջեր ու գայլեր չկան: Դրա համար էլ Ջոն Մորիսոնը իր չորս հազար հինգ հարյուր ոչխարները պահում է առանց հովվի:

Այո, այո, առանց հովվի: Հովիվներին փոխարինում են շները, իսկ շներին էլ ղեկավարում է ընդամենը մի մարդ, որը թե ավագ շնապահ է, թե ավագ հովիվ և թե գլխավոր անասնաբույժ՝ շոտլանդացի Ջեկը, որը հիմա միկրոֆոնով հեռուստադիտողներին պատմում է, թե ինչպես է վարժեցնում շներին:

– Ինչպես տեսնում եք,– ասում է նա,– մեր արոտավայրերը բաժանված են հավասար քառակուսիների, որոնք միմյանցից անջատված են ցանցերով: Ամեն մի քառակուսի ունի իր դռնակը, որ ես բացում եմ հերթականորեն: Մնացած գործը կատարում են շները:

Սրանք իմ հայրենակիցներն են, կոչվում են շոտլանդական կովիներ և...– Ջեկը ծիծաղեց՝ ցուցադրելով դեղնած, բայց ամուր ատամները, և իմ հայրենակիցների նման աշխատասեր են ու հավատարիմ:

Ջեկը կովբոյի հագուստով էր, երկարաճիտ կոշիկներով, արևառ դեմք ուներ ու լայնեզր գլխարկ, և եթե ձեռքերը խիստ կոշտացած ու կոպիտ չլինեին, կարելի էր մտածել, թե դերասան է:

Նա բավականին սահուն ու թեթև, հումորով համեմելով խոսքը, պատմում էր, թե ինչպես է վարժեցնում շներին, որոնց լրիվ դասընթացը մեկ և կես տարի է:

– Չկարծեք, թե շունը շատ ավելի էժան է նստում, քան հովիվը: Փոքրությանը մի նայեք, վարժված կովին վեց հարյուրից հազար դոլար արժե: Բայց դե առավելությունը շատ մեծ է՝ կովին ոչ խոսում է, ոչ էլ տրտնջում: Ավելին, նույնիսկ չի հաչում:

Ջեկը նորից ծիծաղեց, բայց օպերատորների դեմքերից երևի զգալով, որ չափն անցել է, շտապեց անցնել ելույթի գործնական մասին:

– Ահա դուք տեսնում եք այնտեղ, հեռվում գտնվող մեր հոտերից մեկը: Ուշադիր նայեք, աջ կողմում երեք ոչխար առանձնացել են հոտից: Հիմա ես իմ շանը կհրամայեմ, որ այդ երեք ոչխարներին ինձ մոտ բերի:

Ձեկը կռացավ, շոյեց ոտքերի տակ պառկած փոքրիկ շան բաշը, ինչ–որ բառեր շնջաց ու մեկնեց ձեռքը՝ հոտի ուղղությամբ: Կուլին վայրկենապես պոկվեց տեղից ու դեպի հոտը սլացավ: Ձեկը սուլեց: Շունը կողքի–կողքի վազելով կտրեց այդ երեք ոչխարի՝ հոտին միանալու ճանապարհը: Հարկավոր էր տեսնել, թե ինչպես էր ամբողջ հոտը ականջները խլշկոտած, ուշադիր հետևում շանը, սպասելով նրա «հրահանգներին»: Շունը շարունակ ետ ու առաջ վազելով երեք ոչխարի ու հոտի արանքում, կամաց–կամաց այդ երեք ոչխարներին նեղելով նրանց գլուխները դեպի մեզ դարձրեց և լուռ, համառ հետապնդելով բերեց–բերեց ու կանգնեցրեց կովբոյի առջև: Ու ինքը նստեց նրանց նահանջի ճանապարհի վրա և, լեզուն դուրս գցած, Ձեկին նայեց:

Դա մի զարմանալի պատկեր էր, եթե ինձ պատմեին, ազնիվ խոսք, չէի հավատա:

Երեք ահռելի, բրդոտ ոչխարներն էլ կանգնել, ասես հիպնոսացած, հմայված, շանն էին նայում:

Ձեկը մեկնեց մեր պապերի չալիկի նման մահակը, ծոված մասով բռնեց ոչխարներից մեկի ոտքը և ոչխարին մոտ քաշեց: Սա խելոք ուղիղ նստեց հովվի առաջ՝ առջևի ոտքերը հնազանդորեն փորին ծալած:

Ասես կրկեսում լինեինք:

Մենք իհարկե, ծափահարեցինք Ձեկին և խելացի շանը ծափահարեցինք, երբ նա հովվի մի նոր սուլոցից հետո այդ ոչխարներին տարավ ու նորից խառնեց հոտին:

Իսկ հետո արդեն առիթ ունեցանք հիանալու ոչխար խուզողների արվեստով: Նրանք մշտական աշխատողներ չեն, այլ հրավիրվում են խուզի ժամանակ և գործավարձ են ստանում: Հարյուր ոչխար խուզելն արժեր քսանհինգ դոլար:

Մենք լուսավոր ու լայն փարախում ծանոթացանք Ռալֆ անունով մի խուզողի հետ, որը մասնակցել էր Նոր Ձեւանդիայում տեղի ունեցող ամենամյա մրցումներին և ինը ժամում չորս հարյուր յոթանասունհինգ ոչխար էր խուզել: Բայց դարձյալ դժգոհ էր:

– Ջահել ժամանակ հինգ հարյուր ոչխար էի խուզում,– ասաց նա: Հետո հանկարծ մտածեց, թե մենք իրեն հասարակ բանվորի տեղ կդնենք և ավելացրեց շտապով:– Ես սա հենց այնպես, խնդրել են՝ օգնում եմ: Թե չէ ինքս էլ ոչխարի ֆերմա ունեմ մի հիսուն մոդնի վրա:

Ախր երևի շատ մեծ նշանակություն ունի այն, որ երկրում գայլեր կամ այլ գիշատիչներ չկան: Ուրեմն կենդանիները չգիտեն, թե ինչ բան է ահը, վախի զգացում չունեն: Դրանում մի անգամ էլ ես համոզվում՝ դիտելով, թե ինչպես են ոչխար խուզում: Այստեղ ոչխարը չեն կապում, այլ ուղղակի մտցնում են ոտքերի արանքը և խուզում: Եվ ոչ մի իրարանցում, ոչ մի մայուն: Եվ ի՛նչ բուրդ է դուրս գալիս՝ երկարամազ ու ձյունի պես ճերմակ: Ըստ որում խուզելուց հետո բուրդը իրարից չի բաժանվում, և գետին են նետում իսկը մորթու նման:

Իսկ ճաշից հետո Ջոն Մորիսոնը մեզ հրավիրեց հրապարակ, բումերանգներ նետելու: Նա ոչ այնքան մեզ, որքան հեռուստատեսության աշխատողներին բացատրում էր, թե ինչի համար է բումերանգը, որքան պարզ, նույնքան էլ անըմբռնելի այդ գենքը, նշում էր, որ կարևորը բումերանգի վրայի ակոսներն են, որոնք կենդանուի ճանկերով են փորում և, բումերանգները կինոխցիկի մոտ բերելով, ուշադրություն էր հրավիրում տարբեր բումերանգների առանձնահատկությունների վրա: Դրանից հետո նա պատրաստվեց ցուցադրական նետման և ասաց, որ հիմա իր նետած բումերանգը, օդի մեջ շրջան գծելով, նորից իր մոտ կգա:

Եվ նետեց բումերանգը:

Բայց փայտը չվերադարձավ:

Ջարմացած ու վշտացած ֆերմերը հուզմունքից հանեց գլխարկը և մի նոր բումերանգ նետեց: Բայց սատանայի բան էր՝ այդ բումերանգն էլ չվերադարձավ: Կաս-կարմիր կտրած Ջոնը նորից երկար բացատրություն տվեց, նշեց, որ հնարավոր են վրիպումներ և նետեց մի քանի բումերանգներ:

Դրանցից ոչ մեկը չվերադարձավ:

Այնքան անհարմար վիճակ էր ստեղծվել, որ մենք աղաչում էինք աստծուն, որ այդ անտեր փայտերից գոնե մեկը հետ գա: Ուղղակի երևի նյարդայնությունից կամ ուշադրությունը շեղելու համար մեր տղաներից մեկը՝ վրացի Թենգիզը, վերցրեց գետնին ընկած բումերանգներից մեկը և հենց այնպես, ինչպես հետո ինքն էր ասում, ուղղակի վրացերեն շպրտեց: Եվ պատկերացրեք բոլորիս զարմանքը, երբ փայտը օդի մեջ վայրիվերո պտտվելուց, բարձրանալուց ու իջնելուց հետո անվի նման պտտվելով եկավ ու ընկավ Թենգիզի ոտքերի տակ:

Վաղուց այդքան չէինք ծիծաղել: Բայց ի պատիվ իրեն՝ ձախորդ ֆերմերը ծիծաղում էր բոլորից բարձր և Թենգիզի ուսին թփթփացնելով ստիպում էր խոստովանել, որ նրա երակներում գոնե մի քիչ աբորիգենի արյուն կա:

Եվ Թենգիզը տեղն ու տեղը գցեց Ջոն Մորիսոնի հազիվ բարձրացած տրամադրությունը, ծիծաղելով և ասելով մաքուր անգլերենով.

– Չէ՛ մի, խոստովանեմ, որ ի՞նձ էլ ռեզերվացիա տանեք:

Դրությունն այլևս ոչ մի բումերանգ փրկել չէր կարող: Եվ մենք շտապեցինք հեռանալ Տրալի ոչխարաբուծական ֆերմայից:

Իսկ վերևում սյունից սյուն ձգված էլեկտրալարերին թառած ձայնանիշերի նման մեզ հրաժեշտ էին տալիս կարմիր գլուխներով ու կանաչ փետուրներով շատախոս թութակները:

Ավստրալիայում մեր ուղևորության վերջին օրերը Բրիզբենում էինք, հետո մի ուրիշ քաղաքում, որի անունը տալ չեմ ուզում: Ինքներդ կկռահեք, թե ինչու: Ահա հենց այդտեղ էլ ես վճռեցի քաղաքը ոչ թե ցերեկը, այլ ուշ երեկոյան դիտել: Այսինքն ավելի շուտ ես չվճռեցի:

Ուղղակի հանդիպել էի տեղի մի քանի հայերի հետ և երկար-երկար զրուցել էինք: Քիչ բան ունեն խոսելու հայերն իրար հետ, եթե հանդիպել են հանկարծ աշխարհի մի ծայրում: Իմ զրուցակիցներից մեկը մի քանի տարի առաջ իբրև զբոսաշրջիկ եղել էր հայրենիքում, խանդավառված խոսում էր Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումների, հայկական դպրոցների, ինստիտուտների, շինարարության, հուշարձանների մասին, իսկ վերջում ասաց.

– Բայց խոստովանիր, որ հայրենիքը անելու դեռ շատ բան ունի, թերություններ շատ կան. նկատի ունեմ հատկապես կենցաղային սպասարկումը և առևտրի կուլտուրան: Այստեղ մենք շատ առաջ ենք...

Խոստովանեմ, որ ինձ այսպես թե այնպես հաճելի չէին այդ խոսքերը, թեև ես մտադիր էլ չէի առարկել նրան, որովհետև նրա ասածի մեջ ճշմարտություն կար: Բայց հանկարծ բռնկվեց տանտերը և գրեթե հնալով հարցրեց անակնկալ.

– Գևորգ, Թերեզան ինչպե՞ս է, աղե՞կ է: Իր աղջիկն է,– բացատրեց նա ինձ,– տասնչորս տարեկան է:

– Աղեկ է, ի՞նչ կա,– զարմացավ Գևորգը:– Միտքդ ի՞նչ է, Հովսեփ:

– Տա՞նն է,– համառեց Հովսեփը:

– Զգիտեմ,– ավելի զարմացավ Գևորգը:– Կարծես տանը չպետք է լինի: Իսկ ի՞նչ կա:

– Իմ զավակն ալ տանը չէ: Գնանք,– դիմեց նա ինձ,– և տեսեք, թե այս կես գիշերին որտեղ են մեր զավակները:

Ահա թե ինչու իրոք կեսգիշերին ես հանկարծ հայտնվեցի փողոցում: Եվ որովհետև բոլորս էլ լարված ու լուռ էինք, իսկապես բոլորովին այլ կերպ էր երևում ամեն ինչ: Կամ գուցե պատճառն այն էր, որ զբոսաշրջիկները միայն շքամուտքից են երկիր մտնում, ավտոբուսով են շրջում և արևի լույսի տակ են տեսնում ամեն ինչ:

Ժամը տասներկուսն անց էր, բայց լեփլեցուն էին ծովափնյա այդ քաղաքի փողոցներն ու հրապարակները: Շոգ էր ու տոթ: Մենք հաճախ ենք փնթփնթում մեր երեխաների վրա, երբ «մինի» են հագնում: Մեր մինին փառք է: Այստեղ շրջում են գերմինի հագած կամ ավելի ճիշտ՝ չհագնված կանայք ու աղջիկներ, կոնակների լայն բացվածքով: Ոտաբոբիկ, կարկատված անդրավարտիքներով, երկար մազերով ծածկված քայլում են հիպիները: Ճապոնական պարուհիների նման լրիվ շպարված դեռատի աղջիկները՝ սիգարետները բերաններին, կանգնած են գիշերային բարերի անկյուններում, ոտքները լայն բացած, ինչպես պատկերազարդ ամսագրերի շապիկների վրա:

Կենտրոնական փողոցի վառ ռեկլամների վետվետուն լույսի տակ ծերունիները տաքօրինակ ճչալով լրագրերի գիշերային թողարկումներն են վաճառում: Փողոցի մի անկյունում, փոքրիկ պատվանդանի վրա տարեց մի մարդ ավետարանը ձեռքին բարձր գոգոռալով ինչ-որ անեծքներ է ուղղում ժամանակակից փչացած բարքերի դեմ, նզովում է երիտասարդության ցոփ ու նողկալի ապրելակերպը: Նրա շուրջը մի քանի օրինավոր մարդիկ են հավաքվել, լսում

են ու տարուբերում գլուխները: Մայթով անցնող հիպիները սուլում են և ինչ–որ մրգերի կեղևներ նետում ծերունու վրա, բայց նա անխռով քարոզում է.

– Ի՞նչ է ասում,– հետաքրքրվեցի ես:

– Հիմա նա ասում է, թե մարդիկ դեռևս շատ բան ունեն սովորելու կենդանիներից,– թարգմանում է Հովսեփը:– Թե մարդկանց դժբախտությունների մեծ մասը նրանից է բխում, որ մարդիկ իրար մոտենալ, իրար հետ խոսել, իրար հասկանալ չեն ուզում: Ահա,– ասում է նա,– տեսե՛լ էք, թե ինչպես են մարգագետնում կամ ճանապարհին իրար հանդիպում ձիերը: Եթե մյուս անգամ ուշադիր լինեք, կտեսնեք, որ նրանք մոտենում են իրար, կանգնում են դեմ դիմաց, գլուխ գլխի ու երկար խոսում են ձիավարի, հոտոտում են մեկմեկու: Եթե միմյանց դուր են գալիս, սկսում են արածել, խաղալ իրար հետ, բարեկամանում են: Եթե դուր չեն գալիս, շրջվում են ու գնում է ամեն մեկն իր ճանապարհով:

Մարդիկ էլ պետք է այդպես ապրեն, չպետք է խուսափեն միմյանցից, պետք է մոտենան ու փորձեն ճանաչել, հասկանալ իրար:

Քարոզիչ ծերունուց քիչ այն կողմ, մի սքանչելի բաց թափքով լիմուզինի մեջ բոլորովին ջահել տղաներ ու աղջիկներ ծխում ու զարեջուր են խմում հենց շշերից ու թիթեղյա տուփերից: Եվ շշերն ու տուփերը աղմուկով նետում են մայթին, ասֆալտի վրա:

Խանութների ցուցափեղկերը շողշողում են ապրանքների բազմազանությունից, փոքրիկ տաղավարներում գիրք վաճառողները խորամանկորեն աչքով անելով մերկ կանանցով զարդարված խաղաթղթեր են առաջարկում և ալբոմներ: Բաց գինետներից ու զարեջրատներից աղմուկ–աղաղակներ են դուրս պոռթկում և խլացնող երաժշտություն: Մթի մեջ, կարմիր լույսերի տակ, կարմիր սփռոցներով ու անձեռոցիկներով ծածկված սեղանների արանքում զարմացած ու տխուր ժպիտները դեմքերին արագ–արագ հանվում են պարուհի աղջիկները:

– Օ՛, սթրիփթիզ, վերի, վերի ինթրսթինգ,– «Էստի համեցեք» է աղաղակում փոքրիկ մի տղա:

Մեր դիմացից ջահել տղաներ ու աղջիկներ են գալիս, գրեթե անչափահասներ, նարկոմանի երեբուն քայլերով, նվաղկոտ աչքերով, ինչ–որ բաներ են բղավում անցորդների դեմքերին և այլանդակ ձայներ հանելով, քրքշալով անցնում են: Պարզապես լակոտներ, որոնց գոտիով ծեծել է պետք, բայց երևի ծեծող չունեն տանը:

Չեմ դիմանում, սա շատ նողկալի է:

– Լավ, մի՞ թե սրանք անտեր են,– ասում եմ ես,– միթե՞ սրանք ծնողներ չունեն:

– Ինչո՞ւ չունեն,– հանկարծ բղավում է Հովսեփը,– Ահա մեկը՝ պարոն Գևորգը, ահա մեկը՝ ես: Մեր երեխաներն էլ երևի ուրիշ փողոցներում են, ի՞նչ գիտեմ: Դրա համար ուզեցի, որ տեսնեք մեր քաղաքը գիշերը:

– Քիչ մը տաքացած է, բայց ճշմարիտ է,– տխուր ասում է Գևորգը:– Հոստեղ ջահելները չեն ուզեր ծնողների քովը կենալ, անկախ կյանք կուզեն: Ի՞նչ ընես, ժամանակի պահանջն է...

– Իսկ դուն կըսես կենցաղային սպասարկում, առևտուր...– դեռ հին գրույցը հիշելով, չէր հանգստանում Հովսեփը:– Հայրենիքում ասանկ բան տեսա՞ր:

– Ջանմ, ես բարեկամաբար...– արդարանում է Գևորգը:

– Չէ՛, ուրիշ տեսակ ըսիր...– նեղում է նրան Հովսեփը:

Եվ կես գիշերն անց, ծովեզրյա այդ քաղաքի փողոցներից մեկում աղմուկով վիճում էին Ավստրալիայի հայերը:

Ուրեմն մի քանի խոսք՝ նրանց մասին:

ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Ավստրալիայում հայեր շատ կան: Բայց դե «շատը» միշտ էլ հայերի համար պայմանական է, որովհետև Ավստրալիայի բոլոր հայերն իրար հետ Նոր Նորքի որևէ զանգվածում ազատ ու հանգիստ կտեղավորվեին:

Իհարկե, տարեց մարդկանցից որի հետ խոսում ես՝ Ավստրալիայում չի ծնվել: Ոմանք Լիբանանից են այստեղ հասել, ոմանք Պարսկաստանից, ոմանք Հնդկաստանից, Կանադայից, Եթովպիայից, հազար ու մի տեղից: Մի քանիսն էլ Հայաստանից են եկել: Եվ այնպես պատահեց, որ առաջինն, ում հետ ծանոթացա, հենց հինգ տարի առաջ էր վերադարձել Հայաստանից: Տիկին Ալիսը:

«Վերադարձել» խոսքը պատահաբար չօգտագործեցի: Հարցն այն է, որ Ալիսան ամուսնացած է եղել Ավստրալիայում մի անգլիացու հետ և ունեցել է երկու որդի: Երբ ամուսինը մահացել է, նա վերցրել է իր տղաներին ու եկել հայրենիք, Երևան: Տիկին Ալիսան Երևանի դպրոցներից մեկում անգլերեն է դասավանդել ու պահել զավակներին: Մեծացել են տղաները, միջնակարգ կրթություն ստացել և հանկարծ հիշել, որ իրենք հայ չեն:

– Եթե հայրս ավստրալիացի է, ուրեմն ես էլ ավստրալիացի եմ,– ասել է կրտսեր որդին՝ Ռոբերտը:– Եվ ուզում եմ իմ հայրենիքը վերադառնալ:

Երկար պատմություն է դարձել: Լուրջ ու խոհեմ մարդիկ տղաներին համոզել են ետ կանգնել այդ ճակատագրական սխալից, շատ է խնդրել նաև մայրը: Բայց տղաներն իրենցն են պնդել, և ահա հինգ տարի է, ինչ Ավստրալիայում են:

Նրանց հետ ինձ մոտ էր եկել նաև Սիդնեյի քրիստոնեական ուղղափառ եկեղեցու քահանա Արամայիս Միրզայանը, որն Ավստրալիա էր փոխադրվել Կալկաթայից և արցունքն աչքերին էր հիշում իր հանդիպումները Գարեգին Սևունցի հետ:

– Գնանք մեր ակումբը, հայեր են հավաքվել, ուզում են հայրենիքի մասին լսել,– ասաց տիկին Ալիսը:

Հինգ թույն անց մենք արդեն ընթանում էինք Սիդնեյի փողոցներով: Ավտոմեքենայի դեկին նստած էր Ռոբերտը և վարում էր ճարակորեն, բայց մի տեսակ երեխայավարի, ընդգծված, ցուցադրական:

– Երևանի ո՞ր դպրոցում էիք աշխատում,– հարցրեցի տիկին Ալիսին:

– Նոր Արեշի դպրոցում,– ասաց նա, հետո հանկարծ ծափ զարկեց,– սպասեք, սպասեք, մեր դպրոցի դիրեկտորի ազգանունն էլ Քալանթարյան էր, շատ զարգացած ու բարի մարդ էր: Սուրեն Քալանթարյան: Ձեր բարեկամը չէ՞:

– Հորեղբայրս է,– ասացի ես:– Իսկ այստե՞ղ ինչ եք անում, դարձյալ ուսուցչուհի՞ եք:

– Է՛,– հառաչեց տիկին Ալիսը,– այստեղ ուսուցչի աշխատանք գտնելը բարդ գործ է: Գալուց հետո ուղիղ երկու տարի նավահանգստում բեռնակիր էի աշխատում, պիստակի պարկեր էի կրում, մինչև որ մի կերպ հաջողվեց քարտուղարուհու տեղ գտնել ապահովագրական գործակալությունում: Ռոբերտ, հանկարծ այն փողոցը չմտնես,– զգուշացրեց նա:

– Ի՞նչ փողոց,– հարցրեցի ես:

– Որտեղ իմ հիմնարկն է: Առանց թույլտվության եմ եկել: Այսինքն խնդրեի՝ թույլ չէին տա: Եթե որևէ մեկը տեսնի, կորած եմ:

– Դո՞ւք որտեղ եք աշխատում,– հարցրեցի Ռոբերտին:

– Բեռնատարի վարորդ է,– ասաց տիկին Ալիսը ու հանկարծ որդուն նայեց գրեթե չարությամբ:– Երևանում լինեիր, կոնսերվատորիա կընդունվեիր, հիմար տղա, այս ամբողջը քո պատճառով եղավ: – Պահ,– բացականչեց Ռոբերտը,– մի հաց չի՞: Էնտեղ էլ էինք ուտում, էստեղ էլ:

– Մարդ կեցցե ոչ միայն հացիվ,– խստորեն միջամտեց տեր հայրը:

– Դե լավ,– ձեռքը թափ տվեց Ռոբերտը:

– Դու էիր մեղավոր, դու, միայն դու,– հանկարծ բղավեց Ջոնը՝ բաց ատելությամբ նայելով եղբորը:– Օ՛, ոնց եմ ատում քեզ: Ե՛ս ինչով էի մեղավոր, ես, ի՞նչ ինչու բերեցիք: Ախր ես մեռնում եմ: Այստեղ գալուց մի ամիս հետո նորից դիմում եմ տվել և հինգ տարի գրում, աղերսում եմ նորից ինձ Երևան ուղարկել, իմ հայրենիքը:

– Քո հայրենիքը Ավստրալիան է,– ընդգծելով նետեց Ռոբերտը:

– Սա քո հայրենիքն է, քո, քո նմանների,– բղավում էր Ջոնը:– Իմ հայրենիքը Հայաստանն է: Ու ես կգնամ, կտեսնեմ, ինչ էլ լինի կգնամ, այստեղից չեն թողնի, կգնամ Բեյրութից կանցնեմ, Ամերիկայից կանցնեմ, Պարսկաստանից կանցնեմ... Իբրև տուրիստ կգնամ ու կմնամ: Տեսնեմ ո՞վ կարող է ինձ մեկ էլ Հայաստանից հանել...

Երկար ժամանակ գնում էինք լուռ: Հետո տիկին Ալիսն իմ ականջին շշնջաց.

– Ահա մեր կյանքը: Ամբողջ ժամանակ սա է: Իրար հետ գրեթե չենք խոսում, որովհետև խոսում ենք թե չէ, կովում ենք: Իսկ Ջոնը ասես խելագար լինի, քուն ու հանգիստ չունի, գնացել կոմունիստների մոտ ցրիչ է աշխատում: Մայիսի 1–ին Սովետական Միության դրոշն առած փողոց է դուրս եկել: Մազ է մնացել ձերբակալեն: Ահ, գոնե միայն Ջոնին թույլ տային վերադառնալ: Նա այստեղ չի ապրի...

Ռոբերտն էլ լուռ էր: Անընդհատ թվում էր, թե ինչ–որ բան է ուզում ասել, բայց զսպում էր իրեն: Հետո հանկարծ ասաց իսկական երեխայի պես.

– Իսկ ավտոս ո՞նց է, ավտոս...

– Փառահեղ է,– ասացի ես,– հատկապես սրանց նորն ինչ ասես արժե:

– Հա,– խեղճացավ նա միանգամից,– բայց գիտե՞ք նորն ինչ արժե...

Եվ հանկարծ, առանց որևէ կապի, արագորեն հարցրեց.

– Իսկ խաշ ուտո՞ւմ եք, խաշ...

– Խա՞շ,– զարմացա ես,– իհարկե ուտում ենք, ի՞նչ կա:

– Իսկ այստեղ չեն ուտում,– զգուշավորությամբ եղբորը նայելով կմկմաց նա,– ու մեզ էլ չեն թողնում ուտել, որովհետև սխտորի հոտ է գալիս:

– Հա,– չարախնդաց Ջոնը, որն այնուամենայնիվ լսել էր:– Որովհետև կեղտոտ հայ են անվանում, ինչո՞ւ չես ասում:

Ու նորից ավտոմեքենայի մեջ աղմուկ բարձրացավ, նորից իրար կպան եղբայրները: Տեր հայրը նորից սկսեց հանդարտ ու խոհուն խրատել: Ու նորից լաց էր լինում կյանքում հանգիստ օր չտեսած, կյանքի ալիքներին նետված, շուտ, շատ շուտ ծերացած գեղեցիկ տիկին Ալիսը:

Ինձ համար դժվար է նկարագրել այդ երեկոն: Առանձնապես լացկան չեմ, բայց այդպիսի հանդիպումների ժամանակ խեղդվում եմ: Միշտ փորձում եմ խուսափել, հրաժարվել, բայց դե ի՞նչ կարող ես պատասխանել, երբ մարդիկ ուրիշ բան չեն ուզում, միայն ուզում են հայերեն լսել, հայրենիքի մասին լսել: Եվ առիթ են փնտրում, որ իրենք խոսեն: Հայերեն:

Ախր շատ տարօրինակ բան է: Այնտեղ ամեն ինչ ուրիշ տեսակ է հնչում: Ո՞վ կարող է կասկածել, որ ես ծայրեծայր կարդացել եմ Սիլվա Կապուտիկյան, Հրաչյա Հովհաննիսյան, Պարույր Սևակ, Համո Սահյան... Շատ բանաստեղծություններ անգիր գիտեմ:

Բայց երբ քունքերի մոտ ճերմակած, ծեծված տարեց մի հայ, երգելով ու շատ վատ արտասանում էր Սիլվայի «Արարատը», երբ ասում էր.

*Մեր կարոտը լեռ է դարձել,
Մի թե մի օր մեռնենք պիտի քեզնից հեռու, Արարատ...*

Բոլորը լաց էին լինում, ու ես լաց էի լինում բոլորի հետ, ամաչելով ու առանց ամաչելու արցունքներից, որովհետև այնտեղ ուրիշ, բոլորովին ուրիշ տեսակ են հնչում այդ բառերը:

Կամ երբ հրաշք մի աղջնակ Մուշեղ Իշխանի «Հայոց լեզուն» է արտասանում, և արտասանում է արդեն մի տեսակ անգլերեն առոգանությամբ, ինչպե՞ս դիմանաս:

Նայում եմ դահլիճին. աշխատող, հոգնած մարդիկ են, Պարսկաստանից եկած երեք տղաներ երևի ժամանակ էլ չեն ունեցել շորերը փոխելու և հանդիպման են եկել բանվորական կապույտ արտահագուստներով: Իսկ ընդհանրապես երիտասարդություն գրեթե չկա, մեծ մասը տարեց մարդիկ էին կամ երեխաներ:

Վաղը կլինե՞ն այս երեխաները: Կուզենա՞ն լսել հայերեն:

Իսկ երբ այսպես կոչված հանդիսավոր մասն ավարտվեց, բոլորը խառնվեցին իրար.

– Ներեցեք, Կարապետ Ազատյանը կճանչնա՞ս,– ձեռքս բռնած հարցնում է դողացող ծնոտով պառավ մի մարե և հարցնում ու հարցնում է նորից:– Կարապետ Ազատյանը կճանչնա՞ս:

– Սերո Խանգաղյանը բարևեք մեր կողմե, շատ կսիրենք անոր:

– Եղբայր, Սիրարփիին չե՞ք գիտեր, Աբովյան կապրե:

– Զավակս, ոսկերիչ Հակոբին հանդիպած չե՞ս, ասանկ խոշոր, սև աչքերով տղա է: Ինչպե՞ս կըլլա, որ չիմանաս, երևանցի չե՞ս:

Եվ բոլորը սեղմում են ձեռքդ, նայում են աչքերիդ մեջ, լաց են լինում, մրմնջում են, օրորում են գլուխները:

– Աչքերիդ մեռնեմ, ուրեմն հայրենիքից ես: Ուրեմն տեսել ես Արարատը:

– Իսկ երեխաները: Ո՞վ է սովորեցրել նրանց: Իսկ եթե չէ, հայրենիք չտեսած, հայրենիք չունեցած այդ փոքրիկներին ի՞նչն է, որ հանգիստ չի տալիս, ի՞նչն է տանջում, մղում, որ մոտեցել, գրկել են ծնկներս, մեկնում են թաթիկները ու ասում են կերկերուն.

– Հորեղբայր, մեզի հայրենիք տարեք:

– Մենք ալ հայրենիք կուգենք, հոպար...

Դե ասեք, ինչպե՞ս դիմանաս ու լաց չլինես այդ նույն երեխաների նման:

Ինչ ուզում եք մտածեք, բայց կյանքումս առաջին անգամ այստեղ, հեռավոր Ավստրալիայի Սիդնեյ քաղաքի հայկական անշուք ակումբում, ես շատ–շատ ավստացի, որ աստված չկա:

Մելբուռն: Այստեղ էլ հայեր շատ կան: Կիրակնօրյա դպրոց ունեն: Դպրոցի տեսուչ Սիրարփի Տեր Ավետիսյանը, Մելբուռնյան վարժարանի նախկին սանուհին, նոր էր վերադարձել Սովետական Հայաստանից: Պատմում էր, շողում էին աչքերը: Եվ բոլորը ակնհայտ նախանձով նայում էին նրան:

Հատկապես Նաիրի Գրիգորը: Ինքն էլ աշակերտուհու չափ է, բայց հայերեն է սովորեցնում վաթսուհինգ աշակերտի:

– Երանի հայրենիքի ուսուցիչներին,– ասում է նա,– այնտեղ երեխաներն իրենք դպրոց կշտապեն: Իսկ այստեղ մենք ենք հավաքում նրանց այս անծայր քաղաքի բոլոր անկյուններից:

Ուսուցիչ է նաև Նաիրիի եղբայրը՝ Գևորգը, բայց ուրիշ դպրոցում:

Տեղի թուրք երեխաներին անգլերեն է սովորեցնում:

Դարձյալ նույն պատմությունը: Ասես թե աշխարհում չի փոխվել ոչինչ:

Հեռախոսի զանգ: Վերցնում եմ լսափողը:

– Ալո՞, Մարի Քյուրոյանը կխոսի ձեզ հետ: Ինձի հայր սուրբն ասավ, թե հայ է եկել: Երևանի՞ց եք:

– Այո:

– Մնալո՞ւ եք:

– Ինչպե՞ս:

– Մշտապե՞ս եկած եք:

– Ոչ, ինչ եք ասում:

– Հա, սրտես մեծ քար ընկավ: Ինձ հոստեղ լավ աչքով չեն նայեր, դրովհետև մշտապես եկածներուն կասեմ՝ հիմար եք, ինչ ունեք հոս, գալիս եք կորցնելո՞ւ ձեզ: Ես արդեն գրեթե կորցրել եմ զավակներիս:

– Իսկ դո՞ւք ինչպես եք այստեղ հասել, տիկին Մարի:

– Գաղթը, տղաս, մեր ամբողջ գերդաստանից միայն ես ողջ մնացի: Մեկ վայրկյան,– դիմում է նա ինձ ու շարունակում է ինչ–որ բան ասել շշուկով անգլերեն:– Թոռնիկս էր,– ասում է նա ինձ,– բան կհարցնեք...

– Տանն անգլերեն^օ եք խոսում:

Հեռախոսի այն ծայրում Մարի Քյուրոյանը հառաչում է:

Բրիգբեն: Ավելի քան ութ հարյուր հազար բնակչություն ունի Քվինսլենդի մայրաքաղաքը: Այդ «ավելի»–ի մեջ է մտնում նաև Բրիգբենի միակ հայր՝ Ստեփան Գավուկյանը ճերմակած մազերով ու բեղերով, բարետես ու բարեկազմ մարդ է մեր հայրենակիցը, զամանակի խոշոր ու թախծոտ աչքերով:

– Ինչպե՞ս եք, հայ եղբայր,– հարցնում եմ ես:

Եվ հանկարծ այդ տարեց մարդու աչքերն արցունքոտվում են:

– Ես ի՞նչ հայ եմ,– ասում է նա:– Կինս անգլուհի է: Երկու աղջիկ ունեմ, մեկի անունը Ստեֆանի է, մյուսինը Ադրինե... հայերեն գրեթե չեն խոսեր: Եվ ո՞ւմ հետ խոսեն: Ահա այսպես էլ կապրինք: Սկիզբս գիտեմ, վերջս չեմ գիտեր: Այսպես...

Նրա բարակ ու նուրբ մատները դողում են, և ես աշխատում եմ չնայել նրա դեմքին:

– Այսպես... – ասում է նա:– Ինչպե՞ս ասեմ, որ հասկանաք ու ես էլ հասկանամ: Եթե հայ լինելու մոռանամ, ամեն ինչ լավ է, գիտե՞ք: Հիանալի կլին ունեմ, հրաշալի, խելոք դուստրեր ունեմ, լավ աշխատանք ունեմ, լավ տուն եմ կառուցել... Ամեն ինչ ունեմ, ինչ պետք է մարդուն երջանիկ լինելու համար... Եթե հայ լինելու մոռանամ:

Բայց չեմ մոռանում, մարդ աստծո, սա՞ ինչ բան է: Չեմ կարողանում մոռանալ: Եվ աչքիս մի տեսակ ավելորդ, դատարկ, տխուր, անիմաստ են դառնում աշխարհն էլ, կյանքն էլ:

Այդպես էլ ասեք Հայրենիքում:

ՖԻԶԻ

Ֆրանսիական մի հին կատակերգ կա:

«Ո՛ւր ես գնում,– ասում է աղջիկը տղային:– Ո՛ւր ես քեզ հետ տանում իմ սիրտը, իմ հոգին, իմ ուրախությունը»:

«Չէ՛, չէ՛,– պատասխանում է տղան,– ես ինձ հետ ոչ մի բեռ չեմ տանում: Ես քեզ եմ թողնում քո սիրտը, քո հոգին, քո ուրախությունը: Ես հեռուներն եմ գնում, ինձ կանչում է իմ երազի Ֆիջին»:

Թե ինչու հատկապես Ֆիջին, հայտնի չէ:

Արտասովոր ու անծանոթ անուն: Ֆիջի: Եվ հիմա մենք Ավստրալիայից Ֆիջի ենք թռչում:

Առավոտ վաղ փոքրիկ մի ինքնաթիռով Բրիզբենից թռանք Սիդնեյ, պարզապես շնչակտուր, ներերկրային օդանավակայանից ավտոբուսով միջազգային օդանավակայան հասանք, ավստրալիական դուլարները հսկիս վերածեցինք անգլիական ֆունտերի և վազելով բարձրացանք Բոինգ–707 ինքնաթիռը:

Թռչելու ենք երեք և կես ժամ, ժամում հազար կիլոմետր արագությամբ:

Դեռ նոր էինք տեղավորվել, երբ մեզ մատուցեցին ավստրալիական «Քանտաս» ավիաընկերության ատլասը: Ամենուրեք ընդգծվում էին Ֆիջիի կղզիները՝ կորած Խաղաղականի կապույտ անսահմանության մեջ:

Ես բացում եմ Ջեյմս Կուկի «Նավարկություն Խաղաղ օվկիանոսում 1776–1779 թթ.» օրագիրը:

Մեծ նավապետն ու գիտնականը գրում է.

«Ֆիջին Տոնգատաբուից երեք օրվա ճանապարհի վրա է և կղզիաբնակներն ասում են, թե այն շատ բարձր ու արգավանդ կղզի է, որտեղ բազմաթիվ խոզեր, շներ, հավեր կան և այն բոլոր պտուղներն ու արմտիքը, որ միայն աճում են այս կղզիներում: Ֆիջին Տոնգատաբուի տիրապետության տակ չէ, ընդհակառակը, նրա բնակիչները հաճախ են պատերազմում տոնգացիների դեմ: Դատելով որոշ մանրամասներից, որ հիշատակում են պատմողները, տեղի բնակիչները վախենում են ֆիջիցիներից: Եվ դա զարմանալի չէ, քանի որ իրենք խաղաղ ու մարդասեր ցեղերի են պատկանում, իսկ նրանց հակառակորդները վայրի, խիզախ և դաժան մարդակերներ են:

Որ Ֆիջիի բնակիչները մարդակերներ են, դա փաստ է, որ չեն ժխտում նաև հենց իրենք: Երբ մեր նավը կանգնած էր Տոնգատաբուում, այնտեղ եկվորներ կային Ֆիջիից, և մենք

հարցում արեցինք նրանց: Այդ մարդիկ ավելի մուգ են մյուս կողմաբնակներից, և նրանցից մեկի ձախ ականջին խոշոր անցք կար: Ականջն այնպես էր ձգված, որ ուսին էր հասնում...

...Վերադառնալով կանիբալներին, ինձ թույլ եմ տալիս հարցնել այն մարդկանց, որոնք գտնում են, թե այդ սովորությունը սննդի պակասությունից է գալիս. ի՞նչն է մղում մարդակերության նրանց, ովքեր լրիվ առատության մեջ են ապրում»:

Ինքնաթիռի ցնցումը ինձ կտրում է Կուկի այդ շատ հետաքրքիր և ոչ այնքան հուսադրող մտորումներից:

Եվ անմիջապես էլ խցիկից հայտնվում է երկրորդ օդաչուն...

– Խաղաղ օվկիանոսի այս հատվածում օդի տաք հոսանքները շատ են, – սիրալիր ժպիտով ասում է նա: – Մի անհանգստացեք, լեդիներ և ջենտլմեններ... Նման ցնցումները վտանգավոր չեն:

Մենք, իհարկե, չենք հարցնում, թե ո՞ր ցնցումներն են վտանգավոր, եթե այս անվտանգ ցնցումներից անգամ ինքնաթիռի հսկա թևերը դողում ու ճոճվում են արծվի թևերի պես:

Իսկ ներքևում օվկիանոսի անծայրածիր կապույտն է: Ոչ մի ցամաք, ոչ մի կղզի, ոչ մի կետ: Միայն երբեմն նավերի քարավաններ են հանդիպում, որ ուղտերի նման հուսահատ օրորվում են օվկիանոսի անհուն ամայության մեջ:

Հետո սկսեցին մանրիկ կղզիներ երևալ, որ ասես օազիսներ լինեին այդ կապույտ անապատում: Դա հեքիաթի նման էր: Մի կղզի՝ մի ծառ: Մի կղզի՝ երեք արմավենիներ...

Ինքնաթիռն սկսել էր ցածրանալ:

Վառվեց «Կապել փրկագոտիները» լույսը, ինքնաթիռում դադարեց աղմուկը, և ուղեկցորդուհին հայտարարեց.

– Մեր ինքնաթիռը վայրէջք է կատարում Ֆիջիի արշիպելագի Վիտիլևու կղզու Նադիի միջազգային օդանավակայանում: Ջերմաստիճանը Նադիում 30 աստիճան է:

– Եթե օդանավակայանում կոնդեյշն չեղավ, կկախվեմ, – լրջորեն ասաց մեր խմբի անդամ, գիրուկ պրոֆեսոր Լեոնիդ Մոխսենը, որի թաշկինակները նույնիսկ Միդնեյում էին քրտինքից թրջված լինում:

Ով չէ, նա հիանալի գիտեր, թե ինչ է նշանակում 30 աստիճան տաքությունը՝ օվկիանոսային խոնավության մեջ:

Պրոֆեսորը օդերևութաբանության մասնագետ էր:

Ինքնաթիռը շարունակում է իջնել ու իջնել, և հանկարծ ձախ թևի տակից մուգ կապույտի մեջ վառ կանաչ է հայտնվում:

– Ցամաք,– գոչում եմ ես կատակով:

– Դու հայերից առաջինը հայտնաբերեցիր Ֆիջին,– ծիծաղում է Ֆիջիի մասնագետ, աշխարհագրական գիտությունների թեկնածու Նինա Լեբեդևան:

Ցածում բլուրների մերկ գագաթներ են, և անտառներ ծովեզերքին: Հետո անտառները շատանում են, խտանում և նրանց արանքում ընդգծվում են կանաչ մարգագետինները՝ հատուկենտ եղեգնաձաձկ տնակներով: Տնակները փոքրիկ են ու կանգնած են ցցասյուների վրա՝ հավանաբար հեղեղումներից ապահով լինելու համար:

Հետզհետե գերակշռում են մշակված ցանքատարածությունները՝ ուղիղ կտրված հողամասեր, արմավենիների խենթացնող պուրակներ...

Թեթև մի ցնցում, և մենք արդեն Նադիի միջազգային օդանավակայանում ենք:

Առաջին տպավորությունը վառվռուն, խայտաբղետ գույների առատությունն է: Վառ, մուգ կանաչ ծառեր, ճանապարհաշինական վառ դեղին մեքենաներ, վառ կապույտ բենզինատարներ, վառ կարմիր ավտոբուսներ և վառ դարչնագույն դեմքերով մարդիկ, որոնք սև–սաթ մազերի գանգուր դեզեր ունեն գլխներին ու հպարտ աչքեր:

Շենքերը ևս խայտաբղետ են ու վառ: Հատկապես ընդգծվում է պայծառ, գրեթե կուրացնող սպիտակը:

Օդանավակայանի մուտքի երկու կողմերում կախված են հովանոցների խրձեր: Դրանք ևս բազմագույն են, հեռվից անչափ գեղեցիկ, իսկ մոտիկից կոպիտ ու պարզ: Այսինքն՝ նրանց նշանակությունը ևս պարզ է: Անձրևի ժամանակ, որպեսզի չթրջվեն, ուղևորները այդ հովանոցներով են քայլում դեպի ինքնաթիռները:

Հովանոցների այդ չքնաղ փնջերի մոտ մեզ դիմավորում է տուրիստական ֆիրմայի ներկայացուցիչ, ռուսագգի Բրինա Վլադիմիրովնան:

– Մեզ մոտ ձմեռը նոր է ավարտվել, հիմա հոկտեմբերի սկիզբն է, վաղ գարուն է... Դրա համար էլ ներեցեք, որ ցուրտ է:

Նա, իհարկե, կատակում է, բայց մենք այնպիսի վիճակի մեջ ենք, որ լրիվ կորցրել ենք հումորը, իսկ Լեոնիդ Մոխսենը պարզապես ատելությամբ է նայում թարգմանչուհուն:

Հազիվ ենք շնչում: Օդը ոչ թե խոնավ, այլ պարզապես թաց է: Մեր հագուստները թրջվել, կպել են մարմիններիս, բոլորիս դեմքերից առատորեն հոսում է քրտինքը, և մենք այլևս չենք էլ փորձում թաշկինակի օգնությամբ դիմել:

Իհարկե, ճանապարհին ճիշտ նույնպիսի եղանակ էր նաև Սինգապուրում: Ավելի վաղ ճանապարհորդություններից, հիշում եմ, որ նույն զգացումն եմ ապրել նաև Տոկիոյում, մեքսիկական Ակապուլկոյում, աֆրիկական Գանայում և Նիգերիայում: Այսինքն՝ ամենուրեք, ուր շոգ է և կողքիդ գոլորշի է արձակում օվկիանոսի կաթսան: Բայց ժամանակը երևի

մեղմացնում է տպավորությունները, որովհետև հիմա ինձ թվում է, թե ավելի գաղջ օդ երբևէ չեմ շնչել:

Անկասկած, զգացնել է տալիս նաև սառը օդ մատակարարող սարքերի՝ կոնդեյշների բացակայությունը, որից այնպես սարսափում էր օդերևութաբան պրոֆեսորը: Նա, իհարկե, չկախվեց և իսկույն էլ հնարը գտավ: Թեև սրահում կոնդեյշն չկար, բայց նա բոլոր դռները հերթականությամբ բացելով, մի պաշտոնյայի առանձնասենյակում գտավ այդ սարքից: Մենք անմիջապես մի փոքր խմբով ներս մտանք և շողոքորթությամբ արտասանեցինք Ֆիջիում մեր սովորած առաջին բառը.

– Նիսաբուլա:

Միշտ էլ հաճելի է, երբ օտարականը փորձում է խոսել քո լեզվով:

Դա սովորական ողջույն էր, բայց մեզ հնարավորություն տվեց զովանալ, նախքան կրկին ինքնաթիռ նստելը:

Այս անգամ փոքրիկ մի ինքնաթիռ Վիտիլևու կղզին դեպի արևելք ծայրեծայր կտրելով, մեկ ժամում մեզ հասցրեց հանրապետության մայրաքաղաք Սուվա:

ՓՈՔՐԻԿ ՏԵՂԵԿԱՆՔ

Ֆիջիցիները դեռևս դժվար են արտասանում հանրապետություն բառը: Որովհետև երբ մենք այնտեղ էինք, մի քանի օր անց՝ հոկտեմբերի տասին, լրանում էր հանրապետության հռչակման... ընդամենը մեկ տարին:

Իսկ դրանից առաջ Ֆիջին Անգլիայի գաղութն էր:

Ավելի ճիշտ՝ գաղութի գաղութը: Որովհետև հեռվից, ուրիշների միջոցով երկրներ տիրելու իր հին սովորությամբ Անգլիան Ֆիջին հպատակեցնելը հանձնարարել էր իր գաղութ Ավստրալիային:

Իսկ Ֆիջին հպատակեցնելը հեշտ բան չէր:

Նախ, որ այն գտնվում էր մայրցամաքներից, բանուկ խաչմերուկներից շատ ու շատ օտարված, ուղղակի Խաղաղ օվկիանոսի կենտրոնում, նույն այդ Ավստրալիայից երեք հազար կիլոմետր հեռու:

Եվ հետո, Ֆիջին մի ամբողջական տարածություն չէր, այլ բաղկացած էր Վիտիլևու և Վանուալևու խոշոր կղզիներից՝ գումարած ավելի քան 350 մեծ ու փոքր մարդաբնակ կղզիներ

և էլի ավելի քան 450 անմարդաբնակ կղզիներ: Կարճ ասած, Ֆիջին արշիպելագ էր՝ մոտ ութ հարյուր կղզիներով:

Եվ ամենահիմնականը, այդ կղզիներում ապրում էին մելնեզիացիների և պոլինեզիացիների խառնուրդ վայրի ցեղեր, որոնք հայտնի էին իրենց ռազմատենչ ու անհնազանդ բնավորությամբ, կանիբալներ էին և սովորություն չունեին մշակելու հողը:

Նրանց հնազանդեցնելու, պլանտացիաներում ստրուկներ դարձնելու ավստրալիացիների բոլոր փորձերը անհաջողությամբ պսակվեցին: Եվ գաղութարարները այլ ելք գտան:

Նրանք Հնդկաստանից մեծ քանակությամբ ընչագուրկ հնդիկներ տեղափոխեցին Ֆիջի, նրանց համար ապրելու որոշ պայմաններ ստեղծեցին և ստիպեցին առավտից իրիկուն աշխատել շաքարեղեգնի պլանտացիաներում:

Անցյալ դարի վերջում Ֆիջիում այդպես հայտնվեցին հնդիկները, որոնք այժմ երկրի բնակչության մեծամասնությունն են կազմում և Ֆիջիին տվել են «Ներքին ծովերի Հնդկաստան» նոր անունը:

Շաքարեղեգնից բացի, ֆիջիցիները զբաղվում են նաև արմավի, բանանի, ցիտրուսային կուլտուրաների արտադրությամբ, ունեն ոսկու հանքեր, որ շահագործվում են մեր դարի 30-ական թվականներից, իսկ վերջին ժամանակներս զբաղվում են նաև բրնձի մշակությամբ:

Սակայն երկրի հարստության հիմնական աղբյուրները մնում են ձկնորսությունը և տուրիզմը: Հատկապես տուրիզմը:

Մինգապուրից ու Հոնկոնգից հոգնած ու ձանձրացած հարուստները վաղուց գվարճանալու նոր վայր էին փնտրում և գտան Ֆիջին:

60-ական թվականներին Ֆիջին տարեկան 15–20 հազար տուրիստ էր ընդունում, հիմա ընդունում է 100 հազար:

Զբոսաշրջիկների համար ստեղծվել են սպասարկման և զվարճությունների ամենալավ և ամենանուրբ պայմանները:

Նրանց գայթակղելու համար Ֆիջին նույնիսկ մաքս չի դնում ներմուծվող ապրանքների վրա: Միայն թե բերեք, լցրեք: Միայն թե շատ լինեն զբոսաշրջիկները:

Եվ Խաղաղ օվկիանոսի կենտրոնում, ամենամոտ ցամաքից հազարավոր կիլոմետրերով հեռու Ֆիջիում այսօր դուք կհանդիպեք աշխարհի շատ լեզուներով խոսող մարդկանց: Բայց, իհարկե, ամենից առաջ անգլիացիների:

Անգլիան երկար ժամանակ հրաժարվում էր ինքնավարության իրավունք տալ Ֆիջիին, համոզելով, թե ֆիջիցիները դեռևս հասունացած չեն պետություն դեկլարելու համար:

Եվ թե իբր եթե իր բարի ձեռքը վերցնի Ֆիջիի վրայից, տեղացիներն ու հնդիկները անընդհատ երկպառակությունների ու գծությունների մեջ կլինեն:

Անգլիան շատ էր վստահ դրանում, որովհետև երկպառակության սերմերն ինքն էր առատորեն ցանել կղզիներում: Նա ողջ հողատարածությունները տվել էր ֆիջիցիներին, որոնք առավելապես որսորդությամբ և ձկնորսությամբ էին զբաղվում, իսկ հնդիկներին, որոնք տոհմիկ երկրագործներ էին, զրկել էր հողից:

Էլ ինչպե՞ս գծություն չծագեր:

Սակայն, ի զարմանք գաղութարարների, Ֆիջիում քաղաքացիական պատերազմ չսկսվեց:

1970 թվականի հոկտեմբերի 10-ին Ֆիջին հռչակվեց անկախ հանրապետություն:

Ֆիջին ՄԱԿ-ի անդամ է և դիվանագիտական հարաբերություններ ունի աշխարհի շատ երկրների և նրանց թվում՝ Սովետական Միության հետ:

Պետության ղեկավարը Ռաթու Քամիսեսե Մարան է, որը միաժամանակ համարվում է ֆիջիցիների գլխավոր առաջնորդը:

Բայց ձևականորեն պետության ղեկավարը շարունակում է համարվել Անգլիայի թագուհին, այսինքն այնպես, ինչպես Ավստրալիայում, Նոր Զելանդիայում կամ բրիտանական ազգերի համագործակցության որևէ այլ երկրում:

ՄԵՐ ՈՒՂԵԿՑՈՐԴ ԼԵՍՍԻՆ

– Զգիտենք ինչպես համոզենք, որ մեր աննման թագուհին մի անգամ էլ Ֆիջի գա, – խորամանկորեն ժպտալով հառաչում է մեր նոր ուղեկցորդը՝ Ֆիջիցի Լեսսին:

Նա բարձրահասակ, մկանուտ մարդ է՝ դարչնագույն դեմքով և առատ սև մազերով: Մարմինը ձիգ է, հպարտ, իսկ հագին ունի միայն մի կարճ տաբատ: Բայց ամենազարմանալին աչքերն են՝ խոշոր ու սև, որոնցում հումորը, հավատը, անվստահությունը, ատելությունը, համակրանքը կայծակնորեն հաջորդում են մեկը մյուսին:

Զգիտես ինչու, ես նրան ականա հուրոնին եմ նմանեցնում, այն հուրոնին, որին նկարագրել է Ֆենիմոր Կուպերը «Վերջին մոհիկանը» գրքում:

Հիմա նրա աչքերը ժպտում են:

– Զգիտենք ինչպես համոզենք, որ մեր աննման թագուհին մի անգամ էլ Ֆիջի գա, – խորամանկորեն հառաչում է նա ու սպասում մեր հարցին:

Եվ հարցը չի ուշանում.

– Ինչո՞ւ, պարոն Լեսսի:

– Որովհետև, երբ անցյալ տարի գալու էր, նրան լավ դիմավորելու համար արագ–արագ կառուցվեց այս հիանալի պողոտան, որով հիմա գնում է մեր ավտոբուսը: Որ նորից գալու լինի, մերոնք դարձյալ գոնե մի փողոց ու մի քանի նոր շենք կկառուցեն: Ա՛յդ կմնա...

Եվ ծիծաղում է՝ մերկացնելով փողոսկրի պես սպիտակ ու ամուր ատամները:

Նա չգիտի մեզ: Եվ դա հասկանալի է: Մենք սովետական առաջին զբոսաշրջիկներն ենք, որ հասել ենք Ֆիջի: Նա շատ հեռավոր պատկերացում ունի Սովետական Միության մասին:

Նրա համար մենք սովորական սպիտակամորթներ ենք, որոնց նա պարտավոր է սպասարկել, բայց որոնց ատում է հոգու ամբողջ ուժով և չի կարողանում թաքցնել այդ ատելությունը:

Նրա աչքերը հենց այդ ատելությամբ էին լցված, երբ գավառագիտական թանգարանում ցույց տալով Ֆիջիի մի բնակավայրի մակետը, հանկարծ ասաց չարությամբ.

– Այո, այո, սա մեր գյուղն է: Այստեղ Ֆիջիցիներ են ապրում: Այ, եթե դուք մտնեք մեր գյուղը, կտեսնեք, թե որքան լավ կընդունեն ձեզ: Կուրախանան, կհյուրասիրեն ձեզ, կպարեն ու կերգեն ձեզ համար: Ոչ թե ձեզ նման,– ավելացրեց նա արհամարհանքով:– Երբ մենք ձեր բակն ենք մտնում, շներ եք բաց թողնում մեզ վրա:

Այսինքն՝ ինչո՞ւ միայն Լեսսին: Ֆիջիում ընդհանրապես շատ աղոտ պատկերացում ունեն մեր երկրի մասին: Նույնիսկ Սուվայի համալսարանում մի քանի դասախոսներ և ուսանողներ մոտավորապես այսպիսի հարցեր էին տալիս մեզ.

– Դուք որևէ սեփական իր ունե՞ք:

– Իսկ կանայք սեփական՞ են:

– Ի՞նչ հակասություն կա բանվորի և գյուղացու միջև:

– Ձեզ մոտ որևէ եկեղեցի կա՞: Մենք գիտենք, որ հավատի համար ձեզ մոտ հալածում են:

– Ճի՞շտ է, որ դուք արջերի հետ եք ապրում:

Այդտեղ արդեն չդիմացա.

– Ձեզ մեզ մոտ նույնիսկ առաջին դասարան չէին ընդունի,– ասացի ես սպիտակամորթ դասախոսներից մեկին:

Բայց, իհարկե, Լեսսիի հետ մենք այլ կերպ խոսեցինք: Մենք փաստորեն փոխեցինք մեր դերերը: Մեր ամբողջ խումբը դարձավ նրա ուղեկցորդն ու դասախոսը:

Լեսսին լսում էր մեզ լայն բացված աչքերով, որոնցում կրկին արագորեն իրար էին հաջորդում անվստահությունն ու հավատը: Այդքան մանկական, դուրահավատ աչքեր ես կյանքումս չեմ տեսել: Երկար–երկար լսում էր, հետո ասաց.

– Հիմա հասկանում եմ, թե ինչու ձեր մասին մեզ ոչինչ չեն պատմում:

Եվ փոխվեց միանգամից: Դարձավ սիրալիր ու բարեհամբույր, դարձավ աշխույժ ու կատակասեր: Անսպառ հումոր ուներ այդ ֆիջիցին:

Թանգարանում, երբ ցույց էր տալիս ֆիջիցի աղջիկների միակ հագուստը՝ արմավենու տերևներից հյուսված կարճ գոտակապը, ասում էր.

– Մենք շատ առաջադեմ ժողովուրդ ենք: Մեր աղջիկները դեռ շատ հնում գիտեին մինի շրջագգեստի առավելությունը մաքսիի նկատմամբ: Իսկ դուք նոր եք սովորում:

Լեսսին թանգարանում մեզ ցույց էր տալիս ֆիջիցիների կանիբալիզմը հաստատող զանազան գործիքներ, փայտե պատառաքաղներ ու թասեր և մեկնաբանում յուրովի հումորով:

– Շատերը կարծում են, թե մեր պապերը հենց այնպես վերցրել ու կերել են մարդկանց: Ամենին: Նրանք կերել են իրենց հակառակորդների ամենանուրբ մասերը միայն՝ իբրև դելիկատես: Սիրտը, թոքերը, լեզուն: Պատմում են, որ սպիտակների հետ է գործը դժվար եղել: Առաջին սպիտակամորթի մարմնի ոտները խաշել են, խաշել, փորձել են ու տեսել, որ եփված չէ: Նորից են խաշել, երկար–երկար քաշքշել են ատամներով, բայց դարձյալ ոչինչ չի ստացվել: Եվ ի՞նչ, հետագայում պարզվել է, որ դա կոշիկ է եղել:

Լեսսին ծիծաղում է սրտանց. բայց եթե անկեղծ խոսենք, մեր ծիծաղն առանձնապես չի գալիս, երբ դիտում ենք մարդակերության այդ ողջ խոհանոցը: Հետո լրջանում է, և նրա աչքերում նորից ատելություն է վառվում:

– Սպիտակամորթները մեզանից շատ արագ սովորեցին մարդակերությունը: Մենք վաղուց ենք մոռացել, իսկ նրանք շարունակում են: Նրանք սոսկումով են լսում, որ տարիներ առաջ մենք մի մարդ ենք սպանել, իսկ իրենք սպանում են միլիոնների, ամբողջ ժողովուրդների, սպանում են ամեն օր, ամեն ժամ...

Ու դեռ մեզ են անվանում մարդակերներ...

Որքա՛ն անմեղ մարդիկ կոտորվեցին անցյալ պատերազմի ժամանակ, որին մենք էլ ենք մասնակցել: Տեսեք այս հրանոթը...

Դա տասներկու դյույմանոց հրանոթ էր, որոնցով ֆիջիցիները պաշտպանվում էին ճապոնացիներից երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին:

Բայց թանգարանի զարդն, իհարկե, կանոնն է:

Երեսունհինգ մետր երկարությամբ այդ հսկա նավակում երկու հարյուր ռազմիկներ են տեղավորվել: Կայմի բարձրությունը քսանհինգ մետր է: Ամեն մի թիակը ղեկավարելու համար պետք են եղել տասը ռազմիկներ: Կանոնի պատրաստումը տևել է տասը տարի: Ըստ ավանդության, այս կանոն պատկանել է Դակումբար առաջնորդին, որին առաջինն է հաջողվել իր տիրապետության տակ վերցնել Ֆիջիի բոլոր կղզիները: Յուրաքանչյուր կանոն ունեցել է իր անունը: Թանգարանում դրված կանոնի անունն էր Ռամա–ռամա, որ ֆիջիերեն մոտավորապես նշանակում է «Ձերդ գերազանցություն»:

Գավառագիտական թանգարանում շատ նմուշներ կային, որոնք պատմում էին ֆիջիցիների կյանքի, ապրելակերպի, կենցաղի, երկրի բուսական ու կենդանական զարմանալի հարուստ աշխարհի մասին: Հատկապես բազմազան ու շլացուցիչ էր թռչունների բաժինը: Եվ առանձնապես գեղեցիկ արքայական կոչվող մի խոշոր թռչուն, որի փետուրները հուրհրում էին ծիածանի բոլոր գույներով: Այդ փետուրները դեռ դարեր առաջ Ֆիջիի էքսպորտի զարդն են կազմել: Դրանց մասին գրում է նույնիսկ նավապետ Կուկը՝ զարմացած ու հիացած: Շատ արժեքավոր ու թանկ այդ փետուրները առաջնորդների գլուխներն են զարդարել միայն:

Անհնարին է անտարբեր անցնել օձերի կողքով: Դրանք գեղեցիկ են ու ահավոր: Կղզիներում գերակշռում են սև–սպիտակ շերտավոր օձերը:

– Թունավո՞ր են,– հարցնում ենք Լեսսիին:

– Գիտնականներն ասում են, թե թունավոր են,– իրեն հատուկ հումորով բացատրում է մեր ուղեկցորդը,– սակայն երդվում եմ, որ փրկչի ծննդից ի վեր դեռ ոչ մի ֆիջիցի օձի խայթից չի մեռել: Խոշորությանը մի նայեք, մեր օձերը մարդ չեն ուտում: Ընդհակառակը, մենք ենք ուտում օձերին և այն էլ մեծ բավականությամբ: Շատ համեղ միս ունեն: Տվեք ֆիջիցուն հավ և օձ, և նա առանց տատանվելու կնախընտրի օձը: Այսինքն՝ կարող եմ գրագ գալ ձեզ հետ, որ երբ ձեզ մատուցեն հավով և օձով պատրաստած ապուր, դուք էլ օձինը կհավանեք: Մենք առայժմ օձի ապուրը շենք մտցնում ճաշացանկերի մեջ, որովհետև մեր հյուրերը վախենում են: Բայց կտեսնեք, մեկ–երկու տարի հետո նրանք կասեն:

– Օձի ապուր բերեք: Թե չէ էլ ինչո՞ւ ենք հասել Ֆիջի:

Ֆիջիցի դպրոցականների մի խումբ է մտնում թանգարան:

Հավանաբար կողքի կղզիներից են: Բոլորն էլ դպրոցական համազգեստով են, գեղեցիկ ու մաքուր և բոլորն էլ անհնազանդ մազերի դեզերով, որոնք ուղիղ վեր են բարձրանում: Ի դեպ, միայն տեսնել է պետք, թե սևամորթ երեխաներն ինչպես են տառապում՝ իրենց գանգուր մազերը ուղղելու, հարթելու համար:

Իրոք որ մարդ ուզում է այն, ինչ ինքը չունի:

Ախր մեր երեխաները (ծնողների մասին այլևս չեմ խոսում) ինչ ասես անում են, որ գանգրացնեն իրենց մազերը՝ փաթաթում են թելերով, հյուսում են, տաքացնում ու այրում են վարսերը: Եվ ամեն ժամ ստուգում են, թե ինչ հաջողությունների են հասել:

Իսկ թխամորթների մոտ՝ հակառակը: Ֆիջիում էլ նույնն էր, բայց առավելապես ցայտուն էր զգացվում Գանայում և Նիգերիայում: Այնտեղ մատնաչափ երեխաների մազերը հյուսում են, փաթաթում, տաքացնում ու այրում, որպեսզի գոնե մի քիչ ուղղվեն:

Դա մեզ համար շատ ծիծաղելի էր ու արտառոց:

Արտառոց էր նաև, թե նրանք ինչպես էին ծանոթանում իրենց պատմությանը Սուվայի գավառագլխական այդ թանգարանում: Ցույց էին տալիս իրերն ու ծիծաղում, որովհետև հավանաբար իրենց տանն էլ կային դրանցից: Դե, ո՞ր ֆիջիցի երեխան կզարմանա՝ տեսնելով գոանա մողեսը՝ կանաչ, սոսկալի երկար մարմնով: Կամ, ասենք, դիմակները, որ պատրաստված են արմավի ընկույզից: Իսկ փայտե բարձերը տեսնելով, իհարկե, արդեն զարմանում են: Ինչպե՞ս են իրենց նախնիները քնել փայտե այդ չոր բարձերի վրա:

– Սրանք մեր հարուստների երեխաներն են, – ասում է Լեսսին, այս անգամ աչքերում մի տեսակ նախանձ: – Որովհետև մեզ մոտ վճարովի է ուսումը և պարտադիր չէ: Այ, դուք պատմում էիք ձեր երեխաների մասին, և ես իմ սրտում լալիս էի:

Կգա՞ այն օրը, որ մեր բոլոր երեխաներն էլ սովորեն:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Այո, այո, Ֆիջիի մայրաքաղաքը համալսարան ունի: Ճիշտ է, նոր է բացվել, ճիշտ է, այս տարի միայն առաջին շրջանավարտներն է տալու: Բայց վերջապես ունի:

– Դա անկախության համար մեր մղած կռվում առաջին մեծ հաղթանակն էր, – ասաց համալսարանի վիցեպրեզիդենտ Գոլի Ավեմանը:

Մենք համալսարան գնացինք Ֆիջիի գյուղատնտեսական կենտրոնում լինելուց հետո: Սա փաստորեն փորձակայան է, որտեղ ցանում, մշակում են գյուղատնտեսական բազմապիսի կուլտուրաներ՝ տնտեսության մեջ օգտագործելու համար:

Հսկայական տարածության վրա ծավալվել են բրնձի պլանտացիաները: Բրնձի երկու բերք են ստանում այստեղ և այն էլ բարձր բերք՝ մեկ ակրից 700 կիլոգրամ: Հիմա փորձեր են կատարում երրորդ բերքը ստանալու: Եվ մեծ հույսեր ունեն: Շատ տեղերում պլանտացիաները ծածկված էին մանրիկ ցանցով՝ բերքը թռչուններից պաշտպանելու համար:

Բրնձի պլանտացիաներին հաջորդում էին կասավայի, որը մեր կարտոֆիլին է փոխարինում, և թարոյի պլանտացիաները:

Բայց մեզ համար ամենահետաքրքիրը այգիներն էին: Ի՞նչ զարմանահրաշ ծառեր են աճում Ֆիջիում: Ահա հացի ծառերը՝ խոշոր, կլոր պտուղներով, որոնցից այլուր են ստանում մարդիկ:

Ահա կակառոյի թփուտները, բանանի անտառները, որոնց տակ, ատելություն արտահայտող մեր հայացքի ներքո, խոզերն անտարբեր ծամում էին բանանի հսկայական ողկույզները:

Ահա և Ֆիջիի անտառների գեղեցկուհին՝ պոնսիանան՝ վառ խոշոր ծաղիկներով:

Եվ բուսականությամբ այսքան հարուստ երկրում գյուղատնտեսական որևէ հաստատություն չկա: Չկա նաև տեխնիկական հաստատություն, և դա շատ հատուկ է գաղութային երկրներին: Գաղութարարներին ձեռնտու չէ, որ դրության տերը տեղական տեխնիկական մտավորականությունը դառնա: Անցեք գաղութային որ երկրով ուզում եք՝ գործարաններում բանվորները բնիկներ են, ինժեներները՝ սպիտակամորթներ: Նույնն է նաև հանքերում, գյուղատնտեսական կենտրոններում, ամենուրեք: Եթե բացում էլ են որևէ ուսումնական հաստատություն, ապա միայն մանկավարժություն կամ հումանիտար այլ առարկաներ են դասավանդում այնտեղ:

Ուրեմն, ինչպե՞ս է Ֆիջիում, նորաստեղծ հանրապետությունն ի՞նչ քայլեր է անում սեփական տեխնիկական մտավորականություն ստեղծելու ուղղությամբ: Ահա այս հարցերն էին հետաքրքրում մեզ, երբ ցանկություն հայտնեցինք լինելու Սուվայի համալսարանում, որը նաև Հարավային Խաղաղականի համալսարան է կոչվում:

Համալսարանի շենքերը սկզբում շատ տարօրինակ տպավորություն թողեցին մեզ վրա: Մեծ մասամբ միահարկ շինություններ էին և անգարներ, որոնք կանգնած էին ուղիղ օվկիանոսի ափին: Բայց մեր զարմանքը շուտ փարատվեց: Անմիջապես բացատրեցին, որ այդ ողջ տարածությունը սկզբում պատկանել է Նոր Զելանդիայի ռազմաօդային ուժերին: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ և հետո այստեղ բազա է եղել նորզելանդական թռչող նավակների համար:

Հետո հնացել, շարքից դուրս են եկել թռչող նավակները, բազան սկսել է ծառայել Նոր Զելանդիայի քաղաքացիական օդային նավատորմին, իսկ երկու տարի առաջ վերջնականապես փակվել է:

Եվ ահա նախկին ռազմական բազայի տեղում այժմ Սուվայի համալսարանն է:

Սրա մեջ կարծես ինչ-որ խորհուրդ կա:

Համալսարանում սովորում են 650 ուսանող Ֆիջիի շատ կղզիներից և հարևան այլ երկրներից՝ Սողոմոնյան կղզիներից, Տակելաուից, Տանգանիկայից, կարճ ասած՝ Խաղաղ օվկիանոսի այդ մասում գտնվող բոլոր այն կղզիներից, որտեղ անգլերեն են խոսում:

Համալսարանն ունի երեք ֆակուլտետ՝ ռեսուրսների ուսումնասիրության, սոցիոլոգիայի ու հասարակական գիտությունների և մանկավարժության: Եվ մի բաժին, որին շատ մեծ նշանակություն են տալիս, կոչվում է վարչական ղեկավարման բաժին:

Ես երկար զրուցում էի այդ բաժնի ուսանողուհիներից մեկի՝ Անայի հետ:

– Գաղութային Ֆիջիի ամբողջ պատմության ընթացքում վարչական–տնտեսական օրգանները ղեկավարել են անգլիացիները: Եվ այժմ, երբ անկախություն ենք ձեռք բերել, պարզվել է, որ մենք իսկապես հիմնարկների ղեկավարներ չունենք,– ասում է Անան:– Դրա համար էլ հիմա շտապ սովորում ենք:

Նա ֆիջիուհի է, Սուվայից, մանրիկ գանգուր մազեր ունի, որոնց մեջ պահում է գնդիկավոր ինքնահոսը և մի մատիտ, այնպես, ինչպես մեր արհեստավորներն են ականջի ետևում պահում: Դեղին թեթև զգեստ ունի և քայլում է ոտաբոբիկ:

– Հե՛ջտ է համալսարան ընդունվելը,– հարցնում եմ ես:

– Ի՛նչ եք ասում,– զարմանում է Անան:– Հեջտը միայն ունևորների համար է: Շատ մեծ է ուսման վարձը: Իսկ ովքեր կղզիներից են գալիս, ուսման սովորական վարձից բացի, այդ կղզիների կառավարություններն իրենց յուրաքանչյուր ուսանողի համար տարեկան պետք է վճարեն ևս հինգ հարյուր հիսուն ֆիջիական դոլար:

– Դե, ունևորների համար երևի ամեն ինչ էլ հեջտ է,– ասում եմ ես:

Անան անմիջապես համաձայնում է:

– Այո,– ասում է նա,– մեզ մոտ հարուստները իրավունք ունեն նույնիսկ մի քանի կլին ունենալ:

– Իսկ ձեր հա՞յրը:

– Իմ հայրը ուսուցիչ է,– ծիծաղում է Անան,– իսկ ուսուցիչները, որքան գիտեմ, ոչ մի տեղ հարուստ չեն: Ի դեպ, ուսուցիչ է նաև մայրս: Դրա համար էլ մեր տանը ընդամենը մի երեխա կա: Եթե թույլ կտաք՝ ինձ կոմպլիմենտ անել:

– Ուրեմն, ինչպե՞ս է, որ դուք էլ մանկավարժություն չեք սովորում:

Անան համարյա տխրում է:

– Շատ էի ուզում: Դիմել էի մանկավարժականի համար: Բայց ինձ ասացին, որ ժամանակն է պետականորեն մտածելու: Որ մենք արդեն պետություն ունենք, իսկ ի՞նչ պետություն, առանց պետական ծառայողների:

– Ճիշտ են ասել,– ասացի ես:

– Իսկ ես էլի երագում եմ ուսուցչուհի դառնալ: Եվ երագում եմ, որ մեր դպրոցներում անվճար լինի ուսումը և պարտադիր: Եվ երագում եմ, որ մեր դպրոցներում հիմնական լեզուն ֆիջիերենը և հնդկերենը լինեն: Այնինչ իրենց մայրենի լեզվով շաբաթական ընդամենը մի դաս են անցնում ֆիջիցիները:

Մեր գրույցին խառնվում են մի խումբ դասախոսներ: Անգլիացիները կարճ տաբատներով են, բոքիկ ոտքներին՝ բոկոտիկներ: Տեղացիները հագել էին կանացի կիսաշրջագգեստների նման ինչ-որ բան՝ միայն թե կողքի գրպաններով:

Նրանք հարցերի տարափ են տեղում մեզ վրա:

– Իսկ ձեզ մոտ ինչպե՞ս է ազգային լեզուների դրվածքը:

– Ուսումն իսկապե՞ս պարտադիր է:

– Իրավունք ունի՞ մարդը աշխատելու և սովորելու:

– Աշխատանք գտնելը հե՞շտ է:

Համալսարանի դասախոսներ են, բայց նրանք էլ շատ քիչ բան գիտեն մեր երկրի մասին:

– Ես ձեր երկիրը լավ գիտեմ: Սովետական քաղաքականություն եմ ուսումնասիրում,– ասում է անգլիացի դասախոս Հարրի Լիտմանը:

– Իսկ ի՞նչ գրքերով եք ուսումնասիրում սովետական քաղաքականությունը,– հարցնում եմ ես:

– Ամերիկյան գրքերով,– ասում է նա:– Մեր համալսարանի գրադարանում կան:

Ես արդեն եղել էի այդ գրադարանում: Ծանոթացել Սովետական Միության վերաբերյալ «գրքերին»: Երկու-երեք կասկածելի բրոշյուրներ կային միայն և մի հաստափոր գիրք՝ «Կոմունիզմի պրոբլեմները» խորագրով, բոլորն էլ հրատարակված ԱՄՆ-ում:

– Այդ գրքերով ոչ շատ բան կիմանաք, ոչ ճիշտ,– ասաց մեր Նինա Լեբեդևան:

– Իսկ դուք մեզ գրքեր ուղարկեք,– հարձակվեցին մեզ վրա մյուս դասախոսները:– Կարծում եք մենք չե՞նք ուզում ճշմարտությունն իմանալ: Ֆիջիական մի առած կա, ասում է. «Ով թարո ունի, թարո է ուտում, ով արմավ ունի՝ արմավ»:

– Բոլոր ազգերն էլ նման առածներ ունեն,– ասում եմ ես, Նինա Լեբեդևայի հետ մի կերպ թարգմանելով մեր «Կար՝ կերանք ո՞չ» անեկդոտը:

Նրանք ծիծաղում են սրտանց, մանկան նման, հատկապես ֆիջիցիները: Երբ նրանք ծիծաղում են, շատ են գեղեցկանում:

Հետո մեր խմբի ղեկավարը՝ սովետա-ավստրալիական բարեկամության ընկերության պատասխանատու քարտուղար Վլադիմիր Մոսկոն ասում է.

– Շուտով մեր պետությունները դիվանագիտական հարաբերությունների մեջ կմտնեն: Այդ ժամանակ դուք կստանաք ձեզ հետաքրքրող գրքերը:

Ֆիջիում մեր գտնվելուց ուղիղ մեկ տարի անց Սովետական Միությունն ու Ֆիջիի հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին՝ դեսպանությունների մակարդակով:

Հիմա, անկասկած, մեր բարեկամներն ավելի լավ և ավելի ճիշտ տեղեկություններ ունեն մեր երկրի մասին:

Հետո մենք երկար զրուցում էինք նորգելանդական թռչող նավակների նախկին անգարների մոտ, որտեղ հիմա համալսարանի ավտոմեքենաներն էին վերանորոգում և տեղավորված էին ուսումնական լաբորատորիաներն ու արհեստանոցները:

Վերջին անգարի մոտից կարմրագույն ճանապարհն ուղիղ լողափ էր իջնում: Հեռվում երևում էր փոքրիկ կանաչ մի կղզի: Երկու օր հետո այնտեղ ենք գնալու: Մեր դեմքերին աստվածային հով էր փչում՝ իր հետ բերելով օվկիանոսում կորած անտառների բույրը:

Ժամանակն էր հրաժեշտ տալու մեր նոր բարեկամներին, բայց ինչպես արդեն ասել եմ, նրանք առանց հումորի ձեզ բաց չեն թողնի:

– Վերջին հարցը,– աղերսանքով ասաց ֆիջիցի մի դասախոս,– ձեզ շատ հոգնեցրինք, բայց ես մի հարց էլ ունեմ:

– Խնդրե՛մ, խնդրե՛մ,– բոլորիս անունից սիրալիր ասաց պրոֆեսոր Մոիսենը:

– Ո՞վ է ձեր համալսարանի ռեկտորը:

– Մե՞ր, ո՞ր համալսարանի: Մենք բազմաթիվ համալսարաններ ունենք:

– Բազմաթի՞վ: Լավ, ամենամեծ համալսարանինը:

– Ամենամեծը Լոմոնոսովի անվան համալսարանն է: Ռեկտորն է ակադեմիկոս...

– Ակադեմիկո՞ս,– գրեթե արհամարհանքով հարցրեց ֆիջիցին:

– Ակադեմիկոս, իսկ ի՞նչ կա որ:

– Այն կա, որ մեր համալսարանի ռեկտորը ոչ թե սովորական ինչ–որ ակադեմիկոս է, այլ թագավոր:

– Թագավո՞ր,– մեր հերթին զարմացանք մենք:– Ի՞նչ թագավոր՝ հանրապետությունում: Որտե՞ղ է նա: Կարո՞ղ ենք նրան տեսնել: Վատ չէր լինի գոնե մի կենդանի թագավոր տեսնել:

– Հարցերին պատասխանում եմ հերթով,– ծիծաղեց ֆիջիցին:– Նախ՝ մեր հանրապետությունում իսկապես որ թե՛ թագավորներ կան, թե՛ առաջնորդներ: Երկրորդ՝ մեր ռեկտորը իրոք որ թագավոր է՝ Տոնգի թագավորության թագավորը: Նա այստեղ չէ: Նա գալիս

է միայն դիպումների հանձնման ժամանակ: Եվ քանի որ մեր համալսարանը դեռևս շրջանավարտներ չի տվել, ուրեմն ո՛չ միայն դուք, մենք էլ չենք տեսել նրան:

ՄԻ ՏՈՒՆ ԼԻՔԸ ՖԻԶԻ

Վաղ առավոտից տրոպիկական այնպիսի անձրև սկսվեց, որ անգամ երկու-երեք քայլի վրա չէր երևում ոչինչ: Ուվքեր ջունգլիներում չեն եղել, միևնույն է, չեն կարող պատկերացնել, թե ինչ բան է դա: Հավանաբար, «անձրևը թափվում էր հեղեղի նման» արտահայտությունը հենց այստեղ էլ ծնվել է:

Արևոտ առավոտ է: Շոգ: Ու մեկ էլ անսպասելի, միանգամից, ինչպես հեքիաթներում նկարագրվում, հանկարծ պատռվում է երկինքը և անձրևի տարափ է սկսվում: Աղոտանում և անհետանում են շենքերի ուրվագծերը, ամեն ինչ մշուշվում, հալվում, ձուլվում է անձրևի հետ: Առանց այդ էլ գաղջ օդը պարզապես վերածվում է ջրի և անհնար է դառնում շնչելը: Հասկանալի է, որ դադարեցվում է տրանսպորտի բոլոր տեսակների շարժումը: Եվ ոչ միայն տրանսպորտի: Մարդիկ էլ են կանգ առնում ու կախում են գլուխները, որպեսզի իրենց մարմնով օդային փոքրիկ տարածությունն ստեղծեն՝ մինչև որն է ապաստարան գտնելը: Սարսափելի է հորդառատ անձրևը տրոպիկայում և բարեբախտություն, որ երկար չի տևում:

Ինչպես հանկարծակի սկսվել էր, այնպես էլ անսպասելիորեն կտրվեց: Նորից վառ փայլեց արեգակը, և օդը ավելի խեղդուկ դարձավ: Գոլորշի ծխացող փողոցները լցվեցին մանուկներով: Նրանք ամենուրեք են, և կարծես միայն մի նպատակ ունեն՝ հետապնդել զբոսաշրջիկներին: Նրանք վառ դեղին ծաղիկների ինչ-որ պսակներ են մեկնում մարդկանց ու պարզապես ստիպում գնել: Փոքրիկ տուփերը ձեռքներին, առանց հարցնելու ծնկում են ոտքերիդ առաջ և խոզանակներով սկսում մաքրել կոշիկներդ, որոնք դրա կարիքը չունեն: Բայց փոխարենը այդ փոքրիկ ֆիջիցիները կարիքի մեջ են: Նրանք տուն են պահում: Նրանք ստիպված են աշխատել:

Եվ առավոտից մինչև ուշ գիշեր վազվզում են քաղաքի նեղիկ փողոցներով:

Սուվան տարածված քաղաք է, բայց մեծ չէ: Գերակշռում են միահարկ և երկհարկ տները: Բարձրահարկ շենքերը միայն հյուրանոցներն են ու բանկերը և մեկ էլ բրիտանական «Շելլ», «ԲՓ» նավթային ընկերությունների մասնաճյուղերի շենքերը: Ընկերություններ, որոնք աշխարհի գրեթե բոլոր ծայրերն են հասել:

Մեր հյուրանոցի առջևում հսկա արմավենիներից խրճերով կախված են կոկոսները: Ինչ-որ տարօրինակ, վիթխարի ծառեր վերնից ասես իրենց արմատներն են կախել ցած: Ամենուրեք վառ ներկված ցուցատախտակներն ազդարարում են, թե պետք է զգուշանալ ֆիջիական ինչ-որ միջատից, որի խայթը մահացու է: Բայց թե ինչպես պետք է զգուշանալ, գոնե մեզ ոչ ոք հարկ չի համարում բացատրել: Փոխարենը բացատրության ոչ մի կարիք չունեն ճշացող լուսային ռեկլամները, որոնք վառվում են գիշեր-ցերեկ:

«Գնեցեք «Ասֆատ» սիգարետներ»:

«Դուք այսօր դեռ չե՞ք խմել «Շոտլանդական վիսկի»:

«Շոշափիր գրպանդ. դու դեռ «Փել մել» սիգարեթ չես գնել»:

««Շելլ» բենզինը ռեկլամի կարիք չունի»:

Այս վերջին «կարիք չունեցող» ռեկլամը հատկապես ամենուրեք է:

Մենք գնում ենք իսկական ֆիջիական գյուղ:

Այդպես ասաց մեր ուղեկցորդ Լեսսին: Եվ հատուկ ընդգծեց «իսկական» բառը: Ընդգծեց հեզանքով:

– Որովհետև, – ասաց նա, – իսկական ֆիջիական գյուղ հասնելու համար դուք ոչ կարգին ճանապարհ կգտնեք և ոչ էլ որևէ մեկը կուղեկցի ձեզ: Դիվանագիտորեն ասած՝ ավստում եմ, բայց ֆիջիական իսկական գյուղ ձեր տուրիստական ուղերթի մեջ չի մտնում:

– Ափսո՛ս, – ասացինք մենք:

– Այո, – ասաց Լեսսին, – բայց մենք մխիթարվում ենք նրանով, որ ամեն տեղ էլ նույնն է: Մեզ Ամերիկայում ոչ ոք չառել է չի տանում և ոչ էլ Լոնդոնում՝ Իստ Էնդ: Ցավոք սրտի, բոլոր երկրներում էլ տուրիստներին ցույց են տալիս միայն փայլեցրածն ու լաքապատածը: Երևի հենց դրան էլ կոչված են տուրիստական ընկերությունները: Հիմա ես ձեզ ուղեկցում եմ դեպի Օրխիդեյի (Խոլորձի) կղզի: Դուք կտեսնեք ֆիջիական շատ տարրեր՝ կենտրոնացված մի տան մեջ: Հավանաբար, չի եղել մի մարդ, որ այցելի Ֆիջի և չլինի Օրխիդեյի կղզում: Անձամբ ես արդեն տանել չեմ կարողանում Օրխիդեյի կղզին: Բայց ձեզ անպայման դուր կգա...

Մեր ավտոբուսն անցնում էր մի գոգավորության միջով, որտեղ նախկինում գյուղ է եղել: 1954 թվականին վիթխարի ջրհեղեղ է եղել կղզու այս մասում և ուղիղ մի շաբաթ գյուղը մնացել է ջրի տակ: Բազմաթիվ զոհեր են եղել, որոնցից փոքրիկ, սպիտակ գերեզմանասյուներ են մնացել բլրի վրա: Իսկ ովքեր կարողացել են փրկվել ջրհեղեղից, այլևս չեն ցանկացել վերադառնալ իրենց տները:

Տխուր տեսարան էր: Մենք անցնում էինք անշունչ, ավերակ տների միջով:

Ահա և Օրխիդեյի կղզին: Զարմանալի գեղեցիկ անկյուն է և արժանի իր անվանը: Ամենուրեք խոլորձի ծաղիկներ են և էլի հազարագույն ծաղիկներ, որ փարթամ կանաչի մեջ հյուսված մի իսկական, թրթռուն գորգ են դարձրել կղզին:

Ծաղկե ցանկապատի մուտքի մոտ մեզ դիմավորում է Օրխիդեյի կղզու գլխավոր առաջնորդ Ամանին: Նա նման է մեր Լեսսին, բայց ծեր է: Եվ սպիտակ մազերն ավելի են ընդգծում դեմքի դարչնագույնը: Հազին, բոլոր ֆիջիցիների նման, նա միայն (մեզ համար կանացի) ծաղկավոր չթից շրջագգեստ ունի, որ գոտկատեղից իջնում է մինչև բոքիկ ոտքերը: Նրա ականջներից

կախված են ծաղկահյուսեր: Ծաղկեպսակներ են նաև պարանոցին, ձեռքերի դաստակների վրա և ոտքերին:

Նա «երկրի կարգով» բարևում է մեզ՝ խոնարհելով գլուխը և առաջնորդում դեպի մարգագետնում կանգնած եղեգնածածկ խրճիթներից մեկը: Առաջինը, որ աչքի է ընկնում խրճիթի ներսում, վերնից կախված շղարշե ցանցերն են: Թվում է, թե ճոճացանցեր են դրանք: Այնինչ սովորական պաշտպանական միջոցներ են մոծակների և թերևս ֆիջիական այն սարսափելի միջատի դեմ, որի խայթը մահացու է: Մի ժամանակ մեր գյուղերում էլ շատ էին օգտագործվում այդ ցանցերը, ճահճատենդով հիվանդանալուց խուսափելու համար:

Խրճիթի հատակը ծածկված էր խսիրներով, որոնք շատ փափուկ են, և որոնցից շատ հաճելի հոտ է գալիս: Առաջնորդը մեզ բացատրում է, որ այդ խսիրները պատրաստում են պանդանուս կոչվող ծառի տերևներից: Երբ օրն արևոտ է, ֆիջիցի կանայք քաղում են պանդանուսի տերևներ, տասը–տասնհինգ բույսեր փափուկ եռացող ջրի մեջ և փռում քարերի վրա, արևի տակ: Մի շաբաթ հետո այդ տերևներից արդեն կարելի է խսիր գործել և նույնիսկ հագուստ:

Խրճիթի մի անկյունում, պանդանուսի տերևներից հյուսված խսիրե հատակին նստած են ֆիջիցի մի խումբ տղաներ ու աղջիկներ: Նրանք ձեռքներին բռնած ունեն մեկ կամ մեկ և կես մետր երկարությամբ բամբուկե ձողեր, որոնք ներկված են սև և սպիտակ շերտերով: Տղաները նստած են մի կողմում, աղջիկները՝ մյուս: Եվ ավելի շատ իրար, քան հանդիսատեսին են նայում: Նրանց արանքում, կարճ ոտքերի վրա, փայտե մի կլոր, խոշոր թաս է դրված, որի մեջ ինչ–որ հեղուկ կա:

– Օրխիդեյի կղզու երգի–պարի անսամբլը ձեզ համար առաջինը կկատարի «Ռոջույնի երգը», – ասում է Ամանին: – Ֆիջիցիները սովորաբար այդ երգը կատարում են այն ժամանակ, երբ նրանց այցելում է գլխավոր առաջնորդը:

– Ուրեմն, իսկական ժամանակն է, – կատակում ենք մենք՝ ակնարկելով նրա ներկայությունը:

Ամանին ծիծաղում է և ձեռքի շարժումով առաջարկում սկսել:

Երգը սկսեցին տղաները: Նրանք բամբուկե ձողերի ծայրերով հարվածում են հատակին ու թավ ձայնով, համերաշխ բացականչում՝

– Բուլա, բուլա, բուլա...

Հետո լռում են միանգամից, և մեկը բարակ ձայնով սկսում է մեներգը: Երգը ծորում է դանդաղ ու թախծոտ, ու ասես հովի մի պատառիկ է բերում՝ պոկած կովկասյան լեռներից:

Իսկ երբ մեներգին խառնվում են ներկաների տարբեր, բայց զարմանալի ներդաշնակ ձայները, թվում է, եթե փակես աչքերդ, մենգրելական մի հին գյուղում ես զգալու քեզ:

Ու մեկ էլ հանկարծ խախտվում է ներդաշնակությունը, ճիչ–աղաղակներ են հնչում և սուր չիսկչիսկում է ռիթմային փայտիկը: Օդում տազնապ կա և անհանգստություն: Բայց կրկին

խաղաղվում է ամեն ինչ, թախծոտ ու քնքուշ հոսում է մեներգը և նորից թխադեմ տղաներն ու աղջիկները հանդարտ ձայնակցում են նրան:

Երբ երգն ավարտվեց, աղջիկներից մեկը կավե բաժակը խորասուզեց չորս ոտքերի վրա կանգնած փայտե մեծ թասի մեջ, լցրեց կավա կոշվող խմիչքով, մոտեցավ մեր խմբից մեկին և ծնկեց նրա առջև...

Աղջիկն իր ընկերուհիների նման թուխ լայն դեմք ուներ և խոշոր ու գեղեցիկ բերան. քիթը փոքր-ինչ սեղմված էր, ուներ առատ, վեր բարձրացրած մազեր և կիսադեմով մի քիչ ոգնու էր նման: Նրա պարանոցին թելից կախված էր գեղեցիկ ու փոքրիկ մի խեցի: Կավագույն անթև շապիկ ուներ հագին և երկար ծաղկավոր շրջագգեստը իջնում էր մինչև բոբիկ, գեղեցիկ ոտքերը:

Նա լուռ մեկնեց բաժակը:

Դա սովորություն է:

Եթե հյուրը բարի ու խաղաղ մտադրությամբ է ֆիջիցու տուն մտել, պարտավոր է խմել կավան, որ տաքդեղի ծառի արմատներից են եփում:

Երբ հյուրը վերցնում է բաժակը, հյուրասիրող աղջիկը ծափ է տալիս երեք անգամ և այնժամ ծափահարում են բոլորը: Իսկ երբ հյուրը կավան մինչև վերջ է խմում, տանտերերը ողջույնի բացականչություններով իրենց ուրախությունն են արտահայտում և ծափահարում են կրկին:

Հյուրն էլ է ծափահարում:

Եթե նա ծափ է զարկում երկու անգամ՝ նշանակում է գոհ է և շնորհակալ: Եթե երեք անգամ է ծափահարում, ուրեմն այնքան գոհ է, որ երկրորդ թասն է խնդրում:

Եվ այնժամ սրտանց ուրախանում են բոլորը:

Ես էլ խմեցի կավա, և թեև շատ անսովոր ու դառնահամ էր խմիչքը մեր քիմքի համար, բայց ծափ զարկեցի երեք անգամ և երկրորդ թասն էլ խմեցի ֆիջիցի մարդկանց կենացը, որոնք այդքան սրտաբաց ու հյուրասեր են, որոնք ուրախանում են, երբ գոհ է հյուրը:

Հետո կրկին շարունակվեցին երգերն ու պարերը՝ մեկը մեկից հախուռն, մեկը մեկից հմայիչ ու կրակոտ: Երբ տղաները ռազմական պարեր էին կատարում, հոլիկը թնդում էր նրանց ոտնաձայներից ու աղաղակներից: Իսկ երբ աղջիկները հովհարներով նագում ու երգում էին անուշիկ ձայներով, ուզում էիր, որ անվերջանալի լինի այդ երգը:

Նրանք նույնիսկ մեզ ստիպեցին պարել: Կոկորդիլոսի պարը: Առջևից գնում էր Ամանին, նրան հետևում էին ամբողջ խումբն ու մենք: Առաջնորդը հևալով թեքվում էր մեկ աջ ու մեկ ձախ, և մենք իրար բռնած կուգեկուզ գալարվում էինք խրճիթի մեջ: Դա շատ զվարճալի էր. ամեն մեկի համար մյուսի շարժումները ծիծաղելի էին թվում, և ուրախանում, քրքջում էինք բոլորս:

Դրսում նորից անձրն սկսվեց: Անձրն բառը շատ մեղմ է, տեղատարափ, հեղեղ: Բայց մեր հոգը չէր: Մենք երգում ու պարում էինք մեր սևամորթ բարեկամների հետ, նրանց օրինակով սպառնում թշնամիներին՝ ահեղաձայն բացականչելով.

– Այ տո, ժետո, վա, ի՛...

Մենք լսում էինք ժողովրդական հին ու տխուր երգեր՝ ծով դուրս եկած ու այլևս չվերադարձած տղաների մասին, և մտածում, որ այնուամենայնիվ բոլոր ժողովուրդների թախծոտ երգերն էլ նման են իրար: Ինչպես մարդկանց լացն է նման իրար ու ծիծաղը:

– Դուք երբևէ տեսե՞լ եք, թե ինչպես են փայտից կրակ ստանում,– հարցրեց Ամանին և մեր դեմքին ակնհայտ զարմանք ու հետաքրքրություն կարդալով, ժպտաց,– հիմա կտեսնեք:

Թող ներվի ինձ ասել, բայց ես երբեք չեմ հավատացել, թե հնարավոր է փայտերի շփումից կրակ ստանալ: Ճիշտ է, բոլորի նման ես էլ եմ հին պատմության դասագրքում կարդացել և ավելին՝ ինքս էլ փորձել եմ երկար–երկար իրար քսել զանազան փայտեր, բայց դրանից միայն կոշտուկներ են մնացել ձեռքերիս: Ուրիշ ոչինչ:

Դրա համար էլ համակ ուշադրություն ենք դարձել:

Ֆիջիցի մի տղամարդ երկար ու հաստ մի տախտակ դրեց իր առջև: Տախտակի վրա փոքրիկ անցքեր կային: Նա մի ուրիշ բարակ փայտ մտցրեց անցքերից մեկի մեջ և երկու ձեռքով ամուր սեղմելով, սկսեց ետ ու առաջ տանել փայտիկը՝ ուժգին շփում առաջացնելով:

Մի քանի վայրկյան անց մշուշի նման ծխի բարակ մի քուլա բարձրացավ անցքից: Ֆիջիցին արագացրեց շարժումները, ծուխն առատացավ և միանգամից կարմիր բոցով բռնկվեց փայտիկի ծայրը:

Մենք ծափ զարկեցինք զարմանքից և հիացմունքից ու շտապեցինք մեր սիգարետները վառել նախաստեղծ կրակով: Իսկ մեր բարեկամները ուրախացած գոչում էին.

– Ուկրատե... Հաճելի լինի...

Երբ ես Ամանին պատմեցի, թե մանուկ հասակում ինչպես եմ փորձել փայտից կրակ ստանալ, նա սրտանց ծիծաղեց:

– Մենք կրակը հատուկ փայտից ենք միայն ստանում,– ասաց առաջնորդը:– Այդ ծառը կոչվում է պառ, և նույնիսկ Ֆիջիում հազվագյուտ է: Բայց կարող եմ գրագ գալ, որ դուք անգամ պառից կրակ չեք ստանա: Դրա համար դարերի փորձ ու հմտություն է պետք:

Դրսում հեղեղը դադարեց, և արեգակի շողերի տակ առավել վառ սկսեցին փայլել փարթամ կանաչը, խենթացնող գույներով վառվող բազմապիսի ծաղիկները, արմավենիների զմրուխտե լայն տերևները...

Իսկ աղջիկներից մեկը ծալապատիկ նստած մեզ ցույց էր տալիս, թե ինչպես են ֆիջիցիները արմավենու այդ տերևներից զամբյուղներ հյուսում:

Նրա ձեռքի շարժումները գեղեցիկ էին և այնքան արագ, որ երկու բուլե չանցած կանաչ զամբյուղը պատրաստ էր: Ավելի կարճ տևեց լայնեզր գլխարկ հյուսելը:

Հետո մեր տանտերերը շարունակեցին երգել ու պարել. մերթ կատաղի, ռազմաշունչ շարժումներով ու մերթ մեղմիկ, ինչպես արմավենու օրորը: Իսկ ամենավերջում կատարեցին «Հրաժեշտի երգը»: Երգում էին չորս ձայնով, զարմանալի համերաշխ ու ներդաշնակ: Հետո թավ ձայները մեղմացան ու կանգ առան ասես, և բարակ ձայները տարան երգը: Երգը ծորուն էր ու թախծոտ, ափսոսանքի շշուկներ կային նրանում և հրաժեշտի ցավ:

«Ի սալեյի, գնաք բարով, բարի լինի ձեր վերադարձը Ֆիջիից: – Ասում էր երգը: – Բարով հասնեք ձեր տունը, որտեղ կարոտով սպասում են ձեզ: Դժվար է բաժանվել ձեզանից, բայց ի՞նչ արած, մեզ հուսադրում է այն, որ կրկին հանդիպելու ենք իրար և ավելի ուրախ է լինելու մեր հանդիպումը:

Ի սալեյի, բարեկամներ, գնաք բարով»:

Խորին շնորհակալություն հայտնելով մեր նոր բարեկամներին, մենք դուրս եկանք Օրխիդեյի կղզուց, ֆիջիերեն «բորա, բորա», այսինքն՝ շտապիր, շտապիր, ասելով իրար, նստեցինք շարժիչավոր նավակներն ու անցանք փոքրիկ մի գետով, ուղղակի ջունգլիների միջով: Արտասովոր ծառեր կային ափին, որոնց արմատներն ուղիղ դեպի ջուրն էին իջնում՝ պրկված մատների նման, և լիանաներ ու թփեր կային, որոնցով առանց կացնի ոչ ոք չէր կարող անցնել:

Ճաշեցինք ծովափնյա գոդորիկ մի ռեստորանում, որի դիմաց անշարժ ջրերի վրա լողում կամ խաղաղ օրորվում էին խայտանկար նավակները: Բոլորովին մոտիկ, ծովի կապույտի միջից կանաչ հրաշքի նման բարձրանում էին փոքրիկ կղզիները: Նրանցից ամենափոքրը կոչվում էր «Մեղրամիսի կղզի»: Այն պարզապես մի արմավենի էր ծովի մեջ բարձրացած, հազիվ քսան ոտնաչափ տարածությամբ, որի ափին, մինչև գոտկատեղը ջրի մեջ կարթով ձուկ էին բռնում թխամորթ պատանիները:

ՆՅՈՒԿՈՒԼԱՌԻ

Վաղ առավոտ է: Ինչպես նախապես ասել էի, շարժիչավոր մի փոքրիկ նավակով գնում ենք Սուվայից պարզ երևացող կղզիներից մեկը՝ Նյուկուլաուն: Ինչպես շրջապատի շատ կղզիներ, այն ևս առաջացել է ծովային մարջաններից:

Աջ կողմում, մի ուրիշ փոքրիկ կղզու վրա ինչ-որ բլուր է բարձրանում, ասես հանգած հրաբուխ է, բայց, այնուամենայնիվ, այնտեղից ծովիս քուլա-քուլա ելնում է երկինք:

– Դա ի՞նչ բան է,– հետաքրքրվում ենք մենք:

Մեր ուղեկցորդ Լեսսին հավատարիմ է իրեն.

– Դատարկ բան է, կիսահանգած հրաբուխ է,– անվրդով ասում նա:

– Ինչպե՞ս թե կիսահանգած:

– Ի՞նչ է նշանակում կիսահանգած:

– Մոտ հարևանությամբ այդպիսի հրաբուխը մի՞թե վտանգավոր չէ:– Անհանգստացած վրա ենք տալիս մենք:

Լեսսին ժպտում է:

– Լեդիներ և ջենտլմեններ, մի անհանգստացեք, այս մեկն այնքան էլ վտանգավոր չէ, որովհետև հանգած հրաբուխի կողքին ընդամենը ցեմենտի գործարանի ծովն է բարձրանում:

Մենք բռնցքներով սպառնում ենք Լեսսին:

Իսկ նա ծիծաղում է՝ իր կատակից գոհ:

Օվկիանոսը խաղաղ է, ո՛չ մի ալիք, ո՛չ մի կնճիռ, և մեր նավը գրեթե անաղմուկ սահում է կապուտակ ջրերի վրայով:

Ահա ևս մի կղզի՝ հանգած հրաբուխ, թարգմանաբար անունը Բութ մատ է:

Մի կղզի ևս՝ ձախ կողմում: Տեղացիներն այն անվանում են Հղի ֆիջիուհի: Իսկապես նման է մայրություն ապրող կնոջ:

Նյուկուլաուն Սուվայից բավականին մոտիկ էր երևում, բայց ահա երկար ժամանակ է, ինչ մեր նավը ընթանում է բավարար արագությամբ, իսկ կղզին դեռևս նույն հեռավորության վրա է: Իհարկե, այնքան գեղեցիկ է ամեն ինչ, որ չես էլ շտապում, ուզում ես անվերջ լինի այդ ճանապարհը՝ պայծառ, անամպ երկինքը, անայլալ կապուտակ ջրերը, փոքրիկ կղզի–պուրակները՝ արարի ձեռքով օվկիանոսի մեջ անփութորեն նետված, այստեղից բավականին խոշոր երևացող Վիտիլու կղզին, որի նավահանգստից քիչ առաջ պոկվեց մեր նավակը: Սուվա քաղաքի ցածրահարկ, խայտաբղետ տները և նավահանգստում թափառող թխլիկ տղաները, որ մեր ետևից երկար թափահարում էին ձեռքերն ու բղավում.

– Սամոդե, սամոդե, ցտեսություն...

Հանկարծ մեր նավը կանգ առավ ու սկսեց անօգնական հանդարտ ճոճվել:

– Ի՞նչ պատահեց, փչացա՞վ շարժիչը,– վախեցանք մենք, մանավանդ որ նավավարը քիչ առաջ ասել էր, թե արդեն բաց օվկիանոսում ենք գտնվում:

– Ո՛հ, ո՛հ,– այս անգամ առանց հումորի միջամտեց Լեսսին,– նավավարն ուզում է, որ դուք տեսնեք մարջանների աշխարհը:

Հատուկ կառուցված նավ էր: Նավաստիներից երկուսը վարժ շարժումներով բացեցին նավի հատակը, և պարզվեց, որ ներքևում ապակիներ են և դրանց միջոցով հիանալի երևում է օվկիանոսը:

Իմ շունչը բռնվեց այն պատկերի գեղեցկությամբ, որ բացվեց մեր առջև: Օվկիանոսի հատակն էր՝ հեքիաթային գույներով: Հիասքանչ ծաղկեպսակներ ու խորհրդավոր պատկերներ էին հյուսել մարջանները՝ դարերի ընթացքում կուտակվելով իրար վրա: Եվ ինչպիսի ծաղիկներ... դեղին, մոխրագույն, վարդագույն, կանաչ, կապույտի բոլոր նրբերանգները... Իսկ նրանց արանքում և ավելի ցած՝ ուղղակի վիստում են հազարագույն ձկներն ու ծովային արտասովոր կենդանիները:

Մենք նավից հացի կտորներ ենք ցած նետում, և այնտեղ, որտեղ ընկնում է պատառը, ձկների մի հոծ վտառ է հայտնվում: Ինչ–որ շերտավոր, արագաշարժ ձկներ իրարից խլխլում են մեր նետած փշրանքները, կուտակվում իրար վրա, փրփրացնում ջուրը: Եվ հանկարծ հայտնվում է խոշոր կարմրագույն մի ձուկ, շրմփացնելով հզոր պոչով, նա հարձակվում է հացի կտորների վրա...

– Ուշադրություն,– բացականչում է նավապետը,– հիմա դուք շնաձուկ կտեսնեք, նրանք միշտ հայտնվում են այնտեղ, որտեղ ձկների բազմություն կա...

Հոգուս մեղք չանեմ, ես այնուամենայնիվ շնաձուկ չտեսա և միայն մերոնց ճիչերից հասկացա, որ կայծակնորեն հարձակվել ու անհետացել էր գիշատիչը, ձկնիկների ամբոխը ցրիվ տալով և տհաճորեն թափահարելով մեր նավը:

Եվ կրկին ճանապարհ: Արդեն երկու ժամ է, ինչ գնում ենք, բայց Նյուկուլաուն մնում է իր տեղում: Շատ խաբուսիկ է կղզիների հեռավորությունը բաց օվկիանոսում:

Սակայն տուրիստական ընկերությունը ճանապարհին մի անակնկալ էլ էր պատրաստել մեզ համար: Դեռ հեռվից նկատեցինք, որ մեծ արագությամբ, շեղակիորեն, ուղիղ դեպի մեզ է գալիս մի փոքրիկ նավակ, որի մեջ երեք բնիկներ կային: Տեսնելով նրանց, նավավարը կրկին անջատեց շարժիչը, և մի քանի վայրկյան անց նավակը մեզ հասավ: Այնտեղ գտնվողներից մեկը ճարպիկ շարժումով դեպի մեզ նետեց պարանը, որն անմիջապես կապվեց մեր նավին: Նավակը կիպ մոտեցավ մեզ, և երեք թխամորթներն էլ բարձրացան մեր նավի վրա՝ ձեռքներին ինչ–որ թասեր ու արկղեր բռնած:

Պարզվեց, որ սուզահագուստով օվկիանոսի խորքն էին իջել նրանք և մեզ համար զանազան ջրային բնակիչներ բերել՝ ծովային աստղ, ծովային ոգնի, սուր ասեղներով զինված դարձյալ աստղաձև ինչ–որ արարած, որին թույլ չտվեցին անգամ դիպչել, քանի որ սոսկալի թունավոր է, հսկա խեցգետին, զարմանահրաշ գույներով ձկներ ու ձկնիկներ, սադափե խեցիներ ու խաչփառներ, մի ինչ–որ հսկա կենդանի, որ վիշապի էր նման, բայց տափակ էր ու կարճ, փոքրիկ մի ուրթոտուկ և մարջանի ծաղիկներ, որ ավելի ճիշտ՝ ծաղկած եղրևանու փոքրիկ ճյուղերի են նման:

Պետք էր միայն տեսնել, թե ինչպես էին ազահաբար փայլում մեր խմբի Պազանելի, Նեժին քաղաքի մանկավարժական ինստիտուտի կենդանաբանության դասախոս Ինեսա Մորիսովայի աչքերը: Նա հրճվում էր, կարմրատակում էր ու գունատվում, նա պատրաստ էր նույնիսկ գողանալ այդ գարշադեն ու լպրծուն արարածները, նա ձեռքը մեկնում էր անընդհատ ու ետ քաշում, պտտվում էր ջրով լի թասերի շուրջը, ինչպես կատուն է դեղձանիկի վանդակի շուրջը պտտվում, և այդ ամբողջ ժամանակ շշնջում էր լատինական ինչ-որ բառեր, տնքում էր, հառաչում էր ու բացականչում ստեպ-ստեպ:

– Օ՛, աստված իմ, օ՛, աստված իմ... Եթե ես կարողանայի այս բոլորը ցույց տալ իմ ուսանողներին:

Խեղճ աղջիկը ոչ ոքի մոտ կարեկցանք չէր գտնում: Ոչ ոք չէր ուզում նրա կողքին նստել կամ գիշերել հյուրանոցի նույն համարում: Եվ մարդկանց ևս դժվար էր մեղադրել: Նրա գրպանները, պայուսակները, ճամպրուկները լի էին միջատներով, գետններով ու խխունջներով, որ նա ազահաբար որսում էր Դելիի օդանավակայանում, Սինգապուրում, Ավստրալիայում... Որտեղ որ բռնում, նա հենց տեղնուտեղը մաքրում էր դրանց փորոտիքը, տեղավորում ինչ-որ տուփերում կամ ֆորմալինի լուծույթով լի բանկաների մեջ խցկում: Ինչպես ընդունված է ասել, նրանից մի քանի մետրի վրա շան... չէ, շունը մեղք է, այնպիսի գարշահոտ էր փչում, որ ոչ մի սահմանում մաքսատան աշխատողները չէին ստուգում նրան և հապճեպ բաց էին թողնում՝ բարեկրթորեն թեքելով գլուխները:

Շենց որ մեր խմբի անդամներից մեկը որևէ միջատ կամ որդ էր տեսնում, ձայն էր տալիս շտապով՝

– Ինեսա Վիկտորովնա, հասեք, փախավ...

Ու ծիծաղում էին բոլորը:

Բայց երդվյալ բնագետը բոլորովին չէր վիրավորվում, սլանում էր անմիջապես, և քիչ հետո դժբախտ արարածն արդեն իր հավերժական հանգիստն էր գտնում նրա անթիվ-անհամար տուփերից մեկում:

Այսքանից հետո հասկանալի կլինի, թե Ինեսան ինչ հուզմունքով էր պտտվում օվկիանոսի բնակիչներով լի թասերի շուրջը և մատները կոտրատելով շշնջում:

– Օ՛, աստված իմ, օ՛, աստված իմ...

Նրա հուզմունքը լարման բարձրակետին հասավ, երբ նավավարը հայտարարեց, թե ջրասույզներն իրենց որսը ուզում են մեզ նվիրել: Նավավարը իր խոսքը դեռ չէր ավարտել, և մենք էլ չէինք սկսել մեր շնորհակալական բացականչությունները, երբ ութոտնուկը, հսկա խեցգետինն ու ծովային աստղը հայտնվեցին Ինեսայի պոլիէթիլենային տոպրակներում: Նա զարմացած ջրասույզներին ռուսերեն համոզելով ցանկանում էր վերցնել նաև թունավոր աստղաձև կենդանին, բայց նրանք, ուղղակի քաշքշելով, թասը շրջեցին օվկիանոսի մեջ: Եվ այնուամենայնիվ ամեն մեկիս մի հիշատակ-նվեր հասավ: Ինձ տվեցին զարմանալի գեղեցիկ մի խեցի ու թեև բնականաբար դրա միջի խխունջը ողջ-առողջ էր, և ես երկար տառապեցի,

մինչև որ եռացող ջրի շնորհիվ կարողացա հեռացնել նրան՝ իր բնակավայրից, բայց տառապել արժեր: Հիմա այդ խեցին իմ տուրիստական ավարների ցուցափեղկի ամենագրավիչ նմուշներից մեկն է, և երբ ականջիդ ես դնում, մեղմիկ շշնջում է ֆիջիերեն ու պատմում է օվկիանոսում կորած կանաչ կղզիների լեգենդը...

Նյուկուլաու կղզու մոտ հավանաբար շատ էին ծանծաղուտները, որովհետև նավավարը լրիվ դանդաղեցրեց նավի ընթացքը ու սկսեց զգուշորեն մանևրել: Այսինքն՝ պարզ ընդգծվում էին խութերը: Դրանց մոտ ալիքները փրփրում էին ձյան ճերմակությամբ: Այստեղ ու այնտեղ ջրից դուրս պրծած զգուշացնող պոնների վրա կուտակված տազնապահար ճշում էին ճայերը:

Մենք նավից իջանք փոքրիկ մի փայտամածի վրա և հայտնվեցինք կղզում:

Դա հեքիաթային աշխարհ էր: Ուղիղ կես ժամում մենք պտտվեցինք կղզու չորս կողմը՝ քայլելով ափի մանրիկ ավազի վրայով: Ավազին Ինեսա Մորիսովային խենթացնող զանազանակերպ գեռուններ ու միջատներ կային: Հատկապես արտասովոր էին գորշավուն փոքրիկ, խիունջակերպ արարածները: Մեր ոտնաձայնը լսելով, նրանք ուղղակի գնդակի նման գլորվում էին և մտնում ինչ-որ կլոր խեցիների մեջ:

Հետո մենք կղզու խորքը մտանք և զգուշորեն քայլեցինք բանանի ու արմավի անտառների միջով, զգուշորեն, որովհետև այստեղ ու այնտեղ ծառերից աղմուկով թափվում էին հսկա կոկոսներ: Ու տեսանք ծառեր, որ երբևէ չէինք տեսել: Մեր կաղնիների նման հսկայական ծառեր կային, որոնց պտուղները ընկույզի նման էին և ընկույզի չափ, բայց միջուկները վառ սպիտակ էին ու առանց միջնապատերի: Եվ նշի ծառեր տեսանք, որի պտուղները տասն անգամ խոշոր էին մեր տեսած նշից:

Ես ուզում էի փորձել գետնին ընկած կոկոսներից մեկի համը, բայց մեր հոգատար ուղեկցորդները, առատաձեռն տանտերերի նման, որոնք հյուրին թույլ չեն տալիս ուտել ծառի տակ ընկած դեղձը, այլ թարմն են պոկում ճյուղից, անմիջապես ձայն տվեցին մի մկանուտ պատանու:

Նա ապշեցուցիչ ճարպկությամբ, ուղղակի ցատկոտելով մազլցեց մեր կողքի արմավենու հաստ ու ողորկ բնով, և մի քանի ակնթարթ անց հայտնվեց սաղարթների տակ, որտեղ կախված էին հսկայական պտուղները: Քիչ հետո մեր ամբողջ խումբը կոկոսի հյուսթ էր խմում և մեծ հաճությամբ ուտում ընկույզի սպիտակ կեղևը, իսկ ես գոհունակությամբ արժանին էի մատուցում հոջակավոր Պույպույ մուկիկի բարձր ու նուրբ ճաշակին:

Մարդիկ հաճախ են ուրախ լինում և հազվադեպ երջանիկ: Եթե ինձ հարցնեն, թե որոնք են իմ կյանքի երջանիկ օրերը, մի քանիսի հետ կարող եմ թվել նաև այդ օրը՝ Ֆիջիի արշիպելագի Նյուկուլաու փոքրիկ կղզում: Այնտեղ ես առասպելական Պանի նման ձուլվել էի բնությանը, ականջ էի դնում ծառերի թփերի սոսափին, լսում էի, թե ինչպես են զրուցում իրար թեքված արմավենիները, ըմբռնում էի թռչունների ճովողունն ու դայլայլ ու նույնիսկ հասկանում էի, թե ինչ էր շշնջում օվկիանոսը՝ քնքշորեն հարձակվելով Նյուկուլաուի ավազոտ ափերի վրա...

Երբ նավ վերադարձանք, մեծ սրահի մեջտեղում մեզ էր սպասում ճաշը՝ ա լ ա ֆուրշե: Այսինքն՝ ամեն մեկը սեղանից պետք է վերցնէր ինչ ուզում էր և ուտեր ոտքի վրա կանգնած, զրուցելով...

Իսկ սեղանը նկարել արժեր... Այն իսկական մերձարևադարձային նատյուրմորտ էր: Իրար կողքի շատ ճաշակով դասավորված էին անանասն ու բանանը, կասավան ու պապայան, պոմիդորն ու վարունգը, մանգոն ու նարինջը, իսկ անկյունում կոկոսի հյութով լցված թասի մեջ լողում էին սառույցի խոշոր կտորներ:

Երբ նավը պոկվեց ափից, կրկին տեղատարափ սկսվեց, և մի քանի վայրկյան անց անձրևի վարագույրի ետևում մշուշվեց՝ անհետացավ Նյուկուլաու կղզին: Ասես ինչ՝որ շատ սիրուն հեքիաթ ավարտվեց: Ասես թատրոնում ես, իջնում է վարագույրը, և դու հանկարծ հասկանում ես, որ տաք, լուսավոր ներկայացումը վերջացել է և դու հիմա դուրս ես գալու փողոց, որտեղ ցուրտ է, անձրև է ու ցեխ...

Օվկիանոսում ալիք է ու անձրևի մշուշ: Երևի որպեսզի չվախենանք, բոլոր լուսամուտների վարագույրներն իջեցված են: Կծկվել ենք սրահի մեջտեղում ու լռում ենք: Եվ ամեն մեկն ինքն իր հետ է: Այդ լռությունը դուր չի գալիս մեր ուշադիր տանտերերին: Հատկապես անհանգիստ է Լեսսին: Նրա նշանով մի ֆիջիցի արմավենու տերևներ է սրահ բերում, և Լեսսին ճարպկորեն դրանցից զանազան գլխարկներ է գործում, զամբյուղներ հյուսում, ճնճղուկ ու մորեխ ու տեղնուտեղը նվիրում մեզ: Նորից աշխուժություն է սկսվում: Անձրևն ու ալիքը մոռացվում են, և մենք սկսում ենք երգել և խնդրում ենք Լեսսին, որպեսզի նա մեզ սովորեցնի ֆիջիական հրաժեշտի երգը...

Նա երգում է՝ շարունակելով թռչունների ծիծաղաշարժ խրտվիլակներ գործել, իսկ իմ մտքերը Հայաստանում են: Ես մտածում եմ, որ մենք շատ ավելի հետաքրքիր ու էկզոտիկ բաներ ունենք ցույց տալու Հայաստան այցելող զբոսաշրջիկներին, քան այդ անում ենք:

Իհարկե, հրաշալի է, որ մենք նրանց ծանոթացնում ենք մեր գործարաններին, կոլտնտեսություններին և մշակույթի օջախներին: Անհրաժեշտ է, որ նրանք դիտեն մեր պատմական հուշարձաններն ու Սևանա լիճը: Բայց վատ չէր լինի, եթե հատուկ ինչ-որ տեղ նրանք հնարավորություն ունենային իրենց աչքերով տեսնելու, օրինակ, թե ինչպես է լավաշը թխվում հրաշեկ թոնիրներում, ինչպես է բրուտանոցում թրծվում կավը, ինչպես են հայ աղջիկները ճարպկորեն թելը թելին հյուսում ծաղկավառ գորգի վրա, կամ ինչպես են քարե սանդի մեջ փայտե թակով բայազետի քյուֆթա ծեծում մսավաճառները: Եվ հազար ու մի այլ բան, որ սովորական են մեզ համար, բայց արտասովոր՝ հյուրերի աչքին:

Իսկ Լեսսին ճնճղուկներ է հյուսում և սովորեցնում է մեզ ֆիջիական հրաժեշտի երգը:

«Ի սալեյի, գնաք բարով, բարի լինի ձեր վերադարձը Ֆիջիից: Բարով հասնեք ձեր տունը, որտեղ կարոտով սպասում են ձեզ: Դժվար է բաժանվել ձեզանից, բայց ինչ արած, մեզ հուսադրում է այն, որ կրկին հանդիպելու ենք իրար և ավելի ուրախ է լինելու մեր հանդիպումը:

Ի սալեյի, բարեկամներ: Գնաք բարով...»:

ՄԱՈՐԻՆԵՐԻ ԵՐԿԻՐԸ

– Նաղիից մինչև Օբլենդ թռիչքը կտևի երեք ժամ քսան րոպե, – բարեհամբույր ժպիտը դեմքին հայտարարեց ինքնաթիռի սիրունատես ուղեկցորդուհին:

Հայտարարեց այնպես, ասես ծափերի էր սպասում: Բայց մենք ծափահարելու ուժ չունեինք:

Ուրեմն ևս երեք ժամ քսան րոպե:

Հուսահատվելու չափ հոգնել ենք ինքնաթիռներից, արդեն նստում ենք ասես ակամա, ինչպես տաքսի ավտոմեքենա կնստես: Նույնիսկ օդաչուներն այդքան արագ ինքնաթիռ չեն բարձրանում: Քսանչորս օրվա ընթացքում սա էլ քսաներորդ օդանավն է, ինչ փոխում ենք: Թվում է, թե այլևս անհնարին է դիմանալը: Գոնե դեպի հայրենիք տաներ: Բայց չէ, ավելի է հեռանում, թռչում է փաստորեն աշխարհի ծայրը, եթե աշխարհը ծայր ունի:

Բայց սրանք, իհարկե, սուտ տրտունջներ են, ավելի շուտ ձևացնում ենք: Հենց միայն այն միտքը, որ մոտ երեք և կես ժամ հետո հայտնվելու ենք Նոր Զելանդիայում, այն երկրում, ուր հասնելու համար Ժյուլ Վեռնի խիզախ ու բազմաչարչար հերոսները ամիսների տառապանք են կրել, թաքուն հպարտությամբ և սպասումի հուզումով է լցնում մեր սիրտը:

Պայծառ, անխռով առավոտ է: Երկնքում ամպի և ոչ մի կտոր, կապույտ–կապույտ է երկինքը, կապույտ–կապույտ է օվկիանոսը, և եթե հորիզոնի վրա գույները չխտանան, կռահել չես կարող թե որտեղ է սկսվում երկինքը և վերջանում օվկիանոսը:

– Տեսնո՞ւմ ես, – հիացմունքով շշնջաց մեր խմբի տղաներից մեկը, – ամպ չկա և ոչ մի ցնցում: Ասես ինքնաթիռն էլ անշարժ է:

Դրանից հետո ես լուրմ եմ, երբ խոսք է բացվում սնոտիապաշտության արտահայտություններից մեկի՝ «աչքով տալու» մասին:

Որովհետև նա դեռ չէր ավարտել իր միտքը, երբ զգացինք, որ ընկնում ենք: Ավելի ճիշտ՝ ոչ թե ընկնում, այլ վերև ենք թռչում: Եվ երևի կթռչեինք, եթե առաստաղը չխանգարեր: Սկզբում գլուխներով զարկվեցինք ինքնաթիռի խոհեմաբար փափուկ սարքված առաստաղին, հետո հավանորեն ինքնաթիռը վեր բարձրացավ, որովհետև ցած ընկանք ու մեխվեցինք–ճզմվեցինք մեր աթոռներին:

– Անմիջապես կապել գոտիները, – հնչեց հանգիստ և վճռական հրահանգը:

Իհարկե, դա ավելորդ հրահանգ էր, որովհետև անկախ լեզու իմանալ–չիմանալուց, բոլորս էլ սարսափի բնագոյով արդեն կապել էինք գոտիները, բացի Մոսկվայի ինստիտուտներից մեկի

բավականին գեր մի պրոֆեսորից, որն «աշխարհում ոչ մի տեղ արդարություն չկա» գոչելով, գուր աշխատում էր որովայնի վրա իրար միացնել գոտիների ծայրերը:

Ինքնաթիռը ընկնում և ելնում էր անընդհատ, երկար թևերը տատանվում էին թռչունի թևերի պես: Թվում էր, թե ուր որ է ջարդ ու փշուր կլինի:

Բայց արհավիրքն ինչպես հանկարծակի սկսվել էր, այնպես էլ միանգամից ավարտվեց: Եվ մենք բավականին մեծահոգաբար ընդունեցինք ինքնաթիռի անձնակազմի ներողությունը՝ անակնկալ հայտնված օդային խորխորատների համար:

Իսկ քիչ անց արդեն լիովին մոռացանք պատահարը, երբ ինքնաթիռի թևի տակից երևացին Նոր Զելանդիայի կանաչ եզերքները: Դա մի չնաշխարհիկ պատկեր էր, ասես ինքնաթիռն իջնում էր ծովում լողացող հսկա հաճանավի վրա:

Օբլենդի օդանավակայանում արդեն մեզ էին սպասում տուրիստական ֆիրմայի ներկայացուցիչները: Երկնագույն աչքերով ու հարդագույն վարսերով միջահասակ մի կին կարոտած ռուսերենով հայտարարեց, որ մեր բախտը տնօրինելու է հռչակավոր և ամենահուսալի «Կուկ» ֆիրման և որ մեզ ուղեկցելու պատիվն ունի ինքը:

– Ինձ անվանեցեք պարզապես Օլգա, – ասաց նա:

Ավտոբուսը սլանում էր օվկիանոսի կողքով, և Օլգան իր երբեմնի ռուսերենով պատմում էր աշխարհի վեցերորդ աշխարհամասի մասին, ինչպես կատակով մեկ–մեկ անվանում են Նոր Զելանդիան:

Մեր շուրջն ամենուրեք վառ կանաչ մարգագետիններ են, ոչխարների հոտեր և հսկա օվկիանոսային նավեր, որ կանգնած են գրեթե տների արանքում: Փողոցներն այստեղ դեպի Վաիտեմատա ծովածոցը ձգվելով վերածվում են նավամատույցների, որոնց կողքին էլ շարվում են աշխարհի գրեթե բոլոր պետությունների դրոշները պարզած նավերը: Անցնում ենք Մենակաու ծոցը, միահարկ տնակների կողքով, որ ներկված են բաց, պայծառ գույներով և շրջապատված զմրուխտ տնամերձերով: Ծառերն այստեղ քիչ են, գերակշռում են ծաղկաթմբերը և գեղատեսիլ բնական ցանկապատերը: Որքան մոտենում ենք քաղաքի կենտրոնին, այնքան ավելանում են բարձրահարկերը, որոնք հիմնականում վարչական շենքեր են, հյուրանոցներ և բանկեր:

– Ուշադրություն դարձրեք, ձախ կողմում կույր ինստիտուտն է, – ակնաբուժական ինստիտուտի ցուցանակը մատնացույց անելով թարգմանում է Օլգան, հետո զարմացած նայում է մեր ծիծաղկոտ դեմքերին, հասկանում, շփոթվում է ու ասում երեխայի պես կարմրելով: – Ի՞նչ անեմ, ուշ–ուշ եք գալիս: Իսկ ես այստեղ ո՞ւմ հետ խոսեմ ռուսերեն:

Տարօրինակ քաղաք է Օբլենդը: Մի փողոցում արև է, մյուսում հեղեղի նման թափվում է անձրևը: Բայց մեզ համար հաճելի են երկուսն էլ, որովհետև Ֆիջիի սոսկալի շոգից ու խոնավությունից հետո հանգիստ շունչ ենք քաշում, գրեթե մրսում ենք: Փողոցի երկու կողմերում ամենուրեք ռեկլամներ են, բայց դրանք արտառոց ու ճշան չեն եվրոպական քաղաքների ռեկլամների նման: Ամեն ինչ չափի մեջ է՝ գեղեցիկ է, ներդաշնակ է ու ազդու:

Ընդհանրապես տիպիկ անգլիական այս երկրի, տիպիկ անգլիական այս քաղաքում թերևս ամեն ինչն է չափի մեջ, բացի քամուց: Քաղաքի մի հատվածն ընկնում է Հյուսիսային կղզու երկու մասերն իրար կապող նեղ մի պարանոցի վրա և լիովին բաց է թե Տասմանյան ծովից և թե հատկապես Խաղաղ օվկիանոսից փչող սոսկալի քամիների առաջ: Երբ անցնում էինք օքլենդցիների հպարտությունը հանդիսացող ավելի քան երեք կիլոմետրանոց կամրջով, որը 1959 թվին է կառուցվել և Վաիտեմատա ծովածոցի վրայով իրար է կապում քաղաքի գործնական ու բնակելի թաղամասերը, մեր ավտոբուսը պարզապես ցնցվում էր քամուց: Օլգան ասաց, որ նախորդ օրը քամին մի աղջկա իր մոտոցիկլետով ցած է նետել կամրջից և որ երբեմն ծանր է լինում նույնիսկ թեթև քաշ ունեցող ավտոմեքենաների վիճակը:

Ինչևէ, մենք բարեհաջող անցնում ենք կամուրջը և շարունակում շրջել քաղաքում:

«Երբ մենք Օքլենդ հասնենք, դուք կսքանչանաք հարավային այդ Կորնթոսի գրաված դիրքով», – եթե հիշում եք, այդպես էր ասում Պագնելն իր բարեկամներին:

Եվ Պագանելն իրավացի էր: Ու թեև շատ է փոխվել ու զարգացել Օքլենդը, որպեսզի որևէ կերպ համեմատվի Պագանելի նկարագրածի հետ, այնուամենայնիվ քաղաքի գրաված դիրքը մեզ ոչ մի վայրկյան թույլ չէր տալիս ցած դնել կինո և լուսանկարչական ապարատները: Մի կողմում փառահեղ կամուրջն է, մյուսում պարզապես նախապատմական անտառը, կլոր բլուրներն են գլորվում հեռվում, փոքրիկ մի հողակտորի վրա դեպի իրար են մղվում Խաղաղ օվկիանոսի և Տասմանյան ծովի ալիքները:

Այդ ամենը ավելի քան պարզ երևում է հատկապես Մաունթ Բդենի վրայից, որը մեզ՝ կովկասցիներիս համար, թեև ընդամենը մի բլուր է՝ 700 ֆուտ բարձրությամբ, բայց որտեղից, առավել քան որևէ այլ վայրից, ասես ափիդ մեջ տեսնում ես Օքլենդը:

Ինքը՝ Մաունթ Բդենը, հին հրաբխի հանգած խառնարան է և իր անվամբ, ինչպես հուշում են, պարտական է Անտոնի Բդենի նախապապերից մեկին: Նման խառնարաններ շատ կան քաղաքի շրջակայքում, մոտ վաթսուս հատ: Պարզապես ահավոր է պատկերացնել այն ժամանակները, երբ դրանք ծխացել ու ժայթքել են:

Մաունթ Բդենից քիչ հեռու մի հանգած հրաբուխ էլ է բարձրանում, որը կոչվում է Ուան թրի հիլ (Մի ծառի բլուր): Այնտեղ իրոք մի ծառ կա միայն կանգնած, որն ըստ ավանդության 1905 թվականին տնկել է մաորիների առաջնորդը՝ որպես շնորհակալություն աստվածներին, իրեն արու զավակ պարգևելու համար:

Բլրի լանջերին երևում են մաորիական բնակավայրի (որը նրանք կոչում են Պա) հետքերը՝ խրամուղիներ, տների հողե հիմքեր: Միայն հետքեր: Մաորիական շատ քիչ բնակավայրեր են մնացել Նոր Զելանդիայում և եղածներն էլ փաստորեն թանգարանային նշանակություն ունեն: Դրանում մենք համոզվեցինք հատկապես մաորիական գյուղում լինելուց հետո և առավելապես՝ երբ այցելեցինք Օքլենդի ամենանշանավոր տեսարժան վայրերից մեկը՝ «Մաորիական արվեստի թանգարանը»:

Թանգարանի առաջին՝ ապակեպատ առաստաղով սրահը զբաղեցնում է ռազմական մի նավակ – կանոե, կամ մաորիների լեզվով՝ վոկա: Դա մոտ 20 մետր երկարությամբ և երկու

մետր լայնությամբ մի արտասովոր նավակ է, փորված տոտարո կոչվող ծառի բնից։ Անկասկած, զարմանալ կարելի է, թե մառրի վարպետները ինչպես են 1836 թվականին իրենց նեֆրիտե գործիքներով կարողացել տաշել, ստեղծել այդ կանոն, որի մեջ շուրջ հարյուր քառասուն ռազմիկներ ու թիավարներ են տեղավորվել։ Նավակը մուգ կարմիր-դարչնագույն է, որովհետև մառրիները ներկը ստանում են կավից, և պատված է բազմատեսակ քանդակ-բարելյեֆներով։ Զարդանախշերի և առանձնապես պատկերված մարդկանց աչքերն արտահայտելու համար օգտագործված մարգարտախեցիները մի առանձին հմայք են տալիս մառրիների կիրառական արվեստին։ Փայտի վրա փորագրելը մառրիական արվեստի առանձնահատկություններից մեկն է։ Նրանք սիրում են հարթաքանդակներով պատել իրենց բնակարանների մուտքերը, դարպասները, գործիքները։ Եվ ուշագրավ է, որ այսօր այդ հին բարելյեֆներից շատերը ճահիճների միջից են հայտնաբերվում։ Որպեսզի հանկարծ հակառակորդների ձեռքը չընկնեն, մառրիները գերադասել են իրենց ստեղծագործությունները թաքցնել ճահիճների մեջ։

Շատ այլ վկայություններ կան, բայց այդ հարթաքանդակները ևս վկայում են, որ Նոր Զելանդիայի պատմական բուն ժողովուրդը այնուամենայնիվ մառրիները չեն եղել։ Որ մառրիները եկվոր ժողովուրդ են և եկել են Պոլինեզիայից՝ Խաղաղ օվկիանոսի կղզիներից։

Բայց ուրեմն ովքե՞ր են եղել բնիկները։ Դրա պատասխանը ևս մասամբ մառրիներն են տալիս։ Նրանց լեզուների մեջ պատմվում է ինչ-որ ցեղերի մասին, որոնք եղել են այս աշխարհում իրենցից առաջ և որոնք մոայի որսով էին զբաղվում։

Իսկ թե ինչ է մոան, մենք իմացանք Օբլենդի թանգարանում, երբ տեսանք նրա խրտվիլակը։ Դա ավելի քան երեք և կես մետր բարձրությամբ ջայլամ հիշեցնող մի թռչուն էր՝ երկար վզով և համեմատաբար փոքր գլխով։ Ահռելի մարմին ունեցող, եռամատ հսկայական ոտքերով այդ կենդանին հիանալի որս էր բնիկների համար։ Օգտագործվում էր նրա ամեն ինչը. մտով սնվում էին, փետուրներով զարդարում էին իրենց գլուխները, մաշկից հագուստներ էին կարում, ճանկերից կարթեր էին պատրաստում, ոսկորներից սայրեր՝ տեգերի համար։ Օգտագործվում էին նաև մոայի հսկայական ձվերը՝ իբրև ջրաման։

Բայց շատ վաղուց է, ինչ չկան ոչ մոաները և ոչ էլ նրանց որսորդները։ Երբ առաջին սպիտակամորթները ոտք դրեցին Նոր Զելանդիա, երկրի տերերը մառրիներն էին։ Գուցե նրանք են ոչնչացրել մոայի որսորդներին, գուցե ձուլել են իրենց հետ, պատմությանը դա որոշակի հայտնի չէ։ Բայց որ մառրիները կատաղի, անզիջում մարտիկներ են, դրանում համոզվեց հենց առաջին եվրոպացին, որ փորձեց ափ իջնել աշխարհի համար անհայտ այդ երկրում, հոլանդացի փառավոր ծովագնաց նավապետ Թասմանը։

1643 թվականի դեկտեմբերի 13-ին, երկար դեգերումներից հետո, նա երկու նավով մոտեցավ անծանոթ մի ափի և խաղաղ հրվանդան որոնելու նպատակով հասավ այն վայրին, որն այսօր Ոսկե հրվանդան է կոչվում։ Սակայն ափ ուղևորվող ծովայինները այնպիսի կատաղի դիմադրության հանդիպեցին բնիկների կողմից, որ մի քանի զոհեր տալուց հետո ստիպված նավ վերադարձան։

Չուզենալով նոր փորձության ենթարկել իր առանց այդ էլ փոքրաթիվ հյուծված անձնակազմը, նավապետ Թասմանը հեռացավ անհյուրընկալ ափից՝ իր հայտնագործած նոր աշխարհամասը անվանելով Նահանգների երկիր՝ ի պատիվ Հոլանդիայի պառլամենտի:

Նրանից հետո հոլանդացի այլ ծովագնացներ համոզվեցին, որ Թասմանի գտած երկիրը ոչ թե աշխարհամաս, այլ կղզիներ են և դրանց տվեցին ներկայիս անունը՝ Նոր Զելանդիա, ինչպես Հոլանդիայի նահանգներից մեկն է կոչվում:

Ու թեև Թասմանի անվանը այսօր ամենուրեք կարելի է հանդիպել Նոր Զելանդիայում, թեև նրա անունով և՛ լեռ է կոչվում, և՛ գետ, և՛ ծովածոց, և՛ սառցադաշտ, թեև նրա անունն է կրում անհանգիստ Թասմանյան ծովը, բայց այնուամենայնիվ ում էլ որ հարցնես Նոր Զելանդիայում, կասի, որ այդ երկիրը հայտնագործել է անգլիացի նավապետ Կուկը:

Դարձյալ նավապետ Կուկը՝ ամենահռչակավորն ու թերևս ամենահաջողակը աշխարհի բոլոր ծովագնացներից: Նա Թասմանից ավելի քան հարյուր տարի հետո, 1769 թվականին, մոտենում է Նոր Զելանդիայի ափերին, մի քանի փորձից հետո ափ է դուրս գալիս, տեղացիների լեզվով խոսող իր կղզիաբնակ ուղեկցողի միջոցով կապ հաստատում մաորիների հետ և դառնում Նոր Զելանդիայի վերջնական հայտնագործողը:

Բայց Ձեյմս Կուկը աշխարհի ծայրը չէր հասել զուտ աշխարհագրական հայտնագործություններ կատարելու: Նա Նոր Զելանդիան հայտարարում է Անգլիայի հպատակ երկիր:

Իհարկե, մաորիները հեշտությամբ չեն ենթարկվում նվաճողներին: Դեռ շատ տարիներ է տևում նրանց կատաղի պայքարը ֆրանսիացի և անգլիացի գաղութարարների դեմ, մինչև որ Բրիտանական կղզիներից այստեղ հասած անգլիացիներն ու շոտլանդացիները հիմնական բնակություն են հաստատում, քաղաքներ ու ամրոցներ են կառուցում և 1840 թվականին Նոր Զելանդիան դարձնում անգլիական գաղութ:

Թանգարանում շատ հարուստ նյութեր կան, որ մաորիների ազգային-ազատագրական անխոնջ պայքարի փայլուն վկայություններն են: Հատկապես ուշագրավ են որձաքարերից ու նեֆրիտից պատրաստված մաորի ռազմիկների զենքերը, առաջնորդների բարեյյեֆ դիմանկարները: Առաջնորդների դիմանկարների մի ամբողջ պատկերասրահ կա թանգարանում՝ սարսափազդու գույները դեմքերին, մարտականորեն ցցված փետուրները մազերի մեջ, խսիրե կիսահագուստներով և դաջվածքներով ամենուրեք, հատկապես ոտքերին: Այդ դաջվածքները նաև մղած մարտերի թվի մասին են պատմում: Որքան փորձառու և պատվավոր էր ռազմիկը, այնքան շատ դաջվածքներ ուներ: Թանկ է եղել այն ժամանակ ներկը, և ամեն ոք չէ, որ հնարավորություն է ունեցել այն գնելու:

Ահա եղեգնածածկ այն տնակը, որտեղ ծեր առաջնորդները խորհրդի են նստել՝ Հոտոնուին: Պատերի փայտե հարթաքանդակները տոհմի կենսագրությունն են պատմում: Մաորի երեխաները դրանցով են իմացել, թե ովքեր են եղել իրենց նախահայրերը: Եթե նոր դիմաքանդակ է հայտնվում, ուրեմն ընտանիքի անդամներից մեկն էլ է արժանացել անմահների կոչման:

Քանդակների մեծ մասում մատրիները նկարված են դուրս հանած լեզուներով: Դա նրանց դեմքերին կատաղի արտահայտություն է տալիս և հակառակորդներին սարսափեցնելու համար է:

Մրահի մի անկյունում ցուցադրված են մատրիների հագուստները՝ կակա և կիվի թռչունների փետուրներից, որն ամենաթանկն է: Ռազմիկները տուր թռչունի փետուրներով էին գործում իրենց հագուստը և ժառանգաբար փոխանցում ավագ որդիներին:

Մատրիների կրծքի վրա պարտադիր կարգով թելից կախված էր նեֆրիտից սարքված մարդկային սաղմ, որը նրանք կոչում են տիկի և կրում իբրև թալիսման, իբրև կյանքի հավերժության խորհրդանիշ:

Ահա և այն արմատները, որոնցով սիրում էին սնվել մատրիները՝ թարոն և կումարան՝ քաղցր կարտոֆիլը: Պատերի տակ ամենուրեք դեղին սաթի հսկայական կտորներ են:

Ապակու տակ, արհեստական կանաչի վրա տեղավորված է կիվիների ընտանիքը: Յավոք, այսօր Նոր Զելանդիայում այդ զարմանալի թռչունի խրտվիլակները կարող են տեսնել միայն: Շատ քիչ կիվիներ են մնացել բնության մեջ, թեև նրանք արժանի էին շատ ավելի մեծ խնամքի ու հոգատարության:

Հարցն այն է, որ կիվի թռչունը բնության հազվագյուտ ստեղծագործություններից մեկն է և ապրում է միայն նորզելանդական կղզիներում: Մայր կիվին տարեկան ընդամենը մի ձու է ածում և ձվի հետագա խնամքը հանձնում հայր կիվիին, որը թուխս է նստում մոտ երկու և կես ամիս: Նոր սերնդի նկատմամբ նման համագործակցված հոգատարություն հազվագյուտ է կենդանական աշխարհում: Կիվիին նույնիսկ թռչուն չի կարելի անվանել, որովհետև ոչ պոչ ունի, ոչ էլ թևեր և բնականաբար չի թռչում: Մուգ դարչնագույն փետուրներով, հավի մեծությամբ կիվին բավականին երկար կտուց ունի, որի վրա հենվում է հանգստանալու ժամանակ: Ցերեկները ողջ օրը քնում է կիվին ոտքերին ու կտուցին հենված, իսկ գիշերները որսի է դուրս գալիս՝ անխնա ոչնչացնելով որդերին ու թրթուրներին:

Մատրիական լեգենդներում ու երգերում, գրականության մեջ ոչ մի կենդանի այնպես չի փառաբանվում, ինչպես կիվին: Ահա այդ լեգենդներից մեկը:

...Հին-հին ժամանակներում աստվածների սիրելի երկիր Աոտեարոայում (մատրիները այդպես էին անվանում Նոր Զելանդիան, որը թարգմանաբար նշանակում է «երկար սպիտակ ամպ») անտառներ քիչ կային: Եվ քիչ էին քաղցրահամ պտուղները, և մատրիները չէին կարողանում շատ վականեր (նավակներ) պատրաստել ձուկ որսալու և հակառակորդների դեմ կռվելու համար: Եվ որովհետև քիչ էին անտառները, աստվածները մտածում էին դրանք պահպանելու, մեծացնելու մասին: Եվ հովանավորում էին անտառներին: Բայց անտառների թշնամիները՝ որդերն ու թրթուրները, ոչնչացնում էին ծառերը, մերկացնում-չորացնում էին կանաչ տնկիները: Եվ աստվածները ստիպված էին դիմել թռչուններին:

– Թռչուններից ով կհետևի մեր անտառներին, հավատարմորեն կծառայի նրանց և կկռվի որդերի ու թրթուրների դեմ, նա էլ կհամարվի Աոտեարոայի թռչունների թագուհին:

Լսեցին աստվածներին կիվիները, թռան իջան երկնքից և իրենց նվիրեցին անտառների պահպանությանը: Ու որպեսզի հանկարծ երբևէ չգայթակղվեն ու չթռչեն, հանեցին–դեն նետեցին իրենց թևերը:

Այդ օրվանից կիվիները դարձան աստվածների սիրելիները և մատրիների պաշտամունքը: Մատրիները իրենք էլ հպարտությամբ իրենց կիվի են անվանում:

– Մենք կիվի ենք,– ասում են նրանք,– մենք սիրում ենք մեր երկիրը և չենք կարող ապրել աշխարհում ուրիշ ոչ մի տեղ:

Նորգելանդական լրագրերում, մարդկանց խոսակցությունների մեջ հաճախ կարելի է հանդիպել նմանօրինակ նախադասությունների՝ «Կիվիները պատվով մասնակցեցին երկրորդ համաշխարհային պատերազմին», «Կիվին ռուս հովիվներին սովորեցնում է ոչխար խուզել» (Խոսքը վերաբերում է նշանավոր հովիվ Գոդֆրի Բոուենին, որը շրջագայում էր Սովետական Միությունում), «Կիվիների նման վագոդներ չկան» և այլն, և այլն:

Կիվին Նոր Զելանդիայի խորհրդանիշն է և տեղ է գտել նույնիսկ պետական մետաղադրամների վրա՝ անգլիական թագուհու կողքին: Կիվիի նկարներն ամենուրեք են՝ ամեն տեսակի ռեկլամների և հուշանվերների վրա, գրքերի շապիկներին ու թաշկինակների վրա, կրծքանշաններին և խանութների ցուցափեղկերում:

Եվ ոչ միայն թխադեմ մատրիներն են իրենց կիվի անվանում: Հպարտորեն իրենց կիվի են կոչում նաև «գունատ դեմքերով» պակեխաները, այսինքն նրանք, ում նախահայրերը այս երկիրն են եկել Անգլիայից, Շոտլանդիայից և Իռլանդիայից և մատրիների հետ այսօր Նոր Զելանդիայի հիմնական բնակչությունն են կազմում:

Հենց այն օրերին, երբ մենք Օքլենդում էինք, տեղի էին ունենում ռեգբիի միջազգային խաղեր, և շատ ազդագրերի վրա խոշոր տառերով տպված էր, «Զգուշացեք. կիվին հյուրընկալ է ամեն ինչում, բացի սպորտից»:

Նոր Զելանդիան աշխարհի «ամենասպորտային» երկրներից մեկն է: Ինչպես կատակով տեղացիներն են ասում, այստեղ դեռ օրորոցում երեխաներին սովորեցնում են ռեգբի և կրիկետ խաղալ, վազել և պարապել լողով: Եվ սպորտի իրոք մասսայականությանը շատ է օգնում երկրի կլիման:

Նրանք կարող են ամառային սպորտաձևերով զբաղվել շուրջ տարի: Օքլենդցիներն, օրինակ, պատկերացում չունեն ձյան ու ցրտի մասին: Նույնիսկ հուլիսին, երբ Օքլենդում խիստ ձմեռ է, ջերմաստիճանը երբեք չի իջնում պլյուս տասից: Օքլենդում հիմնականում ամառ է, և այն էլ ոչ շոգ ամառ: Միջին ջերմաստիճանը ամռան ամենաշոգ ամիսներին՝ այսինքն հունվարին ու փետրվարին, 20 աստիճանից չի բարձրանում:

Ահա թե ինչու է խոտն այստեղ փարթամ ու կանաչ տարվա բոլոր եղանակներին: Ըստ որում ամենաառաջնակարգ զբոսայգիներում անգամ, ինչպիսին է, օրինակ, նշանավոր Դոմեյնը, բոլորին թույլատրվում է քայլել գագոնների վրայով, խաղալ ու պառկել, և դրանից կանաչը չի փչանում: Գաղտնիքն այն է, որ Նոր Զելանդիայում բացառիկ ուշադրություն է դարձվում

խոտի մշակությանը: Կանաչն անընդհատ խնամվում և խուզվում է, դե, իսկ առատ անձրևներն էլ կատարում են իրենց գործը: Մենք Նոր Զելանդիայում խոտ մշակելու տասնյակ ու տասնյակ մեքենաներ տեսանք: Ինչ վերաբերում է լեռնային արոտներին ու մարգագետիններին, որտեղ սնվում են երկրի միլիոնավոր ոչխարներն ու խոշոր եղջերավոր անասունները, ապա դրանց խոտը նորացվում ու ցանվում է ինքնաթիռներից:

Հազվագյուտ բնություն ունի Նոր Զելանդիան: Այստեղ, մենք հանդիպեցինք կաուրի կոչվող ծառերի, որոնց տարիքը հազար, հազար հինգ հարյուր տարուց ավելի է և որոնց բների շրջագիծը հասնում է տասնհինգ–տասնութ մետրի: Այստեղ ծառեր կան, որոնց ճյուղերին երիցուկներ են աճում, և ծառեր կան, որոնց պտուղը պոմիդորն է: Մեզ մի քանի անգամ հյուրասիրեցին այդ պոմիդորով և զարմացած ծիծաղում էին, երբ մենք աղ էինք ցանում դրանց վրա: Պարզվեց, որ այդ պոմիդորները շաքարավազով պետք է ուտել: Վելինգտոնում մեզ առաջարկեցին մի միրգ, որը երբևէ չէինք տեսել: Կոչվում էր ֆիջավա: Դա քիչ թթվաշ և շատ զովացնող, արտառոց ձևի պտուղ էր: Կլոր երկարավուն, սրճագույն կեղևով և կանաչ մսալի միջուկով: Կորիզները փոքրիկ էին ու սև, քիչ նման տանձի կորիզների:

– Որովհետև դա անանասի և տանձի խառնուրդ է, – ծիծաղելով ասաց Օլգան:

Օբլենդում մեր ուշադրությունը գրավեցին նաև բավականին հսկա, սակայն տերևագուրկ ծառեր: Երբ Օլգային հարցրեցինք դրանց մասին, նա ներողամտաբար ժպտաց.

– Դուք միշտ մոռանում եք եղանակների տարբերությունը: Այսօր Հոկտեմբերի 9–ն է, ճի՞շտ է: Ուրեմն գարնան առաջին օրերն են, ցուրտ է, այդ պատճառով էլ որոշ ծառեր դեռևս տերևակալած չեն: Մնացե՛ք մեզ մոտ ևս երկու ամիս, և կտեսնեք, թե ինչպիսի հրաշք ծաղիկներով են ծաղկում այս ծառերը: Սրանք հենց նորզելանդական տոնածառներն են և կոչվում են պահուտա–պաուա:

Եվ իսկապես, մենք Նոր տարվա մասին չէինք մտածել: Եթե այդ երկրում հունվարին ամառ է, ե՞րբ են ուրեմն տոնում Նոր տարին, կամ ինչպես Անգլիայում է. ընդունված՝ Ծննդի տոները:

Պարզվում է, որ հավատարիմ նաև այդ ավանդությանը, նորզելանդացիները Անգլիայի բնակիչների նման Ծննդի տոները նշում են դեկտեմբերի վերջին շաբաթ օրը: Եվ տոնածառի փոխարեն սենյակները զարդարում են պահուտա–պաուայի վառ կարմիր ծաղիկներով: Իսկ մնացածը նույնն է՝ թե սպիտակ մորուքով ու սպիտակ հագուստով Ձմեռ պապին, թե ամանորի հարուստ սեղանն ու ուրախությունը և թե անպայման երեխաների նվերները: Իսկ հետո՞... Իսկ հետո մարդիկ լողազգեստ են հագնում և սլանում ծովափ՝ ամռան շոգը զով ալիքների մեջ խեղդելու:

ԼՈՒՅՍԻ ՀՐԱՇՔԸ ՔԱՐԱՆՁԱՎՈՒՄ

Ավտոբուսով մեկնում ենք Ռոստոքում, նորգելանդական նշանավոր հեյդերների աշխարհը: Ճանապարհին, ինչպես ամենուրեք, առանձնատներ են, իրենց հողամասերով ցանկապատված: Ցանկապատը փշեր են, որ հիմա ծաղկել են դեղին և նարնջագույն գույներով: Մառիկների ժամանակ այստեղ, իհարկե, ցանկապատեր չեն եղել: Սպիտակամորթներն են Անգլիայից ու Շոտլանդիայից ներմուծել փշե այս ցանկապատերը և, ինչպես ասում են՝ կրակն են ընկել: Հիմա ուզում են ավելի քիչ տեղ զբաղեցնել, գործնական մետաղյա ցանցեր դնել, բայց ոչ մի կերպ չեն կարողանում ոչնչացնել պարարտ հողում խոր արմատակալած փշի թփերը:

Ըստ որում, միայն փշե ցանկապատերը չեն, որ այստեղ հիանալի աճում ու փարթամանում են:

Ինչ էլ որ Նոր Զելանդիա են բերել անգլիացիներն ու շոտլանդացիները՝ ծաղիկներ, ծառեր, թե թռչուններ ու կենդանիներ, զարմանալի արագ թափով աճում ու բազմանում են՝ շնորհիվ բարենպաստ կլիմայական պայմանների և ջրերի առատության:

Իսկ ճագարները պարզապես պատուհաս են դարձել: Բազմանում են այնպիսի արագությամբ ու թափով, որ վերածվել են ազգային չարիքի, ուստի, ոչնչացնում են ոչխարների բաժին խոտը: Ոչխարներ, որոնք Նոր Զելանդիայի եկամուտի խոշոր բաժինն են կազմում:

Բնակչությունն ու պետությունը անողոք կոիվ են մղում ճագարների դեմ, որսում ու թունավորում են նրանց, բայց այնուամենայնիվ այսօր էլ ճագարի պրոբլեմը լուծված չէ:

Մոտ քսան կիլոմետր անցնելուց հետո մեր առջև հայտնվեց Նոր Զելանդիայի ամենախոշոր գետը՝ Վայկատոն, որ մառիկների պատկերավոր լեզվով նշանակում է «Հեռուները հոսող ջրեր»: Դա մի փառավոր, հորդառատ գետ է, մոտ 450 կիլոմետր երկարությամբ, և եթե այս մասում լայնությունը չի անցնում 200 մետրից, ապա «մեղավորը» դարձյալ մարդիկ են: Նրանք հսկայական տարածության վրա բարձրացրել են գետի ափերը, չորացրել ճահիճները և ստեղծել վառ- փարթամ մարգագետիններ, որտեղ հիմա հանդարտ արածում են անթիվ- անհամար ոչխարներն ու կովերը, երկրով մեկ տարածելով Վայկատոյի շրջանի կաթի ու յուղի հոշակը: Ի դեպ, աչքի է զարնում, որ ոչխարները միայն սպիտակ են:

– Ես արդեն հարցրել եմ, – ասաց մեր խմբի տղաներից մեկը՝ աշխարհագրության մասնագետ Իդոր Լեբեդևը, – և ինձ պատասխանեցին, թե սպիտակ բուրդը ամեն գույնի կարելի է ներկել, ինչ չի կարելի ասել սևի կամ գորշի մասին: Ահա ամբողջ գաղտնիքը:

Մենք երկար-երկար ընթանում ենք Վեյկատո գետի ափով և կրկին, արդեն որերորդ անգամ, ժյուլ Վեռնին ենք հիշում: Հենց այս գետով և այս ուղղությամբ էր մառիկների առաջնորդ Կայ-Կումուն (որն ըստ ժյուլ Վեռնի մառիկներն նշանակում էր «թշնամուն լափող մարդ») Օքլենդից հեռու տանում իր գերիներին՝ նավապետ Գրանտի որդիներին և նրանց ուղեկիցներին:

Անցնում ենք Ռեմինսի լիճը և ճանապարհը շարունակում Նարուվոխիա փոքրիկ քաղաքով: Փողոցներից մեկով անցնելիս ավտոբուսը կանգ է առնում, և մառրի վարորդը մեզ հրավիրում է դուրս գալ ու դիտել կարմիր տանիքով, դեղին ներկված պատերով գողտրիկ մի տուն:

– Այստեղ մեր՝ մառրիների թագուհին է ապրում, – ասում է նա: – Իմացած եղեք, որ մենք էլ անգլիացիների նման թուլություն ունենք թագուհիների հարցում:

Նա ծիծաղում է բարձրաձայն, ցուցադրելով ամուր, սպիտակ ատամները:

– Դե, իսկ հիմա հեծեք ձիերը, մինչև Համիլտոն քաղաքը բան չի մնացել: Իսկ Համիլտոն քաղաքը հայտնի է նրանով, որ այնտեղ ապրում են 65 հազար մարդ և 80 հազար խոշոր եղջերավոր անասուն: Դա ձեր ականջին կոպիտ չի՞ հնչում, – շարունակելով կատակել, ասում է նա, – այդ 80 հազարն են պահում 65 հազարին:

Երկար ճանապարհից հետո հաճույքով հանգստանում ենք «Վայտոմո» հյուրանոցում, հետո ոտքով իջնում ենք դեպի ձորը, որովհետև մեզ խոստանում են ցույց տալ Վայտոմոյի հոչակավոր քարանձավները, «Աշխարհի ութերորդ հրաշալիքը», ինչպես քարանձավներից լույս աշխարհ դուրս գալով բացականչել է աշխարհում շատ բան տեսած Բեռնարդ Շոուն:

Հյուրանոցի ճանապարհից մի արահետ է պոկվում, ընկնում է ձորը ու գնում սարի լանջով, բավականին մեծ թեքության վրա: Հետո արահետը փայտամածի է վերածվում և կանգ առնում հենց սարի լանջի մեջ փորված մի կարմիր դռնակի առջև: Դռնակի վերևում լապտեր է վառվում: Ուրեմն փակ է դուռը, բացատրում են մեզ: Պետք է սպասել: Մենք սպասում ենք, իսկ ավտոբուսի վարորդն ու Օլգան իրար ընդհատելով զգուշացնում են մեզ:

– Կինո և լուսանկարչական սարքերը թողեք դրսում, ներս տանել չի կարելի:

– Չլինի թե հանկարծ ներսում ձայն հանեք, խստիվ արգելված է:

– Ոչ մի դեպքում չհեռանաք իրարից, անչափ վտանգավոր է:

Երբ հանգչում է լապտերը և բացվում է կարմիր դուռը, մենք գրեթե ահուդողով ենք մտնում ներս:

Թաց, ահավոր քարանձավ է, որ նույնիսկ մեզ՝ շատ քարանձավներ տեսած կովկասցիներիս զարմանք է պատճառում: Մեր գլխավերևում սուր քարաբեկորներ ու ստալակտիդներ են կախված, որ ինչ–որ տեղից ընկնող էլեկտրական աղոտ լույսի տակ արտասովոր ու հեքիաթային ձևեր են ընդունել: Մեր ուղեկցորդների շշուկների ներքո երկար ժամանակ քայլում էինք գրեթե կռացած: Հետո առաստաղը բարձրանում է, և մենք հայտնվում ենք կարմիր լույսով ողողված մի անդնդախոր կիրճի պոնկին: Ներքևից խորհրդավոր ու ահալի վշշոց է լսվում: Երկաթե նեղ աստիճանները մեզ ներքև են տանում, նորից բարձրացնում և ուղեկցում են դեպի մի նոր անձավ: Այստեղ էլեկտրական լույսերը ավելի պայծառ են վառվում և ավելի որոշակի են երևում կրաքարե բնական հուշարձանները: Վերևից ինչ–որ տեղից կաթնագույն ջուր է կաթում:

Մեզ բացատրում են, որ այս վայրերում 12 մղոն շրջագծով շուրջ 2400 նման քարանձավներ կան: Սա իրոք որ հեքիաթային աշխարհ է՝ լույսերով անչափ խելացիորեն լուսավորված:

Քարանձավներից մեկում ստալակտիդները կախված են ուղիղ շարքով, իրար կողքի և գրեթե հասնում են գետնին: Իզուր չէ, որ այս անձավին «Երգեհոն» անունն է տված:

– Այս քարանձավը առնվազն տասներկու հազար տարվա պատմություն ունի,– շնչում է Օլգան,– այո, այո, մի զարմացեք, հաշվված է: Մի ստալակտիդի գոյացումը 20–30 տարի է տևում:

Հաջորդ քարանձավում ստալակտիդները և ստալակմիդները մղվում են դեպի իրար՝ վերևից ու ներքևից: Ստալակտիդները պղնձի ձայն են հանում, երբ հարվածում են, այնինչ ստալակմիդները միայն խուլ թնդում են, ուրեմն ծանր են ու լիքը:

Այս մյուս քարանձավը «Տաճար» անունն ունի: Այստեղ առաստաղը բարձր–բարձր է, և շշուկներն անգամ բազմապատկվում են: Մառիների երգչախումբը տարին երկու անգամ այս անձավն է գալիս՝ ժապավենի վրա ձայնագրելու իրենց երգերը: Սա միակ քարանձավն է, որտեղ թույլատրվում է երգել, և նույնիսկ պարտադիր է: Ինձ էլ ստիպեցին, և ես երգեցի «Հորովելը»: Հավատացնում են ձեզ, որ ձայնային իմ համեստագույն տվյալներով հանդերձ այդ զարմանալի ակուստիկա ունեցող քարանձավում ես համարյա Ռուբեն Մաթևոսյանի նման երգում էի: (Այնուամենայնիվ, ներիր, Ռուբեն):

Քարանձավի կողքից ահռելի վշտոց էր գալիս, ասես հսկայական մի ջրվեժ էր խորտակվում այնտեղ: Եվ որքան մեծ եղավ մեր զարմանքը, երբ մեզ ուղեկցող մառիի տղան միացրեց ձեռքի լապտերը, և մենք ընդամենը մի փոքրիկ առվակ տեսանք, որ թափվում էր վերևից և ահավոր ջրվեժի պատրանք ստեղծում:

Այնուհետև լրիվ մթության մեջ մեզ հրավիրում են հաջորդ քարանձավը, որն էլ հենց աշխարհի ութերորդ հրաշալիքն է հանդիսանում: Մենք քայլում ենք ինչ–որ տախտակների վրայով, իջնում ու կանգ ենք առնում այդ խորհրդավոր քարանձավի պոնկին ու մեր հերթին սպասում: Ներքևում ինչ–որ տեղ ճողփում է ջուրը: Մեզ հրամայում են քիչ էլ առաջ շարժվել, մենք թեքվում ենք և... քիչ է մնում բացականչենք զարմանքից ու հիացմունքից: Մեր ոտքերի տակ հոսում է սև ու վիթխարի մի գետ: Եվ ամբողջ քարանձավը լուսավորված է վառ կանաչավուն լույսով: Մեզ լաստանավ են նստեցնում, և մառիի տղան վերևից կախված երկաթալարից բռնած հրելով նավակը, մեզ տանում է կիրճի միջով՝ ինչ–որ տեղից շիթ է թափվում, ինչ–որ տեղ ճողփում է ջուրը...

Սա իսկապես հրաշք է:

Մեր վերևում և շուրջը միլիոնավոր փոքրիկ աստղեր են փայլում, առկայծում են ու վառվում ֆոսֆորային լույսով: Եվ այդ հեքիաթային լույսի աղբյուրը միլիոնավոր ու միլիոնավոր թրթուրներ են, որոնցով տառացիորեն ծածկված են քարանձավի պատերը: Այդ թրթուրները կոչվում են քեմպո: Երբ նայում ես մոտիկից, դրանք սպիտակ, բարակ որդերի նման կախված են ցած, և միայն ամենավերջում արցունքի նման պարզ ու վճիտ մի կաթիլ լույս է վառվում: Սրանք ոչ կայծոռիկներ են և ոչ էլ լուսաորդեր, որոնցից ես շատ եմ տեսել մեր հայրենի

անտառներում և Նիգերիայի ջունգլիների մոտ: Սրանք խոշորաթև ճանձերի թրթուրներ են, որ մոտիկից զգվելիորեն լարծուն թելերի են նման, իսկ հեռվից ստիպում են, որ սիրտդ ուռչի գեղեցկության զգացումից:

– Այս քարանձավում 150 միլիոն քեմպո կա, – նավակ նստելուց առաջ մեզ շնչաց մատրի տղան, – բայց եթե ձայն հանեք, 150–ն անգամ չեք տեսնի:

Դա իրոք հետաքրքիր երևույթ է: Լուսավորող այս թրթուրները զարմանալիորեն վախենում են լույսից ու ձայնից: Բավական է մի աղմուկ, և 150 միլիոն աստղերն էլ ասես հրամանով հանգչում են և մարած են մնում երկար ժամանակ:

– Իսկական գեղեցկությունն ընդհանրապես աղմուկ չի սիրում, – ասաց Օլգան:

Լաստանավակն անաղմուկ սահում էր ստորերկրյա այս արտասովոր գետի վրայով, ու մենք շունչներս հիացմունքից պահած, լայն բացած աչքերով դիտում էին աստղոտած երկինքը: Լույսն այնքան առատ է, որ մենք լավ տարբերում ենք իրար և նույնիսկ կարողանում ենք մեր կցկտուր, խանդավառ ապրումները արագ–արագ թղթին հանձնել:

Ընթերցող, դու ինձ ներիր այսքան շատ օգտագործած ածականների համար: Ես խոսքի այդ մասի երկրպագուն չեմ եղել երբեք: Բայց այստեղ ուրիշ կերպ հնարավոր չէ:

Նավակը շարունակում է դանդաղ սահել ստորերկրյա գետի վրայով, որը 400 յարդ անցնելուց հետո է միայն երկրի երես դուրս գալիս, և ակամա մտածում ես, թե ինչ զգացում պետք է ապրած լինի առաջին մատրին, որ պատահաբար կանաչ լույսի այս թագավորությունն է ընկել: Նա անպայման գետնատարած աղոթել է իր աստվածներին:

Անպայման: Որովհետև ակամա ինքդ էլ ես ուզում աղոթել:

Մատրիներին վաղուց են հայտնի եղել այս քարանձավները: Իսկ առաջին սպիտակամորթն այստեղ մտել է 1887 թվականին: Դրանից հետո մինչև այժմ լույսերի քարանձավը Նոր Զելանդիայի ամենատեսարժան վայրն է հանդիսանում, և ամեն տարի երկրագնդի ծայրերից տասնյակ հազարավոր մարդիկ են հասնում Վայտոմա՝ աշխարհում այս միակ, անկրկնելի լույսի տաճարը տեսնելու:

Հենց միայն այս քարանձավների համար արժեր Նոր Զելանդիա հասնել:

ՈՐՏԵՂ ԵՌՈՒՄ Է ՀՈՂԸ

Նորից ավտոբուս: Նորից ճանապարհներ:

Մեզ մոտ երբ անձրև է գալիս և ինչ–որ տեղ մաքուր է երկինքը, ասում են.

– Հիմա ծիածան կլինի:

Այստեղ հակառակն է: Երբ ծիածան կա, բոլորն ասում են վստահ.

– Հիմա անձրև է գալու:

Եվ այդպես է: Օդը խոնավ է ու թափանցիկ: Թվում է, թե օդի մեջ անընդհատ անձրև կա:

Անցնում ենք համատարած կանաչի միջով: Խոտն այստեղ աստծո շնորհ է համարվում, աճում է կլոր տարին: Շուրջդ, որքան աչքդ կտրի, զմրուխտ մարգագետիններ են և ոչխարներ, ոչխարներ, ոչխարներ՝ սպիտակ քարերի նման ընկած այդ մարգագետինների մեջ:

Որքան էլ տարօրինակ թվա, մարդկանց գրեթե չենք հանդիպում: Քաղաքներում էլ նրանք հազվադեպ են երևում: Իսկ արոտավայրերում տասնյակ կիլոմետրեր կարող ես անցնել... և ոչ մի մարդ: Ասենք, տարօրինակ չպետք է լինի, չնայած աշխարհի քարտեզի վրա իրենց գրաված փոքր դիրքին, այս կղզիներն իրենց տարածությամբ ավելի մեծ են, քան Բրիտանական կղզիները: Այնինչ ընդամենը 3 միլիոն մարդ է ապրում Նոր Զելանդիայում: 3 միլիոն մարդ, և փոխարենը 17 միլիոն ոչխար և երեք միլիոն խոշոր եղջերավոր անասուն:

Որքան գնում, այնքան ավելի ու ավելի շատ ծառերի ենք հանդիպում: Դրանք հիմնականում եղևնիներ են և բարդիանման երկարահասակ ծառեր, որ դարձյալ նոր են տերևակալում:

Ահա և մի կտոր կուսական, նախապատմական անտառ: Իսկական ջունգլի՝ հին, մամռակալած հող, դարավոր հսկա ծառեր և բազմատեսակ լիանաներ ու պատատուկներ, որոնք անանցանելի են դարձնում այդ անտառները: Անտառի մեջ խոնավ է ու մութ: Թվում է, թե ուր որ է ծառերը ճարճատելով մի կողմ կքաշվեն և անտառից կհայտնվի սարսափելի դինոզավրը... Բայց ծառերը կանգնած են հանգիստ, և ոչ թե դինոզավր, ամենասովորական լուսան անգամ չի կարող հայտնվել նորգելանդական անտառից:

Որովհետև այս անտառներում, այս երկրում գիշատիչներ չկան: Չկան ոչ առյուծներ, ոչ վագրեր, ոչ օձեր և ոչ էլ նույնիսկ որևէ միջատ, որը վտանգավոր լինի մարդու կամ կենդանու համար՝ ոչ բոռ, ոչ տիգ, ոչ լու, ոչ մոծակ...

Փոխարենը անտառները լի են Եվրոպայից բերված ու այստեղ սարսափելի արագությամբ բազմացած վայրի եղջերուներով ու վայրի ձիերով, վայրի խոզերով, ոչխարներով ու վայրի այծերով: Պաշտոնական տվյալներով, միայն եղջերուների գլխաքանակը անցնում է մեկ միլիոնից: Պետությունը, իհարկե, որոշակի ժամկետների, որսորդներին հորդորում ու խրախուսում է եռանդուն գործել, առավելապես այն ժամանակ, երբ այդ կենդանիներն ու հատկապես ճագարները սպառնալիք են դառնում անտառային մատղաշ տնկիների համար: Ասում են, թե դարեր առաջ այս վայրերում համատարած նման կուսական անտառներ են եղել, և եվրոպացիներն են կտրել, ոչնչացրել այդ անտառները, մարգագետիններ սարքելու և անասնապահությանը զարկ տալու համար: Հետո, երբ կլիմայական փոփոխություններ են կատարվել և երբ զգացվել է անտառանյութի կարիքը, սկսել են արհեստական անտառներ տնկել: Եվ որքան էլ տարօրինակ թվա, անտառային տնտեսության զարգացմանը մեծապես նպաստել է 1930–31 թվականների տնտեսական ճգնաժամը: Տասնյակ հազարավոր

գործագործակ սովյալ մարդկանց աշխատանքով որևէ կերպ բավարարելու համար կառավարությունը նրանց առաջարկել է կալիֆորնիական սոճու անտառներ տնկել: Եվ տնկվել է հարյուր հազար հեկտար անտառ: Դա աշխարհի ամենախոշոր արհեստական անտառն է, որը նորոգվում է անընդհատ ու անընդհատ: Ամերիկայից, Ասիայից, Աֆրիկայից և Եվրոպայից բերված տնկիները հրաշալի ընտելացել են այստեղ: Հատկապես, կալիֆորնիական եղևնիները, որոնք երկու անգամ ավելի արագ են աճում, քան իրենց հայրենիքում:

Օդում հետզհետե ծծմբի հոտ է զգացվում: Հեռվում ինչ–որ տեղ գոլորշիներ են բարձրանում հողից: Ինչ–որ տեղից խուլ սուլոցի տարօրինակ ձայն է գալիս:

– Մոտենում ենք Վայրակեի էլեկտրակայանին,– ասում է Օլգան:

Քիչ անց մենք իրոք որ մոտենում ենք էլեկտրակայանի նման մի կառույցի: Ամենուրեք հսկայական խողովակներ ու խողովակաշարեր են ձգվում գետնի վրայով, թեքվում ու շարունակվում օդում: Բայց տարօրինակն այն է, որ շուրջը ոչ ջրամբար կա, ոչ գահավիժող ջուր:

– Որովհետև ջուրն այստեղ գետնի տակից է գալիս,– խորամանկորեն խնդմնդալով բացատրում է Օլգան:

Այո, մենք գտնվում ենք աշխարհում առաջին (ուշադրություն դարձնո՞ւմ եք, թե քանի անգամ ենք օգտագործում այս արտահայտությունը) էլեկտրակայանում, որն աշխատում է երկրի ընդերքից դուրս պոռթկացող շոգու ուժով:

Կայանի առաջին հերթը կառուցվել է 1959 թվականին, և հիմա տարեկան մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն կիլովատ ժամ էներգիա է տալիս, որը կրկնակի էժան է ջրից և ածուխից ստացված էներգիայի համեմատությամբ:

Հսկա խողովակները շոգին դուրս են բերում երկրի ընդերքից, շուրջ երկու կիլոմետր խորությունից: Դուրս մղվող ջրի ջերմաստիճանը 250 է: Էլեկտրակայանի սարքավորումների մեծ մասը չժանգոտվող պողպատից է կառուցված, իսկ ինքը՝ էլեկտրակայանը, երկրաշարժադիմացկուն է:

Այլ կերպ անհնարին կլինեք, որովհետև այստեղ երկրաշարժերն այնքան սովորական են, որ թույլերը չեն էլ հուզում մարդկանց: Այսինքն ինչ հուզեն, երբ օրական մի քանի անգամ երկրաշարժ է լինում՝ ինչպես Տոկիոյում:

Մենք երկար շրջում ենք այդ հազվագյուտ էլեկտրակայանի բաժանմունքներում, կրկին ու կրկին զարմանալով ու հպարտանալով մարդկային ուղեղի հզորությամբ, որի համար իրոք անհաղթահարելի ոչինչ չկա աշխարհում:

Մենք գոռգոռալով մեր հիացմունքն ենք հայտնում կայանի աշխատողներին, որովհետև հատկապես տուրբինների բաժանմունքում անասելի աղմուկ էր, և փոխարենը լսում գոռգոռոց կոմպլիմենտներ սովետական փայլուն տղաների մասին:

Պարզվում է, որ այստեղ երկար ժամանակ սովետական մասնագետներ են աշխատել: Նրանք ուսումնասիրել են նորգելանդացիների փորձը՝ մեր Կամչատկայում նման էլետրակայան կառուցելու համար:

Վայրակեի էլետրակայանի շրջակայքում, ահագին տարածության վրա, այստեղ ու այնտեղ մեկ էլ գոլորշու շառաչուն սյուներ էին բարձրանում երկինք, և օդը դողդում էր դրանց հեքից:

Մենք վաղուց էինք նստել մեր տանջահար ավտոբուսը, վաղուց էինք հեռացել Վայրակեից, բայց դեռ երկար ժամանակ մեր ականջներին էին հասնում եռացող հողի տնքոցներն ու ազատագրվող գոլորշու ծանր թառանչը:

ՄԵՆՔ ԱՄԵՆ ՏԵՂ ՍԵՎԱՆ ԵՆՔ ՓՆՏՐՈՒՄ

Ճանապարհը շարունակում է անցնել Վայկատո գետի ափով: Մենք դեպի գետի ակունքներն ենք գնում: Ամենաուշագրավ տեսարանը, որ մեզ ստիպեց իջնել ավտոմեքենայից՝ Հուկա-Ֆոլս ջրվեժն էր: Դա առանձնապես մեծ ջրվեժ չէ, սակայն շատ գեղեցիկ է ու փրփրաշատ: Այսինքն Հուկա՝ մատրիերեն փրփուր է նշանակում: Այստեղ ամեն ինչ երկնագույն նրբերանգներ ունի, թե փրփուրը, թե ջուրը, թե ժայռերը, որոնց վրայով սահում, թավալվում է գետը, իսկ երբ հանդարտվում ու ճամփա է ընկնում, դառնում է կապույտ-կապույտ... Պատկերացրեք այս ամենը վառ կանաչի մեջ, խայտաբղետ ներկված տնակների հարևանությամբ, հեռվում երևացող Մաունթ Ռոպերա սարի ձյունածածկ ֆոնի վրա, և ձեզ կթվա, թե 18-րդ դարի ֆլամանդական վարպետների կտավներն եք դիտում:

Ճանապարհը ծառս է լինում հանկարծ, մի քիչ բարձրանում է վեր, և երբ ուղղվում է նորից, իմ սիրտը տրոփում է հուզմունքից և անսպասելիությունից: Մեր առջև հպարտորեն փռված է Սևանը: Այսինքն ոչ թե Սևանը, այլ Սևանի նման մի լիճ, որը Թաուպո է կոչվում և Նոր Զելանդիայի ամենախոշոր լիճն է: Հսկայական լիճ է Թաուպոն՝ 612 քառակուսի կիլոմետր մակերեսով և շատ տեղերում մեր Սևանի նման խորությունը անցնում է 100 մետրից, լճի մի ափից մյուսը չի երևում կամ, ով գիտե, գուցե երևում է, բայց ուղղակի ձուլված է երկնքի հետ, որից և չերևալու պատրանք է ստեղծվում: Լճի ջուրը մաքուր է ու վճիտ՝ մեր Սևանի նման: Որտեղից էլ որ նայես, երևում է քարաշատ հատակն ու մանրիկ ավազը:

Բայց որքան էլ որ զարմանալի թվա, Թաուպո լճում նախկինում ձուկ գրեթե չի եղել:

Մարդիկ Եվրոպայից իշխան են բերել ու բուծել այս ջրերում: Եվ իշխանը փառահեղորեն բազմացել ու աճել է սառն ու վճիտ լճում: Ասում են, թե շատ հաճախ է պատահում 18-20 կիլոգրամանոց իշխան: Բայց մեզ չպատահեց: Երբ լճափի փոքրիկ ռեստորանում մեզ ձուկ մատուցեցին, այն մեր սովորական իշխանից քիչ էր մեծ, իսկ համով... թող ինձ ներեն աշխարհի բոլոր լճերի ձկները, մեր իշխանից համով ձուկ ոչ մի տեղ չկա:

Սկզբում մեզ թվում էր, թե Վայկատո գետը, որը մեզ Օբլենդից ուղեկցել էր մինչև այստեղ, սկիզբ է առնում Թաուպո լճից: Բայց պարզվեց, որ տեղացիները այդպես չեն համարում: Նրանք մեզ ասացին, որ Վայկատոն սկսվում է լճի հակառակ ծայրից, ձյունապատ լեռներից, գալիս անցնում է Թաուպո լճի միջով ու շարունակում ճանապարհը մինչև Թասմանյան ծովը: Դա դժվար է պատկերացնել, բայց ոչինչ ասել չես կարող: Ինչպես ասում են՝ երկիրն իրենցն է, և ամենքից լավ իրենք գիտեն, թե ինչն է իրենց մոտ որտեղ սկսվում և որտեղ ավարտվում:

Հա, քանի դեռ չենք հեռացել Թաուպոյից, չմոռանամ ասել, թե սա այն լիճն է, որի կողքին ինչ-որ տեղ մարդակեր Կայ-Կուման պատրաստվում էր դատաստան տեսնել Ժյուլ Վեռնի հերոսների հետ: Հիշո՞ւմ եք, թե ինչպես էր սարսափում Պագանելը և անընդհատ պատկերացնում իր գանգամաշկը ինչ-որ ցցի վրա չորանալիս: Եվ հենց այստեղ էլ վայրենիները դաջում էին տարաբախտի մաշկի վրա: Բայց ինչպես գիտեք, ի վերջո մեր խիզախ բարեկամներին հաջողվում է փախչել, սարը բարձրանալ, հրաբուխ կազմակերպել ու ազատվել հետապնդողներից:

Ինչ վերաբերում է հրաբուխ կազմակերպելուն, դրան քիչ է մնում հավատաս, որովհետև շրջապատում գրեթե ամենուրեք դողում է հողը և ասես հարյուրավոր անտեսանելի շոգեքարշերից գոլորշիներ են երկինք բարձրանում՝ շաչելով ու փնչալով:

Քիչ ենք հեռացել Թաուպո լճից և ահա հասել ենք արդեն փոքրիկ Կիրիկի լիճը: Սա հեյզերների կենտրոնն է: Գետաչափ տարածության վրա հոսում, բարձրանում է գոլորշին: Ես ձեռքս գետի մեջ եմ մտցնում ու դուրս քաշում սարսափած: Անասելի այրում է: Հողի ընդերքից գրեթե ամեն քայլափոխի այրող ջրի շիթեր են վեր ցայտում՝ աղմուկով ու թշնոցով: Նրանց շուրջը քարերը պսպղում են հազար ու մի երանգներով: Այսինքն դրանք քարեր չեն, այլ կրաքարային ժայռեր, որ գոյացել են դուրս ժայթքած ջրի աղերից: Պարզապես չգիտես, թե ինչպես քայլես, որ անվտանգ մնաս, ուղղակի ոտքերիդ տակից մեկ էլ ահավոր շառաչով ու սուլոցով ջրի ուժգին շիթ է երկինք բարձրանում: Ահա մեկն էլ կողքիդ, մեկն էլ առջևում:

Եվ ողջ շրջապատը լցվում է սուր ծծմբահոտով:

Հեյզերների այս աշխարհը կոչվում է Օրակի Կորակո:

Ըստ որում հեյզերների մի մասը մասնավոր մարդու սեփականություն է: Նրա անունն է Ջոն Հոուդի: Դա մի ալեհեր, բայց ամրակազմ մարդ էր, որը մատրիներից է գնել այս հողը՝ բավականին չնչին գումարով: Նա տուն է կառուցել հեյզերների մուտքի մոտ, խանութ բացել ու փոքրիկ խորտկարան և նավակ ունի, որով որդին գետի մի ափից մյուսն է տեղափոխում զբոսաշրջիկներին:

Դե իհարկե, ոչ ձրի: Մեծերից գանձվում է մեկական դոլար, աշակերտներից՝ կես դոլար, ինչպես կարգն է:

– Է՛, շատ տանջվեցի մատրիների ձեռքից,– գլուխը տարուբերելով ասում է սեփականատերը,– կարծում եք հե՛շտ է մատրիներից հող պոկելը: Ամեն ինչի դատարանով եմ հասել: Մեկին դրամ եմ տալիս, ու թվում է, թե արդեն հողի տերն եմ, երբ պարզվում է, որ նույն հողի վրա իրավունք ունեն նաև նրա հայրը, մայրը, եղբայրները, քույրերը: Իսկ դրանք այնքան շատ են:

Մենք շտապում ենք հեռանալ ծեր սեփականատիրոջ տիրապետությունից, բարձրանում ենք սարը, որն արդեն պետությանն է, այսինքն պետությունն է գնել մատրիներից, և մյուս կողմից ձորն ենք իջնում: Խորունկ, ահռելի մի ձոր: Եվ տեսնում ենք, որ այստեղ, երկրի ընդերքում պղպջավով հոսում է ջուրը՝ առատ գոլորշի խնկարկելով վերև: Իսկ վերևում ժայռերն այդ գոլորշիների աղերից հեքիաթային գույներ են ընդունել՝ մուգ կանաչ ու վառվող կարմիր, բաց դեղին ու փայլուն կապույտ...

Ասես Ալադինի կախարդական քարանձավում լինես:

Հեյզերները ասես հրամանով լռում են մի պահ ու խորը խորհրդավոր լռություն է իջնում շրջապատին: Նույնիսկ ինչ-որ տեղից դեղձանիկի անուշ ծվլոց է լսվում, և զգացվում է, որ շատ մոտ է անտառը:

Իսկ անտառն իրոք որ մոտ էր: Հենց այն նույն հսկայական արհեստական անտառը, որի մասին արդեն պատմել եմ, երբ մի կողմով մտել էինք ծառերի այդ թագավորությունը:

Հիմա մենք եկել ենք Տոկորուս ավանը ու ծանոթանում ենք այդ անտառը մշակող և միաժամանակ թղթի արդյունաբերության այն հսկա կոմբինատներից մեկին, որոնց թիվը երեքն է: Կոմբինատը պատկանում է «Քինլե» խոշորագույն ընկերությանը:

Հենց մուտքի առջև կիսաշրջանաձև մի վահան է կանգնած, որի վրա չորս հավասար եռանկյունիներ են՝ կանաչ, դեղին, վարդագույն և կարմիր ներկված: Այդ վահանի վրա ցույց է տրված հրդեհի վտանգի աստիճանը անտառներում: Հիմա մեծ սլաքը կանաչ եռանկյունու վրա է, որովհետև գարուն է ու ցուրտ և ցածր է հրդեհի վտանգի աստիճանը:

Երեք րոպեն մեկ, վայրկյանի ճշտությամբ անտառից հսկա մի բեռնատար է կոմբինատ մտնում՝ գերաններով բեռնված ու կանգնում կշեռքի վրա: Այդ գրաֆիկը երեք չի խախտվում, որովհետև կշեռքի վահանի էլեկտրոնային սարքերը «տեսնում են» անտառից եկող մեքենաները մինչև 80 կիլոմետր հեռավորության վրա և հրահանգներ են տալիս վարորդներին:

Կոմբինատը հազար հարյուր բեռնատար ավտոմեքենա ունի:

Ավտոմեքենաները դատարկվում են անմիջապես, և տրակտորները գերանները քարշ տալով դեպի արտադրամասերն են ուղղվում, որտեղ անտառանյութից ստանում են այն ամենը, ինչ կարելի է ստանալ. փայտանյութ, ֆաներա, կահույքի նյութ, թղթի հարյուրավոր տեսակներ, ստվարաթուղթ: Թղթի արդյունաբերության հինգ հսկա գործարան կա կոմբինատում: Այստեղ թուղթ են ստանում նույնիսկ էվկալիպտից, ինչը մինչև վերջերս անհնարին էր համարվում:

Չնայած արտադրության վիթխարի ծավալին, կոմբինատում աշխատում է ընդամենը 3700 մարդ: Որովհետև աշխատանքները լրիվ մեքենայացված են:

Մենք եղանք փայտամշակման գործարանում և թղթի գործարաններից մեկում:

Մի ամբողջ սրահ ղեկավարում էր ընդամենը մեկ մարդ՝ օպերատորը: Մեքենաները իրենք էին բռնում գերանը, շրջում, սղոցում ու նորից կտրում լայնակի, մշակում առանձին դետալները՝ կոնվեյերային սիստեմով: Հենց նույն տեղում փայտը և հատկապես շինափայտը հատուկ պահեստների մեջ այնպիսի մշակման է ենթարկվում, որ նրան հնարավորություն է ընձեռվում չվախենալ ցեցերից ու փայտակեր մրջյուններից:

Անտառափայտի ոչ մի մասը, ոչ մի կտորը թափոն չի դառնում: Նույնիսկ տաշեղները քիմիական նյութերով մշակման են ենթարկվում, վերածվում մածուկի և օգտագործվում արտադրության մեջ: Ըստ որում պրոցեսներին մասնակցած քիմիական այդ նյութերի 95 տոկոսը ինչ–որ ձևով վերադարձվում ու նորից արտադրություն է մտնում:

Օրական երեք գնացք է դուրս գալիս կոմբինատից՝ թղթով, փայտանյութերով, կիսաֆաբրիկատներով բեռնված: Կոմբինատի արտադրանքը հիմնականում Ավստրալիա է առաքվում և Ճապոնիա: Ամեն օր Ճապոնիա է ուղարկվում ավելի քան երեք հազար տոննա շինափայտ:

Կոմբինատը արտադրության համար օրական ծախսում է 88 միլիոն լիտր ջուր, և այդ ջուրը, օգտագործվելուց հետո, անպայման մաքրվում ու նոր է թափվում գետը: Շրջապատի բնության, մաքրության ու պահպանության հարցին երկրում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում: Միայն այս կոմբինատը տարեկան մեկնկես միլիոն դոլար է ծախսում շրջակայքի օդն ու ջուրը մրից ու աղբից մաքուր պահելու համար:

Եվ արդյունքը պարզ երևում է: Եվ ակամա դառնություն ես զգում: Ես օրինակ շատ կուզենայի, որ Երևանի քիմիական արդյունաբերության որոշ ղեկավար ընկերներ տեսնեին, թե ինչպիսի խստությամբ ու պատասխանատվությամբ է դրվում այստեղ շրջապատի մաքրության պահպանության հարցը:

Նրանք խորհելու շատ բան կունենային:

ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է, ԹԱՂԵՔ ՏՈՄԱՀՈՒԿՆԵՐԸ

Ծմբի հոտը, որն զգացվում էր հեյզերների ողջ ճանապարհին, ասես կանգնել, քարացել է օդում: Մենք Ռոտորուա քաղաքում ենք, որը հենց հեյզերների կենտրոնն է. քաղաք–առողջարան, բազմազան բուժիչ ցեխերի, լոգանքների թագավորությունը: Այստեղ կարելի է հանքային ամենատարբեր ջրերի լոգանք ընդունել նույնիսկ առանց հյուրանոցի համարից դուրս գալու: Բիարկե, խոսքը թանկարժեք հյուրանոցներին է վերաբերում: Նման հյուրանոցներում քեզ համար պատրաստ են ցեխի ընդունման ուզածո բաժանմունքները: Ռոտորուայի եկամտի աղյուծի բաժինը հրաբխային ուժերի ազդեցության օգտագործումից է ստացվում: Ստորերկրյա տաք ջրերի աղբյուրներով լի են թե քաղաքի թաղամասերը, թե արվարձաններն ու շրջակայքը: Այստեղ ու այնտեղ տարածվում են տաք ջրերի լճերն ու ցեխի լճակները, որտեղ եռում է ցեխը և տարածվում հրաբխային լավայի նման: Ես մի քանի փոքրիկ

ցելխալճակներ լուսանկարեցի, պարզապես ահալի էր տեսնելը, թե ինչպես էր բարձրանում ու պայթյուններով պղպջում ու բլթբլթում ցելխը՝ հսկայական կաթսայում եռացող թանձր խաշիլի նման: Երևի հենց այսպես է եղել նախաստեղծ հողը նախքան կարծրանալը:

Շատ վայրերում անհնարին է հողի վրա նույն տեղում երկար կանգնելը, ոտքերիդ տակն սկսում է այրվել: Հեյզերների ճեղքերի մոտ, ամենուրեք տուֆի ժայռեր են գոյացել և աչք են շոյում իրենց բազմազան գույներով: Ես իհարկե անմիջապես մեր Արթիկի տուֆն եմ հիշում ու աշխատում եմ պատկերացնել, թե ինչ ահռելի հրաբուխներից հետո է գոյացել քարե այդ ողջ զարմանալի աշխարհը:

Մենք քայլում ենք ցելխի այդ լճակների ու հեյզերների կողքով՝ զգուշորեն դնելով ոտքներս, որովհետև հողն այստեղ փափուկ-փափուկ է, խշրտում է կրունկների տակ և ներս է ընկնում՝ ասես ջրալի կավի վրա քայլես: Եվ ճիշտն ասած՝ վախենում ենք նաև: Ախր մեր կողքին է Նոր Զելանդիայում գործող ամենամեծ հեյզերը, որը կոչվում է Պոհուտու: Դա մոտ երկու մետր տրամագծով մի ճեղք է, որից մեկ էլ հանկարծ եռացող ջրի ու գոլորշու մի հսկայական շատրվան է երկինք բարձրանում: Հետո լռում է ամեն ինչ: Մենք, իհարկե, չդիմացանք և մեկս մյուսին սրտապնդելով հայտնվեցինք խառնարանի լանջին: Մեր եթե չասեմ կյանքը, ապա մարմինը հաստատ վտանգի տակ էր, որովհետև ամեն վայրկյան կարող էր պոռթկալ Պոհուտուն, և դժվար թե որևէ մեկը կարողանար փախչել մոտ երեսուն մետր բարձրությամբ ժայթքող նրա եռացող ջրի շիթերի տակից:

Երկրի ընդերքից եկող ինչ-որ տարօրինակ սուլոցներ լսելով, մենք մի քանի անգամ սրտապատառ փախանք հեյզերի խառնարանի մոտից ու կրկին իրարից ամաչելով ետ վերադարձանք:

Բայց մեր բախտից Պոխուտան համեստորեն լռում էր, և մենք ստիպված էինք վերջնականապես հեռանալ նրանից՝ հիասթափված և ներքուստ ուրախացած: Միայն խեղճ Օլգան էր մեզ մխիթարելու համար հարկադրված հորինում, թե հեյզերը չի գործել նաև այն ժամանակ, երբ անգլիական թագուհին էր Ռոտորուա եկել:

Հետո մենք իմացանք, որ Պոխուտան այնուամենայնիվ չի դիմացել նորին մեծություն թագուհու հրապույրներին և ժայթքել է:

Ոչ այնքան հեռվում արդեն երևում էր Վոկո-Ռեվա-Ռեվան՝ մաորիական գյուղ-թանգարանը, որի համար մենք այստեղ էինք հասել: Սակայն չէինք կարողանում կտրվել հեյզերներից: Այսինքն գյուղի շրջակայքում ևս գոլորշու ամպեր էին կանգնած:

Գյուղի մոտ, մեր կողքից հոսում էր Պուարենգա գետը, և փոքրիկ ու նեղ մի կամուրջ էր գցված գետի վրա: Մաորի վարորդի խորհրդով ես գետի ձախ ափին կանգնած ջրի մեջ մտցրի ձեռքս: Զուրը պարզապես եռում էր: Հետո մենք միասին գետի աջ ափն անցանք և այս անգամ բավականին վախվիսելով ես նորից ջրի մեջ մտցրեցի ձեռքս: Զուրը սառը-սառն էր, ասես երևանյան լիներ: Ես մաորիին եմ նայում զարմացած, իսկ նա սրտանց ծիծաղում է:

Պարզվում է, որ գետի հատակից բխող հեյզերները և բաց հեյզերներից գետը լցվող ջրերը դեռ երկար ժամանակ հոսում են տաք վիճակում: Մաորիները ցուցադրաբար կարթով ձուկ են

բոնում այստեղ, գետի աջ ափում և կամուրջն անցնելով կարթը կախում են ձախով հոսող ջրերում, խաշում և ուտում են:

Ես դա աչքովս տեսա ու նաև տեսա ու լուսանկարեցի տարեց մի մատրիուհու, որը զամբյուղի մեջ դրած կաթսան պահել էր եռացող ջրի լճակի մեջ և ճաշ էր եփում:

Մատրիների մոտ դա սովորություն է: Մեր աչքի առջև նրանք լճակի մեջ մտցրին հավի թարմ ձվերը և չանցած երկու-երեք րոպե՝ այդ ձվերը պինդ խաշված էին:

Մատրիները մեզ դիմավորեցին իրենց գյուղը շրջափակող բարձր, սրածայր փայտերով հյուսված, անանցանելի ցանկապատ-պարսպի մոտ, փայտե նեղ դարպասի առջև: Դարպասն արդեն մի իսկական գլուխգործոց էր: Փայտե կիսաշրջանաձև կամարը ծածկված էր բազմաթիվ զարդաքանդակներով, ռազմիկների ֆիգուրներով և կատաղի աստվածների դիմանկարներով: Ինչպես և մատրիական գրեթե բոլոր իրերն ու գործիքները, դարպասը ներկված էր մուգ կարմիր-դարչնագույն ներկով: Դարպասի վերևում, կամարի տակ մատրիական նշանավոր լեգենդի տղան ու աղջիկն են՝ Խինեմոան և Տուտանեկաին: Նրանք գրկել են իրար և սպիտակ խեցե աչքերով նայում են գյուղ բերող ճանապարհին:

Լեգենդը քիչ նման է մեր «Ախթամարին», բայց անսպասելի երջանիկ ավարտ ունի: Սիրում են իրար Խինեմոան և Տուտանեկաին: Խինեմոան մատրիների առաջնորդի գեղեցկուհի դուստրն է և ապրում է լճի ափին: Իսկ լճի մեջ գտնվող Մոկաիո փոքրիկ կղզում ապրում է պատանի Տուտանեկաին:

Իմանում է այդ սիրո մասին Խինեմոայի հայրը և մահվան սպառնալիքով արգելում է աղջկան հանդիպել մի հասարակ տղայի հետ, որը բացի այդ նաև թշնամի ցեղից է:

Բայց մի թե սերը սահման է ճանաչում:

Մի քանի օր անց, գիշերը կղզուց սրնգի ձայն է հնչում: Այդ պատանի Տուտանեկաին է կարոտով կանչում սիրած աղջկան: Չի համբերում սիրուն Խինեմոան, արհամարհելով սպառնալիքներն ու մահը, նա իրեն լճի սառը ալիքների մեջ է նետում և լողում դեպի կղզին: Ամբողջ գիշեր լողում է Խինեմոան, մինչև որ անասելի հոգնած և ուժասպառ հասնում է երազած ափին: Եվ սիրող սրտերը միանում են իրար:

Այդ սերը զարմացնում և հիացնում է մարդկանց: Նույնիսկ կատաղի հայրը ընկրկում է դստեր անձնագոհ սիրո առաջ: Թշնամի ցեղերը հաշտվում, բարեկամանում են իրար հետ և մեծ հրճվանքով կատարում են Խինեմոայի և Տուտանեկաիի հարսանիքը:

Եվ երջանիկ սիրահարները ապրում են երկար-երկար տարիներ:

Ահա թե ովքեր են Խինեմոան և Տուտանեկաին: Ահա թե ում փայտե քանդակներն են զարդարում Վուկա Ռեվա-Ռեվա գյուղի կամարաձև դարպասը, որի առջև մատրիները սպասում էին մեզ:

Մենք արդեն զգուշացված էինք և գիտեինք, թե ինչպես պետք է բարենենք մեր նոր բարեկամներին: Ձեռքսեղմումի փոխարեն, որպես ողջույնի և բարեկամության նշան մատրիները քթերն են քսում միմյանց: Ուղղակի վատն այն էր, որ չգիտեինք ինչպես զսպել սովորույթի ուժով առաջ մեկնվող մեր ձեռքերը: Եվ այնուամենայնիվ պատվով դուրս եկանք այդ փորձությունից՝ ամենայն լրջությամբ մեր քթերը քսելով մատրի աղջիկների ու տղաների քթերին:

– Ձեր ուղեկիցը մեր գյուղում կլինեմ ես, – ասաց թուխ դեմքով գեղեցկուհի մի աղջիկ: – Իմ անունն է Արոհա:

Նա հագին մատրի աղջկա տարագ ուներ: Այսինքն հագել էր ռուսական սարաֆանի նման ուսերից կապերով կախված դարչնագույն սպիտակ քառակուսիներով և ուղղանկյունիներով վերնաշապիկ, որի ծայրերը անհետանում էին բարակ եղեգներից հյուսված չիլչիկացող նախշակար փեշի մեջ: Հետո մենք իմացանք, որ դրանք ոչ թե եղեգներ են, այլ նորգելանդական վուշի չորացրած ու ներկած ցողուններ:

Ինքը՝ Արոհան, կանոնավոր թուխ դեմքով, սև երկար հյուսերով մի աղջիկ էր: Երկար, հպարտ պարանոցից կախված էր կանաչ տիկի–թալիսմանը:

Նա մեզ տանում էր գյուղի միջով, ցույց տալիս չմշակված գերաններով վարպետորեն կառուցված մատրիական խրճիթները, խորհրդակցության սենյակը, որտեղ ծերակույտը և ամենանշանավոր ռազմիկները պատերազմական վճիռներ էին կայացնում, նախշազարդ սյուները, որոնցից կապում էին գերիներին՝ նախքան նրանց նկատմամբ դատաստան տեսնելը:

– Իսկ ո՞րն էր ամենածանր պատիժը, – երկար տատանվելուց հետո հարցնում է մեր խմբի Պազանելը՝ Նեժին քաղաքի մանկավարժական ինստիտուտի կենդանաբանության դասախոս Ինեսա Մորիսովան:

Արոհան սկզբում նրան է նայում զարմացած, հետո հասկանում է ու ծիծաղում է սրտանց, երկար:

– Ա՛յ, – ասում է նա, – դուք ուզում եք իմանալ իմ նախնիները մարդակերությամբ զբաղվել են, թե ո՞չ: Պատահել է, պատահել է: Մեր լեգենդները այդ չեն ժխտում: Մատրիական որոշ ցեղերի մոտ կանիբալիզմը նկատվել է նույնիսկ մինչև 19-րդ դարի կեսը: Սակայն այն էլ ասեմ, որ հիմնականում մարդակերության զոհ են դարձել ուժեղ, խելացի, քաջարի մարտիկները: Որովհետև մատրին համոզված է եղել, որ եթե ուտի իր թշնամուն, ապա իրեն են անցնելու նրա խելքն ու ճարպկությունը, խիզախությունն ու առողջությունը... Փաստորեն նույն մարդկային կոնկուրենցիան է իր ամենանախնական ձևերից մեկի մեջ, – ավելացնում է նա, չգիտես ժպտալով, թե դառնությամբ:

Արոհան շրջանցելով հենց գյուղի մեջ դուրս ցայտող տաք ջրերի լճակներն ու աղբյուրները, որոնց մեջ թուխ դեմքերով կանայք ճաշ էին եփում, շոր լվանում և լողացնում սևուիկ փոքրիկներին, մեզ տանում է խրճիթից խրճիթ, ծանոթացնում նորանոր մատրիների հետ,

որոնց հետ մենք նույնպես քիթ-քթի ենք քսում, պատմում է մատրիական գողտրիկ լեզենդներ և ապա լուռ կանգ առնում մի փոքրիկ հուշարձանի մոտ:

– Այստեղ իմ ուսուցչուհին է թաղված,– ասում է նա:– Նրան կոչում էին Ռանգի: Նա մատրիների մեջ ամենալավ գիդն էր: Ոչ ոք նրա նման չգիտեր մեր երկիրն ու ժողովրդին: Նրա շնորհիվ աշխարհում շատերն իմացան մատրիների մասին և պաշտպանեցին մեր դատը անգլիական գաղութարարների դեմ:

Ի դեպ Ռանգիին գիտեն բոլոր նրանք, ովքեր վերջին հիսնամյակում երբևէ եղել են Նոր Զելանդիայում կամ կարդացել են այդ երկրի մասին: Չի եղել մի ճանապարհորդ, մի քաղաքագետ, մի զբոսաշրջիկ, որ ծանոթացած չլինի նրա հետ և թերևս գրած չլինի այդ լեզենդար մատրուհու մասին: Նրա լուսանկարները տարիներ շարունակ տպագրվել են տուրիստական ուղեցույցների, փոստային բացիկների վրա: Նրա մշտաժպիտ, կնճռապատ, թուխ դեմքը հաճախ է պատկերվել նորզելանդական հանդեսներում ու լրագրերում: Ռանգին մեծ գործ է կատարել մատրիների իրավունքների համար մղվող պայքարում: Այո, մղվող, որովհետև չնայած ավստրալիական աբորիգենների կամ աֆրիկյան գաղութներում ապրող բնիկների համեմատությամբ նրանց յուրօրինակ բարվոք դրությանը, մատրիների ազգային ինքնուրույնության պրոբլեմը դեռևս շատ հեռու է լուծված լինելուց:

Ուրեմն մի քանի խոսք մատրիների և նրանց ներկա վիճակի մասին:

Ինչպես ասացինք, 1840 թվականին Նոր Զելանդիան պաշտոնապես հայտարարվեց անգլիական գաղութ և մատրիները՝ նորին մեծության անգլիական թագուհու հավատարիմ հպատակներ: Հրովարտակով նրանք համարվում էին սպիտակամորթներին հավասար և միանգամայն իրավունք ունեին տեր մնալու իրենց հողերին, գետերին, անտառներին և մնացած սեփականությանը այնքան ժամանակ... ինչքան որ կցանկանային:

Ահա հենց այդ «ինչքան կցանկանային» արտահայտությունն էլ պատճառ դարձավ, որ մատրիները հետզհետե զրկվեն իրենց սեփականությունից:

Անգլիական գաղութարարները և զանազան ավանտյուրիստական ընկերություններ ուղղակի որսի ելան մատրիների հողերը գրավելու համար: Նրանք դիմում էին թույլատրելի և անթույլատրելի ամենատարբեր միջոցների՝ հարբեցնում էին ցեղերի առաջնորդներին, խաբում նրանց զանազան չիկչիկաններով, հրազեն էին վաճառում, հսկայական հողատարածությունների և անտառների համար վճարում էին այնքան դրամ, որքանով հիմա մի տնամերձ հողամաս անգամ չեն կարող գնել միմյանցից:

Իրենց նպատակներին հասնելու համար նրանք նույնիսկ միջցեղային պատերազմներ էին հրահրում՝ զենքով ապահովելով կռվող երկու կողմերին էլ և փոխարենը գրավի տակ դնելով նրանց հողատարածությունները:

Արդյունքը եղավ այն, որ չնայած մատրիների համառ դիմադրությանն ու պակելիսաների դեմ մղած արյունալի կռիվներին, գաղութարարների կանոնավոր զորքերին ի վերջո հաջողվեց 1872 թվականին վերջնականապես հպատակեցնել նրանց և տեր դառնալ նորզելանդական հողերի մեծ մասին: Բայց ազատասեր մատրիները մինչև հիմա էլ պայքարում են ազգային

իրավահավասարության համար և շնորհիվ իրենց համառությանն ու դիմադրողականությանը որոշակի իրավունքներ են ձեռք բերել: Մատրիներն ապրում են համաձայն իրենց իմաստուն ասացվածքի. «Նա ով դիմադրում է, ապրում է, ով հրաժարվում է պայքարից՝ մեռնում է»:

Այսօր Նոր Զելանդիայում ապրում են շուրջ 200 հազար մաորի: Նրանք երկրի բնակչության յոթ տոկոսն են կազմում միայն: Մատրիները ապրում են գյուղերում, որոնց կոչում են պա, զբաղվում հողագործությամբ, անասնապահությամբ, ձկնորսությամբ և արհեստներով: Քաղաքներում նրանք հիմնականում սպասարկման ոլորտում են աշխատում և գործարաններում: Ըստ որում ստանում են պակեխաներին հավասար աշխատավարձ: Նրանց երեխաները սովորում են սպիտակամորթ երեխաների հետ: Նրանք մասնակցում են երկրի օրենսդրական մարմինների ընտրություններին և իրենց ներկայացուցիչն ունեն պառլամենտում:

Հարկ է նշել նաև, որ Նոր Զելանդիայի անգլիացի, իռլանդացի և շոտլանդացի աշխատավոր ժողովուրդը մեծ հարգանքով է վերաբերվում մաորիներին, բարձր է գնահատում նրանց աշխատասիրությունը, հպարտությունը, քաջությունը, նրանց նշանակալի ավանդը երկրի մշակութային կյանքում:

Շատ նորզելանդացիներ հպարտանում են, որ իրենց երակներում մաորիական արյուն է հոսում նաև: Բազմաթիվ են պակեխաների և մաորիների ամուսնությունները:

Մաորիները բարի համբավ վաստակեցին հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ անգլիական զորքերի կազմում նրանց հատուկ գումարտակը անձնուրացության և հերոսության հրաշքներ էր գործում Հյուսիսային Աֆրիկայում և Իտալիայում՝ կռվելով գերմանական բանակի դեմ:

Մաորիական շատ պատերում մենք հուշասյուներ տեսանք, որոնց վրա գրված էին պատերազմում ընկած ռազմիկների անունները:

– Մենք կիվի ենք,– իրար հետ երգում են պակեխաներն ու մաորիները:

Սակայն անպայման պետք է նշել, որ չնայած մերկ ռասիստական քաղաքականության բացակայությանը, երկրում այնուամենայնիվ պակեխաների և մաորիների իրավահավասարության լոզունգները շատ դեպքերում լոզունգներ են մնում: Քիչ թվով մաորիներ հնարավորություն ունեն բարձրագույն կրթություն ստանալու, և հետևապես դառնալու գիտնականներ, բժիշկներ, դասախոսներ ու ինժեներներ: Գործարաններում և հենց փայտամշակման այն կոմբինատում, ուր մենք եղանք, բոլոր բանվորները մաորիներ էին, իսկ ինժեներները՝ անգլիացիներ:

Հետզհետե, դանդաղորեն, բայց անկասելի անկում են ապրում նաև մաորիական լեզուն և մշակույթը: Ճիշտ է, երկրի աշխարհագրական շատ անուններ մաորիական են, ճիշտ է, նույնիսկ անգլիացիները սիրում են խոսքի մեջ մաորիական բառեր օգտագործել, իրար բարևել մաորիերեն գոչելով «խաերե մաի», այսինքն՝ «ողջույն քեզ»: Սակայն ազգային լեզվի պահպանությանը գրեթե ուշադրություն չի դարձվում: Դպրոցներում չեն անցնում

մատրիերեն: Մատրի երեխաները միայն հատուկ դպրոցներում են ազգային լեզու սովորում, այն էլ տարրական դասարաններում:

Ես գրույց ունեցա մի քանի մատրիների հետ: Նրանք դառնությամբ և նույնիսկ հուսահատությամբ էին խոսում ազգային լեզվի պահպանման և զարգացման մասին:

– Հարցն այն է, որ մեր երեխաները ևս չեն ուզում մատրիերեն սովորել, – ասում էին նրանք:– Երեխաներն ասում են՝ մենք ինչի՞ կարող ենք հասնել մեր ազգային լեզվի գիտությամբ, երբ տիրող լեզուն անգլերենն է: Մեզ ոչ ոք կարգին աշխատանքի չի վերցնի: Ում է պետք մատրիերենը:

Նրանց մտահոգությանը կիսում էր նաև Արոհան:

– Երիտասարդությունը գրեթե մատրիերեն չի խոսում: Ամենուրեք անգլերեն՝ աշխատանքում, փողոցում, տանը: Ի՞նչ կարող ես անել: Երեխաները մեղավոր չեն: Ծնողներից շատերն իրենք են ստիպում իրենց զավակներին միայն անգլերեն խոսել: Մտածում են, թե այդպիսով նրանք առաջ կգնան, հաջողություն կունենան կյանքում: Եվ չեն հասկանում, որ դրանով իսկ իրենց որդիներին ուժացման են դատապարտում:

Մեզ ասացին, որ երկրի մշակույթում նախկինում շատ մեծ տեղ էր հատկացվում մատրիական ազգային արհեստներին, հանդեսներին, արարողություններին, երգին ու պարին: Արհեստները հիմա էլ հովանավորվում են որպես ռեկլամի և եկամուտի աղբյուր: Ո՞ր գրոսաշրջիկը չի ուզենա ուզածդ գնով նեֆրիտե տիկի ձեռք բերել կամ նախշազարդ տոմահուկ: Ինչ վերաբերում է ազգային արարողություններին և ինքնագործունեությանը, ապա դրանք գնալով ավելի ու ավելի քիչ տեղ են գրավում Նոր Զելանդիայի մշակութային կյանքում:

Այնինչ իզուր և ավստս...

Մենք մի քանի անգամ բախտ ունեցանք լսելու մատրի երգիչներին և տեսնելու նրանց պարերը: Դրանք անգուգական էին: Բայց նախ ուզում եմ նկարագրել մատրիական արարողություններից մեկը, որին ականատես եղանք Ռոտորուայի մեր հյուրանոցի սրահում և որը կատարվում է անձանոթ հյուրերի հետ հանդիպման ժամանակ:

Հյուրը դատավոր էր, որ նոր էր նշանակվել աշխատանքի Ռոտորուա քաղաքում: Նա եվրոպացու սովորական սև կոստյումով էր, և ինչպես երևաց՝ քաջ տեղյակ էր այդ արարողությանը:

Աներևույթ թմբուկի ռիթմի տակ նա կանգնել էր սրահի անկյունում և սպասում էր: Ու հանկարծ հայտնվեց մատրին՝ գրեթե կիսամերկ, փետուրներով զարդարված գլխով, մուգ շերտերով ներկված դեմքով, հագին միայն ոլորված ցողուններից հյուսված կիսազգեստ, որը ամուր գրկել էր նրա նեղ մեջքը ու մինչև ծնկներն էր հասնում: Պարանոցից կախված էր կանաչ տիկի: Մատրին ձեռքին փայտե ոսկրածայր նիզակ ուներ բռնած, իսկ գոտուց կախված էր երկար դանակը:

Նա թեթևակի կռացած, ոտքերը լայն դրած սպառնալիորեն և զգույշ առաջ շարժվեց, մոտեցավ հյուրին, կանգնեց նրանից մոտ երկու մետր հեռավորության վրա, թեքվեց և լուռ նրա ոտքերի տակ դրեց իր նիզակը: Հետո շրջվեց ու հեռացավ դանդաղ: Սպասեց, շրջվեց կրկին ու ոտքերը մոլեգին դոփդոփելով կրկին մոտեցավ հյուրին: Կանգնեց, նորից սպառնագին կեցվածք ընդունեց, փնթփնթաց ասես դժգոհ, գոտիից հանեց երկար դանակը, այն ևս դրեց դատավորի ոտքերի առջև, մի քայլ ետ քաշվեց, հանկարծ գոռաց ու որքան հնարավոր է դուրս հանեց լեզուն: Հետո աջ գնաց, նայեց հյուրին ու նորից մոնչաց սոսկալի՝ հանելով երկար լեզուն:

Այնուհետև կանգ առավ ու սպասեց:

Հյուրը թեքվեց ու վերցրեց գենքերը:

Մառին հանգստացավ ասես: Ետ դարձավ ու գնաց կամաց-կամաց պարելով, ցնցելով գլխի փետուրները, չմոռանալով մերթ ընդ մերթ մարտականորեն հանել լեզուն: Հասավ սրահի ծայրը, շրջվեց ու կանգ առավ սպասումով:

Դատավոր հյուրը մոտեցավ նրան, մեկնեց-վերադարձրեց նիզակն ու դանակը, և նրանք քիթ քիթ դիպցրին:

Ուրեմն հյուրը խաղաղ մտադրությամբ է եկել:

Պարզ, մաքուր, միամիտ հավատ: Այդպիսին է մառին:

Ազգային շատ ավանդույթներ, արարողություններ և ծիսակատարություններ նրբորեն արտահայտված են նաև մառիական երգերում ու պարերում:

Օրլենդում ես ներկա եմ եղել մառիական երկու համերգի: Դրանք ցնցող, բայց ուրիշ էին: Նրանք բեմում էին, մենք դահլիճում: Դա համերգ էր: Այստեղ՝ Վուկա Ռեվա-Ռեվա գյուղում, չտաշված գերաններից կառուցված խրճիթներից մեկում բոլորովին այլ էր մթնոլորտը: Մառիները երգում ու պարում էին մեր կողքին, խայտանկար խսիրի վրա, և կարծես մեզ հետ էին պարում, կարծես մենք այդ հինավուրց արարողությունների մասնակիցն էինք:

Առաջինը ռազմական պար էր և կոչվում էր «Հակա»: Երեք պատանի էին կատարում: Նրանք ևս հյուրին դիմավորող մառիի նման էին հագնված, միայն թե աջ ուսից ձախ կոնքամասն իջնող գոտի ունեին նաև:

Նրանք նախապատրաստվում էին մարտի: Մոնչալով տարբեր կեցվածքներ էին ընդունում՝ պիրկ մկանունքը ավելի ընդգծելով, հակառակորդին իրենց ուժով սարսափեցնելու համար: Եվ սպառնալից շարժումներ էին կատարում, բարձր ցատկում էին ու աղաղակում վայրենի:

– Վուտա ռոտեա, հուակինա, հե՛յ...

Դա մի քիչ նման էր պրոֆեսիոնալ բռնցքամարտիկների և հոկեյիստների հանդիպումներին, երբ խաղից առաջ նրանք իրար նկատմամբ ատելության և անզիջում կովի ցույցեր են ձևացնում:

Հետո կատաղորեն ցնցելով փետրափնջերը, մատրի ռազմիկները հարձակվեցին իրար վրա՝ ահաբեկելով երկար լեզուներով և ճշալով:

– Հաուկինո, ու հո կու–կու, հու–հո կու–կու...

Անկանոն ճիչ–աղաղակներով, կարմիր, սպիտակ ու սև ներկված մարմիններով, ներկված դեմքերի կատաղի արտահայտություններով, ջանալով մեկը մյուսից ավելի շտապ–շտապ ու երկար հանել լեզուները, նրանք խուլական մի պար սկսեցին՝ պտտվելով իրար շուրջ: Եվ երևի համոզվելով, որ լրիվ տաքացած են և պատրաստ կովի, կանգնեցին իրար կողքի, նայեցին աներևույթ թշնամիների կողմը, գոտիներից հանեցին երկար տոմահուկները ու բղավեցին:

– Հոկոպետապատե: Պուհուպանեպիտանեպիպիտերա...

Սա խրոխտ մարտահրավեր է, որ մոտավոր թարգմանությամբ նշանակում է՝ «Եկեք, մենք պատրաստ ենք: Եկեք, վախկոտների սերունդներ, դուք այլևս փրկություն չունեք»:

«Հակա» կոչվող այս պարը թերևս ամենատարածվածն է ռազմական բնույթի պարերից: Այն կատարում են ամենուրեք, զանազան տարբերակներով, այն կատարում են նաև սպիտակամորթ պակեխաները: Շատ է պատահել, որ նորզելանդական ռեգբիստները, վազորդները և լողորդները միջազգային մրցումներում հաղթելուց անմիջապես հետո, հենց ստադիոնում, զարմացած հասարակության առջև կատարել են այդ պարը՝ մոլեգնորեն վեր–վեր ցատկելով, հանելով լեզուները և կատաղի ու անհասկանալի բացականչություններ արձակելով:

Կանաչի պարերգերը, ինչպես պետք էր սպասել, քնքուշ են ու հեզանագ: Հիմա նրանք երգում են «Հոկեվա» երգը: Չորս աղջիկներ են՝ զանգուր երկար մազերը նետած ուսերին, գլուխները կապած գործված ժապավենով, պարանոցներին օղ և փայտե տիկի թալիսմանը, կարմիր, սև և սպիտակ թելերից գործված բլուզներով և կարճ եղեգնահյուս փեշերով: Ոտաբոբիկ են: Նրանք մեր՝ հայերիս մաշկի գույնը ունեն ու մազերի գույնը: Եվ զարմանալի նուրբ ու գեղեցիկ դիմագծեր:

Նրանց շարժումները մեղմ են ու դանդաղ: Ձեռքի և գլխի յուրաքանչյուր շարժում ինչ–որ զգացման խորհրդանշան է: Նրանց երգը ծորուն է ու թախծոտ, նման գնչուական մեղեդիներին, սակայն ձայնի նրբությունն ու բառերի հնչեղությունը ճապոներենն է հիշեցնում:

«Օիծի ծեկոե կուկո ածակի է հոկեվա»,– երգում են նրանք՝ մեղմիկ օրորվելով, և մեր սիրտը սիրով ու հայրենի տան կարոտով է լցվում: Դրանք մեզ համար հասկանալի երգեր են:

Երգերը հիմնականում ծովի մասին են, սիրո և սիրեցյալների անջատման, տխուր սպասումի, անհայր մնացած երեխաների մասին:

Սովորաբար աղջիկներից մեկը մենեբգում է, մյուսները ձայնակցում են նրան՝ բոբիկ ոտքերի ռիթմիկ դոփյունների տակ:

Մառի աղջիկները երգելիս օգտագործում են թելերի ծայրերից կախված գնդիկներ, որոնց պո են անվանում: Նստած դիրքում նրանք այդ թելերը պարզում են տարբեր կողմեր, ոլորում են ճարպկորեն, գնդիկները խփում են մարմնի մասերին և ստեղծում յուրօրինակ մի ռիթմ: Նույն շարժումները նրանք կատարում են նաև մթության մեջ, պո-երի փոխարեն թելերի ծայրերին կապած վառվող փոքրիկ լապտերիկներ: Եվ երգը զարմանալի տպավորիչ ու գեղեցիկ է դառնում:

Ես հիշում եմ, որ փոքր ժամանակ մենք մի խաղ ունեինք: Մեկը ինչ շարժում որ աներ, դիմացինը պարտավոր էր կրկնել նույնությամբ: Մառիներն էլ ունեն այդ խաղը և կատարում են երգի տակ: Կատակերգը կոչվում է «Ջրի հայելի» և շատ աշխույժ, ծիծաղաշարժ մի խաղ է: Աղջիկները կապկում էին իրար և քրքջում էին անզուսպ:

Սակայն նման ուրախ երգեր քիչ են մառիական ազգային երգարվեստում:

– Մենք ուրախ երգերը նոր ենք վերականգնում,– ասաց Արոհան:– Մենք ունեցել ենք ուրախ երգեր:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Ռոտորուայի օդանավակայանից մի փոքրիկ ինքնաթիռով երկու ժամ թռչում ենք դեպի Վելինգտոն՝ Նոր Զելանդիայի մայրաքաղաքը: Ըստ որում թռչում էինք անընդհատ ամպերի վրայով, լագուր երկնքի միջով: Երկրից երևացողը միայն ամպերից վեր խոյացած ձյունածածկ գագաթներն էին:

Վելինգտոնի վրա, ասես հրամանով, ամպերը տեղի տվեցին, և հայտնվեցին մայրաքաղաքի թաղամասերը՝ թառած բլուրների վրա, բոլորն էլ ծովահայաց դիրքով: Ինչպես Օքլենդում, այստեղ էլ նավահագիստը ուղղակի քաղաքի կենտրոնում է գտնվում. երեք կողմերից քամուց ու ալիքներից ապահովված խաղաղ մի ծովածոցում:

Ի տարբերություն մյուս քաղաքների, Վելինգտոնում մեծ շինարարություն կա և շենքերը մեծ մասամբ կառուցվում են ծովածոցի հաշվին: Պատնեշներ են գցում, հողալիցք կատարում և ստեղծում նոր թաղամասեր: Ծովի նախկին հատակին է կառուցված նաև Վելինգտոնի օդանավակայանը:

Կրկին այլ քաղաքների համեմատությամբ Վելինգտոնում նեղ ու դարատափ փողոցները աշխույժ են ու աղմկոտ: Ավտոմեքենաներին թիվ համար չկա: Մարդիկ հնարավորություն չունեն փողոցի մի մասից մյուսն անցնելու, դրա համար էլ ոստիկանները միանգամից փակում են ավտոմեքենաների երթևեկությունը երկու կողմից և մարդկանց շտապեցնում տեղափոխվել զանգի հնչյունների տակ:

Նման ծանրաբեռնված և դարատափ փողոցներից մեկի՝ Լեբտոն Կի փողոցի վրա են գտնվում Նոր Զելանդիայի պառլամենտի նոր և հին շենքերը: Հին շենքը մի հազվագյուտ կառույց է, և ինչպես վելինգտոնցիներն են պնդում, հանդիսանում է աշխարհի ամենամեծ փայտե շենքը: Այն կառուցվել է 1876 թվականին ու թեև ընդամենը չորս հարկանի է, բայց զբաղեցնում է մի ողջ թաղամաս և ունի ավելի քան 200 սենյակ ու դահլիճ:

Հիմա փայտե այդ շինությունում կառավարական այլ հիմնարկներ են տեղավորված, իսկ պառլամենտի համար կառուցվել է նոր, ժամանակակից շենք:

Զբոսաշրջիկների մեր խմբին մեծ պատիվ ցույց տրվեց: Մեզ ընդունեցին նոր Զելանդիայի պրեմիեր մինիստրը և Վելինգտոն քաղաքի քաղաքագլուխը:

Իհարկե, պետք է շատ միամիտ լինեինք՝ մտածելու համար, թե երկրի կառավարության նախագահը ընդունում է Վելինգտոն ժամանած բոլոր զբոսաշրջիկներին: Պարզապես Սովետական Միության օր ավուր աճող միջազգային հեղինակությունը նոր Զելանդիայի կառավարող մարմիններին ստիպում էր ուշադիր լինել այն ամենի նկատմամբ, ինչը կարող էր նպաստել սովետա-նորզելանդական հարաբերությունների նորմալացմանը:

Հենց այդ մասին էլ խոսվեց մեր հանդիպման ժամանակ:

Մեր զրույցը Վելինգտոնի քաղաքագլխի հետ շատ ավելի պարզ էր և անբռնազբոս:

Առաջին հարցը, որ տվեց մեզ բարձրահասակ, թիկնեղ, կապուտաչ այդ մարդը, հետևյալն էր.

– Դուք ռեգրի խաղո՞ւմ եք:

Եվ շատ զարմացավ, որ մենք ռեգրի չենք խաղում: Ավելին, քաղաքագլուխը վշտացած էր, որ մեզ մոտ ռեգրին առանձնապես մասսայականություն չի վայելում: Նա մեզ վրա նայում էր տարակուսած և ներողամտորեն, ինչպես երևի վարվեցողության կանոններին անձանոթ վայրենուն կնայեն: Դա այնքան անսպասելի էր, որ մենք ստիպված եղանք խոստանալ, թե այսուհետև ամեն ինչ կանենք մեր երկրում ռեգրի արագ զարգացման համար:

Բայց եթե մեր երկրում նորզելանդացիների այդ պաշտամունք խաղի մասսայականության վերաբերյալ Վելինգտոնի քաղաքագլուխը թույլ ինֆորմացիա ուներ, ապա փոխարենը քաջ տեղյակ էր ոչ միայն Սովետական Միության էկոնոմիկայի, այլև մեր գրեթե բոլոր հանրապետությունների տնտեսական ու մշակութային կյանքի ամենանշանավոր իրադարձություններին:

Նա, ինչպես ասում են, մասնավորապես ինձ շարքից հանեց հետևյալ հարցով.

– Ձեր սքանչելի լիճը փրկելու համար կառուցվող ունիկալ թունելը ի՞նչ վիճակի մեջ է:

Եվ անսքող զարմանք կարդալով իմ դեմքին, ավելացրեց մեր ականջն այնուամենայնիվ շոյող հետևյալ խոսքերը.

– Մենք գիտենք Հայաստանը: Դա աշխարհի ամենահինավուրց երկրներից մեկն է, որ գիտենք մենք:

Ֆունիկուլյորը աշխատում էր, բայց մեզ Վելինգտոնի նշանավոր բուսաբանական այգին տարան ավտոբուսով:

– Ավտոբուսով կգնանք, ոտքով կգանք,– ասաց Օլգան:– Որ ոտքով գաք, չեք մոռանա:

Ճանապարհն սկսվեց հենց քաղաքի կենտրոնից և ոլորապտույտ–ոլորապտույտ մագլցեց սարն ի վեր: Մերթ թվում էր, թե հին Կոնդն ենք բարձրանում, մերթ էլ թե Տաթևի վանքը: Սալահատակ նեղ փողոցներ էին և անընդհատ սպասում էինք, թե ավտոբուսը կհարվածի որևէ շենքի: Բայց վարորդը սովոր էր, վարում էր անտարբեր ու անվրդով, և տասնհինգ րոպե անց մենք հայտնվեցինք անթիվ անհամար արահետներով կտրտված հսկայական մի զբոսայգում:

Դա մի հոյակապ տեսարան էր: Այգում իրար կողքի, մի տեղ էին հավաքված բուսական աշխարհի գրեթե այն բոլոր ներկայացուցիչները, որ ցրված ապրում էին Նոր Զելանդիայում և ոչ միայն Նոր Զելանդիայում: Արքայական կաուրիների և բազմատեսակ արմավենիների կողքին կուսական անտառի իսկական պատուտակներ և լիանաներ, ավստրալիական էվկալիպտներ և պահուտա–պաուայի արդեն ծաղկած ծառեր: Այդ պահուտա–պաուան... հսկայական խատուտիկներ հիշեցնող նրա վառ կարմիր ծաղիկները խաղում–հուրհրում էին ամենուրեք: Դա հենց այն ծառն է, որ նորզելանդացիները որպես տոնածառ են օգտագործում և նրա ծաղիկներով դեկտեմբերի վերջին զարդարում իրենց բնակարանները:

Բայց իհարկե ամենագեղեցիկը Վելինգտոնի բուսաբանական այգում՝ բեգոնիաների պալատն է: Մի ամբողջ շենք՝ ներառյալ մերձակա ծաղկանոցները, բեգոնիաներով լի է: Աշխարհում այդ ծաղիկների ամենահարուստ հավաքածուն է այստեղ, բոլոր տարատեսակները, որ երբևէ ստացել են ծաղկաբույծները: Խաչաձևումներով ստացված այնպիսի գույներ կան, որ չես կարողանում աչքդ կտրել: Այնպիսի հեքիաթային նրբերանգներ են, որ ուզում ես շատ բարձր, շատ վեհ խոսք, համեմատություն, հիացմունք գտնել և ոչինչ ավելի գեղեցիկ չգտնելով, Տուրգենևին ես հիշում ու կրկնում ես ականա.

– Ինչ լավն էին, ինչ թարմ էին վարդերը...

Այգու ծառուղիներում չորս–հինգ ժամ շրջելուց հետո մենք ոտքով երկար–երկար իջնում էինք ոլորապտույտ կաճաններով և երբ մեր հյուրանոցը հասանք, անասելիորեն հոգնած էինք ու նոր հասկացանք, որ Օլգայի խոսքերը բավականին երկիմաստ են եղել:

«Որ ոտքով գաք, չեք մոռանա,– ասաց նա»:

Երեկ Վելինգտոնի ծովածոցում, Մարինա Դրայվ լողափում շրջելուց հետո, որտեղից հիանալի երևում էր արդեն հարավային կղզում գտնվող Կայկորա ձյունագագաթ լեռը, մենք ավտոբուսով մոտ 50 կիլոմետր ճանապարհ անցնելով հասանք ոչխարաբուծական մի ֆերմա:

Մենք էինք խնդրել: Ուզում էինք մոտիկից ծանոթանալ որևէ ֆերմերի հետ:

Տնտեսության տերը՝ իռլանդացի Օ. Բրայենը, բարեհամբույր դեմքով, ճերմակած մազերով մի մարդ, իր դուստրերի հետ շատ սիրալիք դիմավորեց մեզ։ Նրանք մեզ ծանոթացրին իրենց ողջ տնտեսությանը, ցուցադրեցին գյուղատնտեսական տարբեր մեքենաներ, կաթ վերամշակող սարքերի աշխատանքը և հատկապես մանրամասն բացատրություններ էին տալիս Ստավրոպոլի երկրամասի «Իլիչի պատգամները» կոլտնտեսության վարչության նախագահ Վասիլի Ռինդինին, որի տնտեսությունը ևս ոչխարաբուծական թեքում ունի։

Հետո մենք եղանք մի հսկայական գոմում, որտեղ տարբեր բաժանմունքներում խնամվում էին նորածին գառնուկները, հորթերն ու մորուկները։ Դա մի սքանչելի, սրտաշարժ տեսարան էր։

Երբ վերջացրինք շրջագայությունը և խորին շնորհակալություն հայտնեցինք մեր սիրալիք հյուրընկալողներին, միատր Օ. Բրայենը չուզեց անգամ լսել մեր հրաժեշտի մասին։

– Մինչև մեզ հետ թարմ կաթ չիմեք, չեմ թողնի,– վճռականապես բողոքեց նա։– Մենք մի այսպիսի առած ունենք, լավ է մի անգամ տեսնել, քան տասն անգամ լսել։ Դուք անպայման պետք է փորձեք մեր կաթի համը։ Թե չէ կվիրավորեք մեզ։

Մի քանի բոպե անց բացօթյա գոտրիկ մի տաղավարում մենք կաթ էինք խմում, թեյ և սուրճ ու լսում էինք մեր հաճելի տանտերերի զվարթ կատակները։

Շատ տաք ու անկեղծ մթնոլորտ էր։ Այնքան երախտապարտ էինք զգում մեզ, որ հանեցինք մեր ունեցած բոլոր հուշանվերները և սրտանց նվիրեցինք Օ. Բրայենին ու նրա գեղանի դուստրերին։

– Լավ մարդը ամեն տեղ էլ լավ մարդ է,– չդիմանալով բացականչեց մեր վրացի ընկերներից մեկը՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Կոբալաձեն։

Եվ մենք բոլորս աղմուկով համաձայնվեցինք նրա հետ։

Քիչ անց մի մեծ ավտոբուսով նոր հյուրեր եկան։ Ամերիկացի զբոսաշրջիկներ էին։ Մենք վեր կացանք, վերջին անգամ ողջագուրվեցինք հարազատ դարձած տանտերերի հետ, ցանկացանք նրանց երկար կյանք և տնտեսական մեծ բարգավաճում ու շտապեցինք դեպի մեր ավտոբուսը։

Երբ ճանապարհ էինք ընկել, ասես արտահայտելով բոլորի կարծիքը, Վասիլի Ռինդինը հիացմունքով ասաց.

– Ի՛նչ անկեղծ Հանդիպում էր։ Ի՛նչ լավ մարդիկ էին... Բայց դժվար է... Այսքան հյուրեր են ունենում... թե ծախս է... թե կտրվում են աշխատանքից...

– Մի անհանգստանա,– հանկարծ ծիծաղեց մեր ուղեկցորդուհի Օլգան,– ամեն ինչ հաշվված է... Նրանք իրենց օգուտը լավ գիտեն։

– Այսինքն ինչպե՞ս թե... ռեկլամի իմաստո՞վ,– հարցրեց մեկը։

– Ոչ միայն ռեկլամի: Միսթր Օ. Բրայենը իր ֆերմա այցելած յուրաքանչյուր զբոսաշրջիկի համար մեր ընկերությունից մի կլորիկ դոլար է ստանում:

– Չի կարող պատահել,– գրեթե կակազեց Ռինդինը:

– Ահա ստացականը,– հաստատեց Օլգան:

Երկար ժամանակ ոչ ոք չէր խոսում: Հետո Աննա Ալեքսանդրովան, որ Լենինգրադի բուհերից մեկի օտար լեզուների ամբիոնի վարիչն է, շնջաց.

– Ուրեմն նրանց ընդունելությունը, ջերմ վերաբերմունքը, անկեղծ ուրախությունը, սրտանց հյուրասիրությունը... այդ ամենը բեմադրությունն էր...

– Այո,– ասաց Օլգան:– Իսկ դրանում ի՞նչ կա:

Վերադարձի ողջ ճանապարհին լուռ էինք, ընկճված ու տխուր, ասես մի շատ կարևոր բան էինք կորցրել:

Միայն Ռինդինն էր լուռ շարժում շրթունքները:

Հավանորեն հայհոյում էր:

Ճանապարհի երկու կողմերում անընդմեջ, անընդհատ ոչխարի հոտեր էին արածում կանաչ մարգագետիններում: Մարգագետինները բաժանված էին հավասար քառակուսիների և իրարից անջատված երկաթե լարերով այնպես, որ հեռվից լարերը չէին երևում: Հովիվներ չկային: Հոտերի արոտը ղեկավարում էին շները: Շներն էին ոչխարներին այս քառակուսուց մյուսը տանում՝ արոտների հաջորդական օգտագործման սխեմով:

Ոչխարներ, ոչխարներ, ոչխարներ...

Նոր Զելանդիան ոչխարների արտահանությամբ աշխարհում առաջին տեղն է գրավում և առաջ է անցել նույնիսկ այնպիսի ոչխարաբուծական երկրից, ինչպիսին Ավստրալիան է: Յուրաքանչյուր նորզելանդացու ընկնում է 22 ոչխար և երեք կով:

Զուր չէ, որ Նոր Զելանդիայի պետական գերբի վրա ոչխար էլ է նկարված:

Բայց իհարկե, ծիծաղելի կլինի մտածելը, թե իսկապես յուրաքանչյուր նորզելանդացու այդքան ոչխար է հասնում: Ութ խոշոր ֆերմաներ տիրում են երկրի բոլոր ոչխարների կեսին: Բազմաթիվ են պարզապես անունով ֆերմերները, որոնք աշխատում են առավոտից մինչև ուշ գիշեր՝ իրենց փոքրիկ տնտեսությունը պահելու համար:

Այս ամենը մեզ պատմում էր տուրիստական «Կուկ» ֆիրմայի ներկայացուցիչ ռուսագզի Օլգան: Նա Չինաստանում է ծնվել, ամուսնացել է նորզելանդացու հետ և արդեն երեսուն տարի է, ինչ Օքլենդում է ապրում: Լեզուն համարյա մոռացել է, բայց մնացել է ռուս՝ իր

պարզությամբ, անկեղծությամբ և սրտացավությամբ: Նա հասկանում է մեր վիճակը, էլի ու էլի թվեր է բերում՝ միջադեպը մոռացության տալու, մեր տրամադրությունը փոխելու համար:

Բայց նրան գրեթե ոչ ոք չի լսում, և ի վերջո լռում է նաև Օլգան:

Եվ մեզանից ամեն մեկը իր հայրենիքի հետ է մնում:

ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Թարգմանաբար Քրայստչերչ նշանակում է Քրիստոսի եկեղեցի: Այդ անունն ունի Նոր Զելանդիայի Հարավային կղզու ամենախոշոր քաղաքը: Մենք Վելինգտոնից այնտեղ թռանք մեկ ժամ տասնհինգ բոլետով՝ արագորեն անցնելով Կուկի փոքրիկ նեղուցը և երկար ժամանակ թնելով Հարավային կղզու հարավային կտրտված եզերքների մոտով, Խաղաղ օվկիանոսի վրայով:

Քրայստչերչը երկրի մշակութային խոշոր կենտրոններից մեկն է, և շուրջ երեք հարյուր հազար բնակչությամբ նույնիսկ երկար ժամանակ հավակնություն ուներ մայրաքաղաք դառնալու:

Ինչպես և ենթադրվում է, քաղաքն իր անվան համար պարտական է անգլիական եկեղեցուն: Հարցն այն է, որ քաղաքի բնակիչների մեծ մասին Անգլիայից այստեղ գաղթելու գործում եկեղեցին է օգնել: Եվ երախտապարտ անգլիացիները, որ ոչ թե աքսորվել, այլ իրենց կամքով են հասել Նոր Զելանդիա, կառուցել են իսկական անգլիական քաղաք, որն ամենաանգլիականն է համարվում Նոր Զելանդիայում, և քաղաքի գրեթե բոլոր փողոցներին ու եկեղեցիներին անգլիական եկեղեցու կենտրոնի՝ Քենտրբերիի փողոցների անուններն են տվել: Հենց Քենտրբերիի անունն է կրում քաղաքի ամենամեծ տաճարը:

Ի տարբերություն մեր տեսած բոլոր քաղաքների, Քրայստչերչը հարթության վրա է տեղավորված և զարգացման ավելի դյուրին հնարավորություններ ունի: Այստեղ կլիման ավելի մեղմ է, դրա համար էլ մենք իսկական զարուս տեսանք: Ամենուրեք ծաղկել էին ծառերը, որոնցից շատերը մուգ կարմիր տերևներ ունեին, ինչպես մեր տանձենիներն են լինում ուշ աշնանը: Դեղձենիների ու յասամանների ծաղիկների հոտը տարածվել էր ողջ քաղաքով մեկ: Ուռենիները քնքշորեն թեքվել էին Էյվոն գետի վրա, ուռենիներ, որոնք ըստ ավանդության Սուրբ Հեղինե կղզուց են այստեղ բերել և Նապոլեոն Բոնապարտի գերեզմանի վրայի ուռենիների հետնորդներն են:

Էյվոնը, որն այդպես է կոչվում ի պատիվ Անգլիայի Էյվոն գետի եզերքին ծնված մեծ Շեքսպիրի, փոքր ու ծանծաղ գետ է, բայց ջուրը մաքուր է, վճիտ և սրընթաց: Փոքրիկ այդ գետի վրա երեսուկյոթ փոքրիկ կամրջակներ են գցված: Կիրակի օրերին գետի ջուրը կանաչ է, կանաչ է, որովհետև շաբաթ օրերին խուզված գազոնների խոտը քաղաքի բոլոր մասերում Էյվոնն է լցվում: Միայն խոտ կարելի է լցնել Էյվոն գետի մեջ, ուրիշ ոչինչ: Թիավարել

սիրողների ամենացանկալի վայրն է Էյվոնը, հատկապես շաբաթ և կիրակի օրերին բազմաթիվ նավակներ են սահում գետն ի վար, ջրերի վրա տիրություն անող խոշոր բադերի կողքով:

Ճարտարապետական շատ հետաքրքիր փոքր ձևեր կան Էյվոն գետի ափերին, որոնցից ինձ առանձնապես գրավեցին երկուսը: Առաջինը նվիրված էր երկու համաշխարհային պատերազմներում զոհված նորգելանդացիների հիշատակին և կամուրջներից մեկի մուտքի կամարն էր հանդիսանում, իսկ երկրորդը՝ Անտարկտիդայի հոչակավոր հետախուզող Ռոբերտ Սկոտի քարակերտ արձանն էր: Հուզիչն այն է, որ արձանի հեղինակը Սկոտի կինն է՝ Քեննեթ Սկոտը: Նա ամուսնուն քանդակել է սպիտակ քարից, սպիտակ, ինչպես Անտարկտիդայի սառույցները, որտեղից Ռոբերտ Սկոտը չվերադարձավ:

Մի ուրիշ ուշագրավ հուշարձան էլ կա Քրայստչերչում: Այն կանգնած է մեր հյուրանոցի՝ «Քլարենդոն հոթել»-ի դիմացի հրապարակում, կանաչ մարգագետնի մեջ: Նավապետ Կուկի արձանն է դա: Հոչակավոր ծովագնացը կանգնած է բարձր պատվանդանի վրա՝ մի ձեռքին կիսաբաց քարտեզը, իսկ մյուսին՝ ծովային հեռադիտակը:

Ընդհանրապես Քրայստչերչը հանգիստ կարելի է համարել թանգարանային քաղաք:

Քաղաքի փողոցներից մեկը հենց այդպես էլ կոչվում է՝ «Հուշարձանների փողոց»: Այն սկիզբ է առնում Քրայստչերչի կենտրոնից և ձգվում, հասնում է մինչև օդանավակայան: Ամեն տեսակի հուշարձան կա այդ փողոցի վրա՝ ցայտադրուրից սկսած մինչև իսկական ինքնաթիռ, որը մասնակցել է համաշխարհային երկրորդ պատերազմին:

Բայց իհարկե քրայստչերչիների թանգարանային կուլտուրան և սերն իրենց ամենաանգլիական քաղաքի նկատմամբ առավել ցայտուն դրսևորված է քաղաքային թանգարանում:

Մենք այդ թանգարանը մտանք արդեն հոգնած՝ մեկ ամսվա ընթացքում տեսած տասնյակ թանգարաններից: Մտանք ու կանգ առանք ապշած: Մեզ թվաց, թե թանգարանի դուռը մեզ ընդամենը զուգահեռ փողոց դուրս բերեց: Փողոց, որ հիմա չկա, բայց որը մենք տեսել ենք, անպայման տեսել ենք Անգլիայի հին կյանքը պատկերող կինոնկարներում, կտավների վրա ու բեմադրություններում:

Դա մի իսկական փողոց էր, համարակալված բնակելի տներով, ցուցանակավոր խանութներով ու հրապարակով: Տներից մեկի պատուհանից թեքված ներքև էր նայում հետաքրքրասեր մի աղջիկ՝ հնաժողովուրդի զգեստով և երկար գանգուր խոպոպներով: Բաց լուսամուտներից երևում էին բնակարանների ներսի կահույքը, մոմակալները, պաստառները, սպասքները: Խանութների ցուցափեղկերում բազմաթիվ ապրանքներ կային՝ արտասովոր վառ պիտակներով, և վաճառասեղանների կողքին կանգնած էին մարդիկ: Դեղատան ներսում դեղագործը ինչ-որ փոշի էր կշռում կախովի կշեռքով, իսկ հրապարակում կառքին լծված ձին պատրաստվում էր շարժվելու:

Իսկական սովորական մի փողոց էր դա, որը սակայն կարծես հրաշքով քարացել, անշարժացել էր եռուն օրվա ինչ-որ պահի:

Ի՛նչ ահավոր ջանքեր պետք է գործադրած լինեն թանգարանի աշխատողները, որպեսզի կարողանան սերունդներին պատմել, թե ինչպիսին է եղել իրենց սիրելի քաղաք Քրայստչերչը ավելի քան հարյուր տարի առաջ, 1860 թվականին: Այո, նրանք ամենայն մանրամասնությամբ և ամենայն ճշգրտությամբ թանգարանում վերականգնել են 1860 թվականի քաղաքի հին, վաղուց գոյություն չունեցող փողոցներից մեկը:

Մեծ հարգանք պետք է ունենալ պատմության նկատմամբ, մեծ սեր հայրենի քաղաքի հանդեպ և մեծ պատասխանատվություն սերունդների առջև, որպեսզի հնարավոր լինի հանձն առնել նման վիթխարի ու պատվաբեր մի գործ:

Այս թանգարանով իրոք որ կարող է հպարտանալ «Հարավային Անգլիայի» ամենաանգլիական քաղաքը:

* * *

Դե, եթե խոսում ենք անգլիական լինելու մասին, չմոռանանք նշել, որ ինչպես Նոր Զելանդիայում ամենուրեք, այստեղ էլ տրանսպորտի երթևեկությունը ձախ է: Եվ ոչ միայն տրանսպորտի: Հյուրանոցը երկու դուռ ունի՝ ուրեմն պետք է ձախով մտնես: Տեղ ես գնում, ուրեմն պետք է քայլես անպայման փողոցի ձախ մասով և ձախ կողմից մոտենաս ավտոմեքենային:

Պատահականություն էր, թե չէ, բայց նույնիսկ մեր Օլգան ձախ ձեռքով էր գրում:

Եվ տարօրինակն այն է, որ թեև քաջ գիտեինք երթևեկության ձախակողմյան լինելու մասին, բայց այնուամենայնիվ սովորության ուժով գրեթե անընդհատ խախտում էինք կարգը՝ մերթ փախվելով դիմացից եկող մարդկանց ու մերթ մտնելով այն դռնից, որտեղից ուրիշները դուրս էին գալիս: Դժվարը հատկապես մեր «Քլարենդոն հոթել» մտնելն էր: Ձախ դուռն այնպես էր պատրաստված, որ մտնելիս ոտքով ակամա սեղմում էիր ինչ-որ աներևույթ զսպանակ և դուռն ինքն իրեն բացվում էր: Իսկ որովհետև, մենք հաճախ աջ դռանն էինք մոտենում, ոչ մի զսպանակ էլ չէր սեղմվում, և մենք թափից պարզապես զարնվում էինք մյուս կողմից բացվող փակ դռանը՝ «Հեղնար աղբյուրը» ուշացած հիշելով:

Քրայստչերչի Ռոջեստոն սովորական փողոցում շատ սովորական երկհարկանի մի տուն կա, որի մոտ միշտ կանգ են առնում զբոսաշրջիկներով ավտոբուսները: Այստեղ է ծնվել միջուկային ֆիզիկայի հայրը՝ Էռնեստ Ռեզերֆորդը:

Քրայստչերցիները հպարտանում են իրենց մեծ հայրենակցով: Քենտրբերիի համալսարանում բոլոր այցելուներին ցույց են տալիս այն հասարակ նստարանը, որի վրա Ռեզերֆորդն է նստել ու սովորել, երբ Քենտրբերին կոլեջ էր: Այն Ռեզերֆորդը, որ հետագայում Անգլիայի գիտությունների ակադեմիայի (թագավորական ընկերության) պրեզիդենտի գահը բարձրացավ և դարձավ աշխարհի գրեթե բոլոր ակադեմիաների, այդ թվում նաև Սովետական Միության ակադեմիայի պատվավոր անդամը:

ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Այո, այո, Նոր Զելանդիայում ևս հայեր կան:

Եվ որովհետև աշխարհի որ ծայրում էլ եղել եմ, ես իմ հայրենակիցներին եմ որոնել, հայեր եմ փնտրել, որ տեսնեմ ոնց են այստեղ հասել, ովքեր են, ինչ են անում, ինչպես են, հանդիպեցի նաև Նոր Զելանդիայում ապրող մի քանի հայերի:

Նրանք շատ չեն, չէ՛: Նրանք հենց մի քանի հոգի են: Եվ իրար կողքի չեն ապրում, ցրված են կղզիներով մեկ. կղզիների նման:

Ավստրալիայում հարցն ուրիշ էր: Այնտեղ մեծ քաղաքներում, հատկապես Մելբուռնում ու Սիդնեյում հայեր շատ կան, եթե շատ կարելի է համարել, ասենք, Նորքի զանգվածներից մեկի բնակիչներին: Բայց դե, ինչքան չլինի հայեր են, եկեղեցիներ ունեն, կիրակնօրյա դպրոցներում երեխաներին հայերեն են հիշեցնում, իրար հանդիպում են, զրուցում են, մայր հայրենիքի մասին են խոսում, պատմում են միմյանց իրենց ցավերը, մխիթարում են իրար, երագում են...

Նոր Զելանդիայում դա չկա: Որպեսզի մի հայը մյուսին հանդիպի, պետք է, ասենք, Երևանից Ռոստով հասնի: Իսկ դա այնտեղ շատ բարդ բան է: Դրա համար էլ չեն հանդիպում:

Մելբուռնի ծանոթներիցս մեկը ինձ հեռախոսի մի համար էր տվել և խնդրել, որ հենց Օքլենդ հասնեմ՝ զանգահարեմ: Հեռախոսի տիրոջը կոչում էին Մինաս Իլյաս:

– Իլյա՞ս, – զարմացա ես: – Հայ չէ՞, ինչ է:

– Հայ է, – ասաց զրուցակիցս, – և լավ հայ է: Հովսեփյան է իսկական ազգանունը: Բայց Իլյաս է գրվում: Իրեն կհարցնես, կպատմի, թե ինչպես է լինում, որ Իլյաս է դառնում Հովսեփյանը:

Օքլենդում գտնվելու երկրորդ օրը, հենց որ ազատ ժամանակ ունեցա, զանգահարեցի:

Լսափողը մի կին վերցրեց:

– Ես Մինաս Իլյասին եմ ուզում, – ասացի ես հայերեն:

– Ո՞վ է հարցնում, – ինձ հասկանալով, անգլերեն հարցրեց կինը:

– Հայ է, – ասացի ես:

– Հա՞յ, – վերահարցրեց կինը:

– Հայ, – ասացի ես:

– Հիմա, այս րոպեին, – անգլերեն ասաց կինը:

Ձարմանալի բան է, չգիտես ինչու սիրտս սկսեց ուժգին տրոփել:

– Այո՞, ես Մինասն եմ,– հնչեց լսափողի մեջ:– Հայերեն լավ չեմ գիտեր...

Ես հանկարծ Սարոյանի գրույցը հիշեցի հայերի հետ Ռոստովո՞ւմ, թե Նախիջևանում և բղավեցի նրա նման.

– Ո՞նց ես, տնաշեն, ո՞նց ես...

– Աղեկ եմ... անգլերեն չե՞ք գիտեր... Այ ամ սորի... ափսոս...

– Իսկ դու ի՞նչ հայ ես, որ հայերեն չգիտես, հը՞,– հարձակվեցի ես:

– Ա... ատանկ հայ եմ... ի՞նչ ընեմ...

Օքլենդի ամենահարգարժան քաղաքացիներից մեկն է Մինաս Իլյասը: Մասնավոր հիվանդանոց ունի, նշանավոր բժիշկ է: Նրա հիվանդանոցում նույնիսկ սրտի վիրահատություններ են կատարում:

Ես եղա նրա տանը: Դա մի լավ առանձնատուն էր քաղաքից ոչ հեռու, ուղղակի անտառի մեջ, որտեղից հիանալի տեսարան էր բացվում Օքլենդի և օվկիանոսի վրա:

Տունը կանգնած էր միայնակ, խճուղուց մոտ հարյուր մետր հեռու, և երբ մենք թեքվեցինք ճանապարհից ու տուն էինք գնում, ավտոմեքենան գրեթե քսվում էր հսկա ծառերին:

Ես շատ էի ուզում, որ Մինաս Հովսեփյանը ինձ պատմի իր կյանքը կամ, ինչպես ինքն էր ասում՝ իր «կյանքի գիրը», բայց նա իրոք մոռացել էր հայերենը և, շատ էր տառապում դրա համար: Հայերենի և անգլերենի խառնուրդից այնուամենայնիվ այնքանը հասկացա, որ մայրը Իզմիրից է եղել, հայրը՝ Ջուլֆայից: Շուտ է գրկվել ծնողներից, ընկել է Պարսկաստան, սովորել ինչ–որ անգլիական դպրոցում: Հետո Անգլիա է մեկնել, դարձել անգլոհպատակ, ավարտել բժշկական ինստիտուտը և ամուսնացել ուելսցի մի աղջկա հետ, որը հիմա սպիտակ մազեր ուներ և անգլիական մուգ թեյ էր դնում մեր առջև:

1928 թվականին տեղափոխվել են Նոր Զելանդիա և ապրում են այստեղ, Օքլենդում: Հայավարի չորս զավակ ունեն՝ երեք աղջիկ և մի տղա, որի անունն է...

– Ջոն,– ասաց ուելսցի տանտիրուհին:

– Բեդրոս,– քիչ ամաչելով և խեթ–խեթ նայելով կնոջը, ասաց Մինաս Իլյասը:

Դուստրերից մեկը ամուսնացել և Ամերիկայում է ապրում: Ամուսնուն երբեք չեն տեսել: Բայց լուսանկարն ունեին, ցույց տվեցին: Գունավոր լուսանկար էր:

Քիչ հետո տուն եկավ Ջոնը իր մատրի ընկերոջ հետ: Բարևեցինք իրար, ու նա, շատ քաղաքավարի ներողություն խնդրելով, ընկերոջ հետ իր սենյակը վազեց, որտեղից անմիջապես բիթների ձայնը եկավ:

– Մինաս Հովսեփյան–Իլյասը խեղճ–խեղճ նայեց ինձ, նայեց որդու դռանը, երկար մտածեց ու ասաց կակազելով.

– Հայերեն չգիտի... մնար ի՞նչ ըներ...

– Դե, իհարկե,– ասացի ես:

Հետո նա երկար–երկար նայում էր ինձ և հաստատ գիտեմ, որ մտքում խոսում էր: Որովհետև մերթ ընդ մերթ ցնցվում էր ադամախնձորը և շրթունքները դողում էին: Ես չգիտեի, թե նա ինչ է ուզում ասել, բայց կարծես թե հասկանում էի: Նա պարզապես մտածում էր, թե չի կարելի կամ չի կարողանա հայերեն արտասանել–արտահայտել այն ամենը, ինչ ուզում էր ասել:

Եվ հանկարծ ինձ համար անսպասելի ասաց.

– Հայերեն խոսիր, կխնդրեմ:

– Ի՞նչ,– չհասկացա ես:

– Դուն խոսիր, ես լսեմ,– կրկնեց նա աղերսանքով:– Շատ կխնդրեմ:

Եվ թիկնաթոռին ետ ընկած, Մինաս Հովսեփյան–Իլյասը կիսաբաց աչքերով, կիսաբաց շրթունքներով հայերեն էր լսում, ինչպես մոր պատմած հին, անուշ, մոռացված հեքիաթը կլսեն:

* * *

– Բարև ձեզ, Գրիգորյան քույրեր:

Ավստրալիայում էլ նրանց անունով չեն կոչում: Եվ ոչ էլ Նոր Զելանդիայի Վելինգտոն քաղաքում, որտեղ ապրում են նրանք:

– Հիանալի մարդիկ են Գրիգորյան քույրերը,– ասում էին նրանց մասին Մելբուռնում և Սիդնեյում:

– Եթե ուզում եք հայ մնացած հայեր տեսնել, գնացեք Գրիգորյան քույրերի մոտ,– ասում էր ինձ վելինգտոնցի ավտոբուսի վարորդ Առաքել Բոյաջյանը:

Իհարկե, եթե ասեմ, թե Առաքելը իսկական հայ չէ, ո՞վ կհավատա: Առաքել Բոյաջյան: Հայ է: Ճիշտ է, կինը նորզելանդացի է: Ճիշտ է, նա հայերեն էր խոսում այնպես, ինչպես ես անգլերեն: Ճիշտ է, երեխաները ոչ մի բառ հայերեն չգիտեին:

Բայց նա հայ է, հայ՝ Դժբախտ, վախեցած, անընդհատ հարվածի սպասող, բայց զարմանալի կենսունակ, դիմացող, ապրող մարդ է: Հայ է: Նորգելանդացի հայ:

Փոքրիկ տան մեջ էր ապրում, փոքրիկ պարտեզ ուներ և փոքրիկ երեխաներ: Երեխաների անուններն ինձ չասաց: Գուցե հայկական չէին, դրա՞ համար, ի՞նչ իմանաս: Հայերեն խոսելը մոռացած, խոսելը մոռացած, լուռ մարդ էր Առաքել Բոյաջյանը: Բայց խոշոր, մտահոգ, թախծոտ աչքեր ուներ: Թաց աչքեր: Այդ խոշոր, իր պապերի աչքերով նա նայեց ինձ ու ասաց.

– Եթե ուզում եք հայ մնացած հայեր տեսնել, գնանք Գրիգորյան քույրերի մոտ:

Ու մենք գնացինք Գրիգորյան քույրերի մոտ:

Նրանք ապրում էին քաղաքի արվարձանում, գրեթե գյուղական մի փողոցի վրա, հիմա չեմ հիշում երկհարկանի թե միահարկ մի տան մեջ: Երևի միահարկ էր: Երկու փոքրիկ սենյակ էր, բայց ես ինձ զգացի պալատում, ավելի ճիշտ Հայաստանում, մեր տանը: Հայկական, հայի տուն էր: Միակ հայի տունը, որ ես տեսա Նոր Զելանդիայում: Պատերին Մասիս կար, Սևանա լիճ կար ու Մարտիրոս Սարյան: Գրապահարանում իրար կողքի, հավանաբար մի քիչ տարակուսած, թե ինչպես են այստեղ ընկել, հանդարտ ապրում էին Բաֆֆին ու Լեոն, Թումանյանն ու Չարենցը, Զորյանն ու Մահարին, Շիրազն ու Մահյանը, հայ գրեթե բոլոր մեծ ու փոքր գրողները: Մահճակալներին, բարձերի վրա այնպիսի ասեղնագործ ծածկոցներ կային, որ միայն հայի տանն են լինում: Համեստ, մաքուր, հավաք տուն էր: Եվ ուզում եք ծիծաղեք, ուզում եք՝ չէ, այդ տնից հայի հոտ էր գալիս: Ասես օտար երկրում քո երկրի դեսպանատունն ընկնես:

Իրար շատ նման են Գրիգորյան քույրերը՝ պատկառելի, բարի, սպիտակահեր: Իսկական հայ մամիկներ են: Բայց մամիկներ չեն դարձել: Չեն հասցրել: Տարօրինակ մի ճակատագրով իրենց կյանքը կապել են բրիտանական ինչ–որ նավթընկերության հետ, Եգիպտոսից գնացել Զինաստան են հասել, հետո էլ այնտեղից եկել, եկել ու ընկել են Նոր Զելանդիա: Քույրերից մեկը՝ Նվարդը, մինչև հիմա էլ այդ նավթընկերությունում է աշխատում: Ավելորդ է ասելը, թե ինչպես են կապված իրար, ինչպես են հոգում միմյանց մասին, ինչպես են սիրում իրար, ու մեկ էլ այն ամենն, ինչ հայկական է, Սովետական Հայաստանի հետ է կապված, հայրենիքի հետ առնչություն ունի:

Ազնիվ խոսք, նրանք շատ ավելի լավ գիտեին, թե ինչ է կառուցվում մեր մայրաքաղաքում, ինչ նորություններ կան Հայաստանում, քան Երևանում ապրողներից ոմանք:

Դա և՛ զարմանալի էր, և՛ շատ հաճելի:

Ասենք զարմանալի չպետք է լինի, որովհետև Հասմիկ և Նվարդ Գրիգորյանները ստանում են Երևանում լույս տեսնող շատ լրագրեր ու հանդեսներ:

– Հատկապես կսիրենք «Սովետական Հայաստան» ամսագիրը, «Հայրենիքի ձայնը» և «Գարունը», մասնավորապես «Գարունը»: Շատ աղվոր բաներ կտպեն,– ասաց Հասմիկ Գրիգորյանը:

Մոտիկ ոչ մի հարազատ չունեն։ Ոչ ոք չունեն։ Եվ ապրում են այսպես՝ իրար հենված ու հենված հայրենիքին։

Խոսեցինք, խոսեցինք, խոսեցինք մինչև ուշ գիշեր։

– Եթե գիտնայի, որ քիչ մը օգտակար կրնայի ըլլալ, աշխատել հայրենիքիս համար, կձգեի ամեն ինչ, կուգայի Հայրենիք,– նաև քրոջ փոխարեն, քրոջ ձայնով ասաց Նվարդ Գրիգորյանը։

– Բայց մենք ծեր ենք։ Իսկ Հայաստանը գերեզմանոց չէ։

– Բայց եթե ողջ մնացինք, ինչ էլ լինի, կուգանք խոնարհվելու Արարատին,– ավելացրեց Հասմիկ Գրիգորյանը։– Չե՞ք հավատար...

Ճիշտն ասած չէի հավատում։ Անհնարին էր հավատալ, թե ծեր կանայք ուժ կունենան այդքան ճանապարհ կտրելու։ Որտեղից որտեղ՝ հե՛յ, Նոր Զելանդիայից մինչև Հայաստան։ Ինչպե՞ս նրանք կարող են դիմանալ մոտ քառասուն ժամ գրեթե անընդմեջ թռիչքի։ Ես, որ Հայաստանից Նոր Զելանդիա եմ հասել, հոգնած եմ մինչև հիմա, գլուխս պտտվում է։

Բայց ես մի շատ կարևոր, երևի ամենակարևոր հանգամանքը հաշվի չէի առել։ Այլ բան է Հայաստանից Նոր Զելանդիա հասնելը և ուրիշ, բոլորովին ուրիշ բան է Նոր Զելանդիայից Հայաստան հասնելը։ Եթե հայ ես։ Բոլորովին ուրիշ բան է Մեքսիկայից Հայաստան հասնելը, Արգենտինայից Հայաստան հասնելը, Ավստրալիայից Հայաստան հասնելը, աշխարհի որևէ մասից Հայաստան հասնելը։

Եթե հայ ես։

Անցյալ տարի Գրիգորյան քույրերը եկել, հասել են Հայաստան։

* * *

Երբ Վելինգտոնից Քրայստչերչ էի թռչում, ինձ ասացին, թե այնտեղ մի հայ կա ու հարցրին, թե կուգեի՞ տեսնել։

– Անպայման,– ասացի,– անունն ի՞նչ է։

– Լևոն Թոմսոն։

Ցավ չէ, ինչ է։

– Այսինքն Թովմասյան է, բայց Թոմսոն է դարձել,– ասացին ինձ։

Հասցեն չունեին, չունեին նաև հեռախոսի համարը։ Բայց ես մտածեցի, թե հեռախոսագրքով կգտնեմ։ Դժվար չէ, կնայեմ Լ. Թոմսոն ու կգտնեմ։

Երբ տեղավորվեցինք «Քլարենդոն հոթել»-ում, ես անմիջապես բացեցի հեռախոսագիրքը ու հասա «Թ» տառին: Գրքում մի քանի էջ թումսոններ կային: Դե եկ ու գտիր: Ասենք հա, ինձ միայն Լ. Թումսոններն են պետք, Լ. Թումսոն... Լ. Թումսոն... Նրանք քառասունվեց հոգի էին:

Դե դո՛ւ ասա, ինչպե՞ս գտնեմ քեզ, հայրենակից, ինչպե՞ս գտնեմ քեզ, հայ եղբայր Լևոն Թովմասյան, երբ դու ինքդ կորցրել ես քեզ բազմաթիվ, անթիվ թումսոնների մեջ:

Սարոյանը լինեք ասեք.

– Ախր ինչո՞ւ եք կորչում, տնաքանդներ... Մարդ էլ ինքն իրեն կորցնի՞...

ՈՐՊԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ

Վաղուց անցել են այն ժամանակները, երբ Ավստրալիան, Ֆիջիի կղզիները, Նոր Զելանդիան, օտար, հեռավոր, անիմանալի երկրներ էին համարվում: Կղզիներ, որ գտնվում են ինչ-որ տեղ՝ հարավային կիսագնդում, Անտարկտիդայի թե Ամերիկայի մոտ: Մեզ նույնիսկ մի շատ զավեշտական, բայց պատմականորեն ստույգ դեպք պատմեցին այդ առթիվ:

Դարասկզբին Նոր Զելանդիայի պրեմիեր մինիստրը Ամերիկայի Միացյալ Նահանգներ է գնում: Ամերիկայի վերնախավը սկսում է նրան խել իրար ձեռքից, ճոխ ընդունելություններ են կազմակերպում և հանդեսներ: Եվ ահա մի անգամ պրեմիեր մինիստրը մի հրավիրատոմս է ստանում: Այնտեղ գրված է լինում, թե այսինչ ընտանիքը երջանիկ կլինի այսինչ օրը իր տանը ընդունելու հեռավոր երկրի պրեմիեր մինիստրին և դեմ չի լինի, եթե պրեմիերը ներկայանա ոչ թե ֆրակով, այլ ցեղի առաջնորդի իր ազգային հագուստով: Ես պատկերացնում եմ, թե նրանք ինչ անհամբերությամբ են սպասել տեսնելու սևամորթ կղզիաբնակին՝ լայն օղը քթից կախ, դաջված ու ներկված դեմքով, տոմահուկը խրած գոտու մեջ:

Այո, վաղուց են անցել այդ ժամանակները:

Ավստրալիան ու Նոր Զելանդիան այսօր աշխարհի առաջավոր պետությունների շարքում են իրենց գյուղատնտեսությամբ, արդյունաբերությամբ, գիտության ու մշակութային մակարդակով: Այսօր նույնիսկ Ֆիջին միջազգային ասպարեզ է դուրս եկել, անկախություն է ձեռք բերել և դիվանագիտական հարաբերություններ հաստատել շատ պետությունների, այդ թվում և Սովետական Միության հետ:

Միջազգային բարենպաստ եղանակը և ժամանակակից տեխնիկան իրար են մոտեցրել հեռավոր աշխարհամասերը:

Հիմա գրեթե ամեն օր լրագրերում կարելի է կարդալ, որ բարի կամքի այցով Սովետական Միություն է եկել Ավստրալիայի կամ Նոր Զելանդիայի պետական ու հասարակական այսինչ

գործիչը, որ Ֆիջիի կղզիների մոտ խարիսխ է նետել «Դմիտրի Մենդելեն» սովետական գիտահետազոտական նավը. որ Ավստրալիայում և Նոր Զելանդիայում հաջողությամբ ելույթ են ունենում վրացի թենիսիստները, ուզբեկ պարուհիները, ուկրաինացի լողորդները...

Ո՛չ հեռավոր գուգահեռականներն ու միջօրեականները, ո՛չ այն, որ երբ այնտեղ գիշեր է, ցերեկ է մեզ մոտ ու երբ ձմեռ է այնտեղ, մենք խեղդվում ենք շոգից, ո՛չ այն, որ հասարակական տարբեր ֆորմացիաներում ենք ապրում... Ոչինչ չի խանգարում, որ սովետական և ավստրալիացի, նորզելանդացի, ֆիջիցի մարդիկ ճանաչեն իրար, ազնիվ փոխհարաբերություններ ունենան, փոխշահավետ համաձայնություններ կնքեն, միասին պայքարեն աշխարհում կայուն խաղաղություն հաստատելու համար:

Մենք Երկիր մոլորակի տարբեր ծայրերում ենք ապրում, բայց չէ՞ որ դա նույն մոլորակն է:

Եվ եթե մեր խմբի այցելությունը Ավստրալիա, Ֆիջի ու կիվիների երկիրը և ճամփորդական իմ այս համեստ նոթերը այդ մասին գոնե փոքր-ինչ ավելի նպաստեն դրան, ուրեմն լիովին բավարարված կզգամ ինձ:

Ես հիշում եմ այն օրը, երբ ինքնաթիռներից հոգնած ու հալածված, Քրայստչերչում մենք կրկին ինքնաթիռ նստեցինք: Բայց դա արդեն ուրիշ էր: Մենք ուրախությամբ էինք ինքնաթիռ բարձրանում:

Մենք հայրենիք էինք թռչում:

Եվ, ուրեմն, Քրայստչերչ–Օքլենդ–Սիդնեյ–Մելբուռն–Սինգապուր–Դելի–Մոսկվա...

Մոսկվա...

ԲԱՑԵՔ ՁԵՐ ԱԶՔԵՐԸ

(Պիես)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. ԶԱՐՈՒՀԻ
2. ԲՅՈՒԶԱՆԴ
3. ԺԱԿ-ՀՈՎՍԵՓ
4. ՄԱՐԻ
5. ԺԵՆԵՎԵՎԱ-ՀԱՅԱՐՓԻ
6. ԳԵՎՈՐԳ
7. ՍՈՆԱ
8. ՍՏԵՓԱՆ
9. ԱՇՈՏ

(Երևան: Կարապի լիճ: Երգում է մի տղա: Երգում է սիրո և Երևանի մասին: Երգն ավարտվում է: Տղաներն ու աղջիկները ծափահարում են, խոսում, ծիծաղում: Նրանց մեջ են նաև Հայարփին ու Աշոտը՝ Ջեկո շնիկի հետ միասին: Բայց կանգնած են առանձին ու ինչ-որ բան են շշնջում իրար: Հետո տղաներից մեկը կամացուկ մոտենում է գույգին):

ՏՂԱՆ – Աշոտ, լավ երգ էր, չէ՞:

ԱՇՈՏ – Ի՞նչ երգ:

(Բոլորը ծիծաղում են)

(Սպառնալով):

Լսիր, գիտե՛ս ինչ...

ՏՂԱՆ – Գիտեմ, գիտեմ... Քիմիայի մասին էիք խոսում... Աշոտ գումարած Հայարփի հավասար է...

ԱՇՈՏ – Ի՞նչ...

ՏՂԱՆ – Քացախաթթու...

ՀԱՅԱՐՓԻ – Մենք խոսում էինք այն մասին, որ շուտով ավարտելու ենք դպրոցը և... բաժանվելու ենք իրարից:

ՏՂԱՆ – Դե, դուք երբեք չեք բաժանվի, դա հաստատ...

ԱՇՈՏ – Եկեք պայմանավորվենք, որտեղ էլ լինենք, ինչքան զբաղված լինենք, ամեն տարի այս օրը հավաքվենք այստեղ, օպերայի այգում, Կարապի լճի մոտ, հը՞:

1-ին ԱՂՋԻԿ – Այնքա՛ն են այստեղ պայմանավորվել... Եթե բոլորն էլ պահեին խոստումը, հիմա այս հրապարակում ասեղ զցելու տեղ չէր լինի...

ԱՇՈՏ – Իսկ մենք կպահենք... Մենք կգանք... Ուր էլ որ գնանք, Երևանը կձգի, կբերի...

ՏՂԱՆ – Դա հաստատ: Երևանից լավ քաղաք աշխարհում չկա...

2-ԴՂ ԱՂՋԻԿ – Եկեք մի տողանոց պատասխանի կոնկուրս անցկացնենք: «Երևանի ի՞նչն ես սիրում» թեմայով: Միայն թե անկեղծ, հա ... Սկսեցինք... Ասա, Կարեն...

ԿԱՐԵՆ – *(Երգում է):* «Երևանի գիշերնե՛րը կապուտակ...»:

1-ԻՆ ԱՂՋԻԿ – Ես սիրում եմ մեր տունը:

ՏՂԱՆ – Իսկ ես Սայաթ-Նովա փողոցի կեռասները, երբ լավ հասած են...

2-ԲԴ ՏՂԱ – Ես սիրում եմ... ընկեր Հասմիկին... Իսկ դո՞ւ, Աշոտ...

ԱՇՈՏ – Ե՞ս... ես սիրում եմ...

2-ԲԴ ԱՂԶԻԿ – Պարզ է, Հայարփիին...

ԱՇՈՏ – Տղա լինեիր, այնպես կհասցնեի...

ՄԵԿԸ – Ես սիրում եմ Երևանը Ծիծեռնակաբերդից...

ՄՅՈՒՍԸ – Իսկ ես օպերայի այգին ու մեկ էլ «Ն» տառով մի աղջկա...

ԿԱՐԵՆ – Իսկ դո՞ւ, Հայարփի...

ՀԱՅԱՐՓԻ – Ձեզ բոլորիդ, բայց ավելի շատ՝ Աշոտենց Ջեկոյին...

1-ԻՆ ԱՂԶԻԿ – Այս շա՞նը:

ՀԱՅԱՐՓԻ – Քեզանից խելոք է... Ճիշտ չե՞մ ասում, Ջեկո:

2-ԲԴ ԱՂԶԻԿ – Է՛, չեղավ... Վերջ տվեք...

(Ավտոմեքենայի ձայն)

ՀԱՅԱՐՓԻ – Վայ, հորաքրոջս տղան է, Գևորգը... թաքնվենք...

...

(Պատկեր: Անցում: Գևորգն ու Սոնան)

ՍՈՆԱ – Հետո՞:

ԳԵՎՈՐԳ – Հետո այն, Սոնա, որ եթե մեր ստացած համաձուլվածքը իրոք այն է, ինչ հաշվել ենք, ուրեմն դա ամենաամուրն ու ամենադիմացկունն է մինչ այժմ եղած բոլոր համաձուլվածքներից:

ՍՈՆԱ – Ուրախ եմ քեզ համար, Գևորգ:

ԳԵՎՈՐԳ – Այդպիսի համաձուլվածքի կարիքն ամբողջ Միությունն է զգում: Ամբողջ աշխարհը... Գիտե՞ս ինչ արեց Ստեփանը, երբ հաշվեց մի վերջին անգամ ու համոզվեց, որ զտել ենք...

ՍՈՆԱ – Պա՞ր եկավ:

ԳԵՎՈՐԳ – Չէ, ե՛ս էի պար գալիս, իսկ նա լաց էր լինում երեխայի նման: Հեռվից նայողը մեզ անպայման խելագարների տեղ կգներ...

ՍՈՆԱ – Դե հո հեշտ չէր... Երեք տարի...

ԳԵՎՈՐԳ – Երե՛ք տարի... Դա տարիներով հաշվել չի լինի, Սոնա... Երեք տարիների յուրաքանչյուր վայրկյանը... Վայրկյան առ վայրկյան: Երբ խոսում ես ու հաշվում միաժամանակ, ծիծաղում ես ու հաշվում, ուտում ես ու հաշվում... Ճաշարանում մատուցողուհիները անձեռոցիկները փախցնում էին մեր սեղաններից:

ՍՈՆԱ – *(Ծիծաղում է):*

ԳԵՎՈՐԳ – Ստեփանին պատի թերթ էին տվել ձևավորելու, ամբողջ էջը լցրել էր մաթեմատիկական բանաձևերով...

ՍՈՆԱ – *(Ծիծաղելով)* Դե, ոչինչ... Բայց հո կա համաձուլվածքը:

ԳԵՎՈՐԳ – *(Հառաչելով)* Կա... Իսկ դու ինչո՞ւ հանկարծ այդպես տխրեցիր, Սոնա:

ՍՈՆԱ – Չեմ տխրել... Գիտես, ցավալի է, որ ոչ ոք երբեք չի իմանա, թե ինչքան եք տառապել դուք, և ոչ մեկի հոգն էլ չի լինելու: Ինչպես մարդիկ այսօր չեն մտածում, թե որքան են տառապել, ասենք, Էդիտնը, Բեթհովենը, Էյնշտեյնը... բոլոր ստեղծողները՝ անիվի գլուտարարից մինչև Ժոլիո Կյուրի... Այսինքն, դա երևի բնական է... և...

ԳԵՎՈՐԳ – Եվ կարիք էլ չկա, որ իմանան: Բայց սպասիր, սա էլ դարձավ սիրահարների խոսակցություն... Հիմա մեզ կողքից նայողը կհավատա՞, որ մենք մեծ ու հանդիսավոր նյութերի մասին ենք խոսում և ոչ թե հարյուր անգամ իրար հարցնում թեթևամտորեն՝

– Դու ինձ սիրո՞ւմ ես...

– Չէ, առաջ դու ասա, հետո ես...

ՍՈՆԱ – Իսկի էլ թեթևամտություն չէ, զուր տեղը մի աշխատիր խուսափել, պատասխանիր ազնվորեն ու շիտակ, դու ինձ սիրո՞ւմ ես...

ԳԵՎՈՐԳ – *(Բղավում է)* Սիրում եմ, սիրում եմ, սիրում եմ...

(Գրկում, համբուրում է նրան):

ՀԱՅԱՐՓԻ – *(Հեռվից կանչում է):* Գևորգ...

ՍՈՆԱ – Ո՞վ է, Գևորգ...

ԳԵՎՈՐԳ – Փոքր քույրիկս է, սատանան...

ՀԱՅԱՐՓԻ – Ինձ ու ընկերուհիներին լուսանկարիր, որ հորաքրոջը չասեմ...

ԳԵՎՈՐԳ – Ձեզանից պրծնել չի լինի... Շարվիր... արագ-արագ... այդպես...

ՀԱՅԱՐՓԻ – Սպասիր, սպասիր, Ջեկո, դու ինձ մոտ... Ահա այսպես... Ժպտա, ըհր... Շատ ֆոտոգենիկ դեմք ունի Ջեկոն... Ավելի մոտիկ... Աշոտ, դու հեռու մնա...

ԳԵՎՈՐԳ – Ուշադրություն... նկարում եմ... (նկարում է):

ՀԱՅԱՐՓԻ – Ուռա՛, անմահացանք...

...

(Երաժշտություն: Պատկեր: Ջարուհու բնակարանը: Կահավորված է հարուստ և ճաշակով: Ներս է ընկնում Հայարփի-Ժենեվան, գրկում է Ջարուհուն):

ՀԱՅԱՐՓԻ – Հորաքույր, այնպես էի կարոտել քեզ, այնպես, բայց մերոնք ինձ տնից դուրս չեն թողնում, վախենում են, թե կփախցնեն: Ինձ կփախցնե՞ն, հորաքույր, ինչ ես կարծում... Ճիշտն ասած, մի քանի անգամ թաքուն դուրս եմ եկել տնից, բայց ոչ ոք չի փախցնում... Ինչո՞ւ ինձ չեն փախցնում, հը՞, հորաքույր:

ՋԱՐՈՒՀԻ – (Գրկում, համբուրում է նրան): Չաչանակ-կաչադակ, ինչ լավ ես արել, որ եկել ես: Թող նայեմ քեզ... հա, իհարկե, փախցնելու ժամանակը մոտենում է:

ՀԱՅԱՐՓԻ – Ախ, ուր էր, ուր էր:

ՋԱՐՈՒՀԻ – Մենա՞կ ես եկել, Հայարփի...

ՀԱՅԱՐՓԻ – Չէ, մերոնք գալիս են ծանր ու մեծ... Ահա և նրանք՝ նորին պայծառափայլություն մաղամ Մարին և մսյո Ժակը:

(ներս են մանում Մարին ու Ժակը):

ՄԱՐԻ – Բարև, Ջարուհի, սիրելիս, ինչպե՞ս ես... Ժենեվա, անտանելի աղջիկ ես դարձել, ի՞նչ ես վազում փողոցով... Քեզ սագո՞ւմ է: Ինձ նայիր, երբ քեզ հետ եմ խոսում...

ԺԱԿ – Բարև, քույրիկ, թույլ տուր համբուրեմ քեզ... (համբուրում է):

ՋԱՐՈՒՀԻ – Բարև, Հովսեփ: Նստեք, պատմեք, ինչ կա, ինչ չկա...

ԺԱԿ – Այս ի՞նչ սեղան ես պատրաստում, քույրիկ... Հյուրերի՞ս ես սպասում:

ՋԱՐՈՒՀԻ – Այո, Գևորգը մեր տուն է հրավիրել... Մի աղջկա:

ՄԱՐԻ – Օհո՛, ուրեմն մարյաժ է սպասվում... Ո՞վ է, ո՞ւմ աղջիկն է: Ժենեվկա, հանգիստ նստիր, մազերս մի խառնիր...

ԺԱԿ – Ո՞ւմ աղջիկն է, քույրիկս...

ԶԱՐՈՒՀԻ – Ուսանողուհի է, այս տարի ավարտում է ինստիտուտը: Առայժմ այդքանը գիտեմ:

ՄԱՐԻ – Զանմ, հիմիկվա աղջիկներից ավելին չես իմանա... Ժենեվկա, միթե՞ չես կարող տեղումդ մի բռնեմ հանգիստ մնալ, գնա մի բան նվագիր, մեզ հանգիստ թող:

ՀԱՅԱՐՓԻ – Ինչքան ասես ժենեվկա, հանգիստ չեմ մնա:

ՄԱՐԻ – *(Սպառնալի)* Ժենեվկա...

ՀԱՅԱՐՓԻ – Ես ժենեվկա չեմ, ես Հայարփի եմ:

ՄԱՐԻ – Ժակ, չե՞ս նկատում, որ աղջիկդ չափն անցնում է... Հիմար աղջիկ, Փարիզում քեզ ինչպե՞ս պետք է ասեն Հայարփի...

ՀԱՅԱՐՓԻ – Ինչպես ուզում են թող ասեն... Ես Փարիզ գնացողը չեմ: *(Մեղմ)*: Չե՞, հայրիկ:

ԺԱԿ – Աղջիկս, որտեղ ես՝ այնտեղ էլ դու:

ՄԱՐԻ – Լսո՞ւմ ես, Զարուհի... Ուրիշները խենթանում են Փարիզի համար, իսկ մեր աղջիկը...

ՀԱՅԱՐՓԻ – Ես էլ եմ խենթանում, բայց հեռվից... Փարիզի համար էլ եմ խենթանում... Լոնդոնի համար էլ եմ խենթանում... Բեռլինի համար էլ եմ խենթանում, իսկ Նյու-Յորքի համար ուղղակի գժվում եմ, բայց հեռվից...

ԺԱԿ – Հիմար, հիմար աղջիկ, փոքր ես, խելքդ չի հասնում... Հորաքրոջդ հարցրու, նա Ֆրանսիայում է ծնվել, նա քեզ կասի, թե ինչ է Փարիզը...

ՀԱՅԱՐՓԻ – Գիտեմ, Հեմինգուեյ՝ «Տոն, որ միշտ քեզ հետ է»:

ՄԱՐԻ – Փարիզ, Վերսալ, Բուլոնյան անտառ, Նոտր Դամ, Լուվր, Նացիոնալ պլաս... Մոնպարնաս... Կնստես այնտեղ մի փոքրիկ կաֆեում, որտեղ սովորաբար նկարիչներն են հավաքվում, մի գավաթ սուրճ կվերցնես ու կերագես...

ՀԱՅԱՐՓԻ – Երևանը, Կոնդը, Սարի թաղը, Նորքը, Աբովյան փողոցը, «Անահիտ» սրճարանը...

ԶԱՐՈՒՀԻ – *(Շիծաղում է)* Կեցցես, Հայարփի...

ՀԱՅԱՐՓԻ – *(Չարությամբ)* Դու էլ կեցցես, հորաքույր, որ թողնում ես տանեն ինձ:

ԺԱԿ – Ժենեվկա...

ՄԱՐԻ – Այս աղջիկն իսկապես խենթացել է:

(Հայարփին միացնում է, մագնիտոֆոնը):

ԶԱՐՈՒՀԻ – (Ասես ուշքի գալով) Կներեք... Ես գնամ սեղանը պատրաստելու:

ՄԱՐԻ – Օգնելու բան կա՞, քույրիկ:

ԶԱՐՈՒՀԻ – Չէ, Մարի, գիտես, որ սիրում եմ ամեն ինչ միայնակ անել:

ԺԱԿ – (Կրկնում է) Միայնակ, միայնակ... Եվ ինձ ոչինչ չե՞ս ուզում հարցնել, Զարուհի:

ԶԱՐՈՒՀԻ – Ինչի՞ մասին:

ԺԱԿ – (Նյարդայնացած) Ինչի՞ մասին: Արտասահման գնալու: Եղբայրդ եմ, օտար չեմ, կյանքի, ապագայի հարց է... Չլսեցի՞ր, որ ուզում ենք Փարիզ գնալ:

ԶԱՐՈՒՀԻ – Բայց հո առաջին անգամ չե՞մ լսում այդ մասին: Արդեն մի տարի է ինչ գնում եք:

ԺԱԿ – Մի տարի չէ, քսան տարի է, ամբողջ կյանքում քուն չեմ ունեցել, հանգստություն չեմ ունեցել...

ՄԱՐԻ – Ախ, շարման, մի ասա, մի ասա: Երագումս եմ տեսնում, գիտե՞ս, Զարուհի, ամեն օր, ամեն գիշեր նույն երազն եմ տեսնում...

ՀԱՅԱՐՓԻ – (Հեռվից) Բա ասում ես գիշերները քունս չի տանո՞ւմ...

ՄԱՐԻ – Ձայնդ, Ժենեվկա: Դա ի՞նչ սովորություն է՝ մեծերի խոսակցությանը խառնվելը... Ամեն գիշեր տեսնում եմ Փարիզը, գիշերային փողոցները և... եղնիկներ եմ տեսնում Բուլոնյան անտառում... Մի ասա, մի ասա, շարման, մենք ամբողջ կյանքում Ֆրանսիա գնալու մասին ենք մտածել...

ԶԱՐՈՒՀԻ – Մի՞թե ամբողջ կյանքում... Հովսեփն, օրինակ, երբ Երևանում տասնամյակն էր ավարտում, բոլորովին չէր մտածում արտասահման վերադառնալու մասին:

ԺԱԿ – Երեխա էի:

ԶԱՐՈՒՀԻ – Երբ նրա հայրենադարձ լինելը հաշվի առնելով, ընդունեցին բժշկական ինստիտուտ, նա բոլորովին չէր մտածում արտասահման վերադառնալու մասին:

ԺԱԿ – Երեխա էի, Զարուհի:

ԶԱՐՈՒՀԻ – Երբ ինստիտուտն ավարտելուց հետո նրան շրջան էին ուղարկում աշխատանքի, նա չասաց, թե արտասահման է ուզում վերադառնալ, այլ խնդրեց, աղաչեց, միջնորդների դիմեց, որպեսզի Երևանում մնա: Եվ ընդառաջեցին նրան, հաշվի առան...

Նույնիսկ հուզվել էին, չէ՞ որ Հովսեփը դիմումի մեջ գրել էր. «Օտար ավերին իմ լուսաշող քաղաքամայր Երևանն եմ երազել, ինձ մի հեռացրեք իմ կարոտ Երևանից...»:

ՀԱՅԱՐՓԻ – Երեխա՛ էի, Ջարուհի...

ՄԱՐԻ – Դու պե՞տք է լռես, թե ոչ:

ԺԱԿ – Դու ինձ համբերությունից մի հանիր, Ժենեվա:

ԶԱՐՈՒՀԻ – Այո, դու վերադառնալու մասին չէիր մտածում բոլորովին, երբ քեզ կենտրոնական հիվանդանոցում աշխատանք տվեցին... Եվ չէիր մտածում նաև հետո: Բայց երբ քո անփութության հետևանքով հիվանդներից մեկը քիչ մնաց գրկվեր կյանքից... և քեզ իբր թե որպես պատիժ պոլիկլինիկա տեղափոխեցին...

ՄԱՐԻ – Քույրիկ Ջարուհի, սակայն...

ԺԱԿ – Դու լռիր, մա շեր, ինքս կպատասխանեմ: Եթե հարցն այդտեղ է հասել, կասեմ: Այո, հենց դրա համար չեմ ուզում մնալ: Հենց դրա համար եմ գնալու:

ՄԱՐԻ – Այո, հենց դրա համար ենք գնալու:

ԶԱՐՈՒՀԻ – Այսի՞նքն:

ԺԱԿ – Ճիշտ է, ես սխալ էի թույլ տվել, բայց հո միտումնավոր չէի արել:

ԶԱՐՈՒՀԻ – Իսկ դա հիվանդի համար որևէ նշանակություն ունե՞ր:

ԺԱԿ – Է՛, չեղավ, չէ՞, չեղավ, չէ՞... Անսխալական մարդ չկա: Բայց չէ՞ որ ես տասն օր ու գիշեր անքուն մնացի հիվանդի մոտ, մինչև որ փրկեցի կյանքը... Եվ այդ էր իմ վարձը...

ԶԱՐՈՒՀԻ – Լսիր, Հովսեփ, մարդ խիղճ պետք է ունենա: Իսկ այնտեղ, քո Փարիզում ի՞նչ կանեին այդպիսի սխալի համար... Հը՞:

ՀԱՅԱՐՓԻ – Պատվո լեգեոնի շքանշան կտային...

ԺԱԿ – Լսիր, դու...

ԶԱՐՈՒՀԻ – Հայարփի, ավելի լավ է բարձրանաս քեռի Բյուզանդի արվեստանոցը: Ասում էր քո դիմանկարի համար ինչ-որ բան է պակասում:

ՀԱՅԱՐՓԻ – Կգնամ մեծագույն հաճույքով:

ԺԱԿ – Հա, կասես նաև, որ հայրիկը քեզ հետ գործ ունի, ես քիչ հետո կգամ...

(Հայարփին դուրս է գնում: Երաժշտություն):

ՊԱՏԿԵՐ

(Զարուհու տան շքամուտքը: Մոտենում է մի «ժիգուլի» ավտոմեքենա):

ԳԵՎՈՐԳ – Դե արի, Սոնա...

ՍՈՆԱ – Սպասիր, Գևորգ, սպասիր շունչ քաշեմ:

ԳԵՎՈՐԳ – Չէ, չէ, էլի կփոխես մտադրությունդ:

ՍՈՆԱ – *(Ծիծաղելով)* Դե, չէ, ուղղակի...

ԳԵՎՈՐԳ – Ի՞նչ, ի՞նչ...

ՍՈՆԱ – Դողում են ոտքերս...

ԳԵՎՈՐԳ – Այ քեզ գիժ...

ՍՈՆԱ – Ասես քննության եմ գնում և ոչինչ չգիտեմ:

ԳԵՎՈՐԳ – Ավելի լավ: Մայրիկը հենց դրա համար քեզ «հինգ» կնշանակի:

ՍՈՆԱ – Իսկ եթե վաղը գամ, հը՞, վաղը...

ԳԵՎՈՐԳ – Ի՞նչ տարբերություն՝ վաղը թե այսօր:

ՍՈՆԱ – Վախենում եմ:

ԳԵՎՈՐԳ – Ումի՞ց: Մայրիկի՞ց: Դմբո, մայրիկը միակ մարդն է աշխարհում, որից չպետք է վախենալ:

ՍՈՆԱ – Վախենում եմ չկարողանամ խոսել:

ԳԵՎՈՐԳ – Իսկ ես հակառակից եմ վախենում: Մայրիկիս տեսնես թե չէ՝ ակամա կսկսես պատմել բոլոր մեղքերդ: Այնպես որ եթե որևէ մեղք ունես, խորը թաքցրու...

ՍՈՆԱ – *(Ծիծաղելով, դերասանորեն)* Իմ մեղքը իմ սերն է...

ԳԵՎՈՐԳ – Ուրեմն վիճակդ այնքան էլ ծանր չէ, եթե հումորդ չես կորցրել: Գնացի՞նք:

ՍՈՆԱ – Մի բռպե, մի բռպե... նստենք ու... նոր գնանք: Իսկ եթե հանկարծ սառն ընդունի՞ ...

ԳԵՎՈՐԳ – Մայրիկը՞: Նա քեզ արդեն սիրում է:

ՍՈՆԱ – Նա ինձ որտեղի՞ց գիտի...

ԳԵՎՈՐԳ – Նա գիտի, որ ինստիտուտն ավարտելուց հետո մանկապարտեզում ես աշխատելու, երեխաների հետ, իսկ դա արդեն նրա համար ամեն ինչ է: Դու արդեն նրա համար հոգեդուստր ես, գործընկեր, համախոհ, սրբերի դասի թեկնածու և աստվածության ասպիրանտ: Նա իմ հոգին հանել է իր Արտակներով, Հասմիկներով ու Աշոտներով: Նրա համար աշխարհում միայն աշակերտներ գոյություն ունեն, որոնց հարկավոր է սովորեցնել, դաստիարակել ու պահպանել, ըստ որում դաստիարակելուց հետո էլ նրանք իմ մայրիկի համար երեխաներ են մնում: Անցյալ օրը զանգ տվեց մի մինիստրի ու ասում է. «Աշոտիկ, մեր դպրոցի շրջանավարտների ավանդական հավաքն է, անպայման կգաս և աշխատիր չուշանալ, ինչպես դասերից էիր ուշանում»:

ՍՈՆԱ – Հրաշալի է:

ԳԵՎՈՐԳ – Գիշեր–ցերեկ, անընդհատ իր աշակերտների հետ է՝ նրանց հետ հիվանդանում է, նրանց հետ առողջանում: Նրանց հետ «երկուս»–ներ է ստանում և ուղղում այդ «երկուս»–ները: Երբեմն մտածում եմ՝ որտեղի՞ց նրան այդքան սեր, որ նա այդպես շոյալորեն բաժանում է բոլորին,

ՍՈՆԱ – Լավ մայրիկ ունես, Գևորգ:

ԳԵՎՈՐԳ – Երբեմն ինձ թվում է, թե նա ինձ սիրում է, որովհետև բոլորին է սիրում:

ՍՈՆԱ – Իսկ գուցե հակառակն է:

(Մոտենում է Ստեփանը):

ՍՏԵՓԱՆ – Ո՛վ է հակառակ, բարև ձեզ: Արդեն երեք տարի է, ինչ ես տանել չեմ կարողանում այդ բառը և նրա բոլոր ածանցումները միաժամանակ. ընդհակառակը, հակառակություն, հակառակորդ...

ՍՈՆԱ – Ընդհակառակը, մենք բոլորովին ուրիշ բանի մասին էինք խոսում, Ստեփան:

ՍՏԵՓԱՆ – Նորի՞ց հակառակ... *(Մոնային):* Եվ դո՞ւ, Բրուտոս...

(Ծիծաղում են):

ԳԵՎՈՐԳ – Դե, գնացինք...

ՍՏԵՓԱՆ – Բա ինչո՞ւ եք դռանը կանգնել՝ համեցեք: Սա այն հազվագյուտ տներից է, որտեղ ես առայժմ հարգանք ունեմ:

ՍՈՆԱ – Ս...սպասիր, Ստեփան, ախր ես ուզում եմ շնորհավորել ձեր հաղթանակը:

ՍՏԵՓԱՆ – *(Իբր չհասկանալով)* Հաղթանա՞կ, ինչո՞ւ, «Արարատը» խաղացե՞լ է, որ...

ՍՈՆԱ – Էհ...

ԳԵՎՈՐԳ – Այլևս ոչ մի խոսք... Մայրիկն սպասում է...

ՍՈՆԱ – Սպասիր, Գևորգ, ուրեմն...

ԳԵՎՈՐԳ – Այլևս ոչ մի ուրեմն... Բռնիր, Ստեփան, բացառության կարգով ես քեզ թույլ եմ տալիս... Գնացի՞նք...

(Նրանք թանցուկ են անում Սոնային ու մտնում շենքի մուտքը):

(Երաժշտություն):

ՊԱՏԿԵՐ

(Զարուհու սենյակը: Զարուհին և Մարին):

ԶԱՐՈՒՀԻ – Չեմ կարողանում հասկանալ, թե ինչ գործ պետք է ունենա Հովսեփը նկարիչ Բյուզանդի հետ: Երբեք չեմ նկատել, որ նա նկարչությամբ հետաքրքրվի:

ՄԱՐԻ – Ջանմ, Ժակն ուզում է մի քանի նկար գնել՝ հետը Փարիզ տանելու համար:

ԶԱՐՈՒՀԻ – Հայաստանից կարոտն առնելո՞ւ համար:

ՄԱՐԻ – Է՛հ, քույրիկ Զարուհի, ի՞նչ կարոտ: Փոքրիկ բիզնես: Լսել է, որ հայկական պեյզաժները լավ գին ունեն ֆրանսահայերի մոտ: Տանում է, որ դրամ վաստակի:

ԶԱՐՈՒՀԻ – Եվ այդ դրամով Փարիզում սեփական հիվանդանո՞ց բացի:

ՄԱՐԻ – Ինչո՞ւ դրանով, Խոսրովը խոստացել է... ա՛խ...

ԶԱՐՈՒՀԻ – Ի՞նչ Խոսրով: Խոսրովը... Ինչ գործ ունի նա այդ մարդու հետ:

ՄԱՐԻ – Օ՛հ, մի՞թե Ժակը քեզ չի ասել... Հիմա նա ինձ կսպանի... Ես ի՞նչ անեմ, հարյուր անգամ ասել եմ, որ ինձ գաղտնիք չվստահի: Ախր այդ ինչի՞ց է, որ ես միշտ ասում եմ այն, ինչ չափտի ասեմ, հը՞, Զարուհի քույրիկ...

ԶԱՐՈՒՀԻ – Ինչպիսի՜ ստորություն: Ուրեմն Հովսեփն այն աստիճանի է հասել, որ դրամ է մուրում... Եվ այն էլ ումի՞ց՝ Խոսրովի՞ց, իմ նախկին ամուսնո՞ւց, ի՛նչ անամոթություն: Եղբայրս բոլորովին ինքնասիրություն չունի՞, ինչ է: Արդեն մոռացել է, որ նույն այդ Խոսրովը շան լակոտի նման փողոց շարտեց իրեն, երբ վաճառողի աշակերտ էր աշխատում նրա խանութներից մեկում և համարձակվել էր թաքուն մի տուփ կոնֆետ

նվիրել անտուն մի ծերունու: Փողոց շարտեց, նույնիսկ հաշվի չառնելով, որ Հովսեփն իմ եղբայրն է, որ ես իր կինն եմ: «Առնտրի մեջ քույր-եղբայր չկա, – ասաց նա, – վաղն էլ խանութս կծախի»: Հիմա ի՞նչ է պատահել, որ պատրաստ է հիվանդանոց նվիրելու: Այդ ի՞նչ հանկարծահաս սրտառուչ կապ է հայտնվել Հովսեփի ու նրա միջև:

ՄԱՐԻ – Բոլորովին էլ հանկարծահաս չէ, Ջարուհի քույրիկ: Նրանք շատ վաղուց են գրում իրար: Ամեն նոր տարուն Խոսրովն այնպիսի շնորհավորական բացիկներ է ուղարկում, որ մեղվե՛յ, հրաշք: Իսկ հիվանդանոցը չի նվիրում, Ժակը պետք է աշխատի և չնչին տոկոսով մաս–մաս վճարի պարտքը: Բարի գործ է արածը, ուրիշ ոչինչ...

ԶԱՐՈՒՀԻ – *(Օրորում է գլուխը)* նա և բարեգործություն՝: Նա, որի համար բառարանային ծիծաղելի բառեր են ազնվությունը, խիղճը, պատիվը և հանկարծ... բարեգործություն: Նա, որ քսան տարվա ընթացքում մի անգամ գոնե չհետաքրքրվեց, թե ինչ եղավ իր որդին...

ՄԱՐԻ – *(Ուրախացած)*: Այ, տեսնում ես, որ անիրավացի ես: Նա միշտ էլ հետաքրքրվել է, Ժակը միշտ էլ գրել է ձեր մասին: Այո, այո, քույրիկ Ջարուհի, նա ամեն ինչ գիտի: Գիտի, որ դու վաստակավոր ուսուցչուհի ես, որ Գևորգը գիտությունների թեկնածու է դարձել:

ԶԱՐՈՒՀԻ – Իսկ ինքը, ի՞նքը ինչ է դարձել... Այդ մասին ձեզ չի՞ գրում:

ՄԱՐԻ – Այո: Ինչպե՞ս: Ը–ը, չգիտեմ... Այդ մասին չի գրում: Բայց ինչե՛ր է գրում Ֆրանսիայի մասին... հեքիաթ է...

(Ներս է ընկնում Հայարփին):

ՀԱՅԱՐՓԻ – Հայրիկը քեռի Բյուզանդի սենյակից էլ ինձ «դուրս խնդրեց»: Դո՛ւք ուր կհրամայեիք կորչել:

ԶԱՐՈՒՀԻ – Նստիր, նստիր, Հայարփի...

(Դռան զանգ)

ՀԱՅԱՐՓԻ – Ես կբացեմ:

(Ներս է մտնում Ստեփանը, հետո հայտնվում են Սոնան ու Գևորգը):

ՍՏԵՓԱՆ – Ահա և մենք: Բարև ձեզ, տիկին Ջարուհի: Օ՛, տիկին Մարի, թույլ տվեք համբուրել ձեր ձեռքը: Բարև, օրիորդ Հայարփի:

ՄԱՐԻ – Բարև ձեզ, ընկեր Ստեփան:

ԳԵՎՈՐԳ – Մայրիկ... Ահա և Սոնան:

ԶԱՐՈՒՀԻ – Եկ, եկ, աղջիկս, եկ գրկեմ քեզ:

ՍՏԵՓԱՆ – Ուռա՛... առանց քննության անցավ միաձայն, անձայն: Այժմ թույլ տվեք ձեզ հրավիրել այս պատվական սեղանի մոտ...

ԳԵՎՈՐԳ – Ծանոթացիր, Սոնա, իմ քեռեկինն է՝ տիկին Մարին, իմ քույրիկը՝ Հայարփին և...

ԶԱՐՈՒՀԻ – Դե, նստեք, տեղավորվեք: Դու, Սոնա, այստեղ, ինձ մոտ նստիր:

ԳԵՎՈՐԳ – Իսկ ո՞ւր է քեռին:

ՄԱՐԻ – Ժակը մի քանի բուպեով Բյուզանդի արվեստանոցը բարձրացավ...

ԳԵՎՈՐԳ – Ժակը Բյուզանդի մո՞տ... (Զարմանալով):

(Երաժշտություն)

ՊԱՏԿԵՐ

(Նկարիչ Բյուզանդի արվեստանոցը):

ԺԱԿ – *(Տարակուսած)* Ձեր նկարում աղջիկս շատ մեծ չէ՞: Կներեք, իհարկե, ընկեր Բյուզանդ, ես նկարչությունից բավական հեռու մարդ եմ, բայց կարծես թե Ժենեվային այնքան էլ նման չէ:

ԲՅՈՒԶԱՆԴ – Նստիր, Հովսեփ, նստիր:

ԺԱԿ – Շնորհակալություն: Մի տեսակ խեղճ լինի ասես, և աչքերն էլ տխուր են: Դուք այդ անպիտանին երբևէ տխուր տեսած կա՞ք:

ԲՅՈՒԶԱՆԴ – Ես նրան ուրախ քիչ եմ տեսել:

ԺԱԿ – Տարօրինակ է: Կրակի կտոր է այդ աղջիկը, քայլող ծիծաղ, կամ քրքջում է, կամ պոռթկում զայրացած: Շատ դյուրագրգիռ է... Ասենք հիմա բոլորն էլ ջղային են... Դարն է այդպիսին, այդպես չէ՞...

ԲՅՈՒԶԱՆԴ – Լսում եմ, Հովսեփ:

ԺԱԿ – Հա, ընկեր Բյուզանդ, ինձ մի քանի կտավ է հարկավոր, բնանկարներ, հատկապես Արարատ սարը և Սևանա լիճը: Դուք կարծեմ այդպիսի պեյզաժներ ունե՞ք, տեսել եմ թերթերում: Ես ուզում եմ գնել դրանք, եթե իհարկե շատ թանկ չեն:

ԲՅՈՒԶԱՆԴ – Շատ թանկ են:

ԺԱԿ – Այսինքն, որքա՞ն արժեն:

ԲՅՈՒԶԱՆԴ – Նայած ում համար, Հովսեփ: Ինձ համար չափազանց թանկ արժեն, գրեթե զին չունեն:

ԺԱԿ – Բայց այնուամենայնիվ չե՞ որ դուք վաճառում եք դրանք: Ի՞նչ գնով եք վաճառում:

ԲՅՈՒԶԱՆԴ – Ես հաշվի եմ առնում կտավը գնողի կարծիքը:

ԺԱԿ – *(Օրծաղում է):* Սրամիտ է... Բայց վախենում եմ, որ ձեզ շատ խաբեն:

ԲՅՈՒԶԱՆԴ – Չէ, գնորդների մեծ մասն ուզում է ցույց տալ, թե ինքը արվեստը հասկանում է և գնահատվում է իսկական գործը:

ԺԱԿ – Դե, ուրեմն, ես ազնիվ եմ: Ես անկեղծորեն խոստովանում եմ, որ գրեթե ոչինչ չեմ հասկանում արվեստից, բայց ինձ մի քանի կտավ է պետք:

ԲՅՈՒԶԱՆԴ – Ինչի՞ համար, Հովսեփ:

ԺԱԿ – Ճիշտն ասած, ընկեր Բյուզանդ, ուզում եմ Ֆրանսիա տանել ինձ հետ:

ԲՅՈՒԶԱՆԴ – Ա՛հ, չէ, Հովսեփ, ես սկզբունքով դեմ եմ, որ իմ նկարները արտասահման գնան:

ԺԱԿ – Ինչո՞ւ:

ԲՅՈՒԶԱՆԴ – Անձնական ցուցահանդես կազմակերպելու ժամանակ այդ կտավները պետք են գալիս և ես անմիջապես հավաքում եմ մասնավոր հավաքածուներից: Արտասահմանից ինչպե՞ս ետ բերեմ:

ԺԱԿ – Գոնե մե՞կն էլ չեք վաճառի:

ԲՅՈՒԶԱՆԴ – Չեմ վաճառի, Հովսեփ:

ԺԱԿ – Իսկ աղջկաս նկարը՞:

ԲՅՈՒԶԱՆԴ – Այդ դիմանկարը ինձ Զարուհին է պատվիրել, դա նրա սեփականությունն է:

ԺԱԿ – Ահա՛ թե ինչ, կներեք, իհարկե, ընկեր Բյուզանդ, բայց ես անկեղծ մարդ եմ և ամեն ինչում անկեղծություն եմ սիրում: Ինձ թվում է, թե դուք ինձ մերժում եք միայն այն պատճառով, որ ես գնում եմ Հայաստանից:

ԲՅՈՒԶԱՆԴ – Չես սխալվում...

ԺԱԿ – Հավանաբար դուք էլ ինձ դավաճանի նման մի բան եք համարում:

ԲՅՈՒԶԱՆԴ – Գիտես ինչ, Հովսեփ, իմ խորին համոզմամբ աշխարհում ամեն մարդ ինքը պետք է որոշի իր ապրելու տեղը: Եվ դրանում դավաճանություն տեսնելն առնվազն միամտություն է: Կարելի է ապրել Հայրենիքում և դավաճանել Հայրենիքին, կարելի է ապրել շատ ու շատ հեռու, բայց լինել հայրենասեր:

ԺԱԿ – Ահա, ահա, նույնն էլ ես եմ ասում:

ԲՅՈՒԶԱՆԴ – Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Սովետական Միությունն ու այդ թվում Հայաստանը, վտանգի մեջ էին, արաբական աշխարհում ապրող հայերը իրենց հանգանակությամբ մի ամբողջ տանկային շարասյուն գնեցին և «Մասունցի Դավիթ» անունով ուղարկեցին հայրենիք՝ ֆաշիզմի դեմ կռվելու: Նրանք հայրենասերնե՞ր էին:

ԺԱԿ – Իհարկե:

ԲՅՈՒԶԱՆԴ – Երբ նույն այդ պատերազմի ժամանակ օկուպացիայի ենթարկված Ֆրանսիայում Միսաք Մանուշյանն ու նրա հայ ընկերները, հենց մեր Զարուհին, դիմադրության շարքերում կռվում էին ֆաշիստների դեմ, նրանք հայրենասերնե՞ր էին...

ԺԱԿ – Այո, բայց հիմա հո հայրենիքը վտանգի մեջ չէ՞:

ԲՅՈՒԶԱՆԴ – Եթե Հայրենիք ասելով դու էլ ես Սովետական Հայաստանը հասկանում, ապա, փառք ասածո, իհարկե Հայրենիքը վտանգի մեջ չէ, իսկ եթե կա մեկը, որն իրոք վտանգի մեջ է, դա արտասահմանում ապրող հայն է:

ԺԱԿ – Էհե՛... ուժացման վտա՞նգը:

ԲՅՈՒԶԱՆԴ – Դա արդեն վտանգ չէ: Դա ուժացում է: Դու հո գիտես: Ես շրջել եմ գրեթե ողջ աշխարհը: Շատ երկրներում հիմա չկա այլև ոչ մի հայ երեխա, որ իմանա հայերեն: Որ երկրներում էլ որ կան, մի սերունդ հետո չեն լինի: Նրանց զավակները չեն էլ հիշելու, որ հայ են: Նրանց Հայրենիք է պետք, հասկանո՞ւմ ես: Արտասահմանում հայ մնալը դառնում է պատրանք, միֆ, ֆիկցիա... առանց հայրենիքի հայ չկա... առանց հայրենիքի մարդ չկա:

ԺԱԿ – Իսկ եթե ես ուզում եմ, ասենք, Ֆրանսիայում ապրել, աշխարհին ի՞նչ:

ԲՅՈՒԶԱՆԴ – Դե, ուրեմն գնա: Ձեզ որևէ մեկը պահո՞ւմ է: Ձեզ թույլ չե՞ն տվել... Տվել են, չե՞...

ԺԱԿ – Տվել են: Բայց ինչո՞ւ են ամեն տեղ խեթ–խեթ նայում ինձ: Ես այդ զգում եմ: Իմ հարևանները, ընկերները, հենց իմանում են, որ ես որոշել եմ գնալ, ծաղրում, արհամարհում, ատում են ինձ, ինչո՞ւ...

ԲՅՈՒԶԱՆԴ – Իսկ դու տեսե՞լ ես մի մոր, որ համբուրի որդու ճակատը, որին մեծացրել, կրթել է տառապանքով, քայց որը լքում է նրան: Ես... զգում եմ... Դա էլ մեծ բան է, որ դու զգում ես... Իսկ մի թե դու որևէ պարտավորություն չունես մայր հայրենիքիդ նկատմամբ, որը պահել, մեծացրել, բժիշկ է դարձրել քեզ: Մի թե դու որևէ պարտավորություն չունես քո ընկերների, բարեկամների, հարևանների նկատմամբ, որոնց հետ ապրել ես երեսուն տարի... Մի թե դու որևէ պարտավորություն չունես քո աղջկա նկատմամբ, որն անիծելու է քեզ և որն, այո, այո, քո շնորհիվ շատ տխուր աղջիկ է... Մարդ նոր տուն է ստանում, չի կարողանում պոկվել հին տնից, դուք ինչպե՞ս եք պոկվում ձեր հայրենիքից: Հը ...

ԺԱԿ – Օ՛ լա, լա, ընկեր Բյուզանդ, մտքովս չէր անցնի, թե դուք այդքան հմուտ ազիտատոր եք: Անկեղծորեն...

ԲՅՈՒԶԱՆԴ – Անկեղծորեն... անկեղծորեն, Ժակ–Հովսեփ, դու ինձանից լավ ազիտատոր կլինես արտասահմանում:

ԺԱԿ – Ե՛ս, ինչո՞ւ...

ԲՅՈՒԶԱՆԴ – Որովհետև արտասահմանում ապրող մեր հայրենակիցները երբ ճանաչեն քեզ ու տեսնեն, թե այդ ովքեր են, որ տեղ չեն գտնում հայրենիքում, կշտապեն Հայաստան:

ԺԱԿ – Սպասեք, սպասեք, ընկեր Բյուզանդ: Բայց չե՞ որ քիչ առաջ ինքներդ ասացիք, թե մարդ ինքն է ընտրում իր ապրելու տեղը:

ԲՅՈՒԶԱՆԴ – Բայց մարդը նա է, ով ճիշտ է ընտրում իր ապրելու տեղը և միայն իր համար չի ապրում: Ես տեսել եմ կամա թե ակամա սխալված մարդկանց: Դրանք դատապարտված, կորած մարդիկ են, անհող, անհայրենիք, օտար մարդիկ են: Ես Ամերիկայում մի հայ միլիոնատիրոջ տեսա, որը երկու բաժակ խմելուց հետո, փորձեց «Հայաստան, երկիր դրախտավայր» երգել և լաց եղավ երեխայի պես: Ես Լոնդոնում մի ռուս վտարանդի տեսա, որ սովերի նման հետևում էր մեր խմբի ռուս տղաներին ու նրանց աղաչում էր ռուսերեն խոսել իր հետ, գոնե հայիոյել, որովհետև ինքը մեռնում է հայրենիքի կարոտից:

Ես Հունաստանի մեջ մի հայ ուսուցիչ տեսա, որն ասում էր, թե ինքն ի՞նչ ուսուցիչ է, երբ աշակերտ չունի և խնդրում էր հայրենիք տանել, փրկել հայ երեխաներին: «Բռնի տարեք,– աղերսում էր նա,– մի թողեք որ կորչեն»: Ես երեխաներ տեսա Բեյրութի մեջ, որ փոքրիկ ձեռքերը վեր պարզած խնդրում, աղաչում, լալիս էին:

– Մենք ալ հայրենիք կուզենք:

Դու, մարդ, գիտե՞ս թե ինչ բան է կարոտը:

ԺԱԿ – Դե ինչ, ընկեր Բյուզանդ, մենք էլ կգնանք կարոտելու:

ԲՅՈՒԶԱՆԴ – *(Արդեն հանգստացած)* Գնա, բայց եթե երբևէ ետ դառնաս, չերևաս աչքիս:

(Հայտնվում է Հայարփին)

ՀԱՅԱՐՓԻ – Հայրիկ, քեռի Բյուզանդ, հորաքույրը խնդրում է ներքև իջնել:

ԺԱԿ – Գնանք, գնանք, աղջիկս:

ԲՅՈՒԶԱՆԴ – Հայարփի, իմ կողմից ներողություն խնդրիր տիկին Զարուհուց: Ես շատ...
զբաղված եմ...

ՀԱՅԱՐՓԻ – Չի լինի, քեռի Բյուզանդ, հորաքույրը հատուկ խնդրեց: Գևորգի հարսնացուն է եկել: Որ տեսնեք, որ տեսնեք, ինչքան սիրուն աղջիկ է: Որ տեսնեք, որ տեսնեք ինչ սիրուն աչքեր ունի... Իսկույն կնկարեք, Բյուզանդ քեռի:

ԲՅՈՒԶԱՆԴ – Հա ... ուրեմն չգալ չեմ կարող:

(Երաժշտություն)

ՊԱՏԿԵՐ

ՍՏԵՓԱՆ – Բռավո, բռավո, տիկին Մարի:

ՀԱՅԱՐՓԻ – Կեցցեք:

ՍՈՆԱ – Ինձ թվում է, թե այս երգը ես առաջին անգամ հասկացա:

ՄԱՐԻ – Իմիջիպյոց, մեր սալոնում երկու վարսավիր կան և երկուսի անունն էլ Նազելի է:
Ծիծաղելի է, չէ՞... Կուղիոզ..

ԺԱԿ – Աշխատիր, որ ինքդ ավելի ծիծաղելի չերևաս...

ՄԱՐԻ – Ինչո՞ւ, մոն ամի: Շնորհակալություն, շնորհակալություն, բարեկամներ, բավական է,
թե չե՞ս կմտածեմ, որ ինձ ծաղրում եք:

ԶԱՐՈՒՀԻ – Իսկ հիմա ես ուզում եմ, որ իմ Հայարփին արտասանի:

ՄԱՐԻ – Ժենեվկա, «Մոն բլու ամուլը», սքանչելի ոտանավոր է, «Իմ կապույտ սեր»:

ՍՏԵՓԱՆ – Իսկ ինչո՞ւ կապույտ, ես անարատ սեր կուզեի:

ՀԱՅԱՐՓԻ – Ես արտասանել չեմ ուզում:

ԺԱԿ – Ժենեվա...

ԶԱՐՈՒՀԻ – Չեղավ, ստիպել չի կարելի, նա կարտասանի միայն այն ժամանակ, երբ ինքը ուզենա: Բռնի ծնված երգը երգ չէ...

ՀԱՅԱՐՓԻ – Շնորհակալություն, հորաքույր, որ գոնե այս հարցում պաշտպանում ես ինձ:

ՄԱՐԻ – Ժենեվա, հորաքույրն առանց այն էլ շատ է երես տվել քեզ: Լե ինգղաթ...
անշնորհակալ աղջիկ...

ՍՏԵՓԱՆ – Տիկին Մարի, տորթի այս կտորն ուղիղ ձեզ է նայում, վերցրեք, խնդրեմ, մի քաշվեք, ես եմ հյուրասիրում...

ՄԱՐԻ – Ի՛նչ եք ասում, ես մի կտոր արդեն կերել եմ...

ՍՏԵՓԱՆ – Այսինքն երկու կտոր էր, բայց ո՞վ է հաշվում... Մորուքավոր անեկդոտ է, տիկին Մարի:

ՄԱՐԻ – Ընկեր Ստեփան, ձեզ նայողը երբեք չի մտածի, թե դուք գիտնական եք...

ՍՏԵՓԱՆ – Իսկապե՞ս, շնորհակալություն, ուրեմն ամեն ինչ կարգին է: Ախր ես ծպտված գիտնական եմ, գիտության թեկնածու, հետախույզ, բում-բում, հասկանո՞ւմ եք: Ես միշտ այսպես չեմ եղել, ինձ փոխել են, իմ տեղն ուրիշ երեխա են դրել...

ՄԱՐԻ – Իսկապե՞ս...

ՍՏԵՓԱՆ – Բայց այդ մասին ոչ մեկին ոչ մի խոսք, խոսում ենք թեթ ը թեթ, պա՞րզ է...

ՄԱՐԻ – Թեթ ը թե՞թ, Օ՛, դուք ֆրանսերեն էլ գիտե՞ք:

ՍՏԵՓԱՆ – Բա առանց ֆրանսերենի ինչպե՞ս կարող եմ հետա... աշխատել...

...

ՍՈՆԱ – Ինչ հետաքրքիր մարդ է Բյուզանդը, մտքովս չէր անցնի, թե մի օր ես նրա հետ մի սեղանի շուրջ կնստեմ:

ԳԵՎՈՐԳ – Արտասովոր մարդ է ու դժբախտ, Սոնա: Պատերազմի օրերին նրա ամբողջ ընտանիքը փլատակների տակ է մնացել ռմբակոծության ժամանակ: Նա աշխարհում ոչ ոք չունի...

ՍՈՆԱ – Ի՛նչ ես ասում, նրա կտավներից բոլորովին այդ չի երևում: Ամեն ինչ լուսավոր է, արևոտ, հեքիաթային...

ԳԵՎՈՐԳ – Նա այդպես է նայում աշխարհին:

ՍՈՆԱ – Հոգու ինչ ուժ պետք է ունենա մարդ, որ այդքանից հետո կարողանա արև նկարել...
Ու երեխաներ: Ինչ հետաքրքիր դեմք ունի:

ԳԵՎՈՐԳ – Դե, դե, ես սկսում եմ խանդել:

ՍՈՆԱ – Գի՛ժ...

(Մարին բարձրաձայն ծիծաղում է):

ՄԱՐԻ – Զարմանալու ի՞նչ կա, մեկն էլ մեր պատին էր գրել՝ «Հայարփի գումարած Աշոտ, հավասար է սեր»: Խուլիզաններ են, ուրիշ ոչինչ:

ԺԱԿ – Լոիր, լոիր, մա շեր: Մտածիր թե որտեղ ինչ կարելի է ասել:

ՄԱՐԻ – Աման, ինձ մի ասա՝ մտածիր: Դու գիտես, որ ես մտածել չեմ սիրում, հենց մտածում եմ, գլուխս ցավում է: Աժոռուան ֆոփ, հավատա խոսքիս: (Հայարփին) Ժենեվկա, սիրելիս, ի՞նչ ես անում, այդքան տորթ չի կարելի ուտել, կգիրանաս, տեսնո՞ւմ ես ես ինչպես եմ զսպում ինձ: Երեք ամիս է սովամահ եմ լինում, բայց զսպում եմ, Ֆրանսիայում գիրությունն ընդունված չէ, մա շեր, *(Սոնային):* Դուք գիտե՞ք, Սոնա, որ երկու-երեք օրից Փարիզ ենք գնալու:

ՍՈՆԱ – Ի՛նչ եք ասում, շնորհավորում եմ, երանի ձեզ, քանի՞ օրով:

ՄԱՐԻ – Ընդամիշտ, ընդամիշտ...

ՍՈՆԱ – Ընդամի՞շտ... Ա-ա...

ՄԱՐԻ – Հիմա Փարիզի ամենալավ ժամանակն է... Ա՛խ, ժամերն եմ հաշվում, Փարիզ, սքանչելի է...

(Հնչում է դռան զանգը: Լռություն է տիրում):

ՀԱՅԱՐՓԻ – Ես կբացեմ դուռը: *(Հայարփին դուրս է գնում և վերադառնում է մի ծրար ձեռքին):*
Գևորգ, նամակ ունես արտասահմանից:

ԳԵՎՈՐԳ – Սա ի՞նչ նամակ է, ֆրանսերեն է գրված:

ԺԱԿ – Ֆրանսերե՞ն: Տուր, տուր տեսնեմ, Գևորգ: *(Կարդում է)* «Փարիզի Մոնմարտր թաղամասի նոտարական գրասենյակը հայտնում է, որ երկու ամիս առաջ մահացել է պարոն Խոսրով Վարդանը...

ԶԱՐՈՒՀԻ – Օ՛հ...

ԳԵՎՈՐԳ – Նա՞...

ԺԱԿ – Եվ իր ողջ շարժական և անշարժ գույքը, ինչպես նաև զանազան բանկերում ունեցած արժեթղթերը, ընդհանուր գումարով երկու միլիոն ֆրանկ, կտակել է իր միակ որդուն՝ Երևանում բնակվող Գևորգ Խոսրովի Վարդանյանին»:

Գևորգ, շնորհավորում եմ, եղբայր, շնորհավորում եմ, հարազատս...

ԳԵՎՈՐԳ – Լռիր, դու, դու հասկանո՞ւմ ես... թե ինչ ես ասում...

ԺԱԿ – Չե՞ս հավատում: Ո՞վ կհավատա: Գրված է, թող Զարուհին կարդա...

ՄԱՐԻ – Օ՛, մոն դիեյ, տեր աստված, ինչ հարստություն... Բա հիմա մենք ի՞նչ պետք է անենք, Ժակ, Ժակ...

ԳԵՎՈՐԳ – Մայրիկ, ո՞վ էր իմ հայրը:

ԶԱՐՈՒՀԻ – Քո հայրը... Բայց ես նրա մասին պատմել եմ քեզ, տղաս...

ԳԵՎՈՐԳ – Այո, մայրիկ, բայց այն ժամանակ ինձ թվացել է, թե դու ուրիշի մասին ես պատմում, ինձ բոլորովին անծանոթ, օտար մի մարդու մասին: Կներես ինձ, մայրիկ, եթե ակամա վիշտ եմ պատճառում քեզ, բայց ես շատ կուզեի իմանալ, թե իրականում ո՞վ է եղել, ի՞նչ մարդ է եղել իմ հայրը:

ԺԱԿ – Հայրդ... հայրդ աղա մարդ էր, աղա...

ԶԱՐՈՒՀԻ – Լավ, եթե այդպես է, կպատմեմ: Մենք ծանոթացանք Մարսելում, պատերազմի օրերին: Ինչպես գիտես, ես մարսելցի եմ, տղաս, Ֆրանսիայում եմ ծնվել: Իսկ ծնողներս Մարսել էին հասել Սասունի կոտորածից հրաշքով փրկվելուց հետո: Պատմում են, թե հայրս, այդ արհավիրքները տեսնելուց հետո, չի կարողացել այլևս հանգիստ ապրել, աշխատել, որովհետև անկարող է եղել մոռանալ, թե ինչպես են իր աչքերի առաջ սպանել իր տասնամյա որդուն:

ՄՏԵՓԱՆ – Մոռանա՞լ...

ԶԱՐՈՒՀԻ – Այո, տղաս, դժբախտաբար ոմանք մոռացել են:

ԳԵՎՈՐԳ – Հետո՞, հետո՞, մամ:

ԶԱՐՈՒՀԻ – Մի տարի շրջում է Մարսելում, իր նման մի քանի սասունցի տղաներ է հավաքում շուրջը, կրկին հայրենիք վերադառնում: Կռվում են որքան կարողանում են: Այնպիսի ահ ու սարսափ են տարածում, որ Սասունի նահանգապետը ստիպված կառավարական զորք է խնդրում այդ մի բուռ նահատակների դեմ: Եվ հենց այնտեղ էլ,

իր հայրենի սարերում, փոխհրաձգության ժամանակ, զոհվում է քո պապը, որ գրեթե քո տարիքին էր, որդիս: Պատմում են, որ երբ գնդակը դիպել է հորս կրծքին, նա չի թողել, որ կապեն վերքը: Մեռել է լուռ ու անտրտուն, խաղաղված հառաչելով՝ «Հիմա հանգստացա, այլևս չպիտի ամչնամ իմ գառնուկեն»: Ես ուզում եմ, որ դու իմանաս, թե ով եմ ես, տղաս, և ում արյունն էր հոսում իմ երակներում, երբ աշխարհ եկա ու իմացա, որ հայր չունեմ, որ մայրս աղախին է և որ ես մարսելցի մի հայ որբուկ եմ, որի նմանները քիչ չէին այն ժամանակ Մարսելում: Եվ որտե՞ղ չկային: Ութ տարեկանից սովորել ու աշխատել եմ, օգնել մորս: Նա մի անգամ էլ ամուսնացավ՝ իր նման անտեր ու խեղճ մի մշեցու հետ: Երագում էին երկիր վերադառնալ ու կովում էին, թե որտեղ պիտի ապրեն՝ Մասունո՞ւմ թե Մուշում: Հիմա նրանք երկուսն էլ թաղված են Մարսելի հայկական գերեզմանատանը, և նրանցից միայն Հովսեփն է մնացել: Իսկ ես վերջացրի դպրոցը, երբ ֆաշիստները Փարիզ մտան, և կովեցի նրանց դեմ, մինչև որ նրանք հեռացան Փարիզից:

ԳԵՎՈՐԳ – Ես դա գիտեմ, մայրիկ, ձեր ջոկատի մասին շատ են գրել:

ԶԱՐՈՒՀԻ – Բայց չգիտես, տղաս, որ հենց այդ ջոկատում էլ ես հանդիպեցի քո հորը՝ Խոսրով Վարդանյանին:

ՍՏԵՓԱՆ – Ուրեմն նա՞ էլ էր դիմադրության շարժման մեջ:

ԶԱՐՈՒՀԻ – Այո, երեք տարի մենք կովեցիներ կողք-կողքի... Հիանալի մարտիկ էր քո հայրը:

ԺԱԿ – Շատ սիրուն տղամարդ էր:

ԶԱՐՈՒՀԻ – Խմբի հրամանատարն էր և իր խիզախությամբ ապշեցնում էր բոլորին: Ես հպարտանում էի, որ նա հայ է նաև: Ահա թե ինչու, երբ պատերազմն ավարտվեց և նա առաջարկեց ամուսնանալ իր հետ, ես ուրախությամբ համաձայնեցի: Ես երջանիկ էի, Գևորգ:

ԳԵՎՈՐԳ – Ուրեմն ի՞նչ պատահեց, որ...

ԺԱԿ – Ինքն իր բախտից երես թեքեց, ջանմ:

ԶԱՐՈՒՀԻ – Որքան էլ տարօրինակ հնչի, պարզվեց, որ մենք բոլորովին չգիտենք միմյանց: Մենք օտար մարդիկ էինք:

ԳԵՎՈՐԳ – Բայց դա իսկապես տարօրինակ է: Երեք տարի միասին լինել, մի բանակում և չճանաչել միմյանց:

ԶԱՐՈՒՀԻ – Խոսրով Վարդանյանը, որ պատերազմից անմիջապես հետո պարոն Վարդան դարձավ, մեծահարուստ մարդ էր:

ՄԱՐԻ – Ժակը պատմել է ինձ... ծով հարստություն ուներ: Ափսո՛ս, այսինքն, փառք աստծո, օտարի ձեռքը չընկավ: Այնպես չէ՞, Գևորգ եղբայր:

ԺԱԿ – Դու լռիր, լռիր...

ՄԱՐԻ – Աման, ինչո՞ւ պիտի մենակ ես լռեմ:

ԶԱՐՈՒՀԻ – Այդ հարստությունը նրան հորից էր մնացել և նա իր կյանքի միակ նպատակը դարձրեց պահպանել ու ավելացնել հայրական հարստությունը: Դրանից դուրս աշխարհում նրա համար չկար ոչինչ: Պատերազմի ավարտի հետ նա ավարտված համարեց իր կռիվը, որովհետև իր հարստությունը ետ բերելու համար էր կռվում: Այնինչ պատերազմը ինձ համար ավարտված չէր: Մենք պայքարում էինք հաղթանակի պտուղները ժողովրդին ծառայեցնելու համար: Մեր գոհված ու հաշմանդամ ընկերների ընտանիքներին օգնելու համար: Իսկ նրա համար ոչինչ գոյություն չունեի իր «ես»-ից բացի... «Իմ խանութները, իմ տները, իմ մարգագետինները, իմ կարողությունը, իմ կինը... »:

ԺԱԿ – Հա, հա, նա ծնվել էր իսկական տեր լինելու համար:

ԶԱՐՈՒՀԻ – Նա մի օր հենց այդպես էլ ասաց ինձ. «Ի՞նչ է, իմ կինն իմ դե՞մ է կռվում»: Եվ նա յուրովի իրավացի էր: Մենք պահանջում էինք բարձրացնել բանվորների աշխատավարձը, իսկ նա իր բանվորների, իր նախկին զինակիցների աշխատավարձն էր իջեցնում: Կարո՞ղ էինք մենք միասին ապրել:

ԺԱԿ – Դու, դու չէիր կարող:

ԶԱՐՈՒՀԻ – Պատերազմից երկու տարի հետո սկսվեց հայերի ներգաղթը Սովետական Հայաստան: Մենք երջանկությունից իրար էինք խառնվել: Ցուցակներ էինք կազմում, խոսում էինք մարդկանց հետ: Իսկ Խոսրով Վարդանն ամեն ինչ անում էր ներգաղթը ձախողելու համար: Կարծում էք քաղաքական որևէ նկատառումով: Ոչ, ոչ, պարզապես նա չէր ուզում զրկվել իր էժան բանվորական ուժից, որովհետև նրա խանութներում, նրա արհեստանոցներում մեծ մասամբ հայեր էին աշխատում: Իսկ հայերը միխթարվում էին, որ իրենց լեզուն հասկացող, իրենց ցավը իմացող հայ տեր ունեն և չգիտեին, որ այդ հայ տերը նրանց կիսով չափ պակաս աշխատավարձ է վճարում, քան ֆրանսիացի իր բանվորներին:

ԺԱԿ – Չափազանցնում ես, չափազանցնում ես, քույրիկ...

ԶԱՐՈՒՀԻ – Իսկ երբ ես, այնուամենայնիվ, օգնեցի ներգաղթը կազմակերպելուն, մենք արդեն հակառակորդներ էինք և մեզ չէիր կարող օգնել նույնիսկ դու, իմ հրաշք, որ լույս աշխարհ էիր եկել և ուզում էիր ապրել:

ԳԵՎՈՐԳ – Մայրիկ...

ԶԱՐՈՒՀԻ – Ես այնուամենայնիվ մի վերջին հուսահատական փորձ եմ կատարեցի մեր ընտանիքը փրկելու համար: Դա անստություն էր, իհարկե, բայց ես նրան խնդրեցի միասին մեկնել Հայաստան: Ես խոսում էի հայրենիքի, Մաշտոցի, ամենուրեք հայերեն խոսող մարդկանց ապահով, անվտանգ կյանքի մասին: Ես ասում էի՝ մենք թույլ չպետք

է տանք, որ մեր զավակը ևս օտարության մեջ ապրի, որովհետև եթե կռվելու ժամանակ ոչ ոք չէր հիշում մեր օտար լինելը, ապա պատերազմից հետո մեզ վրա նայում էին իբրև օտարների: Բայց նա միայն ծիծաղում էր: Նա ասում էր, թե ինքը բոլորովին օտարություն չի զգում, որովհետև փող ունեցողը ոչ մի տեղ օտար չէ:

ԺԱԿ – Է՛, ճիշտ չէ՞...

ԶԱՐՈՒՀԻ – Եվ ես սպառնացի, որ կվերցնեմ քեզ ու հայրենիք կգնամ: Եվ նա նորից ծիծաղեց: Ծիծաղեց ու հանկարծ ասաց լրջությամբ. «Ինչպե՞ս չես հասկնար, տիկին, որ ես Հայաստանին մեջ ընելիք չունիմ: Ես այստեղ կարող եմ նոր կին ունենալ ու նոր զավակներ, իսկ բոլշևիկներու Հայաստանին մեջ ինձ ո՞վ կուտա իմ հարստությունը»: Դրանից հետո ես կարո՞ղ էի մնալ նրա մոտ:

ԳԵՎՈՐԳ – Ոչ, ոչ, մայրիկ:

ԶԱՐՈՒՀԻ – Դրա համար էլ բռնեցի քո ձեռքը և եկա հայրենիք:

ԳԵՎՈՐԳ – Շնորհակալ եմ, մայրիկ:

(Լռություն)

Իսկ հիմա ի՞նչ ես մտածում, մամ:

ԶԱՐՈՒՀԻ – Զգիտեմ:

ԳԵՎՈՐԳ – Ի՞նչ է նշանակում այս կտակը: Ի՞նչ է նշանակում այս ժառանգությունը: Եթե իմ հայրը այն մարդն է, ինչ դու նկարագրում ես և ինչին ես իրավունք չունեմ չհավատալու, ապա ամենապարզ տրամաբանությամբ նա այդ հարստությունը ինձ չպետք է կտակեր:

ԶԱՐՈՒՀԻ – Այո:

ԳԵՎՈՐԳ – Իսկ գուցե նա զոջացել է, մամ: Գուցե մահից առաջ, երբ մարդ փակում է իր հաշիվները կյանքի հետ, նա հասկացել է իր ապրած կյանքի անհեթեթությունը, զգացել է քեզ պատճառած ցավի ահավորությունը, զոջացել է ինձ անհայր թողնելու համար:

ԶԱՐՈՒՀԻ – Նա դրա համար կաշխատեր միայն վրեժխնդիր լինել:

ԳԵՎՈՐԳ – Ումի՞ց:

ԶԱՐՈՒՀԻ – Իսկ նրա կարծիքով ո՞վ նրանից խլեց իր կնոջն ու երեխային, ո՞վ խլեց նրանից իր միամիտ բանվորներին, ո՞վ ապացուցեց նրան, որ կյանքում ամենակարևորը փողը չէ և մարդ կեցցե ոչ միայն հացիվ, ինչպես աստվածաշնչում է գրված...

ԳԵՎՈՐԳ – Հայաստա՞նը...

ԶԱՐՈՒՀԻ – Սովետական Հայաստանը... Եթե միայն դու լսեիր, թե ինչ ատելությամբ էր արտասանում նա այդ երկու բառը...

ԳԵՎՈՐԳ – Կներես, մայրիկ, բայց ինձ թվում է, թե դու խտացնում ես գույները:

ԺԱԿ – Իհարկե, իհարկե, խտացնում ես, քույրիկ... Լավ չէ այդպես խոսել հանգուցյալի մասին:

ԶԱՐՈՒՀԻ – Տանել չեմ կարողանում, երբ ասում են, թե հանգուցյալի մասին վատ բան չի կարելի ասել: Ուրեմն երբ մարդ ողջ է, նրա մասին ամեն ինչ կարելի է ասել, իսկ մահը սրբագործո՞ւմ է ամեն ինչ: Ուրեմն մահը սրբագործե՞լ է Ներոնին, Լենկթեմուրին, Հիտլերին, Թալիաթին, երիցս անիծյալ լինեն նրանք:

ԳԵՎՈՐԳ – Ուրեմն ինչպե՞ս պետք է վարվեմ այդ ժառանգության հետ:

ԶԱՐՈՒՀԻ – Ինքդ վճռիր, տղաս... Ներեցեք ինձ, խնդրում եմ...

(Դուրս է գալիս սենյակից):

ՍՏԵՓԱՆ – Ո՞վ կմտածեր, թե նա այդպիսի կյանք է անցել... Ինձ միշտ թվացել է, թե ամենախաղաղ ու ամենաերջանիկ մարդն է տիկին Զարուհին...

ԺԱԿ – Է՛, շատ է տանջվում Զարուհին, առողջությունն էլ արդեն այն չէ: Այո, այդ ես վախեցնելու համար չէ, որ ասում եմ, բայց իբրև բժիշկ նկատում եմ, որ այն չէ... Դե, տարիքը, քաղցած ու որբ մանկությունը, պարտիզանական կյանքը, ընդհարումները Խոսրովի հետ: Էհ, հիմա, փառք ասածո, քույրիկս կհանգստանա ինչպես պետքն է և կապրի թագուհու նման, ինչպես վայել է իրեն: Ի վերջո բավական է, ինչքան ծառայեց ուրիշներին, հիմա էլ թող ուրիշները ծառայեն նրան...

ԳԵՎՈՐԳ – Ի՞նչ է պատահել, ինչի՞ մասին եք խոսում, չեմ հասկանում:

ԺԱԿ – Դե լավ, վերջ տուր, Գևորգ, դու հո նրան մենակ չե՞ս թողնելու:

ԳԵՎՈՐԳ – Իսկ ինչո՞ւ պետք է մենակ թողնեմ:

ԺԱԿ – Դե ես էլ այդ եմ ասում, ուրեմն տանելու ես հետդ Փարիզ, չե՞: Այսինքն, նա ինքը քեզ մենակ չի թողնի, ես լավ գիտեմ նրան:

ՍՏԵՓԱՆ – Օհո՛, պարոն Ժակը նոր խաղաթղթեր է բացում...

ԳԵՎՈՐԳ – Միամիտ բաներ ես ասում, քեռի, մի՞թե մայրիկը ուսումնական տարվա կեսին կթողնի իր դասարանը, իր դպրոցը... Ինքդ հավատո՞ւմ ես դրան...

ԺԱԿ – Մենք չենք հասկանում իրար, Գևորգ, ես ընդհանրապես գնալու մասին եմ խոսում, մեզ նման...

ԳԵՎՈՐԳ – Ահա թե ինչ... Ուրեմն այդպես, ընդմիջտ, հա՞... Հետաքրքիր մարդ ես, քեռի, մի՞թե նա Հայաստանից հեռացողն է:

ՄԱՐԻ – Մի ասա, Գևորգ, հանգամանքները փոխվել են, ես այնպիսի պղեսենթիմենթ... նախազգացում ունեմ, որ Զարուհի քույրիկը այստեղ չի մնա:

ԺԱԿ – Նա հանումն քեզ ամեն ինչ կանի, Գևորգ, նա քեզ այնպես է սիրում, որ մտքովդ չանցնի, թե քեզ մենակ կթողնի իրենից հեռու Ֆրանսիայում ապրել:

ԳԵՎՈՐԳ – Լսեք, մենք ընդհանրապես իրար չենք հասկանում: Իսկ ինչո՞ւ ես պետք է Ֆրանսիայում ապրեմ: Գժվե՞լ եք, ինչ է:

ԺԱԿ – Սպասիր, սպասիր, Գևորգ, ուրեմն ի՞նչ պետք է անես հորդ ժառանգությունը:

ԳԵՎՈՐԳ – Դե, թքած այդ ժառանգության վրա: Կտան՝ այստեղ կբերեմ, չեն տա, իրենց հերն էլ անիծած:

ԺԱԿ – Էհ, կներես, իհարկե, բայց երեխա ես, երեխա: Իսկ ի՞նչ պետք է անես այդ փողն այստեղ, Գևորգ: Ասենք թե մի ավտոմեքենա գնեցիր ու կառուցեցիր մի տուն, հետո՞, մնացածը... ինչի՞ վրա պիտի ծախսես մնացածը: Ո՞վ քեզ կթողնի, որ ծախսես: Դու կարծում ես այստեղ փող ունեցողներ քի՞չ կան, որտե՞ղ են երևում: Այստեղ դրամը դողդողալով են կուտակում և դողդողալով էլ թաքցնում են և ինչքան շատ են ունենում, այնքան ավելի շատ են դողդողում, ավելի վատ են հագնվում ու ապրում, որ հանկարծ, աստված չանի, չիմանան: Այստեղ մարդ իրավունք չունի հարստանալու: Ամեն մի պատահական մարդ էլ կարող է բռնել կոկորդո ու հարցնել. «Ի՞նչ միջոցներով ես ավտոմեքենա գնել», «Ի՞նչ միջոցներով ես տուն կառուցել»:

ՍՏԵՓԱՆ – Ի՞նչ փառահեղ դեմագոգն է...

ՄԱՐԻ – Ի՞նչ միջոցներով ես կնոջդ համար երեք մուշտակ գնել, քել օղեով, ինչպիսի սարսափ...

ԺԱԿ – Մի վայրկյան: Իսկ դու գիտե՞ս, թե ինչ է դրամը Փարիզում... Օ, լա-լա... Դու փոքր էիր, իսկ ես տեսել եմ, թե ինչ է դրամը Փարիզում... Այնտեղ որքան շատ ունենաս, այնքան ավելի քիչ կհարցնեն, թե որտեղից քեզ դրամը: Եթե դրամ ունես, դու սուրբ ես, կեսարի կնոջ նման վեր ես ամեն կասկածից, դու տեր ես, դու իրավունք ունես, դու աստված ես... Դու կարող ես ուզածդ տան մոտ կանգնել ու ասել ուզում եմ իմը լինի այս տունը:

ՍՏԵՓԱՆ – Իսկ ինքնաթիռ կարո՞ղ ես գնել: Կարո՞ղ ես Օստապ Բենդերի նման ասել. «Ես գնում եմ այս ինքնաթիռը: Փաթաթեք թղթի մեջ»:

ԺԱԿ – Կատակո՞ւմ եք, հա, ընկեր Ստեփան, իհարկե կարող եք, եթե ավելի շատ ունենաք: Օ՛, այդ առթիվ անհոգ մնա: Մենք այնպիսի գործի մեջ կոնենք այդ գումարները, որ մի տարում երեսուն տոկոս շահ կբերեն: Հավատա ինձ, Գևորգ, քեռիդ այդպիսի հարցերում գլուխ ունի... Դու արի ինձ հետ, Գևորգ, և կտեսնես, թե ես ինչի եմ ընդունակ...

ԲՅՈՒԶԱՆԴ – Օ՛, միանգամայն պարզ է, թե դու ինչի ես ընդունակ, Ժակ–Հովսեփ:

ՄԱՐԻ – Այո, այո, եղբայր, քեռիդ շատ ընդունակ է, արտասահմանի մեջ արագ առաջ կգնա, որովհետև օմ դը տալան... տաղանդավոր մարդ է: Իսկ տաղանդավոր մարդուն հող է պետք:

ԺԱԿ – Տաղանդավոր մարդ... Իսկական տաղանդը քո առջևն է կանգնած, Մարի: Իսկական տաղանդը Գևորգն է, իսկական տաղանդը Ստեփանն է...

ՄԱՐԻ – Ջանմ, Ստեփանը գիտնականի տեսք չունի, օյինբազ լեբլեբիջիին մեկն է...

ԺԱԿ – Չէ, ինչո՞ւ, տաղանդ... անկեղծ խոսենք, ի՞նչ է քո վիճակն այստեղ, Գևորգ... Սպասիր, սպասիր, կարծում ես ես չգիտե՞մ, ինչ է... Մարդ հսկայական շահաբեր գյուտ անի ու նրա առաջը փակե՞ն... Արտասահմանի մեջ գիտե՞ս ինչ կանեին քեզ համար, Գևորգ, ձեռքերի վրա կբարձրացնեին, գլխի վրա կպահեին, ձեռքից ձեռք կխլեին... Մարդը վիթխարի գյուտ ունի ու սկսի խնդրել, որ ընդունեն իր գյուտը, համոզի, պաղատի, թե վերցրեք, օգտագործեք, միլիոնների օգուտ ստացեք դրանից, երբ ինքը կոպեկներ պիտի ստանա միայն...

ՍՏԵՓԱՆ – Տե՛ս, է, ինչպիսի հովանավոր ունենք... Իսկ մենք անտեր, անտեր ման ենք գալիս:

ԺԱԿ – Չեմ հասկանում, չեմ հասկանում, թե դրանից հետո ի՞նչը կարող է քեզ այստեղ պահել: Արտասահմանի մեջ դու այդ գյուտը կդնես մեջտեղ, և գործարանատերերը իրար գլուխ կջարդեն այդ գյուտը քեզնից գնելու համար: Իսկ դու չես վաճառի: Չէ՛, միամիտ չլինես՝ դու կպահանջես շահույթի հինգ տոկոսը, ոչ ավել և կապրես քեզ համար հանգիստ, անկախ, երջանիկ: Մինչև դու մի բաժակ վիսկի խմես, քո դրամագլուխը բանկում հարյուր ֆրանկով կավելանա...

ՍՏԵՓԱՆ – Մինչև դու մի բաժին բիֆշտեքս ուտես, բանկում քո դրամագլուխը էլի հարյուր ֆրանկով կավելանա: Դու գիտես Փարիզում ինչպիսի բիֆշտեքս են պատրաստում:

ԺԱԿ – Չէ՛, քո «Անի» ռեստորանի նման: Այդ մի գյուտով, միայն ու միայն այդ մի գյուտով դու մուլտիմիլիոնատեր կդառնաս և այդ ժամանակ, եթե ուզենաս՝ սենատն էլ կգնես, այո, այո, սենատն էլ կգնես և այն ժամանակ, այո, կարող ես փաթաթել թեկուզ թղթի մեջ, ընկեր Ստեփան:

ԳԵՎՈՐԳ – Ես քեզ հասկանում եմ, քեռի, ու միայն մի բան չեմ հասկանում՝ մի՞թե դու, այնուամենայնիվ, քեզ վտանգի տակ դնելով, մի տուփ կոնֆետ ես տվել խեղճ, անտուն մի ծերունու:

ԺԱԿ – Ե՞ս, ե՞րբ, որտե՞ղ, ախ հա, Փարիզում... Այո, հետո վեց ամիս թափառում էի անգործ, և եթե Զարուհին չլիներ, քաղցից կմեռնեի...

ԳԵՎՈՐԳ – Հանուն այդ մի տուփ կոնֆետի, քեռի, և հանուն նրա, որ այսպես թե այնպես իմ մոր եղբայրն էս, անմիջապես հեռացիր այստեղից...

ՍՏԵՓԱՆ – Ժլատություն մի արա, մի երկու բառ էլ իմ կողմից, խնդրում եմ...

ՄԱՐԻ – Գևորգ, եղբայր իմ, ի՞նչ էս անում, քո մորեղբայրն է...

ԳԵՎՈՐԳ – Եթե նա իմ մորեղբայրը չլիներ, տիկին Մարի, էս նրան... Հեռացիր այստեղից, կորիք քո գրողի տարած արտասահմանը, որտեղ ուզում էս, միայն թե էս այլևս չտեսնեմ քեզ:

ՄԱՐԻ – Օ, մոն դիեյ, տեր աստված, Գևորգ, Գևորգ...

ԺԱԿ – Գևորգ, ուշքի եկ, ի՞նչ էս ասում, իսկ դա ազնի՞վ բան է, դու հիանալի գիտես, որ էս առանց քեզ չեմ կարող Ֆրանսիա վերադառնալ: Իմ անօգնական վիճակից օգտվելը սազո՞ւմ է քեզ: Մեծահոգությունից էս խոսում, տիկին Մարիին խնայիր: Երկու տարի է, ինչ նա օրերն է հաշվում: Ախր նա կլեկագարվի...

ՄԱՐԻ – Ես արդեն խելագարվում եմ, Ժակ, արդեն խելագարվում եմ...

ԳԵՎՈՐԳ – Սա ի՞նչ մղձավանջ է: Լսեք, դուք ի՞նչ եք ուզում ինձանից:

ԺԱԿ – Ախր Գևորգ, սիրելիս, անուշ եղբայր, մենք Ֆրանսիա էինք գնում, որովհետև հայրդ՝ Խոսրով Վարդանը, խոստացել էր ֆինանսավորել ինձ: Նա ինձ համար մասնավոր հիվանդանոց էր գնելու, նա ինձ դրամ էր տալու: Առանց այդ դրամի մենք ինչպե՞ս պետք է ապրենք... Մենք այդ դրամի համար ենք հեռանում...

ՍՏԵՓԱՆ – Ի՞նչ եք ասում, իսկ էս կարծում էի, թե գաղափարական տարաձայնություններ ունեք, թե ինչ-որ սկզբունքներ են ստիպում փոխել քաղաքացիությունը:

ՄԱՐԻ – Սկզբունքը ո՞րն է, Ժակ, լա պոենսի՞պ...

ԺԱԿ – Ինչ սկզբունքներ, ինչ հայացքներ, ընկեր Ստեփան, մի թե հանցանք է, որ ուզում ենք հարուստ ապրել, ուզում ենք շքեղ ապրել, ահա իմ սկզբունքը:

ԳԵՎՈՐԳ – Եվ ձեզ հարստություն տալու համար ե՞ս էլ պետք է հեռանամ իմ տնից, իմ հայրենիքից:

ԺԱԿ – Քո տունն ի՞նչ է, եղբայր, դու պալատներում կապրես, դու...

ՄԱՐԻ – Օ՛, Պաղի, օ՛ մոն ամուղ...

ՍՈՆԱ – Այս մարդիկ ինքնասիրություն չունեն, ինչ է...

ԲՅՈՒԶԱՆԴ – Վերջ տվեք, բավական է, ամոթ է...

ԺԱԿ – Վերջ կտամ, էլ չեմ խոսի, ինչ ուզես կանեմ, Գևորգ, միայն թե խղճա մեզ,
թույլտվություն ստացել ենք, տոմսերը գնել ենք արդեն, խնայիր մեզ, եղբայր: Մենք
վաղն արդեն օդանավակայանում պետք է լինենք... Եվ երկու օր հետո... Փարիզում:

ՄԱՐԻ – Ասա՝ հա, ասա՝ հա, ձեռքդ համբուրեմ...

ԳԵՎՈՐԳ – Ինչպե՞ս չեք ամաչում, ի՞նչ եք անում, տիկին Մարի...

ԺԱԿ – Լավ, լավ, չեմ ասում մնա, չես ուզում՝ մի մնա, բայց եկ Փարիզ, Գևորգ, այդ
հարստությունը հո անտեր չես թողնելու, թեկուզ հանուն սկզբունքի, հո չե՞ս թողնելու
կապիտալիստների ձեռքին, եկ Փարիզ, եղբայրս, գոնե մի քանի օրով, հորդ
խոստացած գումարը մեզ տուր ու ետ դարձիր: Չեմ ասում մնա, աղաչում եմ, Գևորգ:
Կգաս, հա՞, այնտեղ կխոսենք, ասա հա, ասա հա...

ՄԱՐԻ – Ասա՝ հա, ձեռքդ համբուրեմ...

(Ներս է գալիս Զարուհին):

ԳԵՎՈՐԳ – Նրանք ի՞նչ են ուզում ինձանից, մայրիկ...

ԶԱՐՈՒՀԻ – Սպասեք, դուք միայն Խոսրովի հույսով էիք գնում:

ԺԱԿ – Դե իհարկե, քույրիկ, իհարկե... Հիմա ի՞նչ պետք է անենք...

ԶԱՐՈՒՀԻ – Իսկ ի՞նչ արեցիք տան վաճառքից ստացած գումարը:

ԺԱԿ – Տո՛ւն, ի՞նչ տուն... Այն հա...

ՀԱՅԱՐՓԻ – Մեր տան, որ վաճառեցիք վաթսուն հազար ռուբլով...

ՄԱՐԻ – Այս աղջիկը մեր թշնամին է, Ժակ:

ԳԵՎՈՐԳ – Իսկ ավտոմեքենան քանիստ՞վ վաճառեցիք, քեռի...

ԲՅՈՒԶԱՆԴ – Եվ քանի գորգեր և բնանկարներ եք տանում Մասիսի տեսարաններով:

ԺԱԿ – Դրանք կոպեկներ են, Գևորգ, սիրելիս... Պարտքերի մեջ խրված ենք... Դրանք ի՞նչ են...
Ես գործ եմ ուզում սկսել, գործ... Ինձ շատ, շատ դրամ է պետք, շատ... Ես պետք է
գնամ, որ...

ՀԱՅԱՐՓԻ –

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
 Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ
 Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
 Ախր ուրիշ տեղ հորովել չկա,
 Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
 Սեփական հոգին խորովել չկա,
 Ախր ուրիշ տեղ սեփական բախտից
 Խռովել չկա:

.....
 Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
 Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ,
 Ախր ուրիշ տեղ
 Հողի մեջ այսքան օրհնություն չկա,
 Այսքան վաստակած հոգնություն չկա,
 Ախր ուրիշ տեղ
 Ամեն մի քարից, անվից, ակոսից
 Իմ աչքերով իմ աչքերին նայող
 Մանկություն չկա...

.....
 Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
 Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ,
 Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ:

(Արտասվում է):

ԲՅՈՒԶԱՆԴ – Հիմա հասկացա՞ր քո արածը, պարոն Ժակ:

ԶԱՐՈՒՀԻ – Դա, դա հանցագործություն է, իմացեք:

ԺԱԿ – Երեխա է, երեխա, ջանա, դուրազրգի՞ռ... (դատերը):

Զավակս, հո քեզ կառափնարան չենք տանում... Փարիզ ենք տանում...

ԶԱՐՈՒՀԻ – Հայարփի, աղջիկս, շունչ քաշիր, հանգստացիր մի քիչ, հետո կխոսենք, հա՞ ...

ՀԱՅԱՐՓԻ – Ինչո՞ւ ես ինձ երեխայի տեղ դնում, հորաքույր, ինչո՞ւ: Իմ տարիքում դուք արդեն
 աշխատում էիք, պարտիզան էիք, կոմիւն էիք ֆաշիստների դեմ: Հորաքույր, քեռի
 Բյուզանդ, ի՞նչ անեմ, ասեք: Ես չեմ ուզում այստեղից հեռանալ, չեմ ուզում ձեզանից
 հեռանալ: Ես չեմ կարող ապրել առանց ձեզ, առանց մեր փողոցի, առանց մեր տան,
 առանց մեր դպրոցի, առանց մեր դասարանցիների: Տասը տարի է միասին ենք
 սովորում, մի տուն ենք, եղբայրներ ու քույրեր ենք, հարազատներ ենք: Ու հիմա
 հանկարծ վեր կենամ, նայեմ օտարի պես ու ասեմ. «Մնաք բարով, ես գնացի»: Ախր ո՞ւր
 ես գնում, ինչի՞ համար: Ես ի՞նչ ասեմ նրանց, հորաքույր: Առաջ ինչ-որ բաներ ինձ
 դուր չէին գալիս մեզ մոտ, իսկ հիմա, որ գիտեմ էլ չեմ տեսնելու, նայում եմ, ու լացս

գալիս է: Ես մեր ամեն ինչը սիրում եմ, փողոցների փոշին էլ եմ սիրում, կոպիտ խոսող տղաներին էլ եմ սիրում, դասերից փախչելու համար ինձ «երկու» դնող դասատուներին էլ եմ սիրում... Լավ, ո՞վ իրավունք ունի ինձ տանելու այստեղից:

ԶԱՐՈՒՀԻ – Ծնողներդ:

ՀԱՅԱՐՓԻ – Բայց չէ՞ որ ես չեմ ուզում:

ԶԱՐՈՒՀԻ – Դու դեռ անչափահաս ես, Հայարփի, և քո փոխարեն, դժբախտաբար, վճռում են ծնողներդ:

ՀԱՅԱՐՓԻ – Ուրեմն իմ կարծիքը ոչ ոք չի՞ հարցնում:

ԶԱՐՈՒՀԻ – Իսկ դու կարո՞ղ ես առանց քո ծնողների ապրել:

ՀԱՅԱՐՓԻ – Չգիտեմ, հորաքույր:

ԶԱՐՈՒՀԻ – Դե, տեսնում ես, աղջիկս, քանի դեռ չես կարող ապրել առանց նրանց, ուրեմն չես կարող նաև ինքնուրույն վճիռ կայացնել:

ՀԱՅԱՐՓԻ – Ուրեմն ես ստիպված պետք է գնա՞մ...

ԶԱՐՈՒՀԻ – (Լռում է):

ՀԱՅԱՐՓԻ – Գնամ, որ Բագրատի նման ձեզ նամակ գրեմ, հա՞ ...

ԳԵՎՈՐԳ – Ի՛նչ նամակ...

ՀԱՅԱՐՓԻ – Մեր դասարանից էր: Անցյալ տարի ծնողները արտասահման վերադարձան: Լաց էր լինում, չէր գնում... Տարան: Ու հիմա գրել է, բերեցի հետս, որ կարդամ ձեզ: Լավ էլ չէր սովորում, տառասխալներով է գրել... «Իմ դասարանցիներ ջան, եղբայրներ ու քույրեր ջան, արդեն վեց ամիս է, ինչ Բեյրութում ենք: Օր չկա, վայրկյան չկա, որ չհիշեմ ձեզ: Երագումս էլ ձեզ հետ եմ լինում: Որ արթնանում եմ, ջղայնանում, նորից եմ քնում, որ տեսնեմ ձեզ: Հայրս և մայրս ամեն օր կռվում են իրար հետ: Երևի բաժանվեն շուտով: Իսկ փոքրիկ քույրերս գիշերները ծածկվում են վերմակի տակ, գրկում են իրար, լաց են լինում ու խոսում, խոսում, խոսում են իրենց մանկապարտեզի ու դպրոցի մասին: Բեյրութը մեծ քաղաք է, շատ մեծ շենքեր կան ու շատ լավ փողոցներ, բայց քայլում եմ, ու ոչ մի ծանոթ մարդ չկա, մա՛րդ, մա՛րդ, մա՛րդ... Օտար են բոլորը: Ինձ հասկանում եք, չէ՞: Եղբայրներ ջան, քույրեր ջան, միշտ իրար հետ եղեք, ընկերություն արեք, ընկերությունից լավ բան աշխարհում չկա... Ու հիշեք ձեր անբախտ Բագրատին, մինչև տեսնենք, ինչ է լինելու... Հո էսպես չի՞ մնալու... Ամուր-ամուր համբուրում եմ ձեզ, որովհետև մեռնում եմ ձեր կարոտից, Երևանի կարոտից»:

Ահա, տեսնում եք, այնինչ շարադրությունից հազիվ «երեք» էր ստանում:

ԺԱԿ – Հայրն էլ հյուրանոցների տեր է, լավ եմ ճանաչում... Մեծահարուստ մարդ է, գիտե՞ք...

ԲՅՈՒԶԱՆԴ – Դո՛ւ իմացիր, դու, Ժակ:

ՀԱՅԱՐՓԻ – Դե հիմա ասա, ի՞նչ անեմ, հորաքույր:

ԶԱՐՈՒՀԻ – (Լռում է):

ՀԱՅԱՐՓԻ – Դուք ինձ ոչնչով օգնել չե՞ք կարող...

ԶԱՐՈՒՀԻ – (Լռւմ է):

ՀԱՅԱՐՓԻ – Դուք ինձ ոչինչ ասել չե՞ք ուզում...

ԶԱՐՈՒՀԻ – Ուզում եմ, գնա՛, աղջիկս, գնա, եթե այլ ելք չկա: Ես քեզ համար մազաչափ իսկ չեմ անհանգստանում, որովհետև դու ճիշտ ես զգում, ճիշտ ես մտածում: Մեկ տարի հետո դու արդեն չափահաս կլինես և ինքդ կորոշես քո անելիքը: Այն ժամանակ ոչ ոք իրավունք չի ունենա քո կամքին հակառակ որևէ վճիռ պարտադրել քեզ: Գնա, աղջիկս, գնա ու հանգիստ եղիր: Ես այսօրվա պես տեսնում եմ քո վերադարձը:

ՀԱՅԱՐՓԻ – Հորաքույր, սիրելի հորաքույր, մի՞թե դա հնարավոր է:

ԶԱՐՈՒՀԻ – Դա անխուսափելի է: Դու աշխարհում այլևս ոչ մի տեղ չես կարող ապրել: Դու աշխարհում որևէ այլ տեղ չես կարող երջանիկ լինել, որովհետև դու հասկացել ես, թե ինչ բան է հայրենիքը:

ԲՅՈՒԶԱՆԴ – Գնա ու վերադարձիր, աղջիկս, մենք բոլորս սպասում ենք քեզ:

ԺԱԿ – Է՛, ես էլ նույնը չե՛մ ասում. Չենք հավնի՝ ետ կգանք...

ՄԱՐԻ – Իհարկե, քանի՞սն են ետ դարձել, ի՞նչ կա... Ճիշտ չե՞...

ՍՏԵՓԱՆ – Մարդ էլ ինքնակամ օտարություն չեմ գնա, չեմ հասկանում:

ԲՅՈՒԶԱՆԴ – Հենց բանն էլ այդ է, է՛... երկու հազար տարուց ավելի փորձել են մեզ բռնի քշել, տեղահան անել մեր երկրից... և միայն հիսունվեց տարի է, ինչ իսկական հայրենիքի տեր ենք դարձել... Միայն հիսունվեց տարի է, ինչ հնարավորություն ենք ստացել միավորվելու, հավաքվելու մեր հալածված, ծվեն–ծվեն եղած բեկորները... Կարճ ասած՝ հիմա հայրենիքից հեռացողը եսասեր է ու մորթապաշտ...

ԺԱԿ – Է՛, չեղավ, չեղավ, ընկեր Բյուզանդ, մեկ երկու հոգու հեռանալով Հայաստանին ի՞նչ պիտի լինի...

ԲՅՈՒԶԱՆԴ – Հայաստանին ոչինչ էլ չի լինի, կասկած չունենաք, ինչ լինելու է, ձեզ է լինելու, ինչ լինելու է՝ ձեր զավակներին է լինելու: Ասենք՝ ավելորդ է ձեզ հետ խոսելը:

ԺԱԿ – Գևորգ, ես քեզ հետ առանձին խոսելիք ունեմ:

ԳԵՎՈՐԳ – Ի՞նչ նոր բան կա, քեռի:

ԺԱԿ – Տեսնում եմ, որ քեզանից բան դուրս չի գա, դու այնպիսի մարդկանցով չես շրջապատված, որ կարողանաս սառը դատել, Աստված քեզ հետ, գնա քո ճանապարհով: Բայց գոնե թույլ տուր, որ ես էլ իմ ճանապարհով գնամ: Տունս տեղս վաճառել եմ, հիմա ես ոչինչ չունեմ, ամեն ինչ վաճառել եմ...

ԳԵՎՈՐԳ – Ճիշտ է, քեռի, ամեն ինչ... վաճառել ես...

ԺԱԿ – Ծաղրիր, ծաղրիր, իրավունքը քոնն է... Բայց հո հասկանում ես, որ ես այլևս այստեղ մնալ չեմ կարող...

ԳԵՎՈՐԳ – Իսկ ես մի՞թե քո ձեռքը բռնում եմ:

ԺԱԿ – Ձեռքս էլ, ոտքս էլ, Գևորգ ջան... Եթե գայիր մեզ հետ... Չէ, չէ, չեմ ստիպում, չես ուզում՝ մի արի, բայց գոնե օգնիր ինձ, հա՞ ... Ձեզ պետք չէ, բայց ինձ համար կյանք է, երազ է...

ԳԵՎՈՐԳ – Ի՞նչ ես ուզում ինձանից:

ԺԱԿ – Մի բարկացիր, ես միայն մի թուղթ եմ ուզում, սովորական մի թուղթ, որ դու հրաժարվում ես հորդ ժառանգությունից՝ հօգուտ ինձ... Դու իսկապես հրաժարվում ես, չէ՞ ... Իսկ ինձ համար... Ես... այդ թուղթը...

ԲՅՈՒԶԱՆԴ – Հիմա այդ թուղթը քեզ էլ պետք չէ, պարոն Ժակ: Ավելի մի իջիր, քան կաս:

ԺԱԿ – Դարձյա՞լ դուք, ընկեր Բյուզանդ: Ի՞նչ եք ուզում ինձանից վերջապես, ա՛յ մարդ...

ԲՅՈՒԶԱՆԴ – Արդեն միջազգային դեմք ես դարձել, Գևորգ, արտասահմանյան լրագրերն էլ են սկսել քո մասին գրել:

ԳԵՎՈՐԳ – Ի՞մ մասին: Ինչ պետք է իմ մասին գրեն, քեռի Բյուզանդ:

ԲՅՈՒԶԱՆԴ – Փարիզում բացված իմ ցուցահանդեսի առթիվ հայկական թերթերից մեկը քննադատական է գրել և իմ բարեկամ խմբագիրը սիրալիրությամբ ինձ է ուղարկել այդ համարը: Քիչ առաջ ստացա փոստը, բացել նայում եմ ու հանկարծ տեսա, որ այնտեղ քո մասին էլ կա... Հորդ կտակն է տպված ամբողջությամբ: Վերցրու, վերցրու կարդա: Չորրորդ էջում է, ներքևում:

ԳԵՎՈՐԳ – Ահա գտա: Դե, սա նույն բանն է, ինչ գրել են ինձ... Չէ, մի նոր կետ էլ կա... Ահա՛ թե ինչ...

ՄԱՐԻ – Բարձր կարդա մենք էլ լսենք, Գևորգ եղբայր...

ԳԵՎՈՐԳ – Երրորդ կետ. «Այս կտակը օրինական կհամարվի և ուժի մեջ կմտնի միայն այն դեպքում, եթե որդիս՝ Գևորգ Խոսրովի Վարդանյանը Ֆրանսիա վերադառնա ընդմիջտ և շարունակի իմ գործը: Խոսրով Վարդան»:

(*Լռություն*):

ԶԱՐՈՒՀԻ – (*Հեզնանքով*): Ես ի՞նչ էի ասում, ես ճանաչո՞ւմ էի նրան...

ԺԱԿ – Մեկ վայրկյան, մեկ վայրկյան նայեմ: Է՛, սա ի՞նչ եղավ...

ՍՏԵՓԱՆ – Այն եղավ, որ պիտի մնաք, տիկին Մարի...

ՄԱՐԻ – Ժա՛կ...

ԺԱԿ – Գնանք, ջանմ, գնանք...

ՄԱՐԻ – Քեզ որ կասեի կեղտոտ մարդ կերևա այդ Խոսրովը...

ԺԱԿ – Դե գնանք, գնանք, հիմա բնութագրեր բաժանելու ժամանակը չէ: (*Շշուկով*): Գնանք, անիծված լինեն բոլորն էլ: Անիծված լինեն...

ՍՏԵՓԱՆ – Է՛, ինչո՞վ եք գնալու, պարոն Ժակ: Ի՞նչ միջոցներով, կներեք հետաքրքրությանս...

ԺԱԿ – (*Չոր*): Ձեր հույսով չեմ, ընկեր Ստեփան, մի կերպ կհասնենք... կապրենք... շնորհակալ եմ ձրի դասախոսության համար: Թե սկզբից կիմանայի... (*Գևորգին*): Լսիր, այ մարդ, դու իսկապե՞ս կթողնես, որ կորչեն այդ միլիոնները: Մտածիր, քանի ուշ չէ, միլիոններ են, հասկանում ես, միլիոններ են... խելագարվել կարելի է – սա... սա ի՞նչ մարդ է...

ԲՅՈՒԶԱՆԴ – Մարդ է, մա՛րդ:

ԶԱՐՈՒՀԻ – Իսկ գուցե դու գնա՞ս, Գևորգ, մնաս այնտեղ ու տե՞ր դառնաս այդ ժառանգությանը... Դա ահռելի հարստություն է:

ԳԵՎՈՐԳ – Ե՞ս:

ԶԱՐՈՒՀԻ – Ես հարցնում եմ, որովհետև հիմա շատերը քեզ նույնը կհարցնեն:

ԳԵՎՈՐԳ – Ես գիտեմ, թե ինչ կպատասխանեմ այդ շատերին... Բայց դու... դու, մայրի՛կ...

ՊԱՏԿԵՐ

(*Օդանավակայանի սովորական աղմուկը*):

ԶԱՐՈՒՀԻ – Վճռել էի չճանապարհել նրանց, և այնուամենայնիվ օդանավակայան եկա:

Հանկարծ այնպես ուզեցի մի անգամ ևս գրկել, սփռվել Հայարփիին, հրաժեշտ տալ միամիտ, հիմարիկ Մարիին, վերջին անգամ տեսնել եղբորս, որովհետև գիտեմ՝ այլևս երբեք չեմ տեսնելու նրան:

Եկա և չկարողացա մոտենալ նրանց:

Հայարփիին շրջապատել էին իր դասընկերներն ու դասընկերուհիները: Վառ կարմիր ծաղիկներ էին բերել նրա համար: Գրկում, համբուրում, կատակում ու ծիծաղում էին, և այնպիսի սրտաշարժ ու միամիտ խորամանկությամբ էին աշխատում նրան մենակ թողնել Աշոտի հետ...

Ես չուզեցի խանգարել նրանց... Իսկ Հովսեփին ու Մարիին ասելու ոչինչ չունեի:

Նրանք առանձնացած, օտարի պես կանգնած էին օդանավակայանի շենքի անկյունում, և նրանց մոտ ոչ ոք չկար, ոչ ոք...

Հետո, երբ հաղորդավարը հայտարարեց թռիչքի մասին, նրանք սկսեցին ձայն տալ Հայարփիին, բայց աղջիկը չէր լսում, չէր ուզում լսել նրանց:

Նրանք գրեթե բռնի պոկեցին նրան իր դասընկերներից ու տարան իրենց հետ: Մինչև ինքնաթիռը Հայարփիին շրջվում էր անընդհատ, թափահարում էր ձեռքը, լալիս էր ու ժպտում արցունքների միջից և ինչ-որ խոսքեր էր բացականչում, որ չէին լսվում և այնպես հասկանալի էին...

Հետո ինքնաթիռը վեր բարձրացավ ու կորավ ամպերի մեջ:

Ես երկար հետևում էի ինքնաթիռի թռիչքին, իսկ երբ շրջվեցի, Հայարփիի դասարանցիները արդեն չկային: Նրանք ճիշդ-աղաղակով գնացել խառնվում էին քաղաք մեկնող մարդկանց խմբերին:

Մի պահ տխրեցի, որ նրանք այդպես շուտ մոռացան Հայարփիին: Հետո մտածեցի...

Նրանք ջահել են, միասին են, վստահ են, և տխրությունը տեղ չունի նրանց հոգում...

Կամ գուցե հաստա՞տ գիտեն, որ Հայարփին վերադառնալու է:

Վերջ առաջին մասի

ԲԱՑԵՔ ՁԵՐ ԱԶՔԵՐԸ

(ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. ԺԱԿ-ՀՈՎՍԵՓ
 2. ՄԱՐԻ- նրա կինը
 3. ԺԵՆԵՎԵՎԱ-ՀԱՅԱՐՓԻ- նրանց դուստրը
 4. ՄԱՆՎԵԼ- նախկին կոմպոզիտոր
 5. ԴԻԵԳՈ ՌՈԴՐԻԳԵՍ- վաճառական
 6. ՔԵՌԻ ԱՍԱՏՈՒՐ- Մարսելի վերջին վանեցին
 7. ՊՈՏՈՍՅԱՆ- ուսուցիչ
 8. ՄԱԴԱՍ ՏԻԲՈ- խանութի հաճախորդ
 9. ՄԱԴԱՍ ՄԻՄԻ- կաբարեի հանդերձապահուհի
 10. ՄԻՇԵԼ- սպասավոր
- Տղաներ, աղջիկներ, երգչուհի, պարուհի, էստրադային նվագախումբ:

Գործողությունը տեղի է ունենում մեր օրերում, Փարիզում և Մարսելում:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

(Փարիզի արվարձաններից մեկը: Ժակ–Ջովսեփի բնակարանը: Լայն ու ընդարձակ ճաշասենյակ: Կահավարված է խայտաբղետ ու ձոխ: Մեծ պատուհանից երևում են քաղաքի լույսերը: Երեկո է: Մարին հարդարել է սեղանը, որ նախատեսված է 15–20 հոգու համար: Նա հագնված է շքեղ, հուզված ու երջանիկ է: Խոսում է հեռախոսով:

Ժակը ընկղմված է խոր բազկաթոռի մեջ և հեռուստացույց է դիտում: Հնչում է ֆրանսիական թեթև ու հաճելի մի երգ):

ՄԱՐԻ – *(Հեռախոսով):* Մայո, բարի եղեք ավելացնել նաև ուսուցիչներ... տասնհինգ... ավելի ճիշտ քսան հոգու համար: Մեկ արկղ շամպայն: Իհարկե, լավագույնը: Գինն ինձ չի հետաքրքրում, մայո...

ԺԱԿ – *(Պարզվում է, որ նա լսում է կնոջը):* Գինը քեզ ինչո՞ւ պետք է հետաքրքրի:

ՄԱՐԻ – *(Թափահարում է ձեռքը):* Հինգ շիշ «Նապոլեոն», սեղանի թեթև գինիներ... (Ժակին): Պրովանսը լա՞վ է, Ժակ:

ԺԱԿ – Շա՛տ գիտեմ:

ՄԱՐԻ – Թող լինի պրովանս, ձեր ճաշակով, մայո: Եվ միբո՛ղ: Շատ: Բազմազան: Անանաս, նարինջ, բանան... խորհուրդ չե՞ի ք տա: Դուք շատ սիրալիր եք, մայո: *(Ժակին):* Ասում է բանանը թարմ չէ: Բայց լավ կլինեք թեկուզ ձևի համար մի քիչ վերցնե՞ինք: Ձեզ հետ չեմ, մայո, ոչ, ոչ, ես իմ մայրենի լեզվով եմ խոսում: Օ, ոչ, մենք հայ ենք: Չե՞ք լսել: *(Ժակին՝ ուրախացած):* Մեզ գիտի: Այնքան էլ լավ է ասում՝ «Աղմենիա»: Այո, մենք վերջերս ենք եկել Աղմենիայից...

ԺԱԿ – Կյանքդ մի պատմիր, ա՛յ կին...

ՄԱՐԻ – Ինչո՞ւ... Եվ անպայման սև խավիար... Ռուսական չունե՞ք... *(Ժակին):* Ներողություն է խնդրում, որ ռուսական չունի, որին մենք սովոր ենք: Ոչինչ, թող լինի պարսկական... շատ, շատ...

ԺԱԿ – *(Այլևս չհամբերելով):* Լսիր, ի՞նչ ես գլուխդ գցել շա՛տ–շատ, գիտե՞ս ինչ արժե խավիարը: *(Տեղից վեր է կենում):*

ՄԱՐԻ – *(Մեղմ):* Ժակ, սիրելիս, թող իմ ուզելով լինի... *(Հստիքողի մեջ):* Այսքանը, մայո, կես ժամից տա՞նք կլինի: Մեղսի, մայո... Եվ ծաղիկնե՛ր... ձեր ֆիրմայի նվե՞րը... Օ՛, մեղսի մայո, մեղսի բոկու, մայո... *(Հստիքողը ցած է դնում):*...

ԺԱԿ – *(Ծաղրելով):* Մեղսի մայո, մեղսի մայո... Այդ մեղսի մայոն հիսուն փունջ ծաղիկի գին կհանի քո պատվերից:

ՄԱՐԻ – Ինչպե՞ս կհանի, Ժակ...

ԺԱԿ – Է՛հ... ես քեզ խնդրում եմ, Մարի, վերջ տուր այդ շատ–շատին: Մտածիր, էլի, ա՛յ կին, սա քեզ համար Երևանը չէ...

ՄԱՐԻ – Հա, Երևանում էլ անանա՛ս կգտնեիր... բա չէ...

ԺԱԿ – Ես քեզ ուրիշ բան եմ ասում: Ինչո՞ւ ես սեղանը լցնում, ինչո՞ւ, մի քանի ընտանիքներում եղել ես, սուրճից բացի ի՞նչ են դրել առջևդ:

ՄԱՐԻ – Բայց մենք հատուկ հրավերք ենք անում, Ժակ:

ԺԱԿ – Կարծում ես նրանցը հասարա՞կ հրավերք է: Դե, հասկացանք, թող ճաշ էլ լինի, մի շիշ կոնյակ կամ շամպայն, բայց դու այնպես ես պատվիրում, ասես Գյուլպենկյանի ժառանգը լինես... Նապոլեոն, խավիար... մեղսի մսյո...

ՄԱՐԻ – Ժակ, սիրելիս, ես ուզում եմ վայելել, հասկանո՞ւմ ես: Ես ուզում եմ ոտքս մի քիչ լայն պարզել... իրավունք չունե՞նք:

ԺԱԿ – Բայց այդպես որ գնա, երկու ամիս հետո ձեռքդ կպարզես... Սիրելիս: Մենք ինչի՞ տեր ենք, որ դու այդպիսի շռայլություններ ես քեզ թույլ տալիս...

ՄԱՐԻ – Մոն ամի, դու ուզում ես, որ իջնի՞ իմ տրամադրությունը:

ԺԱԿ – Տե՛ր աստված... ամբողջ աշխարհը գցում է իմ տրամադրությունը, իսկ ես միշտ պետք է մտածեմ նրա տրամադրությունը բարձր պահելու մասին: Տրամադրությունդ ինչո՞ւ է իջնում, սիրելի կինս, ես ուղղակի խնդրում եմ, որ ախորժակդ մի քիչ իջեցնես... Եկել ենք թե չէ, ամենաթանկ դերձակների մոտից դուրս չես գալիս:

ՄԱՐԻ – Ուրեմն ինչո՞ւ եկանք:

ԺԱԿ – Սկսվե՛ց:

ՄԱՐԻ – Դու չէի՞ր ասում, թե գնում ենք վայելելու: Դու չէի՞ր ասում, թե գնում ենք, որովհետև ուզում ենք հարուստ ապրել, լավ ապրել, դու չէի՞ր ասում, թե մի թե հանցանք է շքեղ ապրելը...

ԺԱԿ – (*Հնգնաձ*): Մարի, ո՞վ է ասում, թե հիմա հակառակն եմ մտածում: Բայց այդ ամենի համար դրամ է պետք: Դրամ: Չե՞ս տեսնում, որ անհաջողությունները հետապնդում են ինձ, չե՞ս տեսնում, որ ասես անեծք իջած լինի գլխիս, որտեղ ոտք եմ դնում՝ չորանում է: Ո՞ւմ մտքով կանցներ, որ Խոսրովը հենց այդ օրերին կմեռնի, ո՞ւմ մտքով կանցներ, որ բժշկի իմ դիպլոմը այստեղ ուժ չունի և եթե նույնիսկ ուժ էլ ունենար՝ ո՞վ է ինձ բժշկի պաշտոն տվողը: Մարդիկ տարիներով հերթի են կանգնած և այն էլ կոնկուրսի հերթի: Ես կոնկուրսով անցնո՞ղ եմ, ես լեզո՞ւ գիտեմ...

ՄԱՐԻ – Ինչո՞ւ, դու ֆրանսերեն հիանալի ես խոսում:

ԺԱԿ – Այո, շուկայում: Բայց կարծեմ ոչ տիկին Բելայի չափ: Երևանում ֆրանսերենի ուսուցչուհի էր, իսկ այստեղ լվացքատանն է աշխատում:

ՄԱՐԻ – Ինչո՞ւ:

ԺԱԿ – *(Հեղձեղով)*: Երևի նախասիրության հարց է: Ինչո՞ւ: Տեր չունենք, տեր, ահա թե ինչու:

ՄԱՐԻ – Է՛, վա՛տ է, որ ես էլ տերեր եմ հավաքում: Մեզ մոտիկ մարդիկ են պետք, Ժակ, ազդեցիկ մարդիկ, իսկ սուրճով ազդեցիկ մարդի՞կ կհավաքես: Թող գան, հա՛, թող իմանան, որ մենք էլ ինչ որ բանի տեր ենք, թող մտածեն, թե նման սեղան բացողը հարուստ մարդ է անպայման... Իսկ հարուստ մարդու ձեռք բռնողը շատ կլինի:

ԺԱԿ – *(Մեկուսի)*: Այս կինն այնքան էլ հիմար չէ, ինչքան ցույց է տալիս, միայն ավստո, որ խելքն իմ դրամից այն կողմ չի անցնում, *(Բարձր)*: Ես բան չեմ ասում, Մարի: Միայն թե...

ՄԱՐԻ – Միայն թե–ն մի ըսեր: Վստահիր ինձ, Ժակ, ախր ես այստեղ ոնց որ ձուկը ջրում: Ախր ես ամբողջ կյանքումս սա եմ երազել: Մանավանդ որ, տեսնո՞ւմ ես, հո խանութից խանութ չեմ ընկնում, հո սրան–նրան չեմ խնդրում, հո խեղճ–խեղճ չեմ ժպտում, չեմ շողոքորթում մի ինչ որ բութ մսավաճառի, թե ինչ է ոսկորը քիչ տա: Բավական է միայն վերցնես լսափողը. «Լսում եմ, մադամ, ինչո՞վ կարող եմ ծառայել, մադամ, իսկույն, մադամ, հաճույքով, մադամ ...»:

ԺԱԿ – *(Երանության մեջ)*: Բադա՛մ, բադա՛մ, բադա՛մ... Այն օրն ի՛նչ լավ էիր երգում... Հա, դե քաղաքակիրթ աշխարհն ուրիշ է: Մեկ ասա Փարի գ...

ՄԱՐԻ – Փարի՛գ...

ԺԱԿ – Է՛, սա խոսքի համար եմ ասում:

ՄԱՐԻ – Ու մենք Փարիզում ենք, տեր աստված:

ԺԱԿ – Հո զուր չէ, որ ասում են Փարիզը աշխարհի կենտրոնն է:

ՄԱՐԻ – Հետո մենք կենտրոնում կապրենք, չէ՞, Ժակ...

ԺԱԿ – Տեսնենք, աստված տա:

ՄԱՐԻ – Անհարմար բան է, մոն շեր: Արդեն քանի ամիս է, ինչ Փարիզում ենք, բայց Լուվրը չենք տեսել...

ԺԱԿ – Բնիկ փարիզեցիներ կան, որ բնավ չեն տեսել...

ՄԱՐԻ – Ի՛նչ ես ասում, դա անհնարին է:

ԺԱԿ – Ինչո՞ւ, երեսուն տարի Երևանում ապրեցիր, մատենադարանը կամ էլ մեր պատկերասրահը տեսա՞ր:

ՄԱՐԻ – Համեմատելու բան գտար...

ԺԱԿ – Պատկերացրու, որ եթե լինեիր, կգտնեիր...

ՄԱՐԻ – Չգիտեմ, ինչ ուզում ես ասա, բայց կիրակի օրը օպերա ենք գնալու:

ԺԱԿ – Ինչո՞ւ հանկարծ օպերա:

ՄԱՐԻ – Նոր զգեստս պե՞տք է հագնեմ, թե չէ...

ԺԱԿ – Հա, քո զգեստները ինձ դեռ շատ հեռու կտանեն...

ՄԱՐԻ – Չէ, իսկապես ամաչելու բան է, մարդ էլ գա հասնի Փարիզ ու չտեսնի ոչ օպերան, ոչ Վերսալը, ոչ մյուզիկհոլլը, ոչ...

ԺԱԿ – Է՛, սրճարանից դուրս գալի՞ս ես, որ բան տեսնես...

ՄԱՐԻ – Ժակ, անգինա, իմ մանրիկ թուլությունները մի քարկոծի, խնդրում եմ: Ես երբևէ քեզ ստիպե՞լ եմ ծխելը թողնել...

ԺԱԿ – Դրան էլ կհասնենք...

(Դռան զանգ):

ՄԱՐԻ – Ժենեվկան է:

ԺԱԿ – Հա, այդքան շուտ էլ Ժենեվկա կտեսնես:

(Գնում է, քիչ անց վերադառնում է մի ծաղկեփունջ ձեռքին):

Վերցրու, խնդրեմ, երկու հազար ֆրանկ արժե...

ՄԱՐԻ – Ի՛նչ ես ասում, այս ծաղկեփո՞ւնջը...

ԺԱԿ – Քո պատվերն էլ հետը:

ՄԱՐԻ – Է՛, այդքան գումար գրպանումդ կա՞ր:

ԺԱԿ – Գարսոնն ասաց, թե շտապելու հարկ չկա, թե տերը ամսվա վերջին հաշիվը կներկայացնի...

ՄԱՐԻ – Տե՛ր աստված, ի՛նչ բարքեր են, ի՛նչ վստահություն, ի՛նչ կուլտուրա: Խենթանալու բան է:

ԺԱԿ – Համբերիր, ամսվա վերջին կխենթանաս: Ըստ որում, եթե զանգահարելու փոխարեն նեղություն քաշեիր ինքդ խանութ գնալ, հարյուր ֆրանկ կտնտեսեիր:

(Փորձում է տեղավորել ծաղիկները):

ՄԱՐԻ – Ամա՛ն, մի մանրանա, հոգիս... Տուր, դա տղամարդու գործ չէ... *(Դնում է սափորի մեջ, հիանում է, երգում է ակամա):*

*Ծաղիկնե՛ր, ծաղիկնե՛ր, անթառամ ծաղիկներ,
Իմ սիրո կարոտի դուք անխոս վկաներ...*

ԺԱԿ – Հյուրերը չե՞ն ուշանում:

ՄԱՐԻ – *(Նայում է ժամացույցին):* Ի՞նչ ես ասում, դեռ կես ժամ կա:

ԺԱԿ – Իսկ չնայեցի՞ր, մեր հարևանների մեջ հայեր չկա՞ն:

ՄԱՐԻ – Այդքան ֆրանսիացու մեջ հա՛յ կգտնվի... Մեկին կասկածեցի, փորձեցի հարցնել, բայց այնպես նայեց, որ իմ կարծիքով ոչ թե հայ, իսկի ֆրանսիացի էլ չէր: Ավելի շուտ թուրքի էր նման: Ասում են այստեղ թուրքեր էլ շատ կան, ճի՞շտ է, Ժակ:

ԺԱԿ – *(Նորից տեղավորվում է, հեռուստացույցի առջև):* Էհ, մարդ բան ու գործ չունենար, նստեր հեռուստացույց նայեր: *(Պտտեցնում է բռնակը)* Որ ավիքը բռնում ես, մի հետաքրքիր բան կա: Իսկ ռեկլամները... Ափսոս միայն, որ գույներ չկան...

ՄԱՐԻ – Քանի անգամ ասացի մեր «Ռուբինը» հետներս տանենք, *(Հեզոնելով):* Այնտեղ թափվա՛ծ է...

ԺԱԿ – Է, սո՛ւտ է, թափված է, էլի, բայց շատ թանկ է անտերը: Ավտոմեքենայի գին ունի: Ոչինչ, գործերս որ հաջող գնան, գունավոր հեռուստացույց էլ կգնենք, այ կնիկ, չմտածես... Ասենք լավ էլ մտածող գտա:

(Հեռուստացույց է նայում):

ՄԱՐԻ – Ժակ:

ԺԱԿ – Ըհը:

ՄԱՐԻ – Սիրելիս, պարոն Կապրիելյանին հիշեցրու, թող լոտոն էլ հետը բերի: Նրանք լոտո ունեն, վերջը կխաղանք:

ԺԱԿ – Է՛, դուրս եկած չի՞ լինի արդեն:

ՄԱՐԻ – Փորձիր, ո՞վ գիտե...

(Ժակը վերցնում է լսափողը, հավաքում է համարը):

ԺԱԿ – Այո, պարոն Կապրիելյանի բնակարանն է, պարոնը կխնդրեմ: Ինչպե՞ս, տանը չե՞:
Նո՞ր դուրս եկավ: Տուն չի՞ եկել: Տարօրինակ է: Մենք իրեն կսպասենք,
պայմանավորվել էինք: Դա... Իսկ ո՞ւմ հետ պատիվ ունեմ խոսելու: Եղբա՞յրն է: Եթե
գա, շատ կխնդրեմ, ասեք թող լոտոն էլ հետը բերի: Լոտո, լոտո... Այո, ասեք, որ
անհամբեր սպասում ենք...

ՄԱՐԻ – Տանը չե՞ր...

ԺԱԿ – Բան չհասկացա: Ասաց եղբայրն է: Բայց քիթս կկտրեմ, որ իր ձայնն էր:

ՄԱՐԻ – Է՛, եղբոր ձայնը նման չի՞ լինի, ինչ է: Գուցե գործատեղից ուղիղ մեր տո՞ւն է գալիս:

ԺԱԿ – Երանի այդպես լինի... Շատ տարօրինակ էր... Արդեն ժամը ութն է, բայց ոչ ոք չկա:
Ասենք, հայ ենք, չե՞, մինչև մի երկու ժամ չուշանանք, ո՞նց կլինի... Վեցին պիտի
ասեինք, որ ութին գային...

(Նորից տեղավորվում է հեռուստացույցի մոտ):

ՄԱՐԻ – Ժակ:

ԺԱԿ – Հը...

ՄԱՐԻ – Ժակ, համենայն դեպս պարոն Մեսրոպին զանգ տուր:

ԺԱԿ – Ինչո՞ւ, դու ինչպես հարկն է, չե՞ս ասել:

ՄԱՐԻ – Ինքը տանը չէր, տիկին Սիրանի հետ խոսեցի, ասաց Մեսրոպը գա, տեսնենք...

ԺԱԿ – *(Տեղից վեր է կենում):* Է՛, տեսնենքով բա՞ն կլինի: Համարը ո՞րն է: Հա՛ (մոտենում է
հեռախոսի պահարանին, հավաքում է համարը), Այո, բարև ձեզ, Պարոն Մեսրոպը
կուզեմ: Կքնանա՞: Ինչպես թե, մեզ հյուր պետք է գար: Չե՞ք գիտեր: Իսկ ո՞վ է, դո՞ւստրն
է: Սիրելի օրիորդ, հեռախոսի մոտ կանչեք, խնդրում եմ...

ՄԱՐԻ – Քնա՞ծ է:

ԺԱԿ – Ավանակ... պարոն Մեսրո՞պ: Իսկ մենք անհամբերությամբ ձեզ ենք սպասում, հարգելի
բարեկամ: Տիկին Մարին իսկական հայկական սեղան է բացել: Ի՞նչ, ինչո՞ւ,
վատառո՞ղջ եք, ո՞չ:

ՄԱՐԻ – *(Մոտեցել է):* Ի՞նչ է ասում, ի՞նչ է ասում...

ԺԱԿ – Սպասիր: Պարոն Մեսրոպ... պարոն Մեսրոպ, ես ի՞նչ դավաճան եմ... Ես մի դժբախտ մարդ եմ... Ես ի՞նչ եմ ասել, կամ ի՞նչ եմ արել, որ դավաճան եմ... Այնտեղ չուզեցինք ապրել, այստեղ ենք եկել ապրելու, դրա մեջ ի՞նչ կա... Եվ կապրենք, այո, կարծում եք մեռնելու ենք: Առանց...

ՄԱՐԻ – Ի՞նչ էր ասում, Ժակ, ինչ էր ասում...

ԺԱԿ – *(Կանգնած է ճնշված, լսափողը դեռևս ձեռքին):* Սա՞ ինչ բան էր: Անասուն դու անասուն... մարդու երեսին այդպիսի խո՞սք կասեն... Ասում է ես դավաճանի հետ սեղան չեմ նստի... Այդ խոսքն իսկի այնտեղ չէին ասում... Քե՞զ ինչ եմ արել, այ մարդ, որ դավաճան դարձա... Կյանքումդ իբրև տուրիստ անգամ հայրենիք չես եկել, իսկ ես ապրել եմ երեսուն տարի: Ու հիմա դու դավաճան չես, ե՞ս եմ դավաճան...

ՄԱՐԻ – Հանգստացիր, Ժակ, հանգստացիր, մոն ամի, խմիր, խմիր, նապուլեոն է...

ԺԱԿ – Դե դենը կորցրու քո այդ նապուլեոնը...

(Մարին շփոթված խմում է):

ՄԱՐԻ – *(Փղձկալով):* Ի՞նչ ինչու ես կոպտում, Ժակ, ես քո նկատմամբ այդքան ուշադիր եմ, ես քեզ հետ այսքան քնքուշ եմ խոսում, դու ինձ ինչո՞ւ ես վիրավորում, ե՞ս ինչ եմ արել, Ժակ...

ԺԱԿ – *(Հառաչելով):* Դե լավ, լավ, ներիր մա շեր, դե լավ, կուզե՞ս խմենք: Խմե՞նք: Ահա, միայն թե դու ինձ արադ տուր, արադ, արադ չունենք...

ՄԱՐԻ – Սա չէ՞, որ վրան բակի է գրված:

ԺԱԿ – Դա է, դա, նույն զիբիլն է: Լցրու, դու քեզ նապուլեոն լցրու, Մարի:

ՄԱՐԻ – Կուզե՞ս ես էլ բակի խմեմ, Ժակ...

ԺԱԿ – Չէ, դու նապուլեոն խմիր, իսկ ես արադ կխմեմ... Մեր կենացը, Մարի, առավել քան երբեք մենք պետք է հաշտ ու խաղաղ լինենք, մենք իրար պետք ենք, մաման:

ՄԱՐԻ – Դու գիտես: Որ ես միշտ էլ քեզ սիրել եմ, Ժակ:

ԺԱԿ – Գիտեմ, նախ Փարիզը, հետո ինձ...

ՄԱՐԻ – Դու խոստացար, որ իմ փոքրիկ թուլությունները պետք է ներես, Ժակ: Խմե՞մ, Ժակ...

ԺԱԿ – *(Նյարդային ծիծաղով):* Խմիր, խմիր ու ինձ արադ լցրու, արադ...

(Խմում է միանգամից ու հանկարծ կերպարանափոխված տխուր Մարիին է նայում):

ՊԱՏԿԵՐ

(Նույնը, հետո Հայարփին):

(Ներս է ընկնում Հայարփին: Ներս է ընկնում պարելով: Նա երջանիկ է, գրկում, համբուրում է հորը, պտտվում է մոր հետ, ծիծաղում ու երգում է):

ՀԱՅԱՐՓԻ – Օ, որ իմանաք որքան երջանիկ եմ ես, մաման, որ իմանաք որքան երջանիկ եմ ես... թույլ տվեք համբուրել ձեզ, պարոն Ժակ...

ԺԱԿ – Այ աղջիկ, խմած հո չե՞ս...

ՀԱՅԱՐՓԻ – Խմածն ի՞նչ է, հարբած եմ, հայրիկ, հարբած եմ, մայր, թույլ տվեք վախ պարել ձեզ հետ, պարլե՞ վու ֆրանսե...

ՄԱՐԻ – (Սիրազորով): Խենթո՛ւկ...

ԺԱԿ – Թող, այ աղջիկ, շունչս կտրվեց, ես քո հալը չունեմ...

ՀԱՅԱՐՓԻ – Սա ինչ քաղաք է, հայրիկ, սա ինչ քաղաք է, հեքիաթայի՛ն, չքնաղ, անկրկնելի...

ԺԱԿ – Բա ես քեզ ի՞նչ էի ասում, անպիտան:

ՀԱՅԱՐՓԻ – Բոլոր ածականները խեղճ ու կրակ չխկչխկաններ են Փարիզի մոտ: Իսկ հրապարա՛կը... Ասես հարյուր անգամ տեսած լինեի երագում, անգիր գիտեի, ես հանգիստ կարող էի գիդ աշխատել ուրիշների համար: Ախր այնքան ենք կարդացել, այնքան ենք կինոներում տեսել... Եվ ոչինչ չի փոխվել, թանգարան է, իսկական թանգարան... գնացի Նոտր դամ, սկզբում մեկ անգամ վազելով պտտվեցի չորս կողմը, հետո հանգիստ քայլերով մի անգամ էլ պտտվեցի, ներս մտա, շունչս կտրվում էր, երգեհոն էին նվագում, Բախ... Ես կանգնել ու լաց էի լինում, չգիտեմ ինչից, այնքան, այնքան գեղեցիկ էր... Ես մատներով թաքուն շոշափում էի քարերը...

ՄԱՐԻ – Դե լավ, նստիր, գլուխս պտտվեց...

ՀԱՅԱՐՓԻ – Չեմ կարող, թեև ոտքերս ասես իմը չլինեն... Շոշափում էի քարերը ու մտածում էի. այս քարերը շոշափել է նաև Էսմերալդան, իսկ վերնից, ինչ որ տեղից հիացմունքով նրան է նայել դժբախտ Կվազիմոդոն... Չէ, դուք չեք պատկերացնի, պապ, դու Նոտր դամում եղե՞լ ես:

ԺԱԿ – Հա, փոքր ժամանակ...

ՀԱՅԱՐՓԻ – Ուզում էի մեկ-մեկ համբուրել բոլոր քարերը, բայց ամաչում էի, ուզում էի ծունկ չոքել: Մեկ անգամ էլ այդպես Էջմիածնում է եղել, երբ պատարագ էր նվիրված Պարույր Սևակին և Կաթողիկոսը լաց էր լինում: Մեկ էլ տեսա, որ ես ծնկել եմ: Հա, անընդհատ, անընդհատ տուրիստների նոր խմբեր էին մտնում Նոտր դամ: Նրանք այնքան բարձր

են խոսում: Ես լինեի, չէի թողնի, որ տուրիստները մտնեն Աստվածամոր տաճարը: Չի կարելի...

ՄԱՐԻ – Դրամի խնդիր է, ջանքով:

ԺԱԿ – Էյֆել չբարձրացա՞ր...

ՀԱՅԱՐՓԻ – Ինչպե՞ս կարող էի չբարձրանալ: Հսկայական մի վերելակով բարձրանում հա բարձրանում էինք: Մեկ-մեկ թվում էր, թե ուղղակի դու սենյակում ես և սենյակդ է բարձրանում և ոչ թե վերելակը:

ԺԱԿ – Սրան Փարի՛զ կասեն, Փարի՛զ...

ՀԱՅԱՐՓԻ – Հասա ամենավերևի աշտարակը, տոմսս կնքել տվեցի հուշակնիքով, կոպեկ նետեցի ու սկսեցի հեռադիտակով դիտել Փարիզը... Ես այդպիսի գեղեցկություն երբեք չեմ տեսել...

ՄԱՐԻ – Բա որ ասո՞ւմ էի, բա որ ասո՞ւմ էի... Ժակ, ես էլ եմ ուզում տեսնել, ախր ես Փարիզը չեմ տեսել...

ԺԱԿ – Փոքր ժամանա՞կ էլ չես տեսել:

ՄԱՐԻ – Ո՛չ, մերոնք Մարսելից դուրս չեն եկել երբեք:

ԺԱԿ – Կտեսնես, լավ, կտեսնես...

ՀԱՅԱՐՓԻ – Կանգնել նայում էի ու մեկ էլ սկսեցի պատկերացնել, թե ես որտեղ եմ ու զլուխս սկսեց պտտվել...

ՄԱՐԻ – Աման, հո չընկա՞ր...

ՀԱՅԱՐՓԻ – Եվ գիտե՞ք որտեղից էի ինձ նայում: Երևանից: Ու գիտե՞ք ոնց: Ասես թե ես Երևանում եմ, պառկած եմ մեր պատշգամբում ու պատկերացնում եմ աշխարհի քարտեզը: Ահա Հայաստանը, ահա Սև ծովը, ահա Բուլղարիան, ահա Շվեդարիան, ահա և Ֆրանսիան... Ֆրանսիան, հետո ահա և Փարիզը... Ու Փարիզում, Էյֆելյան աշտարակի վրա կանգնած պաղպաղակ է ուտում, ո՞վ, դարձյալ ես: Դա այնքան ծիծաղելի էր, ու այնքան հետաքրքիր էր... Մենակ ափսոսում էի, որ մեր դասարանցիները հետո չէին... Ա՛խ, ինչ ասես կտայի, միայն թե իմ կողքին լինեին մերոնք:

ԺԱԿ – Հա, արտասովոր քաղաք է Փարիզը, ով մի անգամ տեսնում է, չի մոռանում այլևս...

ՀԱՅԱՐՓԻ – Օ՛յ, արդեն ուշ է: Իսկ ես սոված մեռնում եմ: Մաման, էս ինչ համով բաներ են, ուտե՞մ:

ՄԱՐԻ – Սեղանը մի խառնիր, գնա խոհանոցում կեր... Ամեն ինչ էլ կա, աղջիկս:

ՀԱՅԱՐՓԻ – Իսկ ո՞ւմ համար եք այսպես զարդարել:

(Ժակն ու Մարին նայում են իրար):

ՄԱՐԻ – Հյուրերի ենք սպասում, աղջիկս:

(Հայարփին մտնում է խոհանոց: Նրա ձայնը):

Իսկ Մանվելը գալո՞ւ է:

ԺԱԿ – Հա, կանչել եմ:

(Հայարփին ներս է գալիս՝ ձեռքին բռնած երջիկ ու հաց, ուտում է և հետո էլ խոսում):

ՀԱՅԱՐՓԻ – Ուրեմն այս վերջին շաբաթում տրամվայ նստել եմ, ավտոբուս նստել եմ, հա, գիտե՞ք, որ Փարիզում երկհարկանի ավտոբուսներ էլ կան, Անգլիայից են բերել: Բայց ոչ ոք երկրորդ հարկ չի բարձրանում, սովոր չեն ու այդպես էլ սլանում են ավտոբուսները՝ դատարկ երկրորդ հարկով, երբ առաջինում կանգնելու տեղ էլ չկա:

ԺԱԿ – Հա, ավանդապաշտ մարդիկ են:

ՀԱՅԱՐՓԻ – Հա, ուրեմն ավտոբուս նստել եմ, մետրո նստել եմ, կառք նստել եմ...

ՄԱՐԻ – Կա՞նք որտեղ ես նստել, ա՛յ սատանա...

ՀԱՅԱՐՓԻ – Ֆերո փողոցում, իսկ գիտե՞ք դա ինչ փողոց է, այնտեղ Աթոսն էր ապրում:

ՄԱՐԻ – Աթոսն ո՞վ է, Ժենեվկա:

ՀԱՅԱՐՓԻ – Երեք հրացանակիրներից չորրորդը, ինչպես...

ԺԱԿ – Ի՞նչը ինչպես...

ՀԱՅԱՐՓԻ – *(Հանգիստ):* Այդպես Աշոտն էր ասում, հայրիկ:

ԺԱԿ – Հա՛... լավ տղա էր: Բայց դու չե՞ս վախենում, այ աղջիկ, որ այդպես ազատ–համարձակ թափառում ես: Սա քեզ համար Երևանը չէ, Բալիկա:

ՀԱՅԱՐՓԻ – *(Թափ է տալիս ձեռքը):* Է՛հ, առայժմ ոչ մի գանգստերի չեմ հանդիպել:

ՄԱՐԻ – Իսկ որ տեսնես կճանաչե՞ս, որ զգուշանաս...

ԺԱԿ – *(Քնճիծաղով):* Ինչպե՞ս չի ճանաչի, գլխարկների վրա գրված է «գանգստեր»:

ՄԱՐԻ – Իսկապե՞ս:

ՀԱՅԱՐՓԻ – Օ՛հ, մաման, դու էլ ամեն ինչի հավատում ես: Հա, բայց մի բան էլ ասեմ, պապ, սրանք մեզանից վատ են հագնվում:

ԺԱԿ – Ովքե՞ր, փարիզեցիներ:

ՀԱՅԱՐՓԻ – Հա, ազնիվ խոսք, Երևանում ավելի ճաշակով ու մոդեռն են հագնվում:

ՄԱՐԻ – Ավելի, քան մոդաներ ստեղծող Փարիզը՝ Կուլիոգ...

ԺԱԿ – Միշտ էլ պապից ավելի ուղղափառներ գտնվում են, դու իրավացի ես, Ժենեվա, ես էլ եմ նկատել և նկատել եմ, որ սրանք պարահանդեսի զգեստով շուկա չեն գնում:

ՀԱՅԱՐՓԻ – Հին անեկդոտ է, հայրիկ, մեզ մոտ էլ վաղուց չեն գնում: Ես ուրիշ բան եմ ասում: Նայում ես ցուցափեղկերին, խենթանալ կարելի է, ի՛նչ զարդեր կան, ի՛նչ հագուստներ, ի՛նչ մուշտակներ, ի՛նչ կոշիկներ, չես կարողանում աչքերդ կտրել, ժամերով կարելի է կանգնել ու նայել...

ՄԱՐԻ – Բա հո գուր չեն ասում՝ Փարի՛զ...

ՀԱՅԱՐՓԻ – Բայց ժողովուրդը չի հագնում, հատուկ հետևում էի, ճիշտ եմ ասում, մամ, ժողովուրդը այդ հրաշալի բաները չի հագնում:

ԺԱԿ – Իսկ դու գներին էլ նայո՞ւմ էիր, Ժենեվա... Թե՞ մայրիկիդ նման գները քեզ էլ չեն հետաքրքրում:

ՀԱՅԱՐՓԻ – Ի՞նչ *(նա շփոթված է)*:

ԺԱԿ – Կերա՞ր *(քրքշում է)*: *(Միծաղում է նաև Հայարփին, կրկին գրկում է հորը, քաշքշում է)*: Օ՛ֆ, բաց թող, Ժենեվա, հանգիստ թող: Ջանմ, չմեծացավ այս աղջիկը:

ՀԱՅԱՐՓԻ – Ե՛ս: Ես լրիվ մեծացել եմ, հայրիկ: Եվ որպեսզի մի անգամ էլ համոզվես, հենց հիմա նորից գնում եմ զբոսնելու:

ՄԱՐԻ – Ո՞ւր, դու ոչ մի տեղ էլ չես գնա, լսո՞ւմ ես:

ՀԱՅԱՐՓԻ – Կգնամ, մաման, ըստ որում այստեղ տասնչորս տարեկանից արդեն ծնողներին չեն էլ հարցնում: Իսկ ես շուտով տասնութ տարեկան կդառնամ:

ԺԱԿ – Դե, դե, դու իսկապես որ ձեռքից գնում ես: Աղջիկս, դու արդեն մեծ ես և պետք է հասկանաս, որ Փարիզը վտանգներով լեցուն է: Ժամը հինգից հետո տարեց մարդիկ անգամ զբոսայգիներ չեն մտնում, ահավոր է, հասկանո՞ւմ ես: Ըստ որում ոստիկանները չեն թողնում: Տես բանն ուր է հասել:

ՄԱՐԻ – Երեկվա հեռուստատեսային լուրերում տասնհինգ կողոպուտի դեպք պատմեցին, օրը ցերեկով, լսո՞ւմ ես, սարսափ...

ԺԱԿ – Այդպես է: Հարբածներով ու կասկածելի մարդկանցով լի է գիշերային Փարիզը, Ժենեվեա: Ես նույնիսկ անհարմար եմ զգում վտանգները թվել քեզ... առնանգումներ են լինում, հասկանում ես, բռնի...

ՀԱՅԱՐՓԻ – Իսկ ինչո՞ւ այդ մասին մեզ մոտ չէիք ասում:

ՄԱՐԻ – Որտե՞ղ մեզ մոտ:

ՀԱՅԱՐՓԻ – Մեզ մոտ, մեզ մոտ, Հայաստանում ինչո՞ւ չէիք պատմում, որ այդպիսի սարսափելի քաղաք է Փարիզը: Այդ ինչո՞ւ էր Փարիզի ամեն ինչը ձեզ թվում հեքիաթ ու հրաշք... Թե՞ դուք ուրիշ Փարիզի մասին էիք խոսում մեզ մոտ:

ԺԱԿ – Դե բավական է, չափն անցար, մեզ մո՛տ, մեզ մո՛տ... մեզ մոտը մոռացիր, լսո՞ւմ ես, մեզ մոտ այլևս չկա, պրծավ...

ՄԱՐԻ – Ժենեվեա...

ՀԱՅԱՐՓԻ – Այդ ձե՛զ համար չկա: Եվ ինձ մի սպառնացեք: Ես ձեզանից չեմ վախենում: Ինձ համար Հայաստանը միշտ կա: Ես վերադառնալու եմ մեզ մոտ, լսո՞ւմ եք, մեզ մոտ, ես այստեղ զբոսաշրջիկ եմ, տուրիստ, պա՛րզ է: Տուրիստ: Ես ուզում եմ շատ բան տեսնել, շատ բան լսել, ես արդեն սիրում եմ այս քաղաքը և ուզում եմ աչքերիս մեջ պահել նրա ցերեկն էլ, գիշերն էլ, վատն էլ, լավն էլ, բարի մարդկանց էլ, չարերին էլ, ամեն ինչ, որովհետև դրանք իմը չեն, ես կողմնակի մարդ եմ, ես տուրիստ եմ, որը տուն է վերադառնալու, իր տունը:

(Ժակը սպառնալիորեն մոտենում է):

ՄԱՐԻ – Ժակ, չմոտենաս, չե՞ս տեսնում, որ հիվանդ է...

ՀԱՅԱՐՓԻ – Թող մոտենա, մամա, թող խփի, որովհետև մեկ է, ես նրանից չեմ վախենում: Որովհետև ես տուն եմ գնալու, մեր տուն... Լսո՞ւմ եք:

ԺԱԿ – Թող, թող, ես իսկապես կսպանեմ այդ շան լակոտին... Ահա, ահա թե ով է մեր ձախորդությունների պատճառը...

ՄԱՐԻ – Ժակ, Ժակ...

(Հնչում է դռան զանգը):

Եկան...

(Հայարփին նետվում է դուռը, լսվում են ինչ-որ ձայներ, դռան չիկոց, ներս է մտնում Մանվելը):

ՊԱՏԿԵՐ

(Ժակը, Մարին ու Մանվելը):

ՄԱՆՎԵԼ – Այդ ո՞ր այդպես փախավ, ի՞նչ է պատահել...

ՄԱՐԻ – Ժակ, հասիր, ուրեմն գնաց...

ՄԱՆՎԵԼ – Կողքովս այնպես անցավ, որ քիչ էր մնում ընկնել...

ԺԱԿ – Դե թող, ջանմ, ո՞ր պիտի գնա, մի քիչ կզբոսնի, կվերադառնա խելառը:

ՄԱՆՎԵԼ – Բարի երեկո, ողջույն, տիկին Մարի, այս ծաղիկը ձեզ... Կներեք, այսօր, ինչպես ասում են, ես մի քիչ արդեն եմ...

ՄԱՐԻ – Է՛, պարոն Մանվել, իբրև թե դուք ո՞ր օրը արդեն չեք:

ՄԱՆՎԵԼ – Հողը մեր գլխին, մենք էլ պարոն դառանք: Չէ, չէ, տիկին Մարի, հավատացեք, որ ես այստեղ չեմ էլ կարողանում հարբել ոնց որ պետքն է: Ամբողջ օրը խմում եմ ու չեմ հարբում: Սոսկալի բան է ու սոսկալի է թանկ է նստում: Բախտավոր են այն մարդիկ, որ մի բաժակով հարբում են: Ամբողջ կյանքում նախանձել եմ դրանց: Հոպ, և երջանիկ է...

ՄԱՐԻ – Ջանմ, նախանձելու բան գտաք:

ԺԱԿ – *(Գրգռված):* Հիմա ի՞նչ անենք, այ կնիկ:

ՄԱՆՎԵԼ – *(Նոր է նկատում սեղանը):* Սա՞ ինչ բան է: Սպասեք, սպասեք, հեռվից նայեմ, սպասեք հիմա էլ այս կողմից... Հաստատ նոր տարվա սեղան է... Երևանում... *(Մոտենում է խոճկորին):* Ես քո մոռլթը ուտեմ, ազիզ, վաղուց չէի տեսել: Ո՞նց ես, ոնց... լավ, ավելի մոտիկից կծանոթանանք...

ԺԱԿ – Հասկանո՞ւմ ես, որոշեցի մի թեթև խնջույք կազմակերպել...

ՄԱՆՎԵԼ – Թեթև՞, սա այստեղի մի տարվա ուտելիքն է, այ ախպեր: Եվ ո՞ւմ համար է այս թեթև սեղանը:

ԺԱԿ – Ուզեցի մի քանի հայրենակիցների հրավիրել... Դե, գիտես ինչ, օտարության մեջ ենք, պետք է ճանաչենք, օգնենք իրար...

ՄԱՆՎԵԼ – Չեն գա:

ԺԱԿ – Ինչո՞ւ...

ՄԱՆՎԵԼ – Նապոլեոն՝... Ես այստեղ դեռ չեի տեսել... Թե՞ հետո ես բերել Մոսկվայի
«Մետրոպոլ»-ից: Կարելի՞ է փորձել:

ՄԱՐԻ – Համեցեք, համեցեք, *(բաժակ է մոտեցնում)*:

ՄԱՆՎԵԼ – Շնորհակալություն... սուտ բան է, մերին չի հասնի... «Նաիրի» կոլեկցիոն... ահա
կոնյակների գլուխգործոցը, հավատացեք ինձ, սա ձեզ մի մարդ է ասում, որն իր
հայրենիքում հայտնի էր ոչ այնքան իբրև կոմպոզիտոր, որքան դեգուստատոր:
*(Նկատում է Ժակի անհամբեր շարժումը, մի բաժակ էլ է լցնում, խմում, փակում է
աչքերը, փայելում, ապա ասում)*: Չեն գա:

ԺԱԿ – Բայց ինչո՞ւ...

ՄԱՆՎԵԼ – Երկու անգամ էլ ես հիմարություն ունեցա թեթև խնջույք կազմակերպելու և այն էլ
«Շերաթոն»-ում: Կարողությանս կեսը վատնեցի և ընդամենը խմեցի մի շիշ գինի՝
մետրոպոլի հետ: Որովհետև նա միակն էր այս քաղաքում, որ ինձ ասում էր «Մայր
կոմպոզիտոր...»:

ՄԱՐԻ – Հա, բայց հրավիրես ու չգա՞ն, ապշելու բան է:

ՄԱՆՎԵԼ – Չեն գա, որովհետև նրանք մեզ համարում են դավաճան...

ԺԱԿ – Մանվել, մի նեղանա, խնդրում եմ, բայց քոնը բոլորովին ուրիշ խնդիր է:

ՄԱՆՎԵԼ – Ինչո՞ւ, որովհետև ես գնացքից եմ ցատկել, իսկ դուք եկել եք տոմսով:

ՄԱՐԻ – Իսկ գնացքից ինչո՞ւ էիք ցատկում, պարոն Մանվել, վտանգավոր չէ՞ր:

ԺԱԿ – Օ՛հ, առակի լեզվով է ասում, Մարի, *(Մանվելին)*: Թեկուզ...

ՄԱՆՎԵԼ – Եթե այդ իմաստով նայենք, իմ վիճակը ավելի նախընտրելի պետք է լիներ:

ԺԱԿ – Չեմ հասկանում, ինչո՞ւ:

ՄԱՆՎԵԼ – Որովհետև ինձ նմաններին նայում են իբրև այլախոհների, հասկանո՞ւմ ես, դա
հիմա մոդա է: Իբրև թե մենք սկզբունքի համար ենք հայրենիքից փախել: Դե, մինչև որ
մոտենում են, տնտղում, տեսնում են, որ դու ոչ թե իրենց ուզած այլախոհն ես, այլ
պարզապես հիմար լակոտի մեկը, նոր ձեռք են քաշում ու զոքանչի անեկդոտի նման
պատուհանից ցած նետում, թե ազատությո՞ւն ես ուզում, խնդրեմ, գնա ազատ
ապրիր...

ՄԱՐԻ – Հա, իսկապես, դո՞ւք ինչու եք այստեղ եկել, այնտեղ, կին ունեք, չե՞՞:

ՄԱՆՎԵԼ – Տո հենց այդ կին կոչվածից եմ փախել, տիկին Մարի, այդ կնոջից, բայց դե ո՞ւմ ասես, որ հավատա:

ԺԱԿ – Այ մարդ, բա մի կնոջ պատճառով...

ՄԱՆՎԵԼ – Դե եթե այդ կնոջն էլ ավելանում է մի անասուն, որը մեր նվագախմբի դիրիժորն էր ու անընդհատ բոլորի մոտ ասում էր, թե ինձանից երաժիշտ դուրս չի գա, երբ ես կոնսերվատորիա եմ ավարտել, պրոֆեսիոնալ դաշնակահար եմ, իսկ ինքը շրջանային մշակույթի տան դիրիժորական խմբակում չափ տալ է սովորել միայն...

ԺԱԿ – Հետո՞...

ՄԱՆՎԵԼ – Էլ ի՞նչ հետո... դրան գումարի նաև ուղեղի ժամանակավոր մթագնում և...

ՄԱՐԻ – Կներեք, պարոն Մանվել, բայց դուք իրոք որ հիմար եք: Ի՞նչ է, այստեղ անասուններ չկա՞ն...

ԺԱԿ – Մարի...

ՄԱՆՎԵԼ – Դուք շատ բարի եք, տիկին, դուք չափազանց մեղմ եք արտահայտվում: Ես այստեղ ու այնտեղ ինձ հանդիպած բոլոր անասուններից ամենախոշորն եմ:

Եվ ուրեմն այդ առիթով թույլ տվեք մի բաժակ էլ խմել...

(Լցնում է: Ժակն էլ իր բաժակն է լցնում):

ՄԱՐԻ – Ինձ էլ լցրու, Ժակ: Խմեք որքան ուզում եք, պարոն Մանվել, միայն թե չհարբեք, ինդդրում եմ: Մի բան կերեք, ախր... Ժակ, Ժակ, ի՞նչ անենք... Ախր ոչ ոք չեկավ, Ժակ...

ԺԱԿ – Ջհանդամի տակը թե չեկան: Մեր գյուղացիները հազար անգամ ճիշտ են, որ մինչև հյուրը տուն չմտնի, ոչխարը չեն մորթում: Դու այսօր քառասուն ոչխար մորթեցիր, մաղամ Մարի... Եվ հյուրերդ չեկան...

ՄԱՐԻ – Ի՞նչ ոչխար, ախ հա՛... Մեկ անգամ էլ զանգ չտա՞մ:

ԺԱԿ – Չէ, բավական է, չեկան, չեկան...

ՄԱՐԻ – Ամա՛ն, ճիշտ է, չեկան, չեկան, ավելի վատ իրենց համար, ես իմ քեֆը չեմ փչացնի: Գնամ հագնվելու, պարելու ւ եմք, պարոն Մանվել...

ՄԱՆՎԵԼ – Ե՛ս: Հաճույքով: Ձեր կենացը, չքնադափայլ տիկին Մարի...

ՄԱՐԻ – Հիմա տոնական զգեստս կհագնեմ, նոր կտեսնեք փայլը: Մաղամ Դյուբոյի կարն է:

(Դուրս է գնում):

ՄԱՆՎԵԼ – (Հանկարծ լրջացած): Հետո՞:

ԺԱԿ – Էլ ի՞նչ հետո: Որտեղ գնում եմ, ապառաժի եմ հանդիպում, եղբայր, չի ստացվում, էլի: Իմ հույսը այդ ազդեցիկ հայերն էին, այն էլ, տեսնում ես, չեկան:

ՄԱՆՎԵԼ – Հա, ովքեր մեզ պետք են, մենք իրենց պետք չենք: Ում մենք ենք պետք, իրենք մեզ պետք չեն: Աշխարհի բանն է:

ԺԱԿ – Է՛, քեզ համար ինչ կա, դու մենակ չոր գլուխ, իսկ ես ընտանիք ունեմ, կին ունեմ, որը կարծում է, թե հացը խանութում է աճում և եթե Փարիզում է, ուրեմն միլիոնատեր է: Ի՞նչ անեմ, այդպես եմ պահել...

ՄԱՆՎԵԼ – Փող ունե՞ս:

ԺԱԿ – Ի՞նչ... ինչ իմաստով:

ՄԱՆՎԵԼ – Մի վախենա, եղբայր, ես քեզանից փող չեմ ուզելու, ես քեզանից մի տարի շուտ եմ եկել և գիտեմ, որ այստեղ փող տվող չկա: Այստեղ եթե ուզում ես, որ մեկը քեզ չհանդիպի, պարտք ուզի: Էլ չես տեսնի, հոտող էլ որ առնի, կփախչի, ես քեզ համար եմ ասում՝ փող ունե՞ս:

ԺԱԿ – Դե, մի քիչ դեռ կա:

ՄԱՆՎԵԼ – Կարո՞ղ ես մասնավոր հիվանդանոց բացել...

ԺԱԿ – Ե՞ս, ծաղրո՞ւմ ես, քեզ պատմել եմ, չէ՞:

ՄԱՆՎԵԼ – Ուրեմն մասնագիտությանդ վրա խաչ քաշիր: Վերջ: Քեզ ոչ ոք բժիշկ չի ընդունի... Կենացդ...

(Խմում է):

ԺԱԿ – Բան ասա, այ մարդ:

ՄԱՆՎԵԼ – Տես ինչ եմ ասում. այնտեղից եկածներից ոչ ոք... գլխի՞ ես, ոչ ոք իր մասնագիտությամբ չի աշխատում, մեկին օրինակ բեր, ասեմ՝ Էդ մեկ... Այստեղ մարդ ինքը չի գործ ընտրում, գործն է ընտրում մարդուն, ու դու, որ ասենք իրավաբան ես, մեկ էլ տեսնում ես, որ աղբ ես տեղափոխում: Ինչո՞ւ, որովհետև ամբողջ կյանքում երազումդ միայն ա՞ղբ ես տեսել, ո՛չ, որովհետև միայն այդ գործը կա և դու պիտի կատարես այդ գործը, որովհետև սովից սատկում ես:

ԺԱԿ – Բայց դու ասացիր, թե նվագում ես, չէ՞:

ՄԱՆՎԵԼ – Այո, անգլիացի հարևանիս երեխային դաշնամուր նվագել եմ սովորեցնում:

ԺԱԿ – Ուրեմն տեսնո՞ւմ ես, որ ի վերջո հնարավոր է:

ՄԱՆՎԵԼ – Հնարավոր է, իհարկե, բայց գիտե՞ս թե վարձս ինչն է: Այն, որ իրենց տանը հաց եմ ուտում: Ուրիշ ոչինչ: Հացն էլ պայմանական եմ ասում, գետինը մտնեն այդ եվրոպացիները և անգլիացիները առաջին հերթին: Պատկերացնո՞ւմ ես, վեց ամիս շարունակ ամեն առավոտ մի բարակ չորացած հացի կտորի հետ անյուղ ձվածեղ են տալիս ու վարսակի շիլա: Այն, որ մենք ձիերին ենք տալիս: Ամեն սուրբ օր, լսո՞ւմ ես: Վերջերս արդեն նկատել եմ, որ սկսել եմ խրխնջալ...

ԺԱԿ – *(Ակամա ծիծաղում է)*: Օյինբա՛զ... Իսկ փողի համար ինչո՞ւ էիր հարցնում:

ՄԱՆՎԵԼ – Ասեմ: Վերջերս Մարսել էի գնացել, մի ծանոթի հանդիպեցի, որը խանութ ունի, բայց փող չունի: Գործնկեր էր ման գալիս: Քանի դեռ փողդ լրիվ չես մսխել, տանենք գործի մեջ դնենք, ապրենք ինչպես պետքն է:

ԺԱԿ – Ե՛ս, գործակատա՞ր...

ՄԱՆՎԵԼ – Դե քանի դեռ պրեզիդենտ չեն ընտրել:

ԺԱԿ – Ուրեմն իսկապես երկրագունդը կլոր է:

ՄԱՆՎԵԼ – Ի՞նչ իմաստով:

ԺԱԿ – Որովհետև կյանքս իբրև գործակատար եմ սկսել նույն այդ Մարսելում և ուրեմն գործակատար էլ ավարտելո՞ւ եմ: Չէ, չէ: Չի լինի, չէ...

ՄԱՆՎԵԼ – Իմ անկեղծ խորհուրդն է, Ժակ:

ԺԱԿ – Դոկտոր Հովսեփը գործակատա՞ր... Այ թե կուրախանան այնտեղ: Երբեք:

ՄԱՆՎԵԼ – Դոկտորն ինչ է, ախպերս, այստեղ նախկին ակադեմիկոս գործակատարներ էլ կան: Սրան Փարիզ կասեն: Ռեստորանի որ բարապանին մոտենաս՝ ցարական նախկին իշխանի կամ էլ դումայի անդամի ժառանգ է: Կարևորն ապրելն է: Իսկ որ աշխատես՝ կապրես:

ԺԱԿ – Չէ, չէ, մտածելու բան է, Մանվել, շատ ծանր բան ասացիր և մտածելու բան է:

ՄԱՆՎԵԼ – Բայց այնքան մտածիր, որ դրամդ բավականացնի...

ԺԱԿ – Հա, բայց դու մեջն ի՞նչ ունես, ախպերս, որքան ես քեզ ճանաչում եմ, դու հենց այնպես ոչ մեկին խորհուրդ չէիր տա:

ՄԱՆՎԵԼ – *(Ծիծաղում է)*: Ինչ ճիշտն է ճիշտը, այդ մարդը խոստացել է, որ եթե լավ գործընկեր գտնեմ իր համար, մի փոքր ավտոսայլակ տա ինձ:

ԺԱԿ – Ավտոսայլակ՞: Ավտոսայլակն ի՞նչ պիտի անես:

ՄԱՆՎԵԼ – Ձեր խանութի շրջիկ գործակատարը կդառնամ: Տաք կարկանդակ և սառը գարեջուր կվաճառեմ: Դա հիանալի գործ է, Հովսեփ: Ապրիր, ինչպես սիրտդ կուզի...

(Ներս է մտել Մարին 'մի հրաշալի երկար զգեստով, մեջքը գրեթե բաց, մազերի մեջ ժապավեն: Նա շատ գեղեցիկ է):

ՄԱՐԻ – Կարկանդակ՞... Իսկ եթե Երևանի մեջ կարկանդակ ու գարեջուր վաճառեիք, վա՞տ կապրեիք: Մի հարևան ունեինք, Վարդգես էր անունը, հենց այդ գործը կըներ, տուն որ մտնեիր՝ բարևդ կմոռանայիր... երկու «Վոլգա» ուներ...

ՄԱՆՎԵԼ – *(Ձարմացած Մարին է նայում)*: Տիկի՛ն Մարի... աչքերիս հավատա՞մ, թե հեքիաթից եք իջել...

ՄԱՐԻ – *(Ծիծաղում է երջանիկ)*: Շոր տուր, շնորհք տամ, իսկապե՞ս գեղեցիկ է, Ժակ:

ԺԱԿ – Գին չունի, մաման, թեև ընդամենը ինը հարյուր ֆրանկ արժե...

ՄԱՆՎԵԼ – Ինը հարյուր ֆրա՞նկ... մի շորի համա՞ր... Շտապիր, Հովսեփ, դեպի Մարսել, բարեկա՛մս, դեպի Մարսել, քանի դեռ ուշ չէ:

ՄԱՐԻ – *(Դեռ խաղում է, հիացած իրենով)*: Մարսե՛լ, ինչո՞ւ, Ժակ:

ԺԱԿ – Հավանաբար այնտեղ տեղավախվենք, Մարի:

ՄԱՐԻ – Ինչո՞ւ... Փարիզը լավ չե՞...

ԺԱԿ – Լավն է, շատ լավը: Բայց պիտի գնանք, որովհետև այնտեղ հայեր շատ կան, Մարի, մի գործ կգտնենք:

ՄԱՐԻ – Հայե՞ր: Ուրեմն հայերի համա՞ր պիտի գնանք:

ԺԱԿ – Հա...

ՄԱՐԻ – Իսկ ինչ է, Հայաստանում քի՞չ կային, էլ ինչո՞ւ եկանք:

ՄԱՆՎԵԼ – *(Քրքջում է)*: Օ՛, սուրբ Մարիամ...

ԺԱԿ – Օհ, վերջացրինք, վերջացրինք... Դու կարծեմ պարել էիր ուզում: Մագնիտաֆոնը միացրու, Մանվել... Այնպիսի ձայնագրություններ եմ արել՝ Փարիզի աստղերն են...

(Մանվելը սեղմում է կոճակը: Եվ հանկարծ հնչում է «Նազան իմ յարը» երգը «Մերպանտինի» կատարմամբ: Մի պահ բոլորը լուռ են, լսում են շփոթված):

ՄԱՐԻ – Դարձյալ Ժենեվկայի օյիններն են...

ԺԱԿ – Մյուս կոճակը սեղմիր, Մանվել...

(Իսկ Մանվելը լսում է վերացած ու արդեն հարբած):

ՄԱՆՎԵԼ – Ինչո՞ւ, ինչո՞ւ... Սրանից լավ բան կա՞, այ ախպեր...

ԺԱԿ – Կա, կա...

(Սեղմում է մյուս կոճակը: Ռիթմիկ երաժշտություն է հնչում ու երգ: Մարին պայծառանում է, սկսում է պարել, հրավիրում է, Ժակին: Ժակն օրորում է գլուխը, բաժակն օղի է լցնում ու խմում է: Մարին Մանվելին է հրավիրում: Սա նայում է հոգնած ու հարբած, հետո սկսում է պարել: Նրանց է խառնվում նաև Ժակը, և սկսվում է մի խենթ, աղմկոտ, վայրագ ու տխուր պար):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

(Մարսել: Ռոդրիգես Դիեգոյի խանութը: Խառը խանութ է, ամեն ինչ կա: Հիմնականում կերպասներ ու գործվածքներ: Վերնից, այս ու այն կողմից կախված են զգեստներ: Խանութի միջից փայտե սանդուղքը բարձրանում է վեր, երկրորդ հարկ, որտեղ գրասենյակն է և Դիեգո Ռոդրիգեսի բնակարանը: Խանութում, առաջին պլանում ձեռքը այտին հենած մտածկոտ նստած է Ժակ-Հովսեփը: Նրա կողքին ռուսական ինքնաեռ կա: Ներս է մտնում տարեց մի կին):

ԿԻՆԸ – Բարև ձեզ: *(Նայում է շուրջը, ապրանքներին, հետո ասում է)* Ինձ սպիտակ շալ է պետք, մայո:

ԺԱԿ – Մենք սպիտակ շալ չունենք:

ԿԻՆԸ – Ես միշտ էլ գնումներ եմ կատարում այս խանութից, սկսած դեռ այն ժամանակներից, երբ տերը քեռի Ասատուրն էր: Փոքրիկ խանութ էր, գիտե՞ք, մատնաչափ, այստեղ միայն շաքար-լոխում էին վաճառում:

ԺԱԿ – Հա, ցավում եմ, տիկին, սակայն սպիտակ շալ չունենք:

ԿԻՆԸ – Ափսոս, զարմուհիս է ամուսնանում և ես խոստացել էի սպիտակ շալ նվիրել իրեն: Հարսանիքին ամեն ինչ սպիտակ պետք է լինի, այնպես չէ՞, մայո...

ԺԱԿ – *(Մեկնուի)*: Զահլա տարավ: *(Բարձր)*: Այո, իհարկե, բայց մենք սպիտակ շալ չունենք:

ԿԻՆԸ – Երբ ես ամուսնանում էի, ինձ միանգամից հինգ հատ սպիտակ շալ էին բերել... Ես և Անրին ծիծաղից թուլացել էինք...

ԺԱԿ – *(Մեկնուի)*: Երևի մեր թվարկությունից առաջ էր:

ԿԻՆԸ – Այն ժամանակ շալերը մաքուր բրդից էին հյուսում և այնքան նուրբ, որ բոիդ մեջ հավաքվում էր: Երանելի ժամանակներ էին:

ԺԱԿ – Հա...

ԿԻՆԸ – Իսկ հիմա... *(ձեռքը պայուսակի մետաղյա բռնակին է տանում ու ցնցվում է)*: Տեսա՞ք, խփեց, ամեն ինչ սինթետիկա է, ամեն ինչ, հագուստդ սինթետիկա է, կոշիկդ սինթետիկա է, հատակին սինթետիկա է, առաստաղին սինթետիկա է, վարագույրներին սինթետիկա է, կերածդ սինթետիկա է... Չես կարողանում շարժվել, ինչին ձեռք ես տալիս *(ակամա մատը դիպցնում է ինքնաեռին ու ցնցվում է)*... Տեսա՞ք, խփեց, սինթետիկա է:

ԺԱԿ – *(Ժպտում է)*: Այո...

ԿԻՆԸ – Ուրեմն սպիտակ շալ չունե՞ք... ափսոս, սպիտակն ամենալավ գույնն է, հատկապես պսակադրության ժամանակ, օ՛ լա, լա, սպիտակ, մաքուր, անարատ...

ԺԱԿ – *(Մեկնուսի)*: Հա, դե գոնե ինչ որ բան անարատ պիտի լինի...

ԿԻՆԸ – Ինչպե՞ս...

ԺԱԿ – Ինչ արած, ցավում եմ, որ սպիտակ շալ չունենք:

ԿԻՆԸ – Այո, ափսոս, ցտեսություն:

(Մեկնում է ձեռքը: Ժակը նստած տեղից բռնում է այն: Երկուսն էլ ցնցվում են):

Տեսա՞ք, էլի խփեց...

ԺԱԿ – *(Մեկնուսի)*: Այս կինը հոսանքի աղբյու՞ր է, ինչ է...

(Կինը հենց ուզում է դուրս գալ՝ փայտյա սանդուղքով արագ ցած է իջնում Դիեգո Ռոդրիգեսը՝ զիրուկ, բայց արագաշարժ մի մարդ):

ԴԻԵԳՈ – Մեկ վայրկյան, մադամ Տիբո:

ԿԻՆԸ – Օ՛, ողջոյն, մայո Դիեգո: Ինչպե՞ս եք:

ԴԻԵԳՈ – Շնորհակալություն, ես լսեցի, որ դուք սպիտակ շալ եք ուզում:

ԿԻՆԸ – Օ, այո, զարմուհիս ամուսնանում է և ես խոստացել էի...

ԴԻԵԳՈ – Իմ գործընկերը նոր մարդ է, ապրանքների տեղը դեռ չգիտե, կներե՞ք մեզ, մադամ, մեկ վայրկյան, մայո Ժակ, սուրճ դրե՞ք մադամ Տիբոյի համար, նա մեր ամենալավ հաճախորդներից մեկն է, ես հիմա շալը կբերեմ...

ԺԱԿ – Բայց իսկապես սպիտակ...

ԴԻԵԳՈ – Հիմա կբերեմ, մադամ Տիբո, նստե՛ք, հանգստացե՛ք մի քիչ...

(Աթոռը մոտեցնում է, նստեցնում է տիկնոջը ու ինքը դուրս գալիս):

ԿԻՆԸ – Մայո Ռոդրիգեսը նոր մարդ է Մարսելում, հազիվ տասնհինգ տարի կլինի, ինչ այս տունը գնել է քեռի Ասատուրից: Ես լավ հիշում եմ:

ԺԱԿ – Դուք ինչո՞ւ եք նրան քեռի Ասատուր անվանում, կներե՞ք, մադամ...

ԿԻՆԸ – Իսկ ի՞նչ պետք է անվանեմ, մայո:

ԺԱԿ – Նրա անունը Ասատուր է:

ԿԻՆԸ – Ի՞նչ և ոչ թե Քեռիասատո՞ւր... Անպայման սխալվում եք, մայր, ես նրան հիսուն տարի գիտեմ: Իսկ միթե՞ նրա անունը Քեռիասատուր չէ, մենք միշտ այդպես ենք ասում: Է՛, լի տուն էր, մայր: Հետո մանրացավ: Աղջիկն ամուսնացավ, Կանադա գնաց: Տղան Ավստրալիայում գործի անցավ: Ինչո՞ւ են մարդիկ թափառում, հը՞, մայր, ինչո՞ւ մարդիկ ոչ մի տեղ հանգիստ չունեն: Իսկ հետո մադամ Սյուզանը մահացավ, աստված նրա հոգին լուսավորի, և քեռի Ասատուրը մենակ մնաց այս աշխարհում: Ահա հենց այդ ժամանակ էլ մայր Դիեգոն գնեց նրա տունը: Ես լավ գիտեմ, գոհություն ասածո, հիշողությունից չեմ բողոքում, թեև երբեմն ավստոսում եմ, որ հիշողություն ունեմ:

ԺԱԿ – *(Մուրճ է մատուցում):* Խնդրեմ, մադամ:

ԿԻՆԸ – Մեղսի... *(պայուսակից ուզում է հանել սիգարեթը ու նորից ցնցվում է):* Տեսա՞ք, խփեց... *(Խմում է):*

(Ներս է մտնում Դիեգոն):

ԴԻԵԳՈ – Ահա և ձեր ուզած շալը, մադամ Տիբո: Շնորհակալություն, որ մեզ չեք մոռանում: Հա, ի դեպ նոր ասեղնագործ թաշկինակներ եմ ստացել Թեհրանից, ահա, խնդրեմ, քիչ է, միայն իմ լավ հաճախորդների համար եմ պահում: Ինչ արած, լավ ապրանքները քանի գնում պակասում են...

ԿԻՆԸ – Ի՞նչ պետք է վճարեմ, մայր Ռոդրիգես:

ԴԻԵԳՈ – Շտապելու բան չկա, ինչպես միշտ՝ ամսվա վերջին, մադամ:

ԿԻՆԸ – Մեղսի, մայր:

ԴԻԵԳՈ – Մեղսի, մադամ:

(Կինը դրան բռնակը բռնելով նորից ցնցվում է, ետ է նայում):

ԿԻՆԸ – Տեսա՞ք, խփեց... *(հեռանում է):*

ԺԱԿ – *(Օրհնադրում է):* Էլեկտրական մարտկոց է անաստվածը, էլեկտրական մարտկոց:

ԴԻԵԳՈ – *(Կանգնում է նրա առջև, խիստ):* Երկու:

ԺԱԿ – Երկու ի՞նչ, դոն Դիեգո:

ԴԻԵԳՈ – Ես քո աշխատանքը գնահատում եմ երկու:

ԺԱԿ – Ինչո՞ւ:

ԴԻԵԳՈ – Հաշվում եմ սխալներդ: Նախ՝ հաճախորդ ներս մտավ և դու ոտքի չկանգնեցիր: Մեկ: Հաճախորդը դիմեց քեզ, դու նորից ոտքի չկանգնեցիր: Երկու: Նա քեզանից սպիտակ շալ ուզեց, իսկ դու ասացիր չկա: Երեք:

ԺԱԿ – Բայց իսկապես չկար:

ԴԻԵԳՈ – Իսկ ես որտեղի՞ց գտա:

ԺԱԿ – Անկեղծորեն զարմացած եմ:

ԴԻԵԳՈ – Զարմանալու փոխարեն սովորություն ունեցիր դիտելու հարևան խանութների ցուցափեղկերը: Նա քեզ հետ ուզում էր զրուցել, իսկ դու խուսափում էիր, չորս: Նա ուզում էր սիգարետ ծխել, իսկ դու վառիչը չհանեցիր, հինգ: Նա քեզ ցտեսություն ասաց և դու նստած տեղից ձեռքդ մեկնեցիր նրան: Վեց: Այդ ո՞ր աշխարհում են կնոջը նստած բարևում, հը՞: Նա դուրս եկավ և դու դուռը չբացեցիր նրա առաջ, յոթ, դու նրան որևէ այլ ապրանք չառաջարկեցիր, ութ... Այդ ամբողջ ժամանակամիջոցում միայն մեկ անգամ ժպտացիր, ինը: Շատ չէ՞, մայո Ժակ: Մարդը գալիս է, որ իր դրամը քեզ տա, ինչո՞ւ չես ժպտում, ինչո՞ւ ոտքի չես կանգնում, ինչո՞ւ շնորհակալություն չես հայտնում նրան: Դու իմ հաճախորդների՞ն ես ուզում փախցնել...

ԺԱԿ – *(Կոտրված)*: Տրամադրության չունեի, դոն Դիեգո:

ԴԻԵԳՈ – Ուրեմն ավելի պիտի ժպտայիր, պիտի լայն բացեիր բերանդ, պիտի ծիծաղեիր, պիտի երջանիկ ցույց տայիր քեզ, որ նա մտածեր, թե քո տրամադրությունը բարձր է, թե մեզ մոտ ամեն ինչ լավ է, թե մենք ծաղկում ենք: Սովորիր տղաս, սովորիր...

(Ետ է դառնում ու կրկին բարձրանում սանդուղքով):

ԺԱԿ – *(Կոտրված)*: Չէ, եղբայր, սա ինչ գործ է...

(Ներս է ընկնում Մանվելը):

ՄԱՆՎԵԼ – Բարի լույս, Ասատուր քեռին ներքնահարկո՞ւմ է:

ԺԱԿ – Հա, լսիր, Մանվել, ես քեզ ասելու բան ունեմ...

ՄԱՆՎԵԼ – Հետո, հետո, Ժակ, գործս կանգնած է:

ԺԱԿ – Սպասիր, հինգ րոպե չե՞ս կարող լսել, ինչ է:

ՄԱՆՎԵԼ – *(Քայլելով անհետանում է դռներից մեկի ետևում)*: Հետո, հետո, ընդմիջմանը...

ԺԱԿ – Խելագարվելու երկիր է, ջանմ, ես այս բոլորը վաղուց մոռացել էի: *(Նկատելով, որ կրկին հայտնվել են Մանվելն ու Ասատուր քեռին, որոնք ձեռնասայլակով արկղեր են դուրս բերում)*:

ԺԱԿ – Մանվել, այ տղա, մի բան հարցնեմ, նոր գնա...

ՄԱՆՎԵԼ – Հետաքրքիր մարդ ես, ասում եմ գործս կանգնած է, հաճախորդներ են սպասում...

(Դուրս են գալիս):

ԺԱԿ – *(Հեզմանքով):* Հաճախորդներ... Կարծես թե սիմֆոնիկ նվագախումբն է սպասում...
մայր կոմպոզիտոր... գարեջրավաճառ...

(Ներս է գալիս մի ծեր մարդ, գավազանով: Ժակն ուզում է մոտենալ նրան, բայց հանկարծ կանգնում, քարանում է տեղում: Փախչելու, անհետանալու շարժում է անում, բայց մարդը դիմում է նրան):

ՊՈՏՈՍՅԱՆ – Բարև ձեզ, մայր, քեռի Ասատուրն այստեղ չէ՞:

ԺԱԿ – *(Հազարով):* Քիչ առաջ դուրս եկավ, հիմա կգա, պարոն Պոտոսյան:

ՊՈՏՈՍՅԱՆ – Ինչպե՞ս, դուք ինձ գիտե՞ք, իսկ դուք ո՞վ եք, ես ձեզ կարծես թե չեմ ճանաչում:
Սպասիր, սպասիր...

ԺԱԿ – Հովսեփն եմ, ուսուցիչ, մշեցի Վարդանի տղան եմ:

Դուք ինձ հայերեն էիք սովորեցնում, չե՞ք հիշում:

*Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող բոց ելաներ,
Եվ ի բոցեն վազեր իարտյաշ պատանեկիկ...*

ՊՈՏՈՍՅԱՆ – Հովսեփ, Հովսեփ, Հովսեփ, Զարուկին եղբայրը չե՞ս... մանչս:

ԺԱԿ – Ես եմ, պարոն Պոտոսյան:

ՊՈՏՈՍՅԱՆ – Հազար տարի է անցել... Մոտ եկ, գրկեմ քեզ, ձագուկս, ուրեմն Հայրենիքից ես եկել, աչերիդ մեռնեմ, եկ համբուրեմ աչերդ, Հայաստանս ինչպե՞ս է, էլի արևո՞տ է, արևին մեռնեմ: Այս ի՞նչ լավ օր բացվեց, այս ինչ լավ ես արել, որ եկել ես: Շուտ շուտ պիտի գաք, ախր մենք ձեզանով ենք ապրում, ախր հայրենիքն է, որ մեզ հայ է պահում, ախր կամաց-կամաց ջնջվում ենք, մանչս, հայ երեխաներին որպեսզի հավաքենք, հայտարարություններն արդեն ֆրանսերեն ենք գրում, բալաս, պարոն Պոտոսյանը այլևս գործ չունի, պարոն Պոտոսյանի հոգսը թեթևացել է և հոգին է ծանրացել: Հայերը վերանում են, հայաստանցիները վերանում են: Քեռի Ասատուրը տեսա՞ր, Մարսելի վերջին վանեցին է, մեկ վերջին սասունցի է մնացել, մեկ վերջին մշեցի է մնացել, մեկ վերջին դարսեցի է մնացել, մեկ վերջին էրզրումցի է մնացել, մեկ վերջին գեյթունցի է մնացել... մեկ, մեկ, մեկ, մնացածը մարսելցի են, մարսելցի: Է՛, Մարսելից հայ կծնվի՞, ձագս, Լոնդոնից հայ կծնվի՞...

ԺԱԿ – Պարոն Պոտոսյան...

ՊՈՏՈՍՅԱՆ – Չի ծնվի, սուտ է, հայ կծնվեն ու ֆրանսիացի կմեռնեն, հայ կծնվեն ու անգլիացի կմեռնեն, իսկ նրանց գավակները այլևս հայ էլ չեն ծնվի: Վերջ: Ի՛նչ լավ ես արել, որ եկել ես, մանչս, քանի՞ օրով ես եկել, ինչ էլ լինի, մեր ակումբը պիտի գաս, երեխաներին պատմես իրենց հայրենիքի մասին: Չէ չասես, պարտավոր ես: Հետո նկարներ ու սլայդներ բերե՛լ ես, կինոժապավեն բերել ես, ձայնասկավառակներ բերե՛լ ես...

ԺԱԿ – Այնքան անակնկալ...

ՊՈՏՈՍՅԱՆ – Հոգ չէ, դու եկ, հենց այսպես եկ, եկ ու հայերեն խոսիր, հայերենին կարոտ մարդիկ են, հայրենիքին կարոտ մարդիկ են, անուշա, դու միայն հայերեն խոսիր...

(Սանդուղքի վրա հայտնվում է Դիեգո Ռոդրիգեսը, նայում է, ապա նորից ետ է դառնում):

Ես Հայրենիքում երկու անգամ եղել եմ, գիտե՞ս, հապա՞, ծերությանս մի նայիր, ոչ ոք ետևիցս հասնել չէր կարող, խենթի նման կպտտեի, կվազեի, կնայեի, գիշերները քունս չէր տաներ, դուրս կելլեի ու փողոցները կչափչփեի թափառականի պես, անօթևանի պես, սիրահարի պես: Ու ամեն օր, ամեն օր անընդհատ կգարմանայի, որ մարդիկ հայերեն կխոսեն, բոլորը՝ գեղջուկն էլ նախարարն էլ, կոշկակարն էլ, ոստիկանն էլ, իսկ երեխաները... շատ տղաքներն ինձի հայերեն կսովորեցնեին: Ի՛նչ երջանիկ մարդիկ եք, աստված:

ԺԱԿ – Ափսոս, ես չեմ իմացել, որ եկել եք...

ՊՈՏՈՍՅԱՆ – Ժամանակ չունեցա ձեզի այցի գալու, բայց ձեր մասին միշտ հետաքրքրվել եմ, գիտե՞ս: Ամեն ինչ գիտեմ: Եվ քեզ ուրիշ բան պետք չէ, եկուր ու մեր երեխաներին հենց ձեր մասին պատմե, այն խեղճ ու որբ աղջկա, որ այսօր երևելի մանկավարժ է, նրա որդու մասին պատմե, որ նշանավոր գիտնական է դարձել, քո մասին պատմե, ավագակ, որ գործակատարի աշակերտ էիր հենց այս քաղաքում, իսկ հիմա ճանաչված բժիշկ ես: Քի՞չ է: Բոլորին կհավաքեմ, մեծերին էլ, պատիկներուն էլ, թող գան լսեն: Իսկ դու հայերեն խոսիր, կարոտած մարդիկ են, հայերեն խոսող քիչ կա հետները:

ԺԱԿ – *(Գրեթե հուսահատ):* Ուսուցիչ, որքան էլ ծանր լինի, ստիպված եմ ասել, որ...

ՊՈՏՈՍՅԱՆ – Ոչ մի խոսք, ոչինչ լսել չեմ ուզում, պիտի գաս: Միայն մի բան պիտի խնդրեմ, ես քեզ չգիտեմ, դրա համար կխնդրեմ, հանկարծ ու չոր չխոսես հետները, հեզանքով չխոսես ու, գիտես ինչ, վերևից չխոսես, տղաս: Հայերի հետ ոչ ոք աշխարհում վերևից խոսելու իրավունք չունի: Նույնիսկ հայերը: Մեկն եկել էր, խոսեց, սիրտները շատ կոտրվեց: Նման մարդկանց մի ուղարկեք: Հանկարծ չասես, թե էլ ինչ հայ եք, որ հայրենիք չեք գալիս, հանկարծ չասես, թե աշխարհի բոլոր հայերը պարտավոր են վերադառնալ Հայաստան: Պարտավոր են, բայց դուք մի ասեք. բարդ խնդիր է, ծանր հարց է, հեշտ չէ, զավակս: Մարդիկ իրենց կամքով չեն ցրվել աշխարհով մեկ, դա աստծո մեղքն է, դա նրանց մեղքը չէ, դա նրանց պատուհասն է, ողբերգությունն է,

դժբախտությունն է: Ամեն մեկը իր առանձին դժվարությունն ունի ու իր առանձին ցավը, տղաս...

(Ներս է մտնում Ասատուր քեռին: Ձեռքին փոքրիկ ավել կա):

Ահա, բարև, քեռի Ասատուր, ինչպե՞ս ես...

ԱՍԱՏՈՒՐ – Բարին արևիդ, վարժապետ...

ՊՈՏՈՍՅԱՆ – Ասում եմ, ինչպե՞ս ես, լա՞վ ես...

ԱՍԱՏՈՒՐ – Եթե ուզում ես ասեմ, որ լավ եմ, լավ եմ:

ՊՈՏՈՍՅԱՆ – Իսկ տղեկներից ի՞նչ լուր, լա՞վ են, նամակ կգրե՞ն...

ԱՍԱՏՈՒՐ – Նամակ կստանամ, լավ են... թող լավ ըլնեն:

ՊՈՏՈՍՅԱՆ – *(Ժակին)*: Ահա, սիրելի Հովսեփ, նրանցից մեկը, դե եկ ու հասկացիր: Հիսուն տարուց ավելի է, ինչ Մարսելում է ապրում, բայց ֆրանսերեն չգիտի, ոչ մի բառ, չի ուզում սովորել, Եվ վերջ:

Քեռի՛ Ասատուր:

ԱՍԱՏՈՒՐ – Լսում եմ, վարժապետ:

ՊՈՏՈՍՅԱՆ – Ինչո՞ւ ֆրանսերեն չես սովորում, քեռի Ասատուր...

ԱՍԱՏՈՒՐ – Ես էս ազգին ասելու բան չունիմ:

ՊՈՏՈՍՅԱՆ – Է՛, քեռի Ասատուր, քեռի Ասատուր... հիմա ոչ կողքիդ աղջիկ ունես, ոչ տղա ունես, քեզ արդեն այստեղ պահող ոչինչ չկա...

ԱՍԱՏՈՒՐ – Ե՞տք...

ՊՈՏՈՍՅԱՆ – Գուցե հայրենի՞ք վերադառնաս:

ԱՍԱՏՈՒՐ – Վա՞ն:

ՊՈՏՈՍՅԱՆ – Ի՞նչ Վան, եղբայր, Հայաստան, երկիր...

ԱՍԱՏՈՒՐ – Է՛, երկիր Վան չի՞, այ բալամ: Իմ երկիր Վանն ի, ախպերս... կհասկանա՞ս, Վան և ոչ մեկ տեղ:

ՊՈՏՈՍՅԱՆ – Ուրեմն քեզ համար Մարսելը ոչ մի տե՞ղ է:

ԱՍՍՏՏՈՒՐ – Հա: Մարսելն էլ, Փարիզն էլ, Նյու Յորքն էլ, հա, տո իսկի ոչ մի տեղ էլ չի: Ինձ համար ուրիշ ի՞նչ երկիր, իմ երկիր, իմ պապերի գերեզմաններ, իմ հոր արյուն, իմ ծնունդ, աստուծով ինձ տված պարզ իմ Վանն ի, իր պատկերաց մեռնիմ ու իր այգեստաններաց, իր հովերաց մեռնիմ ու իր ծով ալիքներաց:

ԺԱԿ – *(Ակամա խառնվելով)*: Ուրեմն իսկապե՞ս այդքան գեղեցիկ էր Վանը, քեռի Ասատուր:

ԱՍՍՏՏՈՒՐ – Յա, էս տղեն կասի գեղեցի՞կ էր, հրաշք էր, բալա, հրաշք էր, դրախտ խոսք որ կլսես, մեր Վանն էր: Ու շատ կիսնդրեմ, մեկ էլ դու իմ սրտի հետ չխաղաս, վարժապետ:

ՊՈՏՈՍՅԱՆ – Ե՞ս, էս ի՞նչ ասացի, որ...

ԱՍՍՏՏՈՒՐ – Սրտիս շատ ծանր եկավ, վարժապետ, որ դու ասացիր մոռացիր էտա Վան: Դու քո Տարոն կմոռնա՞ս: Չասես, մեկ էլ եղ խոսք չասես, անուշա: Վան մոռնա՞լ կլինի: Ես կապրեմ, որովհետև կհիշեմ Վան: Եվ եթե դու է՛դ խոսքեր կսովորեցնես մեր տղեկներին, մեղքի տակ մի ընկնի, ուրիշ գործ գտիր քեզ համար: Դու նրանց ուրիշ բան պիտի ասես, ուրիշ խոսք:

ՊՈՏՈՍՅԱՆ – Ի՞նչ, քեռի Ասատուր...

ԱՍՍՏՏՈՒՐ – Դու շատ լավ գիտես, թե ինչ: Դու պիտի ասես մեր տղեկներուն և աշխարհի ամեն մի հայ վարժապետ, ամեն մի դպրոցի մեջ ու ամեն մի տան մեջ իր սաներուն պիտի ասե և ասե որպես պատգամ ու նզովք, թե՛ անիծյալ լինեք դուք, եթե երբևէ մոռանաք ձեր երկիր, ձեր Վան, Բիթլիս, Սասուն, Չեյթուն, Էրզրում և մյուսներ: Անիծյալ լինեք, եթե մոռանաք, թե ով եք, որտեղից եք եկել և ուր պիտի գնաք: Այսքանը, ամեն:

(Լռությամբ):

ՊՈՏՈՍՅԱՆ – Լսեցի՞ր, Հովսեփ, կտեսնե՞ս, թե որքան ցավոտ ու բարդ է խնդիրը:

ԱՍՍՏՏՈՒՐ – Իսկ դու էտա ո՞ւմ կասես, վարժապետ:

ՊՈՏՈՍՅԱՆ – Չգիտե՞ս, քեռի Ասատուր, սա Հովսեփն է, նախկին մարսելցի, մշեցի Վարդանի տղան է, Երևանի մեջ բժիշկ կաշխատե, դոկտոր, հայրենիքից է եկել...

ԺԱԿ – Պարոն Պոտոսյան...

ԱՍՍՏՏՈՒՐ – Հա՞, կսխալիս, վարժապետ, այս տղան մեր խանութ կաշխատի և անունն էլ Ժակ ի... Եվ հայրենիքից էլ եկել է... ընդմիշտ...

ՊՈՏՈՍՅԱՆ – Դե՞...

ԺԱԿ – Ուսուցիչ, ներիր ինձ, աղաչում եմ, էս չհասցրի սկզբից ասել, հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ...

ՊՈՏՈՍՅԱՆ – Դու... դու եկել ես որ սպանե՞ս ինձ... որ սպանե՞ս մեզ:

ԺԱԿ – Ուսուցիչ...

ՊՈՏՈՍՅԱՆ – Այդ բառը մի արտասանիր, թե չէ ես ավելորդ կհամարեմ իմ ապրածը: Դու...
դու ուրեմն եկել ես, որ իմ վերջին ուժե՞րը խլես... Եվ ո՞ւմ հետ էի ես խոսում:

(Օրորվելով դուրս է գալիս):

ԱՍՍՏՈՒՐ – Է՛, ես էլ գնամ իմ գործին...

(Հեռանում է):

ԺԱԿ – Ես ինչ անեմ, ես ի՞նչ անեմ, սա ի՞նչ բան է: Ի՞նչ են ուզում բոլորը ինձանից: Ինչո՞ւ չեն թողնում, որ ապրեմ ես: *(Գոռում է):* Ինչո՞ւ չեն թողնում, որ ապրեմ ես...

ՊԱՏԿԵՐ

(Հովսեփի բնակարանը: Գիշեր է: Սենյակներից մեկը: Գրասեղանի առջև, սեղանի լապտերի լույսի տակ նամակ է գրում Հայարիին: Նրա դիմացի պատին Երևանի պատկերներ են, Պարույր Սևակի նկարն է և Աշոտի փոքրիկ, աշակերտական նկարը):

ՀԱՅԱՐԻ – (Կադրի ետևից): Բարև, հորաքույր ջան, իմ սիրելի, իմ բարի, իմ լավ հորաքույր: Չեմ թաքցնի, ես շատ վատ եմ և եթե ձեր և իմ դասընկերների նամակները չլինեին, չգիտեմ, թե ինչ կանեի: Հորաքույր ջան, երբ այդտեղ լաց էի լինում, թե չեմ կարող ապրել առանց Երևանի, առանց ձեզ, իրականում չէի պատկերացնում, թե ինչ եմ կորցնում: Եվ հիմա եմ զգում, որ կարոտից խելագարվում եմ: Առաջին օրերը այնքան ծանր չէին, որովհետև շատ հետաքրքիր էր: Նոր քաղաքներ էի տեսնում, թանգարաններ էի գնում, զբոսնում էի այգիներում, ամեն ինչ ինձ համար արտասովոր էր և զարմանալի: Իսկ հիմա ոչինչ չեմ տեսնում, ոչինչ չեմ ուզում տեսնել, միայն ձեզ եմ ուզում տեսնել, միայն մեր տունն եմ ուզում տեսնել, և ուզում եք հավատացե՞ք, ուզում եք՝ չէ, միշտ պատկերացնում եմ, որ մեր դասարանցիների հետ լեփ-լեցուն ավտոբուսով տուն եմ գնում և ինձ այնպես են սեղմել, որ շունչս կտրվում է, շունչս կտրվում է ու մենք քրքջում ենք, նայում ենք իրար ու քրքջում ենք: Այդ ի՞նչ երջանկություն էր, հորաքույր: Ու մեկ էլ նոր տարին եմ հիշում, երբ դասարանցիներով հավաքվում էինք ու երգելով, քրքջալով, պարելով տնից տուն, տնից տուն...

Մեզ մոտ հայրիկը մեկ էլ իրիկունը բակ էր իջնում, նարդին բացում էր ու նստում: Մեկ էլ հարևանները հավաքվում էին՝ մեկը դավուրմա էր բերում, մեկը մի ափսե թթու, մեկը հաց էր բերում, մեկը մի շիշ գինի, մեկը լոբի էր բերում, մեկը խաշած կարտոֆիլ... և ի՞նչ քեֆ էին անում, ինչ աղմուկ-աղաղակ էր, ի՞նչ ուրախություն...

Հիմա հայրիկն աշխատում է առավոտից մինչև ուշ երեկո, և ոչ ոք մեզ հյուր չի կանչում և մենք էլ ուրիշներին չենք կանչում: Այսինքն մի անգամ հայրիկի մանկության ընկերը, մի ֆրանսիացի ընթրիքի էր հրավիրել հայրիկին ու մայրիկին, և նրանք ինձ էլ տարան: Եվ չէք հավատա, ախր ոչ ոք չի հավատա, բայց այդ մարդը հայտարարեց, թե ներեցեք, բայց ընթրիքը չորս հոգու համար է պատվիրված, ձեր աղջիկը նախատեսված չի եղել և ուրեմն նրան ընդունել չենք կարող:

Հայրիկը կարմրեց, իսկ ես ուղղակի դուրս փախա...

Դուք ո՞նց եք այստեղ ապրել, հորաքույր:

Ես չեմ կարողանում, չեմ ուզում ապրել: Այստեղ Երևանից մի տղա էլ կա, ծնողները գոռով են բերել, ինձ նման, փորձել է ինքնասպան լինել ու ցած է նետվել երրորդ հարկից: Հիմա հիվանդանոցում ծանր վիճակում պառկած է: Ես էլ ինքնասպան կլինեի, հորաքույր, ազնիվ խոսք, բայց գիտեմ, որ ինչ էլ լինի գալու եմ: Գալու եմ: Եթե նույնիսկ թույլտվություն չտան, իբրև տուրիստ կգամ ու կմնամ: Որովհետև այսպես ապրել չի կարելի, հորաքույր: Մեր տանը ոչ մեկը մյուսի հետ չի խոսում: Այսինքն իրար չենք էլ տեսնում, որ խոսենք: Հայրիկը միշտ ուշ է տուն գալիս ու հեռուստացույցի առջև քնում է, մայրիկը հիվանդ է, ինչ-որ ցավ ունի, սկսել է խմել ու միշտ հարբած է տուն գալիս: Հայրիկը սկզբում կռվում էր, իսկ հիմա չի խոսում այլևս: Իսկ ես որպեսզի տուն չգամ, գիշերային պահակ եմ աշխատում Ֆրանսիայի կոմկուսի Մարսելի քաղկոմի ակումբի շենքում և ցերեկներն է տարածում եմ «Յումանիտեն»:

Այնտեղ ես հնարավորություն ունեմ ձեզ հետ լինելու, խոսելու ձեր մասին, իմանալու, թե ինչ է կատարվում մեր երկրում, մեր Հայաստանում: Իսկ մայիսի 1-ին մենք ցույցի դուրս եկանք: Մեր ցույցերի նման է, բայց ուրախություն չկա, ամեն ինչ լուրջ է, խիստ է և զսպված, անընդհատ պրովոկացիայից են զգուշանում: Իսկ ես ինքս կարել էի Սովետական Հայաստանի դրոշը, ամրացրել փայտին ու ինքս էլ տանում էի: Մեր մեջ հայ կոմունիստներ էլ կան, այնպես էին ուրախացել, բոլորը հավաքվել էին իմ շուրջը և այդպես էլ քայլում էինք և մեր հիմնն էինք երգում: Ու ես լաց էի լինում, որովհետև ուզում եմ, որ Երևանում երգեմ մեր հիմնը:

Դե լավ, հորաքույր, ցտեսություն, ու եթե Աշոտը էլի ձեր տուն գա, ասեք թող հիմար-հիմար նամակներ չգրի: Կներեք, հորաքույր, բայց նրան թվում է, որ եթե Ֆրանսիա է, ուրեմն մարդիկ էլ ուրիշ բան ու գործ չունեն ու միայն համբուրվում են: Ըստ որում, խոսքը մեր մեջ, Երևանում համբուրվողներն ավելի շատ են:

Դե, նորից ցտեսություն, հորաքույր ջան, գնում եմ հերթապահության, մայրիկը դեռ չկա, իսկ հայրիկն արդեն քնած է:

Համբուրում եմ, գրկում եմ ամուր-ամուր, հուսով, որ մի օր տեսնելու եմ ձեզ... բոլորիդ:

Քո Հայարփի

Հ. Գ. Որովհետև Աշոտից խռով եմ, խնդրում եմ, հորաքույր ջան, իրեն ասես, որ Ջեկոյի վերջին նկարը ուղարկի իր հետ:

Հայարփի

ՊԱՏԿԵՐ

(Ռոդրիգեսի խանութը: Նույն տեսարանը: Վանի մի հին երգ դնդնալով ներս է մանում քեռի Ասատուրը: Ժակը նստած է իր տեղում, ինքնատեղի առաջ, վաճառասեղանի ետևում):

ԱՍՍԱՏՈՒՐ – Աշխարհքին բարի լույս:

ԺԱԿ – Բարի լույս, բարի լույս, քեռի Ասատուր: Տրամադրությունդ լավ է:

ԱՍՍԱՏՈՒՐ – Տղա, էս երգ դամարս ի մտի, չեմ կանա հանի. տրամադրության խնդիր չի, ինչ կանեմ մտքես չի երթա, դիտավորյալ ուրիշ երգեր կդնդնամ, էլի էս երգ առաջ կուգա...

ԺԱԿ – Է՛, դուք էլ երգեք, ինչ կա...

ԱՍՍԱՏՈՒՐ – Է՛հ, էս երգի հետ այնպիսի հիշողություններ աչքիս կերևան, որ քիչ մնա պառկեմ ու գայլի նման կաղկանձեմ... Էս ի՞նչ տեսակ է մարդ կառուցված: Էրեկվա կերածս չեմ հիշե, համա մանկությունս մեկիկ-մեկիկ, ժամ-ժամ աչքիս առջևով կանցնի և նույնիսկ պապիս ֆեսի ծոպի գույն կհիշեմ ու դեղին սաթ տերոդորմյան, երբ կնստեր ծալապատիկ, քարերը կքաշեր ու կխոսեր բեղի տակ՝ «խեր, շառ, աստված, խեր, շառ, աստված, հայկական հարցի լուծում ժամանակի խնդիր ի...»:

ԺԱԿ – Հա, մենք՝ հայերս, փիլիսոփայել շատ ենք սիրում:

ԱՍՍԱՏՈՒՐ – Տղա, դու Ավետիք Իսահակյան տեսա՞ծ ես:

ԺԱԿ – Իհարկե, քեռի Ասատուր, շատ եմ տեսել:

ԱՍՍԱՏՈՒՐ – Բախտավոր մարդ: Մարսել էլ եղել է, գիտե՞ս, ով գիտե, երևի ինձանից շաքար-լոխում էլ է առել, համա հազար ափսոս, չեմ իմացել, որ ինքն ի:

ԺԱԿ – Է՛, որ տեսնեիք, ինչ պետք է անեիք:

ԱՍՍԱՏՈՒՐ – Հեչ բան, փող չէի առնի ու խորը խորապես գլուխ կտայի...

ԺԱԿ – Ես նրան շատ եմ տեսել, քեռի Ասատուր...

ԱՍՍԱՏՈՒՐ – Բախտավոր մարդ: Տղա, շատ մեծ մարդ էր Իսահակյան, չէ՞...

ԺԱԿ – Իհարկե, քեռի Ասատուր...

ԱՍՍՏՈՒՐ – Հա, շատ մեծ մարդ է եղել, շատ, ու գիտե՞ս թե հազար ինն հարյուր տասներեք թվին ինչ է գրել Արշակ Չոպանյանին:

ԺԱԿ – Չէ, իսկ ի՞նչ է գրել:

ԱՍՍՏՈՒՐ – Գրել է, թե Պոլսի մեր հայ գործիչներ ամեն ինչ կանեն, որ Օսմանյան կայսրություն փլվի և փլվի հենց իրենց գլխին: Թեև ճշմարտությունն այն ի, որ անկախ մեր գործիչներեն, աշխարհի մեջ որտեղ որ մեկ բան փլվի, հայերի գլխին կփլվի:

ԺԱԿ – Է, դրանք բարդ հարցեր են, քեռի Ասատուր, հազար մարդ հազար բան ասել է... Ես քաղաքականությունից երբեք գլուխ չեմ հանել...

ԱՍՍՏՈՒՐ – *(Խիստ)*: Կերևա...

(Դուրս է գնում):

(Ներս է մտնում Մարին: Նա արդեն մի քիչ խմած է ու ծիծաղում է անհարկի):

ՄԱՐԻ – Բռնժուր, մայր, հազիվ գտա ձեր խանութը, ինչպե՞ս էք, երիտասարդ, ձեր սանրվածքն ինձ դուր է գալիս: Իսկ ես ձեզ դուր գալի՞ս եմ, մոն ամի: Իսկ ինչո՞ւ խանութի ցուցանակին ձեր անունը չկա, նայում եմ, նայում, չկա: Փոքրիկ փառասիրություն է, ուշադրություն մի դարձրեք, մայր, բայց լավ կլինեք, եթե գրվեք «Դիեգո և Ժակ»:

ԺԱԿ – Ես քեզ խնդրել էի, Մարի, որ երբեք այստեղ չգաս...

ՄԱՐԻ – Իսկ ինչո՞ւ, մոն շեր, մի՞թե սա այնպիսի անպարկեշտ հիմնարկություն է, որտեղ բարձրաստիճան կանանց մուտքը խոհեմաբար արգելվում է: Ինձ այդքան սևեռուն մի նայեք, շարման, ես շիկնում եմ:

ԺԱԿ – Լսիր, դու հարբած ես, ինչ է, անմիջապես հեռացիր այստեղից:

ՄԱՐԻ – Ֆո՛ւ, հարբա՛ծ, գռեհիկ գործակատար եք, երիտասարդ, ես արժանավոր կին եմ և սովոր չեմ նման վերաբերմունքի: Ուղղակի մի փոքր խմել եմ, շատ քիչ, շատ... և նկատի ունեցեք՝ անունների համար: Շատ էի կարդացել, Ռեմարկի հերոսները հենց միայն դրանք խմելով էին զբաղված: Եվ շատ գեղեցիկ էին խմում: Կալվադոս... Պերնո... Եվ ի՞նչ գեղեցիկ շշեր են: Ինչպե՞ս կարող էի դիմանալ, ես միայն և միայն թույլ կին եմ, մայր: Եվ ահա խմեցի... մի քիչ կալվադոս և մի քիչ Պերնո... դու խմած կա՞ս, սիրելիս, չխմես... անուններից չզայթակդվես, բարեկամս, որովհետև կալվադոս կոչվածն ընդամենը խնձորօղի է, իսկ Պերնոն՝ նույն օղին միայն թե անխոնավ և երբ մի քիչ ջուր ես խառնում, հուզվում է, պղտորվում է: Իսկ որպեսզի չհուզվի, ի՞նչ պետք է անել, մոն շեր, ապրես, անխառն պետք է խմել...

ԺԱԿ – Լսիր, այս ի՞նչ օրն էս ընկել, էս ամաչում եմ քո փոխարեն, Մարի, շուտ գնա այստեղից, խնդրում եմ, կգամ տուն, կխոսենք:

ՄԱՐԻ – Իսկ դու տանը ե՞րբ էս ինձ հետ խոսում, մոն ամի:

ԺԱԿ – Է՛, դու տանը լինո՞ւմ էս, որ խոսենք:

ՄԱՐԻ – Իսկ էս տանը չեմ լինում, որովհետև տանը ինձ հետ խոսող չկա, ո՛չ դու և ո՛չ էլ Ժենեվկան... ո՛չ որ: Ոչ հարազատ ունենք, ոչ բարեկամ ունենք, ոչ ընկերներ ունենք, ոչ ծանոթներ ունենք: Օրերով դուռդ բացող չկա և իր տուն կանչող չկա: Ինչ անեմ:

ԺԱԿ – Վերջացրու, լսո՞ւմ էս, գնա...

ՄԱՐԻ – Երկու հարյուր ֆրանկ, մայո, և օղեվուաղ...

ԺԱԿ – Երկու հարյուր... ինչի՞ համար, այ կնիկ:

ՄԱՐԻ – Մանր-մունր պարտքեր ունեմ, մոն ամի, դու հո ինձ չես ստիպի ուրիշներին դիմել...

ԺԱԿ – Դու դրան էլ ընդունակ էս, այո, այո, դու դրան էլ ընդունակ էս: Տեսնում եմ: Ես քեզ հետ տանը կխոսեմ: Հիմա իմ ձեռքին այդքան գումար չկա...

ՄԱՐԻ – Դրամարկդից տուր, սիրելիս:

ԺԱԿ – Իրավունք չունեմ: Վերցրու այս հիսուն ֆրանկը և տուն գնա:

ՄԱՐԻ – Երկու հարյուր և ոչ մի ֆրանկ պակաս:

ԺԱԿ – Ասում եմ տանը կտամ, հեռացիր, քանի որևէ մեկը ներս չի մտել:

ՄԱՐԻ – *(Վերցնում է թղթադրամը)*: Իսկ գուցե էս ուզում եմ առևտուր անել, բարեկամս... Սպասարկեք ինձ, խնդրում եմ, ինչպես հարկն է:

(Դիեգո Ռոդրիգեսը հայտնվում է սանդուղքի վրա):

Ցույց տվեք խնդրեմ այ, այն մետաքսը, մայո, ոչ, ոչ, այն ծաղկավորը...

ԺԱԿ – *(Մոտենում, կոպտորեն բռնում է թևը)*: Լսիր, հեռացիր, թե չէ արյունը գլխովս է տալիս:

ԴԻԵԳՈ – *(Պարզապես զլորվում է սանդուղքով)*: Ներեցեք, այստեղ ի՞նչ է կատարվում: Դուք ի՞նչ էիք ուզում, մադամ, համեցեք, մատնացույց արեք, խնդրում եմ...

ԺԱԿ – Մի հուզվեք, դոն Դիեգո, նա իմ կինն է:

ԴԻԵԳՈ – Ձեր կի՞նը...

ԺԱԿ – Այո, կատակում էր...

ԴԻԵԳՈ – Հարգանքներս, մադամ, շատ–շատ ուրախ եմ: Հիանալի հումոր ունեք: Ծնկներս թուլացան, երբ մայր Ժակը ձեր ձեռքը բռնեց, հա, հա, հա...

ՄԱՐԻ – *(Խաղաղկուն)*: Ես ևս ուրախ եմ, դոն Դիեգո, ամուսինս շատ հաճելի բաներ է պատմել ձեր մասին: Սրտանց ուրախ եմ...

ԴԻԵԳՈ – Մայր Ժակ, վաղը ձեզ հրավիրում եմ մեր տուն: Ընթրիք երեք հոգու համար: Ես հին ու անդավաճան ամուրի եմ, տիկին:

ՄԱՐԻ – Խորապես շնորհակալ եմ, մայր:

ԴԻԵԳՈ – Սպասում եմ, մադամ:

ՄԱՐԻ – *(Ժպտալով)*: Չուշանաս, Ժակ, մի ստիպիր, որ շատ կարոտեմ...

(Հեռանում է):

ԴԻԵԳՈ – *(Կատակով)*: Խանդոտ ասիացի: Հիմա ես հասկանում եմ, թե ինչու էիր այդպես խնամքով թաքցնում տիկնոջդ:

(Ժակը ժպտում է տխուր):

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

(Դիեգո Ռոդրիգեսի բնակարանը: Սովորական, բայց ճաշակով կահավորված: Սեղան երեք հոգու համար: Խմիչքի շշեր: Պատին գորգ: Սենյակում ոչ ոք չկա: Հնչում է դռան զանգը: Դիեգո Ռոդրիգեսը դուրս է գալիս մի կողմից, կտրելով անցնում է սենյակը և բացում է դուռը: Ներս է մտնում Ժակը):

ԺԱԿ – Բարի երեկո, դոն Դիեգո:

ԴԻԵԳՈ – Բարև, բարև, մայո Ժակ... բարև և նորից երկու:

ԺԱԿ – Ինչո՞ւ:

ԴԻԵԳՈ – Բոլոր դեպքերում և ամենուրեք տիկնոջն առաջ պետք է թողնել, բացի, իհարկե, կոնիվ գնալիս:

(Դուռը դեռևս բաց սպասում է):

ԺԱԿ – Ցավոք, տիկին Մարին հիվանդ էր և անկեղծորեն վշտացած խնդրեց, որ իր ներողությունները հայտնեմ ձեզ:

ԴԻԵԳՈ – Ասիացի, ասիացի, կամ կիսասպիտակադեմ Օթելլո:

ԺԱԿ – *(Օրհնադուլ է):* Է՛, մի՞թե ես նման եմ այդ դյուրահավատ մավրին, որը, եթե չեմ սխալվում, ավելի շուտ ձեր հայրենակիցն էր: Առանց կատակի, դոն Դիեգո, հիվանդ էր մադամ Մարին, նա ընդհանրապես այստեղ իրեն բոլորովին լավ չի զգում:

ԴԻԵԳՈ – Այդ դեպքում շուտափույթ ապաքինման իմ մաղթանքները հաղորդեք նրան:

ԺԱԿ – Շնորհակալություն:

ԴԻԵԳՈ – Դե, ուրեմն եկեք նստենք ծեր ամուրիների պես, խմենք և խոսենք մի քիչ: Նստեք, մայո Ժակ, նստեք, ի՞նչ կուզենայիք խմել:

ԺԱԿ – Ահ, միևնույն է:

ԴԻԵԳՈ – Այդ դեպքում գինի խմենք, մայո, իմ պապերը երևի մի բան հասկացել են, որ խմել են գինի:

ԺԱԿ – Իմ նախնիները ևս, դոն Դիեգո: Որքան գիտեմ, մեր հին բառարաններում օղի բառը չի էլ եղել, իսկ մեր երդումն էլ եղել է՝ հացն ու գինին, տեր կենդանին... Իսկ երբ մարդկանց տրամադրությունը բարձր է եղել, նրանց մասին ասել են՝ գինով է, գինովի է: Երբևէ լսած չկամ, թե ասեն օղիով է... կամ կոնյակով է... *(Օրհնադուլ է):* Դուք ինձ հասկացա՞ք...

ԴԻԵԳՈ – Դե ուրեմն խմենք մեր նախնիների կենացը, մայո, երևի ինչ–որ չափով նրանց ենք պարտական, որ այսօր այսպես նստած ենք դեմ դիմաց:

ԺԱԿ – Ողջ լինենք:

(Խմում են):

Հիանալի գինի է: Երբ խմելուց հետո շրթունքներդ ակամա կպցնում ես իրար, ուրեմն մաքուր գինի է

ԴԻԵԳՈ – Հըմ, ուշադրություն չեմ դարձրել, ինչպե՞ս, ինչպե՞ս...

(Մի բաժակ էլ է լցնում: Խմում են):

Ճիշտ է, բրավո, մայո Ժակ, այսօր էլ մի բան սովորեցինք:

(Նորից լցնում է բաժակները):

Իսկ այս բաժակով էլ ձեր կենացն եմ խմում, մայո Ժակ: Ես ձեզ լավ չգիտեմ, իսկ դուք էլ այն մարդը չեք, որ սկուտեղի վրա ձեր սիրտն ուրիշներին եք բերում, բայց դուք տխուր մարդ եք, իսկ ես ուզում եմ, որ դուք ուրախ լինեք, որովհետև մարդ եք:

ԺԱԿ – Շնորհակալություն, դոն Դիեգո:

ԴԻԵԳՈ – Ես գործ չունեմ ձեր այդ... պատմությունների հետ, դրանք ինձ չեն վերաբերում և, չգարմանաք, դրանցից ես ինձ վեր եմ համարում, որովհետև ես կոսմոպոլիտ մարդ եմ և ինձ համար հայրենիք գոյություն չունի: Իմ հայրենիքն աշխարհն է:

ԺԱԿ – Խմենք, դոն Դիեգո:

ԴԻԵԳՈ – Խմենք, աշխարհի մարդ:

(Խմում են):

Մարդն ասածո ամենամեծ ստեղծագործությունն է, մայո Ժակ, բայց աստված ինքն էլ է վախեցել իր ստեղծածի հզորությունից և ստեղծելուց անմիջապես հետո ամեն ինչ արել է, որ կապանքների մեջ խեղդի նրան: Եվ նրան ծնողներ է տվել, որպեսզի նա պարտական լինի իր ծնողներին, եղբայրներ ու քույրեր է տվել, որպեսզի նա կաշկանդված լինի իր եղբայրներից ու քույրերից, երեխաներ է տվել, որպեսզի նա երբեք չկարողանա գլուխ բարձրացնել, ստամոքս է տվել, որպեսզի նա անդադրում մտածի այդ անիծյալ աղիքը լցնելու մասին, և այդ ամենը համարելով քիչ, Բաբելոնն է ստեղծել, որպեսզի մարդիկ չհասկանան իրար, որպեսզի ամեն մեկը իր լեզուն ունենա ու իր հավատը և ատի մյուսի լեզուն ու հավատը: Ասածո ամենամեծ նենգությունն այն է, որ ստեղծել է ազգեր:

ԺԱԿ – Դոն Դիեգո, դոն Դիեգո, դուք իմ սրտից ջուր եք խմում: Ես հենց այդ անարդար աստծո զոհն եմ:

ԴԻԵԳՈ – Ուրեմն խմենք, աշխարհի մարդ:

ԺԱԿ – Ձեր կենացը, բարեկամս:

ԴԻԵԳՈ – Եվ հենց դրա համար էլ որսպես բողոք ես չունեցա ոչ կին և ոչ էլ երեխաներ, որովհետև չուզեցա կապել, կաշկանդել ինձ պարտականություններով, թողեցի իմ երկիրն ու թափառեցի աշխարհով մեկ, մինչև որ հավանեցի այս քաղաքն ու այստեղ եմ ապրում և ապրում եմ, ինչպես տեսնում եք, ազատ, անկախ, ինքնիշխան, մի փոքր, բայց խելացի կիսաստվածի պես: Դուր չի՞ գա այստեղ, կթողնեմ, ուրիշ տեղ կգնամ, ինձ կապող ոչ մի բան չունեմ ես, իսկ աշխարհը մեծ է:

ԺԱԿ – Ախր իմ ամբողջ ողբերգությունը դա է, դոն Դիեգո, ես էլ նույնն եմ մտածում, բայց բոլորը քարկոծում, ծաղրում, հալածում են ինձ: Ինչո՞ւ: Չէ՞ որ ես մարդ եմ, չեմ ուզում Հայաստանում ապրել: Ինձնից ի՞նչ եք ուզում, այ մարդիկ: Ես ուզում եմ անկախ ու հարուստ ապրել: Իսկ այնտեղ հարստանալու հնարավորություն չկա, ես շնորհք ունեմ, ես կարող եմ տեր լինել, իսկ այնտեղ ոչ թե տեր, չեն թողնում, որ ճարպիկ ծառա լինես նույնիսկ: Ես ուզեցի թողնել հեռանալ, իսկ նրանք երեսիս են թրքում՝ դու հայ ես, հայ ես, հայ ես: Եկել հասել եմ այստեղ, հիմա էլ տեղի հայերն են երես շրջում՝ դու հայ ես, հայ ես, հայ ես: Իսկ ես չեմ ուզում հայ լինել, չեմ ուզում: Ուզում եմ սովորական մարդ լինել ու լավ ապրել, բարեկեցիկ ու շքեղ, ուրիշներին ի՞նչ:

ԴԻԵԳՈ – Թույլ տվեք սեղմել ձեր ձեռքը, ազնիվ մարդ...

ԺԱԿ – Ահա... Ուրիշներին ի՞նչ:

ԴԻԵԳՈ – Ձեր կենացը, եղբայր:

ԺԱԿ – Ի վերջո հարյուր տեղ կարդացել ենք, թե մարդկության զարգացումը պետք է հասնի մի մակարդակի, երբ պետք է վերանան ազգերն ու պետությունները, պետք է ջնջվեն սահմանները և բոլոր մարդիկ պետք է խոսեն մի լեզվով:

ԴԻԵԳՈ – Այո, այդպես պետք է լինի:

ԺԱԿ – Դե ուրեմն ի՞նչ մի զարմանալու բան կա, որ դա ե՛ս եմ սկսում, այսինքն դուք և ես... այո, մենք հրաժարվում ենք մեր ազգային պատկանելիությունից և իրար հետ խոսում ենք ոչ թե իբրև իսպանացի և հայ, այլ իբրև պարզապես մարդիկ:

Կենացդ, աշխարհի մարդ: Հիանալի է հնչում:

ԴԻԵԳՈ – Կենացդ, աշխարհի մարդ:

(Խմում են, բնականաբար հետզհետե հարբելով):

Թեև իմ կարծիքով, մայո Ժակ, այդ միակ վերջին լեզվի հարցը շատ վեճերի տեղիք կտա:

ԺԱԿ – Այո, այո, շատ, արդեն վիճել են, վիճել են ու որոշել են:

ԴԻԵԳՈ – Ովքե՞ր,

ԺԱԿ – Մի՞ թե չեք կարդացել: Գրեթե բոլոր թերթերը տպագրեցին: Յունեսկոյի լեզվաբանական խառնաժողովը երկար դեբատներից և փակ քվեարկություններից հետո որոշել է, որ աշխարհի բոլոր մարդկանց համար իբրև ընդհանուր լեզու պետք է ծառայեն մալայերենը կամ հայերենը: Ըստ որում՝ նախապատվությունը տրվել է հայերենին, իբրև հին և ճկուն լեզվի:

ԴԻԵԳՈ – Ինչի՞ն:

ԺԱԿ – Հայերենին:

ԴԻԵԳՈ – (Ծիծաղում է): Իսկ իսպաներե՞նը, անգլերե՞նը, ռուսերե՞նը, չինարե՞նը, ֆրանսերե՞նը:

ԺԱԿ – Որքան գիտեմ, իսպաներենի մասին ընդհանրապես խոսք չի եղել: Իսկ մյուս լեզուների թեկնածությունները մերժվել են, որովհետև վճռվել է նախապատվությունը չտալ որևէ մեծ պետության կամ մեծաքանակ ժողովրդի լեզվին՝ հնարավոր գերիշխանությունից խուսափելու համար:

ԴԻԵԳՈ – Եվ ուրեմն իսպաներենի մասին ընդհանրապե՞ս խոսք չի եղել:

ԺԱԿ – Չի եղել:

ԴԻԵԳՈ – Գիտես ինչ, շատ կբարկանայի, եթե այդքան ծիծաղելի չլիներ, ուրեմն խոսք չի եղել մի լեզվի մասին, որով գրել է մեծ Մերվանտե՞սը:

ԺԱԿ – Դո՛ւ Կիխոտը աշխարհի ամենամեծ վեպերից մեկն է և Լամանչեցի ասպետն իմ ամենասիրած հերոսը, բայց արդարությունը պահանջում է ասել, որ իսպաներենի մասին խոսք անգամ չի եղել:

ԴԻԵԳՈ – Եվ ուրեմն ընտրվել է հայերե՞նը:

ԺԱԿ – Մալայերենը կամ հայերենը, բայց նախապատվությունը տրվել է հայերենին: Այդպես է:

(Խմում է):

ԴԻԵԳՈ – Լսիր, դու Լոպե դե Վեգա կարդացե՞լ ես:

ԺԱԿ – Իհարկե, կարդացել եմ, մեզ մոտ, Հայաստանում մինչև հիմա էլ բեմադրում են:

ԴԻԵԳՈ – Նա գրել է այնքան, որքան քո բոլոր հայ գրողները միասին վերցրած՝ ձեր ազգի ստեղծումից սկսած մինչև մեր օրերը, գիտե՞ս: Եվ նրա լեզվի մասին ոչ մի խոսք չի՞ եղել:

ԺԱԿ – Չի եղել, դոն Դիեգո, այդպես է: Բայց դու ինչո՞ւ ես ասում հայ գրողները, դու հայերին ի՞նչ գիտես:

ԴԻԵԳՈ – Ես գիտեմ, որ քեզ չհաշված, հայերը չափազանց աշխատասեր, խելացի և հմուտ առևտրականներ են:

ԺԱԿ – Թույլ տվեք, թույլ տվեք, ես էլ ինձ չեմ հաշվում, որովհետև ես ոչ թե առևտրական եմ, ողորմած պարոն, այլ փող եմ կուտակում՝ մասնավոր հիվանդանոց բացելու համար: Որովհետև ես բժիշկ եմ, այո, դիպլոմով, որն իմ հայրենիքում այնքան էլ հեշտ չէ ձեռք բերելը: Իսկ ինչ վերաբերվում է առևտրականներին, ապա թույլ տուր ասել, որ քո տեղեկությունները հին են և օրապակաս, որովհետև ոչ մի փոքրաթիվ ազգ աշխարհի քաղաքակրթությանը այնքան շատ բան չի տվել և այնքան մեծեր չի տվել աշխարհին, որքան Հայաստանը:

ԴԻԵԳՈ – Օհն՝...

ԺԱԿ – Առանց օտոյի, եթե դու գիտությամբ զբաղվեիր, կիմանայիր, թե ովքեր են եղել Անանիա Շիրակացին, Մխիթար Հերացին, Վիկտոր Համբարձումյանն ու Մերգեյ Մերգելյանը, Օրբելիները, Միկոյանն ու Պետրոսյանը: Եթե դու նկարիչ լինեիր, զխարկդ կհանեիր Սարգիս Պիծակի, Թորոս Ռուսինի, Հովհաննես Այվազովսկու, Վարդգես Սուրենյանցի, Մարտիրոս Սարյանի, Մինասի անունների առջև:

Եթե դու գիրք կարդայիր, կխոնարհվեիր Մովսես Խորենացու, Սայաթ Նովայի, Թումանյանի, Վիլյամ Սարոյանի, Անրի Թրուայայի...

ԴԻԵԳՈ – Ուրեմն Ֆրանսիայի ակադեմիկոսն էլ է հայ:

ԺԱԿ – Ոչ միայն Ֆրանսիայի: Քեզ ուրիշ բան ասեմ՝ Անգլիայում ամենագեղեցիկ անգլերենով գրված վեպի համար առաջին մրցանակն ո՞վ ստացած կլինի:

ԴԻԵԳՈ – Էլի՞ հայ է:

ԺԱԿ – Այո, Լևոն Սուրմելյանն է...

ԴԻԵԳՈ – Հանկարծ սկսեցի մտածել, թե գուցե ե՞ս էլ հայ եմ, մայր Ժակ:

ԺԱԿ – Դժվար թե, չի երևում:

ԴԻԵԳՈ – Ապշելու բան է, ինչպե՞ս կարող էր իսպաներենի մասին խոսք չլինել: Այնտեղ հիմարնե՞ր են նստած, ինչ է: Հո հոգուս հետ չե՞ս խաղում, մայր Ժակ, իսկապե՞ս չի եղել:

ԺԱԿ – Ճիշտն ասած, որքան զիտեմ, չի եղել: Կամ գուցե եղել է և ե՛ս չեմ իմացել:

ԴԻԵԳՈ – Բայց խոստովանիր, որ շատ անարդար բան կլիներ, եթե այդ հանձնաժողովում խոսք չլիներ իսպաներենի մասին, մայո Ժակ:

ԺԱԿ – Ճիշտն ասած, ինձ էլ անարդար է թվում, դոն Դիեգո:

ԴԻԵԳՈ – Ախր դու իսպաներեն չգիտես, Ժակ, հազար ափսոս, որ չգիտես իսպաներեն, որովհետև դա աշխարհի ամենագեղեցիկ լեզուն է, Ժակ...

ԺԱԿ – Դոն Դիեգո...

ԴԻԵԳՈ – Դա աշխարհի ամենահզոր ու ամենաքնքուշ, ամենաբարի ու ամենադաժան, ամենաերգեցիկ ու ամենահարուստ, ամենաուրախ ու ամենատխուր լեզուն է, Ժակ: Այդ լեզուն իմացողը աշխարհի ամենաերջանիկ մարդն է, բարեկամս: Եթե դու իսպաներեն իմանայիր, եթե դու միայն իսպաներեն իմանայիր, ես քեզ մի տող կասեի, ընդամենը մի տող, որ մայրս էր ասում, և դու լաց կլինեիր երեխայի նման:

ԺԱԿ – Իսկ եթե դու հայերե՛ն իմանայիր...

ԴԻԵԳՈ – Դե լսիր, լսիր, Ժակ, մայրիկս ասում էր՝

Մի՛ ըա վո՛ լան, վո՛ լան, լոս գրո՛ւյրս... լսո՞ւմ ես՝

Մի՛ ըա վո՛ լան, վո՛ լան, լոս գրո՛ւյրս...

(Ասում է տխուր ու հանդիսավոր ու լաց է լինում, արցունքները հոսում են աչքերից):

Ախր սա անհնար է առանց արցունքի լսել, ներիր, բարեկամս, որովհետև մայրս ասում էր՝

Մի՛ ըա վո՛ լան, վո՛ լան, լոս գրո՛ւյրս...

ԺԱԿ – Բայց ինչո՞ւ ես լաց լինում: Վերջ տուր: Դիեգո, բավական է, եղբայր, և վերջապես ի՞նչ են նշանակում այդ խոսքերը:

ԴԻԵԳՈ – *(Շարունակելով լաց լինել):* Մայրս ասում էր՝

Տես՝ թռչում են, թռչում են կռունկները... ահավոր բան է...

ԺԱԿ – Դե լավ, դրա մեջ լաց լինելու ի՞նչ կա, Դիեգո... Բավական է:

ԴԻԵԳՈ – Ախր դու չգիտես, չգիտես, իսպաներեն դա շատ տխուր է հնչում, Ժակ:

(Լցնում է բաժակն ու խմում է):

ԺԱԿ – Ապշելու բան է, նոր հիշեցի, հայերեն էլ դա շատ տխուր է հնչում, գիտե՞ս, Դիեգո:
Միայն թե հայերեն մայրս երգում էր.

Կռունկ, մեր աշխարհեն խաբրիկ մը չունի՞ս...

ԴԻԵԳՈ – Ժակ, Ժակ, դո՞, ինչու ես լաց լինում:

ԺԱԿ – Չէ, չէ, ես ուղղակի խմել եմ ուզում, Դիեգո: Խմենք, ախպեր ջան: Կենացդ, աշխարհի մարդ...

ԴԻԵԳՈ – *(Հարբած է լրիվ):* Թող, թող, եղբայր, գրողի ծոցը, սուտ է, ամեն ինչ ու բոլորը սուտ է, ես ի՞նչ աշխարհի մարդ, ես մի խեղճ ու տարաբախտ վտարանդի իսպանացի եմ միայն, Ժակ, անտեր, հալածական ու որբ թոչուն եմ ես... ու ամեն-ամեն ինչ կտայի, ամեն ինչ, լսո՞ւմ ես, միայն թե թեկուզ մի վայրկյան տեսնեի հայրենիքս... ախր ես Մարսելում եմ ապրում, որ Իսպանիայիս մոտ լինեմ, որ Իսպանիայիս հովերն ինձ հասնեն:

Ախր դու իմ հայրենիքը չես տեսել, Ժակ...

ՊԱՏԿԵՐ

(Հավսեփի տունը: Սկզբում միայն Հայարփին է: Նա Հայաստանի ռադիոկայանն է փորձում բռնել ռադիոընդունիչի վրա: Չի ստացվում, ինչ-որ ձայներ կան, բայց այլքը չի բռնվում: Հայարփին համբերությամբ պտտում է բռնակը ու մեկ էլ հանկարծ աղմուկի միջից հստակ հնչում է):

ՌԱԴԻՈՆ – Երևանն է խոսում, Երևանն է խոսում... (Հնչում են ազդանշաններ):

(Ներս է մտնում Հովսեփը):

ԺԱԿ – Այս ի՞նչ է, մայրդ դեռ չի՞ եկել, Ժենեվկա:

ՀԱՅԱՐՓԻ – Չէ:

ԺԱԿ – Գրողը տանի, նա արդեն ամեն չափ ու սահման անցնում է:

ՀԱՅԱՐՓԻ – Կամաց, հայրիկ, Երևանն է խոսում:

ԺԱԿ – Իսկ ի՞նչ է խոսում, էլի բերքահավաք-մերքահավաքի մասին չէ՞, թե որևէ գյուղում ակումբի նոր շենք են կառուցել: Երևա՛նն է խոսում, ինքդ էլ գիտես, որ ոչինչ չի լսվում և ամեն օր պտտում, հա պտտում ես:

ՀԱՅԱՐՓԻ – Կամաց, հայրիկ, ես լսում եմ:

ԺԱԿ – Այ աղջիկ, ի՞նչ ես լսում, ես չեմ լսում, դու լսո՞ւմ ես:

ՀԱՅԱՐՓԻ – Որովհետև դու չես ուզում լսել:

ԺԱԿ – Լավ, հիմա դրա ժամանակը չէ, վերջ տուր և լսիր ինձ: Ես քեզ հետ շատ լուրջ եմ ուզում խոսել, աղջիկս:

ՀԱՅԱՐՓԻ – Լսում եմ:

ԺԱԿ – Անջատիր, խնդրում եմ, խնդրում եմ:

(Նրա ձայնը այլ է հնչում: Աղջիկը զգում է, նայում է նրան ու անջատում է):

Ժենեվկա, դու գիտես, որ ես աշխարհում քեզնից բացի ոք չունեմ: Մի ընդհատիր և լսիր ինձ: Այո, ոչ ոք չունեմ: Եվ եթե քեզ հետ որևէ բան պատահի, ես չեմ իմանալու, թե այլևս ինչի համար եմ ապրում: Որովհետև ես ամեն ինչ, ամեն ինչ արել եմ քեզ համար:

ՀԱՅԱՐՓԻ – Ինձ դժբախտացնելու համար:

ԺԱԿ – Դու ջահել ու հիմար աղջիկ ես: Դու կյանքը չես հասկանում: Ես ամեն ինչ այնքան խելոք էի մտածել, բայց բախտներս չբերեց, չխոսենք այդ մասին, քեզ ամեն ինչ հայտնի է: Եվ հիմա պատիվ ու հարգանք մի կողմ դրած, ճակատագրի նորանոր հարվածներին դիմանալով, ես՝ բժիշկ Հովսեփս խանութպան եմ դարձել, աշխատում եմ նեգրի նման գիշեր-ցերեկ, որպեսզի ապահովեմ քո ապագան, որպեսզի դու ապրես լիության մեջ, չիմանալով թե ինչ բան են հոգսն ու վիշտը...

ՀԱՅԱՐՓԻ – Ես այդ բոլորը չգիտեի, բայց իմացա այստեղ:

ԺԱԿ – Ոչ, ոչ, ո՛չ, սխալ ես, սխալ, դրանք սենտիմենտներ են միայն, որ կանցնեն, հավատա ինձ: Եվ դու կապրես անկախ ու հարուստ, թագուհու նման: Ես ամեն ինչ անում եմ, որ դու ունենաս այն ամենը, ինչ ցանկանում ես, որ քո շրջապատից ամեն մեկը երանի տա քեզ և պատիվ համարի ձեռքդ համբուրելու, որովհետև դու իմ միակն ես, աղջիկս: Ախր ո՞ր ծնողը իր զավակի վատը կուզի, Ժենեվկա, սիրելիս...

ՀԱՅԱՐՓԻ – Դե՛ռ, որովհետև խլեցիր ինձանից ինչ ունեի, որովհետև պոկեցիր իմ շրջապատից, իմ ընկերներից, իմ տնից, իմ քաղաքից...

ԺԱԿ – Ամբողջ աշխարհը քեզ տալու համար: Որպեսզի երբ կարոտես՝ գնաս Հայաստան, շրջես քեզ համար, իսկ երբ ձանձրանաս՝ թոչես Մոնտե Կարլո, իսկ երբ հոգնես, բարձրանաս Ալպերը, իսկ երբ վշտանաս, հայտնվես Ակապուլկայում, իսկ երբ ուզես մենակ մնալ, քո փոքրիկ խրճիթը քաշվես, ինչ-որ տեղ Հավայան կղզիներում: Ահա թե որն է եղել իմ երազը, փոքրիկս: Այդ երազը ես փայփայել եմ ինձ համար և հիմա

կիսում եմ քեզ հետ և ուզում եմ, որ մենք միշտ երջանիկ ու միշտ համերաշխ ապրենք, աղջիկս:

ՀԱՅԱՐՓԻ – Դա չի լինի, հայրիկ:

ԺԱԿ – Կլինի, աղջիկս, կլինի, եթե դու քեզ խելոք պահես, եթե խելքդ չդնես զանազան լակոտ-լուկոտի հետ, եթե պահպանես քեզ և չզիտես ում և ինչի համար վտանգի տակ չդնես կյանքդ:

ՀԱՅԱՐՓԻ – Օհո՛, դու սկսել ես հետաքրքրվել իմ կյանքով:

ԺԱԿ – Ես միշտ էլ հետաքրքրվել եմ քո կյանքով, Ժենեվա: Երբ դու այդ ակումբը ընդունվեցիր, ես ձայն չհանեցի, որովհետև գիտեի, որ քամիներ կան գլխիդ մեջ և ժամանակ էր պետք, որ այդ քամիները հեռանային: Ես ուզում էի, որ դու որևէ զբաղմունք ունենայիր, թեև բոլորովին էլ չէի ուզում, որ դա՛ լիներ քո զբաղմունքը: Բայց ո՞ւմ մտքով կանցներ, որ դու ոտքով գլխով կխրվես քաղաքականության մեջ, կնետվես ամեն տեղ, որ դու կսկսես «Յումանիտե» տարածել: Ինձ ես մեղադրում արժանապատվությունս կորցնելու մեջ, բժիշկ-խանութպան, իսկ քեզ սագո՛ւմ է, որ փողոցային փոստատար ես դարձել:

ՀԱՅԱՐՓԻ – Դա ինձ համար մեծ պատիվ է, մայր Ժակ: Ըստ որում, եթե հետաքրքրվել ես, կիմանաս, որ «Յումանիտե» տարածողները հասարակական կարգով են աշխատում, և որ դրանք մեծ մասամբ դասախոսներ են, ուսանողներ են, բանվորներ են և մտավորականներ, որ «Յումանիտե» է տարածում նույնիսկ Նոբելյան մրցանակի դափնեկիր պրոֆեսոր Մառլոն:

ԺԱԿ – Հա, բայց ես նրանց հետ գործ չունեմ, ինչ ուզում են թող անեն այդ ամենքը և պրոֆեսոր Մառլոն էլ հետները: Ինձ համար կարևորը դու ես: Իմ ոտքերը թուլացան, երբ իմացա, որ այդ ստահակները հարձակվել են քեզ վրա:

ՀԱՅԱՐՓԻ – Նրանք ինձ վրա չէին հարձակվում, նրանք հարձակվում էին «Յումանիտե»-ի այդ համարի վրա:

ԺԱԿ – Հա, բայց դրանք քո ձեռքին են եղել, Ժենեվա, և դու փոխանակ դեն նետելու և փախչելու, կովի ես բռնվել նրանց հետ:

ՀԱՅԱՐՓԻ – Ես կովի չեմ բռնվել, ես ուղղակի չթողեցի, որ նրանք պայուսակս խլեն:

ԺԱԿ – Եվ նրանք խփեցին, ոտքի տակ գցեցին քեզ, սրիկաները:

ՀԱՅԱՐՓԻ – Մերոնք անմիջապես օգնության հասան: Դու պետք է տեսնեիր, թե ոնց էին փախչում գլխապատառ...

ԺԱԿ – Աղջկա վրա են ձեռք բարձրացնում...

ՀԱՅԱՐՓԻ – Նրանք ինձ ոչինչ չկարողացան անել... Ես իսկի օգնություն էլ չկանչեցի:

ԺԱԿ – Հա, բայց կարող էր շատ ավելի վատ վերջանալ, չէ՞, ձերոնք կարող էին մոտերքում չլինել, և նրանք կհաշմեին քեզ:

ՀԱՅԱՐՓԻ – Ի՞նչ արած, մեր աշխատանքը միշտ էլ վտանգի հետ է կապված, բոլորս էլ գիտենք:

ԺԱԿ – Գիտեք և գնո՞ւմ եք, ինչո՞ւ, ինչո՞ւ, այ աղջիկ, լավ, նրանք գնում են՝ աստված իրենց հետ, նրանք իրենց հարցերն ունեն, դո՞ւ ինչ գործ ունես ախր, նրանք քո ի՞նչն են, այ բալա:

ՀԱՅԱՐՓԻ – Եթե մինչև հիմա չգիտես, ես ասելու բան չունեմ, հայրիկ:

ԺԱԿ – Բայց ե՛ս ասելու բան ունեմ, ես: Ես չեմ ուզում, որ դու կորչես, ես չեմ ուզում զրկվել քեզանից, դու իմ միակ հույսն ես, հասկացիր, աղջիկս, դու իմ միակն ես, և ես թույլ չեմ տա, որ քեզ խլեն ինձանից...

ՀԱՅԱՐՓԻ – Ես քեզ չեմ հավատում, հայրիկ:

ԺԱԿ – Դո՞ւ, դու ինձ չե՞ս հավատում:

ՀԱՅԱՐՓԻ – Որովհետև դու այս ամբողջ պատմության մեջ ոչ մի անգամ մայրիկի անունը չսովեցիր, որովհետև դու ոչ մի անգամ չհիշեցիր մայրիկին: Բայց չե՞ որ նա քո ամենամտերիմ մարդն է եղել: Իսկ հիմա նա քեզ համար ասես բոլորովին գոյություն չունի, ասես չկա, չի եղել: Դու նրանով երբեք չես հետաքրքրվում, երբեք չես մտածում նրա մասին: Դու չգիտես, թե նա ինչով է ապրում, ինչ է մտածում, ինչ է անում, դու նույնիսկ հենց այնպես, ձևականության համար ես հետաքրքրվում՝ նա տանն է թե չէ: Դու նրան չես սիրում և ուրեմն ինչո՞ւ պետք է ինձ սիրես, հայրիկ:

(Լռություն):

ԺԱԿ – Որքա՛ն հեշտ է հեովից ուրիշին դատապարտելը:

ՀԱՅԱՐՓԻ – Իսկ դու առարկիր, ասա որ այդպես չէ:

ԺԱԿ – Այդպես չէ, աղջիկս, և ցավում եմ, որ ինձ ստիպում ես ասել ամեն ինչ: Ես չեի ուզում նախապես վշտացնել քեզ, որովհետև թեև դու այլ կարծիքի ես, բայց ես սիրում եմ քեզ: Քո մայրը բարի և միամիտ կին է, Ժենեվա: Նա պարզապես ուրիշ տեսակ է ծնվել, նա երբեք չսովորեց կյանքի խորքերը նայել ու ապրեց այսպես, կյանքի մակերեսի վրա, թիթեռնիկի պես: Այսինքն երևի գեներն էլ ինչ որ բան արժեն, որովհետև ճիշտ է, դու գիտես, որ նրա մայրը Մարսելից էր, բայց հարմար չենք գտել ասելու քեզ, որ պարում էր կաբարեում: Ուրախ, անհոգ կին էր: Ես մայրիկի դեմ ոչինչ չունեմ, զավակս, սիրել եմ և սիրելով էլ ամուսնացել եմ: Եվ երջանիկ եմ եղել: Ու թեև հետագայում համոզվել եմ, որ նա անընդունակ է զբաղվել որևէ լուրջ գործով, բայց դա ինձ չի խանգարել, և դու

կամ որևէ մեկը չի կարող ինձ մեղադրել, թե ես այլ կյանք եմ ունեցել և անուշադիր եմ եղել Մարիի նկատմամբ:

ՀԱՅԱՐՓԻ – Բայց այստեղ, այստեղ...

ԺԱԿ – Իսկ այստեղ, աղջիկս, մի տարի էլ չէր անցել, ինչ եկել էինք, երբ Մարին սկսեց բողոքել, թե ստամոքսը ցավում է:

ՀԱՅԱՐՓԻ – Այո, իհարկե և դու էլ ասում էիր, թե սննդի փոփոխությունից կլինի:

ԺԱԿ – Իսկ ի՞նչ ասեի, ասեի, որ խմելուց ու ծխելու՞ց է... Բժիշկները նրան ասում էին, թե պետք է կանոնավոր կյանք վարել, խիստ դիետա պահպանել, իսկ նա ծիծաղում էր ու ասում էր կանցնի... Նա առանց այն էլ սիրում էր մի քիչ խմել իսկ հիմա խմում է, որպեսզի ցավը չգգա և ես ոչինչ ասել չեմ կարող, ոչինչ անել չեմ կարող... այո, այո, ես չեմ կարողանում նայել նրան:

ՀԱՅԱՐՓԻ – Իսկ դ՛հմայրիկ, իսկ դ՛հմայրիկ... գոնե հիվանդանոց տանենք, թող հսկողության տակ լինի:

ԺԱԿ – Թանկ է և անիմաստ: Դու չես պատկերացնի, թե որքան թանկ է, աղջիկս:

ՀԱՅԱՐՓԻ – Ուրեմն կաբարեներն ավելի՞ էժան են նստում, հա՞, որտեղ նա սպանում է իրեն:

ԺԱԿ – Ի՞նչ կաբարե, ի՞նչ ես խոսում: Մեկ-մեկ սրճարան է մտնում: Գիտեմ:

ՀԱՅԱՐՓԻ – Իսկ քո կարծիքով նա որտե՞ղ է լինում օրեր շարունակ:

ԺԱԿ – Ինձ ասել է, որ մոր մանկության ընկերուհու, մի ինչ-որ պառավի մոտ է լինում, նստում, զրուցում, թուղթ են խաղում ու այնտեղ էլ խմում է մի քիչ: Ճիշտ չէ՞ ...

ՀԱՅԱՐՓԻ – Հա, և այդ պառավն էլ հենց «Գիշերային աստղ» կաբարեի հանդերձապահն է:

ԺԱԿ – Ի՞նչ... դու-դու համոզվա՞ծ ես:

(Հայարփին զուխը կախ հեկեկում է: Հովսեփը դուրս է նետվում):

ՊԱՏԿԵՐ

(«Գիշերային աստղ» կաբարեի դահլիճի մի մասը: Ոչ շատ հեռու, հարթակի վրա տեղավորված է նվագախումբը: Կաբարեի մթնոլորտ: Կիսախավար է և աղմուկ: Նվագախումբը լուսավորվում է լուսարձակով, որը որսում է նվագողներից մեկին կամ մյուսին, իսկ հիմնականում մենակատարին: Նվագախմբի առջև պարերի հրապարակն է: Առաջին պլանում փոքրիկ մի սեղան է, որի ետևում նստած է տիկին Մարին: Նրանից այն կողմ երևում է մեկ ուրիշ մեծ սեղան, որը դեռևս զբաղված չէ: Հնչում է ռիթմիկ երաժշտություն: Մեկ ուրիշ սեղանի մոտ, գլուխը ձեռքերին դրած քնած է Մանվելը):

ՄԱՐԻ – (Հանկարծ սեղմում է կուրծքը ու տնքում): Օ՛հ...

ՏՂԱ – (Մոտենալով): Մադամին որևէ բան է պետք:

ՄԱՐԻ – Միշել, մադամ Միմին կանչիր, խնդրում եմ:

ՏՂԱ – Հիմա, մադամ...

(Ինչ-որ մեկը օրորվելով մոտենում է Մարիին և առաջարկում է պարել: Մարին ցավից աղավաղված դեմքով թափահարում է գլուխը: Մարդը հեռանում է):

ՄԻՄԻ – (Մոտենալով, խոսքու ձայնով): Հը դարձյա՞լ վատ ես, Մարի:

ՄԱՐԻ – Մի հար էլ տուր, Միմի:

ՄԻՄԻ – Բայց այդպես հո չի կարելի, աղջիկս, սա թույն է ի վերջո: Դու հո օտար մարդ չե՞ս, սա էլ երրորդը կլինի:

ՄԱՐԻ – Տուր, Միմի, եթե միայն իմանաս, թե ինչպես է ցավում:

ՄԻՄԻ – Մի բաժակ ջուր բեր, տղա *(գրպանից հանում և շուրջը նայելով, Մարիին է մեկնում փոքրիկ մի հար):*

ՄԱՐԻ – Պետք չէ *(թափահարում է ձեռքը ու բերանն է գցում հարը):*

ՄԻՄԻ – Սպանես, առանց ջրի ամենա մանր հաբն իսկ չեմ կարող կուլ տալ, թեև կոկորդս, փառք աստծո, այնքան էլ բարակ չէ: Ուտելու բան կուզե՞ս:

ՄԱՐԻ – *(Թափահարում է գլուխը):* Տեսնել չեմ ուզում:

ՄԻՄԻ – Էհ, այդպես հո կսպանես քեզ, աղջիկս:

ՄԱՐԻ – Նրան եմ ուզում սպանել, Միմի:

ՄԻՄԻ – Ո՞ւմ:

ՄԱՐԻ – *(Ձեռքը կրծքին խփելով)*: Նրան, նրան, որ իմ մեջ է ու ինձ է սպանում: Ինչո՞ւ, ախր ինչո՞ւ, իմ ո՞ր մեղքի համար, Միմի:

ՄԻՄԻ – Խմե՞նք, Մարի:

ՄԱՐԻ – Ասա թող կրկնակի բաժին տան, ես եմ վճարում:

ՄԻՄԻ – Է՛յ, տղա, երկու անգամ երկու ի՞նչ կանի...

ՏՂԱ – Ուրախություն, մադամ Միմի:

ՄԻՄԻ – Ուրախություն բեր, տղաս...

ՄԱՐԻ – Քեզ վրա չե՞ն խոսի:

ՄԻՄԻ – Ո՞վ, հերթապահությունս հանձնել եմ Միշոյին: Հիմա ես իմ գլխի տերն եմ ու կարող եմ ծախսել աշխատածս մինչև վերջին սուն, առանց տեղից ելնելու: Եվ բոլորն էլ պարտավոր են սողալ իմ առաջ: Է՛յ, մի բան նվագեք, աշխատավոր ժողովրդի սգրուկներ...

Հիմա շա՛տ են ծուլացել մարդիկ: Մինչև փողը չտեսնեն, մատն էլ չեն շարժի: Իսկ մեր ժամանակ դահլիճում մարդ լինե՜ր-չլինե՜ր, ես ու հանգուցյալ մայրիկդ իրար ձեռքից խլում էինք միկրոֆոնը:

ՄԱՐԻ – Իսկ մի՞թե այն ժամանակ միկրոֆոն կար, Միմի:

ՄԻՄԻ – Կար, իհարկե:

(Տղան բերում է գավաթները):

ՏՂԱ – Համեցեք ըմբոստացած հրեշտակներ:

ՄԻՄԻ – *(Ծիծաղելով)*: Հա, հա, հա, ըմբոստացած: Այս տղան ուղեղ ունի, շատ առաջ կգնա: Կենացդ, տղաս, կենացդ, Մարի:

ՄԱՐԻ – Կենացդ, Միմի:

ՄԻՄԻ – Մեղմացա՞վ:

ՄԱՐԻ – Ասես չի էլ եղեր: Եթե իմանաս ի՞նչ երանություն է, երբ ոչ մի տեղդ չի ցավում... Ի՛նչ երջանկություն է...

ՄԻՄԻ – Հա, բայց հետո տեղը հանում է, չէ՞:

ՄԱՐԻ – Ամեն անգամ հույս ունեմ, որ այլևս չի հասցնի:

ՄԻՄԻ – Ժակը գիտի՞:

ՄԱՐԻ – Չէ, դժվար թե...

ՄԻՄԻ – Սրտիդ այդքան մոտ մի ընդունիր, աղջիկս, հազար դեպք գիտեմ, որ սուտ է եղել: Իսկ մեկն էլ, մեկն էլ անընդհատ փորը բռնած գոռում էր, թե ուռուցք ունի, մինչև որ մի տղա բերեց, հանգստացավ: Հը, հը, հո բանման չկա՞:

ՄԱՐԻ – *(Ակամա ժպտում է):* Երանի լինեք...

ՄԻՄԻ – Խմենք, Մարի... պարտքը հատուցելով է գեղեցիկ:

ՄԱՐԻ – Խմենք, իմ մայրիկի բարեկամ:

ՄԻՄԻ – Եվ քո բարեկամ: Էյ, տղա, երկու անգամ երկու ի՞նչ կանի:

ՏՂԱ – *(Հեռվից):* Զվարթություն, մադամ Միմի:

ՄԻՄԻ – Դե, ուրեմն զվարթություն բեր, տղաս...

(Տղան բերում է: Անմիջապես խմում են):

(Մի նավաստի է մոտենում: Գլուխը խոնարհում է և Մարիին հրավիրում է պարելու):

ՆԱՎԱՍՏԻ – Մադմուազել, երջանկացրեք ինձ...

ՄԱՐԻ – Ես չեմ պարում, մայր...

ՆԱՎԱՍՏԻ – Մադմուազել, ես համառ եմ...

ՄԱՐԻ – Նրան մի բան հասկացրու, Միմի:

ՄԻՄԻ – Դու համառ չես, դու փտած կոճղ ես, վառելափայտ ես և նեխած պոմիդոր, ութ տարվա քացախ ես, ճանապարհի քար ես, հոտած ճահիճ ես ու ձեթի տկճոր: Իսկ եթե շատ համառես, ես կգամ պարելու քեզ հետ և այնպես կտորորեմ, որ քո փոխարեն թաց տեղ կմնա:

ՆԱՎԱՍՏԻ – *(Հռիճում է):* Բոցման է, բոցմա՛ն, վա՛յ, էս ինչեր է ասում, տղերք... Այ քեզ կրակ պառավ...

(Հեռանում է):

ՄԻՄԻ – Իսկ գուցե դու իրոք պարեիր, աղջիկս:

ՄԱՐԻ – Հիմա՞... Ես հազվադեպ եմ պարում, Միմի...

ՄԻՄԻ – Իսկ քո մայրը ո՞նց էր պարում, գիտես, հալվում էր, դողում էր, ճախրում էր, մանավանդ երբ իսպանական պարեր էր պարում: Մեր կաբարեն իսպանացիներով լցվում էր, գալիս էին հատուկ մայրիկիդ տեսնելու:

Օ՛, հենց այս պարն էր պարում: Բայց նա ուրիշ էր, ուրիշ էր...

(Պարուհին իսպանական պար է պարում լուսարձակի տակ):

ՄԻՄԻ – Խմենք բոլոր նրանց համար, ովքեր եկել ու գնացել են... և պիտի գան ու գնան:

ՄԱՐԻ – Է՛յ, տղա, երկու անգամ երկու ի՞նչ կանի:

ՏՂԱ – Ծիծաղ, մադամ:

ՄԱՐԻ – Դե, ուրեմն ծիծաղ բեր, բարեկամս:

ՄԻՄԻ – *(Ծիծաղում է):* Շուտ սովորեցիր իմ լեզուն:

(Տղան բերում է խմում են):

ՄԱՐԻ – *(Արդեն խմած է):* Իսկ մայրիկն այստե՞ղ է հայրիկին հանդիպել:

ՄԻՄԻ – Հա, բայց ապշելու բան էր, գիտես: Մարդիկ էին ներս մտնում, իրար ետևից, ես ու Ժուժուն էլ հանգստանում էինք և նստած էինք այ, այն սեղանի կողքին: Ու մեկ էլ մի բարձրահասակ տղա ներս մտավ, մեծ–մեծ աչքեր ուներ ու երկար, էսպես կախ ընկած բեղեր: Ու մեկ էլ Ժուժուն ասաց՝ տես, իմ ճակատագիրն է ներս մտնում: Դու իրեն ճանաչո՞ւմ ես, հարցնում եմ: Չէ, ասում է, երդվում եմ, բայց գիտեմ, որ դա իմ ճակատագիրն է: Եվ ի՞նչ ես կարծում՝ այդ տղան ուղիղ մոտեցավ մեզ, ձեռքը մեկնեց Ժուժուին ու ասաց կոտրված ֆրանսերենով.

– Օրիորդ, եթե հիմա պարենք, ամբողջ կյանքում միասին ենք պարելու:

– Տեսա՞ր, – ասաց Ժուժուն ու գնաց հմայվածի պես: Եվ էդ էր ու էդ:

ՄԱՐԻ – Ես էլի եմ խմել ուզում, Միմի:

ՄԻՄԻ – Դե, որ ուզում ես, խմենք: Է՛յ, տղա, երկու անգամ երկու ի՞նչ կանի:

ՏՂԱ – *(Արագ մոտենալով):* Լաց, մադամ:

ՄԻՄԻ – Ի՞նչ:

ՏՂԱ – Լաց, մադամ... Ինքներդ էլ գիտեք, որ դրանից հետո սովորաբար լաց են լինում:

ՄԻՄԻ – *(Քրքջում է):* Այս տղան շատ սրտովս է, Մարի, եթե լսես, որ մի օր սա Մարսելի քաղաքագլուխն է, չգարմանաս, երբեմն խելոք մարդկանց էլ են ընտրում: Բեր, տղաս, հենց մեր լաց լինելու ժամանակն է:

ՄԱՐԻ – Իսկ ես այնպես ծիծաղել եմ ուզում, Միմի, այնպես ազատ, անհոգ, բարձր քրքջալ եմ ուզում...

ՄԻՄԻ – Դե ուրեմն քրքջանք, գրողը տանի, չէ որ դրա համար լիովի վճարել ենք:

(Գրկում են իրար ու սկսում են ծիծաղել, իրար ինչ-որ բան են ուզում ասել ու առանց հասկանալու, առանց իրար լսելու ծիծաղում են: Ներս է մտնում տղաների ու աղջիկների մի մեծ խումբ և աղմուկով նստում է ազատ սեղանի շուրջը: Նրանք արդեն գինով են և ուրախ: Սկսում են դատարկ բաժակները խփել սեղանին: Մատուցողն արագորեն մոտենում է):

ՏՂԱ – Ես ձեզ լսում եմ...

ՄԵԿԸ – Իսկ դու մեզ մի լսիր, բարեկամս, այսօր մենք քննություն ենք հանձնել, մեզ շատերն են լսել և բավական էլ ուշադիր: Դու մեզ գինի բեր և նվագ, ուրիշ ոչինչ:

ՏՂԱ – Նվագը ճանապարհին է, իսկ գինին կհայտնվի իսկույն...

(Խումբը հրճվագին բացականչում է: Հնչում է նվագը: Բոլորը գնում են պարելու: Շատ ուրախ, ոգևորիչ պար է: Իր սեղանի մոտ Մանվելը խմում է):

ՄԱՐԻ – Իսկ հիմա ես ուզում եմ երգել, Միմի:

ՄԻՄԻ – Ինչ անե՞լ:

ՄԱՐԻ – Երգել եմ ուզում, Միմի, մի՞թե քո հին ընկերուհու դուստրը իրավունք չունի երգելու: Ես երգել եմ ուզում և ուզում եմ երգել այնտեղ, որտեղ մի ժամանակ իմ սիրելի մայրիկն է երգել, Միմի:

ՄԻՄԻ – Ուրեմն կերգես... Շատ կուզենայի տեսնել, թե ով կհամարձակվի խանգարել մեզ:

(Մոտենում է նվագախմբին):

Լո՛ւն՝:

(Բոլորը զարմացած լռում են, կանգ են առնում: Միմին դիմում է նվագախմբի ղեկավարին՝ մի թղթադրամ նետելով դաշնակահարի ոտքերի տակ):

Ժուլիեն, զավակս, ես հիմա ուզում եմ, որ իմ աղջիկը երգի: Դեմ չե՞ք, բարեկամներս...

ԲՈՒՆՈՐԸ – Բրավո, բրավո, խնդրեմ, խնդրեմ...

ՋՈՒԼԻԵՆ – Ի՞նչ կուզենայիք, մադամ...

(Մարին առաջ է եկել և հայտնվել է հարթակի վրա՝ խմիչքից ու հիվանդությունից փայլող աչքերով)...

ՄԱՐԻ – «Բադամ, բադամը», մայեստրո...

(Սկսվում է երգը: Մարին երգում է ոգևորված, ինչպես երբեք, ինչ-որ նյարդային հիվանդագին, բայց ոգևորիչ ձայնով: Տղաներն ու աղջիկները սկսում են ձայնակցել ու պարել: Պարում է նաև Միմին՝ ջահել մատուցողի հետ: Երգը վերջանալուց հետո Մարին դեպի իր տեղն է գնում, ճանապարհին կնճռոտելով դեմքը, որովհետև ցավը սկսել է նորից և հանկարծ դեմ դիմաց տեսնում է Ժակին:

Հնչում են ծափերն ու ողջունի աղաղակները: Իսկ նա կանգնած է քարացած, հետո ասում է, խղճուկ ժպտալով):

ՄԱՐԻ – Ես լավ էի երգում, դու լսո՞ւմ էիր, Ժակ, տես ինչպես են ծափահարում, սիրելիս...

ԺԱԿ – Դու, դու խելագարվե՞լ ես, շուտ գնանք, այս ի՞նչ ես անում, Մարի:

ՄԱՐԻ – *(Մարին թեքվում, գրկում է Ժակի ծնկները):* Ես մեռնում եմ, Ժակ:

ՊԱՏԿԵՐ

(Հովսեփի բնակարանը: Լուսանում է: Սենյակի մի անկյունում, թիկնաթոռ-մահճակալի մեջ կիսապառկած է Մարին: Նրա կողքին, աթոռին գիշերազգեստով նստած է Ժակ Հովսեփը):

ՄԱՐԻ – Ջո՛ւր:

ԺԱԿ – Հիմա, սիրելիս, հիմա...

(Ջուր է տալիս նրան):

ՄԱՐԻ – *(Խմում է մի քիչ ու հանկարծ համբուրում է Ժակի ձեռքը):* Ներիր ինձ, Ժակ...

ԺԱԿ – Ինչ ես անում, ինչ ես անում:

ՄԱՐԻ – Ես քեզ շատ տանջեցի, սիրելիս, բայց ի՞նչ անեմ, վկա է աստված, որ չէի ուզում:

ԺԱԿ – Երեխաերեխա մի խոսիր, անուշա, ո՞վ չի հիվանդացել, կանցնի, կտեսնես, կլավանաս շուտով և ամեն ինչ, ամեն ինչ լավ կլինի:

ՄԱՐԻ – Դու այլևս բժիշկ չկանչես, Ժակ:

ԺԱԿ – Ինչո՞ւ, սիրելիս, նա քեզ դուր չի՞ գալիս, մեկ ուրիշին կհրավիրեմ:

ՄԱՐԻ – Ոչ մեկին մի կանչիր, խնդրում եմ: Խնայիր փողը: Ձեզ շատ պետք կգա:

ԺԱԿ – Դու ինձ մի բարկացնի, Մարի, փողն ի՞նչ է, թքած փողի վրա, միայն թե դու շուտ լավանաս... Ես այնքան փող կաշխատեմ... Մենք արդեն շատ փող ունենք: Դո՞ն Թողրիգեսը գործը գիտի, մտադիր ենք նույնիսկ մասնաճյուղ բացել Դիժոնում:

ՄԱՐԻ – *(Շրջում է զլուխը)*: Է՛հ...

ԺԱԿ – Հիշո՞ւմ ես, դու մի անգամ էլ էիր հիվանդացել: Բարձր տաքություն ունեիր: Ու ես քեզ հարցրի՝ ի՞նչ ես ուզում, որ քեզ համար բերեմ, սիրելիս: Ասա, ինչ ուզում ես՝ կբերեմ... Ու հանկարծ՝ պաղպաղակ, ասացիր դու... ու ծիծաղեցիր:

ՄԱՐԻ – Հիշում եմ, հաջորդ օրը դու ինձ ծաղկած դեղձենու մի ճյուղ բերեցիր, Ժակ: Խոշոր-խոշոր ծաղիկներ էին և այնպիսի բուրմունք էր, և դու հիշո՞ւմ ես ինչ ասացիր...

ԺԱԿ – Չեմ հիշում, ի՞նչ եմ ասել, Մարի:

ՄԱՐԻ – Դու ասացիր, դե շուտ լավացիր, Ջանգվի ձորում արդեն ցոգողը մեծանում է և պահակները մեզ են սպասում:

ԺԱԿ – Հա, ինչ հաճելի էր, երբ թաքուն, վախվխելով պոկում ու ուտում էինք:

ՄԱՐԻ – Իսկ դու հիշո՞ւմ ես, թե ինչպես Ժենեվային առաջին անգամ դպրոց տարանք, երկուսով, իսկ հետո թափառեցինք մի քիչ: Ու հետո երբ տուն դարձանք, տեսանք, որ Ժենեվյան տանն էր:

ԺԱԿ – *(Ծիծաղում է)*: Հիշում եմ, իհարկե, աչքերը չոեց ու ասաց.

– Բա ի՞նչ անեի, զանգը տվեց, ես էլ տուն եկա»:

Միայն մի դաս էր նստել անպիտանը:

ՄԱՐԻ – Ախր ես քեզ այնքա՛ն բան ունեմ ասելու, Ժակ, բայց գիտեմ, որ զլուխդ ցավեցնում եմ: Հա, ամենակարևորը, ամենակարևորը չմոռանամ...

(Նա ինչ-որ բան է շշնջում):

ԺԱԿ – Ի՞նչ... *(թեքվում է)*: Ես ոչինչ չեմ լսում, անուշա...

ՄԱՐԻ – Ես քեզ սիրում եմ, Ժակ...

ԺԱԿ – Խենթ, իսկական խենթ...

ՄԱՐԻ – Ես քեզ սիրում եմ, Ժակ ու միշտ էլ սիրել եմ և ուզում եմ իմանա, ուզում եմ իմանա, որ միշտ, միշտ, ամբողջ կյանքում հավատարիմ եմ եղել քեզ: Գլուխդ բարձր պահիր միշտ, ամուսինս:

ԺԱԿ – Լսիր, դու ի՞նչ ես ուզում ինձանից, դու ուզում ես, որ ես լա՞ց լինեմ, ինչ է, սենտիմենտալ աղջիկ:

ՄԱՐԻ – Չէ, բայց ես ուզում եմ իմանա, որ ես այնքան էլ թույլ ու այն քան էլ հիմար չեմ եղել, Ժակ, ուղղակի քո կողքին եմ այդպես երևացել, որովհետև դու շատ–շատ խելոք և ուժեղ մարդ ես, սիրելիս:

ԺԱԿ – Դե, գիտես ինչ, ես քեզ հետ այլևս խոսել չեմ ուզում և ռադիոն անջատում եմ, ըհր, *(համբուրում է Մարիին)*: Այլևս ոչ մի խոսք: Քնիր, հանգստացիր մի քիչ:

ՄԱՐԻ – Մի բան էլ ասեմ ու նոր քնեմ, հա՞, Ժակ:

ԺԱԿ – Ասա, բայց լուրջ ու խելոք բաներ ասա, թե չէ կանջատեմ նորից:

ՄԱՐԻ – Ամենալուրջը կյանքում իմ ասածներից, միայն խոստացիր, որ կանես:

ԺԱԿ – Դու գիտես, որ ես երբեք չեմ մերժել քեզ:

ՄԱՐԻ – *(Քիչ բարձրանում է)*: Ուրեմն... այն բանից հետո... դե...

ԺԱԿ – Ինչի՞ց հետո, Մարի:

ՄԱՐԻ – Այն բանից հետո... որ ես այլևս չեմ լինի, երդվիր, որ Հայարփիին Հայաստան կուղարկես:

ԺԱԿ – Ի՞նչ ես խոսում, ինչ ես խոսում, ես ասում եմ, որ քեզ ոչինչ էլ չի լինելու, դու առողջանալու ես, Մարի, սիրելիս...

ՄԱՐԻ – Ես ասում եմ, այն բանից հետո...

ԺԱԿ – Այս ի՞նչ մղձավանջ է, տեր աստված...

ՄԱՐԻ – Տես, ես քեզ համար ոչինչ չեմ ասում, Ժակ, ես գիտեմ, որ դա քեզ համար շատ դժվար է: Ես քեզ համար ոչինչ չեմ ասում, Ժակ, ապրիր ինչպես կարող ես, միայն թույլ տուր, որ Հայարփին հայրենիքում ապրի: Թող նա ապրի, Ժակ:

ԺԱԿ – Օ՛հ...

ՄԱՐԻ – Դու ինձ խոսք տվիր, Հովսեփ:

(Հեռախոսի ուժգին զանգ: Երկուսն էլ ցնցվում են: Ժակը նետվում է դեպի լսավորդը):

ՄԱՐԻ – Ո՞վ է, ո՞վ է, Հովսեփ:

ԺԱԿ – Այո՛, ի՞նչ, որտե՞ղ... ո՞վ է նոնակ նետել, որտե՞ղ է պայթյունը եղել, մայր, աղաչում եմ, բարձր խոսեք, ես ոչինչ չեմ լսում, պայթյունը որտե՞ղ է եղել, մայր...

ՄԱՐԻ – *(Ջջում է):* Հայարփին...

(Էկրանը մթնում է միանգամից, հետո նորից լուսավորվում է վառ, նորից է մթնում ու նորից լուսավորվում: Եվ ամեն ինչ սկսվում է պտտվել խենթորեն, ողբերգական նվագի հնչյունների տակ: Ասես թե կործանվում է աշխարհը):

ՊԱՏԿԵՐ

(Կիրակնօրյա դպրոցի դասարան: Պատերին ամենուրեք Սովետական Հայաստանի կյանքը պատկերող նկարներ են: Հայ զորավարների, հայ գիտնականների, հայ գրողների դիմանկարները: Գրատախտակի վրա կավիճով գրված է. «Այբ, բեն, գիմ...»: Բայց դասարանը դատարկ է, ամալի է: Գրասեղանի մոտ թիկունքով դեպի դուռը նստել, երկու-երեք տետրերն է ուղղում ուսուցիչ Պոտոսյանը: Նրան է մոտենում Հովսեփը: Նա գրեթե ծերացել, անճանաչելիորեն փոխվել է, կռացել: Երկար նայում է ուսուցչին, ապա դիմում կամացուկ):

ԺԱԿ – Ուսուցիչ...

ՊՈՏՈՍՅԱՆ – *(Շրջվելով):* Ա՛, բարև, Հովսեփ, բարև, նստիր...

ԺԱԿ – Շնորհակալություն, որ սպասել եք ինձ և ներողություն, որ ուշացա, ձեր զանգելուց հետո անակնկալ գործ պատահեց:

ՊՈՏՈՍՅԱՆ – Ոչինչ, ես, միևնույն է, ոչ մի տեղ չունեմ գնալու: Ի դեպ քեզ մի մարդ էր հարցնում, ես ասացի, որ շուտով այստեղ ես գալու: Նորից զանգ կտա:

ԺԱԿ – Ո՞վ էր, պարոն Պոտոսյան:

ՊՈՏՈՍՅԱՆ – Ասաց Անդրանիկ է անունը, Հայաստանից է եկել...

ԺԱԿ – Անդրանիկ, Անդրանիկ... ո՞վ կլինի, տեսնես... Իսկ ի՞նչ էր ուզում, ոչինչ չասա՞ց:

ՊՈՏՈՍՅԱՆ – Ոչ, ոչինչ չասաց:

(Հեռախոսի զանգ):

Վերցրու, նա կլինի:

(Հովսեփը վերցնում է լսափողը):

ԺԱԿ – Այո, Հովսեփին է: Անդրանիկը... Ներեցեք, ո՞ր Անդրանիկը, դերձակ, այո, այո, հիշում եմ, իբրև տուրիստ եք եկել: Ընդմիջում...

(Պոտոսյանը բարձրացրել է գլուխը, լսում է):

Իսկ ես ձեզ չեմ ուզում տեսնել: Ես ձեզ չեմ ուզում տեսնել: Ես ինձ չեմ ուզում տեսնել, լսում եք:

(Ցած է նետում լսափողը):

ՊՈՏՈՍՅԱՆ – Ահա մեկը նա... և ի՞նչ էր ասում:

ԺԱԿ – Ասում էր, որ ես կհասկանամ իրեն, օգնություն էր խնդրում:

ՊՈՏՈՍՅԱՆ – Եվ ինչո՞ւ են թողնում, որ դուք այստեղ հասնեք... Ինչո՞ւ են թողնում, որ դուք այստեղ հասնեք... չեմ հասկանում:

ԺԱԿ – Դուք ներկա և մասնակից էիք ինձ հետ պատահած ահավոր դժբախտություններին, ուսուցիչ... Կարո՞ղ եմ հուսալ, որ ներել եք ինձ:

ՊՈՏՈՍՅԱՆ – Ես սրտանց ցավակցում եմ քեզ, Հովսեփ: Այն ողբերգական դեպքերից հետո երեք անգամ ձեր տունն եմ եկել և միշտ փակ եմ գտել ձեր դուռը:

ԺԱԿ – Ես եկել եմ հրաժեշտ տալու ձեզ, պարոն Պոտոսյան: Ես չեի կարող հեռանալ, առանց ձեզ վերջին հրաժեշտ տալու:

ՊՈՏՈՍՅԱՆ – Է՛լ ուր ես գնում, Հովսեփ, է՛լ ուր ես գնում, մարդ ասածո... Ո՞ւմ են պետք այդ զոհերը, ասա ինձ, ո՞ւմ համար են այդքան տառապանքն ու վիշտը: Քի՞չ են կոտորել մեր ազգը, քի՞չ են սպանել, հիմա էլ ինքնասպա՞ն ենք լինում:

Ինչո՞ւ, ինչի՞ համար ախր, սա ի՞նչ անհեթեթ, ինքնահնար ողբերգություն է:

Է՛լ ուր եք գնում, մարդ ասածո:

ԺԱԿ – Զգիտեմ, չգիտեմ, ուսուցիչ, չգիտեմ...

(Վարագույր)

ԿԱՐՈՏԻ ԳՈՒՅՆԸ

(Գրական սցենար)

...Խոշոր, կլոր հայելու մեջ արտացոլվում է փոքրիկ տղայի դեմքը: Նայում է, ժպտում, աչքով է անում:

Հանկարծ խոշոր մի ձեռք մի կողմ է տանում տղային: Հայրն է: Հայելուն նայելով, մտասույզ փորձում է փողկապները: Հայելու վերևում մի լուսանկար կա. շրջանակի մեջ՝ հայրիկն ու մայրիկը: Երկուսն էլ մնջախաղի արտիստների հագուստով են: Ժպտում են ազնիվ, զարմացած, միամիտ աչքերով:

...Հանկարծ ցած է ընկնում փոքրիկ ճամպրուկը: Բացվում է: Հատակին են թափվում դիմաներկի տուփեր, քուկներ, փոքրիկ աքցան, բազմագույն լարերի խրձեր:

Տղան անզգույշ ցած է գցել ճամպրուկը : Նա ծնկում է ու շտապ-շտապ հավաքում արտիստական իրերը: Վերցնում է նաև ինչ-որ լար և ուզում է նետել ճամպրուկը: Ու հանկարծ...

...Նրա ձեռքի մեջ բացվում է ծաղիկը:

Տղան անակնկալի եկած, հիացած նայում է ծաղկին: Հետո զարմանքով տեսնում է, որ ծաղկի ցողունը երկաթե զսպանակ է...

Հայրը շրջվում է հայելուց: Տղային է նայում զայրացած, թեքվում, թեթևակի մի կողմ է հրում որդուն: Արհեստական ծաղիկը նետում է ճամպրուկի մեջ և ծնկով սեղմում կափարիչը: Մայրը բռնում է որդու ձեռքը և նրան դուրս է տանում սենյակից: Տղան շրջվում, նայում է հորը, հետո հայելուն և հայելու վերևում կախված շրջանակով նկարին: Այնտեղից ազնիվ, միամիտ, զարմացած աչքերով ժպտում են հայրն ու մայրը՝ միմյանների խայտանկար հագուստի մեջ:

Հայրը, մայրը և տղան նստած են սեղանի մոտ: Մովորական նախաճաշ է, զգացվում է, որ շտապում են: Մայրը արագ-արագ մեկնում է թեյի բաժակները: Ուտում են լուռ, գործնական:

Տղան աշխատում է շտապել, չի ստացվում: Նա այլևս ուտել չի ուզում:

– Շտապիր,– տղային ասում է մայրը,– ամեն անգամ ուշանում ենք քո պատճառով...

Հեռախոսի զանգ: Հայրը նստած տեղից թեքվում, վերցնում է լսափողը... նրա մտազբաղ դեմքը պայծառանում է ակնթարթորեն:

– Այո, այո, իհարկե: Շատ–շատ շնորհակալություն... երախտապարտ եմ...

Խոսակցությունն ավարտված է: Լսափողով քորելով քթի ծայրը, հայրը գոհ դիմում է անհամբեր սպասող կնոջը.

– Ինչպես ասում էիր, այնպես էլ եղել է: Ռեժիսորը կոտրատվել է մի քիչ: Բայց դիրեկտորը պնդել է ու ստորագրել հրամանը...

Կինը երջանիկ է: Տղան նայում է նրանց, հետո քիթը սեղանին է քսում: Նրա ձեռքերն զբաղված են: Մի ձեռքին կարագհաց է, մյուսին՝ թեյի բաժակը: Մայրը նկատում է այդ:

– Ի՞նչ ես քիթդ այստեղ–այնտեղ քսում:

– Բա հայրիկն ինչո՞ւ է քսում:

– Ինչի՞ն է քսում, – զարմացած հարցնում է մայրը:

– Լսափողին:

Հայրը ձեռքին բռնած գդալով, լայն աղեղ գծելով, կամացույց հարվածում է տղայի ճակատին: Տղան ուրախ է՝ հայրն է ուզում խաղալ իր հետ: Նա աթոռից սահում, մտնում է սեղանի տակ...

Մայրը մեկնում է ձեռքը, սեղանի տակից քաշում, դուրս բերում տղային.

– Ի՞նչ անտանելի ես դարձել... Ուշացանք..

Վագում է զանգող հեռախոսի մոտ: Վերցնում է լսափողը, խոսում է, նայելով ամուսնուն: Ամուսինը ծխում է սեղանի մոտ՝ հպարտ ու լուրջ:

– Դե, իհարկե, եղավ... Առանց մեզ նրանք ի՞նչ կարող էին անել: Օ՛հ, պատկերացնո՞ւմ ես... Պրագա՛...

Կրկեսի շենքը՝ առավոտյան: Դատարկ ու տխուր: Հավաքարարները մռայլ հավաքում են անցած երեկոյից մնացած պաղպաղակի թղթերը, պատառոտված ծրագրերն ու լրագրերի կտորները: Շենքի ճակատին՝ հսկայական ազդագրերի վրա երևում են նաև հայրն ու մայրը՝ մնչախաղի արտիստների հագուստով:

Հայտնվում են հայրը և նրանից քիչ էտ քայլող մայրն ու տղան: Տղան կախ է ընկել մոր ձեռքից և նայում է ազդագրերին:

– Կարգին քայլիր, ասացի: Իսկական պատիժ ես դարձել... Կարգին քայլիր, բալիկս, –
ավելացնում է, նկատելով ծանոթների:

Ավտոմեքենան լվանում է փողոցը: Ավտոմեքենաներ են անցնում: Բեռնատարներից մեկը
թեքվում է և մոտենում կրկեսի ետնամուտքին: Բեռնատարի թափքին նիհար, կարմիր մի ձի է:
Ավտոմեքենան և տղան գրեթե միաժամանակ են հասնում մուտքին:

– Մամ, մամ, սա ի՞նչ ձի է:

– Գնանք, գնանք, ձի է, էլի: Առաջին անգամ ես տեսնում:

Հայրը, որ արդեն ներս էր մտել, ետ է դառնում.

– Ի՞նչ եղավ ձեզ: Ուշանում ենք:

Տղան կախված է մոր ձեռքից: Ձիուն է նայում խղճահարությամբ:

– Կարծես հիվանդ է, կրկեսում ի՞նչ պիտի անի:

– Առյուծների համար են բերել: Որտեղից էլ գտել են այս կմախքը:

Տղան ձիուն է նայում, հետո՝ հորը: Մպասում է, որ նա հիմա կծիծաղի: Չէ՞ որ կատակում է:
Բայց հոր դեմքը լուրջ է: Եվ տղան հարցնում է թերահավատ:

– Ուրեմն այս ձիուկին բերել են, որ ուտե՞ն առյուծները:

– Իսկ, ի՞նչ է, գազանները պետք է քաղցած մնան: Դե գնացինք, գնացինք, փորձն արդեն
սկսվում է:

Տղան շարունակում է նայել բանվորներին, որոնք փորձում են ավտոմեքենայից իջեցնել ձիուն:
Ձին երերում է:

Արտիստական հանդերձասենյակ: Հայրն ու մայրը արդեն միմյանցից հագուստով են և հիմա
զբաղված են դեմքերին սպիտակ ներկի թանձր շերտ քսելով: Հայրը նայում է տղայի կողմն ու
ասում է մորը.

– Ձայնը չի լսվում: Ուրեմն հիմա ուր որ է մի բան կհնարի:

Մայրն իր մտքերի հետ է: Շարունակելով շաքարվել, դիմում է ամուսնուն.

– Տեսա՞ր, ռեժիսորը հազիվ պատասխանեց բարևիս:

Ամուսինը արհամարհանքով թափ է տալիս ձեռքը.

– Թքած: Նրա ձեռքերը կարճ են... Կարող ես չբարևել անգամ...

Հրճվալից դեմքով ու հանդիսավոր նրանց է մոտենում տղան: Դիմաներկով թանձր-թանձր պեպեններ է նկարել դեմքին: Ծամածոռում է դեմքը, սպասում, որ ծնողները կծիծաղեն: Բայց հայրը հուսահատ տարածում է ձեռքերը, նայում է մորը.

– Ահա, խնդրեմ:

Մայրը սեղանից վերցնում է սպունգը, գլուխը տարուբերելով սկսում է սրբել տղայի դեմքը և հետն էլ նախատում է սիրով ու բարկացած.

– Տես, ի՛նչ ես արել, տես, ի՛նչ ես արել... Տես, ո՛ւմ ես նման, անպիտան տղա...

Տղան ծիծաղում է.

– Ձեզ եմ նման:

Ավելի ամուր է սրբում նրա դեմքն ու ձեռքերը:

– Ցավո՛ւմ է, – տնքում է տղան:

– Իսկ ո՞վ է մեղավոր, ո՞վ: Հանգիստ չե՞ս կարող մնալ: Ուրիշներն էլ ասեն երեխա ունենք, մենք է՞լ...

– Իսկ դուք ինչո՞ւ ունեցաք...

Նրանք կրկեսի միջանցքով քայլում են դեպի արենա: Տղան վազում է առջևից: Կողքի ինչ–որ դռնից մի ձեռք է պարզվում և լսվում է թավ ձայն.

– Ծխելու բան տվեք:

Հայրը սովոր է լսել այդ ձայնը, դրա համար էլ նետում է անփույթ:

– Աստված տա:

Նրանց ետևից քայլում է մի պոնի: Լսելով նոր ոտնաձայն, նորից հայտնվում է ձեռքը.

– Ծխելու բան տվեք:

Իսկ տղան արդեն պազել է առյուծի վանդակի մոտ:

– Եթե դու ձիուկին չուտես, ես քեզ կարկանդակ կտամ: Չուտես, հա՞...

Առյուծը թափահարում է գլուխը: Տղան ուրախ է:

– Ես բոլորին էլ կասեմ...

Մայրը շրթունքները հպում է տղայի մազերին.

– Հիմա փորձը կսկսվի, վազիր օթյակը:

Տղան մենակ է: Նա կանգնած է վանդակի առաջ: Առյուծը նրան է նայում տխրությամբ, բացում է երախը: Ծամածռվում է:

– Ես բոլորին կասեմ, որ չուտեն ձիուկին, լա՛վ...

Առյուծը թափահարում է գլուխը:

Տղան ետ է դառնում միջանցքով, որպեսզի օթյակը գնա: Եվ նորից կողքի ինչ–որ դռնից պարզվում է նույն ձեռքը.

– Ծխելու բան տվեք...

Դատարկ դահլիճը: Արենայի կենտրոնում, փոքրիկ պատվանդանի վրա է մայրը, սահուն, նուրբ շարժումներ է կատարում՝ դանդաղ, նազելի: Հայրն զբաղված է մագնիտաֆոնով: Վերևում, գրեթե առաստաղի տակ, լուսավորողն աղմուկով կարգավորում է լուսարձակը: Հայտնվում է տղան: Մատներով հերթով աթոռներին ձեռք տալով, նա նստում է շատ վերևում, լուսավորողի դիմաց: Աթոռը չիկում է: Հայրը նայում է տղային, և կիսաձայն ասում է կնոջը.

– Ո՞ւմ մոտ պիտի թողնենք երեխային:

Կինը՝ շարունակելով վարժվել, կամացուկ.

– Մարգոն ոչ մի կերպ չի համաձայնվում:

– Ի՞նչ պետք է անենք: Նրան ո՞վ կթողնի, որ տանենք մեզ հետ:

Սկսում է վարժվել նաև հայրը: Վեճն ընթանում է վարժություններ կատարելիս: Նրանք ժպտում են երջանիկ, միամիտ աչքերով և շարունակում իրենց գործնական խոսակցությունը:

– Ուրեմն, ես չեմ գա:

Ամուսինը ձևացնում է, թե հավատում է:

– Խելագարվե՞լ ես, ինչ է: Գիտե՞ս ինչ հնարավորություն է, միջազգային բե՛մ, ճանաչո՛ւմ...

– Երեխային ես մենակ չեմ թողնի:

– Սպասիր, դու չե՞ի՞ր պնդում՝ հաջողացրու հա հաջողացրու:

– Ո՞ւմ մտքով կանցներ, թե Մարգոն կիրաժարվի:

Ամուսինը տարածում է ձեռքերը:

– Ուրիշ ելք չկա՞:

Կինը ասում է հեգնանքով.

– Դու շատ լավ գիտես, որ կա:

Լուսավորողը վերջապես կարգավորում է լուսարձակը և լույսի մի վառ, նեղ շերտ նետում տղայի դեմքին: Տղան նայում է լույսին, կկոցում է աչքերը...

– Իհարկե, հիմա կհիշես Նանիին...

– Դու պետք է հիշեիր... Քո հորաքույրն է... Եվ հետո ի՞նչ մեծ բան է... տասը–տասնհինգ օր մի երեխա պահելը..

– Հասկացիր, ախր, ամոթ է, ես համարյա սրա չափ եմ եղել, երբ վերջին անգամ տեսել եմ նրան: Ո՞վ գիտե, գուցե չկա էլ արդեն:

– Վատ լուրը շուտ է տեղ հասնում: Կիմանայինք... Լավ, իսկ ի՞նչ ես առաջարկում...

Հայրը բարձրացնում է գլուխը և սրտնեղած գոռում լուսավորողի կողմը.

– Լույս տուր ինձ:

Դառնում է կնոջը.

– Լավ, տեսնենք... Սկսում ենք նորից:

Ներկայացնում են համարը: Հնչում է մեղմ, քնարական երաժշտություն...

...Աղջիկը կանգնած է շրջանի կենտրոնում, լույսերով ողողված: Տղան դանդաղ, սահուն մոտենում է նրան և մեկնում իր ավր: Աղջիկը նայում է նրա ձեռքին, և հանկարծ այդ ավի մեջ բացվում է ծաղիկը: Աղջիկը շրջվում է սառն ու անմատչելի: Ափը կախվում է թուլացած, և ծաղիկն ընկնում է հատակին:

Փոքրիկը վերնում, գլուխը մեծավարի ձեռքին հենած, լայն բացված աչքերով նայում է ծնողների մնջախաղին: Երբ ծաղիկը հատակին է ընկնում, ցնցվում է, հիշում առավոտվա ծաղիկը, որ ցած ընկավ բացված ճամպրուկից: «Տեսնում է» դողդողացող մետաղյա ցողունը: Նրա դեմքը դառնում է թախծոտ ու հանգած: Ուրեմն ոչ մի հրաշք էլ չկա:

...Տղան հուզված է: Նա նորից է մոտենում աղջկան, մոտենում է կտրուկ, համառ շարժումով: Հիմա էլ մեկնում է ձախ ձեռքը: Եվ կրկին նրա ավի մեջ բացվում է ծաղիկը: Բայց աղջիկը

դարձյալ անմատչելի է, և ծաղիկը նորից ընկնում է հատակին: Տղան հուսահատ՝ իր հագուստի վրայից երեք փնջիկներ է պոկում և նետում աղջկան: Եվ փնջիկները, ծաղկեփնջեր դարձած շաղ են գալիս աղջկա ոտքերի տակ:

Բայց աղջիկը սառն ու անտարբեր հայացքով նայում է ինչ-որ տեղ՝ տղայի գլխի վրայով: Տղան ցնցված է: Նա գրեթե լաց է լինում: Տխուր ու միաժամանակ ծիծաղելի է նայել արտասովոր տղամարդուն: Նա ընկնում է ծնկներին, մեկնում է ձեռքերը, հանում, ցած է նետում լայնեզր գլխարկը, և նրա ճաղատ գլխին հանկարծ մի ծաղիկ է հայտնվում: Աղջկան ձանձրացնում է հրաշքների այդ միապաղաղությունը: Նա զայրացած բարձրացնում է ձեռքը, և տղան անհետանում է անմիջապես... Մնում են միայն ծաղիկներն ու սև լայնեզր գլխարկը հատակին: Այդ լայնեզր գլխարկը ջղայնացնում է նրան, և նա նորից է բարձրացնում ձեռքը: Գլխարկն էլ է անհետանում:

Հիմա միայն աղջիկն է և ծաղիկներ են նրա ոտքերի տակ: Աղջիկը գոհ է իր կախարդանքից: Նա փոքրիկ տղայի նման կռանում, չարաճճի հավաքում է ծաղիկները, բարձրանում և արդեն կանացի քնքշությամբ ծաղիկները մեկնում է երևակայական հասարակությանը և շնորհակալություն է հայտնում երևակայական ծափերի համար:

Մայրը կերպարանափոխվում է անմիջապես և գոչում է հոգնած.

– Մոտոր...

Մոր ոտքերի մոտ բարձրանում է գաղտնափոսի կափարիչը: Կափարիչի վրա կանգնած է հայրը: Նա թափ է տալիս հագուստի փոշին և փնթփնթում է զայրացած:

– Հարյուր անգամ խնդրել եմ, որ կարգին մաքրեն այս անիծյալ փոսը:

Նայում են այնտեղ, որտեղ տղան է: Տղան քնած է՝ այթոռի վրա կծկված:

Ծանոթ բնակարանը: Երեկո է:

Երեքով են: Տղան արտասովում է:

– Ես ոչ մի տեղ էլ չեմ գնա: Ես ոչ մի Նանի չեմ ուզում:

Մայրը բարկանում է:

– Ի՞նչ ես ձայնդ գլուխդ գցել: Հո երեխա չե՞ս...

– Երեխա եմ:

– Երանի քեզ, որ հորաքրոջս՝ Նանիի հետ ես լինելու, – հորդորում է հայրը, – գյուղում, բարձր սարերի վրա, անտառների մոտ: Այնտեղ հացը թխում են թոնիրների մեջ, բոցը երկինք է բարձրանում, ծուխը մշուշի պես իջնում է տների վրա: Այնպիսի հոտ է, որ պտտվում է գլուխդ...

Տղան դեռ լաց է լինում, բայց ասես ականա ականջ է դնում հորը:

– Չեմ ուզում մենակ մնալ. Ես ձեզ կարոտում եմ: Մենակ չեմ մնա...

– Բալիկս, սա վերջին անգամն է: Օհ, իսկապես, – հառաչելով ասում է մայրը, – մենք երբեք ոչ մի բանի էլ չենք հասնի...

Հայրը փորփրում է դարակները, մի հին, խունացած նկար է գտնում, բերում տղայի մոտ: Պահում է նրա աչքերի առաջ, ծածկելով նկարի կեսը:

– Դե, ասա, սա ո՞վ է:

Տղան նայում է: Ասում է զարմացած, արցունքների միջից:

– Ես եմ:

– Տեսա՞ր, որ սխալվեցիր: Դու չես, ես եմ: Եվ քեզ նման տղտղան չեմ: Սա էլ մեր Նանին է... Դու զիտե՞ս, որ նա կախարդ է...

– Չա՞ր, – հարցնում է տղան:– Ցախավելո՞վ...

Հայրն ու մայրը ծիծաղում են:

Առավոտ է: Բեռնատար ավտոմեքենան, փոշու ամպեր հանելով ու ճոնչալով, դանդաղ մագլցում է խճուղով դեպի, բարձր սարերի մեջ ընկած գյուղը: Թափքում ինչ–որ բիդոններ են: Տղան կառչել է դրանցից մեկին և շուրջն է նայում: Կողքին նստած է հայրը:

Խցիկի պատուհանից մի ձեռք է պարզվում վեր՝ բռունցք արած: Տղան նայում է զարմացած, թեքվում, դիտում է չերևացող մարդուն, ձեռքը պահում է բռունցքի տակ և ինչ–որ բան է տեղափոխում իր ափի մեջ: Հետո բացում է ափը: Ափի մեջ կանաչ կեղևով թարմ կաղիններ են: Տղան երբեք այդպիսի կաղիններ չի տեսել: Ցույց է տալիս հորը: Հայրը վերցնում, չզիտես ինչու հոտ է քաշում: Կտրում է ատամով կանաչ կեղևը: Միջուկը տալիս է տղային: Տղան կաղին է առաջարկում հորը: Հայրը հրաժարվում է՝ տարուբերելով գլուխը՝ և թախծոտ, մտահոգ իր մանկության արահետներն է փնտրում շուրջը:

Կեսօր է: Ավտոմեքենան մտնում է գյուղ: Մրտապատառ աջ ու ձախ են նետվում հավերն ու սագերը: Շոգ է: Տներից մեկի առաջ գեղջուկ կինը փայտե բարձր պռունկներով տաշտակի մեջ լողացնում է մի տղայի: Տղան ձայնը գլուխն է գցել և անընդհատ փորձում է դուրս փախչել տաշտակից:

Հայրը թփթփացնում է խցիկի առաստաղին: Իջնում է մեքենայից, պարզում է ձեռքերն ու գրկած իջեցնում տղային, նայում է շուրջը, նայում է չորացած ճյուղերից հյուսված ցանկապատի դռանը՝ կարոտով, վարանումով, անհամարձակ: Ամուր բռնում է տղայի ձեռքը, մոտենում ու խփում է հին թակով: Բայց երբ խփում է թակը, դուռը բացվում է ինքն իրեն և պարզվում է, որ դռան ետևում մի կին է կանգնած՝ երեխան գրկին: Գանգրացնելու նպատակով նրա մազերը փունջ-փունջ փաթաթված են, դեմքին կրեմի փայլող թանձր շերտ կա: Հայրը զարմացած է:

– Ո՞ւմ եք ուզում, – հարցնում է կինը:

– Ե՞ս: Ներողություն, իսկ դուք ո՞վ եք: Ես այս տանն եմ ծնվել:

– Ա՛ա... Բայց արդեն երկու տարի է, ինչ մենք ենք ապրում այս տանը:

– Իսկ որտե՞ղ է Նանին:

– Գնացել է... Իսկ դուք, ի՞նչ է, տան համա՞ր եք եկել: Երկու տարի...

Հայրը թոթվում է ուսերը:

– Իսկ Նանին...

– Նրան ի՞նչ կա... Վեր կացավ ու գնաց: Տարօրինակ է, չէ՞: Հիմա դուք զարմանում եք, թե ով ենք մենք և ինչու ենք այստեղ: Մենք քաղաքից ենք, չի՞ երևում: Օպերայի մոտ էինք ապրում... Իհա՛րկե: Պարզապես ամուսինս մի քիչ... Ավարտեց ինստիտուտը և եկել է գյուղը լուսավորելու... Տարօրինակ է, չէ՞... Ո՞վ կհավատա...

– Իսկ Նանին...

– Երբ եկանք, ապրելու տեղ չունեինք: Նա մի սենյակը մեզ տվեց: Ու մի օր էլ վեր կացավ ու գնաց: Լրիվ, գիտե՞ք: Չեք հավատում, չէ՞: Բոլորը զարմացան: Նույնիսկ ֆշշում էին վրաս: Կարծում էին, թե ես եմ նրան տնից վռնդել: Այնինչ ո՞վ էր նրա հետ խոսողը: Կամ նա ո՞ւմ հետ էր խոսում որ... Անընդհատ նստում էր փողոցում ու սպասում էր: Սպասում էր, սպասում էր... Հետո վեր կացավ ու գնաց... Գյուղացիք հիմա էլ նրա վրա շուռ եկան... Խելքը թոցրել է, ասում են: Բայց չէ՛, չհավատաք... Ճիշտ է, շատ տարօրինակություններ ունեք նա... Հենց այն, որ չէր խոսում, սպասում էր... Նստում ժամերով նայում էր մի կետի...

Հայրը մտածում է մի պահ: Ասում է մտախոհ:

– Երբ մարդ այդպես նայում է մի կետի, նա կամ ոչինչ չի տեսնում կամ տեսնում է այնպիսի մի բան, որ ուրիշները չեն տեսնում:

– Հա, էլի, ես էլ հենց դա եմ ասում:

– Բայց ո՞ր գնաց...

Կինը ցույց է տալիս անտառի կողմը:

– Ո՞ր...

– Անտառ... Այնտեղ մի տնակ կա: Ասում են առաջ, շատ տարիներ այնտեղ է ապրել իր ծերուկի հետ...

Հայրը պայծառանում է.

– Անտառապահի տնակը՞...

– Երևի: Վեր կացավ ու գնաց... Չեք հավատում, չէ՞.... Թե ինչ է անում նա անտառում, աստված գիտի... Ոնց էլ չի վախենում... Այսինքն՝ վախենալու ի՞նչ ունի... Ուրիշներն են նրանից վախենում... Իսկ դուք, ներեցեք, նրա ի՞նչն եք...

Հայրը կրկին բռնում է որդու ձեռքը.

– Գնացի՛նք...

Կինն ուրախ է, որ նրանք հեռանում են: Չայնում է հեռվից.

– Մենակ Թագվորն է նրա մոտ գնում–գալիս... նրա տունը գիտե՞ք...

Ներկարար Թագվորի ամբողջ բակը կորած է ներկված բրդերի մեջ: Դրանք ամենուրեք են, փռված են հողին, խսիրների վրա, կախված են պարաններից, լցված են ջվալների մեջ: Բակի միակ ազատ անկյունում հազիվ տեղավորվել է իշուկը:

Թագվորը կանգնած է հսկայական, մրոտ չանի մոտ ու երկար թիակով խառնում է բուրդը:

Երկար, կախ ընկած բեղերով և կնճռապատ դեմքով, կարճ–կլոր, բայց եռանդուն մարդ է:

Նկատելով եկվորներին, դառնում է իշուկին:

– Տեսա՞ր, եկան...

Հայրը ժպտում է:

– Ճանաչեցի՞ք ինձ, Թագվոր քեռի:

Թագվորը թողնում է աշխատանքը, սրբում է ձեռքերը և մոտենում է նրանց, նայում է երկար, հետո ասում է՝ չգիտես ինչու ծիծաղելով:

– Քեզ չէ, բայց էս երեխուն ոնց որ տեսել եմ մի տեղ...

Տղան գմայլված մոտենում է չանին, զգուշությամբ պտտվում է չորս կողմը, բարձրանում է ոտքերի ծայրին, ուզում է ներսը տեսնել...

– Է, սպիտակել են բեղերդ, Թագվոր քեռի: Երբ էս դրանցից մեկը մկրատով կտրեցի թթի ծառի տակ քնած ժամանակ, բեղերդ լրիվ սև էին:

Թագվորը զարմացած նրան է նայում:

– Բեղե՞րս, – մտաբերելով շնջում է նա և գոռում է ուրախացած: – Բեղե՛րս: Այ տղա, ուրեմն դո՞ւ ես, այ, ախպեր ջան: Ես էլ ասում եմ էս պուճուրին որտեղ եմ տեսել: Սրա չափ էիր, է... Խառնի, խառնի, տղա ջան, – ասում է նա փոքրին, – բայց տես, չվառվես, հա... – Հետո նորից հորն է դառնում: – Ուրեմն եկել էս հորքուրիդ տեսնելու, հա՞... Աչքը ճամփին մնաց ախր, այ ախպեր ջան...

Խոսելիս Թագվորը թփթփացնում է հոր ուսերին, հրում է, ետ է քաշվում ու նորից նայում նրան...

– Կորչում, կորչում ու մեկ էլ տեսար հայտնվում եք... Էդ որտե՞ղ եք լինում, հը՞... ո՞ր տեղերով եք ման գալիս...

– Չի ստացվում, Թագվոր քեռի... Ոնց որ սկյուռիկը անիվի մեջ... Պտտվում հա պտտվում ես, մեկ էլ տեսնում ես կյանքդ անցավ...

– Իսկ դու ինչի՞ ես անիվի մեջ մտնում... Մեզ մոտ դրանք ազատ վազվզում են անտառում... – ինդամդում է Թագվորը՝ աչքով անելով ավանակին: – Չէ՞...

– Է, դա բարդ բան է, Թագվոր քեռի: Իսկ Նանին ո՞նց է, Նանին: Էն կնոջը հարցրի... – ձեռքով խոպոպներն է նկարագրում... – Ասաց՝ Նանին թողել, գնացել է:

– Բա ի՞նչ պետք է աներ... Մենակ մարդ, գլուխն առել, գնացել է... Իր հիշատակների հետ է ապրում...

Հայրը խոսում է՝ հետզհետե ավելի հավատալով իրեն.

– Մի անգամ նամակ գրեցի, խնդրեցի քաղաք գալ, մեզ մոտ... չպատասխանեց...

– Հա էդպես էլ եղած կլինի...

– Այդպես էր... Սա նոր էր ծնվել, – ցույց է տալիս տղային, – նամակ գրեցի, խնդրեցի քաղաք գալ... Դժվար էր: Երեխային կպահեր, կարգին հանգիստ կապրեր... Չպատասխանեց...

– Հա, եղպես էլ եղած կլինի... Բա հիմի ի՞նչ կա...

– Մենք արտասահման ենք գնում, հրավիրել են... Գուցե մի երկու շաբաթ պահի երեխային...

– Կպահի, ի՞նչ պիտի ասի... իրար կպահեն... Նա էլ արդեն ոնց որ մի երեխա լինի... թիթեռ–միթեռ է բռնում...

– ...

– Բա ի՞նչ... Կարծում ես ես չե՞մ դառնալու, դու չե՞ս դառնալու... Բոլորն էլ վերջը–վերջը երեխա են դառնում... Հա... Դե, տուն մտի, հաց կուտենք, հետո ես ձեզ անտառ կտանեմ... Այսինքն, հիմի ուր որ է, Նանին էստեղ կգա, ներկ բերելու օրն է:

Հայրը հարցնում է կարոտած.

– Իսկապե՞ս, հիմա կգա՞...

Նայում է արահետին, առաջ է թեքվում, սպասում է լարված, հուզված:

Ավտոմեքենայի ազդանշան է լսվում:

– Չէ, Թագվոր քեռի, – ասում է ափսոսանքով, – ես խիստ ուշանում եմ, մեքենան սպասում է... Գուցե դուք տղային տանեիք... վարորդը շտապում է:

– Եղպես էլ կլինի...

Հայրը գրկում, համբուրում է տղային, ինչ–որ բան է ականջին շշնջում ու հեռանում է, ասես փախչում է: Թագվորը օրորում է գլուխը, նայում է ավանակին.

– Տեսնես ո՞ր են վազում էս մարդիկ, հը՞...

Լայն հովտի մեջ բացված փոքրիկ արահետով քայլում են ավանակը, Թագվորն ու տղան: Տղան հետաքրքրությամբ չորս կողմն է նայում, քայլում է մանրիկ, սայթաքում է հաճախ:

– Ճամփան երկար է, արի էշին նստեցնեմ:

– Չէ՛ չէ: Հոգնած չեմ:

Արահետը ձորն է իջնում, բարձրանում է ու անցնում մացառների միջով: Մի քանի քայլ անելով, իշուկը կանգ է առնում ու սպասում է մարդկանց:

– Ասում ես ջուր խմենք, էլի, – հասնելով իշուկին, ձեռքը նրա մեջքին դրած ասում է Թագվորը:– Խմենք...

Նա աջ է թեքվում, ետ է քաշում խոտերը, ծնկում է քարին, գլխարկի հովարը ետ է շրջում ու կռանալով փոքրիկ լճակի վրա, ախորժակով խմում է սառը ջուրը:

– Օխա՛յ, – հառաչում է նա, սրբելով բեղերը:– Խմիր, խմիր, բալա ջան:

Տղան նայում է ջրին, ուզում է խմել, բայց չգիտե ինչպես...

Թագվորը հենց աղբյուրի մոտից սնամեջ մի ցողուն է պոկում, կտրում է ծայրերն ու տղային է տալիս: Տղան ցողունի ծայրը մտցնում է լճակի մեջ, խմում է հաճույքով, զարմացած:

Արահետը բարձրանում է, մտնում է անտառ: Հսկա, կուսական անտառ:

Անտառային տեսարանները փոխարինում են մեկը մյուսին, նորից բացատ, նորից անտառ, սկյուռները սլանում են ծառերն ի վեր, կտրում, անցնում արահետը: Անտառի ձայներ են լսվում: Սաղարթները խտանում են: Արդեն անտառում մույթ է ու ահավոր: Տղան հոգնած ու վախվորած նայում է Թագվորին, իսկ նա քայլում է ու հետն էլ ինչ–որ սխալ երգ սուլում: Տղան այլևս քայլել չի կարող:

– Պապիկ, իսկ քացի չի՞ տա...

Թագվորը կանգ է առնում.

– Ո՞վ, հա՛յ, – ծիծաղում է, նայում է էջին:– Չէ, որ խելոք մնաս, չի տա:

Բարձրացնում է տղային, նստեցնում է ավանակի վրա.

– Պապիկ, իսկ իշուկը չի՞ հոգնում:

Թագվորը ծիծաղում է.

– Հոգնում է, բայց գլխի չի ընկնում: Չնեղանաս, հ՛ա , – դառնում է նա ավանակին:

Անտառը լուսավորվում է միանգամից, հայտնվում է փոքրիկ մի բացատ և բացատի ծայրին փոքրիկ մի խրճիթ: Բացատում անկարգ, այստեղ–այնտեղ թափված են թիեր, բահեր, դույլեր, կարասներ, պատի տակ ծխում է օջախը, որի վրա մրոտ կաթսա կա:

– Նանի՛, – կանչում է Թագվորը, – ախչի Նանի...

Ոչ մի ձայն:

– Ո՞ւր պիտի կորած լինի, – Թագվորը փնթփնթալով բացում է տնակի կոպիտ փայտե դուռը, տղային ներս է տանում: Կիսախավար ծխոտ սենյակը հետաքրքրում ու վախեցնում է տղային: Պատերին հսկայական չափերի թիթեռներ են, չղջիկներ, թռչունների, նապաստակների խրտվիլակներ, եղջերուի, քարայծի եղջյուրներ:

– Չէ, – ասում է Թագվորը, – տանը չի: Դու էստեղ կաց, ես գնամ տեղն ու տեղը գտնեմ, բերեմ Նանիին: Հո չե՞ս վախենում:

– Չէ՛, – վախեցած պատասխանում է տղան:

Թագվորը դուրս է գնում: Տղան սկզբում կանգնած է անշարժ, շուրջն է նայում: Հետո զգույշ սկսում է շրջել, մատով դիպչելով խրտվիլակներին, թիթեռնիկներին: Զարմացած նկատում է սեղանի վերևում, դեղին անթառամների մեջ փակցված այն լուսանկարը, որ հայրը ցույց տվեց իրեն: Հայրը՝ փոքր հասակում և այն կինը, որին բոլորը Նանի են կոչում: Նա բարձրանում է աթոռին, որպեսզի ավելի լավ նայի նկարին, երբ դուռը ճռռում և շեմքին հայտնվում է պառավը՝ խոտի ինչ–որ խուրձ կոնակին: Նա գիտե, թե ով է տղան, բայց նայում է նրան խոժոռ հայացքով: Նա բարձրահասակ է և իր անձն ու երկար սև զգեստի մեջ՝ շատ նիհար է թվում: Ճերմակ մազերը ընկած են ուսերին:

Տղան զարմացած ու վախեցած նրան է նայում:

Պառավը խոտի խուրձը հատակին է նետում, դառնում է տղային ու բարկացած հարցնում.

– Ո՞ւմ երեխեն ես:

Տղան դեռևս աթոռին կանգնած, վախեցած ցույց է տալիս նկարը.

– Այս տղայի տղան եմ...

Պառավը նայում է լուսանկարին.

– Իսկ էդ տղե՞ն ուր է:

– Ասաց շտապում է, մեքենան սպասում էր... Կարելի՞ է աթոռից իջնել...

– Ե՞ս եմ, ինչ է, քեզ աթոռին բարձրացրել: Իջի՛ր...

Նանին ծալապատիկ նստում է խսիրի վրա և խոտի միջից ինչ–որ բույսեր է սկսում ընտրել:

– Հայրիկս ասաց, որ տասը օր հետո կգա ինձ կտանի... մայրիկի մոտ...

– Հը՛մ... ուրեմն դու մայրիկ էլ ունես, հա՞...

– Իհարկե, – ապշած ասում է տղան:

Շարունակելով փնթփնթալ, Նանին բարձրանում է տեղից, մոտենում է երկաթե վառարանին, նայում է կաթսայի մեջ ու հարցնում,

– Սովա՞ծ ես...

Տղան տարուբերում է գլուխը՝ «ոչ»:

– Իսկ ես սոված եմ, ես պիտի ուտեմ:

– Ո՞ւմ, – վախեցած հարցնում է տղան:

– Ո՞ւմ, – զարմացած նրան է նայում Նանին:– Քեզ, ո՞ւմ :

– Ի՞նձ, – ավելի վախեցած հարցնում է տղան:

Պառավը սկսում է ծիծաղել, օրորում է գլուխը...

– Էդ քեզ ո՞վ է ասել, որ ես մարդ եմ ուտում:

Շարունակելով ծիծաղել, պառավը գոգնոցով սրբում է ձեռքերը և դուրս է գալիս տնակից: Դուռը ճռռում է չարագուշակ:

Տղան վեր է թռչում աթոռից, մոտենում է դռանը, նայում է ճեղքից:

Պառավը տակառից հին դույլով ջուր է վերցնում և անցնում է բացատով դեպի կարասները: Քայլում է սպիտակ ծաղիկների վրայով:

Դույլից երեք տեղից նեղ շիթով հոսում է ջուրը և որտեղ ընկնում է՝ կարմրում են սպիտակ ծաղիկները:

Տղան ապշած է: Իսկ պառավը կարասի պարունակությունը փայտով խառնելով, նույն ճանապարհով ետ է բերում դատարկ դույլը: Նա քայլում է կարմրած ծաղիկների վրայով, առանց ուշադրություն դարձնելու դրանց:

Պառավը ներս է մտնում, փայտե հին պահարանից դուրս է բերում կավե երկու ափսե, փայտե գդալներ ու հաց:

– Դե շուտ, նստիր ու կեր:

Հետո նայում է տղային հոնքերը կիտած: Տղան արագ նստում է աթոռին, ձեռքն է առնում փայտե գդալը, նայում է հետաքրքրությամբ: Պառավը շերեփով շիլա է լցնում նրա ափսեն:

– Որ չուտես, ե՛ս քեզ կուտեմ:

Տղան նայում է նրան հոնքերի տակից և խառնում է շիլան:

– Բա խաբել կարելի՞ է:

– Սրա՛ն մտիկ: Իսկ դու ի՞նչ գիտես, որ խաբում եմ: Մեկ էլ տեսար՝ կերա:

– Խաբում ես:

– Ինչի՞ ... Կախարդի նման չե՞մ...

– Նման ես, – ասում է տղան:

– Դե, տեսնո՞ւմ ես:

Տղան սրտապնդվել է մի քիչ:

– Բայց դու կախարդ չես, դու ծաղրածու ես, հայրիկի նման...

Պառավը քնծիծաղով նրան է նայում: Տղան ուտում է դանդաղ, գրեթե կշտացել է: Մերթ ընդ մերթ նայում է Նանիին, բայց տեսնելով, որ նա էլ իրեն է նայում, փախցնում է աչքերը:

Պառավը քրթմնջում է.

– Հայրիկի նմա՛ն... Ուզո՞ւմ ես այնպես անեմ, որ ափսեդ դատարկվի...

Տղան նրան է նայում թերահավատությամբ:

– Ուզում եմ:

– Դե փակիր աչքերդ ու հաշվիր մինչև հինգը: Առանց սխալվելու, հա...

Տղան փակում է աչքերը, հաշվում է: Նանին արագորեն փոխում է ափսեն: Տղան բացում է աչքերը: Ափսեն դատարկ է:

Պառավը շարունակում է ուտել անշտապ: Տղան նրան է նայում զարմացած, իջնում է աթոռից, նայում է սեղանի տակ՝ փնտրելով գաղտնիքը:

Նանին ծիծաղում է:

Տղան հրելով բացում է դուռը ու դուրս է նետվում: Կիսաբաց դռնից երևում է, թե ինչպես է նա վազում սպիտակ ծաղիկների միջով դեպի կարմրած ծաղիկների շերտը: Մեկնում է ձեռքը, արմատով հանում ծաղիկներից մեկը: Նայում է ուշադրությամբ: Սովորական ծաղիկ է՝

ցողունով ու արմատով: Հիշում է հոր ծաղիկը՝ մետաղե զսպանակով: Մեկ ուրիշ ծաղիկ է պոկում: Նույնն է: Ծաղիկը ձեռքին վազելով տուն է դառնում, մեկնում է Նանին:

– Իսկ սա ո՞նց է կարմրում:

– Ինչը՞, – հարցնում է Նանին:

– Ծաղիկը, – ասում է տղան: Նա նայում է ծաղկին, և աչքերը անսքող զարմանքից լայնանում են:

– Ծաղիկը նորից ճերմակ է:

Պառավը ժպտում է:

Տղան նստած է թախտին: Նանին նրան է մոտենում՝ անկողինը գրկած:

– Վեր կաց, տեղդ բացեմ: Հո չոր չի՞: Փափուկ եք սովորել... Դրա համար էլ կուզիկ եք ման գալիս... Քեզ թեթև ծածկոց կտամ... Հիմի շոգ են գիշերները...

Նա արագ ու քնքշորեն զցում է անկողինը: Տղան դանդաղ հանվում է:

– Ըհը... Պառկի... Պառկի ու քնի... էգուց քեզ անտառ եմ տանելու:

Տղան պառկում է, շրջվում է կողքի վրա: Առաստաղին է նայում: Գերանների տակ, ամենուրեք չորացրած ծաղիկների խրձեր են:

– Բա դու չե՞ս քնում, – հարցնում է նա պառավին:

– Է՛հ, – տնքում է պառավը:– Ես էնքա՛ն եմ քնել...

Նանին հանգցնում է ճրագը: Բակ է ելնում:

Լսվում է տղայի ձայնը.

– Իսկ ձեր զուգարանը որտե՞ղ է:

– Ի՞նչ:

– Զուգարանը:

– Հիմա՞ ես ուզում:

– Չէ, ընդհանրապես...

Պառավը փնթփնթում է.

– Ընդհանրապե՛ս... էս ի՞նչ լեզվով է խոսում էս մի մատ երեխեն, տեր աստված...
Ընդհանրապես, տնից դուրս ամեն տեղ է... Քնի...

Պառավը ծնկած փչում, աշխուժացնում է կրակը, ցախ է ավելացնում: Կաթսան դնում է կրակի վրա: Ինչ–որ խոտեր է լցնում մեջը, խառնում է ու նստում կողքին: Գրպանից դանդաղ հանում է չիբուխը, խանձողով վառում ու ծխում է:

Եվ նստում է այդպես անշարժ, կրակին մեկնած իր խորշումած, երկար մատները:

Նա ինչ–որ բան է հիշում: Եվ նրա դեմքը մերթ հին, անցած ինչ–որ ցավ է արտահայտում, մերթ ժպիտ:

Հեռվից անտառի սոսափն է լսվում: Երկնքում մեռնում են աստղերը: Մթնում է, և պառավի երկար, կռացած ստվերը հետզհետե ձուլվում է երկնքին:

Տղան ու պառավը վազում են մարգագետնում, թիթեռնիկների ետևից: Նրանց ձեռքերին ինքնաշեն ցանցեր կան: Տղան ընկնում է, ծիծաղում ու նորից բարձրանալով, շարունակում է հալածել հսկա թիթեռին: Պառավն ավելի ճարպիկ է: Որսում է թիթեռը: Նրանք շատ ուրախ են: Թիթեռը զցում են ապակե տուփի մեջ:

Տղան գոհ կրծքին է սեղմում տուփը:

Կեսօր է: Պառավը կանգնած է լեռնային գետակի մեջ դուրս ցցված մի քարի: Տղան նրան է նայում ափից: Պառավի ձեռքերը ջրի մեջ են:

– Այդ ի՞նչ ես անում, – հարցնում է տղան:

Պառավը ձեռքը շուրթերին է տանում:

– Սուս, – շշնջում է նա:– Սուս, փախցնում ես...

Տղան անշարժանում է:

Հանկարծ պառավը ցնցվում է: Մի ակնթարթ ավելի է թեքվում ջրի վրա, հետո թափով բարձրանում է տեղից: Նրա ձեռքերից կախված թալրտում է արծաթավուն ձուկը: Պառավը ցողվել է ջրով: Տղան ծափ է տալիս, թռչկոտում է ափին:

Պառավը ժպտում է, ձուկը զամբյուղն է նետում և կրկին շուրթերին է տանում մատը.

– Մ'ուս, – շնչում է նա, – կփախցնես...

Տղան ու պառավը անցնում են անտառով: Հանկարծ դոփյուն է լսվում: Գրեթե նրանց կողքով, ծառերի ու թփերի արանքով, վարգով անցնում են վայրի եղնիկները:

Հանկարծ ամենից վերջում վազող եղնիկը կանգ է առնում ծառերի արանքում և նայում պառավին: Պառավն էլ նրան է նայում սնեռուն, կենտրոնացած: Եղնիկը շրջվում, հեռացող հոտին է նայում ու նորից պառավին:

Տղան շվարած է:

– Դե արի, արի, խեղճ հայվան, – հանկարծ ասում է պառավը:

Եղնիկը նրան է նայում խլշկոտած, քայլում է դեպի պառավը՝ կաղալով: Մոտենում է ու ցավոտ ոտքը թույլ-թույլ հպում է գետնին:

– Արի, արի, տեսնեմ ի՞նչ է պատահել քեզ:

Նա կռանում, բարձրացնում է եղնիկի ոտքը:

– Գիժ ես, էլի, – ասում է պառավը: – Բա էս ոտքով ո՞ւր ես գնում:

Նա գրպանից փոքրիկ դանակ է հանում, բացում է ու ծայրով դուրս է բերում եղնիկի կճղակների արանքը մտած ուտը:

– Դե հիմա գնա, էլ ո՞ւր ես կանգնել, – փնթփնթում է պառավը:

– Եղնիկը կրկին ոտքը թույլ-թույլ գետնին է դնում. զգում է, որ չի ցավում այլևս ու հեռանում է ետ-ետ նայելով, կորչում անտառի խորքում...

– Տղան Նանիին է նայում խորին զարմանքով ու ակնածանքով:

Խարույկի կողքին նստած են տղան ու պառավը: Նստած են գրեթե իրար սեղմված: Պառավը կրակի վրայից վերցնում է խորոված ձկան շիշը: Նրանք ուտում են՝ հենց շշի վրայից պոկոտելով ձկան պատառները, այրվելով ու փնչալով: Տղան ինչ-որ բան է պատմում Նանիին:

– Պառավը օրորում է գլուխը, զարմանում, ծիծաղում է: Տղան նայում է նրա ձեռքերին, խոշոր, արևատ ձեռքեր են. ուռած երակներով, ուժեղ... Նկատելով տղայի հայացքը, իր ձեռքերին է նայում Նանին, շուռումուռ է տալիս ձեռքերը.

– Մեկմեկ ես էլ եմ զարմանում: Շատ են մեծացել, ոնց որ ուրիշի ձեռքեր լինեն, – մտազբաղ ասում է նա:

Ցերեկ է: Բացատի մեջտեղում կանգնած է իշուկը: Նրա կռնակին իրար միացված կախված են երկու կավե սափորներ:

Քիչ այն կողմ քարին նստած ծխում է ներկարար Թագվորը:

Անտառի կողմից գալիս են պառավն ու տղան: Պառավի ձեռքին եղևնու ճյուղ կա:

Ծերուկը բարձրանում է տեղից, ողջունում է թատերայնորեն.

– Ա՛յ շա՛տ բարև:

Տղան գլխով է անում: Պառավը, առանց պատասխանելու նրա բարևին, անցնում է նրա մոտով և եղևնու ճյուղը հենում է դռան կողքի պատին:

– Վա՛յ, էս տոնածա՞ռն ինչի եք բերել, – հարցնում է ներկարարը՝ խորհրդավոր շշուկով:

Պառավը շրջվում, նրան է նայում արհամարհանքով: Նետում է կողքից.

– Էսօր նոր տարի է մեզ համար:

– Վա՛յ, – ծիծաղից խեղդվում է ծերուկը:– Այ ախչի, դու լրիվ էն... Հա՛... Լսի, չգնա՞մ քաղաքից պրոֆեսոր բերեմ քեզ համար...

– Պառավը կաս–կարմիր է կտրում գայրույթից:

– Իսկ դու ի՞նչ ես անում քաղաքում, հը... Ես քեզ ներկեր եմ տալիս, դու տանում ես քաղաքի բազարում ծախում հավերիդ հետ, հա՛... Իմ ներկերը ծախելու բան ե՞ն, այ գետինը մտնես դու...

– Ո՞վ է ասում:

– Հլա սրան տեսեք: Քո ցերեկվա ման եկած տեղերը ես գիշերն եմ ման եկել, ա՛յ նախընտ պանիր:

– Այ ախչի, այ ախչի, – այս ու այն կողմ է վազում ներկարարը:

– Այ ախչին պատանդ կարի, կեղտոտ չարչի: Գյուլլախորով ըլնես դու: Աստված քեզ քոս տա, եղունգ չտա:

Ծեր ներկարարը կանգնել ու հիացած լսում է.

– Կարկո՛ւտ ա....

– Էշն էլ հետդ ման ես ածում, որ կողքին մարդ երեվաս, հա՞... Դե, կորի էստեղից, սատանի չարիս: Ականջիդ հետևը կտեսնես, ներկերս չես տեսնի...

Ներկարարը ավանակի սանձը բռնած քաշում է՝ որ հեռանա: Ասում է խեղճ–խեղճ...

– Ախր ես էշիս համար էի ուզում...

– Հա, հիմա էլ էշդ ես ուզում ներկես, ծախես, հա՞, խաչագողի ծոռ...

– Էհ, թողնո՞ւմ ես, որ մարդ բերանը բաց անի: Սխալ է աշխատում, է՛ ...

Պառավը մի քիչ հանգստացած է.

– Ի՞նչն է սխալ աշխատում:

– Էշս...

Տղան ծիծաղում է:

Ծիծաղում է նաև պառավը: Ասում է ծիծաղի միջից.

– Այսինքն, ո՞նց է սխալ աշխատում, ա՛յ յալանչու գդակ:

Ներկարարը խոսում է ամենայն լրջությամբ:

– Հինգ տարի է իմ էշն է, չէ՞ ...

– Հետո՞ ...

– Ո՞նց թե հետո: Ես իմ ժամացույցը միշտ նրա հետ եմ լարել:

Գրպանից հանում է մեծ, կլոր ժամացույցը:

Էշը զոռում է:

– Տեսա՞ ր: Առաջ ուղիղ ժամը իննին էր զոռում, իսկ հիմա տասն անց է: Հիմի ես ի՞նչ անեմ: Տարա անասնաբույժի մոտ: Ասում է էշդ ճիշտ է աշխատում, ժամացույցդ է փչացել: Ուրեմն ես իմ ժամացույցը չգիտեմ, հա՞ ... Հարյուր տարի ճիշտ աշխատել է, հենց հիմա՞ փչացավ: Պապիս հոր ժամացույցն է:

Վախվիլիսելով մոտենում է պառավին.

– Նայիր էշիս, էլի, – խնդրում է ներկարարը: – Տես ինչ է պատահել: Այ ավսչի, ինչի՞ ես ինձ նայում:

Նանին կրկին հարձակվում է բարկացած.

– Որովհետև քեզ պիտի բուժել, քեզ: Որովհետև հավերիդ հետ հոգիդ էլ ես ծախում քաղաքում, փուչ արարած...

– Էլի սկսվեց, – փնթփնթում է ներկարարը և հեռանում է շտապով, դիմելով ավանակին, – էսօր թարսվել է, գործ չունես, գնանք...

Պառավը բարձրացնում է եղևնու ճյուղը, փորձում է ներս մտցնել դռնից: Տղան օգնում է նրան: Նորից հայտնվում է ներկարարը...

– Դե լավ, լավ, չեմ նեղանում, մի քիչ ներկ տուր, ես քեզ ձու կբերեմ...

– Չեմ տա:

Երեկո է: Խրճիթի կենտրոնում կանգնած է եղևնին: Ճյուղերից ինքնաշեն լապտերներ են կախված, վառվում են մոմերը: Լուսավորվել, գեղեցկացել է խրճիթը:

Պառավը բամբակ է տալիս տղային: Տղան պոկում է փաթիլները ու փչում եղևնու կողմը: Փաթիլները թռչում, թառում են ասեղների վրա:

– Իսկ դու կարո՞ղ ես այնպես անել, որ իսկական ձյուն գա, – հարցնում է տղան:

– Ձմռանը՞:

– Պահ, ձմռանն առանց այդ էլ լիքը ձյուն է: Հիմա...

– Չէ, հիմա չի լինի...

– Ինչո՞ւ...

– Էդ մեկը դեռ չեմ սովորել, – կատակով ասում է պառավը: Եվ ավելացնում է լրջությամբ:– Այ, թե որ մնայիր ինձ մոտ, իրար հետ կսովորեինք...

Տղան չի լսում նրան: Նա փայլող աչքերով լապտերիկներին է նայում:

– Իսկ ես երևի կկարողանամ, – ասում է տղան:

– Ի՞նչ:

– Որ ձյուն գա... Երբ ուզեմ...

Նանին ժպտում է.

– Բա ինչո՞ւ են ծաղիկները կարմրում ու նորից սպիտակում: Ինչո՞ւ եղնիկը քեզ մոտ եկավ: Ինչո՞ւ անհետացավ իմ շիլան...

Նանին ժպտում է.

– Ուզո՞ւմ ես քեզ անտեսանելի դարձնեմ...

– Ի՞նչ...

– Անտեսանելի...

– Չէ մի... Կարող ես, հա՞...

– Իհարկե: Էնպես կանեմ, ոնց որ շուշա, քո միջից կերևա աշխարհը...

– Լրի՞վ անտեսանելի կդառնամ:

– Լրիվ, լրիվ... Դու կտեսնես, իսկ քեզ ոչ ոք չի տեսնի...

– Դե դարձրու, – ասում է տղան:

Պառավն ու տղան նստած են բացատում, խոտի վրա: Պառավն անթարթ աչքերը կրակին է հառել: Տղան անքթիթ պառավին է նայում: Խարույկի մոտ, հողի մեջ մի ճյուղ է խրված: Ճյուղից կախված է օձի նետած երկար մաշկը և օրորվում է հովից:

– Իսկ դու չե՞ս փախչի, – խիստ հարցնում է պառավը:

– Չէ, չէ, – անհամբեր պատասխանում է տղան:

– Նրանք էլ էին ասում՝ չէ, բայց հենց որ անտեսանելի դարձրի, փախան... Ու հիմա ոչ ոք չկա... Տեսնո՞ւմ ես...

– Ես չեմ փախչի...

– Դե երդվիր, – պնդում է Նանին:

– Մամայիս արև...

– Նրանք էլ էին ասում՝ մամայիս արև...

– Քո արև, – շտապ ասում է տղան:

– Արևիդ մատաղ, – շնչում է պառավը պայծառացած:

– Դե լավ, թող լինի...

Նա փակում է աչքերը, տարածում է ձեռքերը և ասում խիստ.

– Էստե՞ղ ես, օձի կաշի...

Տղան գլխով է անում երկյուղած...

– Էստե՞ղ ես, օջախի բոց...

Տղան կրկին գլխով է անում:

– Ուրեմն թող լինի, – շնչում է պառավը... թող լինի...

Նա ինչ–որ բառեր մրմնջալով, օջախից խանձող է վերցնում ու վառում օձի շապիկի ծայրը:
Մաշկը դանդաղ սկսում է ծխալ:

Տղան համակ ուշադրություն է:

Կրակը սողում է օձի մաշկի վրայով:

Պառավը փակում է աչքերը և շնչում է.

– Թող լինի... թող լինի...

Մաշկն արդեն մի փոքր է մնացել... Ուր որ է՝ կմոխրանա ամբողջը: Մաշկի ծայրը բռնկվում է
կապույտ կրակով, ճարճատում է:

Տղան ահով, ուշադիր հետևում է կրակի խաղին:

Ու անմիջապես էլ լսվում է պառավի վախեցած ձայնը...

– Վահ, որտե՞ղ ես... Ի՞նչ եղար... Ես քեզ չեմ տեսնում:

Տղան զարմացած շոշափում է իր մարմինը, ոտքերը...

– Դե լավ, է՛, – քիչ նեղացած, թերահավատորեն ասում է նա:– Իբր թե չի տեսնում...

Պառավը նայում է նրա ձայնի ուղղությամբ, որոնում է տեսնող աչքերով, ձեռքերը ծնկներին է
խփում, շնչում է.

– Ախր էսքան շուտ չպետք է լիներ... – Կանչում է:– Ո՞ւր ես, մի հեռանա, պուճուրս, մի հեռանա...

– Այստեղ եմ, – դեռևս թույլ կասկածով ձայնում է տղան:

– Որտե՞ղ...

– Քեզ մոտ եմ... Ես ինձ տեսնում եմ... Ես ի՞նչ անտեսանելի եմ...

Պառավն օրորում է գլուխը...

– Հա՞, հենց այդպես է... Դու տեսնում ես քեզ, բայց էլ ոչ ոք չի տեսնում... Ոչ մեկը... Էդպես է...

– Հիմա դու ինձ չե՞ս տեսնում...

– Իսկ դու որտե՞ղ ես... տուր ձեռքդ...

Պառավը մեկնում է ձեռքերը նրա կողքով, շոշափում է օդը, նայում է նրա միջով, արագ փախցնում է հայացքը...

Տղան ձեռքերը պահել է թիկունքում, սպասում է հետաքրքրությունից վառվող աչքերով, հարցնում է անհամբեր...

– Ուրեմն իսկականի՞ց չես տեսնում... Իսկականի՞ց...

– Բայց ախր շատ շուտ եղավ, – ինքն իրեն զարմացած քրթմնջում է պառավը:– Ոչ մի անգամ էսպես չէր եղել, տուր ձեռքդ, գառնուկ ջան...

Տղան ճշում է վայրի հրճվանքով: Շողում են աչքերը: Նա վեր է թռչում տեղից, սկսում է վազել բացատում, ցրիվ է տալիս չոր փայտերը, գլխկոնձի է տալիս ծաղիկների մեջ, ցատկոտում է բարձր, բարձր ու գոռգոռում երջանիկ.

– Այստեղ եմ, այստեղ եմ, չէ, չէ, այստեղ եմ...

Հետո սլանում է անտառ՝ բղավելով.

– Ուո՛ւ, ես եմ այս անտառի տերը...

Պառավը նստած է մարդկ օջախի մոտ:

Տղան վերադառնում է անտառից, կանգնում է Նանիի դիմաց, բայց պառավն առաջվա նման նրան չի տեսնում, և խոսում է իբր ինքն իրեն.

Գոնե մի ձայն հաներ... Հիմա ի՞նչ է անում սոված, մենակ...

Նա փոքրիկ կաթսայից մի կտոր ձուկ է հանում, դնում է փայտե ափսեի մեջ, շրջվում է, որ հաց էլ վերցնի:

Տղան չորեքթաթ կամացուկ մոտենում է նրան, ափսեից թոցնում է ձուկը, նստում է խոտին ու անմիջապես սկսում ուտել:

Պառավը շրջվում է.

– Վա՞յ, էս ինչ բան էր... – զարմանում է նա, տեսնելով դատարկ ափսեն:

Նա շուրջն է նայում՝ իբր որոնելով տղային և օրորում է գլուխը...

– Էդ դու ես, հա՞, անպիտան տղա:– Որտե՞ղ ես դու...

Տղան ձեռքով սրբում է բերանը ու չարաճճի ժպտալով նայում է նրան:

Պառավը պարզում է ձեռքերը ու լուսնոտի նման չտեսնող աչքերով քայլում է բացատով դեպի տղան:

– Որտե՞ղ ես, այ տղա...

Տղան փոթկացնում է, կռացած անցնում է նրա թնի տակով, օջախի վրայից հափշտակում է կաթսան և նստում է խոտի վրա:

Պառավը շարունակում է «որոնել» տղային:

– Գիտեմ, գիտեմ, թե որտեղ ես, ես առնում եմ քո հոտը... Վայ, ձկան հոտ է գալիս քեզնից...

Տղան անմիջապես փոխում է տեղը՝ շարունակելով շտապ–շտապ ուտել կաթսայից:

– Ես լսում եմ քո ոտքերի ձայնը, – ասում է պառավը՝ նայելով տղայի կողմը:– Լսում եմ, թե ոնց ես անցնում կանաչի վրայով...

Հանկարծ նա սկսեռնում նայում է կաթսային.

– Վայ, թոչում է իմ կաթսան... Էդ ի՞նչ ես անում... Ուզում ես ինձ սովա՞ծ թողնել...

Տղան հանկարծակիի եկած ձեռքից բաց է թողնում կաթսան:

Պառավը քայլում է բացատում և հավաքում տղայի ցրիվ տված ցախը: Տղան ոտքերի թաթերի վրա հետևում է նրան, քաշում է փեշը.

– Վայ, է՞ս ինչ էր, – շրջվում է պառավը:– Որտե՞ղ ես:

Տղան իսկույն նրա թիկունքն է անցնում, ծիծաղում է կամացուկ ու նորից քաշում է փեշը:

Դու ես, դու, – ասում է պառավը:– Ես էլ կարծում էի, վազվզում ես ինչ–որ տեղ: Հեռացել ես ինձնից: Ուրեմն սիրում ես դու ինձ:

Նա ծալապատիկ նստում է խոտին, հանում է ծխամորճը, ծխում է:

– Բա հիմա ի՞նչ պիտի անես...

– Ինչ կուգեմ, կանեմ, – պարծենում է տղան:

– Ի՞նչ:

– Թաքուն կմտնեմ խանութ ու կվերցնեմ բոլոր խաղալիքները:

– Բա ուրիշ երեխեքին ոչինչ չմնա՞...

– Ի՞նձ ինչ...

– Է, չեղա՛վ... Բա դրա համար արժե՞ չերևալ մարդկանց:

– Հսկիչի թնի տակով կինո կմտնեմ... Տրամվայ, տրոլեյբուս, գնացք. ձրի՛... Իսկ կրկեսո՛ւմ ինչեր կանեմ...

Պառավը ժպտում է...

– Էհ, դու մենակ ուրախ բաների մասին ես մտածում... Իսկ գիտե՞ս ինչքան տխուր է անտեսանելիի կյանքը...

– Ինչո՞ւ, – զարմանում է տղան...

– Որ քեզ չեն տեսնում...

– Ավելի լավ, – զարմանում է տղան:– Ինչ ուզեմ, կանեմ...

– Չէ, – պառավն օրորում է գլուխը, – Վատ բան է... Ոչ մեկը քեզ չի տեսնում, դառնում ես լրիվ մենակ, մեն–մենակ, գալիս անցնում են կողքովդ ու քեզ չեն տեսնում, դու նրանց համար չկաս, գոյություն չունես...

Տղան մտահոգված է փոքրինչ, նայում է հուզված պառավին:

– Իսկ ամենավատն էն է, որ քեզ կարոտած մարդիկ քեզ չեն տեսնում: Ուզում են տեսնեն ու չեն տեսնում...

Տղան ավելի է մտահոգված...

– Ուրեմն հայրիկս, մայրիկս ինձ չե՞ն տեսնելու:

– Բա ինչ, – ասում է պառավը՝ փոքրիկ կաթսայի մեջ խառնելով եփվող ներկը:– Չեն տեսնելու...

– Բա ես ի՞նչ պետք է անեմ, – ազդված ասում է տղան...

Հանկարծ պայծառանում է.

– Լավ, այսօր անտեսանելի խաղամ, իսկ վաղը դու ինձ նորից նույնը կդարձնես, հա՞...

Պառավը նայում է նրա կողքով հեռուները...

– Չէ՛, բան չի դուրս գա:

– Ինչո՞ւ...

– Հե՛շտ էր քեզ անտեսանելի սարքելը, – ձևացրած բարկությամբ ասում է պառավը: – Ժամանակ է պետք, որ նորից մարդ դառնաս:

– Ինչքա՞ն ժամանակ, – վախեցած հարցնում է տղան:

– Դե երևի մի տարի...

Տղան զարմանքից ու վշտից իջնում է խոտի վրա:

– Ուրեմն, ես մի տարի չե՞մ տեսնելու հայրիկիս, մայրիկիս...

– Դու տեսնելու ես: Նրանք քեզ չեն տեսնելու...

– Բա որ կարոտեն...

– Չեն կարոտի...

– Կկարոտեն, – ճչում է տղան, վազում է պառավի մոտ, կանգնում նրա դիմաց: Նրա աչքերն արցունքով լի են:

– Դու, դո՛ւ ես մեղավոր... Դո՛ւ հնարեցիր... Ես չեմ ուզում անտեսանելի մնալ... Ետ վերցրու կախարդությունդ... Չեմ ուզում...

– Լավ, լավ, մի գոռա... Ինքը կանցնի... Ոնց որ ներկը ծաղիկների վրայից...

Տղան հեծկլտում է: Կրծում է շրթունքները, շնչում է սեղմած բռունցքներով...

– Դու, դու էիր մեղավորը...

– Ճար չկա, – ասում է պառավը, – հերդ որ գա, կասեմ անտառ ես գնացել՝ խաղալու: Կմնաս ինձ մոտ: Իրար հետ կապրենք, ձուկ կբռնենք ու մեծ–մեծ թիթեռներ... Ու ես ուժեղ կկախարդեմ, որ դու շուտ մարդ դառնաս, իսկական մարդ...

Տղան ցնցվում է:

– Հա, ուրեմն դիտմամբ ես արել, չէ՞... Դիտմամբ ես արել:

Տղան խեղդվում է զայրությից, ուզում է շատ ավելի վիրավորական բան ասել և չգտնելով, փախչում է հեկեկալով, ճանապարհին խփում, ցած է գլորում ներկով լի կճուճները: Կճուճները ջարդվում են: Ներկերը թափվում են գետնին, ծաղիկների վրա, խառնվում են իրար, և բացատի ծաղիկները ինչ–որ տարօրինակ պղտոր գույն են առնում:

Նանին մի քարի նստած ձուկ է մաքրում: Հանկարծ բարձրացնում է գլուխը, և աչքերը զարմանքից լայնանում են:

Նրա դիմաց, ծառերի ետևով, լրիվ մերկ վազում է տղան, վայրի աղաղակներով լցնելով շրջապատը, ծոմռելով դեմքը:

Նանիի սուր աչքը հեռվում նկատում է որսորդին: Դա անհանգստացնում է նրան: Որսորդը կարող է բացատ մտնել, տեսնել տղային, և կբացահայտվի «անտեսանելի» խաղը: Ի՞նչ անել:

Իսկ տղան չոր ճյուղեր է հավաքել անտառից ու զգուշությամբ տանում է քիչ առաջ իր ցրիվ տված ջախի կույտի մոտ:

Պառավը մտածում է, որ լավ կլինի վերջացնել խաղը:

Տղան ճյուղերը լցնում է ջախի կույտի վրա: Իբր աղմուկը լսելով, պառավը շրջվում է.

– Էդ դո՞ւ ես... Եկար վերջապես, հա՞... Ուրեմն կարոտեցիր ինձ...

Տղան լուռ է:

– Վայ, էս ի՞նչ բան է,– զարմանքով բացականչում է պառավը՝ տղայի ոտքերը մատնացույց անելով:– Ես տեսնում եմ քո ոտքերի մատները... Այ քեզ բան, ոնց որ գորտը ցատկոտի...

– Ճի՞շտ, – ուրախանում է տղան:

– Ուրեմն, չարչարանքս իզուր չանցավ, – ասում է պառավը:– Դու վազվզում էիր, իսկ ես կախարդում էի անընդհատ:– Վա՛յ, ականջը, կախված է օդում... Ոնց որ թիթեռ լինի...

– Ուռա, – ճչում է տղան, տեղում վեր է ցատկում և հանկարծ լռում է վախեցած:

– Սպասիր, սպասիր, մի նայիր, – բղավում է նա:

Տղան վազքով անցնում է տան ետևը և երբ հայտնվում է կրկին՝ նրա հագին կարճ շավար կա:

– Տեսնում եմ, տեսնում եմ, ուրախացած ասում է պառավը: – Հրես ոտքերդ, հրես ձեռքերդ...

Տղան ուրախացած շոշափում է իր մարմնի այն մասերը, որ հիշատակում է Նանին:

– Իսկ գլո՞ւխս, – հարցնում է նա, – առանց գլխի ո՞նց կգնամ... Գլուխս չի՞ երևում...

– Չէ:

– Իսկի՞ չի երևում, – տխրած հարցնում է տղան:– Իսկի՞ ...

– Իսկի չի երևում, – հոգնած ասում է պառավը, դեպի տուն քայլելով:– Մենակ ականջներդ են ցցված օղի մեջ:

– Նանի ջան, բա ես առանց գլխի ի՞նչ կանեմ, – լալիս է տղան:

Պառավը շրջվում, թախծոտ հայացքով նայում է նրան.

– Հիմի մի բան կանեմ, – փնթփնթում է նա: Նայում է սևեռուն ինչ–որ տեղ, խոսքեր է մրմնջում և աղերսում է շշուկով, – թող լինի, թող լինի...

Տղան ասես հմայված նրան է նայում:

– Ըհը, երևաց վերջապես քո դատարկ գլուխը, – ժպտում է պառավը:

Տղան ուրախացած փոքրիկ բռնցքներով խփում է իր գլխին, վեր–վեր է թռչում, վազում է պառավի մոտ, գրկում է նրան և լաց լինելով ու ծիծաղելով արագ–արագ համբուրում է պառավի այտերը, ճակատը, աչքերը...

Տղան ու պառավը ձեռք–ձեռքի քայլում են անտառով, գետակին են մոտենում:

Տղան կանգնած է գետակի մեջ, ոտքից գլուխ օճառի փրփուրով ծածկված: Պառավը լողացնում է նրան ու հետն էլ ինչ–որ բան է պատմում:

Փաթաթում է տղային լայն ցամքոցի մեջ ու գրկած շարժվում դեպի տուն՝ հանդիսավոր, գլուխը բարձր պահած:

Խրճիթը լուսավորված է նավթի լամպի լույսով: Թախտին պառկած է տղան:

Պառավը մեջքով կանգնած է դեպի տղան և փայտածխի խոշոր արդուկով սեղանի վրա արդուկում է տղայի վերնաշապիկն ու կարճ տաբատը:

Տխուր է պառավը: Վաղը բաժանվելու են նրանք:

– Գիտես ինչ, ես շատ կուզեի, որ դու ամեն առավոտ ինձ ասեիր «Բարի լույս»:

– Կասեմ, Նանի: Բայց դու հո չես լսելու: Դու հո հեռախոս չունես...

Պառավը շրջվում է դեպի նա:

– Դու մենակ ասա, ես անպայման կլսեմ: Դու հո գիտես, որ ես շատ բան եմ լսում:

Տաք, խաղաղ առավոտ է:

Պառավն ու տղան գլխահակ կանգնած են իրար դիմաց: Պառավը բարձրացնում է գլուխը, մի զամբյուղ է մեկնում տղային: Ջամբյուղի մեջ անտառային պտուղներ են՝ կաղին, հատապտուղ, սալոր, թիթեռներով լի ապակե մի տուփ:

Տղան վերցնում է զամբյուղը:

Հեռվում, ինչ–որ տեղ հոնդում է մոտեցող ավտոմեքենան:

Պառավը շրջվում է ձայնի կողմը:

– Դե արի «մնաս բարով» ասենք իրար:

Նա խոնարհվում է ցած, ծնկում է կանաչին, գրկում է տղայի գլուխը:

– Ինչի՞ չես ուզում, որ հայրիկը տեսնի քեզ, Նանի, – հարցնում է տղան:

Պառավը լռում է մի պահ, մտածում է.

– Է՛, դա նրան էլ պետք չի... այսինքն՝ ինձ էլ արդեն...

Նա կրկին գրկում է տղային, համբուրում է նրա մազերը...

– Գնա... – ասում է պառավը:

– Ցտեսություն, Նանի:

– Մենակ թե դու ինձ բարի լույս ասա: Ես կլսեմ քեզ...

Տղան գլխով է անում:

Պառավը հետզհետե անհետանում է ծառերի ետևում:

Մարգագետին:

Տղայի դեմքը: Նա ասում է հորը...

– Դա նրան այլևս պետք չէ... Այսինքն՝ քեզ էլ պետք չէ...

Հայրը նստած է մի քարի, գլուխը խոնարհած, հետո ասում է դառնությամբ.

– Ինչո՞ւ մարդ ժամանակ չունի, ինչո՞ւ...

Վարորդի ոտքերի տակից մի նապաստակ է դուրս պրծնում: Վարորդը նրա ետևից շարտում է ձեռքի փայտը: Նապաստակը ծլկում է:

– Ո՛նց չկապվ, – ավստում է վարորդը:– Նապաստակի խորոված կերե՞լ ես... անմահական բան է... Մենակ թե քացախը չպիտի մոռանաս...

Հայրն իր մտքերի հետ է, չի արձագանքում նրան: Ելնում է տեղից, բռնում է տղայի ձեռքը, մտազբաղ նայում է անտառին.

– Լավ, գնանք, ուշանում ենք...

Եվ նրանք քայլում են բացատով:

Տղան սկզբում թռչկոտում է ուրախ: Հիմա ավտոմեքենա է նստելու, տուն է գնալու, տեսնելու է մորը: Տեսնես ինչ նվերներ են բերել...

Հետո հանկարծ կանգ է առնում կտրուկ, շրջվում, նայում է ետ...

Շրջվում է նաև հայրը:

Բացատի մեջտեղում, գլուխը վեր ցցած՝ նստած է նապաստակը:

Քաղաքի բնակարանը:

Հատակին և սեղանի վրա գեղեցիկ խաղալիքներ են:

Տղան ուրախ–ուրախ նայում է, պտտվում է խաղալիքների շուրջը:

Խաղալիքների մեջ մի ժամացույց կա, թափանցիկ ժամացույց է, երևում են անվակները, ամեն մեկը մի գույնի, իսկական ժամացույց է:

Տղան փոքրիկ բանալիով լարում է ժամացույցը... Ու հանկարծ կտրվում է զսպանակը:

Տղան վշտացած է: Նա ժամացույցը զգույշ գրկած բացում է հոր աշխատասենյակի դուռը:

Հայրը նստած է սեղանի առջև:

Նա բարձրացնում է գլուխը և հարցական նայում տղային:

Տղան վախվիլելով նրան է մեկնում ժամացույցը:

– Ո՞վ էր քեզ խնդրում ժամացույցը լարել, – հոգնած քնքշությամբ ասում է հայրը: – Աշխատում էր, էլի...

Շարունակում է աշխատել: Տղան նայում է:

Հոր առջև, սեղանին, մարդու արհեստական ձեռք է. ափի մեջ ամրացված է ծաղիկը և դողդողում է պողպատե ցողունի վրա:

Տղան հիշում է կրկեսը:

Արենայում, կլոր պատվանդանի վրա հայրն ու մայրն են՝ միմյանցից հագուստով: Հայրը մեկնել է ափը: Ափի մեջ ծաղիկ կա:

Դատարկ դահլիճի աթոռներից մեկին, ձեռքը ծնոտի տակ ննջում է տղան:

Հատակին ծաղիկներ են թափված: Ու դողդողում են պողպատե ցողունները:

Սովորական փողոց: Առօրյա կյանք: Իրար ետևից սլանում են ավտոմեքենաները: Խաչմերուկում կանգ են առնում, նորից սլանում են:

Տղան նայում է:

Հանկարծ նա նկատում է բեռնատար մի ավտոմեքենա: Թափքին մի նիհար ձի կա: Երբ խաչմերուկում արգելակվում է մեքենան, ձին հրվելով դիպչում է խցիկին, երերում է...

Տղան ետ է դառնում: Վազելով հասնում է դիմացի դռանը: Հրում է:

Դուռը բացվում է ուղիղ փողոցի վրա... Բայց ուրիշ փողոց է դա:

Զարմանալի մաքուր, լուսավոր, պայծառ փողոց... Մարդիկ շարժվում են մի տեսակ դանդաղ, հանդիսավոր...

Մայթերին ու սալահատակի վրա ծուլորեն նստել կամ քայլում են զանազան զազաններ ու կենդանիներ, հանդարտ քայլում են առյուծն ու ընձուղտը, խլշկոտած անցնում է եղնիկների հոտը...

Նրանց ետևից դանդաղ սահում է Նանին, նայում է տղային, ժպտում է, ձեռքով կանչում է նրան:

Տղան վազում է դեպի Նանին, բռնում է ձեռքը, հետո շրջվում, նայում է իրենց տան պատուհանին, ինչ-որ բան է բղավում:

Փողոցը...

Անցնում են կենդանիները, անցնում են մարդիկ...

Նրանց մեջ, նրանց հետ անցնում են պառավը, տղան, անցնում են հայրն ու մայրը՝ իրար ձեռք բռնած:

Բովանդակություն

ՁԱՅՆԵՐ	2
ՀԵՌԱԽՈՍԱԳՐՔԵՐ	13
ԿՈՍԼԱՆԵՐ	21
ՄԵԽԻԿԱ-68	31
ՅԼԱՄԱՐՏ.....	39
ՃԱՆԱԴԱՐՅԻ ԵԶՐՈՎ	49
ԱԿԱԴՈՒԼԿՈՆ ՀԱՐՈՒՄՏՆԵՐԻ ԶԱՂԱՔ Է	56
ՄԵԽԻԿԱՅԻ ՀԱՅԵՐԸ	64
ՀԱՍԱՐԱԿԱԾԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ	72
ԱՌՅՈՒԾԻ ԶԱՂԱՔԸ	75
ՀԱՐԱԿԻ ՄԵԾ ԵՐԿԻՐԸ	81
ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ	118
ՖԻԶԻ	124
ՓՈՔՐԻԿ ՏԵՂԵԿԱՆՔ.....	127
ՄԵՐ ՈՒՂԵԿՑՈՐԴ ԼԵՍՍԻՆ	129
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ	133
ՄԻ ՏՈՒՆ ԼԻՔԸ ՖԻԶԻ	138
ՆՅՈՒԿՈՒԼԱՌԻ	143
ՄԱՌՐԻՆԵՐԻ ԵՐԿԻՐԸ	149
ԼՈՒՅՍԻ ՀՐԱՇՔԸ ԶԱՐԱՆՁԱԿՈՒՄ	157
ՈՐՏԵՂ ԵՌՈՒՄ Է ՀՈՂԸ	160
ՄԵՆՔ ԱՄԵՆ ՏԵՂ ՍԵՎԱՆ ԵՆՔ ՓՆՏՐՈՒՄ.....	163
ՊԱՏԵՐԱԶՍՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է, ԹԱՂԵՔ ՏՈՍԱՀՈՒԿՆԵՐԸ	166
ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ	175

ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ	180
ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ	183
ՈՐՊԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ	188
ԲԱՑԵՔ ԶԵՐ ԱԶՔԵՐԸ	190
ԲԱՑԵՔ ԶԵՐ ԱԶՔԵՐԸ (ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ)	224
ԿԱՐՈՏԻ ԳՈՒՅՆԸ	279

*Արտաշէս Փիրադայի Քալանթարյան
Բացէք ձեր աչքերը*

*Арташес Пирагаевич Калантарян
Откройте ваши глаза
(на армянском языке)
Издательство «Совеакан грох»
Ереван, 1979*

*Artashes Kalantarian
Open your eyes
(in Armenian)
Yerevan, 1979*

*Խմբագիր՝ Զ. Մ. Ղազարյան
Նկարիչ՝ Վ. Ա. Հարությունյան
Գեղ. Խմբագիր՝ Մ. Ս. Սարգսյան
Տեխ. Խմբագիր՝ Ա. Վ. Սահակյան
Վերստուգող սրբագրիչներ՝ Լ. Լ. Սիմոնյան, Ն. Պ. Պոտոյան*

*ИБ No. 2487
Տպարանակ 15,0001 Գինը 1 ռ. 20կ.*